


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

**ՀԱՂՈՐԴՈՒՄ
2012թ.
ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՀԱՎԵԼՎԱԾ՝
ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐՈՒՅԹՆԵՐԻ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐՈՎ
ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՎԵՃԵՐՈՎ
ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
2012 թ. ԸՆԴՈՒՆԱԾ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**



Զուգակար - 2013թ., ք. Երևան

ՀՏԴ- 34.25 (479.25)
ԳՄԴ- 67.99 (2Հ) 01
Հ-189

Տպագրվում է Հայաստանի Հանրապետության
սահմանադրական դատարանի 2013թ. հունվարի 18-ի որոշմամբ

Հ -189 «Հաղորդում ՀՀ ՍԴ- 2012թ. ընդունած որոշումների
կատարման վիճակի վերաբերյալ»
Եր.: «ՀՀ ՍԴ աշխատակազմ», 2013, 356 էջ:

ԳՄԴ- 6799 (2Հ) 01

ISBN 978.99930.66-48-4

© «ՀՀ ՍԴ աշխատակազմ», 2013

**ՀԱՍՏԱՏՎԵԼ Է
ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
18 ՀՈՒՆՎԱՐԻ 2013թ. ՍԳԱՌ - 1
ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՄԲ**

**ԴԱՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2012 ԹՎԱԿԱՆԻՆ**

2012 թվականին ՀՀ սահմանադրական դատարանում մուտքագրվել է սահմանադրաիրավական խնդիր բովանդակող 363 դիմում, ինչպես նաև ներկայացվել է 1639 էլեկտրոնային ու 1152 խորհրդատվություն հայցող դիմում եւ տարբեր հարցերի առնչությամբ 187 նամակ:

Սահմանադրաիրավական խնդիր բովանդակող դիմումների փաստացի պատկերն այսպիսին է.

1. ՀՀ Նախագահ – 34 դիմում,
2. ՀՀ Ազգային ժողով – 0 դիմում,
3. ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների առնվազն մեկ հինգերորդ – 2 դիմում,
4. ՀՀ կառավարություն – 0 դիմում,
5. տեղական ինքնակառավարման մարմիններ – 0 դիմում,
6. ֆիզիկական անձինք – 293 դիմում,
7. իրավաբանական անձինք – 20 դիմում,
8. դատարաններ – 0 դիմում,
9. ՀՀ գլխավոր դատախազ – 0 դիմում,
10. ՀՀ մարդու իրավունքների պաշտպան – 8 դիմում,
11. Հանրապետության Նախագահի թեկնածուներ – 0 դիմում,
12. կուսակցություններ (կուսակցությունների դաշինքներ) եւ պատգամավորության թեկնածուներ – 9 դիմում:

Ֆիզիկական եւ իրավաբանական անձանց թվով 313 դիմումներից 245-ը չեն համապատասխանել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 եւ 28-րդ, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 21 եւ 22-րդ հոդվածներով սահմանված՝ դիմումին ներկայացվող պահանջներին, եւ աշխատակազմի կողմից վերադարձվել են դիմողներին:

Դատական կազմերի կողմից քննության է առնվել 68 անհատական դիմում: Դրանցից քննության է ընդունվել 16 դիմում, մերժվել՝ 41-ը, 5-ը տեղափոխվել է դատարանի լիազույսար նիստ, 6-ը քննության փուլում է:

Սահմանադրական դատարանի լիազույսար նիստում քննարկվել է 5 անհատական դիմումի քննության ընդունման հարց, որի արդյունքում 3 անհատական դիմումներով զործերն ընդունվել են քննության, 2-ով մերժվել է:

**ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾԵՐՈՎ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԵՎ ԳՐԱՆՑ ԿԱՏԱՐՈՒՄԸ**

**ՀՀ Նախագահի դիմումների հիման վրա ընդունված ՄԳ որոշումները
եւ դրանց կատարումը**

2012 թվականին ՀՀ Նախագահի կողմից ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված բոլոր դիմումները վերաբերել են բացառապես միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցի որոշմանը: 2012թ. ՀՀ սահմանադրական դատարանի կողմից քննված 30 միջազգային պայմանագրերի (որից 2-ը՝ 2011թ. ներկայացված դիմումների հիման վրա) թվում են 16 բազմակողմ (7 ունիվերսալ եւ 9 տարածաշրջանային) եւ 14 երկկողմ (3-ը՝ օտարերկրյա պետությունների եւ 11-ը՝ միջազգային կազմակերպությունների հետ կնքված) համաձայնագրեր: Քննության առարկա դարձած պայմանագրերից 27-ը միջպետական են, իսկ 9-ը՝ միջկառավարական:

ՀՀ սահմանադրական դատարանի կողմից քննության առնված 30 պայմանագրերից 8-ն արդեն վավերացվել են ՀՀ Ազգային ժողովի կողմից, թվով 22 պայմանագիր դեռեւս չի ներկայացվել ՀՀ Ազգային ժողով՝ ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի առաջին մասի երկրորդ կետին համապատասխան, կամ դրանց վերաբերյալ ՀՀ Ազգային ժողովը, Սահմանադրության 62-րդ հոդվածի առաջին մասի համաձայն, դեռեւս որոշում չի կայացրել:

Անդրադառնալով 2012թ. ընթացքում քննության առնված ՀՀ միջազգային պայմանագրերի առնչությամբ իրավակիրառական պրակտիկային՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ քննության ներկայացված մի շարք միջազգային պայմանագրերի հայերեն պաշտոնական տեքստերն էական բովանդակային շեղումներ են ունեցել բնագրերից: Նախորդ տարիների օրինակով, սահմանադրական դատարանի պահանջով այդ թերացումները շտկվել են: Այդուհանդերձ, նման փաստերը վկայում են միջազգային պայմանագրերի, հատկապես ֆինանսավարկային համաձայնագրերի՝ համապատասխան ներպետական ընթացակարգերի եւ, մասնավորապես, վավերացման նախապատրաստման որակի բարձրացման անհրաժեշտության մասին:

Բացի նշվածից, ինչպես ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է իր նախորդ հաղորդումներում, ՀՀ միջազգային պայմանագրերում ՀՀ Սահմանադրության համապատասխան դրույթների էությունն իրապես արտացոլող միասնական եզրույթների (հայերեն համարժեքների) բացակայությունը գործնականում եւս խոչընդոտներ է ստեղծում ոչ միայն դրանցում ամրագրված պարտավորությունների ծավալն ու բովանդակությունը պարզելու եւ ՀՀ Սահմանադրությանը դրանց համապատասխանությունը որոշելու, այլեւ դրանց հստակ կիրառման տեսանկյունից: Նման դեպքերը բացառելու նպատակով անհրաժեշտ է առավել հստակեցնել ՀՀ երկկողմ համաձայնագրերի դրույթներ-

րի բովանդակությունը՝ երաշխավորելով դրանց իրավական որոշակիությունը եւ բացառելով հակասահմանադրական իրավիճակների առաջացումը:

Նախորդ տարիների իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը հիմք է տալիս ենթադրել, որ այդպես էլ չի ձեւավորվել ՀՀ միջազգային պայմանագրերի կապակցությամբ արված վերապահումների եւ հայտարարությունների իրավաբանական բնույթի ու նշանակության միատեսակ իրավական ընկալում: Բազմակողմ պայմանագրերի վերաբերյալ կատարված վերապահումների նկատմամբ շատ հաճախ ցուցաբերվում է անկանխատեսելի մոտեցում, փորձ չի արվում պարզելու դրանց կատարման պատճառները, չի հիմնավորվում նման վերապահումների առնչությամբ առարկություններ ներկայացնելու անհրաժեշտությունը, ինչի արդյունքում Հայաստանի Հանրապետությունն այս կամ այն պայմանագրով ստանձնում է ավելի մեծ ծավալի միջազգային պարտավորություններ, քան տվյալ պայմանագրի՝ վերապահում կատարած այլ մասնակիցները: Միաժամանակ անհրաժեշտ է, որպեսզի բազմակողմ միջազգային պայմանագրերի առնչությամբ Հայաստանի Հանրապետության վերապահումներին եւ այլ վերապահումների վերաբերյալ առարկություններին ներկայացվող պահանջներն առավել խստացվեն ու հստակեցվեն:

ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների կատարման տեսանկյունից ուշադրության է արժանի նաեւ ֆինանսավարկային պայմանագրերով ֆինանսավորվող ծրագրերի նկատմամբ արդյունավետ պետական վերահսկողության հիմնահարցը: Իր որոշումներում ՀՀ սահմանադրական դատարանը, մասնավորապես, արձանագրել է, որ ֆինանսավարկային համաձայնագրերի հիմքում դրված ծրագրային դրույթների, դրանց իրականացման կառուցակարգերի, ֆինանսական միջոցների հատկացման ու օգտագործման, ինչպես նաեւ վարկային ռեսուրսների մարման ընթացակարգերի ուսումնասիրությունը վկայում է, որ Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվող միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարումը կարող է երաշխավորվել միայն հստակ ու գործուն վերահսկողական համակարգերի գործունակության ամրապնդման պայմաններում (ՄԳՈ-1018, ՄԳՈ-1032 որոշումներ):

Նշվածից զատ, նպատակահարմար ենք համարում արձանագրել, որ վավերացման ներկայացված ֆինանսավարկային պայմանագրերով ստանձնվելիք ֆինանսական պարտավորությունների նպատակահարմարությունը գնահատելիս անհրաժեշտ է ուսումնասիրության առարկա դարձնել համապատասխան ոլորտներում նախկինում կնքված ֆինանսավարկային պայմանագրերի շրջանակներում ստացված վարկային միջոցների օգտագործման արդյունավետության հիմնահարցը, որը, ՀՀ Սահմանադրության հոդված 77-ին համապատասխան, ՀՀ Ազգային ժողովի իրավասության խնդիրն է (նման նկատառում շեշտվել է ՄԳՈ-1015 որոշման մեջ):

Միաժամանակ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն իր որոշումներում արձանագրել է, որ ֆինանսավարկային պայմանագրերի հիման վրա ֆինանսավորվող ծրագրերի իրականացումը պետք է լինի առավել հրապարակային ու թափանցիկ՝ ապահովելով, մասնավորա-

պես, մատչելի տեղեկատվություն իրականացվող ծրագրերի վերաբերյալ (ՄԳՈ-1032):

Սահմանադրական դատարանն ինչպես իր որոշումներում, այնպես էլ իր որոշումների կատարման վիճակի վերաբերյալ նախորդ տարիների հաղորդումներում բազմիցս անդրադարձել է վարկային միջոցներով ֆինանսավորվող ծրագրերի հստակության, այդ միջոցների նպատակային օգտագործման, դրանց նկատմամբ արդյունավետ վերահսկողության անհրաժեշտության հիմնախնդիրներին: Սահմանադրական դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր ֆինանսական համաձայնագրի հիմքում պետք է դրված լինի ՀՀ կառավարության կողմից հաստատված հստակ ծրագիր՝ այդ ծրագրի համար վարկային միջոցների ներգրավման համակողմանի հիմնավորումների ներառմամբ: Առանց նման ծրագրի առկայության՝ վարկային համաձայնագիրը չի կարող ներկայացվել վավերացման: Այս հանգամանքին անհրաժեշտ ուշադրություն պետք է դարձնի ՀՀ կառավարությունը:

Նպատակահարմար ենք գտնում անդրադառնալ նաև Հայաստանի Հանրապետության կողմից երկկողմ միջազգային պայմանագրերի շուրջ բանակցություններ վարելիս, դրանց տեքստերը մշակելիս, նախաստորագրելիս եւ ստորագրելիս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության պահանջներին խստիվ հետեւելու անհրաժեշտությանը: Պայմանագրի կնքման գործընթացի ծավալման առաջին իսկ փուլում համապատասխան պետական մարմինները եւ պաշտոնատար անձինք պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ կնքվելիք միջազգային պայմանագրերում ՀՀ Սահմանադրությանը ոչ համահունչ դրույթների ընդգրկումը բացառելու ուղղությամբ: Հակառակ պարագայում անխուսափելիորեն կառաջանան հակասահմանադրական իրավիճակներ, ինչը կամ թույլ չի տա վավերացնել նման դրույթներ պարունակող միջազգային պայմանագիրը, կամ կառաջացնի անհրաժեշտություն այն վավերացնել ՀՀ Ազգային ժողովի կողմից համապատասխան վերապահմամբ, կամ կառաջացնի պայմանագրի նոր տեքստ մշակելու եւ կրկին բոլոր անհրաժեշտ ընթացակարգերն անցնելու անհրաժեշտություն:

Որպես ասվածի ակնհայտ օրինակ կարող են հանդիսանալ «2012 թվականի օգոստոսի 7-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական ներդրումային բանկի միջեւ «Սահմանային անցակետեր եւ ենթակառուցվածք» /Բագրատաշենի, Բավրայի եւ Գոգավանի սահմանային անցակետերի արդիականացում/ ֆինանսական պայմանագրում ամրագրված պարտավորությունների (2012 թվականի նոյեմբերի 5-ին Երեւանում Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական ներդրումային բանկի միջեւ ստորագրված՝ պայմանագրի փոփոխություն թիվ 1 նամակ-համաձայնագրում կատարված փոփոխություններով հանդերձ)՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը: ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ համարեց իր՝ 6 նոյեմբերի 2012 թվականի ՄԳՈ-1055 որոշման մեջ արձանագրել հետեւյալը. Հայաստանի Հանրապետության Նախագահի 08.10.2012թ. ՀՀ սահմանադրական

դատարանին ուղղված դիմումին կից ներկայացված Պայմանագրի 11.02 /Իրավասությունը/ հոդվածում առկա է եղել հետևյալ իրավակարգավորումը.

«Ա. Բացառությամբ 11.02Բ հոդվածի՝ Անգլիայի դատարանները բացառիկ իրավասություն ունեն սույն Պայմանագրի վերաբերյալ բոլոր վեճերը լուծելու հարցում, այդ թվում՝ սույն Պայմանագրից բխող կամ դրա հետ կապված ոչ պայմանագրային պարտավորություններին առնչվող ցանկացած վեճ:

Անգլիայի դատարանները ամենանպատակահարմար եւ հարմար դատարաններն են սույն Պայմանագրի հետ կապված ցանկացած այդպիսի վեճ լուծելու համար:

Սույն Պայմանագրին առնչվող՝ սույն 11.02 հոդվածում որևէ վեճին արված հղումները վերաբերում են նաև ցանկացած վեճի՝ դրա առկայության, վավերության կամ դադարեցման մասով:

Բ. Սույն Պայմանագրին առնչվող ցանկացած վեճ կարող է, Բանկի բացառիկ հայեցողությամբ, լուծվել արբիտրաժի միջոցով՝ Միջազգային արբիտրաժի լոնդոնյան դատարանում (ՄԱԼԳ)՝ իր կանոնների համաձայն:

Արբիտրաժը կարգավորվում է Անգլիայի իրավունքով: Արբիտրաժային փրիբունալը կազմված է ՄԱԼԳ-ի կողմից նշանակված մեկ արբիտրից: Արբիտրաժի նստավայրը եւ վայրը Լոնդոնն է (Անգլիա), արբիտրաժային վարույթի լեզուն անգլերենն է: Վարկառուն սույնով հրաժարվում է 1996 թվականի Արբիտրաժի մասին ակտի ներքո իր իրավունքներից կամ այլ կերպ բողոքարկել որևէ արբիտրաժային վճիռ Անգլիայի դատարաններում: Արբիտրաժային փրիբունալը իրավասու չէ շեռնարկել կամ ապահովել, եւ Վարկառուն համաձայնում է, որ այն չի չզրի ստանալ որևէ դատական արյանից պաշտպանության որևէ ժամանակավոր միջոց կամ հայցի ապահովման միջոց Բանկի դեմ՝ անկախ ՄԱԼԳ կանոնների որևէ դրույթի: Արբիտրաժային փրիբունալը իրավասու է քննարկել եւ վարույթ ընդունել ու որոշում կայացնել որևէ այլ վեճի վերաբերյալ, որը պատշաճ չենով ներկայացվի իր քննարկմանը Բանկի կողմից (ուրիշ ոչ մի Կողմի կողմից)՝ այնքանով, որքանով այդպիսի վեճը ծագում է սույն Պայմանագրից, բայց պահպանելով վերը նշված՝ որևէ այլ կողմ կամ վեճ չպետք է ընդգրկվի կամ միացվի արբիտրաժային վարույթին:

Գ. Սույն 11.02 հոդվածը միմիայն հօգուտ Բանկի է: Սույն Պայմանագրում ոչինչ չպետք է ազդի Բանկի իրավունքի վրա՝ սկսելու դատական վարույթներ Վարկառուի դեմ՝ համապատասխան իրավագործության ներքո գրվելու օրենքով թույլատրված ցանկացած չեղով: Բանկի կողմից դատական վարույթների մեկնարկը մեկ կամ մի քանի իրավագործության ներքո չի խոչընդոտում Բանկին որևէ այլ իրավագործության ներքո վարույթ սկսելու՝ թե միաժամանակ, եւ թե այլ կերպ:

Վարկառուն սույնով հրաժարվում է իր անձեռնմխելիությունից եւ իրավունքներից՝ առարկելու այդպիսի դատարանների իրավագործության դեմ»:

Միաժամանակ Պայմանագրի 12.04 հոդվածը /Հարմար դատարան ընտրելը եւ որոշման կատարումը արտերկրում. հրաժարում անձեռնմխելիությունից/ շարադրված է եղել հետևյալ կերպ.

«Վարկառուն

ա) համաշայնում է չվիճարկել եւ միանշանակ հրաժարվում է որեւէ առարկումից, որը այն կարող է ներկայուն կամ ապագայում ունենալ Անգլիայի դատարանների դէմ՝ ոչ հարմար դատարանի հիմքով կամ այլ կերպ՝ սույն Պայմանագրին առնչվող որեւէ այլ դատական վարույթի մասով եւ

բ) համաշայնում է, որ Անգլիայի դատարանի կամ ՄԱԼԴ-ի որեւէ վճիռ կամ որոշում սույն Պայմանագրի վերաբերյալ բեկման ենթակա չէ եւ պարտադիր է իր համար՝ առանց սահմանափակման կամ վերապահման, ենթակա է կատարման նրա դէմ ցանկացած այլ իրավագործության ներքո գրնվող դատարաններում:

Այնքանով, որքանով Վարկառուն կարող է, որեւէ իրավագործության ներքո, պահանջել իր համար կամ իր ակտիվների համար անչեռնմիտելիություն՝ որեւէ հայցից, հարկադիր կատարումից, արգելանքից կամ այլ իրավական գործընթացից, Վարկառուն սույնով միանշանակորեն համաշայնում է չպահանջել կամ միանշանակորեն հրաժարվում է այդ իրավունքից՝ այդ իրավագործության օրենքներով թույլատրելի սահմաններում»:

ՀՀ սահմանադրական դատարանում գործի քննության նախապատրաստման ընթացքում վերը նշված դրույթների առնչությամբ սույն գործով ՀՀ Նախագահի պաշտոնական ներկայացուցչի կողմից ստիպված լրացուցիչ բանակցություններ անցկացվեցին Բանկի հետ՝ վերը նշված դրույթների բովանդակության փոփոխության եւ դրանց՝ Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական ներդրումային բանկի միջեւ «Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական ներդրումային բանկի գործունեության կառավարման համար» շրջանակային համաձայնագրում ամրագրված իրավակարգավորումներին ներդաշնակեցման ուղղությամբ: Արդյունքում՝ 2012թ. նոյեմբերի 5-ին Երեւանում Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական ներդրումային բանկի միջեւ կնքվել եւ սույն գործով ՀՀ Նախագահի պաշտոնական ներկայացուցչի կողմից ՀՀ սահմանադրական դատարան է ներկայացվել «Սահմանային անցակետեր եւ ենթակառուցվածք» ֆինանսավորման պայմանագրի փոփոխություն թիվ 1» նամակ-համաձայնագիրը, որը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը եւ որով փոփոխության է ենթարկվել Պայմանագրի 11.02 հոդվածը /Իրավասությունը/՝ ստանալով հետեւյալ խմբագրությունը.

«Սույն Պայմանագրին առնչվող բոլոր վեճերը պետք է ներկայացվեն Եվրոպական միության Արդարադատության դատարանի իրավասությանը /այսուհետք՝ Դատարան/, եւ կողմերը սույնով ենթարկվում են Դատարանի իրավասությանը:

Պայմանագրի կողմերը սույնով հրաժարվում են Դատարանի իրավասության նկատմամբ իրենց անչեռնմիտելիությունից կամ դրա դէմ առարկելու իրավունքից: Համաշայն սույն Հոդվածի՝ Դատարանի որոշումը պետք է լինի վերջնական եւ պարտադիր յուրաքանչյուր կողմի համար՝ առանց սահմանափակումների ու վերապահումների»:

Միաժամանակ Նամակ-համաձայնագրով Պայմանագրի վերը նշված 12.04

հողվածը /Հարմար դատարան ընտրելը եւ որոշման կատարումը արտերկրում. հրաժարում անձեռնմխելիությունից/ հանվել է Պայմանագրի տեքստից, իսկ դրան հաջորդող հողվածները վերահամարակալվել են՝ առանց վերջիններիս բովանդակության փոփոխության:

Վերը նշված փոփոխությունների արդյունքում՝ քննության առարկա Պայմանագրում ամրագրված պարտավորությունները ներդաշնակեցվել են եւ համահունչ են դարձել 2008թ. փետրվարի 12-29-ին ստորագրված եւ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2008թ. հոկտեմբերի 1-ի Ն-099-4 որոշմամբ վավերացված՝ Հայաստանի Հանրապետությունում Բանկի գործունեության կանոնակարգման /կառավարման/ վերաբերյալ Շրջանակային համաձայնագրում ամրագրված իրավակարգավորումներին:

Նման աշխատանքները պետք է նախապես ձեռնարկվեին, եւ վավերացման փուլ չպետք է հասներ այնպիսի պայմանագիր, որը միջազգային հարաբերություններում մեր երկրին ընդհուպ կարող էր զրկել դատական իրավասուբյեկտությունից:

ՀՀ կառավարությունը պարտավոր է առավել մեծ ուշադրություն դարձնել ստանձնվող ՀՀ միջազգային պարտավորությունների իրավական հիմնավորվածությանն ու հնարավոր իրավական հետեւանքներին, որոնք կարող են խնդիրներ առաջացնել ընդհուպ երկրի իրավական անվտանգության տեսանկյունից:

ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների դիմումների հիման վրա ընդունված ՍԳ որոշումները եւ դրանց կատարումը

«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի, 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի եւ 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 05.05.2012թ. ՍԳ-Ո-1027 որոշմամբ հանգել է այն հետետությանը, որ.

«1. ՀՀ ընտրական օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի, 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի եւ 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ Տրենսգրքում ամրագրված եւ սույն որոշման մեջ ներկայացված սահմանադրաիրավական այն բովանդակությամբ, ինչը, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի 9.2-րդ կետի, համառոտ ձեւով ենթադրում է, որ այդ դրույթները չեն կարող մեկնաբանվել որպես ընտրական իրավունքի սահմանափակում ու գործնականում արգելափակել ընտրախախտումների բացահայտման առնչությամբ ցանկացած իրավաչափ գործողության կատարման ընթացքում ընտրական գործընթացը սահմանված կարգով վերահսկող իրավասուբյեկտների համար ընտրողների ստորագրած

ցուցակների մատչելիությունը՝ որպես ընտրական իրավունքի պաշտպանության, այդ թվում՝ դատական կարգով, անհրաժեշտ երաշխիք»:

Նշված որոշման 6-րդ կետում, հիմք ընդունելով իր՝ 16.04.2003թ. ՄԳՈ-412 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները, ինչպես նաև օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 48-րդ հոդվածի 14-րդ մասի իրավակարգավորումները, սահմանադրական դատարանը գտել է, որ «սահմանադրաիրավական առումով «հրապարակման ենթակա չեն» կամ «չպետք է հրապարակվի» արտահայտություններին իրավակիրառական պրակտիկայում չի կարող այնպիսի տարածական մեկնաբանություն տրվել, ինչը կխոչընդոտի ազատ ընտրությունը կամ կարգելափակի ընտրողների ստորագրած ցուցակների ուսումնասիրության հնարավորությունը՝ ընտրական իրավունքի պաշտպանության համատեքստում, ինչպես նաև դրանց չիրապարակման սահմանափակումը որեւէ կերպ տարածվի նման տեղեկությունները դատարաններին տրամադրելու վրա: Տվյալ արտահայտությունները վերաբերում են հրապարակային տպագրությանը՝ քվեարկության գաղտնիության երաշխավորման եւ ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների համատեքստում: Սակայն որեւէ սահմանափակում չի կարող խոչընդոտել ընտրական գործընթացի վերահսկմանն օրենքով սահմանված կարգով մասնակցող իրավասուբյեկտների գործունեությունը, ինչի արդյունավետ իրականացումով է մեծապես պայմանավորված հանրային վստահությունն ընտրական գործընթացի հանդեպ»:

Միաժամանակ սահմանադրական դատարանն արձանագրել է հետևյալը. «Խնդիրն ընտրություններում քվեարկության գաղտնիության սկզբունքի եւ ընտրական իրավունքի արդյունավետ պաշտպանության իրավաչափ հավասարակշռության ապահովումն է: Դա հնարավոր է ու անհրաժեշտ, երբ ընտրախախտումների հայտնաբերման եւ ուսումնասիրման շրջանակներում ցանկացած իրավաչափ գործողության կատարման ընթացքում օրենքով սահմանված կարգով վերահսկման գործընթացին մասնակից իրավասուբյեկտների համար մատչելի են արդեն իսկ ստորագրված ընտրացուցակները: Դա ենթադրում է ոչ միայն իրենց իրավասությունների պատշաճ իմացությամբ դրանց ծանոթանալն ու քաղվածքներ կատարելը, ինչպես նախատեսված է ՀՀ ընտրական օրենսգրքի 31, 33 եւ 48-րդ հոդվածներով, այլև հնարավոր խախտումներ արձանագրելու դեպքում ընտրական իրավունքի պաշտպանության շրջանակներում քվեարկության արդյունքների հավաստիության վիճարկման հնարավորություն՝ ՀՀ ընտրական եւ վարչական դատավարության օրենսգրքերով սահմանված կարգով: Ուստի ընտրական հանձնաժողովների պարտականությունն է ընտրական գործընթացի վերահսկմանն օրենքով նախատեսված կարգով մասնակցող իրավասուբյեկտների համար ընտրական իրավունքների պաշտպանության շրջանակներում այդ ցուցակներին լիարժեք ծանոթանալու պայմաններ ստեղծելը: Դա հատկապես անհրաժեշտ է դատական քննությունը ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածների պահանջներին համապատասխան երաշխավորելու ու հնարավոր ընտրախախտումները վերացնելու համար: Իսկ ընտրական գործընթացի

վերահսկմանը մասնակցող իրավասուբյեկտների շրջանակի եւ նրանց գործունեության կարգի սահմանումն օրենսդիր մարմնի իրավասության հարցն է»:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ օրենսդրական նոր կարգավորումները դեռեւս չեն իրականացվել նշված հիմնախնդրի առնչությամբ:

ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների մյուս դիմումի հիման վրա գործի դատարանությունը նախատեսված է 2013 թվականի ապրիլի 16-ին:

Անհատական (ֆիզիկական եւ իրավաբանական անձանց) դիմումների հիման վրա ընդունված ՄԳ որոշումներն ու դրանց կատարումը

ՀՀ սահմանադրական դատարանում մուտքագրված անհատական դիմումների մոտ 78 տոկոսը չի ընդունվել սահմանադրական դատարանի կողմից, քանի որ դրանք չեն համապատասխանել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 եւ 28-րդ, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 21 եւ 22-րդ հոդվածներով սահմանված՝ դիմումին ներկայացվող պահանջներին, ճանաչվել են որպես ակնհայտ անհիմն կամ վիճարկվող նորմը դիմողի նկատմամբ չի կիրառվել դատարանի կողմից: Հիմնականում անհատական դիմումները վերաբերում են օրենքների կիրառմանն առնչվող հարցերին կամ ընդհանուր իրավասության ու մասնագիտացված դատարանների իրավագործությանը վերաբերող տարբեր այլ հարցերի: 2012 թվականին «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխանող եւ դատական կազմերի ու սահմանադրական դատարանի որոշումներով քննության ընդունված 14 անհատական դիմումներով /20.6 տոկոսը/ դատարանի կողմից կայացվել են ծավալուն որոշումներ:

Սահմանադրական դատարանի կողմից քննության ընդունված 5 գործերով (6 դիմումներով, որոնցից երկուսի հիման վրա գործերը միավորվել են) որոշումները կայացվելու են 2013թ. հունվար-ապրիլ ամիսներին:

2012 թվականի ընթացքում անհատական դիմումներով ընդունված որոշումները, որոնցով օրենքների վիճարկվող դրույթները ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր, վերաբերում են հետևյալներին.

1. «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության դիմումի հիման վրա՝ «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի «գ» ենթակետի, 12-րդ հոդվածի 6-րդ եւ 7-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 06.03.2012թ. ՄԳ-Ռ-1010 որոշմամբ գտել է, որ.

«2. «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հան-

րապետության օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ մասի՝ «Գերատեսչական ցանկերը գաղտնագրվում են եւ հրապարակման ենթակա չեն» դրույթը՝ այնքանով, որքանով չի վերաբերում գաղտնագրման ենթակա կոնկրետ տեղեկության, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27-րդ եւ 43-րդ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր»:

Խնդիրը կարելի է նրանով, որ իրավակիրառական պրակտիկայում ձեւավորվել էր մի իրավիճակ, որի պայմաններում գերատեսչական ցանկերը, որոնք պարզապես մանրամասնում են օրենքով նախատեսված եւ ՀՀ կառավարության կողմից հաստատված հրապարակային ցանկում նշված ոլորտները, համարվում էին գաղտնի տեղեկություններ պարունակող եւ հրապարակման ոչ ենթակա ցանկեր այն դեպքում, երբ օրենքի իրավակարգավորման ընդհանուր տրամաբանությունից բխում է, որ սահմանափակումները սահմանված կարգով կիրառելի են **տեղեկությունների նկատմամբ**, որոնց տարածումը կարող է ծանր հետեւանքներ առաջացնել Հայաստանի Հանրապետության անվտանգության համար: Այդ հանգամանքը նկատի ունենալով՝ տվյալ գործով կայացված որոշման մեջ սահմանադրական դատարանն ընդգծել է, որ. «Ինչ վերաբերում է այնպիսի հնարավոր իրավիճակներին, երբ գերատեսչական ցանկերում ընդգրկվող կոնկրետ տեղեկության վերտառությունն (անվանումը) ինքնին անխուսափելիորեն կարող է արդեն իսկ ամրագրման փաստի ուժով իրենից պետական գաղտնիք ներկայացնել, ապա նման դեպքերում օրենքից բխող գաղտնագրման սկզբունքներին, մասնավորապես, գաղտնագրման հիմնավորվածության սկզբունքին համապատասխան այն կարող է դիտարկվել որպես տեղեկություն, որի տարածումը կարող է ծանր հետեւանքներ առաջացնել Հայաստանի Հանրապետության անվտանգության համար, եւ որպես կոնկրետ տեղեկություն գաղտնագրվել» (որոշման 8-րդ կետ):

Տվյալ գործով կայացված որոշման մեջ արտահայտած իր իրավական դիրքորոշումների հիմնավորման համար սահմանադրական դատարանը նաեւ հիմք է ընդունել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Շտոլն ընդդեմ Շվեյցարիայի գործով վճռում վկայակոչված՝ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի թիվ 1551 (2007) բանաձեւի գծով զեկուցողի կողմից իրականացված՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում պետական գաղտնիքի վերաբերյալ օրենսդրությունների համեմատական վերլուծությունում ամրագրված այն եզրահանգումը, որ. «ցանկացած վարչական ակտ կամ նախարարի հրաման, որը բովանդակություն է հաղորդում ավելի ընդհանուր ձեւակերպումներ պարունակող օրենքներին, պետք է առնվազն մատչելի լինեն հանրությանը» (որոշման 8-րդ կետ):

Սահմանադրական դատարանի 06.03.2012 թվականի ՍԳՈ-1010 որոշումն ընդունելուց հետո՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների կողմից օրենսգրքում փոփոխություն կատարելու վերաբերյալ օրենսդրական նախաձեռնություն է ներկայացվել, ինչն ընդգրկվել է ԱԺ նիստերի օրակարգում:

2. «Քաղաքացի Նելլի Սկրտչյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվա-

ծի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 18.07.2012թ. ՄԳՈ-1037 որոշմամբ գտել է.

«1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ եւ 19-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր՝ այնքանով, որքանով չի նախատեսում բողոքարկման իրավունքի սահմանափակումից բացառություններ բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը թույլ է տվել արդար դատաքննության իրավունքի բուն էությունը խաթարող դատական սխալ, մասնավորապես, երբ չեն պահպանվել ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասով եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դատավարական երաշխիքները»:

Խնդիրը կարելուովում է նրանով, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասի հետեւանքով իրավակիրառական պրակտիկայում ձեւավորվել էր մի իրավիճակ, որի պայմաններում նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը չգերազանցող գումարի բռնագանձման վերաբերյալ պահանջների դեպքում վերադաս դատական ատյան բողոքարկման իրավունքը սահմանափակված էր բոլոր դեպքերում՝ անկախ ստորադաս դատարանի կողմից նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման փաստից կամ նոր երեսան եկած հանգամանքների առկայությունից: Եւսման իրավիճակը պայմանավորված էր այն հանգամանքով, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասը ձեւակերպելիս չէր ցուցաբերվել հետետողական մոտեցում եւ հաշվի չէին առնվել հետեւյալ հանգամանքները.

- օրենսգրքի 207-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է այն բացառիկ դեպքերը, երբ վերաքննիչ բողոք կարող է ներկայացվել նաեւ ընդդեմ առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող **օրինական ուժի մեջ մտած** ակտի դեմ: Այն է՝ երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, **որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը**,
- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված են դատավարական իրավունքի նորմերի այն խախտումները, որոնք վճռի պարտադիր բեկանման հիմք են: Այն է՝ դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով, դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որեւէ մեկի բացակայությամբ (դատավարության կողմերի մրցակցության եւ հավասարության սկզբունքի խախտում), վճիռը ստորագրել է ոչ այն դատավորը, որը կայացրել է այն, վճիռը կայացրել է ոչ այն դատավորը, որը մտնում է գործը քննող դատարանի կազմի մեջ, գործից բացակայում է դատական նիստի արձանագրությունը,
- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածն

ամրագրում է այն դեպքերը, երբ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը ենթակա են վերանայման նոր երեսան եկած հանգամանքների հիմքով: Մասնավորապես, այդ հիմքերն են դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված՝ վկայի ցուցմունքների կեղծ լինելը, փորձագետի եզրակացության ակնհայտ կեղծ լինելը, թարգմանչի թարգմանության ակնհայտ սխալ լինելը, փաստաթղթերի կամ իրեղեն ապացույցների կեղծված լինելը, գործին մասնակցող անձանց, նրանց ներկայացուցիչների կամ դատավորի՝ գործի քննության հետ կապված հանցավոր արարք կատարած լինելը, ինչպես նաև տվյալ վճռի կայացման համար հիմք հանդիսացած դատական ակտի, դատավճռի, վարչական կամ տեղական ինքնակառավարման մարմնի որոշման վերացումը:

Տվյալ գործով կայացված որոշման մեջ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ վերոհիշյալ հոդվածներով սահմանված բացառությունները եւ հիմքերը վերաբերում են արդար դատաքննության իրավունքի բուն էությունը խաթարող դատական սխալին կամ իրավիճակներին, եւ այդ իրավակարգավորումների հիմքում ընկած ընդհանուր տրամաբանությունը հանգում է նրան, որ արդար դատաքննության իրավունքի բուն էությունը խաթարող դատական սխալի արդյունքում կայացված դատական ակտը չի կարող իրավական ուժ ունենալ (որոշման 8-րդ կետ):

Նույն կետում սահմանադրական դատարանը գտել է, որ վիճարկվող նորմով օրենսդիրը սահմանելով դրանում նշված գործերով վերաքննության իրավունքի սահմանափակում՝ շեղվել է օրենսգրքում առկա վերոհիշյալ ընդհանուր տրամաբանությունից՝ չնախատեսելով բողոքարկման իրավունքի սահմանափակումից բացառություններ բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը թույլ է տվել արդար դատաքննության իրավունքի բուն էությունը խաթարող դատական սխալ:

Միաժամանակ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ նման բացառություններ սահմանելու անհրաժեշտությունը բխում է 1995թ. փետրվարի 7-ին Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի ընդունած թիվ R(95)5 հանձնարարականի՝ «Դատական վերահսկողության իրավունք» վերտառությամբ 1-ին հոդվածի b) կետի պահանջներից, որի համաձայն՝ բացառությունները դատական վերահսկողության իրավունքից թույլատրելի են միայն այն պայմանով, որ համապատասխանեն արդարության ընդհանուր սկզբունքներին: Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ նման մոտեցումը համահունչ է նաև Եվրոպական դատարանի այն մոտեցումներին, որոնք ձեռավորվել են «Էական վնասի» գնահատման պրակտիկայում:

ՀՀ Ազգային ժողովը սահմանադրական դատարանի 18.07.2012 թվականի ՍԳՈ-1037 որոշումն ընդունելուց հետո՝ տվյալ օրենսգրքում փոփոխություն կատարելու հարցին դեռևս չի անդրադարձել:

3. «Քաղաքացի Գայանե Աշուղյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի

1-ին մասի 3-րդ կետի եւ 380-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով /16.10.2012թ. ՍԳ-Ո-1052 որոշում/ ՀՀ սահմանադրական դատարանը որոշել է.

«2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերը ճանաչել-Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր այն մասով, որով բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով բողոքի ներկայացման համար բաց թողնված ժամկետի վերականգնումը թողնվում է դատարանի հայեցողությանը եւ իրավունքի ուժով /ex jure/ չի ճանաչվում հարգելի»:

Խնդիրը կարեւորվում է նրանով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի հետեւանքով իրավակիրառական պրակտիկայում ձեւավորվել էր մի իրավիճակ, որի պայմաններում կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման մասին առաջին ատյանի դատարանի որոշումների դեմ վերաքննիչ բողոք բերելու ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու միջնորդության քննումը եւ լուծումը, ինչպես նաեւ նշված միջնորդությունը մերժելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի քննումը եւ լուծումը թողնվում էր համապատասխանաբար՝ առաջին ատյանի դատարանի եւ Վերաքննիչ դատարանի հայեցողությանն այն դեպքում, երբ նշված որոշումների բողոքարկման համար սահմանված են համեմատաբար սեղմ ժամկետներ՝ 5, 10, 15 օր, որոնք հաշվվում են որոշման հրապարակման պահից, իսկ վերը նշված 15-օրյա ժամկետի համար ընդհանրապես սահմանված չէ ժամկետը հաշվելու պահը: Ընդ որում, պրակտիկայում որոշումների հրապարակման պահից մինչեւ հասցեատիրոջ կողմից դրանք ստանալու պահն անցնում էր որոշակի ժամանակահատված, եւ որոշման հասցեատերը դատական ակտի բողոքարկման իր իրավունքից օգտվելու հարցը չէր կարողանում լուծել, քանի որ չէր հասցնում ծանոթանալ դատական ակտում արտահայտված իրավական դիրքորոշումներին, բացահայտել դատարանի կողմից նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի հնարավոր խախտումները:

Այդ էր պատճառը, որ տվյալ գործով կայացված որոշման պատճառաբանական մասի 8-րդ կետում սահմանադրական դատարանը գտել է, որ «ստորադաս դատարանի դատական ակտը վերադատության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացումը մեծապես կախված է այն հանգամանքից, **թե որքանով է բողոքարկվող դատական ակտը հասու շահագրգիռ անձին, ողջամիտ ինչ ժամկետում նա կարող է հիմնավոր բողոք ներկայացնել իր իրավունքների դատական պաշտպանության համար**»:

Նույն որոշման 9-րդ կետում վկայակոչվել է նաեւ ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2000թ. դեկտեմբերի 22-ի թիվ 36 որոշման մեջ ամրագրված այն դրույթները, համաձայն որոնց՝ բոլոր այն դեպքերում, **երբ ժամկետը բաց է թողնվել բողոք բերողի կամքից անկախ պատճառներով**, դատարան-

ների կողմից ժամկետի բացթողումը **պետք է ճանաչել հարգելի**: Նկատի ունենալով բոլոր այն դեպքերը, երբ բողոքարկման ժամկետը ոչ համաչափ սահմանափակվել է կամ բաց է թողնվել դատարանի կողմից դատական ակտի պատճենն օրենքով նախատեսված ժամկետից ավելի ուշ կողմին **հանձնելու** պատճառով, ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ «մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանության առումով նշված դեպքերում բաց թողնված ժամկետն իրավունքի ուժով /ex jure/ պետք է համարվի հարգելի, ինչը կերաշխավորի անձի՝ դատարանի մատչելիության եւ արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը»:

ՀՀ Ազգային ժողովը սահմանադրական դատարանի 16.10.2012 թվականի ՍԳՌ-1052 որոշումն ընդունելուց հետո՝ տվյալ օրենսգրքում փոփոխություն կատարելու հարցին դեռեւս չի անդրադարձել:

4. «Քաղաքացի Նորա Էվոյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 18.12.2012թ. ՍԳՌ-1062 որոշմամբ որոշել է.

«1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնքանով, որքանով ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳՌ-1052 որոշմամբ ամրագրված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին եւ վերջինից անկախ պատճառներով այդ ժամկետի բացթողումն իրավունքի ուժով /ex jure/ ճանաչվում է հարգելի»:

Հաշվի առնելով սույն գործով եւ քաղաքացի Գայանե Աշուրյանի դիմումի հիման վրա քննության առնված գործով բարձրացված հիմնահարցերի ըստ էության նույնականությունը՝ սահմանադրական դատարանը սույն գործով կիրառելի է համարել քաղաքացի Գայանե Աշուրյանի դիմումի հիման վրա գործով կայացված ՍԳՌ-1052 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները: Միաժամանակ, զարգացնելով իր ՍԳՌ-1052 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները՝ սույն գործով կայացված ՍԳՌ-1062 որոշման 6-րդ կետում սահմանադրական դատարանն արտահայտել է հետեւյալ իրավական դիրքորոշումը. «... սահմանադրական դատարանի կողմից որպես այդպիսի երաշխիք է ճանաչվել օրենսգրքի 402-րդ հոդվածը **եւ այն էլ միայն այն դեպքում, երբ նշված հոդվածի 2-րդ մասով նախատեսված եռօրյա ժամկետում դատական ակտը տրամադրվի /հասանելի դարձվի/ անձին: Այսինքն, համաձայն գործող օրենսդրության՝ անձն առնվազն 27 օր ժամանակ պետք է ունենա հիմնավոր բողոք ներկայացնելու համար**»:

Վերը նշված իրավական դիրքորոշման մեջ «առնվազն 27 օր» բառակապակցության ամրագրումը պայմանավորված է նրանով, որ օրենսդիրը պար-

տավորեցրել է դատարաններին՝ դատական ակտերը եռօրյա ժամկետում ուղարկել հասցեատերերին: Այսինքն՝ եթե եռօրյա ժամկետը ներառված է բողոքարկման համար նախատեսված մեկամսյա ժամկետի մեջ, դրանից բխում է, որ օրենսդիրը դատական ակտի բողոքարկման համար բավարար ժամանակահատված է համարել 27 օրը, եթե, իհարկե, սահմանադրական դատարանի ՍԳՈ-1052 որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ՝ եռօրյա ժամկետում դատական ակտի հասցեատերը փաստացիորեն ստանում է դատական ակտը: Հակառակ պարագայում, երբ որ դատական ակտը հասցեատիրոջն է ուղարկվում եռօրյա ժամկետից ուշ կամ թեկուզ եռօրյա ժամկետում, սակայն հասցեատիրոջ կողմից այն փաստացիորեն ստացվում է եռօրյա ժամկետից ուշ, ապա տվյալ դեպքում խախտվում է իրավակարգավորման տրամաբանությունը, եւ հնարավոր չի լինում կանխորոշել, թե եռօրյա ժամկետի մեջ մտնող կոնկրետ որ օրը դատարանը կարող էր դատական ակտն ուղարկել հասցեատիրոջը՝ նույն օրը, հաջորդ օրը, թե եռօրյա ժամկետի վերջին օրը: Այդ է պատճառը, որ սահմանադրական դատարանը տվյալ գործով կայացված որոշման մեջ ամրագրել է ոչ թե «27 օր», այլ «առնվազն 27 օր» բառակապակցությունը:

ՀՀ Ազգային ժողովը սահմանադրական դատարանի 18.12.2012 թվականի ՍԳՈ-1062 որոշումն ընդունելուց հետո՝ տվյալ օրենսգրքում փոփոխություն կատարելու հարցին դեռեւս չի անդրադարձել:

5. «Քաղաքացիներ Սամվել Մնացականյանի եւ Գեորգ Գյոզալյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ մասի, 155-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի եւ 158-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանի՝ 18 դեկտեմբերի 2012թ. ՍԳՈ-1063 որոշման մեջ նախ արձանագրել է, որ քաղ. Գյոզալյանի առաջ քաշած խնդիրն ուղղակիորեն չի վերաբերում ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի դրույթին, քանի որ վերջինս, եւ ընդհանրապես նշված հոդվածի ողջ 5-րդ մասը, սահմանում է կարգապահական վարույթ հարուցելու առիթները, այլ ոչ թե այդ վարույթի հարուցումը մերժելու կարգը կամ հնարավորությունը: Այսուամենայնիվ, իրավունք վերապահելով անձին իր դիմումով կարգապահական վարույթ հարուցելու առիթ տալ՝ օրենսդիրը նույնիսկ նույն հոդվածի 7-րդ մասի հիմքով (որում առանձին առիթների դեպքում նախատեսվում է պատասխանը չհիմնավորելու հնարավորություն) չի նախատեսել անձի դիմումի առիթով վարույթ չհարուցելու դեպքում նրան պատճառաբանված պատասխան չտալու իրավունք: Հակառակը, տվյալ հոդվածի իրավական տրամաբանությունից բխում է անձի դիմումով վարույթ հարուցելը մերժելիս այդպիսի մերժումը պատճառաբանելու պարտականությունը: Հակառակ դեպքում այդ առիթը նույնպես կներառվեր հոդվածի 7-րդ մասում: Դատական պրակտիկայում է փորձ արվել ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի դրույթներին տալ այնպիսի մեկնաբանություն, որից բխեցվել է դիմողի հարցադա-

րումը՝ վարույթ հարուցելը մերժելիս այդպիսի մերժումը պատճառաբանելու պարտականություն չնախատեսելու առնչությամբ:

ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ, **նախ**՝ ինքնին խնդրահարույց է ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 7-րդ մասը: Այն չունի պատշաճ իրավական հիմնավորվածություն՝ այդ մասի համատեքստում վարույթի հարուցումը մերժելիս դրա պատճառների մասին հիմնավորումներ չտալու դրույթ նախատեսելու առումով: **Երկրորդ**՝ երբ օրենսգիրքը նախատեսել է, որ կարգապահական վարույթ հարուցելու առիթը նաեւ անձի դիմումն է, եւ այս առիթն ընդհուպ չի ներառել հիշյալ հոդվածի 7-րդ մասում, ապա այդ դիմումը չի կարող մնալ անպատասխան կամ այն մերժելու դեպքում չտրվի մերժման համապատասխան հիմնավորում: Հակառակ դեպքում խախտվում է անձի՝ ՀՀ Սահմանադրության 27.1-րդ հոդվածով նախատեսված իրավունքը, որը սահմանում է, որ «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»: **Իրավական պրակտիկան պետք է անվերապահորեն հիմք ընդունի անձի՝ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու սահմանադրական իրավունքի ապահովման անհրաժեշտությունը՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:** Սահմանադրական դատարանը գտել է, որ սահմանադրորեն ամրագրված «պատշաճ պատասխան» եզրույթը չի ենթադրում միայն պատասխանի ձեւը կամ առկայությունն ընդհանրապես: Այն բովանդակային առումով նշանակում է, որ պատասխանը պետք է լինի իրավաչափ ու անհրաժեշտ հիմնավորումներով: Իրավական պետությունում այս պահանջը չի կարող շրջանցել որեւէ իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմին կամ պաշտոնատար անձ, այդ թվում՝ արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը: **Սահմանադրական հիշյալ պահանջը չկատարելն արդարացնող ցանկացած պատճառաբանություն, այդ թվում՝ օրենքին կատարվող հղում, անհիմն է, քանի որ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պետությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:**

Դիմողների կողմից բարձրացված մյուս հիմնահարցերի առնչությամբ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարել բացահայտել.

- արդարադատության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակը,
- ՀՀ դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ «գործում է որպես դատարան» եզրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը.
- որպես դատարան գործելիս արդարադատության խորհրդի որոշումների վերջնական, բողոքարկման ոչ ենթակա լինելու իրավաչափությունը՝ դատարանի մատչելիության եւ արդար դատաքննության սահմանադրական իրավունքների իրացումն ապահովելու համատեքստում:

ՀՀ սահմանադրական դատարանը նախ արձանագրել է, որ թե՛ դիմողների եւ թե՛ պատասխանողի մոտ քննության առարկա հիմնահարցին առնչվող որոշ անհատակություններ պայմանավորված են իշխանությունների տարանջատման սկզբունքի սահմանադրական մակարդակում իրացման խնդիրներով, ՀՀ Սահմանադրության կառուցվածքը միասնական մոտեցում չի դրսևորել իշխանությունների գործառնական կամ կառուցակարգային տարանջատման հարցում: Այն դեպքում, երբ օրենսդիր եւ գործադիր իշխանությունները ներկայացված են որպես կառուցակարգային ինստիտուտներ, ապա դատական իշխանությունն առանձնացվել է իր գործառնական դերով: Այսուհանդերձ, սահմանադրորեն դատական իշխանության համակարգում ՀՀ արդարադատության խորհուրդը դիտվում է որպես **այդ համակարգի գործառնական արդյունավետությունն ապահովելու հարցում իր սահմանադրական հստակ գործառույթներն ունեցող ու անկախ գործող ենթահամակարգ:**

ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում Հայաստանում զգալի չափով ամրապնդվել են արդարադատության խորհրդի անկախության գործառնական ու կառուցակարգային երաշխիքները, չնայած այս հարցում որոշ հիմնախնդիրներ սահմանադրական մակարդակում հետագա լուծումների անհրաժեշտություն ունեն:

Սահմանադրական ներկա իրավակարգավորումները լրացվել են նաեւ արդարադատության խորհրդի գործունեության ընթացակարգային օրենսդրական լուծումներով, ինչի հիմքում դրվել են հարցերի քննարկման դատավարական մոտեցումները, մասնավորապես, վարչական դատավարության կանոնակարգերը՝ այնքանով, որքանով դրանք կիրառելի են արդարադատության խորհրդի սահմանադրական գործառույթների արդյունավետ իրականացման համար:

Եւական է նաեւ այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրությունն արդարադատության խորհրդի գործառույթները դասակարգում է երկու խմբի՝ միջանկյալ եւ վերջնական լուծում տվող գործառույթների: Համաձայն ՀՀ Սահմանադրության 95-րդ հոդվածի՝ վերջնական լուծում բովանդակող գործառույթը միայն դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելն է: Մյուս բոլոր դեպքերում արդարադատության խորհուրդը ՀՀ Նախագահի լուծման ենթակա հարցերի վերաբերյալ տալիս է առաջարկություններ կամ ներկայացնում է եզրակացություն: Ինչ վերաբերում է դատավորի լիազորությունների դադարեցման մասին ՀՀ Նախագահին առաջարկ ներկայացնելուն, ապա **իր քնույթով պաշտոնանկության այս ընթացակարգը ենթադրում է հարցի քննարկման երեք փուլ՝ վարույթ հարուցող սուբյեկտ, արդարադատության խորհուրդ, Հանրապետության Նախագահ:** Նրանցից յուրաքանչյուրը կոչված է բացահայտելու իրավական ճշմարտությունը եւ արդարադատության համակարգի արդյունավետ գործունեության շահերից ելնելով՝ օրենքով նախատեսված առիթի ու հիմքերի շրջանակներում, սահմանված կարգով **վերաբերմունք արտահայտել դատավորի կողմից իր պաշտոնական պարտականությունների պատշաճ կատարման վերաբերյալ:** Մեթոդաբանական նշանակության կարեւոր հանգամանքն այն է, որ առավելապես գործող դատավորներից ու նաեւ գիտնական

իրավաբաններից կազմված այդ մարմինը սահմանադրական իր իրավասության շրջանակներում ու օրենքով սահմանված հիմքերի առկայության պայմաններում **գնահատում է, թե իր իսկ կողմից դատավորի պարտականությունների համար լիազորված պաշտոնատար անձը որքանով է հավատարիմ իր երդմանը եւ ինչպես է կատարում պաշտոնական պարտականությունները:**

Սահմանադրական դատարանը գտել է, որ այս համակարգն ամբողջական է՝ իր գործառույթների կատարումը ներհամակարգային կայունության ու արդյունավետության ապահովման տեսանկյունից երաշխավորելու հարցում: **Այն դուրս չի գալիս դատավորի պաշտոնական պարտականությունների կատարումը, նրա ծառայողական պիտանելիությունը գնահատելու սահմանադրական գործառույթի իրականացման շրջանակներից, ինչն այս մարմնի բացառիկ իրավասությունն է:** Այս հարցում դատարաններին վերահսկողական լիազորություն վերապահելը կիմաստագրվեր արդարադատության խորհրդի գոյությունն ընդհանրապես՝ որպես դատական իշխանության համակարգում ինքնուրույն ու սահմանադրորեն բացառապես իրեն վերապահված իրավասություն իրականացնող անկախ մարմնի:

Ինչ վերաբերում է ՀՀ դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի՝ տվյալ գործով վիճարկվող 1-ին մասի այն սահմանմանը, համաձայն որի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը քննելիս արդարադատության խորհուրդը գործում է որպես դատարան, ապա սահմանադրական դատարանը գտել է, որ «գործում է որպես դատարան» եզրույթի առնչությամբ նկատի պետք է ունենալ **արդարադատության խորհրդի գործունեության կարգը, այլ ոչ թե նրա՝ որպես արդարադատություն իրականացնող դատարանի գործառնական դերը:** Վերջինս փաստվում է նաեւ ՀՀ դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասում անմիջապես հաջորդող այն կանոնակարգմամբ, համաձայն որի՝ «Որպես դատարան գործելիս Արդարադատության խորհրդում գործերի քննության կարգի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության վարչական դատավարական օրենսգրքի նորմերն այնքանով, որքանով դրանք իրենց էությանմբ կիրառելի են Արդարադատության խորհրդում գործի քննության նկատմամբ եւ չեն հակասում սույն օրենսգրքի նորմերին»:

Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ օրենսդրական զարգացումները, ելնելով նաեւ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներից, կարող են առավել հստակ դարձնել «գործում է որպես դատարան» եզրույթը՝ նկատի ունենալով, որ որպես անկախ մարմին, որի գործառույթները կանխորոշված են սահմանադրական մակարդակով, դատավորի պաշտոնական պարտականության կատարմանն առնչվող հարցերը քննության առնելիս նրա իսկ իրավունքների պաշտպանության երաշխիքներից ելնելով **արդարադատության խորհուրդը գործում է հարցի քննարկման դատարանին բնորոշ ընթացակարգով:** Օրենսդիրը կարող է նաեւ քննության առարկա դարձնել այդ մարմնի գործունեության առանձին կանոնակարգման խնդիրը՝ ուշադրություն դարձնելով վերջինիս սահմանադրական

գործառույթներին ներդաշնակ հարցերի քննարկման կանոնակարգային լուծումներին՝ նկատի ունենալով, որ արդարադատության խորհրդի որոշումները դատական կարգով բողոքարկելի չեն: Էական է նաև կարգապահական հանձնաժողովի եւ արդարադատության խորհրդի հայեցողության սահմանների օրենսդրական առավել հստակեցումը:

ՀՀ սահմանադրական դատարանը հանգել է այն հետետությանը, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ արդարադատության խորհրդի որոշումների դատական կարգով բողոքարկման հնարավորություն չնախատեսելը բխում է ամկա սահմանադրական իրավակարգավորումների տրամաբանությունից: Այն չի խախտում իր կամքի ազատ արտահայտմամբ ու հատուկ երդմամբ պաշտոնական պարտականություններ իրականացնող դատավորի իրավունքները՝ այդ պարտականությունների կատարման համար նրան երաշխավորած մարմնի կողմից դրանց պատշաճ կատարումը գնահատելու առումով՝ հաշվի առնելով արդարադատության խորհրդի ձեւավորման, նրա բացառիկ սահմանադրական լիազորությունների, գործունեության սկզբունքների եւ աստիճանակարգված ընթացակարգերի արդյունավետ իրացման համար նախատեսված օրենսդրական երաշխիքների ակայությունը:

ՀՀ Ազգային ժողովը սահմանադրական դատարանի 18.12.2012 թվականի ՄԳՈ-1063 որոշումն ընդունելուց հետո՝ տվյալ օրենսգրքում փոփոխություն կատարելու հարցին դեռեւս չի անդրադարձել:

Մի շարք անհատական դիմումների հիման վրա քննված գործերով սահմանադրական դատարանն օրենքների վիճարկվող նորմերը ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող՝ տվյալ որոշման պատճառաբանական կամ եզրափակիչ մասերում ամրագրված իրավական դիրքորոշումների շրջանակներում կամ տվյալ որոշմամբ արձանագրել է նաեւ իրավասու մարմինների այնպիսի գործողություններ ու դրանց նպաստող՝ օրենսդրական բացեր, որոնք խոչընդոտում են անձանց սահմանադրական իրավունքների լիարժեք երաշխավորմանն ու ապահովմանը: 25.02.2011թ. ՄԳՈ-943 որոշման 11-րդ կետում ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ օբյեկտիվ իրավունքի պաշտպանության տեսանկյունից որեւէ իրավանորմ չի կարող մեկնաբանվել ու կիրառվել՝ շրջանցելով սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները: Սահմանադրական դատարանը կարելու է համարում, որ պետական իշխանության եւ տեղական ինքնակառավարման մարմիններն անհրաժեշտ ուշադրություն դարձնեն նաեւ այդ հանգամանքին:

Մասնավորապէս.

ա/ «Քաղաքացի Շավարշ Սկրտչյանի եւ այլոց դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 24.02.2012թ. ՄԳՈ-1009 որոշմամբ որոշել է.

« 1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասը համապա-

տասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ այդ մասի առաջին նախադասության դրույթների սահմանադրաիրավական այն բովանդակությամբ, համաձայն որի՝ համատեղ սեփականության մասնակիցներից յուրաքանչյուրն իրավունք ունի կնքել ընդհանուր գույքը տնօրինելու գործարքներ, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ՝ նկատի ունենալով, որ ներքոհիշյալ դեպքերում առանձին մասնակցի կողմից գույքի տնօրինման գործարք կնքելիս անհրաժեշտ է բոլոր համասեփականատերերի պոզիտիվ համաձայնությունը, ինչը կփաստի գործարք կնքող մասնակցի մոտ անհրաժեշտ լիազորության առկայությունը: Այդ դեպքերն են.

ա/ երբ համասեփականատերերի իրավունքները պետական գրանցում են ստացել եւ սեփականության իրավունքի գրանցման վկայականում հստակ նշված է, որ գույքը պատկանում է կոնկրետ սեփականատերերի՝ համասեփականության իրավունքով,

բ/ երբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով նախատեսված կարգով ու դեպքերում գույքի նկատմամբ իրավունքները եւ սահմանափակումները ծագում են օրենքի հիման վրա եւ ունեն իրավաբանական ուժ՝ անկախ պետական գրանցումից»:

Խնդիրը կարելի է նրանով, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի հետեւանքով իրավակիրառական պրակտիկայում ձեւավորվել էր մի իրավիճակ, որի պայմաններում իրավաչափ էր համարվում համատեղ սեփականության մասնակիցներից ցանկացածի կողմից առանց մյուս համասեփականատերերի իմացության կամ համաձայնության, անգամ նրանց կամքին հակառակ համատեղ սեփականությունն օտարելու գործարք կնքելը: Եվ դրա պատճառը ՀՀ վճռաբեկ դատարանի 18.09.2009 թվականի թիվ ԵԱԲԳ/0275/02/08 գործով արտահայտած իրավական դիրքորոշումն է առ այն, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված ընդհանուր համատեղ սեփականության գույքը տնօրինելու դեպքում գործում է **համասեփականատերերի համաձայնության եւ դրա տնօրինման իրավունքի առկայության կանխավարկածը:**

Տվյալ գործով կայացված որոշման պատճառաբանական մասում սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածով սահմանված՝ սեփականատիրոջ հայեցողությունը, դրա բովանդակային տարր հանդիսացող՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների կամքի ինքնավարությունը եւ գույքային ինքնուրույնությունը, ինչպես նաեւ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի վիճարկվող նորմը դիտարկելով ողջ 198-րդ հոդվածի համադրության մեջ, արձանագրել է, որ վերոնշյալ սահմանադրաիրավական պահանջներից ելնելով է, որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի թե՛ 1-ին, թե՛ 2-րդ եւ թե՛ 3-րդ մասերում սեփականության իրավունքի իրավակարգավորման հիմքում **դրել է համատեղ սեփականության մասնակիցների կամաարտահայտությունը՝ նրանց համաձայնության առկայությունը:** Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը գտել է, որ «համատեղ սեփականության մասնա-

կիցներից յուրաքանչյուրն իրավունք ունի կնքել ընդհանուր գույքը տնօրինելու գործարքներ (եթե նրանց համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ) **բոլոր համասեփականատերերի կողմից իրենց հայեցողության իրացման արդյունքում տրված պոզիտիվ (կոնկրետ, առարկայական) համաձայնության առկայության պայմաններում...**» (որոշման 7-րդ կետ),

բ/ «Քաղաքացի Շավարշ Մկրտչյանի եւ այլոց դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով *11 ապրիլի 2012թ. ՄԳՈ-1020 որոշմամբ* ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող՝ 138-րդ հոդվածը ճանաչել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող: Միաժամանակ, դատարանն արձանագրել է օրենսդրական բացի առկայությունը, որը կապված է գրավոր ընթացակարգով դատավարության հստակ կարգի բացակայության հետ: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ սահմանադրական դատարանը սույն որոշման պատճառաբանական մասում կարելու է այդպիսի օրենսդրական բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի կողմից.

«11. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաեւ գրավոր սկզբունքով քննվող գործերով դատավարության մասնակիցների իրավունքների երաշխավորման խնդիրը դիտարկել այդ իրավունքների իրականացման առանձնահատկությունների եւ դատական հայեցողության շրջանակներում դրանց դրսևորման հնարավորությունների համատեքստում, նկատի ունենալով այն հանգամանքը, որ, ի տարբերություն բանավոր ընթացակարգի (օրենսգրքի 16-րդ գլուխ), ինչպես նաեւ ՀՀ սահմանադրական արդարադատական պրակտիկայի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում որոշակիացված եւ համակարգված չեն գրավոր քննության կանոնները: Դրանց բացակայությունը, թեւ սահմանադրականության խնդիր անմիջականորեն չի առաջացնում, սակայն անձանց իրավունքների, ինչպես նաեւ արդար եւ հրապարակային դատաքննության երաշխավորմանն արգելք կարող է հանդիսանալ: Այդպիսի քննության շրջանակներում անձանց՝ օրենսգրքով երաշխավորված դատավարական իրավունքների իրականացման իրավական հնարավոր (հստակ կանխատեսելի) միջոցներն անորոշ են եւ կարող են ըստ էության լուծվել դատարանի բացարձակ հայեցողության շրջանակներում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարությունում առկա է իրավակարգավորման բաց՝ կապված գրավոր ընթացակարգով դատավարության հստակ կարգի բացակայության հետ: Այդ բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության հարցն է, որը կարող է իրացվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում գրավոր ընթացակարգի կանոններ նախատեսելով, այդ թվում՝

- գրավոր քննության նախապատրաստման եւ անցկացման կարգը,
- դատավարության մասնակիցների՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով վերապահված իրավունքների իրացման կարգը /**կապված**

դատաքննության ողջ ընթացքում գրավոր ապացույցների, լրացուցիչ նյութերի, բացատրությունների, փաստարկների (հակափաստարկների), միջնորդությունների եւ դրանց ներկայացման ժամկետների ու դատավարական այլ գործողությունների կատարման հետ/,

- գրավոր քննության շրջանակներում դատական միջանկյալ ակտերի կայացման կարգը,
- գրավոր դատաքննության ընթացքում դատարանի անհրաժեշտ գործողությունների շրջանակը /կապված՝ մի կողմից, մասնակիցների, մյուս կողմից՝ մասնակիցների եւ դատարանի միջեւ փաստաթղթաշրջանառության կազմակերպման ու կարգի (ժամկետների) հետ/,
- գրավոր քննության ընթացքի արձանագրման եւ դրան ծանոթանալու կարգը,
- գրավոր ընթացակարգով քննության արդյունքում գործով ըստ էության որոշման կայացման եւ հրապարակման կարգը:

Հետեւաբար, ելնելով վիճարկվող նորմերի եւ դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված այլ նորմերի սահմանադրաիրավական բովանդակությունից, համադրելով ՀՀ վարչական արդարադատության բնագավառում գրավոր քննության ընթացակարգի ընդհանուր իրավակարգավորումն արդար եւ հրապարակային դատաքննության իրավունքի ու դրա երաշխավորման ընթացակարգային ձեւերի կիրառման միջազգային իրավական պրակտիկայում ամրագրված սկզբունքներին ու մոտեցումներին, ինչպես նաեւ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի նորմատիվ ընդհանուր բովանդակության հետ, միաժամանակ անհրաժեշտ համարելով օրենսդիր մարմնի կողմից ՀՀ վարչական դատավարությունում առկա բացի լուծումը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածն ինքնին սահմանադրականության խնդիր չի կարող հարուցել»:

ՄԳՈ-1020 որոշման մեջ արձանագրված օրենսդրական բացի հաղթահարման հետ կապված՝ որոշման ընդունման օրվանից մինչ օրս ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում համարժեք փոփոխություններ չեն կատարվել: Վարչական դատավարության օրենսգրքի մեջ փոփոխություն է կատարվել 11.09.2012թ. ՀՕ-175-Ն օրենքով, որով գրավոր ընթացակարգի իրացման հետ կապված օրենսդրական բացի հաղթահարման վերաբերյալ իրավակարգավորումներ նախատեսված չեն: Աժ-ում այդ կապակցությամբ շրջանառության մեջ դրված օրենսդրական նախագիծ եւս առկա չէ: Շրջանառության մեջ են գտնվում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին թիվ Կ-130²-23.10.2012-ՊԻ-010/0 /12.10.2012թ./ եւ թիվ Կ-047²-22.08.2012-ԳԿ-010/0 /21.08.2012թ./ նախագծերը, որոնցում եւս անդրադարձ կատարված չէ ՄԳՈ-1020 որոշման մեջ բարձրացված հարցերին,

զ/ «Քաղաքացի Գալուստ Շիրինյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը

որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 18.07.2012թ. ՍԳՈ-1038 որոշմամբ որոշել է.

«2. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ եւ 102-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ մասի, 298-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների համադրված վերլուծությունից բխում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությունը սույն գործի շրջանակներում այդ նորմի կիրառման պահին չի բացառել աշխատանքային պայմանագրի բացակայության պայմաններում, սակայն համապատասխան ապացույցների առկայության դեպքում աշխատողի՝ իր փաստացի կատարած աշխատանքի դիմաց համարժեք հատուցում ստանալու իրավունքի դատական պաշտպանության հնարավորությունը»:

Խնդիրը կարեւորվում է նրանով, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի հետեւանքով իրավակիրառական պրակտիկայում ձեւավորվել էր մի իրավիճակ, որի պայմաններում բացառվում էր փաստացի կատարած աշխատանքի դիմաց աշխատավարձ ստանալու կամ փաստացի կատարած աշխատանքի դիմաց աշխատավարձի գումարի՝ դատական կարգով բռնագանձման պահանջ ներկայացնելու իրավունքը: Նման իրավիճակը հետեւանք է նրա, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի՝ սեփական մեկնաբանության հիման վրա իրավակիրառողներն աշխատանքային իրավահարաբերությունների առկայության փաստը հաստատող միակ ապացույցը ճանաչում էին աշխատանքային պայմանագիրը՝ անտեսելով տվյալ անձի տվյալ գործատուի մոտ փաստացիորեն կատարած աշխատանքի եւ, հետեւաբար՝ փաստական աշխատանքային հարաբերությունների առկայության փաստը:

Տվյալ գործով կայացված որոշմամբ, հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ մասի այն իրավակարգավորումը, ըստ որի՝ աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսդրությամբ եւ այլ իրավական ակտերով, եթե այլ բան նախատեսված չէ աշխատանքային օրենսդրությամբ, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարել վիճարկվող դրույթը դիտարկել ինչպես ՀՀ աշխատանքային օրենսգրքի՝ վիճարկվող դրույթի հետ համակարգային փոխկապակցվածության մեջ գտնվող դրույթների, այնպես էլ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ պայմանագրային իրավունքին առնչվող համապատասխան դրույթների հետ համակցության մեջ:

Այդ կապակցությամբ, հղում կատարելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին կետին, ՀՀ աշխատանքային եւ քաղաքացիական օրենսգրքերի վերաբերելի նորմերի համադրված վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանը գտել է, որ. **«ՀՀ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող նորմը, որպես աշխատանքային իրավահարաբերությունների ծագման միակ հիմք սահմանելով աշխատանքային պայմանագիրը, չի բացառում գրավոր աշխատանքային պայմանագրի բացակայության պայմաններում աշխատանքային հարաբերություններից բխող աշխատանքային պարտականուր-**

յունների փաստացի կատարման առկայության ապացուցման դեպքում անձի իրավունքների, այդ թվում՝ փաստացի կատարված աշխատանքի դիմաց վարձատրության պահանջի իրավունքի, արդյունավետ պաշտպանության հնարավորությունը» (որոշման 7-րդ կետ):

Միաժամանակ, տվյալ գործով կայացված որոշման 8-րդ կետում սահմանադրական դատարանը հարկ է համարել արձանագրել, որ ՀՀ վճռաբեկ դատարանը դեռևս 2007թ. դեկտեմբերի 25-ի թիվ 3-1848/ՎԳ/ քաղաքացիական գործով ընդունված որոշմամբ հստակ իրավական դիրքորոշումներ է արտահայտել աշխատանքային պայմանագրի հասարակ գրավոր ձևեր չպահպանելու իրավական հետեւանքների, մասնավորապես, օրենքով սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրի բացակայության պայմաններում փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայությունն այլ ապացույցներով հիմնավորելու հնարավորության առնչությամբ: Նշված որոշման մեջ ՀՀ վճռաբեկ դատարանը խնդրո առարկայի վերաբերյալ, մասնավորապես, նշել է. «...դեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործի նկատմամբ կիրառելի են գործարքի ձեւին վերաբերող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի դրույթները ...»:

Արդյունքում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարել նաեւ արձանագրել, որ դիմողի վերաբերյալ գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի ԵԿԳ/2228/02/10 քաղաքացիական գործով արտահայտած այն դիրքորոշումը, համաձայն որի՝ գրավոր աշխատանքային պայմանագրի բացակայությունն իր աշխատանքային պարտականությունների կատարմանը փաստացիորեն անցած անձին զրկում է ի հիմնավորումն փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայության այլ ապացույցի հիման վրա իր իրավունքների պաշտպանությունից, այդ թվում՝ դատական պաշտպանության հնարավորությունից, շեղում է ՀՀ վճռաբեկ դատարանի հիշյալ որոշման իրավական դիրքորոշումից,

դ/ «Քաղաքացի Արտակ Գազարյանի դիմումի հիման վրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.8-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով 19 սեպտեմբերի 2012թ. ՄԳՈ-1048 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.8-րդ հոդվածը ճանաչել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող: Միաժամանակ, սահմանադրական դատարանն իր որոշման մեջ կրկին ընդգծել է. «...Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքի ընդունման, խորհրդային իրավակարգավորումների հատվածական փոփոխությունների ոչ նպատակահարմարության եւ առկա իրավակարգավորման շրջանակների հստակեցման անհրաժեշտությունը՝ ելնելով միջազգային ժամանակակից փորձի ուսումնասիրման արդյունքներից: Մասնավորապես, դա

վերաբերում է իրավակարգավորումների հայեցակարգային ամբողջականության եւ միասնականության երաշխավորմանը, վարչաիրավական հարաբերություններում իրավասուբյեկտության շրջանակների որոշակիացմանը, իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու խնդրի համակարգային կանոնակարգմանը, վարչական պատասխանատվության՝ իրավական պատասխանատվության այլ տեսակներից (քաղաքացիական, քրեական) սահմանազատելու իրավական չափանիշների առավել հստակեցմանը եւ մի շարք այլ սկզբունքային՝ հայեցակարգային նշանակության հարցերին»:

Սույն որոշման ընդունման օրվանից ի վեր Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում դեռեւս փոփոխություններ տեղի չեն ունեցել: Շրջանառության մեջ են դրվել Պ-175⁵-11.12.2012-ԱՄ-010/0 /2012թ. դեկտեմբերի 11-ին/, Կ-150-21.11.2012-ԳԲ-010/0/2012թ. նոյեմբերի 20-ին/ եւ Կ-135⁴-01.11.2012-ՊԱ-010/0 /2012թ. հոկտեմբերի 31-ին/ նախագծերը, որոնք գործող օրենսգրքում հայեցակարգային փոփոխություններ չեն նախատեսում: Բացի դրանից, ՀՀ վարչական իրավախախտումների մասին օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին Կ-148³-15.11.2012-ՏՏ-010/2 նախագիծն ընդունվել է երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ 2012թ. դեկտեմբերի 6-ին, Կ-115-12.10.2012-ՏՏ-010/1 օրինագիծն ընդունվել է երկրորդ ընթերցմամբ սույն թվականի դեկտեմբերի 19-ին, սակայն վերջինները եւս ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում հայեցակարգային փոփոխություններ չեն նախատեսում,

ե/ «Քաղաքացի Գայանե Աշուղյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի եւ 380-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 16.10.2012թ. ՍԳՌ-1052 որոշմամբ, ինչպես նշվեց, որոշել է.

«1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնքանով, որքանով երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի **տրամադրումը** բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին եւ վերջինից անկախ պատճառներով այդ ժամկետի բացթողումն իրավունքի ուժով /ex jure/ ճանաչվում է հարգելի:

...

3. Սույն գործով վեճի առարկա հոդվածների հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 402-րդ հոդվածի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնքանով, որքանով հոդվածի 2-րդ մասի «**ուղարկվում է**» եզրույթը երաշխավորում է այդ ժամկետում դատարանի **ամբողջական ակտի տրամադրումը /հասանելիությունը/** օրենքով նախատեսված սուբյեկտներին»:

Խնդրի կարեւորության մասին արդեն իսկ նշվել է: Ինչ վերաբերում է վերը նշված իրավական դիրքորոշումներին, ապա դրանցում «այնքանով, որքանով» բառակապակցության ամրագրմամբ, հաշվի առնելով նաեւ տվյալ գործով կայացված որոշման պատճառաբանական մասում ամրագրված իրավական դիրքորոշումները, սահմանադրական դատարանն ուղղորդել է իրավակիրառողին չ՛հ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի եւ 402-րդ հոդվածի դրույթներն ընկալել եւ կիրառել հետեւյալ կերպ. դատական ակտի բողոքարկման ժամկետը պետք է հաշվվի այն պահից, որ պահից որ տվյալ դատական ակտը **տրամադրվել /հասանելի է դարձել/** դատական ակտի հասցեատիրոջը, հակառակ պարագայում, այն է՝ դատական ակտն ավելի ուշ ստանալու դեպքում, դատական ակտի բողոքարկման համար սահմանված ժամկետի բացթողումը պետք է համարվի որպես տվյալ դատական ակտի հասցեատիրոջ կամքից անկախ պատճառներով բացթողում, եւ որն իրավունքի ուժով /ex jure/, այլ ոչ թե դատարանի հայեցողությամբ, պետք է ճանաչվի հարգելի: Այսինքն՝ չ՛հ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի եւ 402-րդ հոդվածի դրույթները համապատասխանում են չ՛հ Սահմանադրությանը միայն վերը նշված բովանդակությամբ:

Չ՛հ Ազգային ժողովի կողմից հիշյալ իրավական դիրքորոշումների օրենսդրական իրացման ուղղությամբ դեռեւս կոնկրետ քայլեր չեն ձեռնարկվել:

Ընտրական վեճերի հետ կապված գործերի քննության արդյունքներով չ՛հ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում կրկին անդրադառնալ ընտրական իրավունքի դատական պաշտպանության սահմանադրաիրավական առանձնահատկություններին, նկատի ունենալով պրակտիկայում առկա ոչ հստակ պատկերացումները եւ ընտրական գործընթացներին մասնակից իրավասուբյեկտների կողմից իրենց իրավունքների ոչ պատշաճ իրացման վիճակը:

Ընտրական գործընթացների իրավակարգավորման վերջին տարիների փոփոխությունները չայաստանում վերաբերում են նաեւ ընտրական իրավունքի դատական պաշտպանությանը: Առաջին հերթին նկատի պետք է ունենալ 2005թ. սահմանադրական փոփոխությունները, երբ, մասնավորապես, վերանայվեց Սահմանադրության 100-րդ հոդվածի 3-րդ կետը, համաձայն որի՝ սահմանադրական դատարանը լուծում էր Հանրապետության Նախագահի եւ պատգամավորների **ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերը**: Գործող Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետում ամրագրվեց նոր դրույթ, համաձայն որի՝ սահմանադրական դատարանն օրենքով սահմանված կարգով լուծում է Հանրապետության Նախագահի եւ պատգամավորների ընտրությունների արդյունքներով **ընդունված որոշումների հետ կապված վեճերը**: Ձեւավորվեց ընտրական իրավունքի դատական պաշտպանության նոր համակարգ: Այս հարցում կարեւոր դերակատարություն վերապահվեց 2008 թվականից Հայաստանի Հանրապետությունում գործող վարչական դատարանին: Ընդ որում, 2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված չ՛հ վարչական դատավա-

րության օրենսգրքի 145-րդ հոդվածով սահմանվեց, որ թեկնածուների ու կուսակցությունների **ընտրական** ցուցակները, ցուցակներում ընդգրկված թեկնածուներին գրանցելու, չգրանցելու, գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելու վերաբերյալ վարչական ակտերի իրավաչափությունը վիճարկելու մասին գործերն ըստ էության քննում եւ **լուծում է վարչական դատարանը կոլեգիալ՝ 5 դատավորի կազմով: Նույն կարգով են քննվում նաեւ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նորմատիվ բնույթ ունեցող որոշումների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերը:**

Ուշադրության է արժանի եւ այն, որ համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ հոդվածի՝ ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերով **վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը վերջնական են, վերանայման ենթակա չեն եւ ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:**

Նկատի ունենալով ընտրական իրավունքի դատական պաշտպանության դատավարական առանձնահատկություններն ու ընդդատության հանգամանքը՝ ՀՀ ընտրական օրենսգրքի մի շարք հոդվածներ նախատեսում են, որ առանձին ընտրական վեճեր քննվում եւ լուծվում են **ՀՀ վարչական դատարանի օրենսգրքով սահմանված կարգով:** Մասնավորապես, համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքի 12-րդ հոդվածի՝ «Ընտրողների ցուցակներում անճշտությունների վերացման եւ ցուցակում լրացում կատարելու վերաբերյալ վեճերը **լուծվում են Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով եւ ժամկետներում**»: Ընտրողների ցուցակների ճշգրտման վերաբերյալ գործերը վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով քննում են պատասխանողի գտնվելու վայրի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանները /ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ/:

ՀՀ ընտրական օրենսգրքի 118-րդ հոդվածը սահմանում է՝ «Պատգամավորի թեկնածուի գրանցումը մերժելու կամ անվավեր ճանաչելու մասին ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը կարող է վիճարկվել Հայաստանի Հանրապետության **վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով եւ ժամկետներում**»: Իսկ համաձայն 112-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի կամ դրանում ընդգրկված թեկնածուի գրանցումը մերժելու, գրանցումն անվավեր ճանաչելու մասին կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումը կարող է վիճարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով եւ ժամկետներում»:

Ընդ որում, ՀՀ ընտրական օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի գրանցումը դատարանի վճռի հիման վրա ուժը կորցրած է ճանաչվում, եթե խախտվել են սույն օրենսգրքի 18-րդ հոդվածի 8-րդ մասի կամ սույն օրենսգրքի 26-րդ հոդվածի դրույթները»: Իսկ օրենսգրքի 18-րդ հոդվածի 8-րդ մասը, մասնավորապես, սահմանում է, որ «Նախընտրական քարոզչության սահմանված

կարգի այնպիսի խախտման դեպքում, որը կարող է էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա, եթե այն կատարել է թեկնածուն, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունը, կուսակցությունների դաշինքը, ապա թեկնածուին, կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակը գրանցած հանձնաժողովը դիմում է դատարան՝ թեկնածուի, կուսակցության, կուսակցության դաշինքի ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար»:

Օրենսգրքի 46-րդ հոդվածն իր հերթին սահմանում է. «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) (բացառությամբ համապետական ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումների) կարող են բողոքարկվել վարչական դատարան»: Ի դեպ, նույն հոդվածի համաձայն՝ թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի, ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու մասին **դիմում կարող է ներկայացվել մինչև քվեարկության օրը**:

Ակնհայտ է, որ այստեղ հստակեցված է ոչ միայն դատական իրավագործության շրջանակը, այլև շեշտված է, թե դատավարական ինչ ընթացակարգով ու ժամկետներում այդ հարցերը կարող են քննվել եւ լուծում ստանալ:

Ասվածից հետեւում է, որ ընտրական իրավունքի արդյունավետ պաշտպանության համար անհրաժեշտ է.

ա/ հստակ պատկերացնել դատական յուրաքանչյուր ատյանի իրավագործության շրջանակները,

բ/ նկատի ունենալ, որ յուրաքանչյուր մարմին իրավասու է կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված է Սահմանադրությամբ կամ օրենքով,

գ/ **օրենքով սահմանված ժամկետներում եւ կարգով** քայլեր ձեռնարկել իրավունքի պաշտպանության հարցում՝ այն դատարանում, որը դրա իրավագործությունն ունի,

դ/ հաշվի առնել, որ ՀՀ սահմանադրական դատարանը ոչ թե այլ դատարանների համար վերադաս դատարան է, այլ իրականացնում է Սահմանադրությամբ միայն իրեն վերապահված կոնկրետ իրավասություն:

ՀՀ օրենսդրությամբ սահմանադրական դատարանն իրավասու չէ քննության առարկա դարձնել բոլոր այն հարցերը, որոնք պետք է նախապես քննության առնվեն եւ իրավական լուծում ստանան ՀՀ վարչական դատարանում, որի որոշումներն այդ հարցերով, ինչպես նշվեց, վերջնական են եւ վերանայման ենթակա չեն:

ՍԳՈ-1028, 1029, 1030, 1031, 1033, 1034, 1035 որոշումներով ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ նշված հանգամանքները սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների կողմից հիմնականում հաշվի չեն առնվել:

Մարդու իրավունքների պաշտպանի դիմումների հիման վրա ընդունված ՍԳ որոշումները եւ դրանց կատարումը

1. «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով 17.04.2012թ. ՍԳՈ-1022 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը որոշել է.

«1.Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սահմանադրաիրավական այն բովանդակությամբ, համաձայն որի՝ վարչական դատավարությունում հայցադիմումի ընդունելիության հարցի քննության փուլում այն չի կարող ընկալվել ու մեկնաբանվել որպես նյութական իրավունքի խախտման առկայության կամ բացակայության փաստը հաստատելու՝ օրենքով նախատեսված պահանջ կամ հայեցողություն»:

Տվյալ գործով կայացված որոշման 7-րդ կետում սահմանադրական դատարանն ինքնանպատակ չի համարել այն հանգամանքը, որ օրենսգրքի վիճարկվող դրույթում օգտագործված է «ակնհայտորեն» բառը: Այդ կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրել է հետեւյալը. «Վերջինս վկայում է այն մասին, որ օրենսդիրը հայցադիմումի ընդունելիության փուլում բացառում է վարչական դատարան դիմելու իրավունքի առկայությունն ստուգելու համար նյութական իրավունքի խախտման փաստի առկայության կամ բացակայության հարցն առանց համապատասխան դատավարական ընթացակարգերի քննության առարկա դարձնելը: Օրենսգրքի վիճարկվող դրույթում «ակնհայտորեն» բառը ենթադրում է, որ առանց նյութական իրավունքի խախտման փաստի բացահայտման՝ կասկածից վեր է տվյալ իրավունքը հայցվորին չպատկանելը, հայցադիմումում խախտված տվյալ իրավունքը հայցվորին պատկանելու վերաբերյալ հիմնավորվածության բացակայությունը կամ այդպիսի ենթադրյալ հիմնավորման ակնհայտ անհիմն լինելը, վիճարկվող վարչական ակտի, գործողության կամ անգործության եւ հայցվորի իրավունքների եւ ազատությունների ենթադրյալ խախտման փաստի միջեւ առկա հնարավոր պատճառահետեւանքային կապի բացակայությունը, այդպիսի կապի վերաբերյալ հիմնավորվածության բացակայությունը կամ այդպիսի ենթադրյալ հիմնավորման ակնհայտ անհիմն լինելը: Օրենսգրքի վիճարկվող դրույթում «ակնհայտորեն» բառի ամրագրմամբ օրենսդիրը նպատակ է հետապնդել հայցադիմումի ընդունելիության փուլում ստուգելու ոչ թե նյութական իրավունքի խախտման առկայությունը, այլ ենթադրյալ խախտված իրավունքը տվյալ անձին պատկանելու հանգամանքը, այսինքն՝ հայցվորի՝ «շահագրգիռ անձ» հանդիսանալու հանգամանքը»:

Իր վերոհիշյալ իրավական դիրքորոշումը հիմնավորելու համար սահմանադրական դատարանը նաեւ հիմք է ընդունել ՀՀ սահմանադրական դատա-

րան ներկայացված՝ ՀՀ դատական դեպարտամենտի դիրքորոշումներում կատարված այն շեշտադրումը, համաձայն որի՝ «...սույն նորմում տեղ գտած ձեռնարկումը կարող է վերաբերել միայն չափազանց պարզորոշ, միանշանակ եւ հստակ հայցադիմում ներկայացնելու իրավունք չունենալուն, երբ դատարանն աներկբայորեն եւ հիմնավոր կերպով գտնում է, որ տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձն աշխատի հայցադիմում ներկայացնելու իրավունք չունի, եւ, իհարկե, չի վերաբերում այն դեպքերին, երբ դատարանը գործի ամբողջական եւ մանրակրկիտ ուսումնասիրության, մասնավորապես, նյութական իրավունքի խախտման առկայության հարցի գնահատման արդյունքում է հանգում նմանատիպ դիրքորոշման»:

2. «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին պարբերության եւ 9-րդ մասի 1-ին պարբերության, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով 02.10.2012թ. ՍԳ-Ո-1050 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը որոշել է.

«1. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին պարբերության եւ 9-րդ մասի 1-ին պարբերության, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում»:

Խնդիրը կարելի է նրանով, որ իրավակիրառողը «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին պարբերության եւ 9-րդ մասի 1-ին պարբերության, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի դրույթները կիրառում էր ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ վավերացված միջազգային պայմանագրերի նորմերի՝ օրենքների նորմերի նկատմամբ գերակա իրավաբանական ուժի սկզբունքային պահանջի անտեսմամբ, ինչը դիմողի մոտ առաջացրել էր վերը նշված օրենքի դրույթների հակասահմանադրականության կասկած: Մասնավորապես, իրավակիրառողը չէր կիրառում Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին Հաագայի 1961թ. հոկտեմբերի 5-ի կոնվենցիան, օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի վավերականության փոխադարձ ճանաչման հետ կապված իրավահարաբերությունները կանոնակարգող երկկողմ եւ բազմակողմ միջազգային պայմանագրերը, որպիսի հանգամանքը շեշտադրված է տվյալ գործով սահմանադրական դատարանի կայացրած որոշման պատճառաբանական մասի 7-րդ կետում: Այսինքն՝ սահմանադրական դատարանն ուղղորդել է իրավակիրառողին ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասին համահունչ՝ սոցիալական ապահովության ոլորտում կիրառել նաեւ վերը նշված միջազգային պայմանագրերը:

Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացի հանդիսացող այն կենսաթոշակատուներ-

րին, որոնք բնակվում են կենսաթոշակային ապահովության բնագավառում միջ-պետական համաձայնագիր չկնքած պետությունում, կամ Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին Հաագայի 1961թ. հոկտեմբերի 5-ի կոնվենցիայի մասնակից չհանդիսացող պետությունում, կամ օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի վավերականության փոխադարձ ճանաչման հետ կապված իրավահարաբերությունները կանոնակարգող երկկողմ եւ բազմակողմ միջազգային պայմանագրերի մասնակից չհանդիսացող պետություններում, սահմանադրական դատարանը տվյալ գործով կայացրած որոշման 7-րդ կետում արձանագրելով, որ օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ եւ 9-րդ մասերի դրույթներով պահանջվող փաստաթղթերի շրջանակը միայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնող նոտարի հաստատած փաստաթղթերով սահմանափակելը վերը նշված կենսաթոշակառուների համար, ի տարբերություն Հայաստանի Հանրապետությունում բնակվող կենսաթոշակառուների, առաջացնում է Հայաստանի Հանրապետություն վերադառնալու անհրաժեշտություն, այդուհանդերձ, գտել է, որ նշված հանգամանքը որեւէ կերպ չի հանգեցնում Սահմանադրության 14.1-րդ հոդվածում ամրագրված՝ խտրականության արգելման սկզբունքի խախտման, քանի որ, «**նախ**՝ նշված փաստաթղթերը ներկայացնելու պարտականությունը սահմանված է բոլոր կենսաթոշակառուների համար, **երկրորդ**՝ դրանց համապատասխանաբար հաստատումը կամ վավերացումը սահմանափակված է միեւնույն սուբյեկտով՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնող նոտարով, **երրորդ**՝ ցանկացած իրավունքի իրացմանն ուղղված իրավակարգավորումների արդյունքում առաջացող **փաստացի իրավիճակը, տվյալ դեպքում՝ Հայաստանի Հանրապետություն վերադառնալու անհրաժեշտությունը**, եթե այդ իրավիճակը կապված չէ միեւնույն կատեգորիայի անձանց համար իրավունքների եւ պարտականությունների տարբեր ծավալներ սահմանելու հետ, չի կարող հանգեցնել անխտրականության սկզբունքի խախտման: Նշված փաստացի իրավիճակը չի կարող հանգեցնել նաեւ տվյալ իրավունքի ոչ ողջամիտ սահմանափակման, եթե սահմանված իրավակարգավորումը հետապնդում է իրավաչափ նպատակ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում օրենքով սահմանված իրավակարգավորման նպատակի իրավաչափությունը պայմանավորված է նրանով, որ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական համաձայնագիր չկնքած պետությունում կամ Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին Հաագայի 1961թ. հոկտեմբերի 5-ի կոնվենցիայի մասնակից չհանդիսացող պետությունում, կամ օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի վավերականության փոխադարձ ճանաչման հետ կապված իրավահարաբերությունները կանոնակարգող երկկողմ եւ բազմակողմ միջազգային պայմանագրերի մասնակից չհանդիսացող պետություններում բնակվող կենսաթոշակառուների առնչությամբ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հավելյալ բեռ՝ ստուգելու այդ պետություններում տրված՝ օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ եւ 9-րդ

մասերի 1-ին պարբերություններով նախատեսված փաստաթղթերի իսկությունը եւ այն էլ՝ համապատասխան միջազգային իրավական հիմքերի բացակայության պայմաններում: Տվյալ պարագայում օրենքով սահմանված իրավակարգավորման իրավաչափությունը՝ վերը նշված կենսաթոշակառուների առնչությամբ, պայմանավորված է նաեւ կենսաթոշակ վճարելու բնագավառում հնարավոր իրավախախտումների կանխման, դրա արդյունքում՝ կենսաթոշակառուի իրավունքների երաշխավորման եւ բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործման անհրաժեշտությամբ»:

3. «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով 09.10.2012թ. ՄԳՌ-1051 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը որոշել է.

«1. «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի, ինչպես նաեւ այդ հոդվածի հետ համակարգային առումով փոխկապակցված 18-րդ հոդվածի դրույթներով Կազմակերպության՝ դատարան դիմելու իրավունքի սահմանափակումները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը **միայն այն իրավակարգավորման շրջանակներում**, երբ Կազմակերպությունը ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից կանոնի հրաժարվելու վերաբերյալ օրենքով սահմանված կարգով համաձայնագիր է կնքել վերջինիս գրասենյակի հետ»:

Խնդիրը կարելի է նրանով, որ Ֆինանսական համակարգի հաշտարարի ինստիտուտի ներդրմամբ նպատակ է հետապնդվել ապահովել ֆինանսական ոլորտում **ֆիզիկական անձ սպառողների իրավունքների ու շահերի պաշտպանությունը**՝ հիմք ընդունելով «Դատարանների աշխատանքի չափազանց ծանրաբեռնվածությունը կանխելու եւ նվազեցնելու միջոցառումների վերաբերյալ» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 1986 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ R (86)12 հանձնարարականը եւ «Սպառողների վեճերի արտադատական լուծման համար պատասխանատու մարմինների վրա տարածվող սկզբունքների մասին» Եվրոպական հանձնաժողովի 1998 թվականի մարտի 30-ի թիվ 98/257/EC հանձնարարականում ամրագրված սկզբունքները: Հաշվի առնելով այս առանձնահատկությունը՝ օրենքով սահմանվել է այնպիսի իրավակարգավորում, համաձայն որի՝ նախ, Հաշտարարի որոշումը պարտադիր է դառնում միայն այն դեպքում, երբ Հաճախորդն այն ընդունել է: Երկրորդ, Հաճախորդի կողմից Հաշտարարի որոշումն ընդունելու պարագայում այն դառնում է պարտադիր ոչ միայն իր, այլեւ մյուս կողմի՝ Կազմակերպության համար, եւ վերջինս արդեն այդ որոշումը կարող է վիճարկել դատական կարգով՝ բացառապես «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածում ամրագրված **սահմանափակ** հիմքերի շրջանակներում, այն է՝ առանց այդ որոշումներն **ըստ էության բողոքարկելու իրավունքի**, եթե, իհարկե,

նա Հաշտարարի գրասենյակի հետ կնքած գրավոր համաձայնագրով չի հրաժարվել Հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից: Այս վերջին դեպքն իրավաչափ է, քանի որ Հաշտարարի գրասենյակի հետ կնքած գրավոր համաձայնագրով հրաժարումը դիտարկվում է որպես ֆինանսական կազմակերպության **ազատ կամահայտնություն**:

Խնդրահարույց է միայն այն դեպքը, երբ առկա չէ հիշյալ գրավոր համաձայնագիրը: Այս դեպքում, Հաշտարարի որոշումներն իրավասու դատարան վիճարկելու հիմքերի սահմանափակումը՝ այնքանով, որքանով չի նախատեսում այդ որոշումները դատական կարգով ըստ էության վիճարկելու հնարավորություն, իրավաչափ չէ եւ հանգեցնում է ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով սահմանված իրավունքների իրացման արգելափակմանը: Այդ մասին սահմանադրական դատարանը նշել է տվյալ գործով կայացված որոշման պատճառաբանական մասի 8-րդ կետում: Այս իրավական դիրքորոշմամբ սահմանադրական դատարանն ուղղորդել է օրենսդիր մարմնին «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքում վերը նշված գրավոր համաձայնագիրը չստորագրած ֆինանսական կազմակերպությունների համար սահմանելու համապատասխան իրավակարգավորում, որը թույլ կտար վերջիններիս Հաշտարարի որոշումները վիճարկելու **ըստ էության**:

4. «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 260-րդ հոդվածի 3-րդ մասի եւ 262-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով 23.11.2012թ. ՍԳ-Ռ-1059 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը որոշել է.

«1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 260-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Վարչական իրավախախտում կատարելու համար **ձերբակալված անձի խնդրանքով** նրա գտնվելու վայրի մասին տեղյակ են պահվում հարազատները, աշխատանքի կամ ուսման վայրի աղմինիստրացիան» դրույթը ճանաչել ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին հակասող եւ անվավեր:

2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները ճանաչել ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 3-րդ մասի եւ 103-րդ հոդվածի 4-րդ եւ 5-րդ մասերի պահանջներին հակասող եւ անվավեր:

3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված՝ օրենսգրքի 262-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները ճանաչել ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 16-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին հակասող եւ անվավեր»:

Խնդիրը կարելուովում է նրանով, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքն ընդունվել է խորհրդային տարիներին՝ 1985 թվականի դեկտեմբերի 6-ին, եւ դրանով սահմանված իրավակարգավորումները

տարբերվում են ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավակարգավորումներից: Մասնավորապես, խոսքը վերաբերում է վարչական կարգով ձեռքբերված անձանց՝ այդ մասին այլ անձանց տեղեկացնելու իրավունքին, ինչպես նաև ձեռքբերված ժամկետներին, դրանք երկարաձգելու հնարավորությանը եւ կարգին: Օրենսգրքի 260-րդ հոդվածի 3-րդ մասը, ի տարբերություն ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորման, վարչական իրավախախտման համար ձեռքբերված անձի՝ այդ մասին այլ անձանց տեղյակ պահելու իրավունքի իրացման պարագայում նախատեսել է միջնորդավորված կառուցակարգ, ըստ որի՝ նախ, ձեռքբերված իրավունքի իրականացման համար որպես նախապայման է հանդիսանում վերջինիս **խնդրանքը**՝ ուղղված իրավասու պաշտոնատար անձին: Երկրորդ՝ դիտարկվող իրավակարգավորմամբ այլ անձանց տեղյակ պահելու գործընթացի անմիջական իրականացման իրավասությունը վերապահված է ոչ թե ձեռքբերված անձին, այլ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործով վարույթն իրականացնող մարմնի իրավասու պաշտոնատար անձին: Երրորդ՝ օրենսգրքի 260-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսել է անձանց առավել սահմանափակ շրջանակ, որոնք կարող են տեղեկացվել տվյալ անձի ձեռքբերված մասին: Իսկ ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով՝ ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի՝ հիշատակված իրավունքի իրացումը չի կրում միջնորդավորված բնույթ, կախվածության մեջ չի դրվում որեւէ պաշտոնատար անձի հայեցողությունից, ուղղակիորեն վերապահված է ձեռքբերվածին:

Այդ կապակցությամբ տվյալ գործով կայացված որոշման 4-րդ կետում սահմանադրական դատարանը գտել է, որ. «ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությամբ ամրագրված իրավունքն անձն իրականացնում է **անձամբ եւ անմիջականորեն**, իսկ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործով վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ազատությունից զրկված անձին ապահովել քաղաքացիական շրջանառության մեջ գտնվող բոլոր անհրաժեշտ տեխնիկական միջոցներով, որոնք նախատեսված են անձանց հաղորդակցման համար»:

Վերը նշված իրավական դիրքորոշումներից բխում է, որ սահմանադրական դատարանը դրանով միաժամանակ կարեւորել է իրավակիրառական պրակտիկայում վարչական կարգով ձեռքբերված անձանց՝ ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությամբ ամրագրված իրավունքի իրացման ապահովումը՝ վերջինիս տրամադրելով քաղաքացիական շրջանառության մեջ գտնվող բոլոր անհրաժեշտ տեխնիկական միջոցները, որոնք նախատեսված են անձանց հաղորդակցման համար, որպեսզի ձեռքբերված անձը կարողանա իր ձեռքբերված մասին տեղեկացնել իր կողմից ընտրված անձին:

Ինչ վերաբերում է վարչական ձեռքբերված ժամկետներին, դրանք երկարաձգելու հնարավորությանը եւ կարգին, ապա օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասը, ի տարբերություն ՀՀ Սահմանադրության 16 եւ 103-րդ հոդվածների, «Գատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի, վարչական ձեռքա-

կալման ժամկետ է սահմանել 3 օրը, մինչդեռ Սահմանադրությամբ նախատեսված առավելագույն ժամկետը 72 ժամ է, դատախազի համար նախատեսել է վարչական ձերբակալման ժամկետը երկարաձգելու իրավասություն, մինչդեռ Սահմանադրությամբ դատախազը չունի վարչական ձերբակալման ժամկետը երկարաձգելու իրավասություն, որպիսի փաստերն արձանագրված են սահմանադրական դատարանի՝ տվյալ գործով կայացված որոշման 5-րդ կետում:

Անդրադառնալով վարչական ձերբակալման օրինականության նկատմամբ դատախազի կողմից հսկողություն իրականացնելու հնարավորությանը՝ տվյալ գործով կայացված որոշման 5-րդ կետում սահմանադրական դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ «դատախազությունն իրավասու է իրականացնելու հսկողություն վարչական ձերբակալման օրինականության նկատմամբ, ներառյալ՝ վարչական ձերբակալման ենթարկված անձանց՝ անազատության մեջ մնալու ժամկետների պահպանման նկատմամբ հսկողությունը, որի իրավական բովանդակային ծավալը չի կարող ներառել ձերբակալման ժամկետների երկարաձգումը»:

Տվյալ գործով սահմանադրական դատարանը կարեորելով իրավակիրառական պրակտիկայում ձերբակալման պահի մեկնարկի հարցը՝ օրենսգրքի 262-րդ հոդվածի 3-րդ մասը դիտարկել է օրենսգրքի վիճարկվող դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցվածության մեջ եւ անդրադառնալով նշված դրույթի սահմանադրականությանը, տվյալ գործով կայացված որոշման 5-րդ կետում արձանագրել է հետեւյալը. «Օրենսգրքի 262-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Վարչական ձերբակալման ժամկետը հաշվվում է արձանագրություն կազմելու համար խախտողին բերելու պահից, իսկ հարբած վիճակում գտնվող անձին՝ նրա սթափվելու ժամանակից»: Մինչդեռ Սահմանադրության 16-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով՝ ձերբակալման ժամկետի հաշվարկն սկսվում է **ձերբակալման պահից**: Ընդ որում, Սահմանադրության 16-րդ հոդվածի 3-րդ մասը տարբերակում չի դնում այն հանգամանքների միջեւ, թե ձերբակալված անձը հարբած է, թե՛ ոչ: Հարկ է նաեւ արձանագրել, որ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2005 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված ՀՕ-32-Ն օրենքով վարչական կալանքի ինստիտուտն ուժը կորցրած է ճանաչվել, որպիսի պարագայում առավել քան կարեորվում է ձերբակալման պահից 72 ժամը լրանալուց հետո վարչական կարգով ձերբակալված անձին ազատ արձակելու հանգամանքը»:

5. «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (22.12.2010թ. ՀՕ-243-Ն) 14-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության, 29-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի, 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 2-րդ կետերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 14.12.2012թ. ՍԳՈ-1061 որոշմամբ որոշել է.

«3. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետու-

թյան օրենքի (22.12.2010թ. ՀՕ-243-Ն) 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում, եւ այն ընդունման պահից վեց ամսվա ընթացքում չէր կարող կիրառվել Հայաստանի Հանրապետությունից ժամանակավոր բացակայած՝ Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիների նկատմամբ, ովքեր «Հյուպատոսական ծառայության մասին» ՀՀ օրենքի 24-րդ, «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածներով, «ՀՀ-ում բնակչության պետական ռեգիստրի համակարգ ներդնելու մասին» ՀՀ կառավարության 2005թ. թիվ 1231-Ն որոշման 10-րդ կետով սահմանված կարգով օտարերկրյա պետություններում հյուպատոսական հաշվառման եւ կանգնած եղել»:

Խնդիրը կապված է անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների հետադարձության արգելման սկզբունքի հետ եւ կարելովում է նրանով, որ թեպետ օրենսդիրն իրավասու է օրենսդրական փոփոխությունների արդյունքում սահմանելու կենսաթոշակի հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման լիովին նոր համակարգ, սակայն նման փոփոխությունները չեն կարող անտեսել նախորդ օրենսդրությամբ սահմանված՝ կենսաթոշակի իրավունքի առնչությամբ լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի եւ իրավական որոշակիության սկզբունքների իրացումը, որոնց երաշխավորումը պետության պարտականությունն է: Ընդ որում, սահմանադրական դատարանը նման իրավական դիրքորոշում արտահայտել է դեռեւս 2008 թվականի հունվարի 15-ին իր ՄԴՈ-723 որոշմամբ: **Մինչդեռ կենսաթոշակային ապահովության բնագավառի հետագա օրենսդրական զարգացումները ցույց են տալիս, որ օրենսդիրը հաշվի չի առել կենսաթոշակի իրավունքի առնչությամբ լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանք դրսևորելու, իրավական որոշակիության սկզբունքների իրացումն ապահովելու եւ իրավակարգավորման համաչափության սկզբունքն իրագործելու՝ պետության պարտականության առկայությունը:** Մասնավորապես, խոսքը վերաբերում է նրան, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ 22.12.2010թ. ՀՕ-243-Ն ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունում կատարված փոփոխությամբ չստացված կենսաթոշակի գումարները նախորդ երեք տարիների համար ստանալու իրավունքն ամրագրվել է նախորդ մեկ տարվա համար, եւ նախատեսվել է նաեւ նշված փոփոխությունն ուժի մեջ մտնելու համար բավականին կարճ ժամանակահատված: **Այսինքն՝ նվազեցվել է կենսաթոշակառուների իրավունքների բովանդակային ծավալը, եւ նշված նվազեցումն ուժի մեջ մտնելու համար նախատեսվել է բավականին կարճ ժամանակահատված՝ խախտելով իրավակարգավորումների կանխատեսելիության սկզբունքը:** Խնդրի կարելությունը հատկապես ցայտուն է ընդգծվում այն կենսաթոշակառուների համար, որոնք օրինական հիմքերով բացակայում են Հանրապետությունից եւ **օբյեկտիվորեն զրկված են հնարավորությունից** կարճ ժամանակահատվածում դիմելու ՀՀ կենսաթոշակային ապահովության մարմիններին՝ դեռեւս մինչեւ փոփոխություններն ուժի մեջ մտնելը գործող իրավակարգավորումների հիման վրա նախորդ երեք տարիների չստացած կենսաթոշակի գումարներն ստանալու համար:

Տվյալ գործով կայացված որոշման 7-րդ կետում սահմանադրական դատարանն արձանագրել է հետևյալը. «... ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ նման փոփոխությունների գործադրումը պետք է զուգորդվի օրենքում այնպիսի իրավապայմանների սահմանմամբ, որոնք կերաշխավորեն, մասնավորապես, կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց կողմից կենսաթոշակի ստացման իրավունքի անարգել իրականացումը եւ չեն խաթարի նրանց լեզիտիմ ակնկալիքները: Տվյալ պարագայում խնդիրն առնչվում է ՀՀ Ազգային ժողովի կողմից 19.03.2012թ. ընդունված ՀՕ-100-Ն օրենքին: Բացի այն, որ այդ օրենքի ուժի մեջ մտնելու պայմանները (23-րդ հոդված) գլխավորապես տարածվել են ՀՀ երկքաղաքացիների նկատմամբ, չեն նախատեսվել նաեւ նոր իրավակարգավորումները գործադրելու ողջամիտ ժամկետներ՝ կապված անձանց հնարավոր գործողություններն այդ փոփոխություններով պայմանավորված պահանջներին համապատասխանեցնելու հետ: ՀՀ սահմանադրական դատարանը, հիմնվելով կենսաթոշակային հարաբերությունների իրավակարգավորումների սահմանադրականության վերաբերյալ իր նախորդ որոշմամբ (ՄԳ-Ռ-1050) արտահայտած իրավական դիրքորոշումների վրա, հատկապես կարեւորում է կենսաթոշակի իրավունք ունեցող այն անձանց չվճարված կենսաթոշակի գումարի վճարման կայուն երաշխիքների առկայությունը, որոնք օրինական հիմքերով բացակայում են Հայաստանի Հանրապետությունից: Վերջիններիս առնչությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-243-Ն) 36-րդ հոդվածում առաջարկված փոփոխությունները «Հյուպատոսական ծառայության մասին» ՀՀ օրենքի 24-րդ, «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածներով, «ՀՀ-ում բնակչության պետական ռեգիստրի համակարգ ներդնելու մասին» ՀՀ կառավարության 2005թ. թիվ 1231-Ն որոշման 10-րդ կետով սահմանված կարգով օտարերկրյա պետություններում ՀՀ հյուպատոսական հիմնարկներում հաշվառված անձանց նկատմամբ համաչափ կիրառելու ողջամիտ նվազագույն ժամկետը՝ որպես օրենքի անցումային դրույթներով այդ նորմի ուժի մեջ մտնելու ժամկետ, կարող էր լինել առնվազն վեց ամիսը: Տվյալ ժամանակահատվածում պետությունը կարող էր իրացնել նաեւ իր պոզիտիվ պարտականությունը՝ համապատասխան հյուպատոսական ծառայությունների միջոցով կամ այլ կերպ իրազեկելով օրենսդրությամբ սահմանված կարգով այլ երկրներում հաշվառման կանգնած ՀՀ օրինապաշտ քաղաքացիներին՝ իրենց իրավունքների իրացմանն առնչվող օրենսդրական փոփոխությունների մասին, որպեսզի վերջիններս ի վիճակի լինեին ձեռավորել օրենսդրական փոփոխություններին համարժեք լեզիտիմ ակնկալիքներ: Այսինքն՝ իրավունքի իրացման պայմանների փոփոխությունները կարող են լինել սկզբունքորեն իրավաչափ, եթե հետապնդում են օրինաչափ նպատակներ եւ իրացվում են այդ նպատակին համաչափ միջոցներով ու ձեւերով: ...

Սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում վերոհիշյալ օրենքով չի պահպանվել իրավակարգավորման համաչափության սկզբունքը նշված կատեգորիայի անձանց նկատմամբ՝ հաշվի չի առնվել նրանց լեզիտիմ ակնկալիքների իրացման հնարավորությունը»:

Մարդու իրավունքների պաշտպանի դիմումների հիման վրա քննված գործերով սահմանադրական դատարանն օրենքների վիճարկվող նորմերը ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող՝ տվյալ որոշման պատճառաբանական կամ եզրափակիչ մասերում ամրագրված իրավական դիրքորոշումների շրջանակներում, կամ տվյալ որոշմամբ արձանագրել է նաև իրավասու մարմինների այնպիսի գործողություններ ու դրանց նպաստող՝ օրենսդրական բացեր, որոնք խոչընդոտում են անձանց սահմանադրական իրավունքների լիարժեք երաշխավորմանն ու ապահովմանը:

Մասնավորապես.

ա/ «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 260-րդ հոդվածի 3-րդ մասի եւ 262-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր 23.11.2012թ. ՄԳ-Ո-1059 որոշմամբ, անդրադառնալով իր ձեռքակալման մասին պաշտպանին տեղեկացնելու իրավունքին, տվյալ գործով կայացված որոշման 4-րդ կետում արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ այդ իրավունքը «հանդիսանում է Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով ամրագրված՝ իրավաբանական օգնություն ստանալու եւ պաշտպան ունենալու իրավունքների բաղադրատարր, որի նպատակն այլ է, քան Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությամբ ամրագրված՝ իր ձեռքակալման մասին իր կողմից ընտրված անձին տեղեկացնելու իրավունքի իրավական բովանդակությունը»:

Վերը նշված իրավական դիրքորոշումից բխում է, որ սահմանադրական դատարանը դրանով միաժամանակ ուղղորդել է իրավակիրառողին իրավակիրառական պրակտիկայում չնույնականացնել իր ձեռքակալման մասին իր ընտրած անձին տեղեկացնելու եւ այդ մասին իր պաշտպանին տեղեկացնելու իրավունքները: Վերը նշված իրավական դիրքորոշումից բխում է նաև, որ վարչական կարգով ձեռքակալված անձն իրավունք ունի այդ մասին միաժամանակ տեղեկացնելու երկու տարբեր սուբյեկտների՝ իր կողմից ընտրված անձին եւ իր պաշտպանին, եւ իրավակիրառողը չպետք է խոչընդոտի այդ իրավունքների իրացմանը:

Տվյալ գործով կայացված որոշման 6-րդ կետում, ելնելով սահմանադրական դատարանի որոշումների կատարման եւ երկրում սահմանադրական օրինականության հաստատման անհրաժեշտությունից՝ սահմանադրական դատարանը կարեւորել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի բարեփոխումը: Այդ կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրել է հետեւյալը. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում առկա են բազմաթիվ հոդվածներ, որոնք շարունակում են հղում կատարել ԽՍՀՄ օրենսդրությանը, օգտագործել «ԽՍՀՄ տարածք», «պատգամավորների տեղական խորհուրդներ», «սոցիալիստական սեփականություն», «սոցիալիստական օրինականություն», «ներքին գործերի մարմիններ» եզրույթները, սահմանել վարչական իրավախախտումների մասին

օրենսդրության բնագավառում ԽՍՀՄ իրավասությանը ենթակա հարցերը եւ այլն, ինչն առաջացնում է իրավական պետությանն անհարիր **իրավական վտանգ**, եւ դա այն դեպքում, երբ ՀՀ Սահմանադրության (27.11.2005թ. փոփոխություններով տեքստի) 117-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է. «Սահմանադրության փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո ... Ազգային ժողովը երկու տարվա ընթացքում համապատասխանեցնում է գործող օրենքները Սահմանադրության փոփոխություններին»: Ընդ որում, Սահմանադրության ընդունումից հետո օրենսգրքի մի շարք հոդվածներում նախկինում կատարված փոփոխությունների արդյունքում «ԽՍՀՄ» հապավումը փոխարինվել է «ՀՀ» հապավումով, իսկ մյուս հոդվածներում, այդ թվում՝ օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող 262-րդ հոդվածում, որում վերջին անգամ փոփոխություն է կատարվել ՀՀ Ազգային ժողովի կողմից 24.12.2004թ. ընդունված ՀՕ-68-Ն օրենքով, «ԽՍՀՄ» հապավումը շարունակում է պահպանվել:

Վերը նշված հիմնախնդրի առնչությամբ սահմանադրական դատարանը հարկ է համարում սույն գործով **կրկին անգամ արձանագրել** նման իրողությունը, որին անդրադարձել է նաեւ 19.09.2012թ. ՍԳՈ-1048 որոշման 6-րդ կետում: Նշված կետում սահմանադրական դատարանը հարկ է համարել նշել Վարչական իրավախախտումների վերաբերյալ **ՀՀ նոր օրենսգրքի ընդունման**, խորհրդային իրավակարգավորումների հատվածական փոփոխությունների ոչ նպատակահարմարության եւ առկա իրավակարգավորման շրջանակների հստակեցման անհրաժեշտությունը՝ ելնելով միջազգային ժամանակակից փորձի ուսումնասիրման արդյունքներից: Վերոնշյալի առնչությամբ ՍԳՈ-1048 որոշման 6-րդ կետում սահմանադրական դատարանը նշել է նաեւ, որ, մասնավորապես, դա վերաբերում է «իրավակարգավորումների հայեցակարգային ամբողջականության եւ միասնականության երաշխավորմանը, վարչաիրավական հարաբերություններում իրավասութեկտության շրջանակների որոշակիացմանը, իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու խնդրի համակարգային կանոնակարգմանը, վարչական պատասխանատվության՝ իրավական պատասխանատվության այլ տեսակներից (քաղաքացիական, քրեական) սահմանազատելու իրավական չափանիշների առավել հստակեցմանը եւ մի շարք այլ սկզբունքային՝ հայեցակարգային նշանակության հարցերին»:

Նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները նկատի ունենալով՝ ՀՀ վարչապետի 19.10.2010թ. թիվ 01/10.1 գրությամբ ՀՀ Ազգային ժողովին տեղեկացվել է, որ ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել եւ ՀՀ կառավարությունում քննարկվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նոր նախագիծ՝ օրենսդրական նախաձեռնության կարգով այն ՀՀ Ազգային ժողով ներկայացնելու համար: Սակայն սույն գործով սահմանադրական դատարանում ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցչի հայտարարության համաձայն՝ ՀՀ կառավարության կողմից 2010թ. նոյեմբերին նման նախագիծ ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով, սակայն 2011թ. փետրվարին այն հետ է կանչվել եւ մինչ օրս նոր նախագիծ չի ներկայացվել:

Նման իրավիճակը մարտահրավեր է ՀՀ իրավական անվտանգությանը, քանի որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի կիրառման, ինչպես նաև նույն հոդվածի 13-րդ մասի պահանջները հաշվի առնելու դեպքում իրավակարգավորման այս ոլորտում պարզապես իրավական քաոս կարող է առաջանալ: Ուստի սահմանադրական դատարանը գտնում է, որ երկրում սահմանադրական օրինականության հաստատման տեսանկյունից անհետաձգելի անհրաժեշտություն է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքի ընդունումը: Իսկ մինչ այդ դատական պրակտիկան պետք է հնարավորինս առաջնորդվի ՀՀ Սահմանադրության 3-րդ եւ 6-րդ հոդվածների այն դրույթների պահանջներով, համաձայն որոնց՝ «Պետությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք» եւ «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, եւ նրա նորմերը գործում են անմիջականորեն»: Բնականաբար, հաշվի պետք է առնվի նաև այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում վարչական կալանքի ինստիտուտն ուժը կորցրած է ճանաչվել 2005թ. դեկտեմբերի 16-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված ՀՕ-32-Ն օրենքով»,

բ/ «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (22.12.2010թ. ՀՕ-243-Ն) 14-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության, 29-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի, 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 2-րդ կետերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 14.12.2012թ. ՄԴՈ-1061 որոշման 8-րդ կետում արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ «... օրենսդիր մարմնի խնդիրն ու սահմանադրաիրավական պարտականությունն է օրինաստեղծ գործունեությունն իրականացնել ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված նորմերի ու սկզբունքների, այդ թվում՝ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսված իրավապայմանի համալիր հաշվառմամբ: Զննության առարկա օրենքի եւ ՀՀ օրենսդրական մի շարք այլ ակտերի իրավանորմերի պատշաճ կատարումը երաշխավորելու համար **ՀՀ սահմանադրական դատարանը կարելուում է նաև բնակչության պետական ռեզիստրի վարման իրավակարգավորման հետագա բարելավման խնդիրը եւ ՀՀ օրենսդրական գաղափարների ներկա վիճակին դրա ներդաշնակելու անհրաժեշտությունը»:**

Վերը նշված իրավական դիրքորոշումներից բխում է, որ սահմանադրական դատարանը կարելուրել է օրենսդրի կողմից հետագա օրենսդրական փոփոխություններ կատարելու ժամանակ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված նորմերի ու սկզբունքների, այդ թվում՝ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսված իրավապայմանը հաշվի առնելու անհրաժեշտությունը: Միաժամանակ, ելնելով Հանրապետությունից բացակայող կենսաթոշակառուների վերաբերյալ տեղեկություններ ունենալու եւ դրանով պայմանավորված՝ բյուջե-

տային միջոցների արդյունավետ օգտագործման նկատառումներից, հաշվի առնելով նաեւ «Հյուպատոսական ծառայության մասին», «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքների եւ «ՀՀ-ում բնակչության պետական ռեգիստրի համակարգ ներդնելու մասին» ՀՀ կառավարության 2005թ. թիվ 1231-Ն որոշման իրավակարգավորումները, սահմանադրական դատարանն առաջ է քաշել նաեւ բնակչության պետական ռեգիստրի վարման իրավակարգավորումների հետագա բարելավման անհրաժեշտությունը՝ դրանք ՀՀ օրենսդրական զարգացումների ներկա վիճակին ներդաշնակեցնելու տեսանկյունից:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Ազգային ժողովի կողմից ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա քննության առնված գործերում արտահայտված իրավական դիրքորոշումների իրացման ուղղությամբ դեռեւս կոնկրետ քայլեր չեն իրականացվել:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի եւս երեք դիմումների հիման վրա գործերով որոշումները կայացվելու են 2013 թվականի հունվար-փետրվար ամիսներին:

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ ՆԱԽՈՐԳ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԸՆԳՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԸ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ

ՀՀ սահմանադրական դատարանը կարելու է համարում կրկին անդրադառնալ մի շարք որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումներին, քանի որ ՀՀ Ազգային ժողովի եւ ՀՀ կառավարության կողմից դրանց ոչ համարժեք իրացումը շարունակում է մարդկանց սահմանադրական իրավունքների ոտնահարման լուրջ պատճառ հանդիսանալ

ա/ առաջին հերթին խնդրահարույց է շարունակում մնալ պետության եւ հասարակության կարիքների համար սեփականության օտարման գոյություն ունեցող պրակտիկան: Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ օրենսդիր եւ գործադիր իշխանությունները համարժեք հետետություններ չեն արել տվյալ հարցի առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳՈ-630 եւ ՍԳՈ-815 որոշումներում, ինչպես նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Հայաստանի դեմ ընդունված բազմաթիվ վճիռներում արտահայտած իրավական դիրքորոշումներից: Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանը քաղաքացիների դիմումների հիման վրա քննության առնելով «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, 4-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի, 6 եւ 7-րդ հոդվածների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը, իր՝ 2009թ. հուլիսի 14-ի ՍԳՈ-815 որոշմամբ առաջ էր քաշել մի շարք հիմնախնդիրներ, որոնք, մինչ օրս համարժեք լուծում չստանալով, բազմաթիվ քաղաքացիների սեփականության իրավունքի խախտման պատճառ են դառնում: Գատարանը նախ ընդգծել էր, որ «Հասարակության եւ պետության կարիքներ»

րի համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման սահմանադրական հիմքը բացառիկ՝ գերակա հանրային շահն է» դրույթը միանշանակ սահմանում է, որ որեւէ այլ շահ կամ նպատակ չի կարող դրվել սեփականության օտարման հիմքում: Իր հերթին, տվյալ ձեւակերպման մեջ «հիմք» եզրույթը շեշտում է այն պայմանի առկայությունը, որի դեպքում է միայն հնարավոր սեփականության օտարումը: Միարժեք է, որ սահմանադրաիրավական պայմանը միակն է՝ գերակա հանրային շահի առկայությունը, որի պարագայում հնարավոր է դառնում սեփականության օտարումը պետության եւ հասարակության կարիքների համար: Դրա հետ մեկտեղ, օրենսդրորեն չեն իրացվել ՀՀ սահմանադրական դատարանի 2006թ. ապրիլի 18-ի ՄԳ-Ո-630 որոշման 10-րդ կետի 5-րդ եւ 11-րդ պարբերություններում ամրագրված իրավական այն դիրքորոշումները, համաձայն որոնց՝ «Օրենքը պետք է սահմանի հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման կարգը, որոշակիացնելով՝ «իրավաչափ նպատակի համար սեփականության տարբեր օբյեկտների օտարման առանձնահատկությունները»: Միաժամանակ, օրենքում չի արտացոլվել սահմանադրական դատարանի 2006թ. ապրիլի 18-ի ՄԳ-Ո-630 որոշման 10-րդ կետի 13-րդ պարբերությունում ամրագրված իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ «Օրենքը միաժամանակ պետք է նախատեսի, որ **սեփականատիրոջ եւ պետության /ի դեմս նրա լիազոր մարմնի/ միջեւ կնքվում է գերակա հանրային շահով պայմանավորված՝ հասարակության եւ պետության կարիքների համար գույքի օտարման եւ համարժեք փոխհատուցման պայմանագիր**, որում պետք է հստակ շարադրված լինեն վերոհիշյալ պահանջներից բխող երկկողմ պարտավորությունները, ինչպես նաեւ այն պայմանը, որ նման պայմանագրով տրված փոխհատուցումը չի կարող դիտվել որպես հարկվող եկամուտ»: Օրենսդրական նման պահանջի բացակայությունը հանգեցրել է նրան, որ ՀՀ կառավարությունը գերակա հանրային շահի առկայությամբ պայմանավորված սեփականության օտարումը պետության եւ հասարակության կարիքների համար հաճախ պատվիրակում է այնպիսի «շահառուների», ովքեր իրենց սեփական շահը հետապնդելով՝ հաճախ դառնում են քրեական հետապնդման օբյեկտ, իսկ բազմաթիվ անձանց սեփականության իրավունքը պարզապես ոտնահարվում է:

Տվյալ հիմնախնդրի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը միանշանակ է՝ **քաղաքացու հետ իրավապայմանագրային պարտավորություն ստանձնում է ՀՀ կառավարությունը**, եւ վերջինս չի կարող պատասխանատվություն չստանձնել մարդկանց խախտված իրավունքների վերականգնման համար: Սա վերաբերում է նաեւ բոլոր այն դեպքերին, երբ շահագործողները /կառուցապատողները/ մեկ բնակարանը վաճառելով բազմաթիվ անձանց՝ հայտնվել են դատական քաշքշուկների մեջ, իսկ ՀՀ կառավարության կողմից համարժեք քայլեր չեն ձեռնարկվում մարդկանց խախտված իրավունքների վերականգնման համար: Դատական պրակտիկան սույն հարցերով նույնպես պետք է առաջնորդվի այն իրավական մոտեցմամբ, որ պե-

տության անունից սեփականության օտարման գործերով պայմանագրի կողմ է ՀՀ կառավարությունը, եւ վերջինս պարտավոր է պատշաճորեն երաշխավորել տվյալ հարցով իր պայմանագրային պարտավորությունների կատարումը.

բ/ «ՀՀ կառավարության դիմումի հիման վրա՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի եւ 114-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» *11 հոկտեմբերի 2011թ. ՄԳՈ-991* որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը, 114-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետը ճանաչել է համապատասխանող Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ հաշվի առնելով ՀՀ սահմանադրական դատարանի՝ տվյալ որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները: Մասնավորապես, ՄԳ-ն իր որոշման մեջ նշել է. «8. ... Վեճի առարկա նորմերի առնչությամբ միջազգային կազմակերպությունների, ինչպես նաեւ տարբեր երկրների օրենսդրական ու իրավակիրառական փորձի ընդհանրացման արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանը հանգում է հետևյալին.

- մինչկենսաթոշակային տարիքում որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրերի կնքումը բացառության դրսեւորում է եւ պայմանավորված է աշխատանքի բնույթի որոշ առանձնահատկություններով, ինչը պետք է օրենքով առավել հստակ նախատեսված լինի եւ չթողնվի գործատուի սուբյեկտիվ հայեցողությանը,
- մինչկենսաթոշակային տարիքում կնքվող աշխատանքային պայմանագրի հիմնական ձեւն անորոշ ժամկետով պայմանագիրն է, որի գործողության **դադարման հիմքերն ու կարգը** պետք է նախատեսվեն օրենքով եւ որոշվեն իրավունքի ուժով, **իսկ դադարեցումը** պետք է պայմանավորված լինի միայն իրավաչափ պատճառներով, ինչը, իր հերթին, հստակ պետք է նախատեսվի օրենքով,
- կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո անձի հետ աշխատանքային իրավապայմանագրային հարաբերությունների կարգավորման բնույթը եւ պայմանները փոխվում են: Եթե մինչկենսաթոշակային տարիքում ելակետն աշխատանքի ընտրության ազատության սկզբունքի երաշխավորումն է, ապա կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո կարեւորվում են անձի սոցիալական ապահովության խնդրի լուծումը եւ որոշակի ժամկետով կնքվող աշխատանքային պայմանագրով աշխատելու հնարավորությունը:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ վերոհիշյալ մոտեցումներն իրավաչափ են, հստակեցնում են աշխատանքային հարաբերությունների կանոնակարգման սահմանադրաիրավական բնույթը եւ համակարգային մոտեցմամբ, հստակ հայեցակարգի հիման վրա, օրենսդրական անհրաժեշտ կարգավորում պետք է ստանան: Դրանք համահունչ են նաեւ ՀՀ Սահմանադ-

րության 1-ին, 14.1-րդ, 32-րդ, 37-րդ եւ 48-րդ հոդվածների պահանջներին: Մի-աժամանակ, անհրաժեշտ է, որպեսզի օրենքով նորմատիվ կարգավորում ստա-նա նաեւ այն հարցը, թե որ դեպքերում է կենսաթոշակային տարիքի հասած անձանց հետ կնքվում որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր, այն իրականացվի ոչ թե գործատուի սուբյեկտիվ հայեցողությամբ, այլ տվյալ աշխատանքի կատարման հարցում կենսաթոշակային տարիքի հասած անձի կարողությունների օբյեկտիվ գնահատման արդյունքում»:

Վիճարկված հոդվածներում վերոհիշյալ դիրքորոշումներին համահունչ փո-փոխություններ դեռեւս չեն կատարվել: ՄԳՈ-991 որոշման ընդունման օրվա-նից ի վեր ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ են կատարվել 2012թ. նոյեմբերի 12-ին ընդունված ՀՕ-220 օրենքով, որով որեւէ անդրադարձ չի կատարվել ՀՀ սահմանադրական դատարանի կողմից արտա-հայտված իրավական դիրքորոշումներին: Ներկայումս շրջանառության մեջ են գտնվում աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կա-տարելու մասին Պ-175¹-11.12.2012-ԱՄ-010/0 /11.12.2012թ./ եւ Պ-171-06.12.2012-ՍՀ-010/0 /05.12.2012թ./ նախագծերը, որոնք սահմանադրական դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին չեն առնչվում: 2012 թվականի նոյեմբերի 7-ին շրջանառության մեջ է դրվել Կ-140¹-08.11.2012-ՊԻ-010/1 նախագիծն աշխատանքային օրենսգրքում փոփոխու-թյուններ եւ լրացումներ կատարելու մասին, որն ընդունվել է առաջին ընթերցմամբ 2012թ. դեկտեմբերի 6-ին, սակայն այն եւս որեւէ անդրադարձ չի կատարում վերոնշյալ հարցերին.

զ/ «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղա-քացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդ-վածին, 27-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 3-րդ մասերին եւ 43-րդ հոդվածին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով *15 նոյեմբերի 2011թ. ՄԳՈ-997* որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը ՄԳՈ-997 Հա-յաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվա-ծը ճանաչել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համա-պատասխանող՝ տվյալ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորո-շումներից բխող սահմանադրաիրավական բովանդակության եւ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների շրջա-նակներում: Նշված որոշման 11-րդ կետում, մասնավորապես, սահմանադրա-կան դատարանն արտահայտել է հետեւյալ իրավական դիրքորոշումները. «**11.** ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 14, 27, 43 եւ 47-րդ /1-ին մաս/ հոդվածների, Մարդու իրավունքների եվրոպական դատա-րանի հիշյալ եւ մի շարք այլ վճիռների հիման վրա ձեւավորված նախադեպա-յին իրավունքի, այս ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19 եւ 1087.1-րդ հոդվածների, «Չանգվածային լրատվության մասին» եւ «Տեղեկատ-վության ազատության մասին» ՀՀ օրենքների նորմերի համադրված վերլուծու-

թյունից հետեւում է. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19 եւ 1087.1-րդ հոդվածների դրույթների՝ իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան կիրառումը երաշխավորելու համար անհրաժեշտ է իրավակիրառական պրակտիկայում հաշվի առնել միջազգային իրավական հետեւյալ սկզբունքային մոտեցումները.

- նկատի ունենալով, որ գրպարտությանն առնչվող գործերով առաջանում է արտահայտվելու ազատության իրավունքի նկատմամբ սահմանափակում կիրառելը գնահատելու խնդիր, իրավակիրառողները պարտավոր են հաշվի առնել, որ **արտահայտվելու ազատության իրավունքի ցանկացած սահմանափակում պետք է սահմանված լինի օրենքով, ծառայի իրավաչափ շահ պաշտպանելու նպատակին եւ լինի անհրաժեշտ տվյալ շահն ապահովելու համար,**
- վեճի առարկա հոդվածի իմաստով անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն այլ անձանց արատավորող գործողություններից պաշտպանվում է բացառապես քաղաքացիաիրավական կարգավորման միջոցով, եւ «անձ» արտահայտությունը վերաբերելի չէ իշխանության մարմիններին որպես իրավաբանական անձ,
- «գրպարտություն» եւ «վիրավորանք» եզրույթները պետք է դիտարկել դիտավորության, անձին անվանարկելու մտադրության առկայության համատեքստում,
- չի կարող նյութական փոխհատուցում սահմանվել գնահատողական կարծիքների համար, ինչը ոչ անհրաժեշտ, անհամաչափ կերպով կսահմանափակի խոսքի ազատության հիմնարար իրավունքը, քանզի մամուլի դերն ավելին է, քան զուտ փաստեր հաղորդելը. այն պարտավոր է մեկնաբանել փաստերն ու իրադարձությունները հասարակությանը տեղեկացնելու համար եւ նպաստել հասարակության համար կարեւոր հարցերի շուրջ քննարկումներին,
- մամուլի ներկայացուցիչների՝ պատասխանողի դերում հանդես գալու հանգամանքը չի կարող դիտվել որպես գործոն՝ առավել խիստ պատասխանատվություն սահմանելու համար,
- ներպետական մարմինների որոշումը պետք է հիմնված լինի գործի համար նշանակություն ունեցող փաստերի ընդունելի գնահատման վրա,
- պետք է առանձնակի վերապահումներով մոտենալ վիրավորանքի համար նյութական փոխհատուցման միջոցների կիրառմանը՝ նկատի ունենալով, որ Եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ հանդուրժողականությունն ու լայն հայացքները ժողովրդավարության հիմքում են, եւ արտահայտվելու ազատության իրավունքը պաշտպանում է ոչ միայն ընդհանուր առմամբ ընդունելի համարվող խոսքը, այլ նաեւ հենց այն արտահայտությունները, որոնք կարող են ցնցող, վիրավորական կամ վրդովեցուցիչ համարվել ուսանց կողմից,
- նյութական փոխհատուցում նշանակելիս պետք է ըստ պատշաճի հաշվի առնվի արտահայտվելու ազատության վրա դրանց հնարավոր սահմանա-

- փակող ազդեցությունը, ինչպես նաև մատչելի այլ միջոցներով հեղինակության իրավաչափ պաշտպանության հնարավորությունը,
- արատավորող արտահայտությունների (գործողությունների) արդյունքում պատճառված վնասի դիմաց որպես առաջնահերթություն անհրաժեշտ է կիրառել ոչ նյութական փոխհատուցման ձևերը: Նյութական փոխհատուցումը պետք է սահմանափակվի գրպարտության ենթարկված անձի պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին հասցված անմիջական վնասը հատուցելով, եւ նշանակվի միայն այն դեպքերում, երբ ոչ նյութական հատուցումը բավարար չէ պատճառված վնասը փոխհատուցելու համար,
 - վնասի փոխհատուցման իրավաչափությունը որոշելիս պատասխանողի սահմանափակ միջոցները պետք է դիտվեն որպես գործոն, հաշվի առնվի պատասխանողի եկամուտների չափը, չսահմանվի պատասխանողի համար անհամաչափ ծանր նյութական բեռ, որը բացասական վճռորոշ ֆինանսական ազդեցություն կունենա վերջինիս գործունեության համար,
 - ոչ նյութական վնասի համար նյութական փոխհատուցում պահանջող հայցվորը պետք է ապացուցի այդ վնասի առկայության փաստը,
 - փոխհատուցման՝ օրենքով սահմանված առավելագույն չափը կիրառելի է միայն առավել լուրջ ու ծանրակշիռ հիմքերի առկայության դեպքերում,
 - լրկ փաստերի քննադատական գնահատականը, որը չի պարունակում փաստական ենթատեքստ, որի կեղծ լինելը հնարավոր է ապացուցել, չի կարող փոխհատուցման պահանջի հիմք հանդիսանալ: Սակայն, եթե անձի բարի համբավը ոտնահարվում է, եթե նույնիսկ ոչ ստույգ տեղեկատվությունը եղել է գնահատողական դատողություն, կարող է սահմանվել ոչ նյութական վնասի փոխհատուցում,
 - փոխհատուցում սահմանելիս պետք է հաշվի առնվեն այնպիսի գործոններ, ինչպիսիք են զգացմունքներին հասցված վնասը, ներողություն հայցելու պատրաստականության բացակայությունը,
 - լրագրողի՝ հանրային նշանակություն ունեցող տեղեկատվության զաղտնի աղբյուրները չբացահայտելու իրավունքից օգտվելու հանգամանքը չի կարող մեկնաբանվել ի վնաս պատասխանողի՝ փոխհատուցման չափը որոշելիս,
 - հաշվի առնելով, որ հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց կամ քաղաքական գործիչների պարագայում հասարակական հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ հրապարակումներն օգտվում են առավելագույն պաշտպանությունից՝ հայցվորի նման կարգավիճակը չի կարող մեկնաբանվել ի վնաս պատասխանողի՝ փոխհատուցման չափը որոշելիս,
 - անհրաժեշտ է հաշվի առնել, թե հայցվորի համբավին ու պատվին հասցրած վնասը մեղմելու համար արդյո՞ք հայցվել է օգտագործվել են արտադատական հատուցման ձևերը, այդ թվում՝ կամավոր կամ ինքնակարգավորման մեխանիզմները,
 - պետք է պարտադիր կերպով կողմերին առաջարկվի հաշտության գալ եւ

աշակցություն ցուցաբերվի այդ հարցում: Վնասը գնահատելիս հաշտեցման առաջարկը պետք է դիտվի որպես մեղմացուցիչ հանգամանք,

- պետք է բացահայտ կերպով ճանաչվեն ճշմարտությունը պաշտպանելու իրավունքը, կարծիքը պաշտպանելու իրավունքը եւ այլ անձանց խոսքը փոխանցելու իրավունքը»:

ՀՀ սահմանադրական դատարանը գտել է նաեւ, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունից են բխում այս մոտեցումները, որոնք պետք է հետետողական ու համակարգային ընդգրկմամբ հաշվի առնվեն իրավակիրառական պրակտիկայում, ինչպես նաեւ դրվեն օրենսդրական հետագա զարգացումների հիմքում:

Սահմանադրական դատարանի այս որոշումը կարելու էր ունեցավ մասնույի ազատության երաշխավորման եւ դատական պրակտիկան առաջ քաշված իրավական դիրքորոշումներին ներդաշնակելու առումով: Միաժամանակ, հարկ է նշել, որ վիճարկվող իրավակարգավորման առումով օրենսդրական զարգացումներ դեռեւս տեղի չեն ունեցել, եւ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածը փոփոխության չի ենթարկվել: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքում՝ ՄԳ-Ո-997 որոշման ընդունման օրվանից ի վեր կատարվել են փոփոխություններ 09.02.2012թ. ՀՕ-12-Ն, 27.02.2012թ. ՀՕ-28-Ն, 19.03.2012թ. ՀՕ-49-Ն եւ 19.03.2012թ. ՀՕ-49-Ն օրենքներով, որոնք ՀՀ սահմանադրական դատարանի ՄԳ-Ո-997 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում համարժեք փոփոխություններ չեն պարունակում:

դ/ ՀՀ սահմանադրական դատարանը մի շարք որոշումներում առանձնակի կարելու է մեր երկրում սահմանադրաիրավական տարբեր խնդիրների լուծման գործում քաղաքացիական հասարակության ակտիվ դերակատարության երաշխավորումը: Մասնավորապես, 26.12.2000թ. ՄԳ-Ո-269 որոշմամբ սահմանադրական դատարանն անդրադարձել է «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության եւ արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիայում (հետայսու՝ Օրհուսի կոնվենցիա) ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցին: Սահմանադրական դատարանի հիշյալ որոշման համաձայն՝ Օրհուսի կոնվենցիայով Հայաստանն ստանձնել է մի շարք պարտավորություններ, այդ թվում՝ ապահովել շրջակա միջավայրին առնչվող որոշումների ընդունմանը հասարակության մասնակցությունը, ապահովել ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքների անշեղ իրականացումը: ՄԳ-Ո-269 որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտվել նաեւ այն մասին, որ պետությունը պարտավոր է ներպետական օրենսդրության շրջանակներում ապահովել արդարադատական համակարգի միջոցով Կոնվենցիայով նախատեսված անձանց խախտված իրավունքների վերականգնման առավելագույն հեշտացված հնարավորություն, ընդհուպ՝ արդարադատության մատչելիության, ֆինանսական կամ այլ խոչընդոտների վերացման կամ նվազեցման համապատասխան համակարգի ստեղծմամբ:

Նշված իրավունքներից օգտվում են նաեւ Օրհուսի կոնվենցիայի իմաստով «շահագրգիռ հասարակություն» համարվող կազմակերպությունները: Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ շրջակա միջավայրի պահպանության հարցերով զբաղվող եւ ազգային օրենսդրությամբ ներկայացվող պահանջներին համապատասխանող ոչ կառավարական կազմակերպությունները համարվում են շահագրգիռ կազմակերպություններ: 07.09.2010թ. ՄԳՈ-906 որոշմամբ սահմանադրական դատարանը, նկատի ունենալով նաեւ ՀՀ վճռաբեկ դատարանի 30.10.2009թ. թիվ ՎԳ/3275/05/08 որոշմամբ արտահայտված դիրքորոշումը, ինչպես նաեւ հաշվի առնելով «actio popularis» ինստիտուտի իրավական բնորոշմանն ու կիրառմանն առնչվող միջազգային փորձը, արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ **հասարակական կազմակերպություններին հնարավորություն է ընձեռվում հանդես գալ որոշակի խմբի կողեկտիվ իրավունքների պաշտպանությամբ, եթե այդ պաշտպանությունը տվյալ հասարակական կազմակերպության կոնկրետ կանոնադրական նպատակների շրջանակներում է:** Սահմանադրական դատարանն արձանագրել է նաեւ, որ մի շարք երկրներում actio popularis բողոքի ինստիտուտի առնչությամբ վարչական գործերով հայց ներկայացնելու իրավասության հիմնական չափանիշ է հանդիսանում «իրավական շահագրգռվածությունը»:

Այսուհանդերձ, 01.04.2011թ. թիվ ՎԳ/32/75/05/09 որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը, վերահաստատելով ՀՀ վարչական դատարանի 24.03.2010թ. վճռում արտահայտված դիրքորոշումը, ՀՀ սահմանադրական դատարանի՝ 07.09.2010թ. ՄԳՈ-906 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը մեկնաբանել է յուրովի՝ գտնելով, որ «ՀՀ սահմանադրական դատարանը վերոնշյալ որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «խախտվել է» բառից հետո «նրա» արտահայտությունը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: Վերոնշյալից հետեւում է, որ ՀՀ օրենսդրությունը հիմնված է այն տրամաբանության վրա, որ խախտված իրավունքների պաշտպանության արդյունավետությունը, ի թիվս այլոց, ներառում է դատարան դիմելու իրավունքն այն անձանց կողմից, որոնց իրավունքներն անմիջականորեն խախտվել են»: Ելնելով նման մեկնաբանությունից՝ հետեւություն է արվել, որ հասարակական կազմակերպությունը չի կարող այլ անձանց շահերի պաշտպանության հայցով դիմելու դատարան՝ անկախ նրանից, թե ինչպիսի կանոնադրական նպատակներ է հետապնդում:

Այսպիսով, ՀՀ վարչական դատարանը, նույն կերպ՝ նաեւ 01.04.2011թ. ՀՀ վճռաբեկ դատարանը, յուրովի են մեկնաբանել ՀՀ սահմանադրական դատարանի ՄԳՈ-906 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը հասարակական կազմակերպությունների դատավարական իրավասուբյեկտության վերաբերյալ՝ վերջիններիս զրկելով իրենց կանոնադրական նպատակներից բխող հարցերի առնչությամբ դատարան դիմելու իրավունքից:

Սահմանադրական դատարանի 07.09.2010թ. ՄԳՈ-906 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը իրավակիրառական պրակտիկայում եւ

օրենսդրական քաղաքականության մեջ պետք է հաշվի առնվի հետեւյալ իրավական բովանդակության շրջանակներում, համաձայն որի՝ **հասարակական կազմակերպություններին կամ քաղաքացիական նախաձեռնությամբ հանդես եկող եւ օրենքով սահմանված կարգով գործունեություն իրականացնող այլ միավորումների հնարավորություն պետք է ընձեռվի հանդես գալ որոշակի խմբի կողեկտիվ իրավունքի պաշտպանությամբ, եթե այդ պաշտպանությունը տվյալ միավորման կոնկրետ կանոնադրական նպատակների շրջանակում է:**

ՄԳՈ-906 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «... քաղաքացիական հասարակությունում հասարակական կազմակերպությունների գործառույթների իրականացման, ինչպես նաեւ հասարակական կազմակերպությունների միջոցով պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման նկատմամբ հասարակական վերահսկողության արդյունավետության բարձրացման նկատառումներով **հետագա օրենսդրական զարգացումները պետք է ընթանան վերոհիշյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ**»: Քաղաքացիական հասարակության կայացումը մեր երկրում հայտարարելով որպես առաջնահերթ նպատակ, այսուհանդերձ, դեռեւս չեն ստեղծվել անհրաժեշտ օրենսդրական երաշխիքներ հասարակական կազմակերպություններին ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների շրջանակներում դատավարական իրավասուբյեկտությամբ օժտելու համար:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I. ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ չի համարում կրկին անդրադառնալ բոլոր այն հարցերին, որոնք բարձրացվել են նախորդ տարիների տարեկան հաղորդումներում եւ չեն կորցրել հրատապությունը: Հիմնական շեշտադրումը ներկա հաղորդման մեջ վերաբերում է սահմանադրական դատարանի որոշումների համալիր կատարման հիմնախնդրին:

2011 եւ 2012 թվականներին միջազգային մի շարք խորհրդատուներ են հրավիրվել սահմանադրական դատարանների որոշումների պատշաճ կատարումը երաշխավորելու հիմնախնդիրներին նվիրված: Այդ հարցերը քննարկվեցին նաեւ 2012թ. հոկտեմբերի Երեւանյան միջազգային խորհրդատուներում: Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում այն դոկտրինալ մոտեցումն է առաջադրել, որ սահմանադրական դատարանի որոշմանը պետք է մոտենալ որպես մեկ ամբողջություն՝ չառանձնացնելով եզրափակիչ մասը դատարանի իրավական դիրքորոշումներից: **Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները, լինելով որոշման անքակտելի մաս, ունեն նաեւ ինքնուրույն իրավական բովանդակություն եւ իրավակիրառական նշանակություն: Սահմանադրական դատարանի որոշումը՝ քննության առարկա սահմանադրաիրավական հիմնախնդրի էության բացահայտման հիման վրա, Սահմանադրության նորմերի իրավական բովանդակության պաշտոնական մեկնաբանման եւ իրավական նորմերի սահմանադ-**

րաիրավական բովանդակության բացահայտման արդյունքում կայացրած համապարտադիր իրավական եզրահանգում է: Հետեւաբար, թերի է ու ոչ լիարժեք սահմանադրական դատարանի որոշման կատարումը դիտարկել միայն այդ որոշման եզրափակիչ մասի իրավական հետեւանքների տեսանկյունից: **Սահմանադրական դատարանի որոշման կատարումը եռամիասնական իրավական հետեւանք պետք է ունենա:** Այն պետք է. **առաջին՝** օբյեկտիվ իրավունքի պաշտպանության երաշխիք հանդիսանա յուրաքանչյուրի համար, **երկրորդ՝** պաշտպանի կոնկրետ անձանց սուբյեկտիվ իրավունքը, **երրորդ՝** դառնա իրավունքի աղբյուր իրավաստեղծ գործունեության եւ իրավակիրառ պրակտիկայի համար՝ ուղղորդիչ դեր կատարելով իրավունքի զարգացման բնագավառում: Այս բոլորը միասին կարող են երաշխավորել Սահմանադրության գերակայությունը՝ իրավական ակտերի սահմանադրականության ապահովման ճանապարհով:

Նշված պարագաներից վերջինը հատուկ ուշադրության է արժանի: Այն մասով, որով սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները վերաբերելի են իրավակիրառողին, դրանք պետք է անմիջական կիրառական դեր ու նշանակություն ունենան այն պարզ պատճառով, որ դրանք ոչ այլ ինչ են, քան Սահմանադրության դրույթների պաշտոնական մեկնաբանություն, որի իրավասությունը վերապահվում է բացառապես սահմանադրական դատարաններին: ՀՀ Սահմանադրության 93-րդ հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը: **Այս հենքի վրա է ձեւավորվում սահմանադրական դատարանի նախադեպային իրավունքը**, ինչն ինքնուրույն գործառնական ու կառուցակարգային դերակատարություն ունի իրավական պետության իրավական համակարգում: **Առանց սահմանադրական դատարանի նախադեպային իրավունքը պատշաճ ընկալելու եւ իրացնելու՝ անհնարին է երկրում սահմանադրականություն հաստատել ու խոսել Սահմանադրության գերակայության երաշխավորման կամ իրավական պետության գոյության մասին:**

Սակայն փաստն այն է, որ մեր երկրում դեռեւս անհրաժեշտ խորությամբ կանոնակարգված ու երաշխավորված չէ սահմանադրական դատարանի նախադեպային իրավունքի իրացումը: Բնորոշ օրինակ կարող է ծառայել ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածը: Վերջինս, մասնավորապես, ՀՀ դատարանների համար պարտադիր համարելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, բացարձակապես շրջանցում է սահմանադրական դատարանի նախադեպային իրավունքը: Ստեղծվում է երկակի իրավիճակ՝ երկրում կոնվենցիոն իրավունքների պաշտպանության երաշխիքներն էապես տարբերվում են սահմանադրական իրավունքների պաշտպանության երաշխիքներից: Արդյունքում՝ դատական պրակտիկան արդարադատություն է իրականացնում՝ իրավական տեսակետից հնարավորություն ունենալով շրջանցելու սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները: Նման խնդիր գրեթե գոյություն չունի բոլոր այն երկրներում, որտեղ ներդրված է լիարժեք սահմանադրական զանգատի ինստիտուտը, դատական ակտերը

նույնպես սահմանադրական արդարադատության օբյեկտ են, լիարժեք երաշխավորված է մարդու սահմանադրական արդարադատության իրավունքը:

Անառարկելի է, որ սահմանադրական դատարանի որոշումների իրացման բուն նպատակը Սահմանադրության գերակայության երաշխավորումն է: Իսկ դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ գործում է սահմանադրական արդարադատության լիարժեք համակարգ, իրավահարաբերությունների հիմքում հաստատուն ձեռով դրվում է սահմանադրական դատարանի նախադեպային իրավունքը, պետական իշխանության յուրաքանչյուր մարմին իրավական հստակ պարտավորվածություն ունի այդ իրավունքի իրացումը երաշխավորելու համար:

Ընդհանրապես սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասի իրացման խնդիր չի կարող առաջանալ, քանի որ հարցը կարգավորվում է իրավունքի ուժով: Հստակ է, որ երբ սահմանադրական դատարանը նորմը ճանաչում է Սահմանադրությանը հակասող, ապա այն իրավունքի ուժով դառնում է անվավեր եւ չի կարող այլևս կիրառվել: Օբյեկտիվ իրավունքի տեսանկյունից այստեղ որեւէ այլ հանգամանք չի առաջանում: Խնդիրներն ակնհայտ են դառնում, մի դեպքում, նոր հանգամանքի հիմքով սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության հարցում, մյուս դեպքում՝ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների իրացման հարցում՝ որպես իրավունքի աղբյուր:

2011թ. տարեվերջին Հայաստանում կատարվեցին լուրջ օրենսդրական բարեփոխումներ, եւ վիճակը զգալի չափով փոխվեց: ՀՀ քրեական եւ քաղաքացիական դատավարության օրենսգրքերում, ինչպես նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններն օրինակելի իրավական լուծումներ կարելի է համարել: Փոփոխությունների ընդհանուր տրամաբանությունը հանգում է նրան, որ նոր հանգամանք է առաջանում ոչ միայն կոնկրետ գործով կիրառված նորմը հակասահմանադրական ճանաչելու դեպքում, այլեւ այդ նորմը դատական պրակտիկայում սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներից տարբերվող մեկնաբանությամբ կիրառելու դեպքում: Տվյալ պարագայում սահմանադրական դատարանին է իրավունք վերապահված որոշելու, թե տվյալ դատական ակտն օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման, թե՛ ոչ:

Այսուհանդերձ, առկա սահմանադրաիրավական լուծումների պայմաններում սահմանադրական դատարանի որոշումների կատարումը երաշխավորելու հարցում որոշիչ դեր պետք է ստանձնեն պետական իշխանության հետեւյալ ինստիտուտները.

Առաջին՝ ՀՀ Նախագահը: Բազմաթիվ երկրների սահմանադրական նորմերով ամրագրվում է, որ Նախագահը հետեւում է Սահմանադրության պահպանմանը կամ դրա երաշխավորն է: Սահմանադրության պահպանությունը պահանջում է ոչ միայն դրա գերակայության երաշխավորում, այլեւ հասարակական հարաբերությունների հետեւողական սահմանադրականացում: Աշխարհի առաջին սահմանադրական դատարանն ստեղծած երկրի՝ Ավստրիայի Հիմնական օրենքում /հոդված 146/ շատ հստակ է սահմանված, որ սահմանադ-

րական դատարանի որոշումների կատարման երաշխավորը Երկրի Նախագահն է: Առանց դրա՝ Նախագահը չի կարող Սահմանադրության պաշտպանի գերագույն առաքելությունն իրականացնել: Խնդիրն այն է, որ շատ երկրներում, այդ թվում՝ նաև Հայաստանում, սահմանադրական հիշյալ նորմը գործառնական անհրաժեշտ հստակեցում չունի եւ վերացական բնույթ է կրում, ինչը պետք է հաղթահարվի հետագա սահմանադրական զարգացումների շրջանակներում:

Երկրորդ՝ օրենսդիր մարմինը: Օրենսդրի դերը երկակի է, նախ՝ համակարգված հաղթահարել հնարավոր հետեւանքները, որոնք կարող են առաջանալ օրենքի հակասահմանադրական ճանաչված նորմի իրավական շրջանառությունից դուրս բերվելու հետեւանքով: Երկրորդ՝ հիմք ընդունելով սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները՝ իրականացնել օրենսդրության զարգացման նպատակային քաղաքականություն: **Այս խնդիրներն իրականացնելի են միայն մեկ դեպքում, երբ օրենսդիր մարմնում հատուկ ուսումնասիրվում է սահմանադրական դատարանի յուրաքանչյուր որոշում եւ դրա արդյունքում ձեւավորվում է համարժեք օրենսդրական նախաձեռնություն:** ՀՀ Ազգային ժողովի փորձը վկայեց, որ նման համակարգը չափազանց արդյունավետ է գործում: Նախորդ տարիներին ՀՀ Ազգային ժողովում նման կարգով ներկայացվել են շուրջ հինգ տասնյակ օրենսդրական նախաձեռնություններ եւ իրավիճակ է Ազգային ժողովի երկու արտահերթ նիստ: Սակայն նոր գումարման Ազգային ժողովում այս համակարգը խափանվեց: Թերին այն էր, որ խնդիրը լուծվել էր պարզապես պառլամենտի նախագահի կազմակերպչական նախաձեռնության շնորհիվ եւ օրենսդրական լուծում չէր ստացել: Միայն այս ճանապարհով կայուն երաշխիքներ կստեղծվեն սահմանադրական դատարանի որոշումների կատարումը եւ Սահմանադրության գերակայությունը երաշխավորելու համար:

Երրորդ՝ կառավարությունը: Կառավարության դերակատարությունը սահմանադրական դատարանի որոշումների կատարումն ապահովելու գործում եռակի է. ա/ ուսումնասիրելով այդ որոշումները՝ հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ՝ հատկապես բոլոր այն օրենքների վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում, որոնք օրենսդիրն ընդունել է կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ, բ/ համապատասխան փոփոխություններ կատարել կառավարության որոշումներում, որոնք ընդունվել են հակասահմանադրական ճանաչված օրենսդրական նորմերի կատարումը երաշխավորելու համար, գ/ սահմանադրական դատարանի որոշումները դնել կառավարության նորմաստեղծ քաղաքականության հիմքում:

Այս հարցերի լուծումը մեզանում որեւէ իրավական կարգավորում չի ստացել: Կառավարությունը մինչ օրս միայն մեկ անգամ է դիմել սահմանադրական դատարան նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով: Կառավարությունը նախկինում որեւէ հատուկ քննարկում չէր կազմակերպել սահմանադրական դատարանի որոշումների կատարումն ապահովելու համար: Մեկ տարի առաջ այս խնդրի լուծումը վերապահվեց ՀՀ արդարադատության նախարարությանը: Ներկայումս վերջինս բարեխիղճ ձեւով ուսումնասիրում է սահմանադ-

րական դատարանի բոլոր որոշումները եւ դրանց կատարումը երաշխավորելու համար համապատասխան օրենսդրական նախաձեռնության նախագիծ է նախապատրաստում կառավարությանը ներկայացնելու համար: ՀՀ արդարադատության նախարարության կողմից ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա օրենսդրական փոփոխությունների կատարումն ապահովող աշխատանքային խմբի կողմից 2012թ. ընթացքում ուսումնասիրվել են ՀՀ սահմանադրական դատարանի կողմից կայացված ավելի քան 55 որոշում: 2012թ. ընթացքում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում աշխատանքային խմբի գործունեությունն ուղղված է եղել ՍԳ որոշումներից ուղղակի կամ անուղղակի ածանցվող հարցադրումներին Հանրապետության Նախագահի կողմից 2012-2016թթ. համար հաստատված իրավական եւ դատական բարեփոխումների ռազմավարական ծրագրի շրջանակներում համակարգային իրավակարգավորումների միջոցով լուծումներ տալուն: Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ այստեղ նույնպես խնդրի կառուցակարգային եւ գործառնական լուծումները պետք է բարձրացվեն օրենքի կանոնակարգման մակարդակի:

Չորրորդ՝ դատարանները: Այս մակարդակում ամեն ինչ պայմանավորված է անհատական սահմանադրական գանգատի ինստիտուտի բնույթով եւ լիարժեքության աստիճանով: Հիմնական խնդիրը նոր հանգամանքների ինստիտուտի գործունակության երաշխավորումն է, ինչը մեզանում դեռեւս չի հաջողվել: Դատարաններն ամեն կերպ խոչընդոտում են այդ ինստիտուտի արդյունավետ գործադրմանը: Նման պայմաններում երկրում արդյունավետ արդարադատական համակարգի ձեւավորումը վտանգվում է: Միջազգային պրակտիկան վկայում է, որ հարցի միակ լուծումը լիարժեք սահմանադրական գանգատի ինստիտուտի արմատավորումն է, ինչին բազմիցս անդրադարձել է նաեւ Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովը: Հայաստանում ձեւավորված իրավական պրակտիկան նույնպես վկայում է, որ բոլոր այլ լուծումները կիսալուծումներ են եւ նվազ արդյունավետ: Այս խնդիրը նույնպես հիմնավոր լուծում կարող է ստանալ հետագա սահմանադրական զարգացումների շրջանակներում:

Սահմանադրական դատարանի որոշումների պատշաճ կատարումը երաշխավորելու, հետեւաբար՝ նաեւ **իրավական պետության սահմանադրական սկզբունքը գործնականում իրացնելու համար** հրատապ է համապատասխան օրենսդրական լուծումների խնդիրը: Անհրաժեշտ է **օրենսդրությամբ ամրագրել հատուկ նորմ**, որպեսզի սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում կամ մինչեւ սահմանադրական դատարանի կողմից տվյալ նորմի՝ ուժը կորցնելու համար սահմանված վերջնաժամկետի ավարտը հակասահմանադրական ճանաչված ակտն ընդունած պետական մարմինը հատուկ քննության առարկա դարձնի իր կողմից ընդունված ակտի՝ փոխկապակցված դրույթներով հանդերձ, Սահմանադրության պահանջներին համապատասխանեցնելու հարցը եւ ապահովի, որպեսզի իրավական վակուում չառաջանա:

Պետական մարմինները եւ պաշտոնատար անձինք սահմանադրական դատարանի որոշումների կատարման շրջանակներում հատկապես պետք է հաշվի առնեն դատարանի իրավական դիրքորոշումները, որոնք արտահայտված են սահմանադրական դատարանի որոշումների ոչ միայն եզրափակիչ, այլ նաեւ պատճառաբանական մասերում, եւ որոնք սահմանադրական իրավունքի աղբյուր են եւ իրենց բնույթով հանդիսանում են սահմանադրական դրույթների պաշտոնական մեկնաբանություն: **Խոսքը չի վերաբերում միայն սահմանադրական դատարանի այն որոշումներին, որոնք կարող են հանդիսանալ որպես նոր հանգամանք. խնդիրն առավել համընդգրկուն է եւ վերաբերում է ցանկացած գործով կիրառման ենթակա իրավական ակտի դրույթի՝ սահմանադրական դատարանի որոշմամբ տրված բովանդակությամբ ընկալմանը եւ կիրառմանը:** Միջազգային սահմանադրական արդարադատության պրակտիկական միարժեքորեն վկայում է, որ սահմանադրական դատարանն իր որոշման մեջ Սահմանադրության նորմի իրավական բովանդակության բացահայտման կամ օրենքի նորմի սահմանադրական բովանդակության բացահայտման միջոցով ձեւակերպում է իր իրավական դիրքորոշումը, որը պարտադիր բնույթ ունի ինչպես իրավակիրառողների, այնպես էլ օրինաստեղծ մարմինների համար: Այս հանգամանքը մեզանում, թերեւս, կարիք ունի նաեւ օրենսդրական առավել հստակեցման:

Իրավական ակտերի ինկորպորացիա իրականացնող իրավասու պետական մարմինը, հաշվի առնելով սահմանադրական դատարանի 25.02.2011թ. ՄԳՌ-943 եւ 15.07.2011թ. ՄԳՌ-984 որոշումները, իրավական ակտի պաշտոնական վերահրատարակում կամ ոչ պաշտոնական հրատարակում իրականացնելիս դրանք պետք է հրատարակեն համապատասխան նշումով, որ իրավական ակտի տվյալ դրույթի կամ դրույթների վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի մեկնաբանություն՝ նշելով սահմանադրական դատարանի համապատասխան որոշման ընդունման օրը, ամիսը, ամսաթիվը եւ հերթական համարը: **Խոսքը վերաբերում է սահմանադրական դատարանի այն որոշումներին, որոնցով թեւ իրավական ակտի դրույթը ճանաչվել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն դրանցում իրավական ակտի դրույթի վերաբերյալ ամրագրվել է իրավակիրառողի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանություն:**

Սահմանադրական դատարանում անհատական դիմումների հիման վրա գործերի քննությունը վկայում է, որ շարունակվում են այն դեպքերը, երբ դատական մարմինների կողմից խախտվում են մարդկանց՝ հատկապես ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներում ամրագրված իրավունքները: Այս վիճակը հիմնականում պայմանավորված է ոչ թե օրենքների նորմերի սահմանադրականության խնդրով, այլ օրենսդրական բացերով ու իրավական նորմի կիրառման հետ կապված խնդիրներով: Վերջին դեպքը արդյունք է կա՝ մ իրավական ակտի մակերեսային, ոչ համակարգված վերլուծության, կա՝ մ իրավական նորմի՝ նպատակահարմարության վրա հիմնված մեկնաբանության՝ առանց հաշվի առնելու «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներ:

որը: Այդ մասին են վկայում 25.01.2011 թվականի ՍԳՈ-933, 04.02.2011 թվականի ՍԳՈ-935, 18.10.2011 թվականի ՍԳՈ-996, 15.11.2011թ. ՍԳՈ-997 որոշումները, որոնք վերաբերում են օրենսդրական բացին, 11.01.2011 թվականի ՍԳՈ-932, 22.02.2011թ. ՍԳՈ-942, 15.03.2011 թվականի ՍԳՈ-945, 12.04.2011 թվականի ՍԳՈ-954, 14.06.2011 թվականի ՍԳՈ-975 եւ 18.10.2011 թվականի ՍԳՈ-996 որոշումները, որոնք վերաբերում են իրավական նորմի կիրառմանը: Այդ մասին են վկայում նաեւ Հայաստանի Հանրապետության դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ընդունած վճիռները:

Միջազգային պրակտիկան վկայում է, որ նման իրավիճակներում լավագույն լուծումն այն է, երբ իր կոչմանը համապատասխան սահմանադրական դատարանն ապահովում է մարդու սահմանադրական իրավունքների անմիջական գործողությունը, վերականգնելով այն՝ ցանկացած իրավական ակտով այդ իրավունքները ոտնահարելու դեպքում: Ցավոք, վերջին սահմանադրական փոփոխություններով Հայաստանը որդեգրեց նախորդ դարի 80-ական թվականներին եվրոպական երկրներին բնորոշ՝ կոնկրետ սահմանադրական վերահսկողության համակարգ: Այսուհանդերձ, մինչեւ անհրաժեշտ սահմանադրական բարեփոխումները, օրենսդիր մարմնի հատուկ ուշադրության առարկան պետք է լինի հատկապես դատավարական ընթացակարգերի այնպիսի բարեփոխումները, որպեսզի առավելագույնս երաշխավորվեն մարդկանց համար դատարանի մատչելիության եւ արդար դատաքննության սահմանադրական իրավունքները:

II. ՀՀ սահմանադրական դատարանն առանձնահատուկ կարեւորում է **իրավունքի գերակայության սկզբունքի** հետետողական իրացումը թե՛ օրինաստեղծ գործունեության մեջ եւ թե՛ իրավակիրառական պրակտիկայում: Սեզանում ոչ միայն պետական տարբեր մակարդակներում դեռեւս շփոթ գոյություն ունի «իրավունքի գերակայություն» եւ «օրենքի գերակայություն» հասկացությունների ընկալման հարցում, այլեւ, հատկապես դատական պրակտիկայում, հետետողականորեն չեն իրացվում ՀՀ Սահմանադրության առաջին եւ երրորդ հոդվածների պահանջներն ու ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունները՝ իրավունքի գերակայության ու մարդկանց սահմանադրական իրավունքների անմիջական գործողության երաշխավորման հարցերում:

Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովը 2011թ. ապրիլի 4-ին ընդունած CDL-AD(2011)003rev գեկույցում իրավունքի գերակայության երաշխավորման առնչությամբ, մասնավորապես, առանցքային է համարում, որ.

- օրենքները եւ այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին, լինեն կանխատեսելի, հստակ, գերծ լինեն բացերից ու երկիմաստություններից,
- մարդու իրավունքները պետք է երաշխավորված, ապահովված ու պաշտպանված լինեն,
- արդարադատությունը պետք է լինի անկախ, անկողմնակալ ու արդարացի,

- մարդկանց սուբյեկտիվ իրավունքներին առնչվող հարցերը պետք է քննության առնվեն եւ լուծվեն օրենքի հիման վրա, այլ ոչ թե հայեցողությամբ,
- պետք է հարգվի ու երաշխավորվի օրենքի առջեւ բոլորի հավասարության սկզբունքը,
- իշխանության իրականացումը պետք է խարսխված լինի օրինականության, արդարության եւ հիմնավորվածության վրա,
- իրավական վեճերը պետք է իրավական ճանապարհով արդյունավետ լուծման անհրաժեշտ կառուցակարգեր ունենան,
- պետությունը պետք է հետետողականորեն իրացնի իր ազգային եւ միջազգային պարտավորությունները մարդու իրավունքների հարցում:

2012թ. սեպտեմբերի 24-ին ՄԱԿ-ը նույնպես բանաձեւ ընդունեց **«Իրավունքի գերակայության մասին»**: Ընդգծելով իրավունքի գերակայության ապահովման բացառիկ նշանակությունն ազգային եւ միջազգային մակարդակներում՝ հիշյալ բանաձեւում առանձնահատուկ կարեւորվում է դատական իշխանության անկախության, արդարադատության մատչելիության, կոռուպցիայի, ահաբեկչության եւ կազմակերպված անդրազգային հանցագործությունների դեմ պայքարի նշանակությունը: Կոչ է արվում անդամ բոլոր պետություններին ազգային իշխանությունների գործունեության առանցքում դնել իրավունքի գերակայության սկզբունքը:

Հայաստանի Հանրապետությունում առանձնահատուկ կարեւորությամբ նախապատրաստվում է 2013թ. հուլիսի 3-5-ը, Եվրախորհրդում Հայաստանի նախագահության շրջանակներում, հրավիրել համաեվրոպական խորհրդաժողով՝ **«Իրավունքի գերակայության եվրոպական չափորոշիչները եւ իշխանությունների հայեցողության սահմանները Եվրախորհրդի անդամ երկրներում»** թեմայով:

ՀՀ սահմանադրական դատարանը բազմիցս է անդրադարձել իրավունքի գերակայության երաշխավորման անհրաժեշտությանը, ինչն իրավական պետության առաջնահերթ պարտականությունն է: Շեշտվել է նաեւ, որ առանց իրավունքի գերակայության ապահովման իմաստազրկվում է նաեւ Սահմանադրության գերակայության երաշխավորման իրավական բովանդակությունը: Այսուհանդերձ, հարկ է կրկին արձանագրել, որ մեզանում վերոնշյալ առանցքային խնդիրներից ոչ բոլորն են դեռեւս պատշաճ լուծում ստացել: Մասնավորապես, ՀՀ դատական պրակտիկան պետք է խորությամբ հաշվի առնի ՀՀ Սահմանադրության երրորդ հոդվածի պահանջն առ այն, որ պետությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Հայաստանում, ինչպես նշվեց, գործունակ չէ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտը: Չնայած ՀՀ սահմանադրական դատարանի կողմից երկու անգամ հակասահմանադրական ճանաչվելուն՝ այդ ինստիտուտը դեռեւս չի կազմավորվել որպես արդյունավետ գործող համակարգ: Վերջինս կարեւոր չափորոշիչ կարող է ծառայել ողջ դատական համակարգի գործունեության արդյունավետության մասին պատկերացում կազմելու համար:

Այս ոլորտում թերեւս էական առաջընթաց կարող է տեղի ունենալ 2012-2016թթ. դատաիրավական բարեփոխումների ծրագրի իրականացման արդյունքում: Սակայն ներկայումս ՀՀ դատական պրակտիկան այնպիսին է, որ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների հիմքով նոր հանգամանքներով ըստ էության որեւէ դատական գործ չի վերանայվում: ՀՀ սահմանադրական դատարանն այդպիսին չի կարող համարել բոլոր այն դեպքերը, երբ դատական ակտում Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմի լինելը կամ չլինելը տվյալ ակտի իրավական բովանդակության վրա որեւէ ազդեցություն չի ունենում: Պատահական չէ նաեւ, որ ՀՀ դատարաններն ամբողջ տարվա ընթացքում սահմանադրական դատարան որեւէ դիմում չեն ներկայացրել: Դ-ա այն դեպքում, երբ ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված օրենքների բոլոր նորմերը կոնկրետ գործերով կիրառվել են դատարանների կողմից՝ հանգեցնելով մարդկանց սահմանադրական իրավունքների խախտման: Դատարաններն արդյունավետ կարող են իրացնել սահմանադրական դատարան դիմելու իրենց իրավունքը, երբ անվերապահորեն առաջնորդվեն իրավունքի գերակայության սկզբունքով:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ բոլոր այն երկրներում, որտեղ նման իրավիճակ է ստեղծվել, հիմնարար ելքը գտնվել է անհատական սահմանադրական գանգատի լիարժեք համակարգի ներդրման ճանապարհով, ինչն առաջարկվում է նաեւ Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի լիազույժար նիստի կողմից հաստատված՝ 2011թ. հունվարի 27-ի CDL-AD(2010)039rev հետազոտության մեջ: Նման համակարգի ներդրումը Հայաստանում հնարավոր կարող է դառնալ համապատասխան սահմանադրական բարեփոխումների արդյունքում միայն:

**ՀԱՎԵԼՎԱԾ՝
ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐՈՎ
ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՎԵՃԵՐՈՎ
ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
2012թ. ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍՊՐՔԻ 59-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 9-ՐԴ ԿԵՏԻ՝
«ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏՄԱՆ ՊԱՀԻՑ» ԴՐՈՒՅԹԻ ԵՎ 201-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

24 հունվարի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (գեկուցող), Մ. Թովուկյանի,
Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,
մասնակցությամբ՝

դիմող Հ. Հովհաննիսյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի
պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավա-
բանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մաս-
նագետ Ա. Մխիթարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ

հողվածի 1-ին կետի, 101-րդ հողվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հողվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Հասմիկ Հովհաննիսյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հողվածի 1-ին մասի 9-րդ կետի՝ «նախաքննության ավարտման պահից» դրույթի եւ 201-րդ հողվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Հ. Հովհաննիսյանի՝ 31.10.2011թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Չ Ե Յ**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հողվածի 1-ին մասի 9-րդ կետը սահմանում է.

«1. Տուժողը, սույն օրենսգրքով սահմանված կարգով, իրավունք ունի՝

...

9) նախաքննության ավարտման պահից ծանոթանալ գործի բոլոր նյութերին, դրանցից պատճեններ հանել եւ գործից դուրս գրել ցանկացած ծավալի ցանկացած տեղեկություններ...»:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հողվածի 1-ին մասը սահմանում է.

«Նախնական քննության տվյալները ենթակա են հրապարակման միայն գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին: Քրեական գործով տուժողի իրավահաջորդ հանդիսացող դիմողը եւ նրա ներկայացուցիչները 28.10.2010թ. եւ 03.11.2010թ. միջնորդություններ են ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության քննչական ծառայության ՀԿԳ քննչական բաժնի ՀԿԳ քննիչին, որոնցով համապատասխանաբար խնդրել են իրենց տրամադրել քրեական գործով ապացույց ճանաչված նոթատետրի, տուժողի ձեռագրի ազատ նմուշների էջերի լուսապատճենները, դեպքի վայրի զննման արձանագրության, տուժողի հագուստի զննման արձանագրության լուսապատճենները: Քննիչի՝ 04.11.2010թ. եւ 06.11.2010թ. որոշումներով նշված միջնորդությունները մերժվել են: Քննիչի որոշումները բո-

դոքարկվել են ՀՀ զինվորական դատախազին: ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության ՀՀ ՊՆ քննչական ծառայության հատկապես կարեւոր գործերի բաժնում քննվող գործերի բաժնի ավագ դատախազի՝ 02.12.2010թ. որոշումներով բողոքները մերժվել են: Նշված որոշումները դիմողի եւ նրա ներկայացուցիչների կողմից բողոքարկվել են Երեւանի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան: Վերջինս իր՝ 30.12.2010թ. որոշմամբ մերժել է բողոքներն այն հիմնավորմամբ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ տուժողն իրավունք ունի քրեական գործի նյութերին ծանոթանալ միայն նախաքննության ավարտման պահից եւ 201-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նախաքննության տվյալները ենթակա են հրապարակման միայն գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, քննության առնելով նշված որոշման դեմ դիմողի եւ նրա ներկայացուցիչների վերաքննիչ բողոքը, 24.03.2011թ. որոշմամբ մերժել է վերաքննիչ բողոքը՝ օրինական ուժի մեջ թողնելով ընդհանուր իրավասության դատարանի որոշումը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 02.05.2011թ. որոշմամբ վերադարձրել է վերաքննիչ քրեական դատարանի որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքը:

3. Ըստ դիմողի՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի՝ «նախաքննության ավարտման պահից» դրույթը եւ 201-րդ հոդվածի 1-ին մասը հակասում են ՀՀ Սահմանադրության 1-ին եւ 3-րդ հոդվածներին, 23-րդ հոդվածի 3-րդ մասին, 27-րդ հոդվածի 2-րդ մասին, 18-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերին, 20-րդ հոդվածի 1-ին մասին, 43-րդ հոդվածին:

Դիմողի պնդմամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասն ստացել է այնպիսի կամայական մեկնաբանություն եւ կիրառություն, որով փոխվել է այդ նորմի իմաստը, եւ այն դիտարկվել է որպես տեղեկություններ ստանալու իրավունքի սահմանափակում նախատեսող իրավական նորմ: Հետեւաբար, իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունն առաջացրել է իրավական անորոշություն:

Դիմողը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի՝ «նախաքննության ավարտման պահից» դրույթը եւ 201-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում են «ձեւականություններ, պայմաններ, սահմանափակումներ կամ պատժամիջոցներ», որոնք չեն հետապնդում Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով նախատեսված իրավաչափ նպատակներից որեւէ մեկը եւ չեն կարող դիտվել որպես ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ: Ըստ դիմողի՝ նախաքննության ընթացքում տուժողի համար քրեական գործի նյութերի մատչելիությունը չապահովելը սահմանափակում է տուժողի՝ տեղեկություններ ստանալու՝ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով նախատեսված, ինչպես նաեւ պետական եւ տեղական ինք-

նակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու՝ ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածով նախատեսված իրավունքները:

4. Պատասխանողն առարկելով դիմողի փաստարկների դեմ՝ նշում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասը, սահմանելով նախնական քննության տվյալների հրապարակման անթույլատրելիության պահանջը, նպատակ ունի պայմաններ ստեղծել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից քրեական դատավարության այս փուլում իր առջեւ դրված խնդիրներն արդյունավետ լուծելու համար: Բացի դրանից, նախնական քննության տվյալների հրապարակման անթույլատրելիության պահանջն ընդհանուր է եւ նպատակ չի հետապնդում սահմանափակել տուժողի իրավունքները: Այդ պահանջը հավասարապես վերաբերում է ինչպես տուժողին, այնպես էլ՝ մեղադրյալին:

Ըստ պատասխանողի՝ վիճարկվող դրույթներն իրավաչափորեն են սահմանափակում անձի՝ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով նախատեսված, ինչպես նաեւ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու՝ ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածով նախատեսված իրավունքները: Ինչ վերաբերում է նախաքննության փուլում տուժողի իրավունքներն իրացնելու հնարավորությանը, ապա, ըստ պատասխանողի, օրենսգիրքը նախատեսում է տուժողի՝ նախաքննության ընթացքում որոշակի փաստաթղթերի ծանոթանալու իրավունքը, ինչը հնարավորություն է տալիս տուժողին նախնական քննության փուլում առավելագույնս իրականացնել իր իրավունքները:

Պատասխանողը գտնում է նաեւ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի՝ «նախաքննության ավարտման պահից» դրույթն անորոշ չէ, քանզի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածը հստակ սահմանում է նախնական քննության փուլի ավարտման պահը:

5. Սույն գործի շրջանակներում առաջադրված սահմանադրաիրավական վեճը սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում քննության առնել քրեական դատավարությունում տուժողի իրավունքների եւ օրինական շահերի արդյունավետ պաշտպանության երաշխավորման տեսանկյունից, ինչպես նաեւ քրեական գործի մինչդատական վարույթում մրցակցության եւ հրապարակայնության սկզբունքների կիրառելիության շրջանակների համատեքստում: Ըստ այդմ, սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել.

- քրեական գործի նախնական քննության փուլում մրցակցության եւ հրապարակայնության սկզբունքների կիրառելիության շրջանակը,
- քրեական գործի նախնական քննության ընթացքում տուժողի համար մատչելի տեղեկատվության շրջանակը,
- արդյո՞ք ապահովված է անհրաժեշտ հավասարակշռություն, մի կողմից,

նախնական քննության գաղտնիության ընդհանուր կանոնով հետապնդվող նպատակի, մյուս կողմից՝ մինչդատական վարույթում տուժողի իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության ապահովման նպատակի միջեւ,

- քրեական գործի նախաքննության փուլում տուժողի համար տեղեկատվության ապահովման վերաբերյալ արված միջնորդություններով ընդունված դատավարական որոշումների հիմնավորվածության եւ պատճառաբանվածության իրավական պահանջների պահպանման ապահովումը:

6. ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները եւ ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք: Սահմանադրաիրավական այդ դրույթն ունի սկզբունքային նշանակություն՝ օրենքով երաշխավորելու իրավական պաշտպանության այն միջոցները, որոնք անհրաժեշտ են անձի իրավունքները եւ ազատություններն անիրավաչափ գործողություններից պաշտպանելու, հասցված վնասը վերականգնելու համար: Այդ նորմատիվ պահանջն անվերապահ կիրառելի է հավասարապես իրավական ցանկացած, այդ թվում՝ նաեւ քրեադատավարական գործընթացում եւ, մասնավորապես՝ քրեական գործի նախնական քննության փուլում: Օրենքով սահմանված կարգով այդ փուլի շրջանակներում են ձեռք բերվում եւ հետագոտվում հանցագործության կատարման փաստի հետ կապված բոլոր հանգամանքները, որպիսիք ապացուցողական հիմք կարող են հանդիսանալ քրեական դատավարության հետագա փուլերում դրանց վերջնական իրավական գնահատական տալու եւ անհրաժեշտության դեպքում պետական հարկադրանք կիրառելու համար: Հետեւաբար, իրավական այդ գործընթացների նախնական փուլի շրջանակներում անձի՝ իր իրավունքների եւ ազատությունների պաշտպանության իրավունքի երաշխավորումը նույնքան կարեւոր է, որքան հետագա փուլերում: Սակայն, ելնելով քրեական դատավարության ողջ գործընթացում եւ վերջինիս առանձին փուլերում լուծվող խնդիրների եւ առաջադրված նպատակների, դրանց լուծման իրավական միջոցների ու մեթոդների առանձնահատկություններից, միաժամանակ նաեւ՝ այդ գործընթացներում ներգրավված բոլոր անձանց իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունից, օբյեկտիվորեն կարող են նախատեսվել իրավական պաշտպանության առանձնահատուկ համապատասխան միջոցներ եւ ձեւեր, որպիսիք միտված լինեն նաեւ քրեական հետապնդում իրականացնող իրավասու մարմինների առջեւ օրենքով դրված խնդիրների արդյունավետ իրականացմանը, անձի խախտված իրավունքների ու ազատությունների վերականգնմանը: Այդպիսի միջոց է քրեական գործով նախաքննության գաղտնիության ապահովումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող 201-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է նախնական քննության տվյալների հրապարակման անթույլատրելիությունը, այն է՝ նախնական քննության գաղտնիության ընդհանուր կանոնը: Նախնական քննության գաղտնիության ընդհանուր կանոնից, ի

թիվս այլնի, բխում է օրենսգրքի վիճարկվող մյուս նորմը՝ 59-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, որը տուժողին թույլատրում է գործի նյութերին ամբողջությամբ ծանոթանալ նախաքննության ավարտից հետո:

Նախնական քննության գաղտնիության սկզբունքն ինքնանպատակ չէ: Նախնական քննության մարմիններին ուղղված՝ քրեական գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հետազոտման օրենսդրական պահանջը չի կարող արդյունավետ կատարվել, նախնական քննության խնդիրները չեն կարող արդյունավետ լուծում ստանալ նախնական քննության տվյալների գաղտնիության բացառման պայմաններում:

ՀՀ գործող քրեադատավարական օրենսդրությունը՝ մինչդատական վարույթում մրցակցության սկզբունքի կիրառման սահմանների եւ շրջանակի առնչությամբ որդեգրել է այն հայեցակարգային մոտեցումը, որն առկա է մայրցամաքային իրավունքի երկրներում: Ըստ այդ մոտեցման՝ մինչդատական վարույթում մրցակցության սկզբունքն ունի սահմանափակ, ոչ լայն կիրառություն: Այս փուլում օբյեկտիվորեն առկա են այդ սկզբունքի ընդամենն առանձին տարրեր:

Ինչ վերաբերում է նախնական քննության փուլում հրապարակայնության սկզբունքի կիրառելիությանը, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Դատական քննության հրապարակայնությունը» վերտառությամբ 16-րդ հոդվածի համաձայն՝ հրապարակայնության սկզբունքը վերաբերում է դատական քննության փուլին եւ կիրառելի է քրեական դատավարության այդ փուլի նկատմամբ:

7. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասը, սահմանելով նախնական քննության գաղտնիության ընդհանուր կանոնը, միաժամանակ գործի վարույթն իրականացնող մարմնին հայեցողություն է վերապահում թույլատրել նախնական քննության տվյալների հրապարակում: Համաձայն այդ դրույթի՝ նախնական քննության տվյալները ենթակա են հրապարակման միայն գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ: Միաժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ տուժողի իրավունքները սահմանող դրույթների համադրված վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել քրեական գործի այն նյութերի շրջանակը, որոնց մատչելիությունը տուժողի համար երաշխավորված է նախնական քննության ընթացքում՝ մինչեւ նախաքննության ավարտը՝ անկախ վարույթն իրականացնող մարմնի հայեցողությունից:

Այսպես, տուժողն իրավունք ունի ծանոթանալու առաջադրված մեղադրանքին (ՀՀ քր. դատ. օր.-ի 59-րդ հոդվ., 1-ին մաս, 1-ին կետ), քննչական եւ այլ դատավարական գործողությունների արձանագրություններին, որոնց նա մասնակցել է (59-րդ հոդվ., 1-ին մաս, 8-րդ կետ), իր խնդրանքով անվճար ստանալ որպես մեղադրյալ ներգրավելու մասին, քրեական գործը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու որոշումների պատճենները, մեղադրական եզրակացության կամ եզրափակիչ որոշման պատճենը (59-րդ հոդվ., 1-ին մաս, 11-րդ կետ): Ընդ որում, որպես նշված իրավունքի իրացումն ապահովող երաշ-

խիք՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածն ամրագրում է քննիչի պարտավորությունը՝ քրեական գործով վարույթը կարճելու եւ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման պատճենն ուղարկել տուժողին՝ պարզաբանելով այդ որոշման բողոքարկման կարգը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածը սահմանում է տուժողի կոնկրետ իրավունքները փորձաքննություն նշանակելիս եւ կատարելիս: Տուժողը փորձաքննություն նշանակելիս եւ կատարելիս իրավունք ունի մինչեւ փորձաքննությունը ծանոթանալ այն նշանակելու մասին քննիչի որոշմանը եւ ստանալ իր իրավունքների պարզաբանում (247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ): Ընդ որում, փորձաքննություն նշանակելու մասին քննիչի որոշմանը ծանոթանալու իր իրավունքի իրացման արդյունքում տուժողն իրավունք ունի բացարկ հայտնել փորձագետին, միջնորդել, որ փորձագետ նշանակվի իր մատնանշած անձանց թվից, քննիչի թույլտվությամբ ներկա գտնվել փորձաքննության կատարմանը, քննիչին առաջադրել լրացուցիչ հարցեր: Փորձագետի եզրակացության հետ համաձայն չլինելու դեպքում տուժողն իրավունք ունի նաեւ միջնորդել, որ նշանակվի լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն, քննիչի կողմից փորձագետի եզրակացությունն ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում ծանոթանալ փորձագետի եզրակացությանը:

Տուժողը նաեւ պետք է տեղեկացվի սկզբնական քրեական գործից նոր գործի անջատման եւ դրա հետագա ընթացքի մասին (184-րդ հոդվածի 5-րդ մաս): Տուժողը ծանոթացվում է նաեւ քննչական խմբի կողմից քննությունը կատարելու մասին որոշմանը, եւ նրան պարզաբանվում է ցանկացած քննիչին բացարկ հայտնելու իր իրավունքը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 194-րդ հոդվածով նախատեսված այս պահանջը կարեւոր իրավական երաշխիք է տուժողի՝ նույն օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում ամրագրված՝ բացարկներ հայտնելու իրավունքի իրացման համար:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 258-րդ հոդվածն ամրագրում է քննիչի՝ քրեական գործով վարույթը կասեցնելու, ինչպես նաեւ վարույթը վերսկսելու մասին որոշումներին տուժողին տեղեկացնելու պարտավորությունը: Ընդ որում, այս պարտավորության հստակ ամրագրումն իրավական երաշխիք է ստեղծում քրեական գործի վարույթը կասեցնելու մասին որոշումը բողոքարկելու՝ տուժողի իրավունքի իրացման համար:

Բացի վերոնշյալներից, ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 5-րդ մասի՝ տուժողին պարտադիր կարգով տրամադրվում է մինչդատական վարույթում մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ միջնորդությունը մերժելու մասին դատարանի որոշումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետն ամրագրում է տուժողի ներկայացուցչի իրավունքը՝ տուժողի շահերին առնչվող մասով առարկություններ ներկայացնել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից իրեն տեղեկացրած կամ այլ հանգամանքների արդյունքում իրեն հայտնի դարձած դատավարության այլ մասնակիցների բո-

ողբների վերաբերյալ: Թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի ներառում որևէ դրույթ, որն ուղղակիորեն կսահմաներ տուժողի կամ նրա ներկայացուցչի՝ դատավարության մյուս մասնակիցների կողմից մինչդատական վարույթում ներկայացված բողոքների մասին տեղեկացվելու իրավունքը եւ վարույթն իրականացնող մարմնի՝ այդ բողոքները տուժողին կամ նրա ներկայացուցչին ծանոթացման համար տրամադրելու պարտավորությունը, այնուամենայնիվ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով ամրագրված նորմը ենթադրում է նաև մինչդատական վարույթում ներկայացված բողոքներին մինչև նախաքննության ավարտը ծանոթանալու՝ տուժողի հնարավորությունը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ նախնական քննության փուլում՝ մինչև նախաքննության ավարտը տուժողի համար մատչելի՝ քրեական գործի վերոհիշյալ նյութերը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածին համապատասխան, հավասարապես մատչելի են նաև տուժողի իրավահաջորդի համար:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2006թ. հունիսի 14-ի՝ «Հանցագործության գոհերի աջակցության վերաբերյալ» R(2006)8 հանձնարարականի 6.1 կետի համաձայն՝ **անդամ պետությունները պետք է հանցագործության գոհի համար երաշխավորեն իրենց գործին առնչվող եւ իրենց շահերի պաշտպանության ու իրավունքների իրացման համար անհրաժեշտ տեղեկատվություն:** Նույն հանձնարարականի 6.5-րդ կետում, որը վերաբերում է հանցագործության գոհի համար երաշխավորվող՝ քրեական գործի վարույթին առնչվող տեղեկատվության ծավալին, ամրագրված է. «Պետությունը պետք է համապատասխան միջոցներով երաշխավորի, որ հանցագործության գոհերը տեղեկացվեն իրենց բողոքների արդյունքների, քրեական գործի ընթացքի համապատասխան փուլերի եւ իրավասու դատարանի դատավճռի վերաբերյալ»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերոհիշյալ նորմերի վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրն առանձնացնում է մինչև նախնական քննության ավարտը (գործով մեղադրական եզրակացություն կազմելը) տուժողի եւ/կամ նրա ներկայացուցչի, ինչպես նաև տուժողի իրավահաջորդի համար մատչելի՝ գործի նյութերի որոշակի ողջամիտ շրջանակ, որոնց վերաբերյալ տուժողի տեղեկացվածությունը նախնական քննության փուլում ապահովում է տուժողի՝ բացարկներ հայտնելու, միջնորդություններ հարուցելու, հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի գործողություններն ու որոշումները բողոքարկելու իրավունքներն իրացնելու հնարավորությունը եւ այդպիսով երաշխավորում է նաև տուժողի իրավունքների եւ օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունը մինչդատական վարույթի ընթացքում:

Ինչ վերաբերում է նախնական քննության այն տվյալներին, որոնք մինչև դրա ավարտը կարող են հրապարակվել միայն վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ եւ կարող են մատչելի դառնալ տուժողին միայն վարույթն իրականացնող մարմնի կողմից իր հայեցողության իրացման արդյունքում,

ապա այդ կապակցությամբ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաեւ ընդգծել, որ վարույթն իրականացնող մարմնի՝ շահագրգիռ անձին քրեական գործի նյութերից այս կամ այն փաստաթղթի տրամադրումը մերժելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված, ինչպես դա նախատեսված է ՀՀ քր. դատ. օր.-ի 102-րդ հոդվածով: **Սկզբունքային մոտեցումը պետք է լինի այն, որ նախնական քննության տվյալների հրապարակման թույլտվություն տալու՝ վարույթն իրականացնող իրավասու մարմնի հայեցողությունը չպետք է լինի բացարձակ: Այդ կապակցությամբ կայացված որոշումը պետք է հետապնդի նախաքննության շահերի իրական պաշտպանության նպատակ:** Այս առնչությամբ հատկանշական է, որ եվրոպական մի շարք երկրների /Էստոնիա, Սերբիա եւ այլն/ քրեական դատավարության օրենսգրքերը հստակ սահմանում են այն հիմքերը, որոնց առկայության դեպքում չի թույլատրվում քրեական գործի նյութի հրապարակումը: Մասնավորապես, դրանք առնչվում են հասարակական կարգի պաշտպանությանը, հանցագործության բացահայտմանը խոչընդոտելուն, քրեական դատավարությանը վնասելուն եւ հանցանքի կատարմանը նպաստելուն, առեւտրային գաղտնիքին եւ իրավաբանական անձի գործունեությանը վնաս պատճառելուն, ընտանեկան կամ անձնական կյանքի անձեռնմխելիությունը խախտելուն կամ անձի պատիվը ոտնահարելուն, անչափահասի շահերին վնաս պատճառելուն եւ այլն: Այս ուղղությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսդրության զարգացումը լրացուցիչ երաշխիքներ կատեղծի տուժողի շահերի պաշտպանության եւ նախաքննության նկատմամբ վստահության ամրապնդման գործում:

8. Վիճարկվող դրույթների սահմանադրականությունը՝ տուժողի իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության երաշխավորման տեսանկյունից գնահատելու նպատակով սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաեւ ճշգրտել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված՝ քրեական գործի նյութերին ծանոթանալու՝ տուժողի իրավունքի իրացման պահը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Նախնական քննության ավարտը» վերտառությամբ 196-րդ հոդվածը սահմանում է նախնական քննության ավարտման պահը, այն է՝ նախաքննությունն ավարտվում է մեղադրական եզրակացություն, բժշկական բնույթի միջոցների կիրառման համար քրեական գործը դատարան ուղարկելու մասին կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում կազմելով: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Մեղադրական եզրակացություն կազմելուց առաջ գործի նյութերին ծանոթացնելը» վերտառությամբ 265-րդ հոդվածը եւ «Քրեական գործի նյութերին ծանոթանալու կարգը» վերտառությամբ 266-րդ հոդվածը կարգավորում են մեղադրական եզրակացությունը կազմելուց առաջ, այն է՝ նախնական քննության ավարտից առաջ, գործի նյութերին՝ շահագրգիռ սուբյեկտներին, այդ թվում՝ տուժողին, ծանոթացնելու հետ կապված հարաբերությունները: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նշված դրույթների համադրված վերլուծությունը վկայում է, որ գոր-

ծի նյութերին՝ շահագրգիռ սուբյեկտների, այդ թվում՝ տուժողի կողմից ծանոթանալու ժամանակահատվածը կազմում է նախաքննության ինքնուրույն մաս, նախորդում է նախաքննության ավարտին, եւ, հետեւաբար, տուժողը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող հոդվածով սահմանված՝ գործի նյութերին ծանոթանալու իր իրավունքն իրացնում է մինչեւ նախաքննության ավարտը:

Ավելին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 267-րդ հոդվածն ամրագրում է գործի նյութերին ծանոթանալուց հետո՝ լրացուցիչ քննչական գործողություններ կատարելու կամ նոր դատավարական որոշումներ կայացնելու վերաբերյալ միջնորդություններ ներկայացնելու հնարավորությունը: Ընդ որում, նույն հոդվածը հստակորեն սահմանում է միջնորդությունը բավարարելուց հրաժարվելու դեպքում հրաժարվելու մասին որոշման բողոքարկման կարգը:

Սահմանադրական դատարանը, արձանագրելով, որ իրավակիրառական պրակտիկան եւս զարգացել է նշված ուղղությամբ, միաժամանակ կարեւորում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետում «նախաքննության ավարտման պահից» ձեւակերպման մեկնաբանումը եւ կիրառումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 196-րդ, 265-րդ եւ 266-րդ հոդվածների տրամաբանությանը համապատասխան:

Նախնական քննության փուլում տուժողի վերոհիշյալ իրավունքների, նախաքննություն իրականացնող մարմինների համապատասխան պարտականությունների համադրված վերլուծության հիման վրա, հաշվի առնելով նաեւ այն հանգամանքը, որ տուժողի՝ գործի նյութերին ծանոթանալու իրավունքն իրացվում է **մինչեւ մեղադրական եզրակացություն կազմելը**, այն է՝ նախաքննության ինքնուրույն մաս կազմող եւ դրա ավարտին նախորդող ժամանակահատվածում՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթները չեն խոչընդոտում տուժողի իրավունքների եւ օրինական շահերի արդյունավետ պաշտպանությանը: Ըստ այդմ, սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրական մակարդակում ապահովված է արդարացի հավասարակշռություն, մի կողմից, նախնական քննության գաղտնիության ընդհանուր կանոնով հետապնդվող իրավաչափ նպատակի, մյուս կողմից՝ մինչդատական վարույթում տուժողի իրավունքների իրացումը եւ օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակի միջեւ: Բացի դրանից, անհրաժեշտ է քրեական դատավարությունը դիտարկել համակարգային ամբողջականության մեջ եւ իրավունքների իրացման որեւէ փուլում օրենքի հիման վրա նախատեսված ընթացակարգային իրավաչափ սահմանափակումը չի կարող դիտարկվել որպէս Սահմանադրության 18-րդ հոդվածով նախատեսված իրավունքների ոտնահարում:

Վերոհիշյալի հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է նաեւ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթները, հաշվի առնելով քրեական դատավարության առանձնահատկությունները, չեն կարող որակվել որպէս անձի՝ տեղեկություններ ստանալու՝ ՀՀ Սահմանադրության

27-րդ հոդվածով նախատեսված, ինչպես նաև պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու՝ ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածով նախատեսված իրավունքների սահմանափակում: Վեճի առարկա հոդվածներով նախատեսված իրավակարգավորումներն իրենց համակարգային ամբողջականության մեջ հետապնդում են իրավաչափ նպատակ, եւ դիմողի իրավունքների ենթադրյալ խախտումները պայմանավորված չեն տվյալ իրավանորմերի սահմանադրաիրավական այն բովանդակությամբ, որով դրանք ամրագրված են ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի՝ «նախաքննության ավարտման պահից» դրույթը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**24 հունվարի 2012 թվականի
ՍԳՈ- 1008**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ՇԱՎԱՐԸ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԵՎ ԱՅԼՈՑ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ
198-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

24 փետրվարի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողների ներկայացուցիչ Կ. Մեծլումյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Մխիթարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Շավարշ Սկրտչյանի եւ այլոց դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Շ. Սկրտչյանի եւ այլոց՝ 16.11.2011թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Հայաստա-

նի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի մայիսի 5-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հուլիսի 28-ին եւ ՀՀ Ազգային ժողովի կողմից 17.06.1998թ. ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի համաձայն ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը տիրապետելը, օգտագործելը եւ տնօրինելը» վերտառությամբ 198-րդ հոդվածը սահմանում է.

«1. Համատեղ սեփականության մասնակիցները միասին տիրապետում եւ օգտագործում են ընդհանուր գույքը, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ:

2. Համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը տնօրինվում է բոլոր մասնակիցների համաձայնությամբ, անկախ այն բանից, թե մասնակիցներից ով է կնքում գույքը տնօրինելու գործարքը:

3. Համատեղ սեփականության մասնակիցներից յուրաքանչյուրն իրավունք ունի կնքել ընդհանուր գույքը տնօրինելու գործարքներ, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ: Համատեղ սեփականության մասնակիցներից մեկի կողմից կնքված՝ ընդհանուր սեփականության տնօրինման գործարքը կարող է անվավեր ճանաչվել մնացած մասնակիցների պահանջով՝ գործարք կնքող մասնակցի մոտ անհրաժեշտ լիազորությունների բացակայության դեպքում, եթե ապացուցվի, որ գործարքի մյուս կողմն իմացել է կամ ակնհայտորեն պետք է իմանար այդ մասին»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. ՀՀ կառավարությունը 26.06.2009թ. ընդունել է թիվ 944-Ն որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Հալիձորի գյուղական համայնքի քաղաքացիների սեփականությունը հանդիսացող հողամասերի նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու եւ հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին»: Կառավարության որոշմամբ «Իստեյտ Սենեջմենթ ընդ Ադմինիսթրեյշն Քամփնի» ՓԲԸ-ն ճանաչվել է օտարվող հողամասերի ձեռքբերող: Վերջինս դիմել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Շավարշ Սկրտչյանի եւ այլոց՝ սեփականությունն օտարելու եւ օտարման պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու (հարկադրելու: մասին հայցապահանջով:

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 31.08.2010թ. թիվ ՍԳ-1/0046/02/10 վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.12.2010թ. որոշմամբ դի-

մողների վերաքննիչ բողոքը մերժվել է: Մերժելով վերաքննիչ բողոքը՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը հիմք է ընդունել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի՝ վիճարկվող 3-րդ մասի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 18.09.2009 թվականի թիվ ԵԱԲԳ/0275/02/08 գործով արտահայտած իրավական դիրքորոշումը եւ իր որոշման՝ «Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները եւ եզրահանգումները» մասում արձանագրել է հետևյալը. «ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի իրավական վերլուծությանը: Մասնավորապես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով համասեփականատերերից յուրաքանչյուրն իրավունք ունի տնօրինելու համատեղ գույքը, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ: ... Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածով նախատեսված ընդհանուր համատեղ սեփականության գույքը տնօրինելու դեպքում գործում է համասեփականատերերի համաձայնության եւ դրա տնօրինման իրավունքի առկայության կանխավարկածը (տես՝ ... ՀՀ վճռաբեկ դատարանի 18.09.2009 թվականի թիվ ԵԱԲԳ/0275/02/08 գործով որոշումը):»:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 27.04.2011թ. որոշմամբ դիմողների վճռաբեկ բողոքը վերադարձրել է՝ տվյալ որոշման մեջ կրկին անգամ ամրագրելով իր՝ 18.09.2009 թվականի թիվ ԵԱԲԳ/0275/02/08 գործով կայացված որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները:

3. Դիմողների կարծիքով՝ իրավակիրառական պրակտիկայում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասին տրված մեկնաբանությունը հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ հոդվածների եւ 31-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին: Ըստ դիմողների՝ վերաքննիչ եւ վճռաբեկ դատարաններն օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի մեկնաբանությունից բխեցրել են, որ գործում է համատեղ սեփականություն հանդիսացող գույքի տնօրինման համաձայնության կանխավարկածն այն դեպքում, երբ նման կանխավարկած սահմանված չէ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածով, որով երաշխավորված է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը տնօրինելու՝ սեփականատիրոջ իրավունքը, ինչը ենթադրում է գույքի տնօրինման իրավունք բացառապես գույքի սեփականատիրոջ կամ բոլոր սեփականատերերի իմացությամբ ու կամքով:

Դիմողները գտնում են, որ օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասը՝ այնքանով, որքանով դրանով սահմանվել է համատեղ սեփականություն հանդիսացող գույքի տնօրինման համաձայնության կանխավարկածը եւ այն հնարավորություն է տալիս համատեղ սեփականության մասնակիցներից ցանկացածին առանց մյուս համասեփականատերերի իմացության կամ համաձայնության, անգամ նրանց կամքին հակառակ օտարելու համատեղ սեփականությունը, հակասում է Սահմանադրության 31-րդ հոդվածին, որը տնօրինման իրավասությունը վերապահել է սեփականատիրոջը:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկները, գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: Որպես իր դիրքորոշման հիմնավորում՝ պատասխանող կողմն անդրադառնում է ընդհանուր բաժնային եւ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքների բովանդակային տարբերություններին, ընդհանուր համատեղ սեփականությունն ընդհանուր բաժնային սեփականության վերածելու իրավական հնարավորությանը եւ արձանագրում, որ ընդհանուր համատեղ սեփականության դեպքում համասեփականատերերի միջեւ գոյություն ունեցող հարաբերությունները հիմնվում են անձնական հատուկ վստահության վրա, երբ չի ենթադրվում եւ չի պահանջվում մասնակիցների համապատասխան լիազորությունների ծավալի լիակատար որոշակիություն:

Հիմնվելով գործի նյութերի վերլուծության վրա՝ պատասխանողն ակնհայտ է համարում, որ «համատեղ սեփականությունը տնօրինելու՝ օրենքով ամրագրված ներկայիս կարգը չի հանգեցրել համատեղ սեփականության մյուս մասնակիցների իրավունքների խախտման՝ հենց անձնական վստահության հարաբերությունների շնորհիվ, իսկ դիմողների դժգոհությունը ամենեւին էլ կապված չէ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավական կարգավորման՝ համատեղ սեփականության մասնակիցներից յուրաքանչյուրի կողմից ընդհանուր գույքի տնօրինման գործարքներ կնքելու իր իրավունքի չարաշահման հետ»:

5. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ սեփականության իրավունքը ճանաչելով որպես յուրաքանչյուրի հիմնական իրավունք, բացահայտվում է այդ իրավունքի բովանդակությունը, այն է՝ իր սեփականությունը տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու եւ կտակելու իրավազորությունները՝ միաժամանակ որպես դրանց իրացման նախապայման սահմանելով **սեփականատիրոջ հայեցողությունը**: Սահմանադրական այս նորմում «իր հայեցողությամբ» ձեւակերպման շեշտադրմամբ սեփականության իրավունքի իրացման հիմքում դրվել է սեփականատիրոջ հստակ արտահայտված կամքը, վերջինս դիտարկվում է որպես սեփականության իրավունքի իրացման պարտադիր նախապայման, եւ սեփականության իրացման գործընթացում վճռորոշ դերակատարություն է հաղորդվում անձի կամաարտահայտությանը: Այս դրույթի բովանդակությունը հանգում է նրան, որ գույքային իրավունքների իրացումը պետք է իրականացվի սեփականության անձեռնմխելիության եւ պայմանագրային ազատության սկզբունքների հիման վրա, որոնք ենթադրում են, ի թիվս այլնի, **քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների կամքի ինքնավարություն եւ գույքային ինքնուրույնություն**:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ ՄԴ-Ո-630 որոշման մեջ անդրադառնալով սեփականության իրավունքի թույլատրելի սահմանափակումներին՝ մասնավորապես նշել է. «Սահմանադրության 43 հոդվածը սեփականության իրավունքը չի դիտարկում որպես այդ հոդվածի հիմքերով սահմանափակվող

իրավունք: Առկա է իրավունքների սահմանափակման այն առանձնահատուկ դեպքը, երբ Սահմանադրությունն է որոշում տվյալ իրավունքի սահմանափակման չափանիշն ու սահմանները՝ դա չվերապահելով նույնիսկ օրենսդրի իրավասությանը: Այն կարող է, նախ՝ իրականացվել օրենքով նախատեսված դեպքերում բացառապես դատական կարգով սեփականությունից զրկելու միջոցով՝ որպես պատասխանատվությունից բխող հարկադիր գործողություն: Երկրորդ՝ «սեփականության օտարման» միջոցով, որը «սեփականության զրկումից» էապես տարբեր այլ ինստիտուտ է եւ պետք է իրականացվի Սահմանադրության 31 հոդվածի 3-րդ մասի հիմքերով»:

Սեփականության իրավունքի թույլատրելի սահմանափակման նշված երկու դեպքերի համար բնորոշ ընդհանրական տարրն այն է, որ երկու դեպքում էլ սեփականատիրոջ հայեցողությունը, կամքն այլեւս առաջնային եւ վճռորոշ չեն, քանի որ այս դեպքերում առաջնայնություն են ստանում տվյալ իրավիճակում պաշտպանության նախապատվություն ունեցող այլ շահեր:

Այսպիսով, ՀՀ Սահմանադրությունը թույլատրում է բացառապես երկու դեպք, այն է՝ 31-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերով նախատեսված դեպքերը, երբ սեփականատիրոջ կամքն առաջնային չէ, եւ սեփականության իրավունքի իրացումը չի բխում սեփականատիրոջ հայեցողությունից: Հետեւաբար, ցանկացած այլ դեպքում սեփականության իրավունքի իրացման գործընթացում միջամտությունը սեփականատիրոջ հայեցողությանը, սեփականատիրոջ գույքի տնօրինումն առանց այդ հայեցողության հստակ արտահայտման եւ դրսեւորման չի կարող համարվել իրավաչափ եւ կհանդիսանա սեփականության իրավունքի խախտում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ ամրագրված դրույթը հավասար պաշտպանություն է երաշխավորում սեփականության բոլոր տեսակների համար եւ վերաբերում է ինչպես գույքի նկատմամբ միանձնյա, այնպես էլ ընդհանուր սեփականության իրավունքին: Անշարժ գույքի նկատմամբ ընդհանուր սեփականության իրավունքի բովանդակությունը պետք է մեկնաբանվի այնպես, որ դրա պաշտպանությունը համարժեք լինի անձի սեփականության իրավունքի պաշտպանության համար նախատեսված պաշտպանությանը: Ընդհանուր սեփականության (բաժնային եւ համատեղ) պարագայում համասեփականատերերից յուրաքանչյուրը հանդես է գալիս որպես գույքային իրավահարաբերությունների ինքնուրույն սուբյեկտ՝ օժտված սեփականության սուբյեկտիվ իրավունքով եւ վերջինիս բովանդակությունը կազմող՝ **իր հայեցողությամբ** օգտագործման, տիրապետման եւ տնօրինման իրավագործությամբ: Հետեւաբար, ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքի նկատմամբ տնօրինման, ինչպես եւ՝ օգտագործման եւ տիրապետման, իրավագործությունը կարող է իրացվել միայն բոլոր համասեփականատերերի փոխհամաձայնությամբ, յուրաքանչյուր համասեփականատիրոջ կամաարտահայտության հիման վրա:

6. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 3-րդ մասերի համադրված վերլուծությունը վկայում է, որ համատեղ սեփականության ինչպես օգտագործման եւ տիրապետման, այնպես էլ տնօրինման իրավագրության իրացման հարցում օրենսդիրը, ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածին համահունչ, առաջնային կարեւորություն է հաղորդել համասեփականատերից յուրաքանչյուրի կամքին: Այսպես, օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված նորմը սահմանում է համատեղ սեփականության մասնակիցների կողմից ընդհանուր գույքը տիրապետելու եւ օգտագործելու կարգը: Համաձայն այդ նորմի՝ համատեղ սեփականության մասնակիցները **միասին տիրապետում եւ օգտագործում են ընդհանուր գույքը**, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ: Նշված նորմը դիսպոզիտիվ նորմ է եւ սահմանելով ընդհանուր գույքի օգտագործման եւ տիրապետման ընդհանուր կարգ՝ միաժամանակ, ելնելով համասեփականատերերի հայեցողությունը հաշվի առնելու սահմանադրական պահանջից, հնարավորություն է վերապահում համասեփականատերերին՝ փոխադարձ համաձայնությամբ սահմանելու այլ կարգ:

Օրենսգրքի 198-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի տնօրինման կարգը, այն է՝ այդ գույքը տնօրինվում է **բոլոր մասնակիցների համաձայնությամբ**: Ի տարբերություն նշված հոդվածի 1-ին մասում ամրագրված նորմի, 2-րդ մասում ամրագրված դրույթն իր բնույթով իմպերատիվ նորմ է, եւ որպես համատեղ սեփականության ներքո գտնվող գույքի նկատմամբ տնօրինման իրավունքի իրացման պարտադիր պայման է ամրագրում **բոլոր համասեփականատերերի համաձայնության առկայությունը**: Այս նորմում որեւէ բացառություն կամ նախապայման նախատեսված չէ: Միարժեք է, որ գույքի տնօրինումն առանց համասեփականատերերի համաձայնության հնարավոր չէ:

Գույքի տնօրինման իրավունքի բովանդակությունը բացահայտված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածում: Գրանում, մասնավորապես, շեշտվում է, որ «տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է»: Միաժամանակ, նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող եւ այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման եւ տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով»:

Տնօրինման իրավագրությունը ենթադրում է սեփականատիրոջ կողմից օրենքով նախատեսված շրջանակներում ու կարգով գույքի նկատմամբ գործողություններ կատարելու կամ վերջինից ձեռնպահ մնալու միջոցով իր գույքի իրավական եւ փաստացի ճակատագիրը որոշելու իրավունք: Դա ոչ այլ ինչ է, քան **հայեցողություն** կամ, այլ կերպ՝ գույքի ճակատագրի հանդեպ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի առաջին մասում նախանշված շրջանակներում եւ

օրենքով սահմանված պայմաններում ու կարգով **ինքնավար կամք դրսևորելու իրավունք**: Սակայն այդ կամքի ինքնավարությունը չի կարող անսահման լինել եւ չի կարող հակասել օրենքին, խախտել այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել նաեւ, որ օրենսդիրը նկատի ունենալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասում առկա այն իրավակարգավորումը, ըստ որի՝ ընդհանուր գույքի տնօրինման գործարքը կարող է կնքել համասեփականատերերից յուրաքանչյուրը, 2-րդ մասում շեշտադրում է, որ համատեղ սեփականության ներքո գտնվող գույքը տնօրինվում է համասեփականատերերի համաձայնությամբ՝ **անկախ նրանից, թե գործարքը համասեփականատերերից ով է կնքում**: Նման շեշտադրումն ինքնանպատակ չէ եւ վկայում է ինչպես խնդրո առարկա հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերի համակարգային փոխկապակցվածության, այնպես էլ դրանց իրավակարգավորման առարկաների տարբերության մասին: Դրանով միաժամանակ կարելու էր են համատեղ սեփականության իրավունքի բովանդակային բաղադրատարրի՝ տնօրինման իրավակարգավորման առանձնահատկությունը, համատեղ սեփականություն հանդիսացող գույքի ճակատագիրը որոշելու իրավունքի իրացման կարգը եւ իրավական հնարավոր հետեւանքները:

Օրենսգրքի 198-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորման խնդիրն է սահմանել **ընդհանուր գույքի տնօրինման կարգը**, մինչդեռ նույն հոդվածի 3-րդ մասում նկատի ունենալով, որ գույքի նկատմամբ տնօրինման իրավագործության իրացման հիմնական միջոցը, ձեւը գործարքների կնքումն է, օրենսդիրը սահմանել է տնօրինման իրավագործության իրացման մեխանիզմը՝ ամրագրելով համասեփականատերերից յուրաքանչյուրի՝ մյուսների անունից գործարք կնքելու իրավունքը: Ընդ որում, 3-րդ մասում ամրագրված նորմը, ի տարբերություն 2-րդ մասում ամրագրված իմպերատիվ նորմի, դիսպոզիտիվ է եւ նախատեսում է նաեւ գործարք կնքելու իրավունքի իրացման հարցում համասեփականատերերի այլ համաձայնության հնարավորություն: Հոդվածի 3-րդ մասում «եթե այլ բան նախատեսված չէ նրանց (համասեփականատերերի) համաձայնությամբ» ձեւակերպումը վերաբերում է 2-րդ մասով նախատեսված իմպերատիվ պահանջի բավարարման պայմաններում **գործարք կնքելու իրավունքի իրացման** շուրջ համասեփականատերերի համաձայնությանը:

Օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասը լուծում է հետեւյալ խնդիրները: **Նախ՝ սույն հոդվածի 2-րդ մասի իրացման կարգ է սահմանում՝** համատեղ սեփականության յուրաքանչյուր մասնակցի իրավունք վերապահելով ընդհանուր գույքի **տնօրինման գործարք կնքել, սակայն այդ իրավունքի իրացումը** ենթադասելով համատեղ սեփականատերերի կամքին: Երկրորդ՝ համատեղ սեփականատերերից միայն մեկի կողմից սեփականության տնօրինման գործարք կնքելու դեպքում մնացած մասնակիցների եւ բարեխիղճ ձեռքբերողի իրավունքների պաշտպանության կոնկրետ երաշխիք է նախատեսում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի դրույթների համակարգային վերլուծությունից բխում է՝

ա/ որ համատեղ սեփականություն հանդիսացող ընդհանուր գույքի տնօրինման իրավունքը հավասարապես պատկանում է բոլոր համասեփականատերերին, եւ նրանցից որեւէ մեկն առանց մյուս մասնակիցների համաձայնության իրավասու չէ այն տնօրինել,

բ/ նրանցից յուրաքանչյուրն իրավունք ունի կնքելու գույքի տնօրինման գործարք՝ պայմանով, որ դրա համար ունենա անհրաժեշտ լիազորություն:

7. Վիճարկվող նորմի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտելու տեսանկյունից կարելու նշանակություն ունի նաեւ այդ նորմում «անհրաժեշտ լիազորություններ» ձեւակերպման բովանդակության հստակեցումը: Մասնավորապես, այս առնչությամբ կարելուվում է հետեւյալ հարցադրումը. արդյո՞ք օրենսդիրը «անհրաժեշտ լիազորություններ» ձեւակերպման ներքո նկատի ունի մի համասեփականատիրոջ՝ մյուս համասեփականատերերի անունից գործարք կնքելու իրավունքի առկայությունը, թե՞ ընդհանուր գույքը տնօրինելու բոլոր համասեփականատերերի համաձայնության առկայությունը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ անհրաժեշտ լիազորության բովանդակության առաջին հարցադրմամբ ընկալումն անխուսափելիորեն կհանգեցնի խնդրո առարկա հոդվածի 2-րդ մասում ամրագրված իմպերատիվ նորմի պահանջների անտեսմանը: Մինչդեռ անհրաժեշտ լիազորության առկայության պահանջն ինքնանպատակ չէ, այն պետք է երաշխիք հանդիսանա համասեփականատերերի հայեցողության իրացման համար:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի բազմաթիվ հոդվածների (մասնավորապես՝ 14-20) իրավական տրամաբանությունից բխում է, որ լիազորությունն իրավահարաբերության սուբյեկտին տրվող իրավունք ու պարտականություն է՝ օրենսդրությամբ նախատեսված իրավաչափ գործողություն կատարելու համար: Սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության առումով լիազորվողը նման լիազորությամբ **կարող է օժտվել օրենքի ուժով կամ իրավահարաբերությունների սուբյեկտների ինքնավար կամքի դրսևորմամբ:** Քաղաքացիաիրավական հարաբերություններում այն ենթադրում է նաեւ՝ լիազորել անձին լիազորողի (լիազորողների) անունից կատարել գործողություններ, որոնք վերջինիս (վերջիններիս) սուբյեկտիվ իրավունքների իրացման արդյունքում կարող են որոշակի իրավական հետեւանքներ առաջացնել:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ համատեղ սեփականության փաստն ինքնին չի կարող ենթադրել համասեփականատերերից յուրաքանչյուրի մոտ համատեղ գույքը հայեցողաբար տնօրինելու լիազորության առկայություն: Նման կանխավարկածը բոլոր այն դեպքերում, երբ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով նախատեսված կարգին համապատասխան որոշված է համասեփականատերերի կոնկրետ շրջանակը, կամ նրանք որպես այդպիսին ճանաչվել են օրենքի ուժով, իրավակիրառական պրակտիկայում պետք է բացառել, նկատի ունենալով.

ա/ նման կանխավարկածն առաջին հերթին հակասում է սեփականության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությանը: ՀՀ Սահմանադրու-

թյան 31-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուրի իրավունքն է **իր հայեցողությամբ** տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու եւ կտակելու իր սեփականությունը: Այդ **հայեցողությունն** ունի սուբյեկտիվ բնույթ, պետք է դրսևորվի տվյալ անձի կամաարտահայտմամբ: Միաժամանակ, օրենքով են նախատեսվում սեփականության օտարման, սեփականությունից զրկելու եւ սեփականության իրավունքից օգտվելու բացառիկ այն դեպքերը, որոնք բխում են Սահմանադրության վերոհիշյալ հոդվածի 2-րդ, 3-րդ եւ 4-րդ մասերից: Սեփականության իրավունքի իրացման այլ պայման նախատեսելը, քան նախատեսված է Սահմանադրության 31-րդ հոդվածում, անխուսափելիորեն կհանգեցնի այդ իրավունքի արգելափակման: Մյուս կողմից՝ Սահմանադրության 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետության պոզիտիվ պարտականությունն է երաշխավորել, ապահովել ու պաշտպանել սեփականության իրավունքը՝ դրա համար ստեղծելով իրավական անհրաժեշտ նախադրյալներ,

բ/ վերոնշյալ սահմանադրաիրավական պահանջներից ելնելով է, որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի թե՛ 1-ին, թե՛ 2-րդ եւ թե՛ 3-րդ մասերում սեփականության իրավունքի իրավակարգավորման հիմքում **դրել է համատեղ սեփականության մասնակիցների կամաարտահայտությունը՝ նրանց համաձայնության առկայությունը՝** նկատի ունենալով սեփականություն հանդիսացող գույքը երկու կամ ավելի անձանց ընդհանուր սեփականության իրավունքով պատկանելու իրավաբանական փաստը,

գ/ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ հոդվածի համաձայն՝ համատեղ սեփականությունն ընդհանուր սեփականության ձեւերից մեկն է եւ «համատեղ սեփականության մասնակիցների համաձայնությամբ, իսկ դրա բացակայության դեպքում՝ դատարանի վճռով, ընդհանուր գույքի նկատմամբ կարող է սահմանվել այդ անձանց բաժնային սեփականություն» /մաս 5-րդ/: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ գլխի, մասնավորապես՝ 189 եւ 199-րդ հոդվածների, ինչպես նաեւ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ (5-րդ մաս), 27-րդ (4-րդ մասի 1-ին կետ), 35, 42, 43 եւ 46-րդ հոդվածների, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 41 եւ 64-րդ հոդվածների համադրված վերլուծությունից բխում է, որ՝

- գույքի նկատմամբ ընդհանուր սեփականության իրավունքի պետական գրանցման գործընթացում սեփականության մասնակիցներից որեւէ մեկի հանդես գալն իրավաբանորեն անհրազործելի է մյուս մասնակիցների համաձայնության բացակայության դեպքում, եւ որ բոլոր դեպքերում գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականում նշվում են գրանցված իրավունքի բոլոր սուբյեկտների անունները (անվանումները) որպես պետության կողմից այդ սուբյեկտների սեփականության իրավունքի ճանաչման, հետեւաբար՝ նաեւ այն պաշտպանելու պոզիտիվ պարտականության ստանձնման իրավական փաստ,
- գույքի նկատմամբ համատեղ սեփականության մասնակիցներից որեւէ մեկի իրավունքի դադարումը կարող է տեղի ունենալ **բացառապես նրա համաձայնությամբ** կամ, նրա մահվան դեպքում՝ օրենքով սահմանված կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի՝ միմյանց հետ համակարգային ամբողջություն կազմող նորմերի համադրված վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրահրավական բովանդակությունը ենթադրում է, որ համատեղ սեփականության մասնակիցներից յուրաքանչյուրն իրավունք ունի կնքել ընդհանուր գույքը տնօրինելու գործարքներ (եթե նրանց համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ) **բոլոր համասեփականատերերի կողմից իրենց հայեցողության իրացման արդյունքում տրված պոզիտիվ (կոնկրետ, առարկայական) համաձայնության առկայության պայմաններում**, երբ.

1) համասեփականատերերի իրավունքները պետական գրանցում են ստացել եւ սեփականության իրավունքը հավաստող իրավական փաստաթղթում (գրանցման վկայականում) հստակ նշված է, որ գույքը պատկանում է կոնկրետ սեփականատերերի՝ համատեղ սեփականության իրավունքով,

2) «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով նախատեսված կարգով ու դեպքերում գույքի նկատմամբ իրավունքները եւ սահմանափակումները ծագում են օրենքի հիման վրա եւ ունեն իրավաբանական ուժ՝ անկախ պետական գրանցումից:

Եթե առկա չէ վերոհիշյալ դեպքերից որեւէ մեկը, ապա **համատեղ սեփականատերերի խնդիրն է** նախապես հստակեցնել միմյանց միջեւ հարաբերությունները՝ ընդհանուր գույքի օտարման վերաբերյալ, նկատի ունենալով, որ սուբյեկտիվ իրավունքի իրացումն առաջին հերթին հիմնված է համապատասխան անձանց գործողությունների վրա: **Վերջինս ենթադրում է ինչպես համասեփականատերերի կողմից սեփականության իրավունքի հստակ պետական գրանցումը, անհրաժեշտության դեպքում օրենքով սահմանված կարգով յուրաքանչյուրի բաժնեմասի որոշակիացումը, այնպես էլ վեճի առարկա դրույթից ելնելով՝ համաձայնությամբ այլ բան նախատեսելը:** Նկատի պետք է ունենալ նաեւ այն հանգամանքը, որ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ հոդվածի 5-րդ մասի՝ ոչ միայն գույքի նկատմամբ **կարող է սահմանվել համատեղ սեփականության մասնակիցների բաժնային սեփականություն**, այլեւ օրենսգրքի 195-րդ հոդված 1-ին մասի համաձայն՝ «Ընդհանուր սեփականության իրավունքում բաժինը երրորդ անձի վաճառելիս բաժնային սեփականության մնացած մասնակիցները, վաճառքի գնով եւ այլ հավասար պայմաններով, վաճառվող բաժինը գնելու նախապատվության իրավունք ունեն, բացառությամբ հրապարակային սակարկություններով վաճառքի դեպքի»:

Համասեփականատերերի միջեւ հարաբերությունների հստակեցման արդյունքում է դրսևորվելու նրանց հայեցողական կամաարտահայտումն ընդհանուր սեփականության տնօրինման հարցում: Նման հայեցողության բացակայության պայմաններում է, որ պրակտիկայում այն սուբյեկտը, որի անվամբ ձեւակերպված է եղել այդ սեփականությունը, կնքել է այն տնօրինելու գործարք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով: Նման վիճակի առկայությունից ելնելով է, թերեւս, օրենսդիրը «Հասարա-

կության եւ պետութեան կարիքների համար սեփականութեան օտարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասում մասնավորապէս նախատեսել, որ «եթէ ... օտարվող սեփականութեան սեփականատերն իրեն հայտնի օտարվող սեփականութեան նկատմամբ պետական գրանցում չունեցող գույքային իրավունքներ ունեցողների մասին չի հայտնում ձեռքբերողին, ապա առանց այդ գույքային իրավունքներ ունեցողների մասնակցութեան սեփականութեան օտարման հետեւանքով նրանց պատճառված վնասների համար պատասխանատւություն կրում է օտարվող սեփականութեան սեփականատերը»:

Հաշվի առնելով համատեղ սեփականութեան իրավունքի ծագման առանձնահատկություններն ու բնույթը, նկատի ունենալով, որ ընդհանուր սեփականութեանը վերաբերող իրավանորմերը պետք է կարգավորեն ինչպէս համասեփականատերերի՝ «բոլոր մասնակիցների» միմյանց միջեւ առաջացած հարաբերությունները, այնպէս էլ համասեփականատերերի եւ երրորդ անձանց միջեւ առաջացող հարաբերությունները, օրենսդրի խնդիրն է համասեփականատերերի ինքնավար կամքի դրսեւորման այնպիսի իրավակարգավորում նախատեսել, որպէսզի չխաթարվեն իրավահարաբերությունների որեւէ սուբյեկտի իրավունքներն ու օրինական շահերը: Դա անհրաժեշտ է նաեւ այն նպատակով, որպէսզի գույքը ծանրաբեռնված չլինի գործարքի կնքման պահին չբացահայտված այնպիսի պարտավորություններով, որոնք կխտչընդոտեն բարեխիղճ ձեռքբերողի սեփականութեան իրավունքի անարգել իրացմանը: Այս նպատակով եթէ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածում տնօրինման իրավունքը պայմանավորվում է հայեցողութեան դրսեւորմամբ, ապա օրենսգրքի 192-րդ եւ 198-րդ հոդվածներում իրավակարգավորման առանցքը սեփականատերերի համաձայնությունն ու երրորդ կողմի շահերի հաշվառումն է:

Այսուհանդերձ, սեփականութեան իրավունքի պաշտպանութեան սահմանադրաիրավական չափորոշիչները չեն կարող տարբեր լինել՝ կախված այն հանգամանքից, թէ գույքը մեկ անձի կամ ընդհանուր (բաժնային կամ համատեղ) սեփականություն է: Սակայն չեն կարող անտեսվել նաեւ սեփականութեան իրավունքի իրացման՝ օրենքով նախատեսված ձեւերի բազմազանութեամբ պայմանավորված իրավակարգավորման առանձնահատկությունները: Այս հանգամանքը նկատի ունենալով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով (մասնավորապէս՝ հոդվածներ 5 եւ 43) նախատեսվում է ինչպէս պետական գրանցման բովանդակությունը, այնպէս էլ համատեղ սեփականությունը որպէս այդպիսին գրանցելու համապատասխան ընթացակարգ: Իսկ ահա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասում **իրավունքի ուժը ենթադրաւորաբար է համասեփականատերերի համաձայնութեանը:**

Վեճի առարկա իրավանորմի սահմանադրաիրավական բովանդակութեան բացահայտման առումով էական է նաեւ **բարեխիղճ ձեռքբերողի իրավունքների ու շահերի պաշտպանութեան համար իրավական համարժեք երաշխիքների ապահովումը:** Օրենսդիրը զարգացրել է այն հայեցակարգային մոտեցումը, համաձայն որի՝ համասեռ իրավահարաբերություններից բխող իրավունքների ու շահերի բախման դեպքում անձանց այդ իրավունքների դատական պաշտպա-

նությունն առավել երաշխավորելի է ու արդյունավետ՝ այդ իրավունքների գործադրման՝ օրենքով նախատեսված բոլոր միջոցները լիարժեք իրացնելու, ինչպես նաև չլիազորված անձից բարեխիղճ ձեռքբերումը բացառելու պայմաններում: Նման մոտեցումն է հենց ընկած ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթի իրավակարգավորման հիմքում:

8. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի համաձայն՝ իրավական ակտի սահմանադրականությունը որոշելիս սահմանադրական դատարանը գնահատում է ինչպես այդ ակտը, այնպես էլ ձեւավորված իրավակիրառական պրակտիկան:

Ըննության առարկա հիմնախնդրի վերաբերյալ իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ տարբեր մոտեցումներ են դրսևորվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառման հարցում: Անշարժ գույքի պետական գրանցման եւ նոտարական վավերացման գործող համակարգերում գույքի նկատմամբ իրավունքների ու սահմանափակումների, դրանց ծագման, փոփոխման, փոխանցման եւ դադարման վերաբերյալ պետական գրանցում եւ գործարքի նոտարական վավերացում իրականացնելիս **պարտադիր է համարվում բոլոր համասեփականատերերի պոզիտիվ համաձայնությունը:**

Դատական պրակտիկայում այլ մոտեցում է դրսևորվում, նկատի ունենալով համասեփականատերերից մեկին օրենքի ուժով տրված լիազորությունը՝ միայնակ գույքի օտարման գործարք կնքելու առնչությամբ: Ընդ որում, այստեղ նույնպես տեղ են գտել միմյանցից տարբերվող իրավական դիրքորոշումներ: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում մի դեպքում շեշտվում է, որ «...համասեփականատերերից որեւէ մեկի անհամաձայնության բացակայությունը վկայում է վերջինիս համաձայնության եւ գործարքը կնքող համասեփականատիրոջ մոտ գործարք կնքելու իրավունքի առկայության մասին», կամ այլ կերպ՝ ընդհանուր գույքը տնօրինելիս գործում է «...համասեփականատերերի համաձայնության եւ դրա տնօրինման գործարք կնքող անձի մոտ գործարքը կնքելու իրավունքի առկայության կանխավարկածը» (օր.՝ թիվ ԵԱԲԳ/1023/02/10 քաղաքացիական գործով 27.12.2011թ. որոշումը): Մեկ այլ դեպքում տրվում է հետևյալ դիրքորոշումը, որ համատեղ սեփականություն հանդիսացող ընդհանուր գույքը տնօրինելու ժամանակ առկա է «... մյուս համասեփականատերերի համաձայնության եւ դրա տնօրինման իրավունքի առկայության կանխավարկածը» (թիվ ԵԱԲԳ/0275/02/08 քաղաքացիական գործով 18.09.2009թ. որոշումը): Այնհայտ է, որ այս ձեւակերպումների սահմանադրաիրավական բովանդակությունները տարբեր են: Եթե առաջին դեպքում շեշտվում է «**գործարքը կնքելու իրավունքի առկայության կանխավարկածը**», ապա երկրորդ դեպքում եզրահանգումը վերաբերում է համատեղ սեփականատերերից մեկի մոտ «... **տնօրինման իրավունքի առկայության**» կանխավարկածին:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ առաջին դեպքում եզրահան-

գումը՝ սեփականության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության առումով, խնդրահարույց չէ, քանի որ **գործարք կնքելու լիազորությամբ օժտելը** նախատեսվում է ոչ թե, այսպես կոչված, «լռության փաստով», այլ իրավունքի ուժով՝ օրենքով նախատեսված կարգով անձին համապատասխան լիազորություն տրամադրելու միջոցով: Այս ենթատեքստում «համաձայնություն» արտահայտությունն ունի կանխարգելիչ բնույթ (եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ) եւ համաձայնությամբ «այլ բանի» բացակայությունը նշանակում է իրավունքի իրացման արգելանքի բացակայություն կամ համաձայնություն յուրաքանչյուրի կողմից գույքի օտարման գործարք կնքելու՝ օրենքով նախատեսված իրավասության հարցում:

Սակայն սեփականության տնօրինման իրավունքի հիմքում թե՛ Սահմանադրությամբ եւ թե՛ օրենքով, ինչպես նշվեց, դրված է սեփականատիրոջ **հայեցողությունը**, ինքնավար կամքի դրսեւորումը: Ուստի երկրորդ դեպքում բերված ձեւակերպումը թե՛ սահմանադրաիրավական բովանդակության եւ թե՛ դրա արտահայտման առումով խնդրահարույց է:

Սեփականության իրավունքի իրացման, մասնավորապես, գույքի տնօրինման իրավունքի առումով «անհամաձայնության բացակայությունը համաձայնություն է» արտահայտությունը տրամաբանորեն հակասում է ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի իրավական բովանդակությունից բխող «անձի հայեցողության» կամ այլ կերպ՝ «իրավահարաբերությունների սուբյեկտների ինքնավար կամքի դրսեւորման» սկզբունքին, քանի որ այս դեպքում իրավական ելակետը ոչ թե համաձայնությամբ այլ բան նախատեսված չլինելու պայմաններում գործարք կնքելն է, **այլ սեփականության իրավունքի իրացման հարցում անձի հայեցողության կոնկրետ առկայությունն է:**

Միջազգային իրավական պրակտիկան վկայում է, որ սեփականության իրավունքը, անկախ այն բանից, թե իրացվում է առանձին կամ համատեղությամբ, երաշխավորման, ապահովման ու պաշտպանության սահմանադրաիրավական այնպիսի նախադրյալներ պետք է ունենա, որպեսզի, մի կողմից՝ անձը կարողանա բացառապես իր հայեցողությամբ տիրապետել, օգտագործել ու տնօրինել իր սեփականությունը, մյուս կողմից՝ սեփականության իրավունքի իրացումը չպետք է խախտի այլ անձանց, հանրության ու պետության իրավունքներն ու օրինական շահերը:

Համասեփականատերերից յուրաքանչյուրի համաձայնությունը սեփականության իր իրավունքի իրացման, առավել եւս՝ սեփականության տնօրինման առումով, սահմանադրական պահանջ է, որը հստակ ամրագրված է նաեւ այլ պետությունների օրենսդրական ակտերում: Օրինակ՝ Գերմանիայի քաղաքացիական օրենսգրքի 747-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ «...համասեփականատերերը կարող են տնօրինել ամբողջությամբ համատեղ սեփականությունը միայն համատեղ կարգով»: Այս ձեւակերպումն էապես չի տարբերվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 2-րդ մասի միարժեք պահանջից՝ բացառապես բոլոր մասնակիցների համաձայնությամբ համասեփականության ներքո գտնվող գույքի տնօրինման առումով:

Հետևությունն այն է, որ համատեղ սեփականության մասնակիցներից յուրաքանչյուրն իրավունք պետք է ունենա կնքելու ընդհանուր գույքը տնօրինելու գործարքներ՝ նկատի ունենալով, որ գործում է համասեփականատերերի համաձայնությամբ դրա տնօրինման իրավունքի, ինչպես նաև գործարք կնքող անձի մոտ գործարքը կնքելու իրավունքի ու **անհրաժեշտ լիազորության** առկայության՝ օրենքով նախատեսված նախապայմանը:

Վերոհիշյալ երկու մոտեցումների համադրման արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանադրականության առումով որևէ անորոշություն կամ խնդիր առկա չէ: Ինչ վերաբերում է դատական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությանը, ապա ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների զարգացման արդյունքում թիվ ԵԱԸԳ-1023/02/10 քաղաքացիական գործով 27.12.2011թ. որոշման մեջ տրված մեկնաբանությունը, այնքանով, որքանով շեշտադրվում է համասեփականատերերից գործարք կնքող անձի մոտ **գործարքը կնքելու իրավունքի** առկայության կանխավարկածը, անմիջական հակասության մեջ չի մտնում օրենքի նորմի սահմանադրաիրավական բովանդակության հետ: Սակայն դա միաժամանակ չի նշանակում գույքը տնօրինելու գործարք կնքող մասնակցի մոտ համատեղ սեփականություն հանդիսացող գույքի **օտարման անհրաժեշտ լիազորության առկայություն** այն դեպքերում՝

ա/ երբ համասեփականատերերի իրավունքները պետական գրանցում են ստացել եւ սեփականության իրավունքի գրանցման վկայականում հստակ նշված է, որ գույքը պատկանում է կոնկրետ սեփականատերերի՝ համասեփականության իրավունքով,

բ/ երբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով նախատեսված կարգով ու դեպքերում գույքի նկատմամբ իրավունքները եւ սահմանափակումները ծագում են օրենքի հիման վրա եւ ունեն իրավաբանական ուժ՝ անկախ պետական գրանցումից:

Նշված դեպքերում գույքի օտարումը կարող է տեղի ունենալ միայն համասեփականատերերից յուրաքանչյուրի **պոզիտիվ կամաարտահայտման պարագայում**՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի: Սրանք այն դեպքերն են, երբ գույքի նկատմամբ իրավունքների ու սահմանափակումների, դրանց ծագման, փոփոխման, փոխանցման եւ դադարման վերաբերյալ պետական գրանցում կամ նոտարական վավերացում իրականացնելիս արդեն իսկ հստակ է համասեփականատերերի սեփականության իրավունքի առկայության հանգամանքն ու անհրաժեշտ է նրանց հայեցողության կոնկրետ դրսեւորումը, ինչը կփաստի նաև գործարք կնքողի մոտ անհրաժեշտ լիազորության առկայությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապե-

տության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ այդ մասի առաջին նախադասության դրույթների սահմանադրաիրավական այն բովանդակությամբ, համաձայն որի՝ համատեղ սեփականության մասնակիցներից յուրաքանչյուրն իրավունք ունի կնքել ընդհանուր գույքը տնօրինելու գործարքներ, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ՝ նկատի ունենալով, որ ներքոհիշյալ դեպքերում առանձին մասնակցի կողմից գույքի տնօրինման գործարք կնքելիս անհրաժեշտ է բոլոր համասեփականատերերի պոզիտիվ համաձայնությունը, ինչը կփաստի գործարք կնքող մասնակցի մոտ անհրաժեշտ լիազորության առկայությունը: Այդ դեպքերն են.

ա/ երբ համասեփականատերերի իրավունքները պետական գրանցում են ստացել եւ սեփականության իրավունքի գրանցման վկայականում հստակ նշված է, որ գույքը պատկանում է կոնկրետ սեփականատերերի՝ համասեփականության իրավունքով,

բ/ երբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով նախատեսված կարգով ու դեպքերում գույքի նկատմամբ իրավունքները եւ սահմանափակումները ծագում են օրենքի հիման վրա եւ ունեն իրավաբանական ուժ՝ անկախ պետական գրանցումից:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**24 փետրվարի 2012 թվականի
ՍԳՈ- 1009**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱԶՈՐԻ
ԳՐԱՄԵՆՅԱԿ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ
ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 8-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ
«Զ» ԵՆԹԱԿԵՏԻ, 12-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 6-ՐԴ ԵՎ 7-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

6 մարտի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուդյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչներ Ա. Զեյնալյանի եւ Ա. Դազարյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Մխիթարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց միտում գրավոր ընթացակարգով քննեց «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության դիմումի հիման վրա՝ «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի «գ» ենթակետի, 12-րդ հոդվածի 6-րդ եւ 7-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության՝ 23.11.2011թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց .**

1. «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1996թ. դեկտեմբերի 3-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1996թ. դեկտեմբերի 30-ին եւ ուժի մեջ է մտել 1997թ. հունվարի 9-ին:

«Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ «Տեղեկությունները պետական եւ ծառայողական գաղտնիքի շարքին դասելու եւ դրանց պաշտպանության բնագավառում պետական, տեղական ինքնակառավարման մարմինների եւ պաշտոնատար անձանց լիազորությունները» վերտառությամբ 8-րդ հոդվածի 4-րդ մասի «գ» ենթակետը սահմանում է, որ հանրապետական գործադիր, տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինները.

«գ) իրենց իրավասության սահմաններում իրականացնում են տեղեկությունները պետական եւ ծառայողական գաղտնիքի շարքին դասելու եւ դրանց պաշտպանության բնագավառում այլ լիազորություններ:»:

Նույն օրենքի՝ «Տեղեկությունները պետական եւ ծառայողական գաղտնիքի շարքին դասելը» վերտառությամբ 12-րդ հոդվածի 6-րդ եւ 7-րդ մասերը սահմանում են.

«Պետական այն մարմինները, որոնց ղեկավարներն օժտված են տեղեկությունները պետական եւ ծառայողական գաղտնիքի շարքին դասելու լիազորություններով, մշակում են գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերը, որոնցում ներգրավվում են՝

ա) պետական գաղտնիքի շարքին դասվող այն տեղեկությունները, որոնք տնօրինելու լիազորությամբ օժտված են իրենք.

բ) ծառայողական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունները:

Գերատեսչական ցանկերում նշվում են նաեւ ներգրավված տեղեկություններից յուրաքանչյուրի գաղտնիության աստիճանը: Այդ ցանկերը եւ դրանցում կատարվող փոփոխություններն ու լրացումները հաստատվում են պետական մարմինների համապատասխան ղեկավարների կողմից: Գերատեսչական ցանկերը գաղտնագրվում են եւ հրապարակման ենթակա չեն»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին: Գիմողը 10.02.2010թ. տեղեկատվության հարցմամբ դիմել է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն 2009 թվականին Հայաստանի Հանրապետության զինված ուժերում ծառայության ընթացքում մահացած ժամկետային եւ պայմանագրա-

յին զինծառայողների թվաքանակի, նրանց անունների, ազգանունների եւ հասցեների վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունն ի պատասխան հարցման՝ 20.02.2010թ. մերժել է տեղեկատվության տրամադրումը՝ վկայակոչելով «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները եւ պատճառաբանելով, որ պահանջվող տեղեկատվությունը, օրենքի պահանջներից ելնելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի համապատասխան գաղտնի հրամանով գործողության մեջ դրված՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկի համաձայն հանդիսանում է գաղտնի տեղեկատվություն եւ «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի պահանջների համաձայն համարվում է ծառայողական գաղտնիք:

Դիմողը 27.02.2010թ. նախարարություն է ուղղել տեղեկատվության նոր հարցում՝ խնդրելով տրամադրել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի համապատասխան գաղտնի հրամանը եւ դրանով գործողության մեջ դրված՝ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկը», որը նույնպես նախարարության կողմից մերժվել է՝ օրենքի պահանջի վկայակոչումով:

Դիմողը 19.04.2010թ. հայցադիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության: Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը, քննելով վարչական գործն ըստ հայցի «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության տեղեկատվության ազատության իրավունքի խախտման փաստը ճանաչելու պահանջի մասին, որպես աժանցյալ պահանջ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկի մասին հրամանը վերացնելու, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը 10.02.2010թ. Ե/2010-051 հարցումով փնտրվող տեղեկությունը տրամադրելուն պարտավորեցնելու մասին» ՎԳ/1314/05/10 գործը, 23.11.2010թ. վճռով մերժել է հայցադիմումը՝ փաստելով, որ հայցվորի կողմից պահանջվող տեղեկատվության չտրամադրումը բխում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 43-րդ հոդվածի եւ «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներից, ուստի առկա չէ հայցվոր կողմի տեղեկատվության ազատության իրավունքի խախտման փաստ:

Վարչական դատարանը միաժամանակ փաստել է, որ «...նշված վերլուծությունները՝ անկախ «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի վերջին պարբերության կիրառման, լիովին բավարար

են հայցվորի կողմից ներկայացված պահանջի սահմաններում, վերջնական եւ պատճառաբանված դատական ակտ կայացնելու համար: Ուստի, դատարանը չի անդրադառնում հայցվորի կողմից մատնանշված միջնորդության քննարկմանը՝ միաժամանակ արձանագրելով, որ, դատարանի կարծիքով, «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի վերջին պարբերությունը չի հակասում ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածին եւ 83.5 հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ կետերին»:

Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանն իր՝ 16.03.2011թ. որոշմամբ դիմողի կողմից բերված վերաքննիչ բողոքը մերժել է՝ վերահաստատելով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի իրավական դիրքորոշումները:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանն իր՝ 18.05.2011թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ վերադարձրել է դիմողի կողմից բերված վճռաբեկ բողոքը:

3. Վիճարկելով «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի «գ» ենթակետի եւ 12-րդ հոդվածի 6-րդ եւ 7-րդ մասերի սահմանադրականությունը՝ դիմողը գտնում է, որ դրանք հակասում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ, 5-րդ, 6-րդ, 27-րդ, 43-րդ, 83.5-րդ եւ 117-րդ հոդվածների պահանջներին:

Դիմողի պնդմամբ՝ օրենսդիրը «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով տեղեկությունները պետական եւ ծառայողական գաղտնիքի շարքին դասելու իրավահարաբերությունները թողել է գերատեսչական ակտերով կարգավորմանը, իսկ 12-րդ հոդվածով գործադիր իշխանության մարմիններին լիազորություն է վերապահել, որպեսզի վերջիններս մշակեն եւ իրենց կողմից ընդունվող ակտերով հաստատեն գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկեր, որոնք տնօրինելու լիազորությամբ օժտված են իրենք: Միաժամանակ, օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանվել է, որ գաղտնի տեղեկությունների վերաբերյալ գերատեսչական ցանկերը գաղտնագրվում են եւ հրապարակման ենթակա չեն, այսինքն՝ «գերատեսչության գաղտնի՝ հրապարակման ոչ ենթակա իրավական ակտով սահմանվում են այն տեղեկությունները, որոնք գաղտնի են»:

Ըստ դիմողի՝ մնան իրավակարգավորման պայմաններում քաղաքացիական վերահսկողությունից դուրս է մնում հանրային իշխանության մարմինների մի կարելուք ուղրտ, ինչն անհամատեղելի է իրավական եւ ժողովրդավարական հասարակությունում գործող հիմնարար սկզբունքների հետ: Դիմողը նշում է նաեւ. «քանի որ գաղտնիք է թե՛ ի՞նչն է գաղտնի տեղեկություն, ապա հասարակության անդամներին հայտնի յուրաքանչյուր տեղեկություն որոշակի հավանականությամբ կարող է ընդգրկված լինել այդ ցանկերում եւ դրանց տարածումը հնարավոր է, որ փաստական եւ իրավական հետեւանքներ առաջացնի իրավահարաբերությունների մասնակիցների համար»:

ՀՀ Սահմանադրության 117-րդ հոդվածի առնչությամբ դիմողը, արձանագրելով, որ խնդրո առարկա օրենքն ընդունվել է 2005 թվականի սահմանադրա-

կան փոփոխություններից առաջ, գտնում է, որ «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքն այն բազմաթիվ օրենքներից մեկն է, որը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 117-րդ հոդվածի ուժով Սահմանադրության փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո չի վերանայվել եւ չի ենթարկվել փոփոխությունների:

4. Պատասխանողն առարկելով դիմողի փաստարկները՝ նշում է, որ խոսքի ազատության իրավունքը, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, բացարձակ իրավունք չէ: Ի թիվս այլնի, ի շահ պետական անվտանգության՝ այս իրավունքը սահմանափակելու իրավաչափությունը նախատեսված է մի շարք միջազգային փաստաթղթերով:

Պատասխանող կողմը գտնում է, որ հիմնավորված չէ դիմող կողմի այն պնդումը, թե օրենսդիրը տեղեկությունները պետական եւ ծառայողական գաղտնիքի շարքին դասելու իրավահարաբերությունները թողել է գերատեսչական կարգավորմանը, քանզի խոսքի ազատության իրավունքի՝ ներառյալ տեղեկություններ փնտրելու, ստանալու իրավունքի սահմանափակման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորված են ոչ թե գերատեսչական ակտերով, այլ այդպիսի սահմանափակման հնարավորությունը նախատեսված է միջազգային իրավական ակտերով եւ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, եւ նշված իրավահարաբերություններն առավել մանրամասն կարգավորում են ստացել, մասնավորապես, «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» եւ «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով:

Ըստ պատասխանող կողմի՝ «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը հստակ սահմանում է տեղեկությունները պետական կամ ծառայողական գաղտնիքի շարքին դասելու ընթացակարգը: Օրենքն ամրագրում է պետական եւ ծառայողական գաղտնիքի շարքին դասելու ենթակա տեղեկությունները, ինչպես նաեւ դրանք պետական եւ ծառայողական գաղտնիքի շարքին դասելու սահմանափակումները: Տեղեկությունները պետական եւ ծառայողական գաղտնիքի շարքին դասելու լիազորություններով օժտված պաշտոնատար անձինք իրավասու չեն դուրս գալու օրենքի նախանշած շրջանակներից, այլ իրավասու են դրանք ընդամենը մանրամասնել ըստ բնագավառների եւ գերատեսչական պատկանելության եւ ոչ թե սահմանել նոր կատեգորիայի տեղեկություններ:

Ինչ վերաբերում է դիմողի այն պնդմանը, թե ընդլայնված գերատեսչական ցանկերի գաղտնի լինելու պատճառով հասարակության անդամներին հայտնի յուրաքանչյուր տեղեկություն որոշակի հավանականությամբ կարող է ընդգրկված լինել այդ ցանկերում, եւ դրանց տարածումը հնարավոր է, որ փաստական եւ իրավական հետեւանքներ առաջացնի իրավահարաբերությունների մասնակիցների համար, ըստ պատասխանողի՝ անհիմն է, քանի որ, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով պատասխանատվություն է նախատեսվում այն անձի կողմից պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ դիտավորությամբ հրապարակելու համար, ով

պետական գաղտնիքի հետ ծանոթանալու իրավունք ունեն, եւ ում դա վստահված է եղել կամ հայտնի է դարձել ծառայության բերմամբ, եթե բացակայում են պետական դավաճանության հասկանալիքները:

Պատասխանողը գտնում է, որ վիճարկվող դրույթները, իրենց բովանդակությամբ չլինելով հակասահմանադրական, մինչ այսօր վերանայման անհրաժեշտություն չեն առաջացրել:

5. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ խոսքի ազատության իրավունքը ներառում է նաեւ տեղեկություններ փնտրելու եւ ստանալու ազատությունը: Հանրային տեղեկատվության մատչելիությունը ժողովրդավարության եւ հանրության առջեւ պատասխանատու պետական կառավարման թափանցիկության էական նախապայմաններից է: Հասարակական կարծիքի միջոցով իրականացվող ժողովրդավարական վերահսկողությունը խթանում է պետական իշխանության գործողությունների թափանցիկությունը եւ նպաստում պետական մարմինների ու պաշտոնատար անձանց հաշվետու գործունեությանը:

Սահմանադրական այս իրավունքը, սակայն, բացարձակ իրավունք չէ եւ ենթակա է սահմանափակման ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածով սահմանված հիմքերով եւ կարգով: Այս սահմանադրական արժեքի հարաբերակցությունն այլ սահմանադրական արժեքների հետ, մասնավորապես, պետական անվտանգության հետ, որոշում է դրա հնարավոր սահմանափակումների բնույթը: ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածում նշված՝ պետական անվտանգության պաշտպանության իրավաչափ նպատակի համար տեղեկություններ փնտրելու եւ ստանալու ազատության սահմանափակման հնարավորությունը թույլ է տալիս պետական իշխանությանը պետական կամ ծառայողական գաղտնիքի շարքին դասել եւ ըստ այդմ սահմանափակել այն տեղեկությունների մատչելիությունը, որոնց տարածումը կարող է վնաս պատճառել պետական անվտանգությանը: ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածին համապատասխան՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի՝ «Տեղեկատվության ազատության սահմանափակումները» վերտառությամբ 8-րդ հոդվածը սահմանափակում է այն տեղեկատվության մատչելիությունը, որը պարունակում է պետական, ծառայողական, բանկային կամ առետրային գաղտնիք:

6. Սույն գործի շրջանակներում բարձրացված սահմանադրաիրավական վեճը մասնավորապես առաջադրում է հետեւյալ իրավական հարցադրումները.

ա/ արդյո՞ք գործադիր իշխանության մարմինների կողմից իրենց իրավասության սահմաններում տեղեկությունները պետական կամ ծառայողական գաղտնիքին դասելու՝ օրենքով սահմանված լիազորության իրացումը ենթադրում է տեղեկություններ ստանալու իրավունքի սահմանափակում, եւ, ըստ այդմ, արդյո՞ք այդ մարմինների կողմից մշակված՝ գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերն ինքնին իրենցից ներկայացնում են նշված իրավունքի սահմանափակում,

բ/ իրավաչափ է, արդյոք, գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդ-

լայնված գերատեսչական ցանկերի գաղտնագրումն ու ոչ հրապարակային բնույթը:

Նշված հարցադրումներին պատասխանելու համար առաջին հերթին կարելի է օրենքի համակարգային վերլուծությունը, որի արդյունքում հնարավոր կլինի պարզել, թե արդյո՞ք օրենքը սահմանում է հստակ, կոնկրետ ու ամբողջական չափորոշիչներ այս կամ այն տեղեկությունը որպես պետական գաղտնիք որակելու եւ բացառապես օրենքով իրավունքի սահմանափակման սկզբունքի երաշխավորման համար:

«Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է «պետական գաղտնիք» հասկացությունը: Այդ հոդվածի համաձայն՝ պետական գաղտնիք են ՀՀ ռազմական, արտաքին հարաբերությունների, տնտեսական, գիտատեխնիկական, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեության բնագավառների այն տեղեկությունները, որոնք պաշտպանվում են պետության կողմից, եւ որոնց տարածումը կարող է ծանր հետեւանքներ առաջացնել Հայաստանի Հանրապետության անվտանգության համար:

Ի լրումն այս սահմանման՝ վերոհիշյալ օրենքի 9-րդ հոդվածը նախատեսում է պետական գաղտնիքի շարքին դասելու ենթակա տեղեկությունների շրջանակը: Այս հոդվածում, ըստ 2-րդ հոդվածում հիշատակված բոլոր բնագավառների, առանձնացվում են պետական գաղտնիքին դասելու ենթակա տեղեկությունները: Միաժամանակ, օրենքի 10-րդ հոդվածը սահմանում է այն տեղեկությունները, որոնք չեն կարող դասվել պետական գաղտնիքի շարքին: Օրենքի 11-րդ հոդվածը սահմանում է նաեւ գաղտնագրման սկզբունքները:

«Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածում տրված՝ պետական գաղտնիքի սահմանումը՝ համադրված օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված՝ պետական գաղտնիքի շարքին դասելու ենթակա տեղեկությունների շրջանակի եւ 10-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների հետ, թույլ է տալիս արձանագրել, որ օրենքը սահմանում է այս կամ այն տեղեկությունը պետական գաղտնիքի շարքին դասելու եւ, դրա հետեւանքով, դրանց մատչելիության, հետեւաբար, նաեւ անձի՝ տեղեկություններ փնտրելու եւ ստանալու իրավունքի սահմանափակման շրջանակները:

«Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը նաեւ սահմանում է գաղտնիության աստիճանները՝ միաժամանակ ամրագրելով այն կողմնորոշիչ չափանիշները, որոնց հիման վրա իրավասու պաշտոնատար անձինք այս կամ այն տեղեկությունները դասակարգում են ըստ գաղտնիության աստիճանների:

Վերոհիշյալի հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ երաշխավորվում է բացառապես օրենքով իրավունքների սահմանափակման սահմանադրական սկզբունքի իրացումը, իսկ ենթաօրենսդրական ակտերին վերապահվում է օրենքի պահանջների իրականացման ասպիտակման գործառույթ:

7. «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը սահմանում է տեղեկությունները պետական եւ ծառայողական գաղտնիքի

շարքին դասելու բնագավառում պետական, տեղական ինքնակառավարման մարմինների եւ պաշտոնատար անձանց լիազորությունները: Օրենսդիրը, օրենքի 9-րդ հոդվածով նախատեսելով պետական գաղտնիքի շարքին դասելուն ենթակա տեղեկություններն ըստ համապատասխան բնագավառների՝ 12-րդ հոդվածով տեղեկությունների գաղտնագրման բնագավառում միասնական պետական քաղաքականություն իրականացնելու նպատակով լիազորում է ՀՀ կառավարությանը մշակել Հայաստանի Հանրապետության պետական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունների ցանկը, որում նաեւ նշվում են տեղեկություններից յուրաքանչյուրը տնօրինելու լիազորությամբ օժտված պետական մարմինները: Օրենքի համաձայն՝ նշված ցանկը վավերացվում է ՀՀ Նախագահի կողմից, վերանայվում է անհրաժեշտության դեպքում եւ ենթակա է հրապարակման: Օրենքն ամրագրելով այդ ցանկի հրապարակային բնույթը՝ ապահովում է դրա մատչելիությունը եւ դրան առնչվող անձանց գործողությունների կանխատեսելիությունը:

Օրենքի 8-րդ հոդվածով հանրապետական գործադիր մարմիններին վերապահելով **իրենց իրավասության շրջանակներում** տեղեկությունները պետական եւ ծառայողական գաղտնիքի շարքին դասելու լիազորություն՝ օրենսդիրը միաժամանակ 12-րդ հոդվածում հստակեցրել է այդ մարմինների կողմից մշակման ենթակա գերատեսչական ցանկերի բնույթը՝ համաձայն որի դրանք հանդիսանում են **ընդլայնված ցանկեր**:

«Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածին համապատասխան՝ ՀՀ կառավարությունը 1997 թվականի օգոստոսի 19-ին ընդունել է «Տեղեկությունները պետական եւ ծառայողական գաղտնիքի շարքը դասելու լիազորություններով օժտված պետական մարմինների պաշտոնատար անձանց ցանկը հաստատելու մասին» թիվ 350 որոշումը: Օրենքի 8-րդ եւ 12-րդ հոդվածներին համապատասխան՝ ՀՀ կառավարության 1998 թվականի մարտի 13-ի թիվ 173 որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկը եւ տեղեկությունները պետական եւ ծառայողական գաղտնիքի շարքը դասելու լիազորություններով օժտված գործադիր իշխանության մարմինների ղեկավարներին հանձնարարվել մեկամսյա ժամկետում սահմանված կարգով մշակել գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերը:

ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 665 որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկի մշակման կարգը: Այդ որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի համաձայն՝ «Պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկերի նախագծերը մշակվում են «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի պահանջներին համապատասխան...»: Այսինքն՝ դրանք պետք է ներառեն **պետական գաղտնիքի շարքին դասելու ենթակա՝ օրենքի պահանջներից բխող տեղեկությունները**: Դա հավասարապես վերաբերում է նաեւ գերատեսչական ընդլայնված ցանկերին:

Վերոնշյալից ելնելով՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ.

ա/ սահմանված կարգով կազմված պետական գաղտնիք հանդիսացող տե-

ղեկությունների գերատեսչական մանրամասնված ցանկերն ինքնին չեն կարող հանգեցնել տեղեկատվություն ստանալու իրավունքի սահմանափակման: Այդ իրավունքի սահմանափակումները նախատեսված են օրենքով, եւ օրենսդիրը վիճարկվող նորմերով նախատեսված լիազորության սահմանմամբ ոչ թե իրավունքի սահմանափակումներ սահմանելու իր բացառիկ լիազորությունը պատվիրակել է գործադիր իշխանության մարմիններին, այլ իրականացնելով սահմանափակումներ սահմանելու իր սահմանադրական լիազորությունը՝ **այդ մարմիններին լիազորել է իրացնել օրենքով սահմանված սահմանափակումը,**

բ/ ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշումները, որոնց իրավաչափությունը խնդիր չի հարուցում, ՀՀ Նախագահի կողմից վավերացվել են ՀՀ Սահմանադրության 2005թ. փոփոխություններից առաջ՝ գործող կարգի պահանջներին համապատասխան: Հաշվի առնելով սահմանադրական փոփոխություններից հետո ՀՀ կառավարության որոշումների ընդունման եւ գործողության մեջ դնելու նոր կարգը՝ օրենսդիրը պարտավոր էր ՀՀ Սահմանադրության 117-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից ելնելով անհրաժեշտ փոփոխություններ կատարել «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասում, նկատի ունենալով, որ պետական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունների ցանկի նոր փոփոխությունների անհրաժեշտության դեպքում ՀՀ Նախագահն այդ փոփոխություններն այլեւս նախկինում գործող ընթացակարգով չի կարող վավերացնել:

8. Սահմանադրական դատարանը կարելու է համարում նաեւ անդրադարձը գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական ցանկերի ոչ հրապարակային բնույթի իրավաչափության հարցին: Այն անհրաժեշտ է քննության առնել «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի՝ տեղեկությունների գաղտնագրման գործընթացի իրավակարգավորման ընդհանուր տրամաբանության, ինչպես նաեւ պետական գաղտնիքի բացահայտման ու տարածման համար քրեական պատասխանատվություն սահմանելու իրավակարգավորումների լույսի ներքո՝ հաշվի առնելով նաեւ ՀՀ միջազգային պարտավորությունները:

«Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում, որում բացահայտված է օրենքում գործածվող հասկացությունների բովանդակությունը, **«տեղեկությունների գաղտնագրում» հասկացությունը** սահմանված է որպես՝ «պետական եւ ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների եւ այդպիսի տեղեկակիրների տարածման նկատմամբ սահմանափակումների կիրառում»:

Օրենքի՝ **«Տեղեկությունների գաղտնագրումը»** վերտառությամբ 13-րդ հոդվածը սահմանում է, որ գաղտնագրումն արտահայտվում է ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով յուրաքանչյուր առանձին տեղեկության գաղտնիության աստիճանը որոշելու եւ համապատասխան տեղեկակրին գաղտնիության դրոշմագիր տալու ձեով:

Օրենքի նշված նորմերը համադրելով 2-րդ հոդվածում տրված՝ պետական եւ ծառայողական գաղտնիքի հասկացության սահմանման հետ, սահմանադր-

րական դատարանն արձանագրում է, որ տեղեկությունների գաղտնագրման գործընթացի իրավակարգավորման առնչությամբ օրենքի իրավակարգավորման ընդհանուր տրամաբանությունից բխում է, որ սահմանափակումները սահմանված կարգով կիրառելի են **տեղեկությունների նկատմամբ**, որոնց տարածումը կարող է ծանր հետեւանքներ առաջացնել Հայաստանի Հանրապետության անվտանգության համար:

Ելնելով վերոհիշյալից՝ օրենքի 12-րդ հոդվածի վիճարկվող 7-րդ մասում տեղ գտած «**գերատեսչական ցանկերը գաղտնագրվում են**» ձեւակերպումը կնշանակեր այդ ցանկերի նկատմամբ սահմանափակումների կիրառում՝ պայմանավորված այն հանգամանքով, որ դրանց բովանդակության բացահայտումը կարող է ծանր հետեւանքներ առաջացնել Հայաստանի Հանրապետության անվտանգության համար: Մինչդեռ գերատեսչական ցանկերը պարզապես մանրամասնում են օրենքով նախատեսված եւ ՀՀ կառավարության կողմից հաստատված հրապարակային ցանկում նշված ոլորտները:

Ինչ վերաբերում է այնպիսի հնարավոր իրավիճակներին, երբ գերատեսչական ցանկերում ընդգրկվող կոնկրետ տեղեկության վերտառությունն (անվանումը) ինքնին անխուսափելիորեն կարող է արդեն իսկ ամրագրման փաստի ուժով իրենից պետական գաղտնիք ներկայացնել, ապա նման դեպքերում օրենքից բխող գաղտնագրման սկզբունքներին, մասնավորապես, գաղտնագրման հիմնավորվածության սկզբունքին համապատասխան այն կարող է դիտարկվել որպես տեղեկություն, որի տարածումը կարող է ծանր հետեւանքներ առաջացնել Հայաստանի Հանրապետության անվտանգության համար, եւ որպես կոնկրետ տեղեկություն գաղտնագրվել:

Բացի դրանից, ինչպես ՀՀ սահմանադրական դատարանը, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով տեղեկություններ փնտրելու եւ ստանալու ազատության իրավաչափ սահմանափակումների չափորոշիչներին, իրավական դիրքորոշում են արտահայտել այն մասին, որ, նախեւառաջ, այդ ազատության սահմանափակման իրավական հիմքը պետք է բավարարի մատչելիության եւ կանխատեսելիության որակները: Սահմանափակման իրավական հիմքին վերաբերող այս պահանջների կարեւորությունն է՛լ ավելի է ընդգծվում, երբ նշված ազատությանը միջամտությունը դրսեւորվում է անձին համապատասխան տեղեկություններ տարածելու համար քրեական պատասխանատվության ենթարկելու ձեւով:

ՀՀ քրեական օրենսգիրքը նախատեսում է պետական գաղտնիքի տարածմանն առնչվող մի քանի հանցակազմ, մասնավորապես՝ «պետական դավաճանությունը» (ՀՀ քր. օր., 299-րդ հոդված), «լրտեսությունը» (ՀՀ քր. օր., 302-րդ հոդված), «պետական գաղտնիք հրապարակելը» (ՀՀ քր. օր., 306-րդ հոդված): Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նշված արարքների համար անձի դատապարտման համար՝ ի լրումն «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի եւ ՀՀ կառավարության կողմից հաստատված՝ գաղտնագրման ենթակա տեղեկությունների հրապարակային ցանկի, իրավական հիմք կարող է հանդիսանալ նաեւ այս կամ այն գերատեսչական գաղտնագրված ցանկով գաղտնագրված տեղեկությունը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ

տեղեկություններից բացի նաև գերատեսչական ցանկերի գաղտնագրումը կարող է խոչընդոտել իրավունքի սուբյեկտներին կանխատեսել իրենց գործողությունների իրավական հետեւանքները, մասնավորապես, նկատի ունենալ, որ տարածած տեղեկությունները հանդիսանում են պետական գաղտնիք՝ հանգեցնելով քրեական պատասխանատվության:

Այս խնդրին անդրադարձել են նաև մի շարք միջազգային կազմակերպություններ: Մասնավորապես, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը «Լրտեսության կամ պետական գաղտնիք հրապարակելու վերաբերյալ քրեական գործերով արդար դատաքննության մասին» թիվ 1551 (2007) բանաձեռի 10.2-րդ կետում արձանագրել է հետևյալ սկզբունքը. «...պետական գաղտնիքի վերաբերյալ օրենսդրությունը, ներառյալ քրեական պատասխանատվության համար հիմք հանդիսացող գաղտնագրման ենթակա տեղեկությունների ցանկերը, պետք է լինեն հստակ ու առաջին հերթին հրապարակային: Քրեական պատասխանատվություն սահմանող գաղտնի ակտերը չեն կարող համատեղելի համարվել Եվրոպայի խորհրդի իրավական չափորոշիչների հետ եւ պետք է վերացվեն բոլոր անդամ պետություններում»:

Միաժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Շտոլն ընդդեմ Շվեյցարիայի գործով վճռում (2007թ. դեկտեմբերի 10, կետ 44, Stoll v. Switzerland) վկայակոչված է վերոհիշյալ բանաձեռի գծով զեկուցողի կողմից իրականացված՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում պետական գաղտնիքի վերաբերյալ օրենսդրությունների համեմատական վերլուծությունը, որում մասնավորապես ասված է. «... Ընդհանուր առմամբ առկա է երեք հիմնական մոտեցում. մի դեպքում տրվում է պետական կամ ծառայողական գաղտնիքի հասկացության հակիրճ եւ ընդհանուր սահմանումը, որը լրացվում է իրավակիրառական պրակտիկայում: Երկրորդ դեպքում սահմանվում է գաղտնագրման ենթակա տեղեկությունների ծավալում եւ առավել մանրամասնված ցանկ: Երրորդ մոտեցումը հանդիսանում է նախորդ երկուսի համակցությունը եւ այս մոտեցման էությունը կայանում է նրանում, որ սահմանվում են այն բնագավառները, որոնց առնչվող տեղեկությունները կարող են գաղտնագրվել եւ այնուհետեւ համապատասխան վարչական կամ գերատեսչական ակտերով առավել ճշգրիտ եւ կոնկրետ սահմանվում են այն տեղեկությունները, որոնք փաստացիորեն կարող են գաղտնիք համարվել: ... Այս օրենսդրական մոտեցումները թույլ են տալիս գտնել ողջամիտ լուծումներ այն տեղեկությունների տեսակները որոշելու բարդ խնդրում, որոնք պաշտպանելու հարցում պետությունն ունի իրավաչափ շահ՝ միաժամանակ հարգելով տեղեկատվության ազատությունը եւ իրավական անվտանգության կարիքները: Սակայն, ցանկացած վարչական ակտ կամ նախարարի հրաման, որը բովանդակություն է հաղորդում ավելի ընդհանուր ձեւակերպումներ պարունակող օրենքներին, պետք է առնվազն մատչելի լինեն հանրությանը»:

Ելնելով վերոշարադրյալից, հաշվի առնելով նաև տարբեր երկրների սահմանադրական արդարադատության պրակտիկան՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ներկա ընթացակարգով **գերատեսչական ցանկերի գաղտնագրումը դուրս է տեղեկությունների գաղտնագրման՝** «Պետական եւ

ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորման ընդհանուր տրամաբանության շրջանակից, եւ դրանց ոչ հրապարակային բնույթը՝ այնքանով, որքանով չի վերաբերում գաղտնագրման ենթակա կոնկրետ տեղեկության, չի հետապնդում պետական անվտանգության շահերի պաշտպանության իրավաչափ նպատակ եւ խնդիրներ է հարուցում մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի «գ» ենթակետը եւ 12-րդ հոդվածի 6-րդ մասը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 7-րդ մասի՝ «Գերատեսչական ցանկերը գաղտնագրվում են եւ հրապարակման ենթակա չեն» դրույթը՝ այնքանով, որքանով չի վերաբերում գաղտնագրման ենթակա կոնկրետ տեղեկության, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27-րդ եւ 43-րդ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր:

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 9.1-րդ կետի եւ 69-րդ հոդվածի 12-րդ մասի պահանջներից ելնելով՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով, նաեւ նկատի ունենալով, որ ՀՀ վարչական դատարանը թիվ ՎԳ/1314/05/10 դատական գործով 23.11.2010թ. կայացրած վճռում վերազանցել է իր լիազորությունները՝ հաշվի չառնելով ՀՀ Սահմանադրության 93-րդ հոդվածի պահանջը՝ արձանագրել է, որ «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի վերջին պարբերությունը չի հակասում ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածին եւ 83.5 հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ եւ 6-րդ կետերին»:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**6 մարտի 2012 թվականի
ՄԳՈ- 1010**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ՇԱՎԱՐՇ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԵՎ ԱՅԼՈՅ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 138-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

11 ապրիլի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուդյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող կողմի ներկայացուցիչ Կ. Մեժումյանի,

գործով որպես պատասխանող ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Մխիթարյանի եւ առաջատար մասնագետ Հ. Սարդարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38, 68 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Շավարշ Սկրտչյանի եւ այլոց դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Շավարշ Սկրտչյանի եւ այլոց՝ 17.01.2012թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի բացատրությունները, հետազոտելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը, վիճարկվող խնդրի իրավակարգավորման վերաբերյալ օրենսդրության այլ ակտերը եւ միջազգային իրավական պրակտիկան, Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային

պարտավորությունները, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2007 թվականի նոյեմբերի 28-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի դեկտեմբերի 10-ին եւ ուժի մեջ է մտել 2008 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող «Հայցադիմումների քննության առանձնահատկությունները» վերտառությամբ 138-րդ հոդվածը սահմանում է.

«Սույն օրենսգրքի 135-րդ հոդվածով նախատեսված գործերը դատարանը քննում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ գործը դատարանի գնահատմամբ ձեռք է բերել հասարակական մեծ հնչեղություն, կամ դրա բանավոր դատաքննությունը կնպաստի գործի հանգամանքների առավել արագ բացահայտմանը»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. Շավարշ Սկրտչյանը եւ այլոք հայցով դիմել են ՀՀ վարչական դատարան՝ ընդդեմ ՀՀ կառավարության՝ խնդրելով անվավեր ճանաչել ՀՀ կառավարության 26.06.2009թ. թիվ 944-Ն որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Հալիձորի գյուղական համայնքի քաղաքացիների սեփականությունը հանդիսացող հողամասերի նկատմամբ բացառիկ գերակա հանրային շահ ճանաչելու եւ հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին»: Վարչական դատարանը հիմք ընդունելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածը՝ դիմումն ընդունել է քննության գրավոր ընթացակարգով: Դիմող կողմը միջնորդություն է ներկայացրել գործը հրապարակային քննելու վերաբերյալ, որը դատարանը մերժել է՝ գտնելով, որ գործով առկա չեն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածով սահմանված բանավոր քննության համար անհրաժեշտ հիմքերը եւ 01.03.2010թ. հրապարակել է թիվ ՎԴ/4396/05/09 որոշումը՝ ՀՀ կառավարության 26.06.2009թ. թիվ 944-Ն որոշումն անվավեր ճանաչելու մասին պահանջը մերժելու մասին: Այդ որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքը ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 05.05.2010թ. որոշմամբ վերադարձրել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով՝ նշելով նաեւ, որ նորմատիվ իրավական ակտի իրավաչափությունը վիճարկելու գործերով վարչական դատարանի ակտերը կարող են բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան միայն նյութական իրավունքի խախտման հիմքով: ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-936 որոշմամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասն այն մասով, որով արգելափակվում է անձի իրավունքը՝ դատավարական իրավունքի նորմի խախտման հիմքով բողոքարկելու նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի դատական ակտերը, ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 3-րդ, 18-րդ եւ 19-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր: Հիմք ընդունելով սահմանադրական դատարանի հիշյալ որոշումը՝ դիմողները նոր հանգա-

մանքի հիմքով ներկայացրել են վճռաբեկ բողոք, որը ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից 29.07.2011թ. որոշմամբ բավարարվել է մասնակիորեն, իսկ դիմողների դատավարական իրավունքի խախտման հիմքով մերժվել է եւ ՀՀ վարչական դատարանի 01.03.2010թ. որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ: ՀՀ վճռաբեկ դատարանը միաժամանակ պատճառաբանված եւ հիմնավոր է գտել ՀՀ վարչական դատարանի դիրքորոշումը՝ գործը բանավոր ընթացակարգով քննելու միջնորդությունը մերժելու վերաբերյալ, քանի որ գործով չի հիմնավորվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածով սահմանված դեպքերից որեւէ մեկի առկայությունը, այն է՝ գործը ձեռք է բերել հասարակական մեծ հնչեղություն, կամ դրա բանավոր դատաքննությունը կնպաստի գործի հանգամանքների առավել արագ բացահայտմանը:

3. Դիմող կողմը գտնում է, որ վիճարկվող նորմը ՀՀ վարչական եւ ՀՀ վճռաբեկ դատարանների մեկնաբանությամբ չի համապատասխանում ՀՀ Սահմանադրությանը, քանի որ «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածով նախատեսված՝ գործը գրավոր ընթացակարգով քննելու կանոնը չի կարող համարվել առանց հրապարակային դատաքննության դատական ակտի հրապարակման դատարանի իրավունք» եւ չի բխում ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներից «եւ խախտվում է դրանցով երաշխավորված հայցվորների իրավունքը»: Գործի հրապարակային քննության իրավունքն անձի սահմանադրական իրավունք է, «որի սահմանափակման դեպքերը թվարկված են նույն Սահմանադրությամբ, որպիսիք այս դեպքում առկա չեն, իսկ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն դա բարձրագույն արժեք է եւ պետությունը սահմանափակված է այդ իրավունքով»: Հակառակ վերը նշված սահմանադրական եւ Կոնվենցիայով երաշխավորված սկզբունքի, ինչպես գտնում է դիմող կողմը, ՀՀ վարչական դատարանը դատական նիստերի դահլիճում, կողմերի մասնակցությամբ գործի հրապարակային քննություն չի կատարել եւ «առանց գործի հրապարակային դատաքննության պետք է հրապարակի գործն ըստ էության լուծող դատական ակտը, ինչով էլ խախտվում են մեր կողմի վերը նշված իրավունքները»: Դիմող կողմը նաեւ գտնում է, որ դատարանի նման մոտեցմամբ իրենք զրկվում են դատարանին ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից: Բացի դրանից, «դատարանը նույնացրել, հետեւաբար իրար է խառնել երկու տարբեր սկզբունքներ. սահմանադրական՝ հրապարակայնության սկզբունքը, որը երաշխավորում է գործերը դռնբաց քննելը, որպես բացառություն սահմանելով դռնփակ դատական նիստերի դեպքերը, եւ բանավորության սկզբունքը, որը վերաբերում է գործը բանավոր կամ գրավոր ընթացակարգով քննելու դեպքերին»: Ըստ դիմողի՝ «հրապարակայնության սկզբունքը չի նույնանում գործը բանավոր կամ գրավոր ընթացակարգով քննելու հետ, մասնավորապես գործը կարող է բանավորությամբ քննվել դռնփակ, որը բանավորության պահանջի պահպանում կլինի, բայց հրապարակայնության սկզբունքի խախտում, եթե առկա չեն Սահմանադրությամբ ու Կոնվենցիայով սահման-

ված՝ դռնփակության հիմքերը»։ Արդյունքում, ինչպես գտնում է դիմող կողմը, «վարչական դատարանի համար հնարավորություն է ստեղծվում նորմատիվ ակտերի վիճարկման գործերը գրավոր ընթացակարգով քննելու պատրվակով դրանք քննել առանց հրապարակային դատաքննության, մասնավորապես, հայցադիմումը ստանալուց որոշ ժամանակ անց, առանց գործի հրապարակային կամ դռնփակ դատաքննության», որով խախտվում է ՀՀ Սահմանադրության 19-րդ եւ Կոնվենցիայի 6-րդ հոդվածներով երաշխավորված՝ գործին մասնակցող անձանց իրավունքները։

4. Պատասխանողը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 3-րդ, 18-րդ եւ 19-րդ հոդվածներին հետեւյալ հիմնավորմամբ. հաշվի առնելով հրապարակայնության կարեւորությունն անձի արդար դատական քննության իրավունքի իրացման տեսանկյունից՝ դատական քննության հրապարակայնությունը բարձրացվել է արդարադատության սահմանադրական սկզբունքի մակարդակի եւ իր արտացոլումն է գտել ինչպես դատական համակարգի անկախությունն ու մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքներն ամրագրող միջազգային իրավական փաստաթղթերում, այնպես էլ ներպետական օրենսդրությամբ։ Ըստ պատասխանող կողմի՝ «հրապարակայնությունը հանդես է գալիս լայն եւ նեղ իմաստներով։ Հրապարակայնությունը լայն իմաստով նշանակում է գործի քննությանը քաղաքացիների եւ զանգվածային տեղեկատվության միջոցների ներկայություն, իսկ նեղ իմաստով՝ կողմերի եւ գործին մասնակցող այլ անձանց ներկայություն դատական քննությանը»։ Դատավարական սկզբունքներից է նաեւ դատական քննության բանավորությունը, «որը հնարավորություն է տալիս ապահովելու հրապարակայնության սկզբունքի առավել ամբողջական իրացումը դատական քննության ընթացքում»։ Դատավարական սկզբունքները, թեկուզ ինքնուրույն, իրենց բովանդակությամբ բնորոշում են դատավարության այս կամ այն ինստիտուտը (փուլը), բայց եւ միաժամանակ գտնվում են սերտ փոխկապվածության մեջ, կազմում մեկ միասնական տրամաբանական-իրավական համակարգ։ Պատասխանող կողմը նաեւ գտնում է, որ «գործերի քննության բանավոր ձեւը հրապարակայնության սկզբունքի իրականացման նախապայման է»։ Բանավորությունը պարզ եւ մատչելի է դատավարության բոլոր մասնակիցների համար, որը հնարավորություն է տալիս դատարանին եւ գործին մասնակցող անձանց «հեշտ ընկալելու գործի հանգամանքները, ճիշտ գնահատելու դրանք, իսկ դատական նիստին ներկա քաղաքացիներին եւ ՁԼՄ ներկայացուցիչներին՝ ծանոթանալու քննվող գործին, վերահսկողություն իրականացնելու դատարանի գործունեության նկատմամբ։ Բանավորության շնորհիվ դատավարության բոլոր մասնակիցները կարող են կատարել մտքերի կենդանի եւ արագ փոխանակություն»։ Միաժամանակ, ըստ պատասխանող կողմի, հիմնավոր պատճառներով դատավարության իրականացումը միայն բանավորության սկզբունքի կիրառմամբ անհնարին է, եւ հաշվի առնելով որոշ գործերի առանձնահատկությունները՝ դրանց առավել արդյունավետ քննությունը կարող է իրականացվել գրավոր ձեւով, եւ

բանավոր ընթացակարգի բացակայությունն արդարացվում է, եթե դատարանը քննում է բացառապես իրավունքի մասին հարցեր, որի դեպքում էլ «ապացույցներ ներկայացնելը ոչ միայն կողմի իրավունքն է, այլև պարտականությունը»: Ըստ պատասխանող կողմի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը հնարավորություն է տալիս ներկայացնելու լրացուցիչ ապացույցներ գործը քննության նախապատրաստելու ավարտից հետո, ինչպես նաև հայցվորին իրավունք է ընձեռում մինչև դատաքննություն նշանակելը փոփոխել հայցի հիմքը կամ առարկան:

5. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել՝

- գրավոր ընթացակարգի՝ որպես արդար եւ հրապարակային դատաքննության սահմանադրական իրավունքի իրացման դատավարական ձեւի, օրենսդրական երաշխավորման բովանդակությունն ու առանձնահատկությունները,
- գրավոր ընթացակարգով դատաքննության միջազգային իրավական (եվրոպական) պրակտիկայի եւ այդ բնագավառում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի բովանդակությունն ու առանձնահատկությունները,
- վարչական դատարանին ընդդատյա գործերով գրավոր ընթացակարգով դատաքննության պայմաններում մասնակիցների իրավունքների (այդ թվում՝ դատավարական) պաշտպանության երաշխավորումն ինչպես վիճարկվող, այնպես էլ դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված այլ նորմերում:

6. ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու համար անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: Այդ իրավունքը երաշխավորված է նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա), որի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ունի ողջամիտ ժամկետում արդարացի եւ հրապարակային դատաքննության իրավունք: Ընդ որում, այդ իրավունքի իրացման նվազագույն եւ կարելու երաշխիքներն են՝ **հրապարակային դատաքննությունը** (մասնավորապես՝ գործը քննող դատարանի, քննության առարկա գործի, քննության վայրի, ժամանակի, դատաքննության կարգի եւ այլնի մասին հրապարակային տեղեկությունները), ինչպես նաև **դատական ակտի պարտադիր հրապարակումը**:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածին համապատասխան, ինչպես նաև ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում պետության խնդիրն է օրենսդրությամբ ապահովել արդարադատության իրականացումն ընթացակարգային այնպիսի կանոններով, որոնցով երաշխավորվեն հրապարակային դատաքննության իրավունքի իրացման անհրաժեշտ իրավական

պայմաններ, այդ թվում՝ նաեւ դատարանում գործերի քննության դատավարական ձեւերի բազմազանության կիրառմամբ, ելնելով քննվող գործերի առանձնահատկություններից եւ դրանց արդար, արագ ու արդյունավետ լուծման անհրաժեշտությունից: Վերջինիս նպատակով է պայմանավորված գործերի դատաքննության ընթացակարգային այնպիսի ձեւերի առկայությունը, ինչպիսիք են դատաքննության **բանավոր եւ գրավոր ընթացակարգերը** կամ բանավորության եւ գրավոր քննության սկզբունքները: Գրավոր ընթացակարգի պայմաններում գործի քննությունն իրականացվում է առանց «բանավոր լսումների»՝ առանց կողմերի ուղղակի մասնակցության, որը պայմանավորված է դատավարական մի շարք առանձնահատկություններով:

Ձեւավորված միջազգային օրենսդրական եւ արդարադատական պրակտիկայում դատաքննության վերոնշյալ երկու սկզբունքներն էլ հավասարապես կարեւորված են եւ ունեն տարբեր դրսեւորումներ՝ պայմանավորված իրավական տվյալ համակարգով, դատական համակարգի կառուցակարգով, արդարադատություն իրականացնող մարմինների գործառույթների բովանդակությամբ, ինչպես նաեւ դատարաններում քննվող կոնկրետ գործերի առանձնահատկություններով, դատավարության կողմերի կամաարտահայտմամբ եւ ներպետական օրենսդրությամբ նախատեսված այլ հանգամանքներով: Այդ պրակտիկայի համալիր ուսումնասիրությունն սկզբունքորեն հանգեցնում է հետևյալին.

- դատաքննության բանավորության եւ գրավոր քննության սկզբունքները հավասարապես կիրառելի են արդարադատության բոլոր բնագավառներում (ընդհանուր իրավասության (քրեական եւ քաղաքացիական գործերով), վարչական, սահմանադրական եւ մասնագիտացված այլ արդարադատության),
- եթե քննության բանավոր ընթացակարգն սկզբունքորեն կիրառելի է առանց բացառության, ապա գրավոր ընթացակարգով դատաքննությունն իրականացվում է առանձնահատուկ դեպքերում եւ որոշակի հանգամանքների առկայությամբ, մասնավորապես.

1/ երբ բացակայում է դատական գործով փաստական հանգամանքների բանավոր քննության անհրաժեշտությունը կամ, եթե դատարան ներկայացված նյութերի (փաստաթղթեր եւ այլն) բանավոր ուսումնասիրումը (քննությունը) վիճարկվող հարցի հետագա հստակեցմանը չի նպաստելու, եւ եթե այն չի հակասում մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության հանրաճանաչ սկզբունքներին,

2/ առկա է դատավարության կողմերի միջնորդությամբ կամ առանց դրա կայացված դատական որոշում՝ գործի քննությունը գրավոր ընթացակարգով կազմակերպելու վերաբերյալ,

3/ դատաքննության նախապատրաստման փուլում, երբ քննարկվում է դիմումի ընդունելիության հարցը,

4/ հանրային շահերին սպառնացող վտանգը կանխելու կամ անհրաժեշտ այլ նպատակներով՝ դատարանի կողմից ժամանակավոր միջոցներ կիրառելու հարցը որոշելու դեպքերում,

5/ դատաքննությանը չմասնակցելու վերաբերյալ դատավարության մասնակիցների միջնորդության առկայության դեպքում՝ դատարանի որոշմամբ,

6/ եթե դատարանն անհրաժեշտ է համարել որոշում կայացնել գործում առկա գրավոր փաստաթղթերի հիման վրա,

7/ եթե գործի հետ կապված հանգամանքների պարզումն այլ կերպ (բանավոր քննությամբ) անհնարին է,

8/ գործով արագ դատաքննությունն ապահովելու նպատակով,

9/ միայն իրավունքի կամ ընթացակարգային հարցերի վերաբերյալ որոշում կայացնելու անհրաժեշտության դեպքերում,

10/ դատական վերադատության (վերաքննության, վճռաբեկության) կարգով գործեր (բողոքներ, գանգատներ) քննելիս, եթե այլ կարգ մախատեսված չէ,

11/ եթե գործի քննությունը չի հանգեցնում որեւէ փաստացի կամ իրավական հիմնախնդրի, եւ փաստերը հստակեցված են,

12/ եթե դատարանի որոշումը չի պարունակելու իրավական գնահատականներ,

13/ եթե դատարանում քննվող դիմումն անվերապահ հիմնավորված է կամ ակնհայտ անհիմն է, եւ դատարանը գտնում է, որ բանավոր քննության անհրաժեշտություն չկա,

14/ հանրային իրավունքի վերաբերյալ վեճեր քննելիս,

15/ եթե կողմերի միջև առկա չէ իրավական վեճ կամ պատասխանող կողմը համաձայն է դատարան ներկայացված պահանջների:

Վերոհիշյալ իրավապայմաններն արտացոլված են նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մախադեպային իրավունքում: Մասնավորապես, եվրոպական դատարանը շեշտել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված՝ գործի իրապարակային քննության իրավունքն անհրաժեշտաբար ներառում է «բանավոր լսման» իրավունքը: Այնուամենայնիվ, նման լսումներ անցկացնելու պարտավորությունը բացարձակ չէ: Այսպես, բանավոր քննության բացակայությունը կարող է համատեղելի լինել 6-րդ հոդվածի պահանջների հետ, երբ քննության ենթակա հարցը չի բարձրացնում փաստի կամ իրավունքի հետ կապված այնպիսի հարց, որը կարող է պատշաճ ձեւով լուծվել գործի նյութերի հիման վրա՝ առանց կողմերի բանավոր դիտարկումների (Elsholz v. Germany, Judgment of 13 July 2000, p.66, Fredin v. Sweden (no. 2), Judgment of 23 February 1994, pp. 21-22; Fischer v. Austria, Judgment of 26 April 1995, p. 44):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով գրավոր դատաքննությունը գնահատում է որպես արդար եւ հրապարակային, եթե.

- պայմանավորված է բացառիկ հանգամանքներով,
- իրականացվում է ողջամիտ ժամկետներում, ինչպես նաեւ արագ դատաքննությունն ապահովելու նկատառումներով,
- պայմանավորված է քննվող գործի առանձնահատկությամբ,
- սկզբունքորեն կիրառվում է իրավունքի վերաբերյալ հարցեր լուծելիս, ինչպես նաեւ փաստական այնպիսի հանգամանքներ քննելիս, որպիսիք արդարացված են գրավոր ընթացակարգի պայմաններում:

Հետեւաբար, սույն գործով վիճարկվող նորմերի սահմանադրականությունը որոշելիս սահմանադրական դատարանն առաջնորդվում է նաեւ վերոթվարկյալ չափանիշներին դրանց համապատասխանությունը գնահատելու անհրաժեշտությամբ:

Այսպիսով, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատաքննության գրավոր, ինչպես եւ բանավոր ընթացակարգերն արդարադատության իրականացման կազմակերպական-ընթացակարգային ձեւեր են, որոնք իրավական ամրագրմամբ ներդրվելով արդարադատական պրակտիկայում՝ կոչված են. մի դեպքում՝ առանց «բանավոր լսումների» դատաքննական գործողությունների իրականացման, մյուս դեպքում՝ դրանց կատարմամբ ապահովելու դատական գործերի արդար, արդյունավետ եւ հրապարակային քննություն, դատական ակտերի կայացում եւ դրանց հրապարակում: Բոլոր դեպքերում, թե՛ բանավոր եւ թե՛ գրավոր ընթացակարգով գործերի դատաքննությունը պետք է անհրաժեշտ երաշխիքներ ապահովի դատաքննության մասնակիցների իրավունքների իրացման համար:

7. Դատաքննության գրավոր ընթացակարգի ինստիտուտը ՀՀ իրավահամակարգում ներդրված է սահմանադրական, ինչպես նաեւ վարչական արդարադատության բնագավառներում եւ կոչված է երաշխավորելու արդար, հրապարակային դատաքննություն որոշակի առանձնահատուկ գործերով եւ հանգամանքներում: Վարչական դատավարության շրջանակներում գրավոր ընթացակարգով քննություն կարող է կազմակերպվել գործով կողմերի կամաարտահայտմամբ կամ դատարանի նախաձեռնությամբ՝ որոշակի հիմքերի առկայության դեպքերում: Այդ ընթացակարգը վարչադատական գործերով կիրառվում է արագացված դատաքննություն իրականացնելիս (ՀՀ վարչ. դատ. օր.-ի 108-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ), վարչական դատարանի ակտերի դեմ (այդ թվում՝ միջանկյալ) բերված վերաքննիչ բողոքներ քննելիս (ՀՀ վարչ. դատ. օր.-ի 117.10-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ եւ 5-րդ մասեր), վերաքննիչ դատարանի կողմից վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումները վճռաբեկության կարգով վերանայելիս (ՀՀ վարչ. դատ. օր.-ի 118-րդ հոդվածի 3-րդ մաս), նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործեր քննելիս (այդ թվում՝ ՀՀ վարչ. դատ. օր.-ի 147-րդ հոդվածում նախատեսված գործերով), բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ գործը դատարանի գնահատմամբ ձեռք է բերել հասարակական մեծ հնչեղություն, կամ դրա բանավոր դատաքննությունը կնպաստի գործի հանգամանքների առավել արագ բացահայտմանը (ՀՀ վարչ. դատ. օր.-ի 138-րդ հոդված), ինչպես նաեւ վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ հայցադիմում քննելիս (ՀՀ վարչ. դատ. օր.-ի 158-րդ հոդվածի 1-ին մաս):

Հարկ է նշել, որ ի տարբերություն օրենսգրքի վերը հիշատակված հոդվածներում ամփոփված գրավոր քննության կանոնների, բանավոր քննության կանոնները կամ վարչական դատարաններում դատաքննության ընդհանուր կարգը (համակարգված նորմերի ձեւով) նախատեսված է օրենսգրքի 16-րդ գլխում:

8. Անդրադառնալով սույն գործով վիճարկվող նորմի սահմանադրականությունը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ գլխում ներառված նորմերի, այդ թվում՝ 138-րդ հոդվածի համաձայն, նորմատիվ իրավական ակտերի (օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված) իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթը, որպես կանոն, վարչական դատարանն իրականացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ գործը դատարանի գնահատմամբ ձեռք է բերել հասարակական մեծ հնչեղություն, կամ դրա բանավոր դատաքննությունը կնպաստի գործի հանգամանքների առավել արագ բացահայտմանը: Ինչպես հետեւում է հիշյալ իրավակարգավորման բովանդակությունից՝ օրենսդիրը գրավոր ընթացակարգով դատաքննությունը պարտադիր է համարել այն գործերով, երբ օբյեկտիվորեն դատարանի առջեւ դրված է նորմատիվ ակտով նախատեսված **իրավունքի բովանդակության (իրավադրույթի իրավաչափության), դրա միատեսակ եւ ճշգրիտ ընկալման ու մեկնաբանման հարց**, որի լուծումը պահանջում է, նախեսառաջ, վարչական դատարանի կողմից վիճարկվող նորմատիվ իրավական ակտի ուսումնասիրում, դրա իրավահամեմատական վերլուծություն ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտի դրույթների հետ եւ այլն: Այսինքն՝ այսպիսի գործերով (հանրային-իրավական վեճերից բխող) դատարանը, որպես կանոն, դատաքննական գործողությունների հրապարակային-բանավոր, կողմերի անմիջական մասնակցությամբ կատարելու անհրաժեշտություն չունի, որը թելադրված է արդյունավետ դատաքննություն կազմակերպելու նպատակով: Միաժամանակ, նկատի ունենալով կոնկրետ եւ իրավաբանորեն փաստված հանգամանքները, ելնելով տվյալ գործի քննությանը հասարակության առավել լայն մասնակցություն կամ դատաքննության նկատմամբ հասարակական առավել անմիջական հսկողություն ապահովելու, ինչպես նաեւ առավել արագ քննություն կազմակերպելու անհրաժեշտությունից, դատարանն իրավասու է պատճառաբանված որոշմամբ գործի քննությունը կազմակերպել բանավոր ընթացակարգով: Բացի դրանից, ելնելով կոնկրետ հանգամանքներից, ինչպես նաեւ վերոհիշյալ այլ նկատառումներից, վարչական դատարանն իրավասու է իր հայեցողությամբ կամ կողմերի պատճառաբանված միջնորդությամբ միեւնույն գործի քննության շրջանակներում համատեղել ընթացակարգային՝ բանավոր եւ գրավոր ձեւերը (օրինակ՝ ՀՀ վարչ. դատ. օր.-ի 108-րդ, 111-րդ եւ 138-րդ հոդվածներում նախատեսված հիմքերով)՝ նպատակ ունենալով առավել արդյունավետ ու արագ ապահովել գործի հանգամանքների պարզումը:

Պետք է նկատի ունենալ նաեւ, որ նույնիսկ բանավոր քննության դեպքերում էլ գործի հանգամանքների պարզումը դատարանում ընթանում է ոչ միայն «բանավոր լսումների» կազմակերպման, այլեւ **գրավոր ապացույցների ուսումնասիրման միջոցով**: Հետեւաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող իրավակարգավորման շրջանակներում **բանավոր քննության սկզբունքը բացարձակ չէ**:

9. Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ սույն գործով առաջադրված հարցերը, ըստ դիմող կողմի արտահայտած դիրքորոշումների ընդհանուր բովանդակության, պահանջում են բացահայտել նաև գրավոր դատաքննության եւ բանավորության սկզբունքների, ինչպես նաև հասարակության համար արդարադատության մատչելիության սկզբունքի կիրառելիության փոխառնչությունների իրավական բովանդակությունը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավարության հրապարակայնությունն առաջին հերթին նշանակում է հասարակական վերահսկողության իրականացման հնարավորություն դատավարության եւ դատարանի ընդունած ակտերի նկատմամբ:

Սահմանադրական դատարանը միաժամանակ հարկ է համարում նշել, որ դատաքննության գրավոր ընթացակարգի եւ դատաքննության հրապարակայնության սկզբունքների «կարծեցյալ բախումը» հատկապես ակներև է այն դեպքում, երբ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում նախատեսված հրապարակային քննության երաշխիքի համատեքստում բանավորության սկզբունքը բացառող ցանկացած իրավադրույթ միայն առերեսույթ կարող է վիճահարույց թվալ: Սակայն դատաքննության գրավոր ընթացակարգի կիրառումն արդարադատության հիմնարար սկզբունքների իրականացման երաշխիքների խախտում չի կարող դիտվել՝ կողմերի համաձայնությամբ այն իրականացվելու, ինչպես նաև օրենքով նախատեսված այն դեպքերում, երբ անհրաժեշտ չէ լսել փորձագետին, հարցաքննել վկաներին, կատարել զննում, տալ դատական հանձնարարություններ (ՀՀ վարչ. դատ. օր.-ի 108-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ, 117.10-րդ հոդվածի 5-րդ մաս): Մյուս կողմից՝ գրավոր քննությունը բացառվում է, երբ բանավոր քննություն անցկացնելու վերաբերյալ առկա են օրենքով հստակ նախատեսված պարտադիր հանգամանքներ: Սահմանադրական դատարանը նաև գտնում է, որ գրավոր ընթացակարգով դատաքննությունը, ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով, չի կարող մեկնաբանվել որպես ոչ հրապարակային սկզբունքով արդարադատության իրականացում, առավել եւս՝ մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 2-րդ մասի նորմատիվ պայմանների անտեսման միջոց, եթե այն իրականացվում է հստակ սահմանված ընթացակարգով՝ երաշխավորելով դատաքննության մասնակիցների իրավունքների արդյունավետ իրացումը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում ամրագրված սկզբունքի համաձայն եւս հրապարակային դատաքննության (անկախ իրականացման ընթացակարգային ձեւից) առաջնահերթ բաղադրիչներն են **գործի հանգամանքների քննության (կամ «բանավոր լսումների») անցկացումը եւ որոշման հրապարակումը**: Այդ դատարանի դիրքորոշման համաձայն. «ԵՆՄ անդամ բոլոր պետությունները ճանաչում են հրապարակայնության սկզբունքը, սակայն նրանց օրենսդրական համակարգերը եւ դատական պրակտիկան ունեն որոշակի տարբերություններ ինչպես դրա ծավալի, այնպես էլ **իրականացման եղանակի** առումով՝ կապված լսումների անցկացման եւ դատական որոշումների հրապարակման հետ: Հարցի ձեւա-

կան կողմը, այնուամենայնիվ, 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հրապարակայնության պահանջների հիմքում ընկած նպատակի համեմատությամբ ունի **երկրորդական նշանակություն**» (Sutter v. Switzerland Judgment of 22 February 1984, p. 27, Adolf v. Austria Judgment of 26 March 1982, para. 30, Pretto and others v. Italy Judgment of 8 December 1983, para. 23, and Axen v. Germany Judgment of 8 December 1983, para. 25):

Այստեղից հետեւում է, որ իրավունքի հարց քննելիս վարչական դատարանը պարտավոր լինելով պահպանել ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով երաշխավորված արդարադատության հրապարակայնության սկզբունքը, ելնելով գործի կոնկրետ հանգամանքներից, իրավասու է, իսկ օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ պարտավոր է, մի դեպքում կիրառել (հասարակության համար գործի քննության հանգամանքներն առավել մատչելի դարձնելու նպատակով) կամ չկիրառել այդ սկզբունքի առավել լայն կիրառման միջոցներ, մյուս դեպքում՝ կազմակերպել առավել արագ ու արդյունավետ դատաքննություն:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերոթվարկյալ բոլոր դեպքերում էլ օրենսդիրը վարչական դատարանին պարտավորեցրել է՝ անկախ քննվող գործի առանձնահատկությունից եւ գրավոր քննությամբ գործը լուծելու հիմք հանդիսացող այլ հանգամանքներից, **անվերապահ իրականացնել գործերի արդար, արդյունավետ եւ հրապարակային քննություն**, հետեւաբար՝ այդպիսի իրավակարգավորումը հետապնդում է սահմանադրաիրավական նպատակ:

10. Սույն գործի շրջանակներում անհրաժեշտ համարելով մասն պարզել վիճարկվող իրավակարգավորմամբ դատավարության մասնակիցների իրավունքների երաշխավորման խնդիրը, հարկ է արձանագրել, որ ինչպես հետեւում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ գլխում ներառված նորմերի եւ դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված այլ նորմերի վերլուծությունից, գրավոր ընթացակարգով գործերի քննության պարագայում էլ **դատավարության մասնակիցները (այդ թվում՝ կողմերը) կաշկանդված չեն իրացնելու իրենց դատավարական իրավունքները եւ կրում են համապատասխան պարտականություններ** (ՀՀ վարչ. դատ. օր.-ի 15-րդ, 16-րդ, 19-րդ, 25-րդ, հոդվածներ, 26-րդ հոդվածի 4-րդ մաս, 36-րդ հոդվածի 4-րդ մաս, 39-րդ, 42-րդ, 43-րդ, 44-րդ, 48-րդ, 83-րդ, 84-րդ, 85-րդ հոդվածներ), որպիսիք կարող են իրացվել՝ **հաշվի առնելով գրավոր քննության առանձնահատկությունները**, մասնավորապես այն դեպքերում, երբ խնդիրն առնչվում է դատավարական գործողությունների կատարմանը (սպացույցների հետազոտմանը, ինչպես նախատեսված է ՀՀ վարչ. դատ. օր.-ի 7-րդ գլխում նախատեսված կանոններով)) ու դրան առնչվող մասնակիցների իրավունքներին ու պարտականություններին: Հետեւաբար, **սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ առանձնահատկությունների կիրառմամբ էլ մասնակիցների իրավունքների եւ պարտականությունների հիմնական նորմատիվ էությունը չի փոխվում**: Այլ կերպ, ինչպես հետեւում է վերոհիշյալ վերլուծությունից, գրավոր ընթացակարգի դեպքում էլ օրենսդիրը երաշխավորել է **մրցակցային դատաքննության կանոնների պահպանում** (այդ թվում՝ օրենսգրքի 2-րդ գլխի նորմատիվ պահանջների): Իսկ այդպիսի

ընթացակարգով կայացված դատական ակտերը, ինչպես հետեւում է վերոհիշյալ նորմերի բովանդակությունից, անվերապահ ենթակա են ինչպես **հրապարակման** (ի գիտություն՝ կողմերի), այնպես էլ **պաշտոնական հրապարակման** (ի գիտություն՝ հանրությանը) (ՀՀ վարչ. դատ. օր.-ի 142-րդ հոդված): Այսինքն՝ այդ ակտերի ամբողջական տեքստերն սկզբունքորեն մատչելի են դարձվում նույն կերպ, ինչպես կներկայացվեին բանավոր լսումների արդյունքում: Միաժամանակ, գրավոր ընթացակարգով դատաքննության արդյունքում ակտերի կայացմանը եւ հրապարակմանը հաջորդում են օրենքով նախատեսված անհրաժեշտ իրավական հետեւանքներ (ՀՀ վարչ. դատ. օր.-ի 140-րդ հոդված), որոնք հասանելի եւ գնահատելի են ինչպես դատավարության կողմերի, այնպես էլ հանրության համար, եւ այդ ակտերը **վերանայման ենթակա են** օրենսգրքի 141-րդ հոդվածում, 19.1-րդ, 20-րդ, 22-րդ գլուխներում եւ 4-րդ բաժնում նախատեսված կանոններով սահմանված կարգով:

11. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաեւ գրավոր սկզբունքով քննվող գործերով դատավարության մասնակիցների իրավունքների երաշխավորման խնդիրը դիտարկել այդ իրավունքների իրականացման առանձնահատկությունների եւ դատական հայեցողության շրջանակներում դրանց դրսեւորման հնարավորությունների համատեքստում, նկատի ունենալով այն հանգամանքը, որ, ի տարբերություն բանավոր ընթացակարգի (օրենսգրքի 16-րդ գլուխ), ինչպես նաեւ ՀՀ սահմանադրական արդարադատական պրակտիկայի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում որոշակիացված եւ համակարգված չեն գրավոր քննության կանոնները: Դրանց բացակայությունը, թեւ սահմանադրականության խնդիր անմիջականորեն չի առաջացնում, սակայն անձանց իրավունքների, ինչպես նաեւ արդար եւ հրապարակային դատաքննության երաշխավորմանն արգելք կարող է հանդիսանալ: Այդպիսի քննության շրջանակներում անձանց՝ օրենսգրքով երաշխավորված դատավարական իրավունքների իրականացման իրավական հնարավոր (հստակ կանխատեսելի) միջոցներն անորոշ են եւ կարող են ըստ էության լուծվել դատարանի բացարձակ հայեցողության շրջանակներում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարությունում առկա է իրավակարգավորման բաց՝ կապված գրավոր ընթացակարգով դատավարության հստակ կարգի բացակայության հետ: Այդ բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության հարցն է, որը կարող է իրացվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում գրավոր ընթացակարգի կանոններ նախատեսելով, այդ թվում՝

- գրավոր քննության նախապատրաստման եւ անցկացման կարգը,
- դատավարության մասնակիցների՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով վերապահված իրավունքների իրացման կարգը /կապված **դատաքննության ողջ ընթացքում** գրավոր ապացույցների, լրացուցիչ նյութերի, բացատրությունների, փաստարկների (հակափաստարկների), միջնորդությունների եւ դրանց ներկայացման ժամկետների ու դատավարական այլ գործողությունների կատարման հետ/,

- գրավոր քննության շրջանակներում դատական միջանկյալ ակտերի կայացման կարգը,
- գրավոր դատաքննության ընթացքում դատարանի անհրաժեշտ գործողությունների շրջանակը /կապված՝ մի կողմից, մասնակիցների, մյուս կողմից՝ մասնակիցների եւ դատարանի միջեւ փաստաթղթաշրջանառության կազմակերպման ու կարգի (ժամկետների) հետ/,
- գրավոր քննության ընթացքի արձանագրման եւ դրան ծանոթանալու կարգը,
- գրավոր ընթացակարգով քննության արդյունքում գործով ըստ էության որոշման կայացման եւ հրապարակման կարգը:

Հետեւաբար, ելնելով վիճարկվող նորմերի եւ դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված այլ նորմերի սահմանադրաիրավական բովանդակությունից, համադրելով ՀՀ վարչական արդարադատության բնագավառում գրավոր քննության ընթացակարգի ընդհանուր իրավակարգավորումն արդար եւ հրապարակային դատաքննության իրավունքի ու դրա երաշխավորման ընթացակարգային ձեւերի կիրառման միջազգային իրավական պրակտիկայում ամրագրված սկզբունքներին ու մոտեցումներին, ինչպես նաեւ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի նորմատիվ ընդհանուր բովանդակության հետ, միաժամանակ անհրաժեշտ համարելով օրենսդիր մարմնի կողմից ՀՀ վարչական դատավարությունում առկա բացի լուծումը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածն ինքնին սահմանադրականության խնդիր չի կարող հարուցել:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**11 ապրիլի 2012 թվականի
ՍԳՈ-1020**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՀՀ ՍԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔԻ 79-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՍԱՍԻ 4-ՐԳ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

17 ապրիլի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թովուկյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչ Ա. Վարդեանյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Մխիթարյանի եւ առաջատար մասնագետ Հ. Սարգարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 68-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 31.01.2012թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Հայաստա-

նի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2007 թվականի նոյեմբերի 28-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի դեկտեմբերի 10-ին եւ ուժի մեջ է մտել 2008 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի՝ «Հայցադիմումի ընդունումը մերժելը» վերտառությամբ 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը սահմանում է. «Վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե՝ ... հայցադիմում է ներկայացրել դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը»:

2. Դիմողը գտնում է, որ վիճարկվող իրավանորմով սահմանված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու իրավական հիմքը՝ իրավակիրառական պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, չի համապատասխանում ՀՀ Սահմանադրությանն այն պատճառաբանությամբ, որ վիճարկվող իրավանորմը՝ օրենսգրքի 3-րդ հոդվածի հետ համակարգային կապի մեջ, ենթադրում է դիմողի իրավունքները շոշափող վարչական ակտերը եւ գործողությունները վիճարկելու իրավունք, այսինքն՝ անձը կարող է համարվել դիմելու իրավունք ակնհայտորեն չունեցող, եթե իր կողմից վիճարկվող ակտը կամ գործողությունը չի շոշափում իր իրավունքներն ու օրինական շահերը եւ չի վերաբերում իրեն:

Դիմողը գտնում է նաեւ, որ օրենսգրքի վիճարկվող դրույթը չի վկայում այն մասին, թե վարչական դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում կարող է ակնհայտության չափանիշով գնահատական տալ իրավունքի սուբյեկտին վերաբերող ակտով **վերջինիս նյութական իրավունքների խախտման հարցին**, քանի որ խախտման առկայության կամ բացակայության հարցը պետք է որոշվի դատական քննության՝ գործի ըստ էության լուծման ընթացքում: Հակառակ դեպքում, ըստ դիմողի, կխախտվեն հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում գործի հրապարակային քննության, դատական պաշտպանության սահմանադրական իրավունքները, օրենքի եւ դատարանի առջեւ բոլորի հավասարության սկզբունքը:

Դիմողը պնդում է, որ օրենսգրքի վիճարկվող դրույթի կիրառման դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է դատարանների կողմից դրա՝ հակասական մեկնաբանման եւ կիրառության մասին: Այս առնչությամբ դիմողը հայտնում է, որ գրությամբ դիմել է ՀՀ դատարանների նախագահների խորհուրդ՝ առաջարկելով խորհրդատվական բնույթի պաշտոնական պարզաբանում տալ խնդրո առարկա դրույթի կիրառման դատական պրակտիկայի վերաբերյալ, ինչի առնչությամբ ՀՀ դատարանների նախագահների խորհրդի կողմից 17.09.2011թ. ընդունվել է թիվ 127 որոշումը:

Դիմողը գտնում է նաեւ, որ օրենսգրքի վիճարկվող դրույթը՝ իրավակիրա-

ռական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ, անհամաչափ սահմանափակում է անձի դատական պաշտպանության իրավունքը, արդար դատաքննության իրավունքը, օրենքի եւ դատարանի առջեւ բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքը՝ դրանով իսկ հակասելով ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածին, 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին եւ 43-րդ հոդվածին:

Անդրադառնալով պատասխանող կողմի գրավոր բացատրություններին՝ դիմողը շեշտում է, որ «...վարչական դատարանում անձի դատական պաշտպանության իրավունքի իրականացումը, հանդիսանալով իրավունքի պաշտպանության հիմնական միջոց, չի կարող համադրվել իրավունքի պաշտպանության սուբսիդիար միջոցների հետ, որոնց պարագայում նման սահմանափակման ու չափանիշի սահմանումը լիովին իրավաչափ է»:

3. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի եւ 43-րդ հոդվածի դրույթներին:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար պատասխանող կողմը հղում է կատարում ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածին, 19-րդ հոդվածի 1-ին մասին, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 8-րդ հոդվածին, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածին, «շահագրգիռ անձ» հասկացության վերաբերյալ սահմանադրական դատարանի 04.04.2008թ. ՄԳ-Ո-747 որոշման 7-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշմանը: Վարչական դատարան դիմելու իրավունքի գնահատման համար շեշտադրելով խախտված իրավունքը **տվյալ անձին պատկանելու հանգամանքը**՝ պատասխանող կողմը գտնում է, որ. «Եթե հայցադիմումում առկա չեն Օրենսգրքի 3-րդ հոդվածով նախատեսված հիմքերը, ապա հայցադիմում ներկայացրած անձը չի կարող համարվել «շահագրգիռ անձ» եւ տրամաբանորեն դասվում է հայցադիմում ներկայացնելու իրավունքը ակնհայտորեն չունեցող անձանց շարքին»:

Միաժամանակ, հղում կատարելով օրենսգրքի 72 եւ 76-րդ հոդվածներին, 77-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերին՝ պատասխանող կողմը գտնում է նաեւ, որ. «...եթե հայցադիմումի եւ դրան կից ներկայացվող փաստաթղթերի ուսումնասիրության ընթացքում դատավորը հանգում է այն եզրակացության, որ հայցադիմումը ներկայացրել է ոչ «շահագրգիռ անձը», այսինքն այն անձը, որի իրավունքները եւ ազատությունները չեն խախտվել կամ անմիջականորեն չեն կարող խախտվել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ, ապա նա պարտավոր է ընդունել՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշում»:

4. Սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը հարկ է համարում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթը դիտարկել դատարանի մատչելիության եւ արդար դատաքննության սահմանադրական իրավունքների երաշխավորման, ինչպես նաեւ օրենսգրքի այլ դրույթների հետ այդ դրույթի համակարգային ամբողջականության ապահովման տեսանկյունից:

Օրենսգրքի՝ «Վարչական դատարան դիմելու իրավունքը» վերտառությամբ 3-րդ հոդվածի վերլուծությունը, հիմք ընդունելով նաեւ օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի 07.09.2010թ. ՄԴ-Ո-906 որոշման 7-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները, վկայում է, որ օրենսդիրը, կոնկրետ դեպքում՝ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց առնչությամբ, սահմանել է վարչական դատարան դիմելու իրավունքի իրականացման հստակ իրավական նախապայմաններ, ըստ որի՝

ա/ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ դատարան դիմելու իրավունքը կարող է իրականացնել միայն այն դեպքում, երբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել **նրա՝** ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով եւ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները եւ ազատությունները, այդ թվում, եթե՝ խոչընդոտներ են հարուցվել կամ չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների եւ ազատությունների իրականացման համար,

բ/ շահագրգիռ (կանոնադրական համապատասխան իրավասությամբ օժտված) հասարակական կազմակերպություններն իրավասու են դիմել վարչական դատարան՝ տվյալ ոլորտում անձանց խախտված իրավունքների համար դատարան դիմելու իրավունքի իրացման դեպքերը եւ կարգն օրենսգրքով սահմանված լինելու դեպքում՝ հաշվի առնելով *actio popularis* բողոքների ինստիտուտի առնչությամբ եվրոպական ներկա զարգացումների միտումները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը, նախատեսելով վարչական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների ցանկը, նրանց՝ դատարան դիմելու իրավունքի իրականացումը յուրաքանչյուր դեպքում պայմանավորել է որոշակի իրավական նախադրյալների, այն է՝ «իրավական շահի» առկայությամբ: Ընդ որում, յուրաքանչյուր դատավարական սուբյեկտի պարագայում այն կրում է իրեն ներհատուկ բնույթ: Նրանց «իրավական շահը», կախված գործի փաստական հանգամանքներից, ինչպես նաեւ կոնկրետ սուբյեկտի իրավական կարգավիճակից, կրում է անհատականացված, կոնկրետ հասցեավորված բնույթ, եւ դրա առկայությունը յուրաքանչյուր դեպքում ենթակա է պարտադիր բացահայտման վարչական դատավարության՝ հայցադիմումի ընդունելիության փուլում:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի իրավակարգավորման առարկա-

յի իմաստով դատարան դիմելու իրավունքի առկայության համար բավարար չէ միայն սուբյեկտների անհրաժեշտ կազմի վերաբերյալ պահանջի բավարարումը: Այն, ի թիվս այլ պայմանների, պետք է դիտարկվի նաև համապատասխան սուբյեկտի մոտ դատարան դիմելու նկատմամբ իրավական շահի առկայության համատեքստում՝ ելակետ ընդունելով օրենսդրորեն սահմանված իրավական նախադրյալները:

5. Օրենսգրքի՝ «Գործ հարուցելու հիմքը եւ հայցի տեսակները» վերտառությամբ 11-րդ գլխի նորմերի վերլուծությունը վկայում է, որ վարչական դատարան ներկայացվող հայցադիմումների համար նախատեսված են որոշակի իրավական պահանջներ եւ պայմաններ, որոնք վերաբերում են ինչպես դրա ներկայացման կարգին, այնպես էլ ձեւին եւ բովանդակությանը: Ընդ որում՝ նմանատիպ պայմանների պահպանումը կրում է պարտադիր բնույթ: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 17.03.2009թ. ՍԳ-ԱՌ-21 աշխատակարգային որոշման 8-րդ կետում, ելնելով իր՝ 09.04.2007թ. ՍԳ-Ռ-690 եւ 11.04.2007թ. ՍԳ-Ռ-691 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումներից, վերահաստատել է, որ դատարան (այդ թվում՝ սահմանադրական դատարան) դիմելու հետ կապված իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորման նպատակը ոչ միայն դիմումի բովանդակության վերաբերյալ պարտադիր պայմաններ սահմանելն է, այլև այն քննության ընդունելու (կամ չընդունելու) պատճառաբանման նորմատիվ պահանջի սահմանումը: Ի թիվս վերոնշյալի՝ դատարանը գտել է նաև, որ անձի իրավունքների դատական պաշտպանության արդյունավետ իրականացումը պայմանավորված է նաև օրենքներով նախատեսված ընթացակարգային պահանջների հստակ եւ միակերպ կատարմամբ, որպիսիք իրավական պայմաններ կստեղծեն, մի կողմից, անձի դատարան հասցեագրված դիմումը, դրանում բարձրացված հարցերն օբյեկտիվ գնահատելու, նաև այն հիմնավոր ճանաչելու, մյուս կողմից՝ դատարանի՝ այդ դիմումի քննության (այդ թվում՝ նախնական) արդյունքում պատճառաբանված որոշում կայացնելու համար:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքով նախատեսված է կոնկրետ իրավական կառուցակարգ, որի շրջանակներում դատարանն իրավասու է գնահատել հայցադիմումի ընդունելիությանն առնչվող պահանջների եւ պայմանների պահպանվածությունը: Այսպես՝ օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորը **վերադարձնում է** հայցադիմումը, եթե՝

- չեն պահպանվել օրենսգրքի 72-րդ հոդվածով սահմանված՝ հայցադիմումին առաջադրվող պահանջները.
- հայցադիմումը ստորագրված չէ, կամ այն ստորագրել է ստորագրելու լիազորություն չունեցող անձը կամ այնպիսի անձ, որի պաշտոնական դրությունը նշված չէ.
- չեն ներկայացվել սահմանված կարգով եւ չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթեր, իսկ այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկե-

- տելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն՝ բացակայում է դրա վերաբերյալ միջնորդությունը, կամ նման միջնորդությունը մերժվել է.
- մեկ հայցադիմումում միացված են մեկ կամ մի քանի պատասխանողին ուղղված՝ միմյանց հետ չկապված պահանջներ.
 - մինչև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը հայցվորը դիմել է այն վերադարձնելու մասին:

Նման միջանկյալ դատական ակտ կայացնելով՝ վարչական դատարանը պատշաճ հիմնավորմամբ պետք է մատնանշի այն բոլոր առերեսույթ թերությունները, որոնք թույլ են տրվել հայցվորի կողմից ներկայացված հայցադիմումում: Բացի դրանից, օրենսգրքի 78-րդ հոդվածի 4-րդ մասի իրավականոնակարգմանը համապատասխան՝ հայցադիմումում թույլ տրված խախտումները վերացնելու համար նախատեսված է հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումն ստանալու օրվանից հաշվարկվող **15-օրյա ժամկետ**, որի սահմաններում շտկված է վարչական դատարան ներկայացված հայցադիմումը համարվում է ընդունված վերջինիս սկզբնական ներկայացման օրը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը վարչական դատարանի վերոնշյալ լիազորությունը սահմանելով, **ըստ էության, չի բացառում վերջինիս կողմից մատնանշված առերեսույթ թերությունների վերացման դեպքում նույն հայցադիմումը կրկին անգամ ներկայացնելու իրավական հնարավորությունը:**

6. Սկզբունքորեն այլ իրավական խնդիրների լուծմանն է նպատակաուղղված վարչական դատարանի՝ օրենսգրքի 79-րդ հոդվածով նախատեսված՝ **հայցադիմումի ընդունումը մերժելու** լիազորությունը, որի իրականացումը հանգեցնում է տրամագծորեն այլ իրավական հետեւանքների: Հիշյալ իրավական նորմով օրենսդիրը սահմանել է այն իրավական հիմքերի սպառիչ ցանկը, որոնց առկայության ուժով դատարանը պարտավոր է մերժել ներկայացված հայցադիմումի ընդունումը, այն է՝

- հայցը ենթակա չէ վարչական դատարանում քննության.
- նույն անձանց միջև, նույն առարկայի մասին եւ նույն հիմքերով առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ.
- այլ դատարանի վարույթում առկա է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին եւ միեւնույն հիմքերով վեճի վերաբերյալ գործ.
- հայցադիմում է ներկայացրել դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը.
- օրենսգրքի 78-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում հայցվորը չի վերացրել հայցադիմումի այնպիսի թերությունները, որոնց չվերացնելն արգելք է գործի քննության համար.
- մինչև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը հայցվորը դիմել է այն հետ վերցնելու մասին, բացառությամբ օրենսգրքի 24-րդ գլխով սահմանված գործերի:

Վերլուծելով հիշյալ իրավական հիմքերը եւ համադրելով դրանք օրենս-

գրքի 78-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված (հայցադիմումը վերադարձնելու) իրավական հիմքերի հետ՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրենց իրավական բնույթով դրանք լուծում են իրավասուբյեկտության խնդիր, եւ հատակեցնում են այն պայմանները, որոնց առկայությունն օրենքի ուժով անհնարին է դարձնում տվյալ հայցադիմումի հիման վրա վարչական դատավարության իրականացումը:

Կարելու է նաեւ այն հանգամանքը, որ նշված հիմքերով հայցադիմումի մերժման դեպքում առկա է նաեւ բողոքարկման իրավունքը, եւ նման որոշումը կարող է բողոքարկվել օրենսգրքով սահմանված ընթացակարգով:

7. Դիտարկելով վերոհիշյալ իրավական կարգավորման կառուցակարգը՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում նկատել, որ օրենսդիրը վարչական դատարան ներկայացվող հայցադիմումի ընդունելիության հարցի լուծման առնչությամբ սահմանել է դատարանի լիազորությունների սպառնչ ցանկը, որոնց իրականացմամբ՝ դատարանը վարչական դատավարության հիշյալ փուլում պետք է իրավական գնահատական տա, թե արդյո՞ք հայցվորն իրավասու է դիմել դատարան, արդյո՞ք առկա է նրա մոտ դատարան դիմելու իրավական պահանջ, արդյո՞ք հայցվորը կարող է հանդիսանալ խախտման օբյեկտ հանդիսացող իրավունքի կրող: Սահմանադրական դատարանն ինքնանպատակ չի համարում այն հանգամանքը, որ օրենսգրքի վիճարկվող դրույթում օգտագործված է «ակնհայտորեն» բառը: Վերջինս վկայում է այն մասին, որ օրենսդիրը հայցադիմումի ընդունելիության փուլում **բացառում է վարչական դատարան դիմելու իրավունքի առկայությունն ստուգելու համար նյութական իրավունքի խախտման փաստի առկայության կամ բացակայության հարցն առանց համապատասխան դատավարական ընթացակարգերի քննության առարկա դարձնելը**: Օրենսգրքի վիճարկվող դրույթում «ակնհայտորեն» բառը ենթադրում է, որ առանց նյութական իրավունքի խախտման փաստի բացահայտման՝ կասկածից վեր է տվյալ իրավունքը հայցվորին չպատկանելը, հայցադիմումում խախտված տվյալ իրավունքը հայցվորին պատկանելու վերաբերյալ հիմնավորվածության բացակայությունը կամ այդպիսի ենթադրյալ հիմնավորման ակնհայտ անհիմն լինելը, վիճարկվող վարչական ակտի, գործողության կամ անգործության եւ հայցվորի իրավունքների եւ ազատությունների ենթադրյալ խախտման փաստի միջեւ առկա հնարավոր պատճառահետեւանքային կապի բացակայությունը, այդպիսի կապի վերաբերյալ հիմնավորվածության բացակայությունը կամ այդպիսի ենթադրյալ հիմնավորման ակնհայտ անհիմն լինելը: Օրենսգրքի վիճարկվող դրույթում «ակնհայտորեն» բառի ամրագրմամբ օրենսդիրը նպատակ է հետապնդել հայցադիմումի ընդունելիության փուլում ստուգելու **ոչ թե նյութական իրավունքի խախտման առկայությունը, այլ ենթադրյալ խախտված իրավունքը տվյալ անձին պատկանելու հանգամանքը**, այսինքն՝ հայցվորի՝ «շահագրգիռ անձ» հանդիսանալու հանգամանքը:

Այդ մասին է վկայում նաեւ վարչական դատարանի մի շարք միջանկյալ գործերով կայացրած դատական ակտերի ուսումնասիրությունը:

Մասնավորապես, ՀՀ վարչական դատարանն իր՝ 22.02.2010թ. ՎԳ/0430/05/10 վարչական գործով կայացված՝ «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշմամբ արտահայտել է հետեյալ իրավական դիրքորոշումը. «Տվյալ դեպքում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Արաբկիրի հարկային տեսչության՝ 16.12.2009թ. թիվ 1006719 ստուգման ակտը վերաբերում է «ԱԲԳ-ԴԳՎ» ՍՊ ընկերությանը, նշված ակտով լրացուցիչ հարկային պարտավորություններ են առաջադրվել նշված ընկերությանը, մինչդեռ ընկերության խախտված իրավունքների պաշտպանության նպատակով հայցադիմումը դատարան է ներկայացվել ոչ թե «ԱԲԳ-ԴԳՎ» ՍՊ ընկերության, ի դեմս տնօրենի, կողմից, այլ՝ հայցադիմում ներկայացնելու իրավունք չունեցող ընկերության մասնակից հանդիսացող Զնարիկ Զինաշյանը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցադիմում է ներկայացրել դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը:

Փաստորեն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի Արաբկիրի հարկային տեսչության 16.12.2009թ. թիվ 1006719 ստուգման ակտը վերացնելու պահանջի մասին հայցադիմումը դատարան է ներկայացրել դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը, ուստի հայցադիմումի ընդունումը ենթակա է մերժման»:

Նույն դատարանի մեկ այլ՝ 28.10.2010թ. թիվ ՎԳ/3844/05/10 վարչական գործով կայացված՝ «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշմամբ արտահայտվել է հետեյալ իրավական դիրքորոշումը. «... Տվյալ դեպքում Երեւան քաղաքի Չաքիյան 8 շենքի թիվ 13 բնակարանը համաձայն ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված թիվ 2674386 վկայականի հանդիսանում է Մառլենա Սերգեյի Կարապետյանի սեփականությունը, իսկ Սերգեյ Գրիգորյանին 26.01.1999թ. 011-ի կողմից տրված անձնագրի համաձայն վերջինս հաշվառված է Երեւան քաղաքի Մաշտոցի պողոտայի 50 շենքի 15 բնակարանում եւ հայցադիմումին կից փաստաթղթերից չի հաստատվում հայցվորի տիրապետման իրավունքը Երեւան քաղաքի Չաքիյան 8 շենքի թիվ 13 բնակարանի նկատմամբ: Փաստորեն Մառլենա Սերգեյի Կարապետյանի փոխարեն սեփականության եւ տիրապետման իրավունքի խախտումները վերացնելու վերաբերյալ պահանջ ներկայացրել է Սերգեյ Գրիգորյանը, որի իրավունքը վերջինս ակնհայտորեն չունի, քանի որ նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով եւ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքների եւ ազատությունների խախտման մասին խոսք չի կարող լինել, ուստի հայցադիմումի ընդունումը ենթակա է մերժման»:

Միանգամայն տեղին է ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված՝ ՀՀ դատական դեպարտամենտի դիրքորոշումներում կատարված այն շեշտադրումը, համաձայն որի՝ «...սույն նորմում տեղ գտած ձեռակերպումը կարող է վերաբերել միայն չափազանց պարզորոշ, միանշանակ եւ հստակ հայցադիմում

ներկայացնելու իրավունք չունենալուն, երբ դատարանն աներկբայորեն եւ հիմնավոր կերպով գտնում է, որ տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձն աշխարհի հայցադիմում ներկայացնելու իրավունք չուներ, եւ, իհարկե, չի վերաբերում այն դեպքերին, երբ դատարանը գործի ամբողջական եւ մանրակրկիտ ուսումնասիրության, մասնավորապես, նյութական իրավունքի խախտման առկայության հարցի գնահատման արդյունքում է հանգում նմանատիպ դիրքորոշման»:

Ինչ վերաբերում է «շահագրգիռ անձ» հասկացությանը, ապա դրա սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտված է սահմանադրական դատարանի 04.04.2008թ. ՄԳՈ-747 որոշման 7-րդ կետում, որը կիրառելի է նաեւ սույն գործով:

8. ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 13.04.2010թ. ՄԳՈ-873 որոշմամբ անդրադարձել է վարչական դատավարության համակարգում վճռաբեկ բողոքների ընդունելիության հարցին: Հաշվի առնելով վերոհիշյալ որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է նաեւ, որ վարչական դատավարությունում հայցադիմումի ընդունելության փուլում **նյութական իրավունքի խախտման փաստի առկայության պարզումն** իր բնույթով չի վերաբերում դիմումի ընդունելիության պայմաններին, նման փաստի հաստատումը կամ հերքումը կարող է տեղի ունենալ դատաքննության փուլում՝ արդարության բոլոր պահանջների ու կողմերի իրավունքների պահպանմամբ, հակառակ դեպքում արդարացի դատաքննության իրավունքը կիմաստագրվի:

Հետեւաբար, վարչական դատավարությունում հայցադիմումի ընդունելիության հարցի քննության փուլում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը չի կարող ընկալվել ու մեկնաբանվել որպես **նյութական իրավունքի խախտման առկայությունն ստուգելու՝** վարչական դատարանի պարտավորվածություն՝ դրանով **իսկ ընդունելիության հարցի լուծումը կախման մեջ դնելով գործի դատաքննության փուլում ըստ էության լուծման ենթակա հարցից,** սահմանափակելով վարչական դատարանի մատչելիությունը՝ դատական պաշտպանության սահմանադրաիրավական միջոցը դարձնելով անարդյունավետ: Այս փուլում, ինչպես նշվեց, դատարանի խնդիրն է ստուգելու **ոչ թե նյութական իրավունքի խախտման առկայությունը, այլ ենթադրյալ խախտված իրավունքը՝ տվյալ անձին ակնհայտորեն պատկանելու կամ չպատկանելու հանգամանքը:**

Նյութական իրավունքի խախտման առկայության կամ բացակայության փաստին դատարանը պարտավոր է անդրադառնալ դատաքննության փուլում: Հակառակ պարագայում տեղ կգտնի արդարադատության մերժման իրողությունը, ինչը կհակասի ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածների, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սահմանադրաիրավական այն բովանդակությամբ, համաձայն որի՝ վարչական դատավարությունում հայցադիմումի ընդունելիության հարցի քննության փուլում այն չի կարող ընկալվել ու մեկնաբանվել որպես նյութական իրավունքի խախտման առկայության կամ բացակայության փաստը հաստատելու՝ օրենքով նախատեսված պահանջ կամ հայեցողություն:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**17 ապրիլի 2012 թվականի
ՍԳՈ- 1022**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՊԱՏԳԱՍԱՎՈՐՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ 11-ՐԴ
ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, 31-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ
ԵՎ 33-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ՝**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՍՏՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

5 մայիսի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուդյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող կողմի ներկայացուցիչ, փաստաբան Վ. Գրիգորյանի,

պատասխանող կողմի՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Գ. Հարությունյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 68-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի, 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի եւ 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը 28.04.2012թ. ՀՀ Ազգային ժողովի նախագահի կողմից օրենքով սահմանված կարգով ՀՀ սահմանադրական դատարան ներ-

կայացված՝ ՀՀ Ազգային ժողովի 29 պատգամավորների (ավելի քան մեկ հինգերորդի) դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի բացատրությունները, հետագոտելով ՀՀ ընտրական օրենսգիրքը, օրենսդրության այլ ակտեր, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. ՀՀ ընտրական օրենսգիրքը (այսուհետ՝ օրենսգիրք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2011 թվականի մայիսի 26-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2011 թվականի հունիսի 14-ին եւ ուժի մեջ է մտել 2011 թվականի հունիսի 26-ից:

Օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «1. Հայաստանի Հանրապետության ընտրողների ցուցակը, բացառությամբ զինվորական մասերում կազմվող, ինչպես նաեւ ընտրողների ստորագրած ցուցակների, ազատ է ծանոթության համար:

Ընտրողների ստորագրած ցուցակները հրապարակման ենթակա չեն, դրանցից լուսապատճեններ չեն հանվում, դրանք չեն լուսանկարվում եւ տեսանկարահանվում»:

Օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է. «1. Դիտորդը, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչն իրավունք ունեն՝ ... 3) անարգել ծանոթանալու քվեաթերթիկների նմուշներին, ընտրական հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որեւէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, անարգել ծանոթանալու տվյալ ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին, ընտրական հանձնաժողովների որոշումներին, նիստերի արձանագրություններին, դատարանի համապատասխան վճիռներին, լիազոր մարմնի՝ ընտրողին տրամադրած համապատասխան տեղեկանքին, ստանալու դրանց պատճենները կամ դրանցից քաղվածքներ (բացառությամբ ընտրողների ստորագրած ցուցակների), քվեարկության արդյունքների վերահաշվարկի ժամանակ ինքնուրույն կատարելու քաղվածքներ ընտրողների ստորագրած ցուցակներից»:

Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը սահմանում է.

«1. Վստահված անձն իրավունք ունի՝ ... 2) անարգել ծանոթանալու քվեաթերթիկների նմուշներին, ընտրական հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որեւէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, անարգել ծանոթանալու տվյալ ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին, ընտրական հանձնաժողովների որոշումներին, նիստերի արձանագրություններին, դատարանի համապատասխան վճիռներին, լիազոր մարմնի՝ ընտրողին տրամադրած համապատասխան տեղեկանքին, ստանալու դրանց պատճենները կամ դրանցից քաղվածքներ (բացառությամբ ընտրողների ստորագրած ցուցակների), քվեարկության արդյունքները»:

րի վերահաշվարկի ժամանակ ինքնուրույն կատարելու քաղվածքներ ընտրողների ստորագրած ցուցակներից»:

2. Դիմող կողմը՝ ՀՀ Ազգային ժողովի թվով 29 պատգամավորներ /համաձայն ներկայացված ձեւաթղթի/, գտնում է, որ ՀՀ ընտրական օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասը, 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը եւ 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ «...այն մասով, որ մասով որ դրանցով նախատեսված են ընտրողների կողմից ստորագրված ցուցակների հրապարակման սահմանափակումներ», հակասում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Վկայակոչելով ՀՀ Սահմանադրության եւ միջազգային իրավունքի մի շարք նորմեր՝ դիմողների հիմնական փաստարկները հանգում են նրան, որ ընտրողների կողմից ստորագրված ցուցակների գաղտնիացումը եւ դրանցում պարունակվող տեղեկությունների հրապարակման բացարձակ սահմանափակումները հակասում են տեղեկություններ փնտրելու եւ ստանալու՝ մարդու հիմնարար իրավունքներին, ինչպես նաեւ հանգեցնում են ազատ ընտրական իրավունքի սահմանափակմանը: Կողմը գտնում է, որ ընտրողների կողմից ստորագրված ցուցակների հրապարակումը չի կարող դիտվել որպես գաղտնի ընտրական իրավունքի բաղադրատարր եւ արդարացված չէ նաեւ ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածով նախատեսված իրավունքների պաշտպանության անհրաժեշտության վկայակոչմամբ նման նորմերի անհրաժեշտության հիմնավորումը:

Դիմող կողմը գտնում է, որ վեճի առարկա դրույթներով «... նախատեսված արգելքը բացարձակ է», այն տարածվում է նաեւ տեղեկատվությունը դատարաններին տրամադրելու վրա, բացառում է այդ ցուցակների նկատմամբ դատական վերահսկողությունը եւ խոչընդոտում է անձանց իրավունքների խախտումների դեմ արդյունավետ պաշտպանության միջոցների իրավունքի իրացմանը:

Դիմողների կարծիքով, վեճի առարկա դրույթներով նախատեսված արգելքը «...բացառում է ժողովրդի կողմից ընտրությունների միջոցով (ինչպես նաեւ՝ հանրաքվեի) իշխանության իրականացման փաստի ապացուցման հնարավորությունը»:

3. Պատասխանող կողմն առարկելով դիմող կողմի փաստարկներին՝ գտնում է, որ ընդհանրապես անհիմն է տվյալ հարցին անդրադառնալ միջազգային իրավունքի եւ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի տեսանկյունից, քանի որ տեղեկատվության ազատության իրավունքը բացարձակ չէ եւ Սահմանադրության 43-րդ հոդվածի հիմքով դրա սահմանափակումը պայմանավորված է նաեւ այլոց սահմանադրական իրավունքների ու ազատությունների պաշտպանությամբ: Հետեւաբար, ըստ պատասխանողի՝ ընտրողների ստորագրած ցուցակների հրապարակման սահմանափակումն իրավաչափ նպատակ է հետապնդում:

Պատասխանող կողմը գտնում է նաեւ, որ հիմնավոր չեն դիմող կողմի փաստարկները դատարանի մատչելիության եւ արդար դատաքննության իրավունքի

ների սահմանափակման առումով: Եթե ՀՀ նախորդ ընտրական օրենսգրքում այս հարցի առնչությամբ կար որոշակի անհատակություն, ապա նոր օրենսգրքի 31 եւ 33-րդ հոդվածների՝ վեճի առարկա դրույթներում դիտորդներին, զանգվածային լրատվության միջոցներին, վստահված անձանց քվեարկության արդյունքների վերահաշվարկի ժամանակ այդ ցուցակներին ծանոթանալու եւ ինքնուրույն քաղվածքներ կատարելու իրավասությամբ օժտելն ինքնանպատակ չէ: Բնականաբար, դա դիտվում է որպես նրանց վերահսկողական գործառույթի իրականացման անհրաժեշտ մաս: Իսկ այդ իրավասությունները պարտավոր են հանրային վերահսկողության իրենց առաքելությունը պատշաճ ձեւով կատարել, ինչը պատասխան կլինի նաեւ դիմող կողմի բերած վերջին փաստարկին ու ժողովրդաիշխանության սահմանադրական սկզբունքի յուրատեսակ ընկալմանը:

Կողմը նաեւ գտնում է, որ տվյալ հիմնախնդիրը չի կարող քննության առարկա դառնալ՝ շրջանցելով ՀՀ Սահմանադրության 23 եւ 42-րդ հոդվածների պահանջները: Մտացածին ու անհիմն է համարվում նաեւ ստորագրված ցուցակներում պարունակվող տեղեկատվության նկատմամբ պետական մեծաշնորհի առկայության վերաբերյալ հարցադրումը:

4. ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ վեճի առարկա դրույթների սահմանադրականության հարցն անհրաժեշտ է քննության առնել դրանց համակարգային ամբողջականության մեջ: ՀՀ ընտրական օրենսգրքի 11-րդ հոդվածի առաջին մասը հրապարակման ենթակա չի համարում ընտրողների ստորագրած ցուցակները, դրանք չեն կարող նաեւ լուսապատճենահանվել, լուսանկարվել եւ տեսանկարահանվել: Միաժամանակ, օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը եւ 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, ինչպես նաեւ 48-րդ հոդվածի 14-րդ մասն արտոնում են համապատասխան իրավասություններին քվեարկության արդյունքների վերահաշվարկի եւ բողոքարկման գործընթացում ծանոթանալ այդ ցուցակներին եւ ինքնուրույն քաղվածքներ կատարել:

Նման իրավակարգավորումը հիմք է տվել սահմանադրական դատարան դիմած Ազգային ժողովի պատգամավորներին պնդելու, որ առկա է «...ստորագրված ցուցակների բացարձակ գաղտնիացում» կամ «բացարձակապես գաղտնի է պահվում ընտրություններին վերաբերող ամենակարեւոր տեղեկությունները՝ ընտրություններին մասնակցած անձանց իրական մասնակցության մասին տեղեկությունները»: Շեշտվում է նաեւ, որ «Օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասով, 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով եւ 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դրույթներով նախատեսված արգելքը բացարձակ է, եւ այն տարածվում է նաեւ նման տեղեկատվությունը դատարաններին տրամադրելու վրա»: Ելնելով նման պնդումներից՝ դատողություններ են արվում նաեւ ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածների պահանջների անտեսման մասին:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների բուն նախաշեմին նման դիմում ներկայացնելու փաստը եւ հատկապես պատգամավորների կողմից առկա իրավակարգավորման բնույթի ու

բովանդակության համանման մեկնաբանությունները եւ դրանց մեծ հասարակական հնչեղություն հաղորդելը կարող են տարակարծիք մոտեցումների տեղիք տալ իրավակիրառ պրակտիկայում՝ հատկապես քվեարկությունների արդյունքների բողոքարկման փուլում, ուստի անհրաժեշտություն է առաջանում անդրադառնալ վեճի առարկա նորմերի սահմանադրաիրավական բովանդակությանը եւ դրանից ելնելով՝ գնահատել այդ նորմերի սահմանադրականությունը:

5. Ընտրողների ստորագրած ցուցակների հրապարակման սահմանափակումը բազմիցս քննարկման առարկա է դարձել միջազգային իրավական պրակտիկայում: Իրավակարգավորման հնարավոր տարբերակների ու սահմանափակման շրջանակների ընտրությունը համարվում է տվյալ երկրի օրենսդիր մարմնի իրավասությանը վերաբերող խնդիր: Առանձին երկրներում այդ ցուցակներում պարունակվող տեղեկատվությունը պաշտպանվում է անձնական տվյալների պաշտպանության մասին օրենքներով, կամ այն մատչելի է համարվում միայն ծառայողական նպատակներով օգտագործման համար: Կան նաեւ օրինակներ, երբ այդ ցուցակներից պատճենահանումն արգելվել է դատարանի որոշմամբ:

Տվյալ հարցի առնչությամբ բազմիցս հստակ դիրքորոշում են արտահայտել Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վեներտիկի հանձնաժողով) եւ ԵԱՀԿ Մարդու իրավունքների եւ ժողովրդավարական հաստատությունների գրասենյակը, որոնց կողմից են մշակվել այս ոլորտին առնչվող եվրոպական հիմնական չափորոշիչները: Բոլոր դեպքերում ընդհանուր մոտեցումն այն է, որ խնդրի լուծումը փնտրվում է ոչ թե տեղեկատվության ազատության իրավունքի բացարձակեցման, այլ դրա իրավաչափ սահմանափակման ու նաեւ այլոց իրավունքների պաշտպանության երաշխիքների ապահովման համատեքստում: Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման մոտեցումը համահունչ է նաեւ ՀՀ Սահմանադրության 27 եւ 43-րդ հոդվածների սահմանադրաիրավական բովանդակությանը:

ՀՀ սահմանադրական դատարանը դեռեւս իր՝ 16.04.2003թ. ՍԴՌ-412 որոշման մեջ կոնկրետ իրավական դիրքորոշում է արտահայտել այդ հարցի վերաբերյալ, շեշտելով, որ «...պաշտպանում է Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի լիազույժար նիստի կողմից 2002թ. հոկտեմբերին վավերացված այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ քվեարկությանը մասնակցածների կողմից արդեն իսկ ստորագրված եւ լրացված ընտրական ցուցակները համարվում են քվեարկության գաղտնիության տարրերից մեկը եւ հրապարակման ենթակա չեն: Սակայն դա չի ենթադրում օրենքով սահմանված կարգով ստուգումների ժամանակ ընտրական ցուցակներին ծանոթանալու անթույլատրելիություն»: Նման իրավական դիրքորոշումը վկայում է, որ ստորագրած ընտրական ցուցակների վրա բացարձակ արգելք դրվել չի կարող, ինչն արտացոլվեց նաեւ ՀՀ ընտրական օրենսգրքի 31, 33 եւ 48-րդ հոդվածներում ամրագրված նորմերում՝ այդ ցուցակներին ծանոթանալու եւ դրանցից քաղվածքներ կատարելու վերաբերյալ:

Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրք. ցուցումներ եւ բացատրական զեկույց» 30.10.2002թ. (CDL-AD (2002) 23) փաստաթղթի 4-րդ կետի /զաղտնի ընտրական իրավունք /c/-րդ ենթակետում շեշտվում է. որ «Փաստացի քվեարկած անձանց ցուցակը չպետք է հրապարակվի», իսկ Բացատրական զեկույցի 54-րդ կետում պարզաբանվում է. «...քանի որ քվեարկության չմասնակցելը կարող է վկայել քաղաքական ընտրության մասին, ապա քվեարկած անձանց ցուցակը չպետք է հրապարակվի»: Միաժամանակ քվեարկած անձանց ցուցակի հրապարակումն արգելելու պահանջի խախտումը գնահատվում է որպես քվեարկության գաղտնիության սկզբունքի խախտում: Ի դեպ, այդ փաստաթուղթը նախ ընդունվել է Եվրախորհրդի Ժողովրդավարական ընտրությունների խորհրդի կողմից (Ցուցումները՝ 03.07.2002թ., Բացատրական զեկույցը՝ 16.10.2002թ.), հետագայում հաստատվել է Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի 2003 թվականի հունվարի 30-ի 1320(2003) բանաձեռով եւ հավանության է արժանացել Եվրախորհրդի Նախարարների կոմիտեի 2004 թվականի մայիսի 13-ի 114-րդ նիստում ընդունված «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքի մասին» հռչակագրով՝ գնահատելով դրանում ամրագրված ցուցումները որպես եվրոպական ընտրական ժառանգության հիմնարար սկզբունքների արտացոլում:

ԵԱՀԿ Մարդու իրավունքների եւ ժողովրդավարական հաստատությունների գրասենյակը եւ Վենետիկի հանձնաժողովն այս հարցին անդրադարձել են նաեւ մի շարք այլ փաստաթղթերում: Մասնավորապես, ՀՀ Ազգային ժողովի՝ ընտրական օրենսդրության բարեփոխումների աշխատանքային խմբի ներկայացրած առաջարկությունների վերաբերյալ CDL-EL(2010)003, 2010թ. փետրվարի 3-ի համատեղ դիտողություններում կրկին անդրադառնալով ընտրական հարցերով կանոնագրքի Բացատրական զեկույցի նշված 54-րդ կետին՝ վերահաստատել է դրանում արտահայտված դիրքորոշումը: 2010թ. դեկտեմբերի 22-ի CDL-AD(2010)043 զեկույցում հիմնավորվում է, որ ընտրողների ցուցակների նկատմամբ հանրային հսկողության, դրանց հրապարակայնության ապահովման պահանջները վերաբերում են քվեարկությանը նախորդող ժամանակահատվածին: Նշվում է, որ ընտրացուցակները պետք է մատչելի լինեն ողջամիտ ժամանակահատվածում եւ վայրերում, որպեսզի ընտրողներին հնարավորություն տրվի ստուգելու իրենց վերաբերյալ անձնական տվյալները, իսկ ընտրական գործընթացի մասնակիցները կարողանան դրանք ուսումնասիրել եւ անհրաժեշտ հսկողություն իրականացնել: Ընտրողների գրանցման գործընթացի նկատմամբ մոնիտորինգի ԵԱՀԿ/ԺՄԻԳ CDL-EL(2009)015 փաստաթղթում նշվում է. «Ընտրողների գրանցման գործընթացի թափանցիկությունը հանրային վստահության ապահովման առանցքային միջոց է: Այս գործընթացի թափանցիկությունն ապահովում է ընտրողների ցուցակների մատչելիությունը մինչեւ ընտրությունը»: Հատուկ կարեւորվում է նաեւ ընտրողների անհատական տվյալների պաշտպանության հանգամանքը:

6. Նշված մոտեցումներն իրավաչափ, ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին ու ՀՀ Սահմանադրությանը համահունչ համարելով հանդերձ, ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանք չեն կարող դիտվել որպես ընտրական իրավունքների արդյունավետ պաշտպանության ու անմիջական ժողովրդավարության սահմանադրական սկզբունքի իրացման արգելք: Առավել եւս դա վերաբերում է ընտրական իրավունքի դատական պաշտպանությանը, ինչի առնչությամբ մտահոգություն են արտահայտել սահմանադրական դատարանի դիմած պատգամավորները: Արդարադատության իրականացումը դատարաններին պարտավորեցնում է դատական ընդդատության շրջանակներում քննության առարկա դարձնել ցանկացած տեղեկատվություն, ինչն ունի ապացուցողական նշանակություն իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրաիրավական առումով «հրապարակման ենթակա չեն» կամ «չպետք է հրապարակվի» արտահայտություններին իրավակիրառական պրակտիկայում չի կարող այնպիսի տարածական մեկնաբանություն տրվել, ինչը կխոչընդոտի ազատ ընտրությունը կամ կարգելափակի ընտրողների ստորագրած ցուցակների ուսումնասիրության հնարավորությունը՝ ընտրական իրավունքի պաշտպանության համատեքստում, ինչպես նաեւ դրանց չհրապարակման սահմանափակումը որեւէ կերպ տարածվի նման տեղեկությունները դատարաններին տրամադրելու վրա: Տվյալ արտահայտությունները վերաբերում են հրապարակային տպագրությանը՝ քվեարկության գաղտնիության երաշխավորման եւ ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների համատեքստում: Սակայն որեւէ սահմանափակում չի կարող խոչընդոտել ընտրական գործընթացի վերահսկմանն օրենքով սահմանված կարգով մասնակցող իրավասուբյեկտների գործունեությունը, ինչի արդյունավետ իրականացումով է մեծապես պայմանավորված հանրային վստահությունն ընտրական գործընթացի հանդեպ: Խնդիրն այն է, թե նրանք ինչպիսի իրավագիտակցությամբ ու արդյունավետությամբ են իրականացնում այդ առաքելությունը: Պրակտիկան վկայում է, որ հաճախ անվստահության պատճառը վերահսկողական գործառույթի ոչ պատշաճ կատարումն է, ինչին կոնկրետ օրինակներով անդրադարձել է սահմանադրական դատարանն իր նախորդ որոշումներում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քվեարկության արդյունքների առնչությամբ վեճի շրջանակներում ստորագրված ընտրական ցուցակներին ծանոթանալը եւ համապատասխան քաղվածքներ կատարելն օրենքով նախատեսված սուբյեկտների, տվյալ դեպքում՝ դիտորդի, վստահված անձի, զանգվածային լրատվական միջոցի ներկայացուցչի ու դիմողի (համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 48-րդ հոդվածի 14-րդ մասի) իրավունքն է: Իսկ ներկայացված փաստերի հիման վրա այդ ցուցակներում տեղ գտած խախտումներին իրավական գնահատական տալը համապատասխան ընտրական հանձնաժողովների ու դատարանի պարտականությունն է: Հետեւաբար, **ընտրական իրավունքի պաշտպանության օրենքով նախատեսված գործընթացներ**

րի շրջանակներում վերահսկողական համապատասխան իրավասությամբ օժտված իրավասուբյեկտների համար ընտրական իրավունքի պաշտպանությանը վերաբերող որևէ տեղեկատվության մատչելիությունը չի կարող արգելափակվել՝ առավել ևս նման տեղեկատվությունը դատարաններին տրամադրելու առնչությամբ: Այս սկզբունքային մոտեցումն է դրված վեճի առարկա նորմերի իրավակարգավորման հիմքում եւ, մասնավորապես, անհիմն է այն պնդումը, որ «Օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասով, 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով եւ 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դրույթներով նախատեսված արգելքը բացարձակ է, եւ այն տարածվում է նաեւ նման տեղեկատվությունը դատարաններին տրամադրելու վրա»:

Խնդիրն ընտրություններում քվեարկության գաղտնիության սկզբունքի եւ ընտրական իրավունքի արդյունավետ պաշտպանության իրավաչափ հավասարակշռության ապահովումն է: Դա հնարավոր է ու անհրաժեշտ, երբ ընտրախախտումների հայտնաբերման եւ ուսումնասիրման շրջանակներում ցանկացած իրավաչափ գործողության կատարման ընթացքում օրենքով սահմանված կարգով վերահսկման գործընթացին մասնակից իրավասուբյեկտների համար մատչելի են արդեն իսկ ստորագրված ընտրացուցակները: Դա ենթադրում է ոչ միայն իրենց իրավասությունների պատշաճ իմացությամբ դրանց ծանոթանալն ու քաղվածքներ կատարելը, ինչպես նախատեսված է ՀՀ ընտրական օրենսգրքի 31, 33 եւ 48-րդ հոդվածներով, այլեւ հնարավոր խախտումներ արձանագրելու դեպքում ընտրական իրավունքի պաշտպանության շրջանակներում քվեարկության արդյունքների հավաստիության վիճարկման հնարավորություն՝ ՀՀ ընտրական եւ վարչական դատավարության օրենսգրքերով սահմանված կարգով: Ուստի ընտրական հանձնաժողովների պարտականությունն է ընտրական գործընթացի վերահսկմանն օրենքով նախատեսված կարգով մասնակցող իրավասուբյեկտների համար ընտրական իրավունքների պաշտպանության շրջանակներում այդ ցուցակներին լիարժեք ծանոթանալու պայմաններ ստեղծելը: Դա հատկապես անհրաժեշտ է դատական քննությունը ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածների պահանջներին համապատասխան երաշխավորելու ու հնարավոր ընտրախախտումները վերացնելու համար: Իսկ ընտրական գործընթացի վերահսկմանը մասնակցող իրավասուբյեկտների շրջանակի եւ նրանց գործունեության կարգի սահմանումն օրենսդիր մարմնի իրավասության հարցն է:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63, 64 եւ 68-րդ հոդվածների դրույթներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. ՀՀ ընտրական օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի, 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի եւ 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝

Տրեմագրքում ամրագրված եւ սույն որոշման մեջ ներկայացված սահմանադրաիրավական այն բովանդակությամբ, ինչը, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի 9.2-րդ կետի, համառոտ ձեւով ենթադրում է, որ այդ դրույթները չեն կարող մեկնաբանվել որպէս ընտրական իրավունքի սահմանափակում ու գործնականում արգելափակել ընտրախախտումների բացահայտման առնչությամբ ցանկացած իրավաչափ գործողության կատարման ընթացքում ընտրական գործընթացը սահմանված կարգով վերահսկող իրավասութիւնների համար ընտրողների ստորագրած ցուցակների մատչելիությունը՝ որպէս ընտրական իրավունքի պաշտպանութան, այդ թվում՝ դատական կարգով, անհրաժեշտ երաշխիք:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**5 մայիսի 2012 թվականի
ՍԳՈ- 1027**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**«ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՇԻՆՔԻ
ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 13-Ի՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ ԸՆՏՐՎԵԼՈՒ
ՍԱՍԻՆ» N 265-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՎԻՃԱԿԿԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

31 մայիսի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող),
Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի,
Ա. Պետրոսյանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող կողմի ներկայացուցիչներ Լ. Ջուրաբյանի (25.05.2012թ. դատական
նիստին) եւ Վ. Գրիգորյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Հայաստանի Հանրա-
պետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչներ
Տ. Մուկուչյանի, Ա. Սմբատյանի եւ Ն. Հովհաննիսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ
հոդվածի 3.1-րդ կետի, 101-րդ հոդվածի 9-րդ կետի, «Սահմանադրական դա-
տարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ եւ 74-րդ հոդ-
վածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Հայ ազգային կոնգ-
րես» կուսակցությունների դաշինքի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրա-
պետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի
13-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական
ընտրակարգով պատգամավորներ ընտրվելու մասին» N 265-Ա որոշումը վի-
ճարկելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել «Հայ ազգային կոնգրես» կուսակցությունների դաշինքի՝ 2012 թվականի մայիսի 18-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը, 2012 թվականի մայիսի 19-ի աշխատակարգային նիստում քննարկելով վերոհիշյալ դիմումի ընդունելիության հարցը, կայացրել է գործը քննության ընդունելու եւ գործով որպես պատասխանող կողմ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովին ներգրավելու վերաբերյալ որոշում: Միաժամանակ, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով գործով զեկուցողներ են նշանակվել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի անդամներ Ֆ. Թոխյանը եւ Ա. Պետրոսյանը:

Լսելով սույն գործով զեկուցողների հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի ներկայացուցիչների բացատրությունները, ուսումնասիրելով նրանց կողմից ներկայացված փաստարկները, ինչպես նաեւ հետազոտելով դիմումը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրություններն անցկացվել են 2012 թվականի մայիսի 6-ին՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 68-րդ հոդվածում նախատեսված ժամկետում:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 14-րդ հոդվածին համապատասխան քվեարկությունը կազմակերպելու եւ քվեարկության արդյունքներն ամփոփելու նպատակով հանրապետության տարածքում կազմավորվել են թվով 1982 ընտրական տեղամասեր:

Ընտրությունների կազմակերպման եւ անցկացման նպատակով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 17-րդ հոդվածով նախատեսված կարգով հանրապետության տարածքում կազմավորվել է 41 ընտրատարածք: Նույն օրենսգրքի 34-րդ հոդվածին համապատասխան կազմավորվել է ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ՝ կենտրոնական ընտրական հանձնաժողով, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ եւ տեղամասային ընտրական հանձնաժողովներ: ՀՀ ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածով սահմանված լիազորությունների շրջանակներում ընտրությունների ողջ գործընթացը կազմակերպել եւ ընտրությունների օրինականության նկատմամբ վերահսկողությունն իրականացրել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

2. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով հավատարմագրվել եւ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների նախապատրաստման, անցկացման եւ արդյունքների ամփոփման ընթացքում դիտորդական առաքելություն են իրականացրել 9 մի-

ջազգային կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների, տարբեր երկրների կենտրոնական ընտրական հանձնաժողովների 647 դիտորդներ, ինչպես նաև 54 տեղական կազմակերպությունների 31451 դիտորդներ:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների միջազգային դիտարկում՝ նախնական հանգամանքների եւ եզրակացությունների վերաբերյալ համատեղ հայտարարություն են ներկայացրել ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակը (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ), ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովը (ԵԱՀԿ ԽՎ), Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը (ԵԽԽՎ) եւ Եվրոպական խորհրդարանը (ԵԽ): Ընտրությունների վերաբերյալ եզրակացություններ են ներկայացրել նաև Անկախ պետությունների համագործակցության միջխորհրդարանական վեհաժողովը, դիտորդական առաքելություն իրականացրած տեղական կազմակերպությունները:

3. Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը, իր՝ 2012 թվականի մայիսի 13-ի N 264-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ընտրական տեղամասերում, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունները, վերահաշվարկի արդյունքները, կազմել է արձանագրություն՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով 2012 թվականի մայիսի 6-ի քվեարկության արդյունքների վերաբերյալ: Համաձայն հիշյալ արձանագրության՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով քվեաթերթիկում ընդգրկված ութ կուսակցություններին եւ մեկ կուսակցությունների դաշինքին կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը կազմել է. «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն՝ 454.673, «Ժառանգություն» կուսակցություն՝ 86.998, Հայ Ազգային Կոնգրես կուսակցությունների դաշինք՝ 106.903, «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն՝ 85.550, Հայաստանի Դեմոկրատական կուսակցություն (ՀԴԿ)՝ 5.577, Հայաստանի Կոմունիստական կուսակցություն՝ 15.899, Հայաստանի Հանրապետական կուսակցություն՝ 664.440, Միավորված Հայեր կուսակցություն՝ 2.945, «Օրինաց Երկիր» կուսակցություն՝ 83.123: Քվեատուփերում առկա սահմանված մնուշի քվեարկության ծրարների թիվը կազմել է 1.559.052, իսկ անճշտությունների գումարային չափը՝ 3.355:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 13-ի՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրությունների քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, 2012 թվականի մայիսի 13-ին ընդունված՝ «2012 թվականի մայիսի 6-ի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրության արդյունքների վերաբերյալ» N264-Ա որոշումը եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կե-

տով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովն իր՝ 2012 թվականի մայիսի 13-ի N 265-Ա որոշմամբ որոշել է, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորներ են ընտրվել. «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ընտրական ցուցակից՝ 28 պատգամավոր, «Ժառանգություն» կուսակցության ընտրական ցուցակից՝ 5 պատգամավոր, Հայ Ազգային Կոնգրես կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից՝ 7 պատգամավոր, «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցության ընտրական ցուցակից՝ 5 պատգամավոր, Հայաստանի Հանրապետական կուսակցության ընտրական ցուցակից՝ 40 պատգամավոր, «Օրինաց Երկիր» կուսակցության ընտրական ցուցակից՝ 5 պատգամավոր:

4. Դիմող կողմը վիճարկելով ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012թ. մայիսի 13-ի N265-Ա որոշումը՝ գտնում է, որ անհրաժեշտ է այն անվավեր ճանաչել, պնդելով, որ «2012 թվականի մայիսի 6-ի Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների նախապատրաստման, նախընտրական քարոզչության ողջ ընթացքում եւ քվեարկության օրվա դրությամբ խախտվել է ընտրությունների անցկացման հավասարության սկզբունքը՝ համաձայն Սահմանադրության 4 հոդվածի»: Որպես դրա փաստարկ է ներկայացվում Հայաստանի Հանրապետական կուսակցության նախագահի կողմից Հայաստանի Հանրապետության Նախագահի իրավասությունների իրականացման հետ համատեղ նախընտրական քարոզչությանը մասնակցությունը: Դիմողը գտնում է, որ «Հանրապետության Նախագահն ունի լայն իշխանական լիազորություններ, որոնց բերումով նա ուղղակիորեն վերահսկում է պետական իշխանության համակարգի մի զգալի մասը: Այս ամենի բերումով, որեւէ քաղաքական ուժի օգտին նրա կողմից կատարված կոչերը, առավել եւս իր պաշտոնեական լիազորությունների իրականացման ընթացքում, հանգեցնում է պետական իշխանության հնարավորությունների եւ այլ ռեսուրսների կիրառման հօգուտ այդ՝ քարոզվող ուժի՝ հակառակ Սահմանադրության 4 հոդվածով նախատեսված ազատ ընտրությունների բովանդակությունը կազմող սկզբունքների»:

Դիմողը վկայակոչում է նաեւ ՀՀ վարչապետի եւ պետական պաշտոններ զբաղեցնող մի շարք այլ անձանց մասնակցությունն ընտրական գործընթացներին: Անդրադառնում է ՀՀ ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների չապահովմանը:

Դիմողն անարդյունավետ է համարում ընտրական գործընթացի վերահսկման եւ ընտրական տեղամասերում քվեարկության, ինչպես նաեւ ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու բողոքարկման գործող համակարգը եւ գտնում է, որ այն չի հանդիսանում ընտրական իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց:

Դիմողը հավաստի չի համարում ընտրական ցուցակներում ընդգրկված, ինչպես նաեւ քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը, ինչը, ըստ դիմողի, պայմանավորված է «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի պահանջների անտեսմամբ:

Գիմողը որպես փաստարկ է դիտարկում նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ կողմից 2012թ. մայիսի 7-ին հրապարակված «Նախնական հանգամանքների եւ եզրակացությունների վերաբերյալ» հայտարարության մեջ դիմողի՝ սահմանադրական դատարան ներկայացրած դիմումում վկայակոչված իրավունքների ն վերաբերելի տեղեկություններն ու փաստերը:

Գործի դատաքննության փուլում դիմող կողմի ներկայացուցիչ Վ. Գրիգորյանը գրավոր ձեռով սահմանադրական դատարանին խնդրեց «...անտեսել դիմումի 2.3 կետն ամբողջությամբ»: Միաժամանակ, դիմողի ներկայացուցիչ Լ. Ջուրաբյանը գրավոր պարզաբանում է ներկայացրել առ այն, որ սահմանադրական դատարանում բացատրություններ ներկայացնելիս «... ես թյուրիմացաբար, հենվելով անցյալ ընտրությունների հետ կապված իմ ընկալման վրա, ասել եմ, որ երբ շուռ են տվել քվեատուփերը, պարզվել է, որ Հանրապետականի օգտին քվեարկված հայտնվել են հիմնականում քվեատուփի վերելի մասում: Իրականում, Ընտրական նոր օրենսգրքի համաձայն, հաշվարկի ժամանակ քվեատուփերը չեն շուռ տալիս: Մեր վստահված անձանց դիտարկումների եւ զեկույցների հիման վրա ներկայացված պնդման էությունն այն է, որ գոյություն է ունեցել հստակ կոռեկցիա. առավոտյան ժամերին քվեարկած քվեաթերթիկները ճնշող մեծամասնությամբ եղել են Հանրապետականի օգտին»:

Գիմողը հավաստի չի համարում նաև որոշ բնակավայրերում բնակչության թվի եւ ընտրողների թվի հարաբերակցությունը, ինչպես նաև օրվա տարբեր ժամերին մի շարք տեղամասերում քվեարկությանը մասնակցածների պաշտոնական տվյալները:

5. Պատասխանող կողմն առարկելով դիմողի փաստարկների դեմ՝ գտնում է, որ 2012թ. մայիսի 13-ի N 265-Ա որոշումը կայացնելիս բացառապես ղեկավարվել է ՀՀ ընտրական օրենսգրքի պահանջներով: Վկայակոչելով նաև 2012թ. մայիսի 13-ի N 263-Ա որոշման մեջ արտահայտած դիրքորոշումները, գտնում է, որ կենտրոնական ընտրական հանձնաժողովը բավարար հիմքեր չի ունեցել ՀՀ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով 2012թ. մայիսի 6-ի ընտրությունների արդյունքներով այլ որոշում կայացնելու համար: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ ընտրությունները կայացել են, արդյունքները վավեր են եւ հստակ ու որոշակի են մանդատների բաշխումը թեկնածուների միջեւ:

Պատասխանող կողմը գտնում է նաև, որ պետական պաշտոններ զբաղեցնող անձանց՝ ընտրական գործընթացին մասնակցելու հարցը երաշխավորվել է ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգին համապատասխան, դիմողն այս հարցը ժամանակին օրենքով սահմանված կարգով չի բողոքարկել, իսկ օրենքի նորմերի սահմանադրականության հարցի բարձրացումը դուրս է սույն վեճի առարկայի շրջանակներից:

Պատասխանող կողմը գտնում է, որ ՀՀ ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների խախտումը մասնակի ու տեխնիկական բնույթ է կրել եւ վիճակը շտկվել է կենտրոնական ընտրական հանձնաժողովի օպերատիվ միջամտության արդյունքում:

Ինչ վերաբերում է վերահսկման եւ բողոքարկման համակարգի անարդյունավետության առնչությամբ դիմողի պնդումներին, պատասխանող կողմը գտնում է, որ նման հարցադրումը չափազանցված է, ավելին՝ տվյալ գործընթացին մասնակից իրավասություններին լիարժեք հնարավորություն է տրվել իրենց իրավասությունների իրացման համար: Իսկ թե նրանք ինչ արդյունավետությամբ են այն իրացրել՝ ակնհայտ է դառնում ներկայացված դիմում-բողոքների ու հատուկ կարծիքների թվի եւ որակի ուսումնասիրությունից: Ըստ պատասխանողի բերած փաստարկների՝ ՀՀ-ում կազմավորված 1982 ընտրական տեղամասերում համամասնական ընտրակարգով ընտրության քվեարկության արդյունքների վերահաշվարկի դիմում է ներկայացվել միայն 11 ընտրական տեղամասերում, կամ որ նույնն է՝ ընդհանուր ընտրական տեղամասերի 0.55 տոկոսում, եւ դրանցից միայն 4-ն է իրականացվել «Հայ ազգային կոնգրես» կուսակցությունների դաշինքի վստահված անձանց դիմումով: Առկա չէ որեւէ բողոք, այդ թվում՝ դիմումին կից ներկայացված նյութերում, որ որեւէ իրավասու անձի արգելվել է ծանոթանալ ընտրողների ստորագրած ցուցակներին, թույլ չի տրվել քվեարկության ընթացքում նշումներ կամ գրառումներ կատարել, ինչպես նաեւ առկա չէ սահմանված կարգով ներկայացված համամասնական ընտրակարգով վերահաշվարկ կատարելու վերաբերյալ որեւէ մերժված կամ չընդունված դիմում, ինչը նշանակում է, որ ընտրողների ստորագրած ցուցակին ծանոթանալու եւ դրանից քաղվածքներ կատարելու իրավունքը լրիվ ծավալով չի իրացվել հենց դիմումատուի կողմից: Իսկ տեղամասային ընտրական հանձնաժողովների 13.810 բազմակուսակցական անդամներից հատուկ կարծիք է ներկայացրել միայն 17-ը, ինչը կազմում է նրանց ընդհանուր թվի 0.12 տոկոսը:

Ընտրողների եւ քվեարկությանը մասնակցածների թվի վերաբերյալ դիմողի դիտարկումները պատասխանողը գնահատում է որպես առանց փաստարկի դատողություններ եւ գտնում է, որ դիմողը կարող էր ընտրացուցակների հարցն օրենքով սահմանված կարգով վիճարկել քվեարկությանը նախորդող փուլում, ինչը չի արվել:

Դիմողի ներկայացրած թվական տվյալների վերաբերյալ պատասխանողը գտնում է, որ դրանք ապացուցողական որեւէ հիմք չունեն, հասարակական կազմակերպության համացանցից վերցված ոչ հավաստի տվյալներ են, իսկ այդ ընտրատեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ դիմող կողմի ներկայացուցիչները ժամանակին ու օրենքով սահմանված կարգով որեւէ դիմում-բողոք չեն ներկայացրել: Ինչ վերաբերում է մի քանի բնակավայրերում բնակչության թվի եւ ընտրողների թվի տարբերությանը, ապա դա առկա է այն ընտրական տեղամասերում, որտեղ համապետական ընտրությանը մասնակցել են նաեւ գինձառայողներ: Պատասխանողն ընդգծում է նաեւ, որ դիմողը չի ներկայացրել որեւէ փաստ, որ տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունը չհամապատասխանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հրապարակված արդյունքների աղյուսակավորմանը:

Պատասխանող կողմը գտնում է, որ ընդհանրապես ակնհայտ անհիմն դի-

մում է ներկայացվել սահմանադրական դատարան եւ գործի վարույթը ենթակա էր կարճման:

6. ՀՀ սահմանադրական դատարանը նախ արձանագրում է, որ ընտրական գործընթացների իրավակարգավորման վերջին տարիների փոփոխությունները Հայաստանում կարելու անդրադարձ ունեցան ընտրական իրավունքի դատական պաշտպանության ոլորտում, ինչը, սակայն, դեռեւս պատշաճ ձեւով չի ընկալվել ընտրական գործընթացին մասնակից իրավասութեկտների կողմից: Այդ փոփոխությունները, որոնց վրա սահմանադրական դատարանը բազմիցս ուշադրություն է հրավիրել, առաջին հերթին վերաբերում են 2005թ. սահմանադրական բարեփոխումներին, երբ վերանայվեց ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3-րդ կետը, համաձայն որի՝ սահմանադրական դատարանը լուծում էր Հանրապետության Նախագահի եւ պատգամավորների **ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերը: Գործող Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետով նախկինի փոխարեն ամրագրվեց նոր դրույթ, համաձայն որի՝ սահմանադրական դատարանն օրենքով սահմանված կարգով լուծում է Հանրապետության Նախագահի եւ պատգամավորների ընտրությունների արդյունքներով **ընդունված որոշումների հետ կապված վեճերը:****

Ընտրական իրավունքի դատական պաշտպանության հարցում կարելու իրավագրություն վերապահվեց 2008 թվականից Հայաստանի Հանրապետությունում գործող վարչական դատարանին: Ընդ որում, 2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածով սահմանվեց, որ թեկնածուների ու կուսակցությունների ընտրական ցուցակները, ցուցակներում ընդգրկված թեկնածուներին գրանցելու, չգրանցելու, գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելու վերաբերյալ վարչական ակտերի իրավաչափությունը վիճարկելու մասին գործերն ըստ էության քննում եւ **լուծում է** վարչական դատարանը՝ **կոլեգիալ՝ 5 դատավորի կազմով:** Նույն կարգով են քննվում նաեւ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի **նորմատիվ բնույթ ունեցող որոշումների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերը:**

Համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ հոդվածի՝ ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերով վարչական դատարանի՝ **գործն ըստ էության լուծող դատական ակտերը վերջնական են, վերանայման ենթակա չեն եւ ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:**

Նկատի ունենալով ընտրական իրավունքի դատական պաշտպանության դատավարական առանձնահատկություններն ու այդպիսի գործերով ընդդատության հանգամանքը, ՀՀ ընտրական օրենսգրքի մի շարք հոդվածներ նախատեսում են, որ առանձին ընտրական վեճեր քննվում եւ լուծվում են **ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:** Մասնավորապես, ՀՀ ընտրական օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն՝ «Ընտրողների ցուցակներում անճշտությունների վերացման եւ ցուցակում լրացում կատարելու վերաբերյալ վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության վարչա-

կան դատավարության օրենսգրքով սահմանված կարգով եւ ժամկետներում»։ Ընտրողների ցուցակների ճշգրտման վերաբերյալ գործերը վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով քննում են պատասխանողի գտնվելու վայրի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանները /ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ/։

Ընտրական օրենսգրքի 118-րդ հոդվածը սահմանում է՝ «Պատգամավորի թեկնածուի գրանցումը մերժելու կամ անվավեր ճանաչելու մասին ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը կարող է վիճարկվել Հայաստանի Հանրապետության **վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով եւ ժամկետներում**»։ Իսկ նույն օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի կամ դրանում ընդգրկված թեկնածուի գրանցումը մերժելու, գրանցումն անվավեր ճանաչելու մասին կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումը կարող է վիճարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով եւ ժամկետներում»։

Ընդ որում, ՀՀ ընտրական օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի գրանցումը դատարանի վճռի հիման վրա ուժը կորցրած է ճանաչվում, եթե խախտվել են սույն օրենսգրքի 18-րդ հոդվածի 8-րդ մասի կամ սույն օրենսգրքի 26-րդ հոդվածի դրույթները»։ Իսկ օրենսգրքի 18-րդ հոդվածի 8-րդ մասը, մասնավորապես, սահմանում է, որ՝ «Նախընտրական քարոզչության սահմանված կարգի այնպիսի խախտման դեպքում, որը կարող է էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա, եթե այն կատարել է թեկնածուն, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունը, կուսակցությունների դաշինքը, ապա թեկնածուին, կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակը գրանցած հանձնաժողովը դիմում է դատարան՝ թեկնածուի, կուսակցության, կուսակցության դաշինքի ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար»։

ՀՀ ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածն իր հերթին սահմանում է, որ՝ «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) (բացառությամբ համապետական ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումների) կարող են բողոքարկվել վարչական դատարան»։ Ի դեպ, նույն հոդվածի համաձայն՝ թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի, ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու մասին դիմում կարող է ներկայացվել մինչեւ քվեարկության օրը։

Այնհայտ է, որ այստեղ հստակեցված է ոչ միայն դատական իրավագործության շրջանակը, այլև շեշտված է, թե դատավարական ինչ ընթացակարգով ու ժամկետներում այդ հարցերը կարող են քննվել եւ լուծում ստանալ։

Վերոնշյալից հետեւում է, որ ընտրական իրավունքի արդյունավետ դատական պաշտպանության համար անհրաժեշտ է.

ա/ նկատի ունենալ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի պահանջը, հա-

մաճայն որի՝ յուրաքանչյուր մարմին իրավասու է կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված է Սահմանադրությամբ կամ օրենքներով,

բ/ հստակ պատկերացնել դատական յուրաքանչյուր առյուծի իրավագործության շրջանակները,

գ/ օրենքով սահմանված ժամկետներում եւ կարգով իրականացնել ընտրական իրավունքի պաշտպանությանն ուղղված միջոցներն՝ այն դատարանում, որն ունի համապատասխան իրավագործություն,

դ/ հաշվի առնել, որ ընտրական իրավունքի դատական պաշտպանության հարցերով ՀՀ սահմանադրական դատարանը ոչ թե այլ դատարանների նկատմամբ վերադաս դատարան է, այլ իրականացնում է Սահմանադրությամբ իրեն վերապահված կոնկրետ իրավասություն,

ե/ ընտրության արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը չեն կարող դիտարկվել որպես իրավական նորմի սահմանադրականության վեճեր, քանի որ վերջիններիս լուծման համար սահմանադրաիրավական այլ պահանջներ ու ընթացակարգեր են նախատեսված:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերոթվարկյալ գործոններով է նաեւ մեծապես պայմանավորված ընտրական իրավունքի սահմանադրաիրավական պաշտպանության արդյունավետության երաշխավորումը:

ՀՀ օրենսդրությամբ սահմանադրական դատարանն իրավասու չէ քննության առարկա դարձնել բոլոր այն հարցերը, որոնք նախապես քննության պետք է առնվեն եւ իրավական լուծում ստանան ՀՀ վարչական դատարանում, որի որոշումներն այդ հարցերում, ինչպես նշվեց, **վերջնական են եւ վերանայման ենթակա չեն:**

Հաշվի առնելով նշված հանգամանքները եւ նկատի ունենալով ՍԳՈ-433, ՍԳՈ-703 եւ ՍԳՈ-736 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ բոլոր այն հարցերը, որոնք առնչվում են ընտրական գործընթացներում թեկնածուների գրանցման եւ այն վեճերին, որոնց լուծումն օրենքով սահմանված կարգով վերապահված է ՀՀ վարչական դատարանին, սահմանադրական դատարանում առանձին քննության առարկա չեն կարող հանդիսանալ, իսկ որպես ապացուցողական հիմք ընդունվում են վարչական դատարանի վերջնական ակտերը: Իսկ ՀՀ ընտրական օրենսգրքի առանձին դրույթների սահմանադրականությանն առնչվող հարցերը սահմանադրական դատարանում քննության առարկա կարող են դառնալ միայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածով նախատեսված սուբյեկտների՝ օրենքով սահմանված կարգով ներկայացրած դիմումների ու համապատասխան դատավարական ընթացակարգերի հիման վրա:

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքի 75-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «Կենտրոնական ընտրական հանձնաժողովը քվեարկության օրվանից հետո՝ 7-րդ օրը, հիմք ընդունելով քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, դատա-

րանի վճիռները, հանձնաժողովներում ստացված դիմումների (բողոքների) քննարկման արդյունքով ընդունած որոշումները, տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների որոշումները, քվեարկության արդյունքների վերաբերյալ ընդունած որոշումները, ամփոփում է ընտրության արդյունքները եւ ընդունում որոշում ընտրությունների արդյունքների վերաբերյալ»:

Հաշվի առնելով օրենսդրական այս դրույթը եւ ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի պահանջները՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշման հետ կապված վեճերով սահմանադրական դատարանը պարզում է՝ արդյո՞ք տվյալ որոշման ընդունման ժամանակ իրավական անհրաժեշտ հստակությամբ առկա են եղել ու հաշվի առնվել.

ա/ քվեարկության արդյունքների վերաբերյալ օրենքով սահմանված կարգով կազմված արձանագրությունը,

բ/ վարչական դատարանի իրավասության շրջանակներում ընտրական գործընթացներին առնչվող վճիռները,

գ/ ընտրական հանձնաժողովներում ստացված դիմումների (բողոքների) քննարկման արդյունքներով ընդունված որոշումները,

դ/ տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների որոշումները,

ե/ քվեարկության արդյունքների վերաբերյալ ընդունված որոշումները:

Այսպիսով, սահմանադրական դատարանի խնդիրն է գնահատել, թե իրավական նշանակություն ունեցող վերոթվարկյալ հանգամանքները հաշվի առնելու արդյունքում որքանո՞վ է իրավաչափ ընտրության արդյունքների վերաբերյալ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայացրած որոշումը:

Գործի քննության արդյունքները եւ առկա նյութերի ուսումնասիրությունը վկայում են, որ.

Նախ՝ ՀՀ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով 2012 թվականի մայիսի 6-ի քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կազմվել է օրենքով սահմանված կարգով ու ժամկետում, իսկ քվեարկության արդյունքների վերաբերյալ բոլոր ընտրական տեղամասերի արձանագրությունները եղել են հասու ու մատչելի ընտրողներին ու ընտրական գործընթացին մասնակից իրավասուբյեկտներին, դրանք սահմանված ժամկետներում տեղադրվել են կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

Երկրորդ՝ ՀՀ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրության արդյունքների ամփոփման պահին, համաձայն գործում առկա նյութերի, ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ չքննված գործ ՀՀ վարչական դատարանի վարույթում առկա չի եղել: ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից «2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրության արդյունքների վերաբերյալ» 2012

թվականի մայիսի 13-ի թիվ 264-Ա որոշումը կայացնելիս հաշվի են առնվել ընտրական գործընթացին առնչվող՝ ՀՀ վարչական դատարանի կողմից ընդունված բոլոր ակտերը:

Երրորդ՝ գործի նյութերը վկայում են, որ 2012թ. մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրությունների կազմակերպման եւ անցկացման ընթացքում ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվել 531 դիմում-բողոք, որից 478-ը, կամ 90,02 տոկոսը՝ մեկ անձի կողմից: Բոլոր դիմում-բողոքները քննության են առնվել ՀՀ ընտրական օրենսգրքի 45, 46 եւ 47-րդ հոդվածների հիման վրա եւ արդյունքները հաշվի են առնվել ընտրությունների արդյունքների ամփոփման ժամանակ: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կողմից՝ համամասնական ընտրակարգով ընտրության քվեարկության արդյունքների վերահաշվարկի վերաբերյալ բոլոր դիմումները բավարարվել են: Դրանցից մեկական դիմում ներկայացվել են «Բարգավաճ Հայաստան» կուսակցության վստահված անձի ու տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի, մեկական՝ «Ժառանգություն» կուսակցության վստահված անձի ու տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի եւ չորս դիմում՝ «Հայ ազգային կոնգրես» կուսակցությունների դաշինքի վստահված անձանց կողմից:

«Հայ Ազգային Կոնգրես» կուսակցությունների դաշինքը «2012թ. մայիսի 6-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքները անվավեր ճանաչելու մասին» 11.05.2012թ. դիմում է ներկայացրել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով: Տվյալ դիմումի քննության արդյունքներով ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2012թ. մայիսի 13-ին ընդունել է թիվ 263-Ա որոշումը:

Չորրորդ՝ 1982 ընտրական տեղամասերից միայն 205-ի գրանցամատյաններում են կատարվել ընտրախախտումների վերաբերյալ առանձին գրառումներ (ինչը կազմում է ընտրատեղամասերի ընդհանուր թվի մոտ 11 տոկոսը): Դրանց առնչությամբ առկա են ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների որոշումները:

Հինգերորդ՝ քվեարկության արդյունքների՝ օրենքով նախատեսված կարգով իրականացված վերահաշվարկների արդյունքում կայացրած որոշումները հաշվի են առնվել ՀՀ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով 2012թ. մայիսի 6-ի քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կազմելիս:

8. Գործի նյութերի եւ կողմերի ներկայացրած ապացուցողական նշանակություն ունեցող փաստարկների ուսումնասիրությունը վկայում է.

ա/ 1982 ընտրական տեղամասերից ընդհանուր առմամբ 6 դիմում է ներկայացվել ՀՀ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրությունների գործընթացը վերահսկող իրավասուբյեկտների կողմից քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու վերաբերյալ, ինչը կազմում է տեղամասե-

րի ընդհանուր թվի 0.5 տոկոսը: Իսկ համամասնական ընտրակարգով քվեարկության արդյունքների վերահաշվարկի դիմում է ներկայացվել, ինչպես նշվեց, միայն 11 ընտրական տեղամասերում, որը կազմում է ընդհանուր թվի 0.55 տոկոսը: Դա այն դեպքում, երբ միայն համամասնական ընտրակարգով ընտրական գործընթացը վերահսկել են ութ կուսակցությունների եւ կուսակցությունների մեկ դաշինքի 19.493 վստահված անձինք, որից 9.760-ը ներկայացրել են ընտրական գործընթացի վերահսկման միասնական շտաբում ընդգրկված կուսակցությունները՝ դիմողի մասնակցությամբ: Փաստն այն է, որ վերջիններից միայն 0.1 տոկոսն է օգտվել քվեարկության արդյունքները բողոքարկելու եւ ընտրողների ստորագրած ցուցակներին ծանոթանալու օրենքով ընձեռված հնարավորություններից:

Նման վիճակի առնչությամբ դիմողի հիմնական փաստարկն այն է, որ չեն օգտվել այդ իրավունքից, քանի որ համակարգը համարել են ոչ արդյունավետ: Սահմանադրական դատարանը նման փաստարկը հիմնավոր չի համարում տվյալ գործընթացին մասնակցողի համար եւ արձանագրում է, որ առանձին տեղամասերում, այնուամենայնիվ, եղել են նման դիմումներ: Ընդ որում, քվեարկության արդյունքների բողոքարկման արդյունքում վերահաշվարկի ժամանակ ընտրողների ստորագրած ցուցակների վերաբերյալ դրանց ծանոթանալու եւ քաղվածքներ կատարելու իրավասություն ունեցող իրավասուբյեկտների կողմից որեւէ անճշտություն չի արձանագրվել: Այս հարցի վերաբերյալ առկա է նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի 05.05.2012թ. ՍԳՌ-1027 որոշումը, որում բերված իրավական դիրքորոշումների՝ համակարգային ամբողջականության մեջ հաշվի առնելը հնարավորություն կտար դիմողին ժամանակին ու ճիշտ օգտագործել օրենքով նախատեսված հնարավորություններն ընտրական ցուցակների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար: Գործի նյութերը վկայում են նաեւ, որ ընտրողների ստորագրած ցուցակներին ծանոթանալու առնչությամբ դիմողի իրավունքների այնպիսի խախտում չի արձանագրվել, ինչը սահմանված կարգով բողոքարկված ու ապացուցողական նշանակություն ձեռք բերած լիներ,

բ/ թվով 1982 ընտրական տեղամասերից 1964-ի վերաբերյալ վերահաշվարկի կամ քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու որեւէ դիմում-բողոք չի ստացվել, ինչը կազմում է ընդհանուր թվի 99.1 տոկոսը: Միաժամանակ, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների եւ կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակներում ընդգրկված ընդհանուր թվով 1007 թեկնածուների կողմից նույնպես որեւէ դիմում չի ներկայացվել քվեարկության արդյունքների վերաբերյալ, չնայած այն հանգամանքին, որ հենց «Հայ ազգային կոնգրես» կուսակցությունների դաշինքի դիմումի քննարկմամբ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը տվել էր պաշտոնական պարզաբանում, որ թեկնածուն կարող է ներկա գտնվել քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացին:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ դիմող կողմն առաջին հերթին շեշտադրում է հավասար ընտրական իրավունքի խախտ-

ման հանգամանքը՝ նկատի ունենալով Հանրապետության Նախագահի, վարչապետի եւ քաղաքական պաշտոններ զբաղեցնող այլ պաշտոնատար անձանց մասնակցությունը նախընտրական քարոզարշավին, ինչպես նաեւ գործադիր իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմինների տարբեր պաշտոնյաների մասնակցությունն ընտրություններին՝ թեկնածուի կարգավիճակով:

Անհրաժեշտ է նախ արձանագրել, որ հավասար ընտրական իրավունքը վերաբերում է ինչպես քվեարկության հավասար իրավունքին, ընտրատարածքների ու տեղամասերի ճիշտ կազմավորմանը, այնպես էլ հնարավորությունների հավասարությանը: Բնականաբար, հնարավորությունների հավասարությունը հավասար ընտրական իրավունքի կարեւոր բաղադրատարրերից է: Վերջինս իր հերթին ներառում է, մասնավորապես, այնպիսի պայմաններ, ինչպիսիք են լրատվամիջոցների կողմից լուսաբանումը, ռադիոյի եւ հեռուստատեսության եթերաժամերի տրամադրումը, ընտրարշավի անկաշկանդ իրականացումը, խոսքի եւ արտահայտվելու ազատության երաշխավորումը, ընտրարշավի ֆինանսավորման թափանցիկությունը եւ այլն: Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողովի) «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրք. ցուցումներ եւ բացատրական գեկույց» 30.10.2002թ. (CDL-AD (2002) 23) փաստաթղթի բացատրական գեկույցի 19-րդ կետում հնարավորությունների հավասարության առումով նշվում է. «Հիմնական գաղափարն այն է, որ հիմնական քաղաքական ուժերը պետք է կարողանան հնչեցնել իրենց կարծիքը երկրի կարեւոր լրատվամիջոցներով, եւ որ բոլոր քաղաքական ուժերին պետք է թույլատրվի հանրահավաքներ կազմակերպել, ներառյալ հասարակական հավաքատեղերում, գրականություն տարածել եւ օգտագործել իրենց ցուցապատառներ փակցնելու իրավունքը»: ՀՀ Ազգային ժողովի 2012թ. մայիսի 6-ի ընտրությունների ժամանակ այս պահանջի կատարումը բոլոր դիտորդական առաքելությունների կողմից հիմնականում դրական է գնահատվել:

Ընտրարշավին պետական իշխանության չեզոքության ապահովմանն է նաեւ ուղղված ՀՀ ընտրական օրենսգրքի 22-րդ հոդվածով քաղաքական, հայեցողական, քաղաքացիական պաշտոններ զբաղեցնող, պետական կամ համայնքային ծառայող հանդիսացող թեկնածուների նախընտրական քարոզչության սահմանափակումները: Նույն նպատակին են ծառայում նաեւ օրենսգրքի 107-րդ հոդվածով նախատեսվող սահմանափակումները: Սահմանադրական դատարանը նախ արձանագրում է, որ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում պաշտոնատար անձանց կողմից ընտրական օրենսգրքով սահմանված սահմանափակումները խախտելու վերաբերյալ համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների, այդ թվում՝ դիմող կուսակցությունների դաշինքի կողմից որեւէ դիմում օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում չի ներկայացվել եւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով քննության առարկա չի դարձել:

Պետական տարբեր պաշտոնյաների, մասնավորապես ՀՀ Նախագահի՝ նախընտրական քարոզչությանը մասնակցելու վերաբերյալ ՀՀ ընտրական օրենս-

գիրքն այլ սահմանափակումներ չի նախատեսել, եւ կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարտավոր էր եւ առաջնորդվել է օրենքի պահանջներով:

Սահմանադրական դատարանը գտնում է՝ առկա ընտրական համակարգի պայմաններում խնդիրը պետք է լուծվի ոչ թե քաղաքական պաշտոններ զբաղեցնողների՝ նախընտրական քարոզչությանը մասնակցությունն արգելելու ճանապարհով, այլ ընտրական օրենսգրքի 18 եւ 22-րդ հոդվածների պահանջների խստագույնս կատարումը երաշխավորելու միջոցով:

Հավասար հնարավորությունների ընձեռնման առումով հավասար ընտրական իրավունքի սահմանադրական սկզբունքի իրացումն այս կերպ է երաշխավորվում ՀՀ ընտրական օրենսգրքով, ինչն արձանագրվել է նաեւ Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի եւ ԺՀՄԻԳ-ի՝ Հայաստանի ընտրական օրենսգրքի վերաբերյալ համատեղ կարծիքում /17 հոկտեմբերի 2011թ. CDL-AD(2011)032/: Օրենսդրի խնդիրն է հիշյալ սահմանափակումների շրջանակի սահմանումը կամ համակարգային այլ լուծումներ առաջադրելը: Տվյալ հարցը, սակայն, չի կարող դիտվել որպես ընտրությունների արդյունքների վերաբերյալ կայացված որոշմանը վերաբերելի վեճ: Դիմողի հարցադրումներն ընտրական իրավունքի հիմնարար սկզբունքի ենթադրյալ խախտումների վերաբերյալ՝ գլխավորապես փաստարկվում են Հայաստանում գործող ընտրական համակարգի իրավակարգավորման մոտեցումներով, ինչն օրենսդիր մարմնի իրավասության խնդիր է: Ինչ վերաբերում է դրանց սահմանադրականությանը, ապա ՀՀ Սահմանադրությունը եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքը նախատեսել են նման հարցերի քննության բոլորովին այլ դատավարական ընթացակարգեր եւ դիմող սուբյեկտների համապատասխան շրջանակ:

Դիմողը նաեւ բարձրացնում է ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու կամ ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու բողոքարկման գործընթացի իրավակարգավորման անարդյունավետության խնդիրը: Օրենքի նորմերի «ողջամտության» կամ սահմանադրական սկզբունքներին համապատասխանության հարցի վերաբերյալ դիմողի փաստարկները վերոնշյալ պատճառներով չեն կարող դիտվել որպես կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշման հետ կապված վեճ: Այսուամենայնիվ, ՀՀ սահմանադրական դատարանը բազմիցս բողոքների եւ դիմումների ներկայացման անբավարար մեխանիզմները ճանաչել է որպես առանցքային գործոն, ինչը խաթարում է քաղաքացիների վստահությունն ընտրությունների արդյունքների նկատմամբ: Նաեւ հաշվի առնելով սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները, ՀՀ ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածը վերանայվեց՝ նախատեսելով քվեարկության արդյունքների անվավերության վերաբերյալ որոշումների, գործողությունների եւ անգործության դեմ յուրաքանչյուր բողոքի հետ կապված կոնկրետ ընթացակարգ: Միաժամանակ, օրենսգրքի 46-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է այն սուբյեկտներին, ովքեր իրավասու են պահանջելու ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների անվավեր ճանաչում: Հաշվի առնելով նաեւ դիմողի փաստարկները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ այս ցանկը կարող է ընդլայնվել՝ ներառե-

լով նաեւ համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող թեկնածուներին: Բացի դրանից, օրենսդրական բարեփոխումների անհրաժեշտություն ունեն քվեարկության արդյունքների բողոքարկման ժամկետների սահմանման, ինչպես նաեւ հարգելի պատճառով բաց թողնված ժամկետների վերականգնման իրավակարգավորման հարցերը:

Գործի նյութերը վկայում են նաեւ, որ դիմողն օրենքով սահմանված ժամկետում ու կարգով այնպիսի քայլեր չի ձեռնարկել ՀՀ ընտրական օրենսգրքի 31, 33, 46, 48, 58, 59, 62-67-րդ եւ մի շարք այլ հոդվածներով նախատեսված վերահսկողական հնարավորությունների իրացման, քվեարկության արդյունքների բողոքարկման ու ընտրողների ստորագրած ցուցակներին ծանոթանալու ուղղությամբ, որոնց արդյունքում այդ իրավունքները հնարավոր չի եղել իրացնել: Սահմանադրական դատարանը գտավ, որ դիմողի խնդրանքը՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովից պահանջել ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների 2012թ. մայիսի 6-ի ընտրությունների քվեարկությանը մասնակցած բոլոր ընտրողների տվյալները՝ պայմանավորված չէ ընտրական գործընթացում դիմողին ներկայացնող իրավասուբյեկտների իրավունքների ոտնահարման հիմնավոր փաստարկմամբ:

9. Դիմողի հարցադրումների գերակշիռ մասը վերաբերում է Հայաստանի Հանրապետությունում ընտրական գործընթացի համակարգային բարեփոխումներին: Այս առնչությամբ վկայակոչվում է նաեւ սահմանադրական դատարանի 2007թ. հունիսի 10-ի ՍԳ-Ո-703 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները: Հաշվի առնելով ընտրական օրենսգրքի նախկին իրավակարգավորումները՝ ՀՀ սահմանադրական դատարանը, մասնավորապես, շեշտադրել էր, որ ընտրական իրավունքի պաշտպանությունը, հատկապես սահմանադրական արդարադատության շրջանակներում, չի ենթադրում ձեւական մոտեցում՝ թե որքանով են խախտվել մարդկանց ակտիվ կամ պասիվ ընտրական իրավունքները: Հարցն ունի ընդգրկման ավելի լայն շրջանակ եւ վերաբերում է ընտրությունների հանրային գործառույթին՝ թե ինչ կերպ եւ ինչպիսի վստահության մեջ է ձեւավորվում ներկայացուցչական կառավարման համակարգը, ինչպես են ներդաշնակվում կառավարմանը մասնակցելու ազատությունը եւ ներկայացուցչական մարմիններ կազմավորելու պարտականությունը, ինչպիսին է անհատների հասարակական վարքագիծն այս գործընթացում: Ուստի ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու հնարավորության ապահովումը պետության պարտավորությունն է, այլ ոչ թե առանձին քաղաքական միավորումների կամ անհատների: Համաձայն ՍԳ-Ո-703 որոշման՝ դրանից եւ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններից է բխում նաեւ ՀՀ նախկին ընտրական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ կետի պահանջը, համաձայն որի՝ «Պետությունը, օրենսդրությամբ վերապահված իրենց լիազորությունների շրջանակում՝ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման եւ կենտրոնական ընտրական հանձնաժողով կազմավորող մարմիններն ու պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում

ընտրությունների նախապատրաստման, կազմակերպման, անցկացման օրինականության համար»:

Սահմանադրական դատարանը նաև գտել էր, որ պետությունը պարտավոր է այնպիսի երաշխիքներ ապահովել, որպեսզի.

ա) ընտրական օրենսդրությունը գերծ լինի ընտրական իրավունքի արդյունավետ իրացումը խոչընդոտող թերություններից,

բ) քաղաքական ընթացիկ գործունեությունը հստակ տարանջատվի նախընտրական քարոզչությունից,

գ) բացառվի քաղաքական ու բարեգործական գործունեության միատեղումը,

դ) ընտրական գործընթացի բոլոր փուլերում կանխվի քաղաքական ու գործարար շահերի միահյուսման հնարավորությունը:

Սահմանադրական դատարանն իր նախկին որոշումներում բազմիցս անդրադարձել է նաև նախընտրական քարոզչության ու բարեգործության հստակ սահմանազատմանը եւ 2011 թվականին ընդունված ՀՀ ընտրական օրենսգրքի, մասնավորապես՝ 18 եւ 22-րդ հոդվածներով ամրագրված պահանջների հստակ կատարման համար անհրաժեշտ իրավական երաշխիքների ապահովմանը: Այս հարցում բացթողումներն ընտրախախտումների հիմնական պատճառն են դառնում:

Սահմանադրական դատարանի հիշյալ իրավական դիրքորոշումներն զգալի չափով հաշվի առնվեցին ՀՀ ընտրական օրենսգրքի բարեփոխումների ընթացքում: Նոր ընտրական օրենսգրքի նախագծի միջազգային փորձագիտական գնահատականները, ինչպես նաև 2012թ. մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրություններում միջազգային դիտորդական առաքելությունների մոտեցումները վկայում են, որ ընտրական գործընթացի իրավակարգավորման առաջընթացն ակնհայտ է: Սակայն սահմանադրական դատարանը գտնում է, որ առանցքային խնդիր է շարունակում մնալ ընտրական գործընթացում քաղաքական ու գործարար շահերի միահյուսման կանխումը, ինչպես նաև քաղաքական ու բարեգործական գործունեության միատեղման բացառումը: Սահմանադրական դատարանը բազմիցս շեշտել է, որ այս խնդրի լուծումն օրգանապես շաղկապված է ՀՀ Սահմանադրության 65-րդ հոդվածի պահանջների հստակ երաշխավորման հետ: Ընտրական օրենսգրքի բարեփոխումները՝ համակարգային առումով ներդաշնակված նաև օրենսդրական այլ լուծումների հետ, նշված հիմնախնդիրը լիարժեք չեն հաղթահարել:

10. Դիմող կողմը, ինչպես նշվեց, ոչ հավաստի է համարում ընտրական ցուցակներում ընդգրկված ընտրողների թիվը, ինչպես նաև քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը: Դիմողի վերլուծական բնույթի դատողությունների հիմքում դրվում է այն վարկածը, որ ընտրական ցուցակներում պետք է ընդգրկված լինեին միայն Հայաստանի Հանրապետությունում բնակվող քաղաքացիները՝ վկայակոչելով նաև «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի պահանջները:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նախ արձանագրել, որ ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հան-

րապետության՝ տասնութ տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու եւ հանրաքվեներին մասնակցելու, ինչպես նաեւ անմիջականորեն եւ կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը եւ տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք»։ Այս իրավունքն օրենքով կարող է բացառվել միայն «...դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաեւ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված եւ պատիժը կրող» քաղաքացիների համար։

ՀՀ ընտրական օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրի հիման վրա կազմվում է համայնքի ընտրողների ցուցակ՝ ըստ ընտրական տեղամասերի, որում ընդգրկվում են սույն օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ համապատասխան ընտրության ժամանակ ընտրելու իրավունք ունեցող անձինք»։ Օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասն իր հերթին սահմանում է, որ «Հայաստանի Հանրապետությունում ընտրելու իրավունք ունեն քվեարկության անցկացման օրը Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած քաղաքացիները»։

Երկրորդ՝ սահմանադրաիրավական ներկա կարգավորումները չեն նախատեսում ընտրողների այնպիսի ցուցակների կազմում, որոնցում չեն ներառվի ընտրական իրավունք ունեցող, հաշվառումից դուրս չեկած եւ հանրապետությունից բացակայող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները։ Միաժամանակ, նկատի ունենալով, որ տեւական ժամանակով Հայաստանից դուրս գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների գերակշիռ մասը, մի կողմից, մշտական բնակության վայրում հաշվառումից դուրս չի գալիս, մյուս կողմից՝ այլ երկրներում հյուպատոսական հաշվառման չի կանգնում, ինչը փաստվել է նաեւ նախկինում սահմանադրական դատարանի պահանջով ներկայացված նյութերով, թերեւս, ցուցակների հետ կապված խնդրի լուծումը կամ պետք է փնտրել ընտրական համակարգի փոփոխության, կամ էլ բնակչության պետական ռեգիստրի վարման կարգի բարեփոխման շրջանակներում։ Երկու դեպքում էլ լուծումը դուրս է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի իրավասության շրջանակներից եւ վերաբերում է ՀՀ ընտրական օրենսգրքի, «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի եւ «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի նորմերի համակարգային ու փոխհամաձայնեցված կանոնակարգմանը։ Ընդ որում, ընտրական ցուցակներին առնչվող բոլոր խնդիրներն իրենց լուծումը պետք է ստանան մինչեւ քվեարկությունը։ Այդ նպատակով է ընտրողների ռեգիստրը համարվում մշտապես վարվող փաստաթուղթ, որը կազմվում է ըստ մարզերի ու համայնքների եւ մատչելի է բոլորին։

11. Դիմողը, որպես իր դիրքորոշումները հիմնավորող լրացուցիչ փաստարկներ, վկայակոչում է նաեւ միջազգային դիտորդական առաքելությունների դիտարկումները։ Չնայած դիտորդական առաքելությունների դիտարկումները դատավարական առումով ապացուցողական նշանակություն չունեն եւ ներկայացվել են որպես ամփոփ վերլուծական եզրահանգումներ, այսուհան-

դերձ, ՀՀ սահմանադրական դատարանը դրանք կարելու է համարում թե՛ սույն գործի քննության եւ թե՛ Հայաստանում ընտրական գործընթացների հետագա բարելավման տեսանկյունից:

Գործի նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ 2012թ. մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների միջազգային դիտարկման նախնական հանգամանքների եւ եզրակացությունների վերաբերյալ դիտորդական առաքելությունների համատեղ հայտարարության մեջ արտահայտված ընդհանուր գնահատականները եւ առանձին հարցերի վերաբերյալ կոնկրետ դիտողություններն ու մտահոգություններն անհրաժեշտ ուշադրության են արժանի:

Ընտրությունների օրը 349 կարճաժամկետ դիտորդներ են տեղակայվել, այդ թվում՝ 60 անդամ ԵԱՀԿ ԽՎ պատվիրակությունից, 25 անդամ ԵԽԽՎ պատվիրակությունից, 10 անդամ ԵԽ պատվիրակությունից: Ընդհանուր առմամբ դիտորդներ են եղել ԵԱՀԿ 42 անդամ երկրներից: Ընտրությունները դիտարկվել են ընդհանուր 1982 ընտրական տեղամասերից ավելի քան 1000-ում: Չայների հաշվարկումը դիտարկվել է բոլոր ընտրատարածքներից 102 ընտրական տեղամասերում: Արդյունքների ամփոփումը դիտարկվել է բոլոր 41 ԸԸՀ-ներում:

Միջազգային դիտորդների կողմից, մասնավորապես, արձանագրվել է, որ՝

- Հայաստանի Հանրապետությունում 2012թ. մայիսի 6-ի Ազգային ժողովի ընտրությունները հատկանշվել են մրցակցային, ակտիվ եւ հիմնականում խաղաղ քարոզարշավի դրսևորմամբ,
- ընտրություններն անցկացվել են իրավական բարեփոխված դաշտի ներքո, ընտրական գործընթացները կազմակերպվել են պրոֆեսիոնալ եւ պատշաճ կարգով, հավաքների, խոսքի եւ տեղաշարժվելու ազատությունները հիմնականում հարգվել են, եւ թեկնածուները, հիմնականում, հնարավորություն են ունեցել ազատ քարոզչություն իրականացնել,
- ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԸ-Ա կողմից մշտադիտարկված լրատվամիջոցներն իրականացրել են հիմնական քաղաքական մասնակիցների լայնածավալ լուսաբանում՝ հնարավորություն ընձեռելով վերջիններիս իրենց ձայնն ընտրողներին հասանելի դարձնել,
- նախընտրական քարոզչությունն ակտիվ էր, մրցակցային եւ ընդհանուր առմամբ խաղաղ,
- մինչ ընտրության օրը ընտրողների ցուցակները հասանելի են եղել հասարակության կողմից ստուգման համար, իսկ իշխանությունները տարբեր միջոցներ են ձեռնարկել դրանց որակը եւ ճշտությունը վերանայելու եւ բարելավելու համար,
- քվեարկության գիշերը միջազգային դիտորդների կողմից դիտարկված 41 ԸԸՀ-ներից 33-ում արդյունքների ամփոփման գործընթացը դրական է գնահատվել, միաժամանակ գրեթե բոլոր ԸԸՀ-ներում գործընթացը եղել է թափանցիկ,
- ԿԸՀ-ն հավատարմագրել է դիտորդներ միջազգային կազմակերպություններից եւ 54 տեղական ՀԿ-ներից, եւ հավատարմագրման գործընթացն ընդհանուր առմամբ ամբողջական է եղել:

Նշվածով հանդերձ, մատնանշվել են ընտրական գործընթացներում տեղ գտած կոնկրետ բացեր ու թերություններ, որոնք, մասնավորապես, խմբավորված ձեռով վերաբերում են հետեւյալներին.

ա/ ընտրական օրենսգրքի քարոզչությանն առնչվող դրույթները երբեմն խախտվել են, մեծամասամբ՝ տեղական իշխանությունների եւ որոշ կուսակցությունների կողմից: Սա ներառում է դասերի ժամանակ քարոզչական միջոցառումներին ուսուցիչների ներգրավվածությունը, քարոզարշավի ընթացքում կուսակցությունների հետ կապ ունեցող կազմակերպությունների կողմից մարդկանց եւ համայնքներին նվերներ տալը եւ քարոզչական նյութեր փակցնելը դպրոցների ու համայնքային նշանակության շենքերին: Տեղ են գտել որոշ փաստեր վարչական ռեսուրսների չարաշահման առումով, ինչը չի նպաստել մասնակիցների համար հավասար մրցակցային դաշտի ապահովմանը,

բ/ այն եղանակը, որով ընտրական հանձնաժողովները եւ դատարանները քննարկել են ընտրություններին առնչվող բողոքները, հաճախ շահագրգիռ անձանց թողել են առանց իրենց բողոքների արդյունավետ քննության՝ հակասելով ԵԱՀԿ 1990թ. Կոպենհագենյան փաստաթղթի 5.10 պարբերությանը, ինչպես նաեւ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 8-րդ հոդվածին: Ընտրական հանձնաժողովները, այդ թվում՝ կենտրոնական, եւ դատարանները հիմնականում որդեգրել են խիստ ձեւական մոտեցում բողոքներն ուսումնասիրելիս: Բողոք բերելու եւ առաջին ատյանի դատարանի որոշումները բողոքարկելու սահմանափակ իրավունքը գումարվում են ընտրական բողոքների արդյունավետ լուծման բացակայությանը, չնայած նրան, որ ըստ դիտորդական առաքելությունների գնահատականի՝ դիմումների եւ բողոքների իրավական բովանդակությունը բավականին խրթին է,

գ/ քվեարկության օրվանից առաջ ԿԸՀ-ն ստացել է մոտ 494 դիմում: Գրանց գերակշռող մասը (461) ներկայացվել է միեւնույն անձի կողմից, որոնք հիմնականում վերաբերել են որպես թեկնածուներ բարձրաստիճան պաշտոնյաների կողմից քարոզչություն իրականացնելուն եւ լրատվության անհամաչափ լուսաբանմանը: ԿԸՀ-ն մերժել է այս բողոքների քննությունը՝ հիմնավորելով, որ անհատ անձինք նման բողոքներ բերելու իրավունք չունեն: Սիեւնույն ժամանակ, ԿԸՀ-ն ուսումնասիրել է այս դիմումներում ներկայացված որոշ փաստեր եւ խախտումներ չի հայտնաբերել: Գրեթե բոլոր մյուս դիմումների քննությունը ԿԸՀ-ի կողմից մերժվել է ձեւական հիմքերով:

Քվեարկության օրվանից առաջ 30 բողոք է ներկայացվել ԸԸՀ-ներին, որոնք հիմնականում առնչվել են քարոզչության կանոնների խախտումներին, ներառյալ՝ ձայների գնում, քարոզչություն դադարեցնելու եւ պաստառների վերաբերյալ կանոնների խախտում: Գործերի մեծ մասը պատշաճ կերպով չի քննարկվել, դ/ միջազգային դիտորդներն արձանագրել են նաեւ մի շարք խախտումներ քվեարկության եւ ձայների հաշվարկման գործընթացներում:

Նշված բնույթի խախտումների օրինակներ են արձանագրել նաեւ տեղական դիտորդական առաքելությունները:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ խախտումները, որ-

քան էլ որ մասնակի բնույթ ունենան կամ վիճահարույց լինեն, ստվերում են ընտրական գործընթացը եւ պետք է անհրաժեշտ ուշադրության առարկա հանդիսանան ու ՀՀ ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով քննարկման առարկա դառնան:

12. Ընտրական գործընթացի տարբեր մասնակիցների, ինչպես նաեւ դիտորդների ու հանրային վերահսկողության առանձին սուբյեկտների արձագանքները վկայում են, որ ՀՀ Ազգային ժողովի 2012թ. մայիսի 6-ի ընտրություններում բարելավված ընտրական օրենսգրքի, կազմակերպական պատշաճ մակարդակի, նախընտրական թափանցիկ ու ակտիվ քարոզչության հետ մեկտեղ, առավել մտահոգիչ խնդիրը շարունակում է մնալ ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության ցածր մակարդակը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այս հարցում իրավական խնդիրների հետ միաժամանակ էական նշանակություն ունեն քաղաքական, աշխարհաքաղաքական, սոցիալ-հոգեբանական, արժեքանական եւ բազմաթիվ այլ բնույթի գործոններ: Իրավական առումով առաջին պլան են մղվում դարձյալ ՀՀ ընտրական օրենսգրքի առանձին լուծումներ: Մասնավորապես, օրենսգրքի 66-րդ հոդվածի 5-րդ մասի՝ անձը հաստատող փաստաթղթի դրոշմակնքման եւ այն առնվազն 12 ժամ պահպանվելու դրույթը վստահության լրացուցիչ երաշխիք ապահովելու փոխարեն զգալի անվստահություն սերմանեց: Չնայած քայլեր ձեռնարկվեցին վիճակը շտկելու համար, այսուհանդերձ, տվյալ իրավադրույթը վերանայման կամ իրավական առավել հստակ երաշխավորման անհրաժեշտություն ունի:

Նկատի ունենալով, որ անվստահության պատճառ են դառնում նաեւ ընտրացուցակները, սահմանադրական դատարանը, հաշվի առնելով նաեւ 2012թ. մայիսի 5-ի ՍԳՌ-1027 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները, գտնում է, որ անհրաժեշտ է ընդլայնել ընտրական գործընթացին մասնակից այն իրավասուբյեկտների շրջանակն ու նրանց հնարավորությունները, ովքեր իրավասու կլինեն ծանոթանալ ընտրողների ստորագրած ցուցակներին ու ինքնուրույն քաղվածքներ կատարել՝ քվեարկության արդյունքների բողոքարկման գործընթացի շրջանակներում: Ընդհանրապես օրենսդրական հետագա բարեփոխումների առանցքը պետք է դառնա բողոքարկման համակարգի գործունակության հետագա բարձրացումը, եւ այս առումով ուշադրության են արժանի նաեւ դիմողի դիտարկումները:

Սույն որոշման 6-րդ կետում նշվեց, որ ընտրական իրավունքի դատական պաշտպանությունն ունի որոշակի առանձնահատկություններ Հայաստանի Հանրապետությունում: Այս հարցում վարչական դատարանի դերի բարձրացումը ենթադրում է նաեւ արդարադատության անհրաժեշտ որակի ապահովում: Միջազգային դիտորդական առաքելությունների դիտարկումները, ինչպես նաեւ ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումները վկայում են, որ այս ոլորտում նույնպես օրենսդրական երաշխիքների ամրապնդման անհրաժեշտություն է առաջանում: Հատկապես կարեւորվում են վարչական դատարանում մման վեճերի քննության դատավարական ընթացակարգերի լուրջ

բարեփոխման եւ Հայաստանի Հանրապետությունում բնակության մասին ներկայացվող տեղեկանքների հետ կապված վեճերի սահմանված ժամկետներում ըստ էության լուծման խնդիրները:

13. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ հանրային մտահոգության առարկան շարունակում է մնալ ընտրական, քաղաքական ու իրավական մշակույթի ցածր մակարդակը, որի բարձրացումը թե՛ պետության եւ թե՛ քաղաքական ուժերի խնդիրն է:

Ընտրական ողջ գործընթացի եւ սահմանադրական դատարան մուտքագրված դիմում-բողոքների վերլուծությունը վկայում է, որ Հայաստանի Հանրապետությունում ընտրական միջավայրի մեծագույն բացերից մեկը շարունակում է մնալ իրավական միջոցներով ընտրական գործընթացի քաղաքական վերահսկման ցածր մակարդակը: Նոր ընտրական օրենսգրքի ընձեռած հնարավորությունները, ինչպես նշվեց, լիարժեք չիրացվեցին թեկնածուների, նրանց վստահված անձանց ու ընտրական հանձնաժողովների համապատասխան անդամների կողմից:

Վերլուծությունները եւ սահմանադրական դատարան կողմերի ներկայացրած նյութերը վկայում են, որ մի քանի անհատներ ու հասարակական կազմակերպություններ շատ ավելի ակտիվ ու արդյունավետ քայլեր են ձեռնարկել ընտրական իրավունքների պաշտպանության ուղղությամբ, քան դրան կոչված հազարավոր վստահված անձինք ու ընտրական հանձնաժողովների անդամներ: Սահմանադրական դատարանը դրական է համարում հատկապես քաղաքացիական հասարակության դերակատարության մեծացումն ընտրական գործընթացի վերահսկման նկատմամբ եւ գտնում է, որ ՀՀ ընտրական օրենսգիրքը հանրային վերահսկման իրավական հիմքերի ամրապնդման ուղղությամբ նոր լուծումներ պետք է նախատեսի:

Լուրջ խնդիրներից մեկն էլ նախընտրական ծրագրերին օրենքով ներկայացվող պահանջների ամրագրման անհրաժեշտությունն է: ՀՀ ընտրական օրենսգրքում այդ ծրագրերի մասին հիշատակվում է միայն 6-րդ հոդվածի 4-րդ մասում՝ նախատեսելով, որ «Համապետական եւ Երեսանի ավագանու ընտրությունների ժամանակ թեկնածուները, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) կարող են ներկայացնել իրենց նախընտրական ծրագրերը կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած էլեկտրոնային ձևով՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրելու համար: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը այդ ծրագրերը տեղադրում է համացանցային կայքում ներկայացվելուց հետո՝ մինչեւ հաջորդ աշխատանքային օրվա ավարտը»: Օրենսգրքի՝ նախընտրական քարոզչությանը նվիրված 5-րդ գլուխը հիմնականում լուծում է տեխնիկականակերպչական բնույթի խնդիրներ: Որեւէ ձևով չի հստակեցվում, թե նախընտրական քարոզչության բուն բովանդակությունը ներկայացնող նախընտրական ծրագրերն ինչ են իրենցից ներկայացնում եւ իրավական ինչ պահանջներ պետք է բավարա-

րեն: Գործի քննությունը վկայում է նաեւ, որ տվյալ նորմը ձեւական բնույթ է կրել ու որեւէ կուսակցության կողմից նման ծրագիր չի ներկայացվել ու տեղակայվել համացանցում:

Այս խնդիրն առավել կարեւորվում է սահմանադրական բարեփոխումներից հետո ՀՀ Ազգային ժողովի դերի մեծացման, ինչպես նաեւ համամասնական ընտրակարգով ընտրությունների դեպքում: Վերջին հաշվով, ընտրողը մանդատը վստահում է ոչ թե անձի, այլ կուսակցությանը, ինչն իր հերթին ինքնուրույն քննարկման հարց է: Այսուհանդերձ, ՀՀ սահմանադրական դատարանը 2009թ. հունիսի 30-ի ՍԳՈ-810 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «Կուսակցությունների մասին ցանկացած դասական սահմանում ելնում է այն ակնհայտ ճշմարտությունից, որ տվյալ միավորման գործունեության նպատակը հասարակության եւ պետության քաղաքական կյանքին մասնակցելն է, քաղաքական իշխանության մաս կազմելը, քաղաքական պատասխանատվություն ստանձնելն ու այն իրականացնելը: Անառարկելի է, որ չի կարող լինել ժողովրդավարական պետական համակարգ՝ առանց անհրաժեշտ քաղաքական կառուցակարգերի: Չի կարող լինել նաեւ հասարակական կայունություն՝ առանց **կարողունակ քաղաքական ուժերի կողմից** երկրի այսօրվա ու վաղվա համար ժողովրդավարական եղանակներով քաղաքական պատասխանատվություն ստանձնելու: **Կուսակցությունն իր հանրային առաքելությունը կարող է իրականացնել միայն այն դեպքում, երբ ոչ միայն ծրագրային ցանկություն, այլև անհրաժեշտ ու բավարար կարողունակություն ունի քաղաքական պատասխանատվություն ստանձնելու համար, եւ դա տեսանելի ու գնահատելի է ընտրողի կողմից:** Համամասնական ընտրակարգով իրականացվող ընտրությունները կոչված են ոչ միայն ձեւավորելու կայուն ու գործունակ օրենսդիր իշխանություն, այլև վճռորոշ դեր ունենալու երկրի քաղաքական կառուցակարգի կայացման ու ամրապնդման գործում:

Միջազգային պրակտիկան վկայում է, որ ընտրական օրենսդրությամբ նախատեսված, այսպես կոչված, «մաքուր» համամասնական ընտրակարգն այնպիսին է, որ ընտրողը ձայնը տալիս է որեւէ քաղաքական ուժի՝ նրա քաղաքական կողմնորոշումների ու հանրությանը ներկայացրած ծրագրային մոտեցումների հիման վրա»:

Իրավական կարգավորումից դուրս թողնելով նախընտրական ծրագրերին ներկայացվող պահանջները՝ ստեղծվում է մի վիճակ, երբ քաղաքական ուժերի բացարձակ հայեցողությանն են թողնվում ընտրողներին ներկայացվող խոստումների ծավալն ու բնույթը: Գործնականում առանձին քաղաքական ուժերի ծրագրային դրույթները շեղվում են ակնկալվող պետաիշխանական գործառնությունների բնույթից: Ավելին, ուռճացված եւ ոչ համարժեք խոստումները բովանդակելով ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի հատկանիշներ՝ կպահանջեն համարժեք իրավական գնահատական:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ համապատասխան ավանդույթների բացակայության պայմաններում ընտրական գործընթացի մասնակիցների ծրագրային մոտեցումների նկատմամբ իրավական կոնկրետ

պահանջի առաջադրումը եւ այն օրենսդրորեն ամրագրելը ժողովրդավարական ընտրությունների կազմակերպման կարեւոր գրավականներից մեկը կարող է հանդիսանալ:

14. Համադրելով դիմող եւ պատասխանող կողմերի ապացուցողական նշանակություն ունեցող փաստարկները, գնահատելով գործում առկա նյութերը՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ, ՀՀ ընտրական համակարգի հետագա զարգացման խնդիրներով հանդերձ, 2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքների վերաբերյալ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի տրամադրության տակ եղած օրենքով նախատեսված հիմքերը՝ իրենց ամբողջության մեջ, օբյեկտիվ իրավական նախադրյալ են հանդիսացել 2012 թվականի մայիսի 13-ի N 265-Ա որոշումն ընդունելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի, 102-րդ հոդվածի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 74-րդ հոդվածների դրույթներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորներ ընտրվելու մասին» Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 13-ի N265-Ա որոշումը թողնել ուժի մեջ:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**31 մայիսի 2012 թվականի
ՍԳՈ- 1028**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՄԵԾԱՍԱՄՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐՈՎ
ԹԻՎ 37 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի ԹԻՎ 31-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ՎԵՃԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

5 հունիսի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը] կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ]

դիմող կողմի] Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով թիվ 37 ընտրատարածքում պատգամավորի թեկնածու Ս. Հարությունյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ թիվ 37 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչներ՝ թիվ 37 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Ա. Ստեփանյանի եւ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ն. Հովհաննիսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25 եւ 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրության արդյունքներով թիվ 37 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 11-ի թիվ 31-Ա որոշման հետ կապված վեճի վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով թիվ 37 ընտրատարածքում պատգամավորի թեկնածու Ս. Հարությունյանի՝ 16.05.2012թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ 2012թ. մայիսի 21-ի աշխատակարգային նիստում քննարկելով վերոհիշյալ դիմումը, որոշում է կայացրել՝ համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ մասերի, 74-րդ հոդվածի 4-րդ մասի՝ գործն ընդունել քննության եւ գործով որպես պատասխանող կողմ ներգրավել թիվ 37 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին: Նշված որոշմամբ գործով զեկուցող է նշանակվել ՀՀ սահմանադրական դատարանի անդամ Վ. Պոդոսյանը:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով դիմումը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններն անցկացվել են 2012 թվականի մայիսի 6-ին՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 68-րդ հոդվածում նախատեսված ժամկետում: Ընտրությունների կազմակերպման եւ անցկացման նպատակով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 41-րդ հոդվածով նախատեսված հիմքերով կազմավորվել է թիվ 37 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը: Ընտրատարածքը ներառում է թիվ 77 ընտրական տեղամաս:

Թիվ 37 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով գրանցվել ու քվեաթերթիկներում ընդգրկվել են Ազգային ժողովի պատգամավորի 4 /չորս/ թեկնածու: Ըստ թիվ 37 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ընտրատարածքում ընտրությունների արդյունքների վերաբերյալ արձանագրության՝ ընտրողների ընդհանուր թիվը 53949 է, իսկ ընտրություններին մասնակցել է 35741 ընտրող: Թեկնածուների օգտին տրված ձայների թիվը 34398 է, որը բաշխվել է հետևյալ կերպ. Հ. Գրիգորյան՝ 19894, Թ. Հակոբյան՝ 11822, Ս. Հարությունյան՝ 1492, Վ. Վարդապարյան՝ 1190: Անճշտությունների թիվը կազմել է 25:

Թիվ 37 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012թ. մայիսի 11-ի թիվ 31-Ա որոշումով թիվ 37 ընտրատարածքից Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավոր է ճանաչվել առավել կողմ ձայներ ստացած Հ. Գրիգորյանը:

2. Դիմողը գտնում է, որ անհրաժեշտ է անվավեր ճանաչել թիվ 37 ընտրատարածքում Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին թիվ 37 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 11-ի թիվ 31-Ա որոշումը:

Գլխողի պնդմամբ՝ թիվ 37 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու Թաթուլ Երվանդի Հակոբյանի գրանցումն անօրինական է, քանի որ նա օրենքով սահմանված կարգով վերջին հինգ տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես չի բնակվել: Սույն փաստի առնչությամբ դիմողը նախ երկու անգամ դիմել է ՀՀ ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչություն՝ նույն վարչության Երեւան քաղաքի Նոր Նորքի բաժանմունքի կողմից Թ. Հակոբյանին տրված՝ վերջին հինգ տարում ՀՀ-ում մշտապես բնակվելու մասին տեղեկանքն անվավեր ճանաչելու խնդրանքով: Գլխումները մերժվել են: Նույն պահանջով դիմողը դիմել է նաեւ ՀՀ վարչական դատարան: Վերջինս իր՝ 02.04.2012թ. որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժել է: Գլխողն այնուհետեւ նոր հայցապահանջ է ներկայացրել ՀՀ վարչական դատարան: ՀՀ վարչական դատարանը՝ հինգ դատավորի կազմով, որպես երրորդ անձ ներգրավելով Թաթուլ Հակոբյանին, քննության է առել հայցադիմումը եւ իր՝ 06.04.2012թ. որոշմամբ մերժել է Ս. Հարությունյանի՝ թիվ 37 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի՝ իր դիմումը մերժելու մասին 01.04.2012թ. եւ Թաթուլ Հակոբյանին որպես ԱԺ պատգամավորի թեկնածու գրանցելու վերաբերյալ որոշումներն անվավեր ճանաչելու հայցադիմումը: Վարչական դատարանը գտել է, որ հայցն անհիմն է, եւ դիմողի կողմից վիճարկվում է ոչ թե Թ. Հակոբյանի ՀՀ-ում մշտապես բնակվելու վերաբերյալ տեղեկանքի տրմանն ուղղված գործողությունը, այլ այդ տեղեկանքի առկայության պայմաններում թիվ 37 ԸԸՀ-ի կողմից թեկնածուին գրանցելու փաստը: Գլխողը գտնում է, որ վարչական դատարանն ապօրինի որոշում է կայացրել՝ մերժելով իր հայցադիմումը:

Ըստ դիմողի՝ ընտրողների անձնագրերում դրված դրոշմակնիքների ժամանակից շուտ անհետանալը նպաստել է ՀՀ-ից բացակայող քաղաքացիների փոխարեն քվեարկություն կազմակերպելուն:

Գլխողը նշում է նաեւ, որ ընտրությունների նախապատրաստման եւ անցկացման ընթացքում տեղի են ունեցել ՀՀ ընտրական օրենսգրքի տարաբնույթ խախտումներ, որոնք, իր կարծիքով, ազդել են ընտրատարածքում ընտրությունների արդյունքների վրա եւ գտնում է, որ քվեարկության արդյունքներն իրենց մեջ պարունակող պարկերում առկա են ի վնաս իրեն կատարված օրինախախտումները հաստատող բազում իրեղեն ապացույցներ: Ըստ դիմողի՝ ընտրությունների արդյունքների վրա ամենաեական ազդեցությունն է ունեցել այն իրողությունը, որ քվեարկության ընթացքում իր օգտին տրված ձայների մեծ մասը հաշվարկվել է ՀՀԿ թեկնածու Հայկ Գրիգորյանի, Թաթուլ Հակոբյանի, անգամ «Հայ ազգային կոնգրես» կուսակցությունների դաշինքի թեկնածու Վարազդատ Վարդազարյանի օգտին:

3. Պատասխանող կողմը գտնում է, որ թիվ 37 ընտրատարածքում քվեարկության արդյունքներով ընդունված որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմողի պահանջն անհիմն է, քանի որ թիվ 37 ընտրատարածքում ՀՀ ԱԺ մեծամասնական ընտրակարգով ընտրությունների ընթացքում տեղի չեն ունեցել այն-

պիսի խախտումներ, որոնք կարող էին հիմք հանդիսանալ հանձնաժողովի կողմից այլ որոշում կայացնելու համար: Ի պատասխան դիմողի ներկայացրած հարցադրումների՝ պատասխանողը նշում է, որ քաղաքացի Թ. Հակոբյանի կողմից ներկայացվել են ՀՀ ընտրական օրենսգրքի 115-րդ հոդվածով սահմանված բոլոր փաստաթղթերը, այդ թվում՝ լիազոր մարմնի տեղեկանքը՝ վերջին հինգ տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու մասին: Ավելին, ՀՀ ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչության պետի գրությամբ եւս մեկ անգամ փաստվել է, որ վարչական մարմնի կողմից կրկին անգամ ուսումնասիրվել են քաղաքացի Թաթուլ Հակոբյանին տեղեկանք տրամադրելու համար հիմք հանդիսացած փաստական հանգամանքները եւ վերջին հինգ տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու մասին օրենքով սահմանված պահանջը չբավարարող տվյալներ չեն հայտնաբերվել:

Ընտրական ցուցակներում ընդգրկված ընտրողների թվի առնչությամբ պատասխանողը նշում է, որ ՀՀ ընտրական օրենսգրքի վերլուծությունից բխում է, որ ընտրական իրավունք ունեցող ՀՀ այն քաղաքացիները, ովքեր բացակայում են Հայաստանի Հանրապետությունից՝ անկախ ՀՀ ժամանելու հաճախականությունից կարող էին եւ պետք է ընդգրկված լինեին ընտրողների ցուցակներում: Դա պայմանավորված է ՀՀ քաղաքացու ընտրական իրավունքի իրացման հնարավորությամբ: Իսկ ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ հիշյալ անձանց փոխարեն քվեարկություն է տեղի ունեցել, ապա պատասխանողը գտնում է, որ այդ պնդումն անհիմն է, քանի որ դիմողը չի ներկայացրել որեւէ դեպք այլ անձի փոխարեն քվեարկություն կատարելու առնչությամբ:

Անձը հաստատող փաստաթղթերի վրա դրվող դրոշմակնիքների առնչությամբ պատասխանողը նշում է, որ դրոշմակնիքի արագ անհետանալու փաստը չի կարող ազդեցություն ունենալ քվեարկության արդյունքների վրա, քանզի թանաքի կիրառումն ընդամենը լրացուցիչ, սակայն ոչ միակ միջոցն է կրկնակի քվեարկությունը բացառելու համար: Ավելին, ԸԸՀ որեւէ դիմում-բողոք չի ներկայացվել եւ ՏԸՀ-ների գրանցամատյաններում չկան գրառումներ ընտրական տեղամասերում կրկնակի քվեարկության դեպքերի մասին:

Դիմողի կողմից մատնանշված ընտրախախտումների տարբեր դեպքերի առնչությամբ պատասխանողը գտնում է, որ դրանք ընդհանուր հարցադրումներ են, եւ դիմողը որեւէ կոնկրետ փաստով դրանց հիմնավորումներ չի ներկայացնում: Միակ օրինակը, որ բերում է դիմողը թիվ 37/37 ընտրատեղամասի վերաբերյալ, չնայած տվյալների աղբյուրի անհայտ լինելուն, դարձյալ վկայում է, որ դիմողի ներկայացրած տվյալների եւ պաշտոնական արդյունքների միջեւ որեւէ տարբերություն առկա չէ տեղամասում քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի եւ հաղթող ճանաչված թեկնածուին տրված ձայների միջեւ:

Ինչ վերաբերում է քվեարկության արդյունքներին, ապա պատասխանողը գտնում է, որ դիմողը դրանք չի բողոքարկել կամ դրանց վերահաշվարկի որեւէ պահանջ ընտրատարածքային ընտրական հանձնաժողով չի ներկայացրել, իսկ դիմումում ներկայացվող դատողություններն անհիմն են ու չփաստարկված:

4. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողի առաջին հիմնական փաստարկը վերաբերում է Թաթուլ Հակոբյանին թիվ 37 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի թեկնածու գրանցելու վերաբերյալ թիվ 37 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 01.04.2012թ. թիվ 21-Ա որոշման ենթադրյալ անօրինականությանը:

Սահմանադրական դատարանն իր՝ 2012թ. մայիսի 31-ի ՍԳՈ-1028 որոշման մեջ, անդրադառնալով թեկնածուների գրանցման շուրջ ծագած վեճերին եւ վերջիններիս առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանի ու ՀՀ վարչական դատարանի իրավագործությունների տարանջատման խնդրին, վերահաստատելով իր՝ ՍԳՈ-433, ՍԳՈ-703 եւ ՍԳՈ-736 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները, ամրագրել է, որ «...բոլոր այն հարցերը, որոնք առնչվում են ընտրությունների ժամանակ թեկնածուների գրանցման շուրջ առաջացած վեճերին, որոնց լուծումն օրենքով սահմանված կարգով վերապահված է ՀՀ վարչական դատարանին, սահմանադրական դատարանում առանձին քննության առարկա չեն կարող հանդիսանալ, իսկ որպես սպացուցողական հիմք ընդունվում են վարչական դատարանի վերջնական ակտերը»: Դա բխում է ՀՀ Սահմանադրության 5 եւ 100-րդ հոդվածների պահանջներից:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողի կողմից թիվ 37 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի վերոհիշյալ 01.04.2012թ. թիվ 21-Ա որոշումը վիճարկվել է ՀՀ վարչական դատարանում: Նշված որոշումն անվավեր ճանաչելու՝ դիմողի պահանջը մերժվել է ՀՀ վարչական դատարանի 2012թ. ապրիլի 6-ի վերջնական որոշմամբ: Միաժամանակ, ՀՀ վարչական դատարանն իր որոշման մեջ որպես գրանցման հետ կապված խնդրո առարկա վեճում դիմողի իրավունքների պաշտպանության պատշաճ միջոց է մատնանշել ՀՀ ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչության Երեւան քաղաքի Նոր Նորքի բաժնի գործողության վիճարկումը վարչական դատարանում, ինչը դիմողը չի իրացրել:

Բոլոր դեպքերում, համաձայն ՀՀ Սահմանադրության 5 եւ 100-րդ հոդվածների, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի, ՀՀ ընտրական օրենսգրքի 46 եւ 118-րդ հոդվածների, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 145 եւ 150-րդ հոդվածների՝ ՀՀ սահմանադրական դատարանն իրավասու չէ ընտրությունների արդյունքներով ընդունված որոշման հետ կապված վեճի շրջանակներում քննության առարկա դարձնել բոլոր այն հարցերը, որոնց լուծման իրավասությամբ օրենքով սահմանված կարգով օժտված է ՀՀ վարչական դատարանը, եւ որի որոշումներն այդ հարցերով վերջնական են ու վերանայման ենթակա չեն, կամ գնահատել վարչական դատարանի դատական ակտի իրավաչափությունը:

Ինչ վերաբերում է սահմանադրական դատարանին ուղղված՝ դիմողի միջնորդությանը՝ լրացուցիչ ապացույցների ձեռքբերման նպատակով համապատասխան հանձնախմբեր ձեւավորելու առնչությամբ, ապա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի, 74-րդ հոդվածի 8-րդ մասի հիման վրա հա-

մապատասխան հանձնախմբեր կարող են ձեռավորվել **նախ**՝ միայն սահմանադրական դատարանի իրավասությանը վերաբերող հարցերի կապակցությամբ ապացույցներ ձեռք բերելու նպատակով, **երկրորդ**՝ երբ ակնհայտ փաստարկվում է, որ արգելափակվել են դիմողի կամ նրա վստահված անձանց իրավունքները կոնկրետ վերահսկողական գործողություն իրականացնելիս, եւ նման հանգամանքը հաշվի չի առնվել ընտրության արդյունքներն ամփոփելու ժամանակ: Դիմողը դատարանին նման փաստարկներ ու հիմնավորումներ չի ներկայացրել:

5. Սահմանադրական դատարանն իր՝ 2007թ. հունիսի 10-ի ՍԳՈ-703 որոշման մեջ արտահայտել է հետեւյալ իրավական դիրքորոշումը. «...եթե դիմող կողմն ընտրությունների նախապատրաստման, անցկացման եւ արդյունքների ամփոփման գործընթացով պայմանավորված ընտրական հանձնաժողովների, իրավասու այլ մարմինների որոշումները, գործողությունները կամ անգործությունը մինչեւ սահմանադրական դատարան դիմելը չէ ընտրական օրենսգրքով եւ իրավական այլ ակտերով նախատեսված՝ արտադատական (վարչական) կամ դատական կարգով չի բողոքարկել, այսինքն՝ օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգով եւ ժամկետներում չի օգտագործել (սպառել) իր ընտրական իրավունքների պաշտպանության՝ օրենքով նախատեսված բոլոր միջոցները, ապա լիարժեք չեն դառնում սահմանադրական դատարանում ընտրությունների արդյունքներով քննվող հանրային-իրավական վեճի շրջանակներում ապացուցողական նշանակություն ունեցող փաստեր ներկայացնելու եւ դրանցով իր փաստարկները հիմնավորելու նրա դատավարական հնարավորությունները»: Նշված իրավական դիրքորոշմանը համապատասխան գնահատելով դիմողի ներկայացրած մյուս բոլոր փաստարկները՝ սահմանադրական դատարանն արձանագրում է.

առաջին՝ դիմողի առանձին պնդումներ վերաբերում են նախընտրական քարոզչության կազմակերպման ընթացքում օրենքի պահանջների ենթադրյալ խախտումներին: Այդ խախտումների առնչությամբ, սակայն, դիմողն օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում իրավասու մարմիններին համապատասխան դիմում չի ներկայացրել եւ չէ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով քննության առարկա չի դարձրել,

երկրորդ՝ դիմողի պնդմամբ ընտրախախտումներ են տեղի ունեցել նաեւ քվեարկության փուլում: Վերոհիշյալ իրավական դիրքորոշմանը համապատասխան՝ նշված ենթադրյալ խախտումների վերաբերյալ պնդումները սահմանադրական դատարանում կարող էին ապացուցողական նշանակություն ստանալ օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգով եւ ժամկետներում դիմողի ընտրական իրավունքների պաշտպանության համապատասխան միջոցների օգտագործման արդյունքում ձեռք բերված նյութերով: Մինչդեռ դիմողը որեւէ տեղամասի առնչությամբ չի ներկայացրել քվեարկության արդյունքների վերահաշվարկի կամ տեղամասերում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու պահանջ: Այս փաստը հաշվի առնելով՝ սահմանադրական դատարանն

անհիմն ու ժամանակավրեպ է համարում նաեւ դիմողի միջնորդությունը դիմումում թվարկված թվով 40 եւ մյուս /այսինքն՝ բոլոր/ ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների վերահաշվարկ կատարելու վերաբերյալ:

Ինչ վերաբերում է ընտրողների ցուցակներում Հայաստանի Հանրապետությունից բացակայող քաղաքացիների ընդգրկման՝ դիմողի կողմից առաջադրված խնդրին, ապա դրա վերաբերյալ իր մոտեցումներն ու իրավական դիրքորոշումները սահմանադրական դատարանն արտահայտել է իր՝ 2012թ. մայիսի 31-ի ՍԳՈ-1028 որոշման մեջ:

6. Գործի նյութերի համադրված վերլուծությունը վկայում է, որ սույն գործի բնորոշ առանձնահատկություններն ամփոփ ձեռով հանգում են հետևյալներին: **Առաջին՝** դիմողը, ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրության արդյունքներով թիվ 37 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշման հետ կապված վեճի շրջանակներում, բողոքարկում է ոչ թե մեծամասնական ընտրակարգով ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր ընտրված, այլ ընտրողների ձայների թվով երկրորդ տեղն զբաղեցնող թեկնածուի՝ որպես այդպիսին գրանցման իրավաչափության հարցը: Բացի նրանից, որ, ինչպես նշվեց, օրենքով սահմանված կարգով թեկնածուների գրանցման վեճերը քննվում եւ վերջնական լուծում են ստանում ՀՀ վարչական դատարանում, նաեւ ակներեւ է, որ պասիվ ընտրական իրավունքի իրացման առումով եթե նույնիսկ քվեարկության արդյունքներով երկրորդ տեղն զբաղեցրած թեկնածուի օգտին տրված ձայներն ամբողջությամբ գումարվեին դիմողի օգտին տրված ձայներին, միեւնույն է՝ այն 6580 ձայնով կամ 33.1 տոկոսով պակաս կլիներ ընտրված ճանաչված թեկնածուի օգտին տրված ձայներից:

Երկրորդ՝ դիմողն ընդհանուր դժգոհություն արտահայտող դատողություններից բացի դատական քննության համար անհրաժեշտ ապացուցողական նշանակություն ունեցող որեւէ փաստարկ չի ներկայացնում քվեարկության արդյունքների ոչ հավաստի լինելու հիմքով իր պասիվ ընտրական իրավունքի խախտումը հիմնավորելու վերաբերյալ, ինչը պարտավոր կլիներ հաշվի առնել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը վեճի առարկա որոշումն ընդունելիս: Դիմողը ՀՀ ընտրական օրենսգրքով ընձեռված որեւէ վերահսկողական իրավասություն սահմանված կարգով չի իրացրել՝ փաստելու համար քվեարկության արդյունքների հետ կապված այնպիսի իրավախախտումներ, որոնք ազդել են իր ընտրական իրավունքի իրացման վրա: Դիմողը գլխավորապես հենվում է տարաբնույթ դատողությունների ու կարծիքների, այլ ոչ թե ապացուցողական նշանակություն ունեցող կոնկրետ փաստերի վրա, ինչը դատական գործընթացում ընդունելի չէ:

Երրորդ՝ դիմողը չի ներկայացնում այնպիսի կոնկրետ փաստեր, որոնք հիմնավոր ձեռով վկայեին իր կամ իր վստահված անձանց իրավունքների ռոտահարման մասին՝ տեղամասերում քվեարկության արդյունքների վերահաշվարկի կամ դրանք անվավեր ճանաչելու ուղղությամբ օրենքով սահմանված կարգով քայլեր իրականացնելիս: Այդ պատճառով էլ, ինչպես նշվեց, իրավական հիմքից

գուրկ է դիմողի միջնորդությունը՝ բացառապես բոլոր ընտրական տեղամասերում սահմանադրական դատարանի կողմից վերահաշվարկներ կատարելու առնչությամբ: ՀՀ ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերի համաձայն՝ դիմողն անձամբ եւ իր վստահված անձինք ժամանակին ու օրենքով սահմանված կարգով նման պահանջ կարող էին ներկայացնել ու իրականացնել ցանկացած ընտրական տեղամասի վերաբերյալ, ինչը, ըստ գործի նյութերի, չի արվել: Ուստի քվեարկության արդյունքների ոչ հավաստիության պարզապես վկայակոչմամբ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը վիճարկելն իրավական առումով դառնում է չփաստարկված, իսկ նման ձեւով նոր վերահաշվարկի պահանջի առաջադրումը դուրս է գալիս նաեւ սահմանադրաիրավական վեճի շրջանակներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63, 64 եւ 74-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. «Թիվ 37 ընտրատարածքում Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին» թիվ 37 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 11-ի թիվ 31-Ա որոշումը թողնել ուժի մեջ:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**5 հունիսի 2012 թվականի
ՍԳՈ- 1029**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՄԵԾԱՍԱՄՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ
ԹԻՎ 3 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի ԹԻՎ 23-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԵՏ ԿԱՊԿԱԾ
ՎԵՃԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

8 հունիսի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թովուկյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող կողմի՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով թիվ 3 ընտրատարածքում պատգամավորի թեկնածու Մ. Գասպարյանի ներկայացուցիչ Ա. Գասպարյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչներ՝ թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալ Վ. Չեյնալյանի եւ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ն. Հովհաննիսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25 եւ 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրության արդյունքներով թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 11-ի թիվ 23-Ա որոշման հետ կապված վեճի վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով թիվ 3 ընտրատարածքում պատգամավորի թեկնածու Մ. Գասպարյանի՝ 16.05.2012թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը 2012թ. մայիսի 21-ի աշխատակարգային նիստում քննարկելով վերոհիշյալ դիմումի ընդունելիության հարցը՝ որոշում է կայացրել «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ մասերի եւ 74-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին համապատասխան գործն ընդունել քննության եւ որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավել թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին: Նշված որոշմամբ գործով զեկուցող է նշանակվել ՀՀ սահմանադրական դատարանի անդամ Կ. Բալայանը:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, կողմերի եւ նրանց ներկայացուցիչների գրավոր բացատրությունները, հետազոտելով դիմումը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններն անցկացվել են 2012 թվականի մայիսի 6-ին՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 68-րդ հոդվածում նախատեսված ժամկետում: Ընտրությունների կազմակերպման եւ անցկացման նպատակով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 41-րդ հոդվածով նախատեսված հիմքերով կազմավորվել է թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը: Ընտրատարածքը ներառում է թիվ 35 ընտրական տեղամաս:

Թիվ 3 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով գրանցվել ու քվեա-թերթիկներում ընդգրկվել են Ազգային ժողովի պատգամավորի 4 /չորս/ թեկնածու: Ըստ թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ամփոփիչ արձանագրության՝ ընտրողների ընդհանուր թիվը 64027 է, իսկ ընտրություններին մասնակցել է 37596 ընտրող: Թեկնածուների օգտին տրված ձայների թիվը 35035 է, որը բաշխվել է հետևյալ կերպ. Գասպարյան Մանուել Մանուկի՝ 5145, Շահգեղյան Սիեր Լեոնի՝ 2272, Ստեփանյան Արթուր Արսենի՝ 14332, Տոնոյան Աշոտ Ռոբերտի՝ 13286: Անճշտությունների թիվը կազմել է 214:

Թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012թ. մայիսի 11-ի թիվ 23-Ա որոշումով թիվ 3 ընտրատարածքից Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավոր է ընտրվել Ա. Ստեփանյանը:

2. Գիմելով սահմանադրական դատարան՝ դիմողը խնդրել է.

- անվավեր ճանաչել «Թիվ 3 ընտրատարածքի մեծամասնական պատգամավորի թեկնածու Մանուել Գասպարյանի դիմումների քննարկման մասին» թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012թ. մայիսի 11-ի թիվ 20-Ա որոշումը,

- անվավեր ճանաչել «Թիվ 3 ընտրատարածքում Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին» թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012թ. մայիսի 11-ի թիվ 23-Ա որոշումը,
- չկայացած ճանաչել 2012թ. մայիսի 6-ի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրությունների թիվ 3 ընտրատարածքի մեծամասնական ընտրակարգով ընտրությունները:

Սահմանադրական դատարանն իր՝ 21.05.2012թ. ՍԳ-ԱՌ-32 աշխատակարգային որոշմամբ գործը քննության է ընդունել «Թիվ 3 ընտրատարածքում Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին» թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012թ. մայիսի 11-ի թիվ 23-Ա որոշումը վիճարկելու մասով:

Դիմող կողմը թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 20-Ա որոշման առնչությամբ նշում է, որ թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, 2012թ. մայիսի 6-ի քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովներին հանձնարարելով ՀՀ ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հատուկ նյութի փոխարեն օգտագործել սովորական թանաք, խախտել է ՀՀ ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը:

Ինչ վերաբերում է թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի՝ «Թիվ 3 ընտրատարածքում Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին» 2012թ. մայիսի 11-ի թիվ 23-Ա որոշմանը, ապա դիմողն այդ որոշումը դիտարկում է որպես ՀՀ ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջի վերոհիշյալ խախտման «տրամաբանական անօրինական շարունակություն»:

3. Պատասխանող կողմը թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի՝ «Թիվ 3 ընտրատարածքի մեծամասնական պատգամավորի թեկնածու Մանուել Գասպարյանի դիմումների քննարկման մասին» 2012թ. մայիսի 11-ի թիվ 20-Ա որոշման առնչությամբ գտնում է, որ վերջինս չի կարող վիճարկվել սահմանադրական դատարանում՝ ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետի հիմքով ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերի շրջանակում, քանի որ չի հանդիսանում ընտրության արդյունքներով կայացված որոշում: Դիմող կողմը գրկված չի եղել այդ որոշումը վերադատության կամ դատական կարգով բողոքարկելու իրավունքից: Սահմանադրական դատարան ներկայացված դիմումի միակ հիմքը վերաբերում է ընտրողի անձը հաստատող փաստաթղթի դրոշմակնքման համար տեղամասային ընտրական հանձնաժողովին հատկացված նյութին: Այս խնդրի առնչությամբ պատասխանողը նշում է, որ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը եւ թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, ՀՀ ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 6-րդ մասով իրենց վերապահված իրավունքից օգտվելով, լուծում են տվել խնդրին՝ հանձնարարելով հատուկ նյութի փոխարեն օգտագործել սովորական թանաք:

Պատասխանողը հիմնագուրկ է և մերժման ենթակա է համարում նաեւ պատգամավորի ընտրությունը չկայացած ճանաչելու՝ դիմողի խնդրանքը, քանի որ առկա չէ ՀՀ ընտրական օրենսգրքի 126-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված՝ պատգամավորի ընտրությունը չկայացած համարելու հիմքերից որեւէ մեկը:

4. Բնության առարկա դիմումի ուսումնասիրության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է.

Ոսիս՝ դիմողն ըստ էության վիճարկում է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի և թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի՝ 2012թ. մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ քվեարկության ընթացքում ընտրողների անձը հաստատող փաստաթղթերում ՀՀ ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հատուկ նյութի փոխարեն սովորական (չանհետացող) թանաք օգտագործելու հանձնարարության (գործողության) իրավաչափությունը և ըստ այդմ սահմանադրական դատարանին ներկայացրել է թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի՝ «Թիվ 3 ընտրատարածքի մեծամասնական պատգամավորի թեկնածու Մանուել Գասպարյանի դիմումների քննարկման մասին» 2012թ. մայիսի 11-ի թիվ 20-Ա որոշումն անվավեր ճանաչելու խնդրանք:

Երկրորդ՝ դիմողը ներկայացնելով նաեւ թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի՝ «Թիվ 3 ընտրատարածքում Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին» 2012թ. մայիսի 11-ի թիվ 23-Ա որոշումն անվավեր ճանաչելու խնդրանք՝ վերջինս հիմնավորելու համար չի ներկայացրել որեւէ այլ փաստարկ: Ավելին՝ այդ որոշման ենթադրյալ ոչ իրավաչափությունը դիմողն ածանցյալ է համարում թիվ 3 ԸԸՀ-ի 2012թ. մայիսի 11-ի վերոհիշյալ թիվ 20-Ա որոշման ենթադրյալ ոչ իրավաչափությունից և պայմանավորում է ընտրատարածքում տեղամասային ընտրական հանձնաժողովների կողմից ՀՀ ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հատուկ նյութի փոխարեն սովորական (չանհետացող) թանաք օգտագործելու փաստով:

Երրորդ՝ ներկայացնելով նաեւ 2012թ. մայիսի 6-ի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրությունների թիվ 3 ընտրատարածքի մեծամասնական ընտրակարգով ընտրությունները չկայացած ճանաչելու պահանջ՝ դիմողը չի վկայակոչել որեւէ փաստ, որը կհիմնավորեր պատգամավորի ընտրությունը չկայացած ճանաչելու համար ՀՀ ընտրական օրենսգրքի 126-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված որեւէ հիմքի առկայություն, համաձայն որի՝ «Պատգամավորի ընտրությունը համարվում է չկայացած, եթե՝

1) քվեարկված միակ թեկնածուին կողմ չեն քվեարկել անհրաժեշտ թվով ընտրողներ.

2) առավելագույն թվով կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացած թեկնածուն մահացել է մինչև ընտրությունների արդյունքներն ամփոփելը.

3) սույն օրենսգրքով թեկնածուների գրանցման համար սահմանված ժամ-

կետում եւ կարգով թեկնածու չի գրանցվել, կամ նույն ժամկետում գրանցվել է 2-ից պակաս թեկնածու»:

Չորրորդ՝ դիմողը միջնորդել է սահմանադրական դատարանին՝ «դիմել համապատասխան իրավասու պետական մարմնին /քանի որ մեզ համար պարզ չէ, թե ՀՀ օրենսդրությամբ ո՞ր պետական մարմնին է իրավասու/ տալու պարգաբանում, թե ինչպիսի ակտ է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը», ինչը սահմանադրական դատարանը համարել է իրավաբանորեն անհիմն ու մերժելի, նկատի ունենալով նաեւ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումները:

5. ՀՀ սահմանադրական դատարանը նաեւ արձանագրում է, որ իր պասիվ ընտրական իրավունքի խախտումը դիմողը պայմանավորում է միայն ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործողություններով՝ կապված չանհետացող թանաքի փոխարեն անձը հաստատող փաստաթղթի դրոշմակնքման համար սովորական թանաքի օգտագործման վերաբերյալ տրված հանձնարարականի հետ: ՀՀ ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 5-րդ կետի վերաբերյալ սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում արտահայտել է 2012թ. մայիսի 31-ի ՍԳՈ-1028 որոշման մեջ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրոք տվյալ հարցը ՀՀ ընտրական օրենսգրքում լավագույն լուծումը չի ստացել, եւ նախատեսվող նյութը, գործնականում չպահպանելով ակնկալվող քիմիական հատկությունները, անձը հաստատող փաստաթղթի դրոշմակնքումից հետո նախատեսված ժամկետից շուտ է անհետացել՝ անվստահություն առաջացնելով ընտրական գործընթացի նկատմամբ: Ընտրական հանձնաժողովները պարտավոր էին ՀՀ ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն օպերատիվ լուծում գտնել տվյալ իրավիճակում՝ հանձնարարելով հատուկ նյութին խառնել սովորական թանաք, որպեսզի անձը հաստատող փաստաթղթի դրոշմակնքումից հետո այն նախատեսված ժամկետից շուտ չանհետանա: Որքանով էր իրավաչափ այդ լուծումը, կարող էր բողոքարկվել ու դատական կարգով գնահատվել նույն օրենսգրքով սահմանված կարգով: Այլ հարց է, թե այդ լուծումն ինչպես կարող էր ազդել կամ ազդել է այս կամ այն թեկնածուի ընտրվելու իրավունքի իրացման վրա:

Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողը որեւէ փաստարկ չի ներկայացնում, որով հիմնավորվի, որ թանաքի բնույթի փոփոխությունն այս կամ այն կերպ ազդել է ընտրության արդյունքներով թեկնածուներին տրված ձայների հարաբերակցության վրա եւ խախտվել է իր պասիվ ընտրական իրավունքը: Գործնականում դիմումի հիմնական էությունը ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի հանձնարարականի /գործողության/ եւ վերջինիս՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից կիրառման իրավաչափության գնահատման պահանջն է: Ընդ որում, համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (ան-

գործությունը) (բացառությամբ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի եւ համայնքի ղեկավարի ու ավագանու անդամների ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումների) կարող են բողոքարկվել կենտրոնական ընտրական հանձնաժողով: Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումները կարող են բողոքարկվել սահմանադրական դատարան»: Իսկ նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) (բացառությամբ համապետական ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումների) կարող են բողոքարկվել վարչական դատարան»:

6. Համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի, ՀՀ ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի՝ օրենքով սահմանված կարգով ՀՀ սահմանադրական դատարանի քննությանն են ենթակա բացառապես ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը: Ըստ այդմ՝ ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրությունների առնչությամբ սահմանադրական դատարանում կարող է վիճարկվել միայն տվյալ ընտրատարածքում պատգամավոր ընտրվելու մասին ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը՝ վերջինիս ոչ իրավաչափությունը հիմնավորող կոնկրետ փաստարկների հիման վրա: Իրավական այս պահանջներից ելնելով՝ սահմանադրական դատարանն իր՝ 21.05.2012թ. ՍԳ-ԱՌ-32 աշխատակարգային որոշմամբ սույն գործն ընդունել էր քննության, ինչը՝ 24.05.2012թ. սահմանադրական դատարան ներկայացված գրությամբ, դիմողի կողմից բնորոշվել է որպես իր դիմումում «ընդգրկված խնդրանքի», այսպես կոչված, աղավաղում:

Գիմողը, ինչպես նշվեց, չի ներկայացրել որեւէ այլ փաստարկ կամ հիմնավորում թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի՝ 2012թ. մայիսի 11-ի թիվ 23-Ա որոշման ոչ իրավաչափությունը հիմնավորելու վերաբերյալ: Այն բացառապես պայմանավորում է ընտրատարածքում տեղամասային ընտրական հանձնաժողովների կողմից ՀՀ ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հատուկ նյութի փոխարեն ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի ցուցումով անձը հաստատող փաստաթղթի դրոշմակնքման համար սովորական (չանհետացող) թանաք օգտագործելու փաստով: Արդյունքում՝ դիմողը խնդիր է առաջադրում գնահատել ՀՀ կենտրոնական ու թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների գործողությունների իրավաչափությունը: Ավելին, դիմողը թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի բացատրության կապակցությամբ ներկայացրած նկատառումների մեջ շեշտում է. «Պատասխանող կողմը չի հասկացել, որ դիմումով չի վիճարկվել ընտրությունների արձանագրված արդյունքները»:

Գիմումում նաեւ առաջադրվում է որեւէ իրավական հիմնավորում չունեցող պահանջ՝ ընտրությունը չկայացած ճանաչելու վերաբերյալ:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ, **նախ՝** ՀՀ Ազգային ժողովի 2012թ. մայիսի 6-ի ընտրություններում թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքներով միայն դիմողի ներկայացրած փաստարկը հաշվի առնելով այլ որոշման կայացումն իրավաչափ համարվել չէր կարող՝ ոչ միայն պատգամավորության թեկնածուների, այլև ընտրողների իրավունքների պաշտպանության տեսանկյունից: **Երկրորդ՝** գործի նյութերի համադրված վերլուծությունը վկայում է նաև, որ որքան էլ գնահատելի լինի դիմողի քայլը, ինչպես ինքն է նշում, ցուցաբերելով «ՀՀ քաղաքացուն արժանավայել վարքագիծ ՀՀ օրենսդրությանը նպաստելու առումով», այսուամենայնիվ, իր հարցադրումներով առաջադրում է ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետի եւ 101-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի պահանջներին չհամապատասխանող իրավական վեճ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63, 64 եւ 74-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Թիվ 3 ընտրատարածքում Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին» թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 11-ի թիվ 23-Ա որոշումը թողնել ուժի մեջ:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**8 հունիսի 2012 թվականի
ՍԳՈ- 1030**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՄԵԾԱՄԱՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐՈՎ
ԹԻՎ 9 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի ԹԻՎ 16-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՃԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

12 հունիսի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուկյանի, Ա. Խաչատրյանի (գեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25 եւ 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրության արդյունքներով թիվ 9 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 11-ի թիվ 16-Ա որոշման հետ կապված վեճի վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով թիվ 9 ընտրատարածքում պատգամավորի թեկնածու Լ. Ջուրաբյանի՝ 16.05.2012թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը 2012թ. մայիսի 21-ի աշխատակարգային նիստում քննարկելով վերոհիշյալ դիմումի ընդունելիության հարցը, որոշում է կայացրել «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ մասերի եւ 74-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին համապատասխան գործն ընդունել քննության եւ որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավել թիվ 9 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին: Նշված որոշմամբ գործով գեկուցող է նշանակվել ՀՀ սահմանադրական դատարանի անդամ Ա. Խաչատրյանը:

Սահմանադրական դատարանում դիմող կողմի ներկայացուցիչն է փաստաբան Վ. Գրիգորյանը, պատասխանող կողմի ներկայացուցիչներն են՝ թիվ 9 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Ե. Տերտերյանը եւ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ն. Հովհաննիսյանը:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, հետազոտելով դիմումը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններն անցկացվել են 2012 թվականի մայիսի 6-ին՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 68-րդ հոդվածում նախատեսված ժամկետում: Ընտրությունների կազմակերպման եւ անցկացման նպատակով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 41-րդ հոդվածով նախատեսված հիմքերով կազմավորվել է թիվ 9 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը: Ընտրատարածքը ներառում է թվով 34 ընտրական տեղամաս:

Թիվ 9 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով գրանցվել ու քվեա-թերթիկներում ընդգրկվել են Ազգային ժողովի պատգամավորի 4 (չորս) թեկնածու: Ըստ թիվ 9 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ամփոփիչ արձանագրության՝ ընտրողների ընդհանուր թիվը 55742 է, իսկ ընտրություններին մասնակցել է 31902 ընտրող: Թեկնածուների օգտին տրված ձայների թիվը 29958 է, որը բաշխվել է հետևյալ կերպ. Ն. Ազիզյան՝ 8933, Լ. Զուրաբյան՝ 4290, Ռ. Հակոբյան՝ 4213, Ռ. Սադոյան՝ 12522: Անճշտությունների թիվը կազմել է 116:

Թիվ 9 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012թ. մայիսի 11-ի թիվ 16-Ա որոշումով թիվ 9 ընտրատարածքից Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավոր է ընտրվել Ռ. Սադոյանը:

2. Դիմելով սահմանադրական դատարան՝ դիմողը գտնում է, որ անհրաժեշտ է անվավեր ճանաչել «Թիվ 9 ընտրատարածքում Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին» թիվ 9 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012թ. մայիսի 11-ի թիվ 16-Ա որոշումը եւ ընտրությունների արդյունքները:

Դիմողի պնդմամբ՝ թիվ 9 ընտրատարածքի բոլոր տեղամասերում խախտվել է ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը: Այդ դրույթի պահանջներին համապատասխան դրոշմակերպում չիրականացնելու արդյունքում չի գործել կրկնակի քվեարկության հնարավոր դեպքերի կանխմանն ուղղված իրավական երաշխիքը:

Դիմող կողմը պնդում է նաեւ, որ ընտրությունների անցկացման, կազմակերպման եւ քվեարկության օրվա դրությամբ խախտվել է նաեւ հավասար մրցակցային պայմաններում ընտրություններին մասնակցելու իր սահմանադրական իրավունքը՝ համաձայն Սահմանադրության 4-րդ հոդվածի: Այս պնդումը դիմողը փաստարկում է Հայաստանի Հանրապետական կուսակցության

նախագահ Ս. Սարգսյանի կողմից Հայաստանի Հանրապետության Նախագահի իրավասությունների իրականացման հետ համատեղ նախընտրական քարոզչությանը մասնակցությամբ, ինչպես նաև ՀՀ վարչապետի եւ պետական այլ պաշտոնյաների՝ քարոզարշավին մասնակցությամբ:

Դիմումում բերված հիմնավորումները եւ պատճառաբանությունները կրկնում են 2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքներով ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 13-ի N 265-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ սահմանադրական դատարանում քննության առնված դիմումի 2.3.1., 2.3.2., 2.1.1., 2.1.3., 2.1.4., 2.1.6., 2.2., 2.2.1., 2.2.2., 2.2.3., 2.2.4., 2.5., 3., 4. կետերը: Փոխվել է միայն դրանց շարադրման հաջորդականությունը:

3. Պատասխանող կողմը գտնում է, որ ընտրության արդյունքներով ընդունված որոշումը վիճարկելու եւ ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմողի պահանջն անհիմն է: Պատասխանողը նշում է, որ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց կողմից ընտրություններին մասնակցելը եւ նախընտրական քարոզչություն իրականացնելը չի կարող որակվել որպես ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածին հակասող: ՀՀ Սահմանադրությունը հստակ սահմանել է թե՛ ակտիվ եւ թե՛ պասիվ ընտրական իրավունքի սահմանափակումները: Այդ սահմանափակումները կոնկրետացված են ՀՀ ընտրական օրենսգրքում: ՀՀ ընտրական օրենսգրքի 18 եւ 22-րդ հոդվածների վերլուծության արդյունքում պատասխանող կողմը գտնում է, որ պաշտոնատար անձինք, այդ թվում՝ քաղաքական պաշտոններ զբաղեցնողները՝ ընտրական օրենսգրքով նախատեսված սահմանափակումների հաշվառմամբ, ազատ են իրականացնել նախընտրական քարոզչություն:

Պատասխանող կողմը նշում է նաև, որ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում պաշտոնատար անձանց կողմից ընտրական օրենսգրքով նախատեսված սահմանափակումները խախտելու վերաբերյալ դիմողի կողմից որեւէ դիմում դատարաններն ու ընտրական հանձնաժողովները չեն ստացել:

Դիմողի կողմից մատնանշվող՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 5-րդ մասի խախտման առնչությամբ պատասխանող կողմը նշում է, որ այդ առումով դիմողի եզրահանգումները ենթադրյալ են, եւ դիմողը չի մատնանշում կրկնակի քվեարկության որեւէ կոնկրետ դեպք: Ավելին, թվով 34 ընտրատեղամասերից 32-ի գրանցամատյաններում ընդհանրապես որեւէ խախտման փաստ չի գրանցվել, իսկ մյուս երկուսում արված թվով երեք գրանցումներն ունեցել են մասնակի բնույթ:

4. Դիմումի ուսումնասիրության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողը, վիճարկելով «Թիվ 9 ընտրատարածքում Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին» թիվ 9 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012թ. մայիսի 11-ի թիվ 16-Ա որոշումը, ինչպես նշվեց, կրկնում է նույն փաստարկները, ներկայացնում նույն միջնորդությունները, ինչ «Հայ ազգային կոնգրես» կուսակցությունների դաշինքի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության

կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 13-ի՝ «Հաստատանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորներ ընտրվելու մասին» N265-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ» գործի շրջանակներում սահմանադրական դատարան էին ներկայացրել «Հայ ազգային կոնգրես» կուսակցությունների դաշինքի ներկայացուցիչներ՝ սույն գործով դիմողը եւ նրա ներկայացուցիչը: Ի հիմնավորումն թիվ 9 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012թ. մայիսի 11-ի թիվ 16-Ա որոշման անվավերության՝ դիմողը բացի նշված գործով ներկայացրած փաստարկներից, որեւէ այլ լրացուցիչ փաստարկ սահմանադրական դատարան չի ներկայացրել:

Սահմանադրական դատարանն այդ փաստարկների վերաբերյալ իր իրավական դիրքորոշումներն արտահայտել, ինչպես նաեւ դիմումում ներկայացված փաստերի ու միջնորդությունների վերաբերյալ իր իրավական գնահատականներն է տվել 2012թ. մայիսի 31-ի ՍԳ-Ո-1028 որոշման մեջ:

Հաշվի առնելով «Հայ ազգային կոնգրես» կուսակցությունների դաշինքի կողմից վերոհիշյալ գործի շրջանակներում ներկայացված եւ սույն գործով դիմողի ներկայացրած փաստերի ու փաստարկների նույնականությունը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՍԳ-Ո-1028 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներն ու իրավական գնահատականները հավասարապես վերաբերելի են նաեւ քննության առարկա սույն գործին:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ 2012թ. մայիսի 21-ի ՍԳ-ԱՈ-32 աշխատակարգային որոշմամբ պահանջվել էր պատասխանող կողմից սույն գործով գրավոր բացատրությունը սահմանադրական դատարան ներկայացնել գործի դատաքննությունից առնվազն 7 օր առաջ՝ այն դիմողին տրամադրելու եւ դրա առնչությամբ դիմողի նկատառումները նիստից առնվազն երեք օր առաջ դիմողի կողմից սահմանադրական դատարան ներկայացնելու համար: Պատասխանող կողմը համապատասխան նյութերը սահմանադրական դատարան է ներկայացրել 01.06.2012թ.: Նույն օրը, սահմանված կարգով, սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից 29 թերթ ծավալով նյութերը թիվ Ա-258 գրությամբ ուղարկվել է դիմող կողմին՝ շեշտելով, որ «...պատասխանող կողմի գրավոր բացատրության առնչությամբ Ձեր գրավոր նկատառումները պետք է սահմանադրական դատարան ներկայացնել նիստից առնվազն երեք օր առաջ»: Նիստից մեկ օր առաջ՝ 11.06.2012թ., դիմողի ներկայացուցիչը բանավոր տեղեկացրել է սահմանադրական դատարանին, որ իրենց ասելիքն ամբողջությամբ շարադրված է դիմումում եւ ավելացնելու ոչինչ չունեն:

5. Սահմանադրական դատարանն իր ՍԳ-Ո-703 որոշման մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ ընտրությունների արդյունքներով ընդունված որոշման հետ կապված յուրաքանչյուր վեճ պետք է քննության առարկա դառնա կոնկրետ ընտրական իրավունքի պաշտպանության տեսանկյունից՝ հաշվի առնելով ընտրությունների նախապատրաստման եւ անցկացման ընթացքում տեղ գտած եւ ժամանակին բացահայտված ու իրավաբանորեն անհրաժեշտ հիմնավորմամբ ներկայացված այնպիսի խախտումներ, որոնք կվկայելին պասիվ ընտրական իրավունքի խախտման մասին,

եւ որոնք կարող էին հիմք ծառայել ընտրությունների արդյունքներով այլ որոշում կայացնելու համար:

Վերահաստատելով իր այդ իրավական դիրքորոշումը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով դիմողից պահանջվում է ապացուցողական նշանակություն ունեցող փաստերի եւ փաստարկների միջոցով հիմնավորել վերջիններիս անմիջական ազդեցությունը թեկնածուներին տրված ձայների հարաբերակցության վրա, օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում բացահայտել պատճառահետեւանքային կապի առկայությունը վկայակոչված փաստերի ու դիմողի պատիվ ընտրական իրավունքի խախտման միջեւ: Այս պահանջը բխում է ինչպես մյուս թեկնածուների պատիվ ընտրական իրավունքի, այնպես էլ ընտրողների ակտիվ ընտրական իրավունքի պաշտպանության անհրաժեշտությունից: Նման անմիջական ազդեցության եւ պատճառահետեւանքային կապի առկայությունը կարող է միայն հիմք հանդիսանալ վիճարկվող որոշումից տարբերվող այլ որոշում կայացնելու համար: Այլապես, կվտանգվեն մյուս թեկնածուների ընտրվելու եւ ընտրողների՝ ընտրելու իրավունքները:

Վերոհիշյալ իրավական դիրքորոշումներին համապատասխան գնահատելով քննության առարկա դիմումում բերված փաստերի ու փաստարկների ազդեցությունը դիմողի պատիվ ընտրական իրավունքի իրացման վրա, ուսումնասիրելով թիվ 9 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012թ. մայիսի 10-ի թիվ 12-Ա եւ 13-Ա, մայիսի 11-ի թիվ 14-Ա, 15-Ա եւ 16-Ա որոշումները՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողը չի ներկայացրել ապացուցողական նշանակություն ունեցող այնպիսի հիմնավորումներ, որոնք կվկայեին թիվ 9 ընտրատարածքում իր պատիվ ընտրական իրավունքի այնպիսի խախտումների մասին, որոնք հիմք կարող էին հանդիսանալ ընտրությունների արդյունքներով այլ որոշում կայացնելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63, 64 եւ 74-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Թիվ 9 ընտրատարածքում Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին» թիվ 9 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 11-ի թիվ 16-Ա որոշումը թողնել ուժի մեջ:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**12 հունիսի 2012 թվականի
ՍԳՈ- 1031**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՄԵԾԱՍԱՄՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ
ԹԻՎ 38 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի ԹԻՎ 64-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԵՏ ԿԱՊԿԱԾ
ՎԵՃԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

19 հունիսի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25 եւ 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրության արդյունքներով թիվ 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 11-ի թիվ 64-Ա որոշման հետ կապված վեճի վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով թիվ 38 ընտրատարածքում պատգամավորի թեկնածու Դ. Մաթետսյանի՝ 17.05.2012թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը 2012թ. մայիսի 21-ի աշխատակարգային նիստում քննարկելով վերոհիշյալ դիմումի ընդունելիության հարցը, որոշում է կայացրել՝ «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ մասերի եւ 74-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին համապատասխան գործն ընդունել քննության եւ որպես պատասխանող կողմ դատավարությանը ներ-

գրավել թիվ 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին: Նշված որոշմամբ գործով զեկուցող է նշանակվել ՀՀ սահմանադրական դատարանի անդամ Հ. Նազարյանը:

Դիմող կողմի՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով թիվ 38 ընտրատարածքում պատգամավորի թեկնածու Դ. Մաթեոսյանի ներկայացուցիչն է սահմանադրական դատարանում փաստաբան Վ. Գրիգորյանը, իսկ որպես պատասխանող կողմ ներգրավված՝ թիվ 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչներն են թիվ 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Ս. Սարգսյանը եւ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ն. Հովհաննիսյանը:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, կողմերի եւ նրանց ներկայացուցիչների գրավոր բացատրությունները, հետազոտելով դիմումը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններն անցկացվել են 2012 թվականի մայիսի 6-ին՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 68-րդ հոդվածում նախատեսված ժամկետում: Ընտրությունների կազմակերպման եւ անցկացման նպատակով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 41-րդ հոդվածով նախատեսված հիմքերով կազմավորվել է թիվ 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը: Ընտրատարածքը ներառում է թվով 76 ընտրական տեղամաս:

Թիվ 38 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով գրանցվել ու քվեաթերթիկներում ընդգրկվել են Ազգային ժողովի պատգամավորի 4 (չորս) թեկնածուներ: Ըստ թիվ 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ամփոփիչ արձանագրության՝ ընտրողների ընդհանուր թիվը 49771 է, իսկ ընտրություններին մասնակցել է 35315 ընտրող: Թեկնածուների օգտին տրված ձայների թիվը 33820 է, որը բաշխվել է հետեւյալ կերպ. Գետորգյան Գագիկ Լեռնիկի՝ 8034, Հակոբյան Վահե Մաքսիմի՝ 22751, Մաթեոսյան Գավիթ Գեոնդի՝ 1795 եւ Մովսիսյան Նարինե Կամոյի՝ 1240: Անճշտությունների թիվը կազմել է 75:

Թիվ 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012թ. մայիսի 11-ի թիվ 64-Ա որոշմամբ թիվ 38 ընտրատարածքից Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավոր է ընտրվել Վ. Հակոբյանը:

2. Վիճարկելով թիվ 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012թ. մայիսի 11-ի «Թիվ 38 ընտրատարածքում Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին» թիվ 64-Ա որոշումը, դիմողը գտնում է, որ այն պետք է անվավեր ճանաչել հետեւյալ նկատառումներից ելնելով.

- ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներին հակա-

ռակ պատգամավորության իր մրցակից թեկնածուն գրադվել է բարեգործությամբ, որով, ըստ դիմողի, «էական ազդեցություն է գործվել ընտրատարածքի ընտրողների կամքի նկատմամբ, ինչն էլ հանգեցրել է Սահմանադրության 4 հոդվածով նախատեսված ընտրական իրավունքի սկզբունքների խախտման»:

- թիվ 38 ընտրատարածքի բոլոր տեղամասերում խախտվել է ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը, որի արդյունքում՝ «...սահմանված դրոշմակնքումը չիրականացնելու եւ մի քանի թույլ անց ցնդող կնիքով անձնագրերը կնքելու պայմաններում դիմողի վստահված անձինք գրկվել են օրենսդրությամբ տրված այն «միջոցից», որով հնարավոր կլիներ բացահայտել եւ թույլ չտալ կրկնակի քվեարկության դեպքերը»:
- ընտրությունների անցկացման, կազմակերպման եւ քվեարկության ժամանակ խախտվել է հավասար մրցակցային պայմաններում ընտրություններին մասնակցելու իր սահմանադրական իրավունքը, որը, ըստ դիմողի, նաեւ արդյունք է նախընտրական քարոզչությանը ՀՀ մի շարք բարձրաստիճան պաշտոնատար անձանց, այդ թվում՝ ՀՀ Նախագահի, ՀՀ վարչապետի մասնակցության,
- դիմողի վստահված անձանց համար գործնականում անհնար է եղել լիարժեք ծանոթանալ ընտրողների ստորագրած ընտրական ցուցակներին եւ դիմողին «...հասանելի չեն Հայաստանի Հանրապետության մյուս ընտրական տեղամասերում վարված եւ ընտրողների կողմից ստորագրված ցուցակները (մատյանները)՝ համեմատելու նպատակով»: Նման հնարավորություն, ըստ դիմողի, նախեսառաջ չի ընձեռում ընտրական օրենսդրությունը:

Իր փաստարկները հիմնավորելու համար դիմողը վկայակոչում է նաեւ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ կողմից 2012թ. մայիսի 7-ին ներկայացված «Նախնական հանգամանքների եւ եզրակացությունների վերաբերյալ» հայտարարությունը:

Գիմողը պատասխանողի կողմից 2012թ. հունիսի 7-ին ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված գրավոր բացատրությունների վերաբերյալ որեւէ նկատառում չի ներկայացրել:

3. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկները, գտնում է, որ ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելը կարելի է միայն այն պարտադիր պայմանով, որ թույլ տրված խախտումները բացառեն ընտրության իրական արդյունքները ճշգրտորեն որոշելու հնարավորությունը, ուստի բավարար չէ դրանց պարզ թվարկումը, այլ պահանջվում է ապացուցել, որ հատկապես այդ խախտումների արդյունքում հնարավոր չէ պարզել ընտրության իրական պատկերը: Ըստ պատասխանողի՝ ընտրությունների նախապատրաստման ընթացքում հանձնաժողովին է ներկայացվել 2 դիմում, որոնցում պահանջվել է վերացնել նախընտրական քարոզչության անցկացման՝ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի եւ 20-րդ հոդվածի 2-րդ մասի խախտումները Քաջարան քաղաքում: Առաջինի դեպքում՝ ընտրական օրենսգրքի խախտումներ չեն արձանագրվել, նախընտրական քարոզչության ժամանակ դիմողի

մրցակից պատգամավորի թեկնածու Վ. Հակոբյանի կողմից (նրա անունից) բարեգործություն իրականացնելու վերաբերյալ դիմող կողմի դիմումի կապակցությամբ, ըստ պատասխանողի, հարուցվել է վարչական վարույթ, որի արդյունքում՝ ներկայացված փաստերը գնահատվել են չհիմնավորված եւ կայացվել է թիվ 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 03.05.2012թ. մայիսի 3-ի թիվ 60-Ա որոշումը: Վերջինս եւ դրա վերանայման վերաբերյալ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ընդունված 04.05.2012թ. թիվ 234-Ա որոշումը դատական կարգով չեն բողոքարկվել:

Ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի նորմերի խախտման վերաբերյալ դիմումի կապակցությամբ, ըստ պատասխանող կողմի, ժամանակին ձեռնարկվել են համապատասխան միջոցներ եւ խախտումները վերացվել են:

Ինչ վերաբերում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց ընտրական գործընթացներին մասնակցելու (քարոզչություն իրականացնելու) անթույլատրելիության վերաբերյալ դիմող կողմի փաստարկներին, ապա պատասխանող կողմը գտնում է, որ դրանք անհիմն են, եւ մեծամասնական ընտրակարգով ընտրությանը մասնակցող պատգամավորության եւ ոչ մի թեկնածու (այդ թվում՝ դիմողը) որեւէ դիմում դատարաններ կամ պատասխանող կողմին չի ներկայացրել:

Քվեարկության ընթացքում դիմող կողմի ներկայացրած ենթադրյալ ընտրախախտումների կապակցությամբ պատասխանող կողմը նշում է, որ «...թիվ 38 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով պատգամավորի որեւէ թեկնածուի, որեւէ վստահված անձի, տեղամասային ընտրական հանձնաժողովի որեւէ անդամի կողմից ներկայացված չի եղել թեկուզեւ մեկ դիմում՝ տեղամասում քվեարկության արդյունքն անվավեր ճանաչելու մասին», «...որեւէ տեղամասում մեծամասնական ընտրակարգով քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմում ներկայացված չի եղել», առկա չէ նաեւ որեւէ դիմում-բողոք տեղական 226 դիտորդների կողմից: Ինչ վերաբերում է կրկնակի քվեարկության վերաբերյալ դիմող կողմի հարցադրումներին, պատասխանող կողմը նշում է, որ դիմողը չի մատնանշում կրկնակի քվեարկության որեւէ դեպք: Ընտրողների ստորագրած ցուցակներին ծանոթանալու հնարավորության բացակայության վերաբերյալ հարցադրումները համարելով անհիմն՝ պատասխանող կողմը նշում է, որ «...առկա չէ որեւէ բողոք, որ որեւէ իրավասու անձի արգելվել է ծանոթանալ ընտրողների ստորագրած ցուցակներին», ինչպես եւ՝ «...առկա չէ որեւէ բողոք, որ վստահված անձին կամ որեւէ այլ իրավասու սուբյեկտի թույլ չի տրվել քվեարկության ընթացքում նշումներ կամ գրառումներ կատարել»:

Ըստ պատասխանողի՝ թվով 76 ընտրական տեղամասերից 67-ի գրանցամատյաններում առկա չեն գրառումներ քվեարկության օրը կատարված որեւէ խախտման վերաբերյալ, իսկ մնացած 9 հանձնաժողովներում առկա գրառումների ուսումնասիրմամբ կայացվել է 11.05.2012թ. թիվ 62-Ա որոշումը եւ փաստվել, որ այդ խախտումները որեւէ ազդեցություն չեն ունեցել քվեարկության արդյունքների վրա: Հետեւաբար, ինչպես եզրակացնում է պատասխանող կողմը, դիմողի պահանջներն անհիմն են եւ ամբողջությամբ ենթակա են մերժման:

4. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նախ արձանագրել, որ ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված սահմանադրաիրավական վեճերով առանցքային նշանակություն ունի, թե դիմողն ընտրությունների նախապատրաստման, անցկացման եւ արդյունքների ամփոփման գործընթացներում իր ընտրական իրավունքների պաշտպանության խնդրով արդյո՞ք իրացրել կամ ինչպե՞ս է իրացրել օրենսդրությամբ, այդ թվում՝ ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված միջոցները՝ կապված ընտրական հանձնաժողովների, իրավասու այլ մարմինների ու պաշտոնատար անձանց որոշումների ու գործողությունների (անգործության) բողոքարկման (այդ թվում՝ դատական բողոքարկման) հետ: Հետեւաբար, գործով ներկայացված յուրաքանչյուր փաստարկ սահմանադրական դատարանի կողմից ենթակա է գնահատման ելնելով այդ միջոցների՝ օրենքով նախատեսված կարգով ու ժամկետներում իրացման իրողությունից, վերջինը փաստող ապացույցների առկայությունից, որոնց պարագայում միայն կարող է սահմանադրորեն իրավաչափ հիմք ստեղծվել ընտրությունների արդյունքներով իրավասու մարմնի կայացրած ակտի իրավաբանական հետագա ուժի հարցը որոշելու համար: Համանման իրավական դիրքորոշում սահմանադրական դատարանն արտահայտել է իր մի շարք որոշումներում: Այդպիսի դիրքորոշումն սկզբունքային նշանակություն ունի նաեւ սույն գործով ներկայացված փաստարկների գնահատման առնչությամբ:

5. Դիմումի եւ գործում առկա մյուս փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողի կողմից ներկայացված այն փաստարկը, համաձայն որի՝ թիվ 38 ընտրատարածքում նախընտրական քարոզչության ընթացքում դիմողի մրցակից թեկնածուի կողմից իրականացվել է բարեգործություն, քննության է առնվել թիվ 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից, որի արդյունքներով 03.05.2012թ. կայացվել է որոշում՝ դիմողի համապատասխան դիմումը՝ ներկայացված փաստերի հավաստիությունն ապացուցված չլինելու պատճառաբանությամբ մերժելու վերաբերյալ: Այդ որոշումն օրենսդրությամբ սահմանված կարգով դիմողը չի վիճարկել: Հետեւաբար, ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի ուժով վերոհիշյալ փաստարկը՝ որպես ընտրություններից հետո պատգամավորի թեկնածուի գրանցումը վիճարկելու ապացուցողական հիմք, սահմանադրական դատարանում ներկայացնելի չէ:

Դիմողի այն պնդման կապակցությամբ, համաձայն որի՝ խախտվել է ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 5-րդ մասի եւ, մասնավորապես՝ կրկնակի քվեարկության դեպքերը բացառելու իրավական պահանջը, պատասխանողը փաստում է, որ այն քննության է առնվել (ոչ դիմողի նախաձեռնությամբ) թիվ 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից եւ արդյունքում ընդունվել է թիվ 62-Ա որոշումը, որի իրավաչափությունը որեւէ կերպ վիճարկված չէ օրենսդրությամբ սահմանված կարգով: Բացի դրանից, այս խնդրի առնչությամբ պատասխանողը նշում է, որ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժո-

դովը եւ թիվ 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, ՀՀ ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 6-րդ մասով իրենց վերապահված իրավունքից օգտվելով, լուծում են տվել խնդրին՝ հանձնարարելով հատուկ նյութի փոխարեն օգտագործել սովորական թանաք: Դիմող կողմն իր այն պնդումը, թե ընտրողների անձնագրերում դրոշմակնքման սահմանված կարգից շեղումը կրել է համատարած եւ միտումնավոր բնույթ, որի արդյունքում դիմողի մրցակից պատգամավորության թեկնածուի օգտին ապահովվել է քվեների առավելագույն քանակ, որեւէ կերպ փաստարկված չէ: Գործի նյութերում առկա չէ նաեւ որեւէ ապացույց՝ ընտրատարածքում կրկնակի քվեարկության որեւէ փաստի վերաբերյալ: Հետեւաբար, առկա չէ նաեւ այդ հանգամանքը սահմանադրական դատարանում որպէս թիվ 38 ընտրատարածքում ընտրությունների արդյունքների վրա էապես ազդող ընտրախախտում գնահատելու որեւէ իրավական հիմք, նկատի ունենալով նաեւ այդ խնդրի շրջանակներում իրավասու սուբյեկտների կողմից ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումների վարչարարադատական կարգով վիճարկման՝ օրենքով նախատեսված միջոցը չիրացնելու հանգամանքը եւ սահմանադրական դատարանի՝ 2012թ. մայիսի 31-ի ՍԴՈ-1028 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը:

Ընտրությունների անցկացման, կազմակերպման եւ քվեարկության ժամանակ հավասար ընտրական իրավունքի ենթադրյալ խախտման կապակցությամբ դիմողի կողմից բերված հարցադրումների առնչությամբ սահմանադրական դատարանն արտահայտել է իր իրավական դիրքորոշումները 2012թ. մայիսի 31-ի ՍԴՈ-1028 որոշման մեջ, մասնավորապէս գտնելով, որ քաղաքական պաշտոններ զբաղեցնող պաշտոնատար անձանց օրենքով արգելված չէ ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ եւ 22-րդ հոդվածների պահանջների պահպանմամբ նախընտրական քարոզչություն իրականացնել: Դիմող կողմը, փաստորեն, բառացի կրկնում է 2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքներով ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 13-ի թիվ 265-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ սահմանադրական դատարան ներկայացված դիմումի փաստարկները:

Դիմողը չի ներկայացրել նաեւ որեւէ հիմնավոր փաստարկ, որ իր վստահված անձանց համար գործնականում անհնար (կամ անհասանելի) է եղել լիարժեք ծանոթանալ ընտրողների ստորագրած ընտրական ցուցակներին: Ընտրատարածքի թվով 76 ընտրական տեղամասերում բոլոր թեկնածուների վստահված անձանց ընդհանուր թիվը կազմել է 777: Այդ անձանց կողմից որեւէ տեղամասում մեծամասնական ընտրակարգով քվեարկության արդյունքների վերահաշվարկի վերաբերյալ որեւէ դիմում, ինչպէս նշվեց, չի ներկայացվել: Այդպիսի որեւէ դիմում չի ներկայացվել նաեւ տեղամասային ընտրական հանձնաժողովների թվով 532 անդամների կողմից: Դիմող կողմը սահմանադրական դատարան չի ներկայացրել որեւէ ապացույց ընտրողների ստորագրած ընտրացուցակներին ծանոթանալու իրավական խոչընդոտի վերաբերյալ: Ի դեպ, ինչպէս վկայում են գործի նյութերը, թիվ 38 ընտրատարածքում թվով 76 տեղա-

մասային ընտրական հանձնաժողովների նախագահներից 35-ը նշանակված են եղել Հայաստանի Հանրապետական կուսակցության կողմից, 15-ը՝ «Բարգավաճ Հայաստան», 14-ը՝ «Հայ Յեղափոխական Դաշնակցություն», 7-ը՝ «Ժառանգություն», 7-ը՝ «Օրինաց երկիր» կուսակցությունների կողմից: Նույն համամասնությամբ են նշանակվել նաև հանձնաժողովների քարտուղարները:

Սահմանադրական դատարանն իր՝ 2012թ. մայիսի 5-ի ՍԳՈ-1027 որոշմամբ իրավական դիրքորոշում էր արտահայտել, համաձայն որի՝ «ընտրական իրավունքի պաշտպանության օրենքով նախատեսված գործընթացների շրջանակներում վերահսկողական համապատասխան իրավասությամբ օժտված իրավասուբյեկտների համար ընտրական իրավունքի պաշտպանությանը վերաբերող որեւէ տեղեկատվության մատչելիությունը չի կարող արգելափակվել՝ առավել եւս նման տեղեկատվությունը դատարաններին տրամադրելու առնչությամբ»: Գործի նյութերից ելնելով՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ընտրատարածքի որեւէ ընտրական տեղամասում մեծամասնական ընտրակարգով քվեարկության արդյունքների վերահաշվարկի ոչ մի դիմում իրավասու սուբյեկտների կողմից չներկայացվելու եւ վերահաշվարկ չնախաձեռնելու պայմաններում դիմող կողմը փաստորեն իրեն գրկել է ընտրողների ստորագրած ցուցակներին ծանոթանալու իրավական հնարավորությունից, հետեւաբար՝ նաև մերժելի է սահմանադրական դատարանի միջոցով նման տեղեկություններ ստանալու միջնորդությունը:

Դիմողը, որպես իր դիրքորոշումները հիմնավորող հավելյալ փաստարկ, վկայակոչում է նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության դիտարկումները: Սահմանադրական դատարանն իր՝ 2012թ. մայիսի 31-ի ՍԳՈ-1028 որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել ընտրական գործընթացներում միջազգային դիտորդական առաքելությունների դիտարկումների ինչպես ընդհանուր, այնպես էլ դատավարական առումով ապացուցողական նշանակության վերաբերյալ, ինչը վերաբերելի է նաև սույն գործին:

6. ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի, ՀՀ ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ օրենքով սահմանված կարգով ՀՀ սահմանադրական դատարանի քննությանն են ենթակա **բացառապես ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը, ընդ որում՝ ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրությունների առնչությամբ սահմանադրական դատարանում կարող է վիճարկվել միայն տվյալ ընտրատարածքում պատգամավոր ընտրվելու մասին ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը՝ **վերջինիս ոչ իրավաչափությունը հիմնավորող կոնկրետ փաստարկների հիման վրա**: Իրավական այս պահանջներից ելնելով եւ գնահատելով դիմող եւ պատասխանող կողմերի դիրքորոշումները, նրանց կողմից ներկայացված ապացուցողական նշանակություն ունեցող փաստարկները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով առկա չէ որեւէ իրավափաստարկ, որով կհիմնավորվեր թիվ 38 ընտրատարածքա-**

յին ընտրական հանձնաժողովի կողմից 2012թ. մայիսի 6-ի Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքների վերաբերյալ այլ որոշման կայացումը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63, 64 եւ 74-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. «Թիվ 38 ընտրատարածքում Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին» թիվ 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 11-ի թիվ 64-Ա որոշումը թողնել ուժի մեջ:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**19 հունիսի 2012 թվականի
ՍԳՈ- 1033**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ
ԹԻՎ 17 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի ԹԻՎ 41-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԵՏ ԿԱՊԿԱԾ
ՎԵՃԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

22 հունիսի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25 եւ 74-րդ հոդվածների,

դմբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրության արդյունքներով թիվ 17 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 11-ի թիվ 41-Ա որոշման հետ կապված վեճի վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով թիվ 17 ընտրատարածքում պատգամավորի թեկնածու Գ. Ներսիսյանի՝ 17.05.2012թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը 2012թ. մայիսի 21-ի աշխատակարգային նիստում քննարկելով վերոհիշյալ դիմումի ընդունելիության հարցը, որոշում է կայացրել՝ համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ մասերի, 74-րդ հոդվածի 4-րդ եւ 19-րդ մասերի պահանջների՝ գործն ընդունել քննության եւ գործով որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավել թիվ 17 ընտրատա-

րաձքային ընտրական հանձնաժողովին: Նշված որոշմամբ գործով զեկուցող է նշանակվել ՀՀ սահմանադրական դատարանի անդամ Վ. Հովհաննիսյանը:

Սահմանադրական դատարանում դիմող կողմի՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով թիվ 17 ընտրատարաձքում պատգամավորի թեկնածու Գ. Ներսիսյանի ներկայացուցիչներն են փաստաբաններ Տ. Եգորյանը եւ Լ. Հակոբյանը, իսկ որպես պատասխանող կողմ ներգրավված՝ թիվ 17 ընտրատարաձքային ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչներն են թիվ 17 ընտրատարաձքային ընտրական հանձնաժողովի նախագահ Ա. Մարգարյանը, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ն. Հովհաննիսյանը:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, կողմերի եւ նրանց ներկայացուցիչների գրավոր բացատրությունները, հետազոտելով դիմումը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններն անցկացվել են 2012 թվականի մայիսի 6-ին՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 68-րդ հոդվածում նախատեսված ժամկետում: Ընտրությունների կազմակերպման եւ անցկացման նպատակով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 41-րդ հոդվածով նախատեսված հիմքերով կազմավորվել է թիվ 17 ընտրատարաձքային ընտրական հանձնաժողովը: Ընտրատարաձքը ներառում է թվով 48 ընտրական տեղամաս:

Թիվ 17 ընտրատարաձքում մեծամասնական ընտրակարգով գրանցվել ու քվեաթերթիկներում ընդգրկվել են Ազգային ժողովի պատգամավորի 4 /չորս/ թեկնածու: Ըստ թիվ 17 ընտրատարաձքային ընտրական հանձնաժողովի ամփոփիչ արձանագրության՝ ընտրողների ընդհանուր թիվը 65020 է, իսկ քվեարկությանը մասնակցել է 44512 ընտրող: Թեկնածուների օգտին տրված ձայների թիվը 41917 է, որը բաշխվել է հետեւյալ կերպ. Տ. Կարապետյան՝ 7175, Մ. Հայրապետյան՝ 4500, Գ. Ներսիսյան՝ 2374, Կ. Պողոսյան՝ 27868: Անճշտությունների թիվը կազմել է 0:

Թիվ 17 ընտրատարաձքային ընտրական հանձնաժողովի 2012թ. մայիսի 11-ի թիվ 41-Ա որոշմամբ թիվ 17 ընտրատարաձքից Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավոր է ընտրվել Կ. Պողոսյանը:

2. Դիմողը գտնում է, որ անհրաժեշտ է անվավեր ճանաչել «Թիվ 17 ընտրատարաձքում Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին» թիվ 17 ընտրատարաձքային ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 11-ի թիվ 41-Ա որոշումը եւ թիվ 17 ընտրատարաձքում մեծամասնական ընտրակարգով պատգամավորի ընտրությունների արդյունքները:

Դիմողի պնդմամբ՝ ընտրատարաձքի բազմաթիվ տեղամասերում գյուղապետերը եւ գյուղական համայնքների մի շարք աշխատակիցներ հանդես են

եկել որպես Հայաստանի Հանրապետական կուսակցության եւ այդ կուսակցության մեծամասնական ընտրակարգով թեկնածուի վստահված անձինք եւ տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամներ:

Գլխողը գտնում է, որ թիվ 17 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, գուտ ձեւական պատճառաբանությամբ, օրենսդրական ակտերով ամրագրված սկզբունքների եւ ընթացակարգերի խախտմամբ մերժել է իր վստահված անձի դիմումը թիվ 17/27 ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու վերաբերյալ:

Գլխողը վկայակոչում է մի շարք փաստեր, որոնք, իր կարծիքով, խոչընդոտել են քվեարկության գործընթացին: Որպես այդպիսիք նշվում են.

- թիվ 17/27 ընտրատեղամասում ՀՀԿ-ի կողմից առաջադրված թեկնածուի վստահված անձինք վեճեր են սադրել՝ «նպատակ ունենալով հեռացնել ՀՀԿ-ն չներկայացնող որոշ վստահված անձանց»,
- ընտրության ողջ ընթացքում մարդիկ ընտրատեղամաս են ներկայացել խումբ-խումբ եւ հատկապես քվեարկության առաջին երեք-չորս ժամերին, դիտարկվել են ընտրողների մեծ կուտակումներ,
- ՀՀԿ-ն ներկայացնող վստահված անձանց խմբերը «... կանգնել են տեղամասային կենտրոնների մուտքի մոտ, այն մասում, որտեղ փակցված են ընտրողների ցուցակները եւ քվեաթերթիկների օրինակները եւ ողջ ընթացքում իմպերատիվ ցուցումներ են տվել ընտրատեղամասերի ընտրողներին, թե ում օգտին քվեարկել»,
- արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ անձն օգնություն է ցուցաբերել մեկից ավելի «անօգնական» քաղաքացիների եւ այլ դեպքեր:

Գլխողը վկայակոչում է, որ անօրինականություններ են տեղի ունեցել նաեւ թիվ 17/11 ընտրական տեղամասում քվեարկությունների ընթացքում, սակայն տեղամասային ընտրական հանձնաժողովը դրանց պատշաճ չի արձագանքել:

Գլխողը բարձրացնում է ՀՀ ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածով նախատեսված բողոքարկման ընթացակարգի անարդյունավետության, մասնավորապես, բողոքարկման համար սահմանված ժամկետների ողջամտության խնդիր: Այս առնչությամբ դիմողը նշում է, որ 2012 թվականի մայիսի 11-ին դիմում է ներկայացրել թիվ 17 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով՝ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու վերաբերյալ: Ըստ դիմողի՝ թեւեւ դիմումը չի ներկայացվել նախքան ՀՀ ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 9-րդ մասի 5-րդ կետով նախատեսված վերջնաժամկետը, այնուհանդերձ, վերոնշյալ հոդվածով նախատեսված ժամկետը չի կարելի ողջամիտ համարել՝ հաշվի առնելով այն աշխատանքի ծավալը, որը պետք է կատարի դիմողը՝ հավաքելու, ամփոփելու եւ ներկայացնելու մի շարք ընտրատեղամասերում ընտրակեղծիքների եւ այլ ընտրախախտումների վերաբերյալ տեղեկություններ:

Գլխողը նշում է, որ թիվ 17 ընտրատարածքի բոլոր տեղամասերում խախտվել է ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը եւ համապատասխան դրոշմակնքում չիրականացնելու արդյունքում չի գործել

կրկնակի քվեարկության հնարավոր դեպքերի կանխմանն ուղղված իրավական երաշխիքը:

Դիմողի կարծիքով՝ կրկնակի քվեարկությունը, այլոց փոխարեն ընտրությունները, բացակա, մահացած անձանց փոխարեն քվեարկությունները զանգվածային բնույթ են կրել, ինչը կարելի է շատ արագ փաստել ընտրողների կողմից ստորագրված ցուցակների հրապարակման միջոցով:

3. Պատասխանողն անհիմն է համարում թիվ 17 ընտրատարածքում քվեարկության արդյունքներով ընդունված որոշումը եւ ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմողի պահանջը:

Ի պատասխան գյուղապետերի կամ գյուղական համայնքների աշխատակիցների՝ որպես վստահված անձ կամ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ հանդիսանալու վերաբերյալ դիմողի պնդումներին, վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածը, ՀՀ ընտրական օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասը, 39-րդ հոդվածի 2-րդ մասը, 149-154.6-րդ հոդվածները, պատասխանողը նշում է, որ վստահված անձանց՝ օրենքով սահմանված ցանկում ընդգրկված չեն տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարը եւ համայնքային ծառայողը, թիվ 17 ընտրատարածքի 48 տեղամասային ընտրական հանձնաժողովներում ընդգրկված թվով 336 անդամներից որեւէ մեկը նշանակված չի եղել ընտրական օրենսգրքի՝ վերը նշված հոդվածների պահանջների խախտմամբ, իսկ թիվ 17/27 ընտրական տեղամասի վերաբերյալ ներկայացված հանգամանքներն առանձին մասնավոր դեպք է, որը որեւէ հիմնավորմամբ չի կարող ազդեցություն ունենալ անգամ նշված տեղամասում արձանագրված քվեարկության արդյունքների վրա:

Պատասխանողը նշում է նաեւ, որ դիմողը չի վկայակոչել փաստեր, հիմնավորումներ, ապացույցներ: Թիվ 17 ընտրատարածքի թվով 48 տեղամասային ընտրական հանձնաժողովներից 41-ի գրանցամատյաններում քվեարկության օրը խախտումների վերաբերյալ գրառումներ չեն կատարվել, իսկ մնացած թվով 7 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում առկա գրառումների ուսումնասիրմամբ թիվ 17 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը 11.05.2012թ. կայացրել է թիվ 39-Ա որոշումը, որով գտել է, որ 2012 թվականի մայիսի 6-ի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններում թիվ 17 ընտրատարածքում տեղի ունեցած խախտումները որեւէ ազդեցություն չեն ունեցել քվեարկության արդյունքների վրա: Ընդ որում, նշված որոշումը չի բողոքարկվել ո՛չ վերադատության, ո՛չ էլ դատական կարգով:

Բողոքարկման գործընթացների արդյունավետության, բողոքարկման համար սահմանված ժամկետների առնչությամբ դիմողի հարցադրումների կապակցությամբ պատասխանողը նշում է, որ դրանք առնչվում են ընտրական օրենսգրքի նորմերի սահմանադրականության խնդրին, որը չի հանդիսանում սույն գործով քննության առարկա: Այդուհանդերձ, պատասխանողը տվյալ խնդրի առնչությամբ վկայակոչելով ընտրական օրենսգրքով նախատեսված՝ քվեարկության արդյունքների վերահաշվարկի եւ քվեարկության արդյունքներն

անվավեր ճանաչելու ինստիտուտները, նշում է, որ մեծամասնական ընտրակարգով պատգամավորի ընտրության վերաբերյալ թիվ 17 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին ներկայացված է եղել ընդամենը 2 դիմում, որոնք սահմանված կարգով եւ ժամկետներում քննության առարկա են հանդիսացել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում: Մեծամասնական ընտրակարգով քվեարկության արդյունքների վերահաշվարկի որեւէ դիմում ներկայացված չի եղել: Մեծամասնական ընտրակարգով ընտրության քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին ներկայացվել է միայն 1 դիմում, այն էլ՝ ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետների խախտմամբ: Ըստ պատասխանողի՝ բողոքարկման ժամկետներն իրական են ու ողջամիտ՝ հաշվի առնելով նաեւ ընտրությունների արդյունքներն ամփոփելու համար ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին օրենքով տրամադրված ժամանակի սահմանափակ լինելը:

Պատասխանողը նաեւ փաստեց, որ թիվ 17/27 ընտրական տեղամասի քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմողի ներկայացուցչի՝ թիվ 17 ԸԸՀ-ին փոստով ուղարկված դիմումն իրենց չի հասել:

4. Դիմողն իր խնդրանքը, ի թիվս այլնի, փաստարկում է տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների եւ համայնքային ծառայողների՝ որպես ընտրատարածքում առաջադրված՝ Հայաստանի Հանրապետական կուսակցության թեկնածուի վստահված անձ եւ տեղամասային հանձնաժողովների անդամներ լինելու հանգամանքով:

Այս փաստարկի առնչությամբ սահմանադրական դատարանը նախ արձանագրում է, որ այն անձանց ցանկը, ովքեր չեն կարող լինել վստահված անձ, սպառնիչ կերպով սահմանված է ՀՀ ընտրական օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով: Այդ ցանկում տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները կամ համայնքային ծառայողները ներառված չեն եւ նշված դրույթով սահմանված արգելքը չի տարածվում նրանց վրա: Հետեւաբար, նշված անձանց հանդեւ գալը վստահված անձի կարգավիճակով՝ ինքնին օրենքի որեւէ պահանջի խախտում չի նշանակում:

Դիմողն իր գրավոր բացատրություններում, ընդունելով, որ ՀՀ ընտրական օրենսգրքը տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների եւ համայնքային ծառայողների համար վստահված անձ լինելու արգելք չի նախատեսում, միաժամանակ նշում է, որ «նման արգելքի բացակայությունից ամենեւին չի բխում նման պրակտիկայի սահմանադրականությունը»:

Այս պնդման առնչությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ, նախ՝ առկա պրակտիկայի սահմանադրականության վերաբերյալ հարցադրումը ներկայացնելի չէ քննության առարկա վեճի շրջանակներում, երկրորդ՝ վկայակոչված պրակտիկայի ենթադրյալ «հակասահմանադրականության» վերաբերյալ դիմողի դատողությունները դիմողի կողմից ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի սուբյեկտիվ ընկալման եւ մեկնաբանման արդյունք են: Սահմանադրական այդ դրույթում ամրագրված պահանջը վերաբերում է միայն

այնպիսի գործողություններին, որոնք պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պետք է կատարեն ի պաշտոնե: Այն որեւէ կերպ չի սահմանափակում պաշտոնական պարտականությունների կատարումից դուրս այլ կարգավիճակում հանդես գալու եւ վերջինիս կապակցությամբ ոչ ի պաշտոնե գործողություններ կատարելու հնարավորությունը:

Ինչ վերաբերում է տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների եւ համայնքային ծառայողների՝ ի խախտումն ՀՀ ընտրական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի, թիվ 17 ընտրատարածքի տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամներ լինելու՝ առանց կոնկրետ հանձնաժողովների եւ վերջիններիս անդամների տվյալների մատնանշման, դիմողի վերացական պնդմանը, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ընտրական այդ հանձնաժողովների անհատական կազմերը հայտնի են եղել քվեարկությունից դեռեւս 25 օր առաջ եւ նրանց՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին չհամապատասխանելու վերաբերյալ որեւէ բողոք կամ բողոքարկման արգելք չի եղել ու սույն գործով ներկայացված չէ:

Վերոնշյալից ելնելով, սույն վեճի շրջանակներում սահմանադրական դատարանը մերժելի է համարում դիմողի խնդրանքը՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովից տեղեկություններ պահանջել «...թիվ 17 ընտրատարածքային հանձնաժողովի անդամների վերջին հինգ տարվա ընթացքում կուսակցական պատկանելության եւ զբաղեցրած պաշտոնների /կատարած աշխատանքի/ մասին», ինչպես նաեւ «...թիվ 17 ընտրատարածքային հանձնաժողովից տեղեկություններ պահանջել թվով 48 տեղամասային հանձնաժողովների անդամների, ՀՀԿ-ի եւ ՀՀԿ-ական վստահված անձանց վերջին հինգ տարիների ընթացքում կուսակցական պատկանելության եւ զբաղեցրած պաշտոնների /կատարած աշխատանքի/ մասին»:

5. ՀՀ ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածով նախատեսված՝ բողոքարկման ընթացակարգերի անարդյունավետության եւ, մասնավորապես, բողոքարկման ժամկետների ոչ ողջամիտ լինելու վերաբերյալ դիմողի փաստարկների առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման հարցադրման միջոցով դիմողն ըստ էության բարձրացնում է այդ ընթացակարգերը սահմանող նորմերի սահմանադրականության վերաբերյալ խնդիր:

Սահմանադրական դատարանն ընտրությունների արդյունքներով կայացված որոշումների վերաբերյալ վեճերի շրջանակներում բարձրացվող՝ նորմատիվ իրավական ակտերի դրույթների սահմանադրականության հարցերի վերաբերյալ իր դիրքորոշումներն է արտահայտել մասնավորապես իր՝ 2008թ. մարտի 8-ի ՍԳՈ-736, ինչպես նաեւ 2012թ. մայիսի 31-ի ՍԳՈ-1028 որոշումներում: Ընդգծվել է, որ «...ընտրությունների արդյունքներով ընդունված որոշման հետ կապված վեճի քննության շրջանակներում սահմանադրական դատարանն իրավասու չէ միաժամանակ քննության առնել օրենքների սահմանադրականության հարց, ինչը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված չէ»: «Ընտրության արդյունքներով ընդունված որոշումների հետ

կապված վեճերը չեն կարող դիտարկվել որպես իրավական նորմի սահմանադրականության վեճեր, քանի որ վերջիններիս լուծման համար սահմանադրական այլ պահանջներ ու ընթացակարգեր են նախատեսված»: Սահմանադրական դատարանը միաժամանակ իր ՍԴՈ-1028 որոշման մեջ նշել է քվեարկության արդյունքների բողոքարկման ժամկետների սահմանման, ինչպես նաև հարգելի պատճառներով բաց թողնված ժամկետների վերականգնման իրավակարգավորման հարցերի հետագա օրենսդրական բարեփոխումների անհրաժեշտությունը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ ընտրական գործընթացներում բողոքարկման ժամկետների ողջամտության եւ արդարացիության խնդրին բազմիցս անդրադարձել են նաև Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը («Վեներտիկի հանձնաժողով») եւ ԺՀՄԻԳ-ը: Մասնավորապես, Ուկրաինայի ժողովրդական պատգամավորների ընտրության մասին օրենքի նախագծի վերաբերյալ Վեներտիկի հանձնաժողովի եւ ԺՀՄԻԳ-ի 2011թ. հոկտեմբերի 17-ի համատեղ կարծիքում այդ առնչությամբ նշված է. «Կարելի է նշանակություն ունի ընտրական վեճերի առնչությամբ բողոքարկման եւ վեճերի քննության ձգձգվող, երկարատև ընթացքից խուսափելու հանգամանքը, ուստի անհրաժեշտ են ժամկետային սահմանափակումներ: Այնուամենայնիվ, այդ ժամկետային սահմանափակումները չպետք է լինեն այնքան սահմանափակող, որ կանխարգելեն արդարացի լուծման հասնելու հնարավորությունը: ... Բողոք ներկայացնելու համար սահմանված վերջնաժամկետից բացառություն պետք է կատարվի այն դեպքում, երբ դիմողն այդ ժամկետում պատշաճ հետետողականության դեպքում չէր կարող իմանալ իրավախախտման մասին, եւ դա է պահանջում արդարության շահը»:

Վերոհիշյալ իրավական դիրքորոշումների տեսանկյունից գնահատելով թիվ 17/27 ընտրական տեղամասի քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմողի վստահված անձի՝ դիմումի նկատմամբ դրսևտրած մոտեցումը, սահմանադրական դատարանը գտնում է, որ թիվ 17 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը մերժել է այդ դիմումը հիմնականում ձեռնարկական պատճառաբանություններով: Նկատի ունենալով, որ ընտրախախտումների վերաբերյալ առավել թվով արձագանքները վերաբերել են հենց այդ ընտրական տեղամասին, ընտրական հանձնաժողովը պարտավոր էր իր վերահսկողական լիազորությունների շրջանակներում ըստ էության պարզել իրավիճակը եւ անհրաժեշտ հիմքերի առկայության դեպքում՝ ընդհուպ անվավեր ճանաչել այդ տեղամասում քվեարկության արդյունքները: Անկախ այն բանից, որ դիմողը թիվ 17/27 տեղամասային ու թիվ 17 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները /անգործությունը/ իր կողմից բարձրացված հարցի տեսանկյունից դատական կարգով չի բողոքարկել, այնուամենայնիվ, գործի նյութերը վկայում են, որ թիվ 17/27 ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների հետ կապված խնդիրներ առկա են:

Սահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ այլ ընտրատեղամասերում ենթադրյալ ընտրախախտումների վերաբերյալ դիմողի հայտա-

րարություններն ընդհանուր բնույթ են կրում եւ իրավական հստակությամբ փաստարկված չեն: Թիվ 17 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով բոլոր թեկնածուների վստահված անձանց ընդհանուր թիվը կազմել է 247: Օրենքով սահմանված ժամկետներում ու կարգով նշված 247 քաղաքացիների կողմից որեւէ ընտրատեղամասում մեծամասնական ընտրակարգով քվեարկության արդյունքների վերահաշվարկի վերաբերյալ որեւէ դիմում չի ներկայացվել: Տեղամասային ընտրական հանձնաժողովներում քվեարկության ընթացքին, ապա նաեւ արդյունքների ամփոփմանը հետեւել են թվով 225 տեղական դիտորդներ՝ թվով 15 հասարակական կազմակերպություններից, որոնց կողմից նույնպես չի ներկայացվել որեւէ դիմում-բողոք: Թիվ 17 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին ներկայացված չեն եղել հատուկ կարծիքներ, եւ հանձնաժողովի անդամները չեն պահանջել իրականացնել վերահաշվարկ կամ քվեարկության արդյունքները ճանաչել անվավեր: Դիմողի կողմից ընտրական հանձնաժողովների որոշումների, գործողությունների /անգործության/ վերաբերյալ որեւէ դատական հայց չի ներկայացվել չէ վարչական դատարան:

Սահմանադրական դատարանն անդրադառնալով չէ Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուների, նրանց վստահված անձանց, ինչպես նաեւ ընտրական գործընթացում վերահսկողական լիազորությամբ օժտված այլ սուբյեկտների կողմից չէ Սահմանադրությամբ եւ չէ ընտրական օրենսգրքով նախատեսված իրենց իրավունքներից օգտվելու առկա իրավիճակին, հարկադրված է կրկին ու կրկին ընդգծել, որ պասիվ ընտրական իրավունքի իրացման՝ չէ ընտրական օրենսգրքով նախատեսված իրավական երաշխիքներն ընտրական իրավունքի գործիքակազմի կարեւոր բաղադրիչներն են, որոնցից օգտվելը չի կարող դիտարկվել որպես զուտ պատգամավորի թեկնածուի եւ նրա վստահված անձանց կամ վերահսկողական գործառույթ իրականացնող այլ անձանց հայեցողությանը թողնված լիազորություն: Այն ժամանակին ու օրենքով սահմանված կարգով չիրականացնելն իմաստագրկում է այդ լիազորությունը, իսկ իրավունքի պաշտպանությունը դառնում է անհնար:

6. Չէ սահմանադրական դատարանն իր՝ 2008թ. մարտի 8-ի ՍԳՈ-736 որոշման մեջ արտահայտել է հետեւյալ իրավական դիրքորոշումը. «...որեւէ ընտրատեղամասում կատարված խախտումները չեն կարող հիմք հանդիսանալ այլ տեղամասերում նմանատիպ խախտումների մասին ենթադրություններ անելու կամ ընտրական գործընթացի օրինականությունն ամբողջությամբ կասկածի տակ դնելու համար: Ընտրությունների արդյունքում ընդունված որոշումն անվավեր ճանաչելու հիմք կարող են հանդիսանալ միայն օրենքով սահմանված կարգով փաստարկված այն կոնկրետ խախտումները, որոնք էական ազդեցություն են ունեցել կամ կարող էին ունենալ ընտրությունների վերջնական արդյունքների վրա»:

Վերոհիշյալ իրավական դիրքորոշմանը համապատասխան գնահատելով դիմողի ներկայացրած փաստարկները՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողի մատնանշած կոնկրետ խախտումները, ինչպես նշվեց,

հիմնականում վերաբերում են թիվ 17 ընտրատարածքի 17/27 ընտրական տեղամասին:

Նշված տեղամասում, մասնավորապես, դիտորդական առաքելություն իրականացնող դիտորդը քվեարկության ընթացքում աջակցել է Հայաստանի Հանրապետական կուսակցությանը եւ նրա թեկնածուին եւ հանդես է եկել նրանց օգտին: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիտորդի չեզոքության եւ այս կամ այն թեկնածուին աջակցելու կամ սատարելու անթույլատրելիության պահանջն անուղղակի կերպով նախատեսված է ՀՀ ընտրական օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասում: Վերջինիս համաձայն՝ դիտորդի կողմից որեւէ թեկնածուի, համամասնական ընտրակարգով ընտրությունների մասնակցող կուսակցության, կուսակցությունների դաշինքի աջակցելու դեպքում կենտրոնական ընտրական հանձնաժողովն իրավունք ունի համապատասխան կազմակերպությանը գրկելու դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքից:

Թիվ 17/27 տեղամասում արձանագրվել է կրկնակի քվեարկության փորձ, որի կապակցությամբ, ըստ դիմողի, Արարատի ոստիկանության բաժնում նյութեր են նախապատրաստվում: Նշված տեղամասում դիմողի վստահված անձանց նկատմամբ սպառնալիքների կապակցությամբ դիմողի ներկայացուցիչները հաղորդում են ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազություն, որի կապակցությամբ եւս նյութեր են նախապատրաստվում Արարատի ոստիկանության բաժնում: Այս տեղամասը թիվ 17 ընտրատարածքի թվով 48 ընտրական տեղամասերից միակն է, որի կապակցությամբ դիմողի վստահված անձի կողմից, թեւ օրենքով սահմանված ժամկետի խախտման շուրջ առկա վեճին, ներկայացվել է տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու պահանջ, եւ այդ պահանջը մերժելու վերաբերյալ թիվ 17 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը վերադասության կարգով բողոքարկվել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Թիվ 17/27 ընտրական տեղամասում տեղի ունեցած ընտրախախտումների վերաբերյալ պատասխանողն իր բացատրություններում, մասնավորապես, նշել է. «Ինչ վերաբերում է թիվ 17/27 ընտրական տեղամասի վերաբերյալ ներկայացված առանձին հանգամանքներին, ապա հարկ է նկատել, որ նախ նշվածն առանձին մասնավոր դեպք է, որեւէ հիմնավորմամբ չի կարող ազդեցություն ունենալ անգամ նշված տեղամասում արձանագրված քվեարկության արդյունքի վրա»:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ եթե պատասխանող կողմն ընդունում է այն հանգամանքները, որոնցով դիմող կողմը հիմնավորում է իր պահանջներն ու առարկությունները, ապա վերանում է այդ հանգամանքների վերաբերյալ հետազայում ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտությունը: Վերոհիշյալ օրենքի այսպիսի իրավակարգավորմանը համապատասխան գնահատելով պատասխանողի բացատրություններում 17/27 ընտրական տեղամասի վերաբերյալ արտահայտված վերոհիշյալ դիրքորոշումը՝ սահմանադրական դատարանը

գտնում է, որ պատասխանողը չի հերքել դիմողի կողմից նշված տեղամասում տեղ գտած ընտրախախտումների վերաբերյալ պնդումները եւ, հաշվի առնելով նաեւ վերոգրյալ հանգամանքները՝ տվյալ տեղամասում տեղ գտած իրավախախտումների վերաբերյալ դիմողի պնդումները համարում է հաստատված եւ կողմի վկայությամբ լրացուցիչ հիմնավորման անհրաժեշտություն չի առաջանում, ինչի վերաբերյալ սահմանադրական դատարանին միջնորդություն էր ներկայացրել դիմողը: Ելնելով վերոհիշյալից՝ սահմանադրական դատարանն իր՝ 2003թ. ապրիլի 16-ի ՍԳ-Ո-412 եւ 2008թ. մարտի 8-ի ՍԳ-Ո-736 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին համապատասխան՝ թիվ 17/27 ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները համարում է ոչ հավաստի:

Չեւավորված իրավակիրառական պրակտիկային համապատասխան՝ սահմանադրական դատարանն ընտրությունների ընդհանուր արդյունքների վրա քվեարկության ոչ հավաստի արդյունքների ազդեցությունը գնահատելու նպատակով նման ընտրատեղամասերում առավել ձայներ ստացած թեկնածուի ձայների չափով կրճատում է քվեարկության արդյունքում թեկնածուներին տրված ձայների ընդհանուր տարբերությունը՝ այդ ձայները գումարելով անճշտություններին:

Թիվ 17 ընտրատարածքում առավել ձայներ ստացած պատգամավորի առաջին եւ երկրորդ թեկնածուների ձայների տարբերությունը 20639 է, իսկ դիմողն առավել ձայներ ստացած թեկնածուից պակաս է ստացել 25494 քվե կամ 11.7 անգամ պակաս: Ձայների նման հարաբերակցության պայմաններում, հաշվի առնելով նաեւ թե՛ ընտրողների եւ թե՛ պատգամավորի մյուս թեկնածուների ընտրական իրավունքների երաշխավորման անհրաժեշտությունը, գնահատելով դիմող եւ պատասխանող կողմերի դիրքորոշումները, նրանց կողմից ներկայացված ապացուցողական նշանակություն ունեցող փաստարկները, ուսումնասիրելով թիվ 17 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012թ. մայիսի 10-ի N 35-Ս, մայիսի 11-ի N 39-Ս, N 40-Ս եւ N 41-Ս որոշումները՝ եթե նույնիսկ վերոհիշյալ մոտեցմամբ ոչ հավաստի ճանաչվեն ոչ միայն հիմնական վեճի առարկա թիվ 17/27 ընտրական տեղամասի, այլեւ թիվ 17/11 ընտրական տեղամասի քվեարկության արդյունքները /որոնցում առավելագույն ձայներ ստացած թեկնածուի ձայները համապատասխանաբար կազմել են 659 եւ 900/, միեւնույն է, ընտրության ընդհանուր պատկերը չի փոխվում:

7. Ինչ վերաբերում է ՀՀ ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջի խախտման եւ ընտրողների կողմից ստորագրված ցուցակների ոչ հրապարակային լինելու հանգամանքի բացասական հետեւանքների վերաբերյալ դիմողի փաստարկներին, ապա այդ փաստարկները գրեթե նույնությամբ ներկայացվել են ՀՀ Ազգային ժողովի 2012թ. մայիսի 6-ի թե՛ համամասնական, թե՛ մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքներով կայացված որոշումները վիճարկելու վերաբերյալ սահմանադրական դատարան ներկայացված դիմումներում, որոնց առնչությամբ սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշումներ է արտահայտել ՍԳ-Ո-1028, 1029, 1030, 1031, 1033

որոշումներում, եւ այդ դիրքորոշումները հավասարապէս կիրառելի են սույն գործի շրջանակներում մատնանշված փաստարկների առնչությամբ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63, 64 եւ 74-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Թիվ 17 ընտրատարածքում Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին» թիվ 17 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 11-ի թիվ 41-Ա որոշումը թողնել ուժի մեջ:

2. Թիվ 17/27 ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմողի վստահված անձի՝ փոստով ուղարկած դիմումի անհետացման, ինչպէս նաեւ այդ ընտրատեղամասում՝ դիմողի կողմից վկայակոչված ընտրախախտումների փաստերի վերաբերյալ նյութերը տրամադրել ՀՀ գլխավոր դատախազությանը՝ օրենքով սահմանված կարգով ընթացք տալու համար:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**22 հունիսի 2012 թվականի
ՄԳՈ- 1034**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՄԵԾԱՄԱՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐՈՎ
ԹԻՎ 7 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի ԹԻՎ 37-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ՎԵՃԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

3 հուլիսի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25 եւ 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրության արդյունքներով թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 11-ի թիվ 37-Ա որոշման հետ կապված վեճի վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով թիվ 7 ընտրատարածքում պատգամավորի թեկնածու Ն. Փաշինյանի՝ 16.05.2012թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ 2012թ. մայիսի 21-ի աշխատակարգային նիստում քննարկելով վերոհիշյալ դիմումի ընդունելիության հարցը, որոշում է կայացրել՝ համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ մասերի, 74-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների՝ գործն ընդունել քննության եւ գործով որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավել թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

Նշված որոշմամբ գործով զեկուցող է նշանակվել ՀՀ սահմանադրական դատարանի անդամ Մ. Թովուզյանը:

Սահմանադրական դատարանում դիմող կողմի՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով թիվ 7 ընտրատարածքում պատգամավորի թեկնածու Ն. Փաշինյանի ներկայացուցիչն է փաստաբան Վ. Գրիգորյանը, իսկ որպես պատասխանող կողմ ներգրավված՝ թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչներն են թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Գ. Սարգսյանը եւ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ն. Հովհաննիսյանը:

Սահմանադրական դատարանն իր՝ 2012թ. հունիսի 15-ի ՍԳԱՌ-35 որոշմամբ կասեցրել է «2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրության արդյունքներով թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 11-ի թիվ 37-Ա որոշման հետ կապված վեճի վերաբերյալ» գործի վարույթը՝ համապատասխան նյութեր ու տեղեկատվություն պահանջելով ՀՀ գլխավոր դատախազությունից, ՀՀ վարչական դատարանից եւ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովից: Սահմանադրական դատարանը նաեւ նկատի է ունեցել, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն գործի վարույթը կասեցնելը հանգեցնում է հիշյալ օրենքով, սահմանադրական դատարանի կանոնակարգով եւ սահմանադրական դատարանի որոշումներով սահմանված դատավարական ժամկետների ընթացքի կասեցմանը:

Պահանջված նյութերն ստանալուց հետո՝ սահմանադրական դատարանն իր՝ 2012թ. հունիսի 28-ի ՍԳԱՌ-36 աշխատակարգային որոշմամբ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի հիման վրա որոշել է գործի վարույթը վերսկսել 2012թ. հուլիսի 3-ին:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, կողմերի եւ նրանց ներկայացուցիչների գրավոր բացատրությունները, գնահատելով դատարանի պահանջով ներկայացված նյութերն ու տեղեկատվությունը, դրանց վերաբերյալ դիմողի ներկայացրած նկատառումները, հետազոտելով դիմումը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններն անցկացվել են 2012 թվականի մայիսի 6-ին՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 68-րդ հոդվածում նախատեսված ժամկետում: Ընտրությունների կազմակերպման եւ անցկացման նպատակով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 41-րդ հոդվածով նախատեսված հիմքերով կազմավորվել է թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը: Ընտրատարածքը ներառում է թվով 35 ընտրական տեղամաս:

Թիվ 7 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով գրանցվել ու քվեաթերթիկներում ընդգրկվել են Ազգային ժողովի պատգամավորի 4 /չորս/

թեկնածու: Ըստ թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի՝ ընտրատարածքում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության՝ ընտրողների ընդհանուր թիվը 59814 է, իսկ քվեարկությանը մասնակցել է 34063 ընտրող: Թեկնածուների օգտին տրված ձայների թիվը 31595 է, որը բաշխվել է հետևյալ կերպ. Ս. Ալեքսանյան՝ 19808, Տ. Գրիգորյան՝ 1262, Վ. Վարդանյան՝ 1088, Ն. Փաշինյան՝ 9437: Անճշտությունների թիվը կազմել է 186:

Թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012թ. մայիսի 11-ի թիվ 37-Ա որոշումով թիվ 7 ընտրատարածքից Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավոր է ընտրվել Ս. Ալեքսանյանը:

2. Դիմողը գտնում է, որ անհրաժեշտ է անվավեր ճանաչել «Թիվ 7 ընտրատարածքում Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին» թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 11-ի թիվ 37-Ա որոշումը եւ 2012թ. մայիսի 6-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններում թիվ 7 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավոր ճանաչել իրեն՝ Նիկոլ Փաշինյանին:

Դիմողը պնդում է, որ ընտրությունների կազմակերպման ընթացքում խախտվել է Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրությունների մասնակից թեկնածուների համար հավասար պայմանների ապահովման օրենսդրական պահանջը՝ իր նախընտրական քարոզչությունը խոչընդոտելու ձեռով, ինչպես նաեւ նախընտրական քարոզչությանը մասնակցել են մի շարք պաշտոնատար անձինք, ինչը համատեղելի չէ նրանց իրավասությունների հետ:

Ըստ Դիմողի՝ ընտրությունների կազմակերպման ընթացքում խախտվել է ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջը, քանի որ թիվ 7 ընտրատարածքում ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորության մյուս թեկնածուի անունից ընտրողներին գումար է բաժանվել, եւ տվյալ թեկնածուն անձամբ ընտրողներին խոստացել է անվճար ծառայություններ մատուցել:

Դիմողը պնդում է նաեւ, որ քվեարկության ընթացքում խախտվել է ՀՀ ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը, քանի որ անձը հաստատող փաստաթղթի դրոշմակնքման համար տեղամասային ընտրական հանձնաժողովներին հատկացված նյութն օգտագործվելուց հետո անհետանում էր օրենքով նախատեսված ժամանակից ավելի վաղ, ինչը հնարավորություն էր ընձեռում կատարելու կրկնաքվեարկություն: Ըստ Դիմողի՝ կրկնաքվեարկության հնարավորություն է ընձեռել նաեւ ընտրողների ստորագրած ցուցակների հրապարակման օրենսդրական սահմանափակումը:

Դիմողը 2012թ. ապրիլի 23-ին դիմել է թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով՝ թիվ 7 ընտրատարածքում ՀՀ ԱԺ մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու Ս. Ալեքսանյանի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու կապակցությամբ դատարան դիմելու պահանջով, որը

մերժվել է թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012թ. ապրիլի 27-ի թիվ 20-Ա որոշմամբ: Նշված որոշումը վերադասության կարգով բողոքարկվել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով, որը, հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները, հաշվի առնելով այն հանգամանքը, որ թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի վերը նշված ակտը հակասում է ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտին, այն է՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական, ընտրատարածքային եւ տեղամասային ընտրական հանձնաժողովների կանոնակարգերը ընդունելու մասին» ՀՀ ԿԸՀ-ի 11.08.2011թ. թիվ 55-Ն որոշման 2-րդ հավելվածի 41-րդ կետին, մասնակի բավարարել է դիմում-բողոքը եւ իր՝ 02.05.2012թ. թիվ 228-Ա որոշմամբ անվավեր է ճանաչել թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի վերը նշված թիվ 20-Ա որոշումը, իսկ դիմում-բողոքը մնացած մասով մերժել է: Սիսժամանակ, ԿԸՀ-ն պարտավորեցրել է թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին մեկօրյա ժամկետում սահմանված կարգով քննարկել Դիմողի՝ 2012թ. ապրիլի 23-ին ներկայացրած դիմում-բողոքը: 2012թ. մայիսի 3-ին հրավիրված նիստում թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը կրկին քննարկելով Դիմողի դիմում-բողոքը՝ կայացրել է թիվ 25-Ա որոշումը՝ մերժելով դիմողի պահանջը:

Դիմողը 2012թ. մայիսի 4-ին թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 25-Ա որոշումը բողոքարկել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ պահանջելով անվավեր ճանաչել վիճարկված որոշումը: Վերջինս նույն օրը գումարած նիստում կայացրել է թիվ 235-Ա որոշումը՝ մերժելով դիմողի պահանջը:

Դիմողի պահանջի հիմնավորումները եւ պատճառաբանություններն ամփոփ հանգում են հետեւյալին.

Ուսիս՝ Դիմողը գտնում է, որ «Թիվ 7 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածու Սամվել Լիմինդրի Ալեքսանյանի կողմնակիցները խոչընդոտել են Դիմողի նախընտրական քարոզարշավի իրականացմանը» /դիմումի կետ 3.1/: Շեշտվում է նաեւ, որ «Պետության պատկան մարմինները՝ տվյալ դեպքում ոստիկանությունը չի ապահովել Դիմողի ազատ նախընտրական քարոզչություն իրականացնելու իրավունքի իրացումը» /այստեղ եւ հետագա տեքստում մեջբերումներն ըստ բնագրի/:

Երկրորդ՝ ըստ Դիմողի՝ «Թիվ 7 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու Սամվել Ալեքսանյանը խախտել էր Ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 8-րդ կետը այն է՝ նախընտրական քարոզչության սահմանված կարգը: Նրա անունից ընտրողներին գումար է բաժանվել եւ նա անձամբ ընտրողներին խոստացել է անվճար ծառայություններ մատուցել: *Հանչնաժողովը պարտավոր էր դիմել դատարան Սամվել Ալեքսանյանի գրանցումը ուժը կորցրած ճանաչելու պահանջով, ինչը չի արել*» /կետ 3.2/:

Երրորդ՝ «Թիվ 7 ընտրատարածքի բոլոր 35 տեղամասերում խախտվել է ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը» /կետ 3.3/:

Չորրորդ՝ «...ընտրությունների անցկացման, կազմակերպման եւ քվեարկության օրվա դրությամբ խախտվել էր նաեւ հավասար մրցակցային պայմաններում ընտրություններին մասնակցելու իր սահմանադրական իրավունքը համաձայն Սահմանադրության 4 հոդվածի» /կետ 3.4/:

Հինգերորդ՝ Դիմողը պնդում է, որ «...իր ընտրության իրավունքի խախտում է հանդիսանում նաեւ այն հանգամանքը, որ պետությունը՝ կրելով ընտրությունների անցկացման հավասարության պայմանը նաեւ «մեկ անձին մեկ ձայն» սկզբունքի շրջանակներում, չի ապահովել կրկնաքվեարկության բացառման իր պարտականությունը, ինչպես նաեւ ընդարձակ հնարավորություններ է ապահովել ոչ միայն կրկնաքվեարկության /ըստ էության՝ մեկ անձի կողմից մեկից ավելի անգամ քվեարկությանը մասնակցելը/ բացառումը, այլ նաեւ օրենքի խախտմամբ նման գործուն հնարավորություն է ընձեռել: Այս հանգամանքին մեծապես նպաստել է նաեւ ընտրողների կողմից ստորագրված ցուցակների հրապարակման ձեւական արգելքը» /կետ 3.5/:

Վեցերորդ՝ Դիմողը հայտարարում է, որ «Դիմողի վստահված անձանց կողմից տեղամասերում ընտրախախտումների բազմաթիվ դեպքեր են արձանագրվել» /կետ 3.6/:

Դիմողի բոլոր այլ փաստարկները, որոնք ներկայացված են դիմումի 3.3., 3.4., 3.5., 3.7. կետերում, ինչպես նաեւ դիմումի 6-րդ կետում բերված միջնորդությունն ամբողջությամբ կրկնում են 2012 թվականի մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքներով ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 13-ի թիվ 265-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ սահմանադրական դատարանում քննության առնված դիմումի համարժեք կետերի բովանդակությունը:

Պատասխանողի գրավոր բացատրությունների առնչությամբ 2012թ. հունիսի 12-ին սահմանադրական դատարան ներկայացրած իր նկատառումներում դիմողը կրկին անդրադառնալով իր հիմնական փաստարկներին՝ նաեւ գտնում է, որ «...**ԿԸՀ-ն իր գործողություններով Դիմողին զրկել է ՀՀ Վարչական դատարան դիմելու հնարավորությունից**, քանի որ ՀՀ Ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 11-րդ կետը սահմանում է. «Թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի, ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու մասին դիմում կարող է ներկայացվել մինչեւ քվեարկության օրը»: Դիմողը նաեւ վկայակոչելով ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 8-րդ մասը՝ ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ թեկնածուի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու պահանջով դատարան դիմելու իրավունքը ՀՀ ընտրական օրենսգիրքը «...տվել է միմիայն թեկնածուին գրանցած հանձնաժողովին»:

Դիմողը, 2012թ. հունիսի 29-ին ՀՀ սահմանադրական դատարան ներկայացրած իր նկատառումների շրջանակներում, գտնում է նաեւ, որ թեկնածուների կողմից եւ նրանց անունից ընտրողներին գույմար բաժանելու ու անվճար ծառայություններ մատուցելու խոստումներ տալու՝ լրատվամիջոցների կողմից արձանագրված փաստերը փորձել են անտեսել Պատասխանողը, կենտ-

րոնական ընտրական հանձնաժողովը, ոստիկանությունը եւ դատախազությունը:

3. Պատասխանող կողմը գտնում է, որ թիվ 7 ընտրատարածքում քվեարկության արդյունքներով ընդունված որոշումն անվավեր ճանաչելու եւ իրեն որպես թիվ 7 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավոր ճանաչելու վերաբերյալ դիմողի պահանջն անհիմն է, քանի որ թիվ 7 ընտրատարածքում ՀՀ ԱԺ մեծա-մասնական ընտրակարգով ընտրությունների նախապատրաստման եւ քվեարկության ընթացքում տեղի չեն ունեցել ՀՀ ընտրական օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին հիմք հանդիսանալ հանձնաժողովի կողմից այլ որոշում կայացնելու համար:

Ի պատասխան թիվ 7 ընտրատարածքում Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 11-ի թիվ 37-Ա որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմողի պահանջին՝ պատասխանողը, հղում կատարելով ՀՀ ընտրական օրենսգրքի 74-րդ հոդվածի 2-րդ եւ 8-րդ մասերին, վկայակոչելով 11.05.2012թ. կազմված՝ ընտրատարածքում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության տվյալները, նշում է, որ թիվ 7 ընտրատարածքի թիվ 35 ընտրատեղամասերից 24-ում առկա չեն գրառումներ քվեարկության օրը կատարված խախտումների մասին, իսկ թիվ 11 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում առկա գրառումների ուսումնասիրման արդյունքում թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը 11.05.2012թ. կայացրել է «2012 թվականի մայիսի 06-ի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններում թիվ 7 ընտրատարածքի տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ» թիվ 35-Ա որոշումը, որով հանձնաժողովը հանգել է եզրակացության, համաձայն որի՝ 2012 թվականի մայիսի 6-ի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրություններում թիվ 7 ընտրատարածքում կատարված խախտումների վերաբերյալ գնահատականները որեւէ ազդեցություն չեն ունեցել քվեարկության արդյունքների վրա: Ընդ որում, նշված որոշումը վարչական կամ դատական կարգով չի բողոքարկվել եւ համարվում է ուժի մեջ մտած իրավաչափ ակտ:

Ավելին, հանձնաժողովը 11.05.2012թ. կայացրել է «2012 թվականի մայիսի 6-ի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների քվեարկության արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 36-Ա որոշումը, որով գտել է, որ 2012 թվականի մայիսի 6-ին թիվ 7 ընտրատարածքում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրությունների նախապատրաստման եւ քվեարկության ընթացքում տեղի չեն ունեցել ՀՀ ընտրական օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրության արդյունքի վրա:

Պատասխանողը նշում է, որ դիմողը չի վկայակոչում փաստարկներ, որ

ընտրա-տարածքում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը հակասում է ՀՀ ընտրական օրենսգրքի պահանջներին կամ ճշգրտորեն չի արտացոլում ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունների գումարային պատկերը: Թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, հիմք ընդունելով, ի թիվս այլնի, ընտրատարածքում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, վերը նշված՝ 11.05.2012թ. թիվ 35-Ա եւ 36-Ա որոշումները, ինչպես նաեւ դատական գործեր չլինելու հանգամանքը, ընդունել է բացառապես իրավաչափ որոշում՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով թիվ 7 ընտրատարածքում պատգամավոր ընտրվելու մասին:

Նախընտրական քարոզչությանը մի շարք պաշտոնատար անձանց մասնակցության առնչությամբ պատասխանողը, հղում կատարելով ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի 2-րդ մասին, ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետին, 22-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, մեկնաբանելով ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետում «իրենց լիազորություններն իրականացնելիս» եւ ՀՀ ընտրական օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «պաշտոնեական լիազորություններն իրականացնելիս» բառակապակցությունները, գտնում է, որ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց կողմից ընտրություններին մասնակցելը չի կարող որակվել որպես ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածին հակասող:

Անձը հաստատող փաստաթղթերի վրա դրվող դրոշմակնիքների առնչությամբ պատասխանողը նշում է, որ դրոշմակնիքի արագ անհետանալու փաստը չի կարող ազդեցություն ունենալ քվեարկության արդյունքների վրա, քանզի թանաքի կիրառումն ընդամենը լրացուցիչ, սակայն ոչ միակ միջոցն է կրկնակի քվեարկությունը բացառելու համար: Ավելին, վերը նշված փաստի վերաբերյալ ներկայացված դիմումը թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը քննարկել է նույն օրը՝ 06.05.2012թ. եւ ընդունել թիվ 31-Ա որոշումը, որը ո՛չ վերադատության, ո՛չ դատական կարգով չի բողոքարկվել, ինչը նշանակում է, որ այն եւս հանդիսանում է իրավաչափ վարչական ակտ:

Ընտրողների կողմից ստորագրված ցուցակներին ծանոթանալու առնչությամբ պատասխանողը, հղում կատարելով ՀՀ ընտրական օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին, նշում է, որ վստահված անձինք իրավունք ունեն ծանոթանալու ընտրողների կողմից ստորագրված ցուցակներին, դրանցից ինքնուրույն կատարել քաղվածքներ նաեւ քվեարկության արդյունքների վերահաշվարկի ժամանակ, մինչդեռ թիվ 7 ընտրատարածքի թիվ 35 ընտրական տեղամասերից եւ ոչ մեկում ո՛չ համամասնական, ո՛չ մեծամասնական ընտրակարգով ներկայացված չէ քվեարկության արդյունքների վերահաշվարկի վերաբերյալ որեւէ դիմում, առկա չէ վերահաշվարկ կատարելու վերաբերյալ որեւէ մերժված կամ չընդունված դիմում, ինչը նշանակում է, որ ընտրողների կողմից ստորագրված ցուցակներին ծանոթանալու եւ դրանցից քաղվածքներ կատարելու իրավունքը լրիվ ծավալով չի իրացվել հենց դիմողի կողմից: Ավելին, թիվ 7 ընտրատարածքի թիվ 35 տեղամասերից եւ ոչ մեկի առնչությամբ ներկայաց-

ված չէ նաեւ որեւէ դիմում ՀՀ ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 9 եւ 10-րդ մասերով սահմանված նոր ինստիտուտի՝ տեղամասում քվեարկութեան արդյունքներն անվավեր ճանաչելու վերաբերյալ:

Գիմողի կողմից մատնանշված եւ դիմումի 1.4, 1.5, 1.6, 1.7, 1.10, 1.23, 1.24 ենթակետերում, 3.1 կետում, 3.1.1-3.1.10 ենթակետերում ներկայացված փաստերի առնչությամբ պատասխանողը նշում է, որ դրանց քննարկումը եւ լուծումն ընտրական հանձնաժողովների իրավասությունից դուրս են, քանի որ դրանք իրենց բնույթով քրեաիրավական հարաբերություններ են: Ավելին, նշված փաստերի վերաբերյալ դիմումներին իրավապահ մարմիններն արձագանքել են, սակայն հետագայում հետաքննության մարմնի գործողությունների կամ որոշումների իրավաչափությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դիմողի կողմից չի վիճարկվել:

Թիվ 7 ընտրատարածքային եւ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովներին ներկայացված դիմումների եւ դրանց քննության արդյունքում կայացված որոշումների վերաբերյալ դիմողի փաստարկների առնչությամբ /դիմումի 1.8, 1.9, 1.11-1.22, ինչպես նաեւ 3.2 կետի 3.2.1-3.2.7 ենթակետերը/ պատասխանողը նշում է, որ դրանք վերաբերում են թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին ու կենտրոնական ընտրական հանձնաժողովին ներկայացված դիմումներին եւ առնչվում են թիվ 7 ընտրատարածքում ՀՀ ԱԺ մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածու Ս. Ալեքսանյանի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու պահանջով եւ թիվ 190 դպրոցի տնօրենին ու Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարին վարչական տույժի ենթարկելու պահանջով թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից դատարան դիմելու իր լիազորությունների կատարմանը: Ըստ պատասխանողի՝ նշված դիմումների վերաբերյալ թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի համապատասխանաբար՝ թիվ 20-Ա եւ 21-Ա որոշումները վերադատության կարգով բողոքարկվել են ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով, որն իր՝ 02.05.2012թ. թիվ 228-Ա եւ 229-Ա որոշումներով անվավեր է ճանաչել թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի վերը նշված թիվ 20-Ա եւ 21-Ա որոշումները, իսկ դիմում-բողոքները մնացած մասով մերժել է: Ի կատարումն ՀՀ ԿԸՀ-ի 02.05.2012թ. նշված թիվ 228-Ա եւ 229-Ա որոշումների՝ թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը 03.05.2012թ. ընդունել է համապատասխանաբար՝ թիվ 25-Ա եւ 26-Ա որոշումները, որոնք եւս բողոքարկվել են վերադատության կարգով, եւ որոնց կապակցությամբ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը 04.05.2012թ. եւ 05.05.2012թ. ընդունել է համապատասխանաբար թիվ 235-Ա եւ 244-Ա որոշումները:

Վերը նշվածի կապակցությամբ պատասխանողը, հղում կատարելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 146-րդ հոդվածի 2-րդ մասին, նշում է, որ դիմողը հնա-րավորություն ուներ ՀՀ ԿԸՀ-ի 04.05.2012թ. եւ 05.05.2012թ. թիվ 235-Ա եւ 244-Ա որոշումները բողոքարկել ՀՀ վարչական դատարան՝ ընդհուպ մինչեւ քվեարկության հաջորդ օրը, ինչը չի կատարել, մինչդեռ, եթե դիմողն օգտվեր իրեն ընձեռված հնարավորությունից, ապա ՀՀ ընտրական օրենսգրքի

74-րդ հոդվածի 8-րդ մասի ուժով ընտրության արդյունքներն ամփոփելիս թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը հիմք կընդուներ ոչ թե վերահաս ընտրական հանձնաժողովի, այլ դատական ակտով արտահայտված իրավական դիրքորոշումները: Պատասխանողը եզրակացնում է, որ «...դիմողի ներկայացրած փաստական հանգամանքերը չեն կարող ինքնուրույն գնահատման առարկա հանդիսանալ, քանզի դրանց վերաբերյալ արդեն իսկ առկա է չվիճարկված ակտ, որն իրավաչափ է, ուժի մեջ գտնվող է եւ այդ ակտով ներկայացված փաստական հանգամանքներին տրվել են իրավական գնահատականներ»:

4. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմումի եւ պատասխանող կողմի բացատրությունների ու դատարանի կողմից լրացուցիչ պահանջված նյութերի վերաբերյալ Դիմողի ներկայացրած նկատառումների ուսումնասիրությունը վկայում է, որ Դիմողը սահմանադրական դատարանում վիճարկելով Պատասխանողի 2012թ. մայիսի 11-ի թիվ 37-Ա որոշման իրավաչափությունը, ըստ էության գտնում է, որ այդ որոշումն անվավեր ճանաչելու արդյունքում պետք է անվավեր ճանաչել ոչ թե ընտրությունների արդյունքները, այլ իրեն ճանաչել ընտրված պատգամավոր:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 14-րդ մասով սահմանված է, որ ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով եթե խնդիր է առաջադրվում անվավեր ճանաչել ընտրական հանձնաժողովի որոշումը, ապա անհրաժեշտ է հիմնավորել, որ պետք է ընդունվի **հետեւյալ որոշումներից որեւէ մեկը.**

ա) անվավեր ճանաչել ընտրությունների արդյունքները,

բ) ընտրված ճանաչել համապատասխան թեկնածուին կամ կուսակցության (դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված համապատասխան թվով թեկնածուների,

գ) ընտրությունները ճանաչել չկայացած,

դ) նշանակել ընտրության երկրորդ փուլ:

Այդ որոշումները, բնականաբար, միաժամանակ ընդունվել չեն կարող, եւ դրանցից յուրաքանչյուրն իր կոնկրետ հիմնավորումն ու իրավական նախադրյալները պետք է ունենա: Չնայած այն բանին, որ Դիմողը միաժամանակ փորձում է փաստարկներ ներկայացնել նշված թե՛ ա) եւ թե՛ բ) կետերի վերաբերյալ, սակայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի պահանջներին համապատասխան որոշակի է խնդրանքը՝ «...անվավեր ճանաչել թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի N37-Ա որոշումը եւ 2012թ. մայիսի 6-ի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններում թիվ 7 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրված ճանաչել Դիմողին»: Նման հարցադրումը ենթադրում է, որ վեճի առարկա կարող է լինել կամ քվեարկության արդյունքներով առավել ձայներ ստացած թեկնածուի՝ ընտրություններին մասնակցության օրինականությունը, կամ էլ նրա օգտին տրված ձայների հաշվարկ-

ման իրավաչափությունը: Դիմողը վերջինիս վերաբերյալ համապատասխան փաստարկներ չի ներկայացնում եւ հիմնական շեշտադրումը կատարում է առաջին հանգամանքի վրա՝ գտնելով, որ 2012թ. մայիսի 6-ին թիվ 7 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով Ազգային ժողովի պատգամավորի ընտրությունների քվեաթերթիկներում անօրինական ձեռով շարունակել է մնալ պատգամավորի թեկնածու Սամվել Ալեքսանյանի անունը: Հետեւաբար, Դիմողը, ըստ իր հարցադրումների բնույթի, սահմանադրական դատարանում գործնականում բարձրացնում է պատգամավորի թեկնածուի գրանցման (դրա ուժը կորցրած ճանաչելու) ու քվեաթերթիկներում մնալու հետ կապված վեճ:

5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Հայաստանի Հանրապետությունում առկա իրավակարգավորման շրջանակներում ընտրության արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով սահմանադրական դատարանի լիազորությունների արդյունավետ իրականացումն ուղղակիորեն պայմանավորված է ընտրական գործընթացներում ներգրավված սուբյեկտների, ինչպես նաեւ հանրային իշխանության մարմինների գործունեության արդյունքներով՝ նրանց լիազորությունների եւ պատասխանատվության շրջանակներում: Մասնավորապես, այն հարցերով, որոնցով իրավասու են բացառապես հանրային իշխանության այլ մարմինները, ՀՀ սահմանադրական դատարանը կարող է ընտրական վեճի վերաբերյալ գործի մյուս փաստերի համակցությամբ գնահատել ընտրության արդյունքներով ընդունված որոշման իրավաչափությունը՝ նկատի առնելով այդ մարմինների կողմից իրենց լիազորությունների իրականացման արդյունքում ընդունված որոշումները կամ կատարված գործողությունները:

Միաժամանակ, սահմանադրական դատավարության կարեւորագույն սկզբունքներից է գործերի ի պաշտոնե քննության պահանջը, որն ամրագրված է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 5 եւ 19-րդ հոդվածներում՝ **իր որոշակի սահմաններով հանդերձ:** Ընտրական վեճերին վերաբերող հատուկ վարույթում (հիշյալ օրենքի 74-րդ հոդված) այս սկզբունքի կիրառման հիմնական սահմանը, մի կողմից, ՀՀ սահմանադրական դատարանի կողմից որոշակի՝ համեմատաբար սեղմ ժամկետներում գործով ըստ էության որոշում կայացնելու իրական հնարավորությունն ու պարտականությունն է, մյուս կողմից՝ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի պահանջների կատարումը: Վերջինից բխում է, որ սահմանադրական դատարանն իրավասու չէ ստանձնել Սահմանադրությամբ կամ օրենքով այլ մարմիններին վերապահված լիազորություններ: Սահմանադրական այս պահանջը նկատի ունենալով՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքը որոշակի նախադրյալներ է սահմանում ընտրության արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով արդյունավետ քննության համար, մասնավորապես՝ գործի վարույթը կասեցնելու (56-րդ հոդված) եւ այլ մարմիններին հանձնարարական տալու լիազորության իրականացման միջոցով (74-րդ հոդվածի 8-րդ մաս):

Վերոնշյալ հանգամանքները հաշվի առնելով, նկատի ունենալով նաեւ, որ դիմողը դատական կարգով իր իրավունքների պաշտպանությունից զրկված լի-

ները պայմանավորել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործողություններով, ՀՀ սահմանադրական դատարանը 2012թ. հունիսի 15-ին որոշել է կասեցնել սույն գործի վարույթը եւ պահանջել.

ա/ ՀՀ գլխավոր դատախազությունից՝ ՀՀ սահմանադրական դատարանին տեղեկություններ տրամադրել դիմող Ն. Փաշինյանի դիմումի 1.4, 1.5, 1.6, 1.7, 1.8, 1.9, 1.10 կետերում հիշատակված փաստերի վերաբերյալ իրավասու մարմինների կողմից՝ օրենքով սահմանված կարգով ձեռնարկված համապատասխան միջոցների եւ դրանց արդյունքների մասին,

բ/ ՀՀ վարչական դատարանից՝ ՀՀ սահմանադրական դատարան ներկայացնել 2012թ. մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների հետ կապված հայցադիմումների հիման վրա հարուցված ընտրական գործերով կայացված դատական ակտերը՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի դրույթների գործնական կիրառման վիճակը հետազոտելու նպատակով,

գ/ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովից՝ ՀՀ սահմանադրական դատարան ներկայացնել գրավոր բացատրություն՝ պատասխանողի գրավոր բացատրության կապակցությամբ դիմողի 2012թ. հունիսի 12-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված նկատառումների 1.2 կետի վերաբերյալ:

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովն իր գրավոր բացատրությունը ներկայացրել է 18.06.2012թ. թիվ 01-586 գրությամբ, իսկ ՀՀ վարչական դատարանից 19.06.2012թ. թիվ ԳԳ-9-57172 գրությամբ ստացվել են 2012թ. մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների հետ կապված հայցադիմումներով ՀՀ վարչական դատարանի կայացրած թվով 23 դատական ակտերը: ՀՀ գլխավոր դատախազի 2012թ. հունիսի 21-ի թիվ 39-237-12 գրությամբ ստացվել են քննության առարկա դիմումի 1.4, 1.5, 1.6, 1.8, 1.9 եւ 1.10 կետերում նշված փաստերի քննարկման արդյունքներով կայացված որոշումների պատճենները: Միաժամանակ, ՀՀ գլխավոր դատախազության կողմից նշվել է, որ դիմումի 1.7 կետի վերաբերյալ հնարավոր կլինի տեղեկություն տրամադրել դիմումին կցված սկավառակը դիտելուց հետո: 22.06.2012թ. դիմումին կցված բոլոր թվով վեց էլեկտրոնային սկավառակները տրամադրվել են ՀՀ գլխավոր դատախազությանը, որոնց վերաբերյալ պատասխանն ստացվել է ՀՀ գլխավոր դատախազի թիվ 39-237-12 գրությամբ՝ 27.06.2012թ.:

Սահմանադրական դատարան մուտքագրված բոլոր նյութերն օրենքով սահմանված կարգով տրամադրվել են կողմերին: Գիմողը դրանց վերաբերյալ իր նկատառումներն է ներկայացրել սահմանադրական դատարան 2012թ. հունիսի 29-ին:

6. Գիմողի կողմից դիմումի 1.3-1.10 կետերում բերված փաստերը, ինչպես նաեւ 3.1 եւ 3.2 կետերում բերված փաստարկները հիմք են ծառայել թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով համապատասխան բողոք ներկայացնելու եւ վերջինիս որոշումները վերադասության կարգով ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովում բողոքարկելու համար: Գրա մասին է վկայում դիմումի 1.11-1.22 կետերում բերված տեղեկատվությունը:

Արդյունքում՝ Գիմողը հանգում է այն եզրակացությանը, որ «Հանձնաժողովի եւ ԿԸՀ կատարած անօրինական եւ ի վնաս Գիմողի՝ Սահմանադրությամբ եւ Ընտրական օրենսգրքով ամրագրված իրավունքների գործողությունների հետեւանքով 2012թ. մայիսի 6-ին թիվ 7 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով ԱԺ պատգամավորի ընտրությունների քվեաթերթիկներում շարունակել է մնալ պատգամավորի թեկնածու Սամվել Լիմինդրի Ալեքսանյանի անունը» /կետ 3.2.7/: Գիմողը հետետություն է անում, որ՝ «Այսպիսով խեղաթյուրվել են թիվ 7 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով ԱԺ ընտրությունների քվեարկության արդյունքները: Հենց այս խեղաթյուրման հիման վրա էլ Հանձնաժողովը հնարավորություն է ստացել կայացնելու, իր թիվ N37-Ա որոշումը՝ Սամվել Լիմինդրի Ալեքսանյանի 7 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով ԱԺ պատգամավոր ընտրվելու մասին: Իսկ հաշվի առնելով այն հանգամանքը, որ թիվ 7 ընտրատարածքում Սամվել Ալեքսանյանի օգտին քվեների քանակից հետո առավելագույն քվեների քանակը ստացել էր Գիմողը, ապա Սամվել Ալեքսանյանի թեկնածության գրանցումն ուժը կորցրած ճանաչվելու դեպքում այս ընտրատարածքից մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավոր էր լինելու հենց Գիմողը»:

Գործի նյութերը վկայում են նաեւ, որ, ինչպես նշվեց, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը 02.05.2012թ. իր թիվ 228-Ա որոշմամբ՝ բավարարելով դիմողի ներկայացուցչի դիմում-բողոքը, անվավեր է ճանաչել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 20-Ա որոշումը, իսկ թիվ 229-Ա որոշմամբ անվավեր է ճանաչել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 21-Ա որոշումը: 2012թ. մայիսի 4-ին, ժամը 22.00-ին հրավիրված արտահերթ նիստում կենտրոնական ընտրական հանձնաժողովը չի բավարարել դիմողի ներկայացուցչի դիմում-բողոքը՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 25-Ա որոշման առնչությամբ, իր թիվ 235-Ա որոշմամբ այն ուժի մեջ թողնելով:

Գիմողը եւ նրա ներկայացուցիչները կենտրոնական ընտրական հանձնաժողովի հիշյալ որոշումը կամ գործողությունները /անգործությունը/ ՀՀ ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածով սահմանված կարգով չեն բողոքարկել ՀՀ վարչական դատարան՝ պատճառաբանելով, որ այն ստացել են միայն 2012թ. մայիսի 8-ին եւ «ԿԸՀ-ն իր գործողություններով Գիմողին զրկել է ՀՀ Վարչական դատարան դիմելու հնարավորությունից»՝ վկայակոչելով ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 11-րդ մասը եւ 18-րդ հոդվածի 8-րդ մասը:

Գործի նյութերը վկայում են, որ, **նախ**՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2012թ. մայիսի 4-ին ստանալով դիմողի բողոքը, վերջինիս քննությունը կազմակերպել է թիվ 235-Ա որոշումը հրապարակել է նույն օրը գումարած նիստում, որին մասնակցել է նաեւ դիմողը: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված պաշտոնական բացատրությունից հետեւում է, որ 2012թ. մայիսի 4-ի թիվ 235-Ա որոշումը նիստից անմիջապես հետո տեղակայվել է հանձնաժողովի համացանցային կայքում: Համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքի 45-րդ հոդվածի 5-րդ մասի՝ «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ընդունած վարչական ակտն

ուժի մեջ է մտնում նիստում հրապարակվելուց հետո՝ հանձնաժողովի համա-
ցանցային կայքում տեղադրելու պահից»։ Պատասխանողի գրավոր բացատ-
րության կապակցությամբ Դիմողի՝ 2012թ. հունիսի 12-ի ՀՀ սահմանադրական
դատարան մուտքագրված նկատառումների 1.2 կետի վերաբերյալ ՀՀ կենտրո-
նական ընտրական հանձնաժողովի բացատրությունները, բերված փաստաբե-
կները, նիստի արձանագրության ուսումնասիրությունը վկայում են, որ հիմնավոր
չէ Դիմողի պնդումն առ այն, որ «ԿԸՀ-ն իր գործողություններով Դիմողին զրկել
է ՀՀ վարչական դատարան դիմելու հնարավորությունից»։ Ուշադրության է ար-
ժանի նաեւ այն հանգամանքը, որ Դիմողը 29.06.2012թ. սահմանադրական դա-
տարան ներկայացրած նկատառումների մեջ նշում է, որ «...ԿԸՀ-ի թիվ 235-Ա
որոշումը 05.05.2012թ.-ի առավոտյան եւս պատրաստ չի եղել։ Իսկ նման որոշում
պատրաստ չի եղել ԿԸՀ կողմից թույլ տրված մեկ այլ ընթացակարգային
խախտման պատճառով. նման որոշման նախագիծ ներկայացված չի եղել քվե-
արկության առհասարակ»։ Սակայն 16.05.2012թ. սահմանադրական դատա-
րան ներկայացրած դիմումի 1.22 կետում Դիմողը փաստում է. «ԿԸՀ քար-
տուղար Ա. Սմբատյանը ԿԸՀ-ի նիստի հաստատման է ներկայացրել որոշման
նախագիծ՝ Դիմողի եւ նրա լիազոր ներկայացուցիչ Վահագն Հովակիմյանի՝
2012թ. մայիսի 4-ի դիմում-բողոքը մերժելու վերաբերյալ։ Մոտ մեկ ժամ տեւած
քննարկումից հետո ԿԸՀ-ն քվեարկությամբ հաստատել է քննարկման սկզբում
ներկայացված որոշման նախագիծը՝ կայացնելով թիվ N235-Ա որոշումը»,

Երկրորդ՝ դիմողը զրկված չի եղել անմիջականորեն վարչական դատարան
դիմելու իրավունքից։ Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ ընտրա-
կան օրենսգրքի 18-րդ հոդվածի 8-րդ մասին չի կարող տրվել այնպիսի մեկնա-
բանություն, ըստ որի՝ այդ իրավասությամբ օժտված է միայն թեկնածուին,
կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակը գրանցած
հանձնաժողովը։ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածն ամրագրել է, որ յուրա-
քանչյուր ոք ունի իր իրավունքների ու ազատությունների դատական պաշտպա-
նության իրավունք։ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածն
իր հերթին սահմանում է, որ «Ընտրական գործերով վարչական դատարան կա-
րող են դիմել սույն օրենսգրքի 3-րդ հոդվածում նշված անձինք, ինչպես նաեւ Հա-
յաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված դեպքերում՝
համապատասխան ընտրական հանձնաժողովը»։ Իսկ համաձայն հիշյալ 3-րդ
հոդվածի՝ վարչական դատարան կարող է, մասնավորապես, դիմել յուրաքանչ-
յուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ, եթե համարում է, որ պետական
կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար
անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ
խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի
Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով,
օրենքներով եւ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները եւ ազա-
տությունները։ Իսկ ՀՀ ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 1-ին մասը սահ-
մանում է, որ ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները
(անգործությունը) կարող է բողոքարկել **յուրաքանչյուր ոք**, եթե գտնում է, որ

խախտվել կամ կարող է խախտվել իր սուբյեկտիվ ընտրական իրավունքը, ինչպես նաև վստահված անձը, եթե գտնում է, որ խախտվել են վստահված անձի կամ իր վստահողի՝ ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքները:

2012թ. մայիսի 6-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրություններին առնչվող գործերով ՀՀ վարչական դատարանի ընդունած թվով 23 ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ ձեռավորված դատական պրակտիկան նույնպես առաջնորդվել է ՀՀ Սահմանադրության եւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի հիշյալ նորմերի պահանջներով:

Սահմանադրական դատարանը, այդուհանդերձ, արձանագրում է նաև, որ ՀՀ ընտրական օրենսգրքում առավել հստակ պետք է շարադրվեն թեկնածուների իրավունքները՝ գրանցման հարցերով ՀՀ վարչական դատարան բողոք ներկայացնելու եւ իրենց պասիվ ընտրական իրավունքը պաշտպանելու առնչությամբ: Միաժամանակ, օրենսդրոեն պետք է հստակ սահմանվի, որ, մասնավորապես, այն բողոքները, որոնք բերվում են ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի հատկանիշներով ու հատկապես դրանց վերաբերյալ առկա են մամուլի հրապարակումներ, որոնք սահմանված կարգով չեն հերքվել, համապատասխան ընտրական հանձնաժողովները **պարտավոր են ի պաշտոնե քննության առնել** ու ընդունել պատճառաբանված որոշում՝ տարածայնությունների հարցը օրենքի պահանջներին համապատասխան դարձնելով ՀՀ վարչական դատարանի քննության առարկա: Նման հարցերի ի պաշտոնե քննարկման սկզբունքի օրենսդրոեն ամրագրումը բխում է նաև ՀՀ ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի եւ 50-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներից ու կարելի է երաշխիք է ընտրական գործընթացի նկատմամբ վստահության ամրապնդման տեսանկյունից:

7. Նկատի ունենալով այն հանգամանքը, որ դիմողը ՀՀ ընտրական օրենսգրքի նորմերի տարաբնույթ ընկալման արդյունքում, ինչպես նաև հաշվի առնելով «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «դ» ենթակետի իրավակարգավորումները, ՀՀ վարչական դատարանում դատական քննության առարկա չի դարձրել այն փաստերը, որոնք շարադրված են դիմումի 1.4-1.10 կետերում, եւ որոնք, դիմողի կարծիքով, բավարար հիմք էին թիվ 7 ընտրատարածքից պատգամավոր ընտրված թեկնածուի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար, ինչպես նաև ելնելով այն իրողությունից, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը չի նախատեսել դատական հանձնարարականի ինստիտուտի կիրառման դատավարական ընթացակարգեր, ՀՀ սահմանադրական դատարանը, ինչպես նշվեց, ՀՀ գլխավոր դատախազությունից է պահանջել եւ ուսումնասիրել իրավասու մարմինների կողմից քննության առնված նյութերով բոլոր այն արդյունքները, որոնք առնչվում են դիմողի վկայակոչած փաստերին: Սահմանադրական դատարանը հատկապես նկատի է առել ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի, ՀՀ քրեական օրենսգրքի 149 եւ 154.2-րդ հոդվածների, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53 եւ 290-րդ հոդվածների, ինչպես

նաեւ «Դատախազութեան մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի պահանջները: ՀՀ գլխավոր դատախազութեան կողմից պաշտոնապէս ներկայացված նյութերի համաձայն՝ դիմումում առաջադրված խնդրանքին առնչվող բոլոր այն փաստերը, որոնք ներկայացնում է Դիմողը, օրենքով սահմանված կարգով ստացել են իրավական գնահատական, նախապատրաստված նյութերով քրեական գործերի հարուցումը մերժվել է հանցակազմի կամ հանցադէպի բացակայութեան պատճառով, ընդունված որոշումների օրինականությունն ստուգվել է ՀՀ դատախազութեան կողմից, դրանք դատական կարգով չեն բողոքարկվել:

ՀՀ Սահմանադրութեամբ եւ օրենքով սահմանված կարգով ընտրական վեճերի լուծման առկա իրավակարգավորումները նկատի ունենալով եւ հաշվի առնելով իրավասու մարմինների կողմից սահմանադրական դատարան սույն գործի շրջանակներում ներկայացված տեղեկատվությունը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ընտրությունների արդյունքներով ընտրական հանձնաժողովի կողմից ընդունված որոշման շուրջ ծագած վեճի շրջանակներում թեկնածուների գրանցմանն առնչվող փաստերի գնահատման առնչությամբ սահմանադրական դատարանը պարտավոր է որպէս ապացուցողական հիմք ընդունել ոչ թէ առանձին կարծիքներ, հայտարարություններ կամ թեկնածուների անձնական հատկանիշներ, այլ ՀՀ վարչական դատավարութեան օրենսգրքով սահմանված կարգով փաստերի համակողմանի գնահատման արդյունքում ՀՀ վարչական դատարանի կողմից ընդունված վերջնական դատական ակտը կամ, դրա բացակայութեան օբյեկտիվ հիմքերի առկայութեան պարագայում՝ իրավասու մարմինների կողմից փաստերին տրված եւ օրենքով սահմանված կարգով ուժի մէջ մտած իրավական գնահատականները, ինչպիսիք ՀՀ գլխավոր դատախազութեան կողմից ներկայացվել են ՀՀ սահմանադրական դատարան:

Սահմանադրական դատարանը նաեւ գտնում է, որ առկա է իրավակարգավորումների հետագա բարեփոխումների խնդիր: Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը հանգում է նրան, որ բոլոր այն դեպքերում, երբ հատկապէս վիճահարույց է դառնում, որ իրավասու մարմինների կողմից ժամանակին ու օրենքով սահմանված կարգով քննութեան առարկա չեն դարձել ՀՀ ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի հատկանիշներով հանրային հնչեղություն ստացած փաստերը, ինչպէս նաեւ օբյեկտիվ այլ հիմքերի առկայութեան պարագայում, երբ տվյալ հարցն իրավասու դատարանի կողմից իրավական գնահատական չի ստացել եւ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավաչափորէն ծագել է դրա անհրաժեշտությունը, ՀՀ վարչական դատավարութեան եւ ՀՀ քրեական դատավարութեան օրենսգրքերում օրենսդրի կողմից պետք է համապատասխան դատավարական ընթացակարգեր սահմանվեն, որպէսզի նման հարցերն իրավասու դատարանների կողմից քննութեան առարկա դառնան ՀՀ սահմանադրական դատարանի դատական հանձնարարականի շրջանակներում: Դա համահունչ կլինի նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի, 74-րդ հոդվածի 8-րդ մասի եւ 56-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներին: Հայաստանի Հանրապետությունում ընտրական իրավունքի դատական պաշտ-

պանության գործող համակարգի առանձնահատկությունները նկատի ունենալով (ինչին ՀՀ սահմանադրական դատարանը, մասնավորապես, անդրադարձել է 2012թ. մայիսի 31-ի ՍԳՈ-1028 որոշման մեջ)՝ նման ընթացակարգերի առկայությունը հնարավորություն կտա ոչ միայն էապես բարելավել ընտրական վեճերի լուծման արդյունավետությունը, այլև բարձրացնել իրավասու տարբեր մարմինների պատասխանատվությունը՝ իրենց լիազորությունների շրջանակներում ընտրական իրավունքի պաշտպանության օրենսդրական պահանջների կատարումը երաշխավորելու, ինչպես նաև ՀՀ ընտրական օրենսգրքի, մասնավորապես՝ 18-րդ հոդվածի 7-րդ մասի, պահանջների խախտմամբ ընտրական իրավունքի իրացումը բացառելու ուղղությամբ:

8. Սահմանադրական դատարանը դիմողի այն փաստարկների վերաբերյալ, որոնք ներկայացված են դիմումի 3.3., 3.4., 3.5., 3.7. կետերում, ինչպես նաև դիմումի 6-րդ կետում բերված միջնորդության առնչությամբ իր իրավական դիրքորոշումներն արտահայտել է 2012թ. մայիսի 31-ի ՍԳՈ-1028 որոշման մեջ: Այդ փաստարկները, սակայն, չեն կարող դիտվել որպես Դիմողին ընտրված ճանաչելու պահանջի հիմք, քանի որ դրանցով առաջ է քաշվում այլ խնդիր՝ փորձ է արվում հիմնավորել ընտրությունների արդյունքներն ամբողջությամբ անվավեր ճանաչելու հանգամանքը: Այդուհանդերձ, հաշվի առնելով «Հայ ազգային կոնգրես» կուսակցությունների դաշինքի կողմից ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012թ. մայիսի 13-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պատգամավորներ ընտրվելու մասին» N265-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ» գործի շրջանակներում ներկայացված եւ սույն գործով Դիմողի ներկայացրած հիշյալ փաստերի ու փաստարկների նույնականությունը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՍԳՈ-1028 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներն ու իրավական գնահատականները հավասարապես վերաբերելի են նաև քննության առարկա սույն գործին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63, 64 եւ 74-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. «Թիվ 7 ընտրատարածքում Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին» թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 11-ի թիվ 37-Ա որոշումը թողնել ուժի մեջ:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**3 հուլիսի 2012 թվականի
ՍԳՈ- 1035**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ՆԵԼԼԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 208-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԳ ՄԱՍԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ Ը
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

18 հուլիսի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչ, փաստաբան Գ. Թորոսյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Մխիթարյանի, նույն բաժնի առաջատար մասնագետ Հ. Սարգսրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Նելլի Սկրտչյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ն. Սկրտչյանի՝ 06.03.2012թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի հունիսի 17-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Վերաքննիչ բողոք բերելու սահմանափակումները» վերտառությամբ 208-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Գույքային պահանջով քաղաքացիական գործերով վերաքննությունը թույլատրելի է միայն, եթե տվյալ գործով վեճի առարկայի արժեքը գերազանցում է նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. դիմողը 08.12.2010թ. հայցադիմում է ներկայացրել Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ «Երեւան հյուրանոց» ԲԲ ընկերության՝ աշխատավարձից անհիմն պահված գումարի բռնագանձման պահանջի մասին:

Գիմողը դատարանին հայտնել է, որ 2009թ. մարտի 24-ից մինչեւ հուլիսի 27-ն աշխատել է «Երեւան հյուրանոց» ԲԲ ընկերությունում որպես մատենավար՝ համաձայն աշխատանքային պայմանագրի: Աշխատանքից ազատվել է պայմանագրի ժամկետը լրանալու կապակցությամբ: 07.09.2009թ. կրկին աշխատանքի է ընդունվել «Երեւան հյուրանոց» ԲԲ ընկերությունում՝ որպես մատենավար եւ աշխատանքից ազատվել է 2010թ. հոկտեմբերի 8-ին: Այդ ժամանակաշրջանի համար նոր աշխատանքային պայմանագիր չի կնքվել, եւ իրեն տեղեկացրել են, որ գործում է 24.03.2009թ. կնքված աշխատանքային պայմանագիրը: Վերջնահաշվարկի ժամանակ պարզվել է, որ իրենից պահել են 45.000 /քառասունհինգ հազար/ ՀՀ դրամ՝ որպես տուգանք: Ելնելով վերոգրյալից՝ դիմողը դատարանին խնդրել է «Երեւան հյուրանոց» ԲԲ ընկերությունից բռնագանձել վերոգրյալ 45.000 /քառասունհինգ հազար/ ՀՀ դրամ գումարը:

Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանն իր՝ 07.06.2011թ. վճռով հայցը մերժել է:

Նշված վճռի դեմ դիմողը ներկայացրել է վերաքննիչ բողոք:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր՝ 25.07.2011թ. որոշմամբ վերաքննիչ բողոքը վերադարձրել է այն պատճառաբանությամբ, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասը չի թույլատրում բողոքարկել այն դատական ակտերը, որոնցով գույքային պահանջի արժեքը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը, իսկ քննության առարկա քաղաքացիական գործով վեճի առարկայի արժեքը կազ-

մում է 45.000 /քառասունհինգ հազար/ ՀՀ դրամ, այսինքն՝ «սույն գույքային պահանջով վերաքննությունը թույլատրելի չէ»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.07.2011թ. որոշման դեմ դիմողի ներկայացրած վճռաբեկ բողոքը ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 07.09.2011թ. որոշմամբ վերադարձրել է՝ վերահաստատելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները:

3. Վիճարկելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականությունը՝ դիմողը գտնում է, որ այն հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 18-րդ, 19-րդ և 20-րդ հոդվածներին:

Հղում կատարելով Սահմանադրության հիշյալ հոդվածներին և մեջբերելով Սահմանադրության 6-րդ հոդվածը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը՝ դիմողը պնդում է, որ նշված դրույթների միասնականությունը կազմում է դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների բովանդակությունը: Ըստ դիմողի՝ դատական պաշտպանության իրավունքը ենթադրում է ոչ միայն խախտված կամ վիճարկվող իրավունքների պաշտպանության և վերականգնման պահանջով դատարան դիմելու, այլև դատական ակտերը բողոքարկելու՝ պետականորեն երաշխավորված հնարավորություն: Ըստ դիմողի՝ եթե խախտված իրավունքի պաշտպանության պահանջով յուրաքանչյուր շահագրգիռ անձ իրավունք ունի դիմելու դատարան, ապա քաղաքացիական շրջանառության մասնակիցներն առաջին ատյանի դատարան են դիմում հայցադիմում /դիմում/ ներկայացնելու, իսկ վերադաս դատական ատյաններ՝ վերաքննիչ և վճռաբեկ բողոք բերելու միջոցով: Այստեղից դիմողը եզրակացնում է, որ դատական ակտերը բողոքարկելու իրավունքն ուղղակիորեն բխում է անձի դատական պաշտպանության իրավունքի բովանդակությունից, որն ապահովելու պարտականությունն ընկնում է պետության վրա: Վերարտադրելով ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի բովանդակությունը՝ դիմողը եզրակացնում է, որ ՀՀ իրավական համակարգը պետք է դատական ակտերի բողոքարկման իրավունքի իրականացման համար անհրաժեշտ կառուցակարգեր պարունակի, որոնցից են դատական ակտերի վերանայման վերաքննության և վճռաբեկության ձևերը:

Վկայակոչելով նաև ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳՈ-765 որոշմամբ, ինչպես նաև ՍԳՈ-652, ՍԳՈ-665, ՍԳՈ-673, ՍԳՈ-719, ՍԳՈ-758, ՍԳՈ-780 որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները՝ դիմողը գտնում է, որ դատական վերանայումը պետք է դիտարկել որպես վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքարկման իրավունքների իրականացումն ապահովելու կառուցակարգ, որը միաժամանակ հնարավորություն է ընձեռում երաշխավորելու օրինական և հիմնավորված դատական ակտերի կայացումը, օրենքի միատեսակ կիրառությունը, քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությունը:

Դիմողը նշում է, որ ՀՀ Սահմանադրությունն ամրագրել է դատական

պաշտպանության անսահմանափակ իրավունք, ընդ որում, վերջինիս 18-րդ եւ 19-րդ հոդվածները դատական պաշտպանության իրավունքի մասով հղում չեն պարունակում կոնկրետ օրենքի, եւ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ընդամենը պետք է սահմանվեին այդ իրավունքի իրականացման կարգն ու պայմանները՝ առանց սահմանափակելու ՀՀ Սահմանադրության դրույթները:

Գիմողի պնդմամբ՝ տվյալ դեպքում խիստ անորոշ է նաեւ բողոքարկման իրավունքը 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամով սահմանափակելու միտումը կամ նպատակը: Եթե նման սահմանափակման համար հիմք է ընդունվել գումարի ոչ մեծ լինելու հանգամանքը, ապա դիմողն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ Հայաստանի Հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձը 32.500 դրամ է՝ համաձայն «Նվազագույն աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի, իսկ ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ Հայաստանի Հանրապետությունում նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 43.499.8 դրամ է:

Գիմողն ուշադրություն է հրավիրում նաեւ այն հանգամանքի վրա, որ օրենսգրքի վիճարկվող նորմը չի նախատեսում բողոքարկման բացառություններ. օրինակ՝ բողոքարկման հնարավորություն դատավարական որոշակի կոպիտ խախտումների դեպքում:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: Որպես իր դիրքորոշման հիմնավորում՝ պատասխանող կողմը վկայակոչում է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի առանձին հանձնարարականներ եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը՝ եզրահանգելով, որ վիճարկվող իրավակարգավորումը բխում է միջազգային իրավական մոտեցումներից եւ միտված չէ բացառելու արդարադատության մատչելիության իրավունքի իրացումը: Սկզբունքորեն ապահովված է առաջին ատյանի դատարանի դատական ակտերի վերանայման հնարավորությունը վերաքննիչ դատարանում: Վիճարկվող նորմը ոչ թե սահմանափակում է անձի՝ բողոք բերելու սահմանադրական իրավունքը, այլ սահմանափակում է միայն այն գործերով վերաքննության իրավունքի իրացումը, որոնցով վեճի առարկան կազմում են ոչ մեծ գումարի հայցապահանջները:

Պատասխանողը նշում է, որ 1995թ. փետրվարի 7-ին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից ընդունված՝ Քաղաքացիական եւ առեւտրային գործերով բողոքարկման ընթացակարգերի եւ համակարգերի գործողության մեջ դնելու եւ գործունեության բարելավման վերաբերյալ թիվ /95/5 հանձնարարականի՝ «Դատական վերահսկողության իրավունք» վերտառությամբ 1-ին հոդվածի Ո/ կետում ամրագրվել է, որ «Սկզբունքորեն պետք է նախատեսվի բարձր ատյանի դատարանի /երկրորդ ատյանի դատարանի/ կողմից ավելի ցածր ատյանի դատարանի ցանկացած որոշման վերանայման հնարավորու-

թյունը: Եթե այս սկզբունքից բացառություններ են նախատեսվում, ապա դրանք պետք է հիմնված լինեն օրենքի վրա եւ համապատասխանեն արդարադատության ընդհանուր սկզբունքներին»: Վկայակոչելով նաեւ նույն հանձնարարականի՝ «Վերաքննության իրավունքը բացառող հարցերը» վերտառությամբ 3-րդ հոդվածը, պատասխանողը շեշտում է այն հանգամանքը, որ երկրորդ ատյանի դատարանի կողմից միայն պատշաճ հարցերի քննումն ապահովելու նպատակով նախատեսվել է, որ պետությունները պետք է դիտարկեն որոշ միջոցառումներ, այդ թվում՝ մի շարք գործերով, մասնավորապես՝ ոչ մեծ գումարի հայցապահանջներով վերաքննության բացառման հնարավորությունը: Դրա հիման վրա պատասխանողը հետետություն է անում, որ «ՀՀ օրենսդրությամբ սահմանված վերաքննության կարգը լիովին համապատասխանում է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի վերոհիշյալ հանձնարարականների պահանջներին»:

5. Սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճի շրջանակներում սահմանադրական դատարանը կարելորում է հետեւյալ իրավական հարցադրումները.

- իրավաչափ է, արդյոք, վերաքննության իրավունքի իրացման հնարավորության սահմանափակումը՝ պայմանավորված հայցագցի չափով,
- ի՞նչ չափանիշներ պետք է հիմք ընդունվեն այն հայցագցի չափը սահմանելիս, որի դեպքում վերաքննության իրավունքը սահմանափակվում է,
- անհրաժեշտ ու իրավաչափ են, արդյոք, որոշակի բացառությունները նման սահմանափակման առնչությամբ:

Սույն հարցադրումները սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում դիտարկել դատարանի մատչելիության եւ արդար դատաքննության իրավունքի համատեքստում՝ հաշվի առնելով խնդրո առարկա հարցի վերաբերյալ միջազգային իրավական փորձն ու մոտեցումները:

Խնդրո առարկայի առնչությամբ միջազգային իրավական մոտեցումների եւ միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ քաղաքացիական գործերով վերաքննության իրավունքը բացարձակ չէ եւ արդարացված որոշակի հանգամանքներով՝ առանձին գործերով վերաքննության հնարավորությունը կարող է չնախատեսվել: Այսպես.

Արդարադատության մատչելիության ուղիների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 1981թ. մայիսի 14-ի թիվ R (81) 7 հանձնարարականի 15-րդ կետի համաձայն՝ ոչ խոշոր չափի հայցային պահանջներով վեճերի համար պետք է նախատեսվի հատուկ ընթացակարգ, որը հնարավորություն կտա կողմերին դիմել դատարան՝ չկրելով վեճի առարկա հանդիսացող գումարի համեմատ անհամաչափ ծախսեր: Այս նպատակներով հնարավոր է նախատեսել հեշտացված (պարզեցված) դատական վարույթ, գերծ մնալ անհարկի դատական լուծմներից եւ **սահմանափակել բողոքարկման իրավունքը:**

Դատական համակարգի կատարելագործմանն ուղղված քաղաքացիական դատավարության սկզբունքների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի նախարար-

ների կոմիտեի 1984 թ. փետրվարի 28-ի թիվ R (84) 5 հանձնարարականի 8-րդ սկզբունքի 1-ին մասի b) կետի համաձայն՝ պետք է նախատեսվեն որոշակի կանոններ կամ կանոնների ամբողջություն՝ ուղղված վեճի լուծման արագացմանը՝ անվիճելի իրավունքի, նախապես զնահատված վնասի, ինչպես նաև **ոչ մեծ գումարներով հայցերի հետ կապված դեպքերում**:

Դատարանների աշխատանքի չափազանց ծանրաբեռնվածության անթույլատրելիության եւ սահմանափակման միջոցառումների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 1986թ. սեպտեմբերի 16-ի թիվ R (86) 12 հանձնարարականի 3-րդ կետում անդամ պետություններին խորհուրդ է տրվում դատական ատյանների ծանրաբեռնվածությունը թոթափելու համար ստեղծել **արտադատական** այնպիսի մարմիններ, որոնց կողմերը կարող են դիմել **ոչ մեծ գումարի հայցապահանջներով**, ինչպես նաև իրավունքի կոնկրետ ոլորտների խնդիրներով վեճերի լուծման համար:

1995թ. փետրվարի 7-ին Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի ընդունած՝ «Քաղաքացիական եւ առեւտրային գործերով բողոքարկման ընթացակարգերի եւ համակարգերի գործողության մեջ դնելու եւ գործունեության բարելավման վերաբերյալ» թիվ R(95)5 հանձնարարականի՝ «Վերաքննության իրավունքից բացառություն կազմող հարցեր» վերտառությամբ 3-րդ հոդվածի a) կետում նախատեսվում է՝ «Երկրորդ ատյանի դատարանի կողմից միայն պատշաճ հարցերի քննությունն ապահովելու նպատակով պետությունները պետք է քննարկեն ստորեւ թվարկված բոլոր կամ որոշ միջոցառումների ընդունման հնարավորությունը ... բացառել մի շարք գործեր, օրինակ՝ ոչ մեծ գումարի հայցապահանջները»:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ համաձայն Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ R(84)5 եւ R(95)5 հանձնարարականների՝ **չբացառելով քաղաքացիական գործերով վերաքննության իրավունքի իրացման հնարավորությունը**, այնուամենայնիվ, ի տարբերություն քրեական գործերով վերաքննության իրավունքի, երկրորդ ատյանի դատարանում (վերաքննիչ դատարանում) քաղաքացիական գործերով բողոքարկումները կարող են ենթարկվել որոշակի սահմանափակումների, մասնավորապես՝ ոչ մեծ գումարի հայցապահանջներով:

6. ՀՀ Սահմանադրության 18, 19 եւ 20-րդ հոդվածների համադրված վերլուծությունը վկայում է, որ ՀՀ Սահմանադրությունը, ինչպես եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան եւ կից արձանագրությունները, բողոքարկման իրավունք նախատեսել է քրեական գործերով դատավճիռների առնչությամբ:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը վերաբերում է յուրաքանչյուր կոնկրետ ատյանի դատարանում տվյալ գործի քննության համապատասխան ընթացակարգերին եւ, մասնավորապես, արդարության պահանջներին համապատասխանող ընթացակարգերին: Այսինքն՝ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված՝ արդար դատաքննության վերաբերյալ դրույթը կիրառե-

լի է միայն վերաքննության կամ վճռաբեկ բողոք բերելու իրավունքի իրացումից հետո, եթե տվյալ կատեգորիայի գործերով նախատեսված է վերաքննության կամ վճռաբեկ բողոք բերելու իրավունք: Նույնը վերաբերում է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածին: Ըստ Եվրոպական դատարանի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված իրավունքը չի ներառում վերաքննության իրավունքը: Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում հետետողականորեն արտահայտվում է այն սկզբունքային իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ Եվրոպական կոնվենցիան Պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, այնուամենայնիվ, եթե ստեղծվել են, ապա պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում եւս օգտվեն 6-րդ հոդվածի երաշխիքներից... (մասնավորապես՝ *Staroszczyk v. Poland*, գանգատ թիվ 59519/00, 2007թ. մարտի 22-ի վճիռ, կետ 125):

Անդրադառնալով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը դատական պաշտպանության եւ դատական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքների տեսանկյունից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական ակտի բողոքարկման կամ վերաքննության իրավունքը թեւեւ վերաքննիչ եւ վճռաբեկ ատյանի դատարաններ ստեղծված լինելու պարագայում հանդիսանում է դատարանի մատչելիության եւ դատական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքների բաղադրատարր, այնուամենայնիվ, նշված իրավունքները բացարձակ չեն եւ ենթակա են որոշակի սահմանափակման, որոնցից մեկն էլ հանդիսանում է օրենսգրքի վիճարկվող նորմով նախատեսված որոշակի կատեգորիայի քաղաքացիական գործերով վերաքննության սահմանափակման դեպքը: Այս առումով սահմանադրական դատարանն ինքնին իրավաչափ է համարում հայցագնի չափով պայմանավորված՝ քաղաքացիական գործերով վերաքննության իրավունքի սահմանափակումը: Այլ խնդիր է օրենսգրքի վիճարկվող նորմում ամրագրված գումարի չափի արդարացված լինելը, ինչպես նաեւ նման սահմանափակման՝ որպես ընդհանուր կանոնից բացառության նախատեսման, համապատասխանությունն արդարադատության ընդհանուր սկզբունքներին:

7. Սահմանադրական դատարանը միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքներով արձանագրում է, որ բոլոր այն երկրներում, որոնց օրենսդրությունը թույլ է տալիս «ոչ մեծ» հայցագնի դեպքում սահմանափակել դատական ակտի բողոքարկման իրավունքը, գործում են որոշակի չափանիշներ ու գործոններ, որոնց հետ ողջամիտ հարաբերակցության մեջ է օրենսդիրը որոշում համապատասխան հայցագնի չափը: Որպես նման չափանիշներ ծառայում են, մասնավորապես, նվազագույն աշխատավարձի չափը, նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը, բնակչության կենսասակարդակը: Ընդ որում, առանձին դեպքերում, օրինակ՝ Գերմանիայի Դաշնությունում, հայցագնի չափը, որի դեպքում բողոքարկման հնարավորություն նախատեսված չէ, իր չափով զգալիորեն զիջում է նվազագույն աշխատավարձի չափին:

Եվրոպական դատարանն անհատական գանգատների ընդունելիության՝ Եվրոպական կոնվենցիայի 14-րդ արձանագրությամբ ներդրված նոր պայմանի՝ էական վնասի առկայությունը գնահատելիս հաճախ որպես չափանիշ հիմք է ընդունում դիմողի վրա տվյալ խախտման ունեցած ֆինանսական ազդեցությունը, մասնավորապես՝ խնդրո առարկա գումարի չափի աննշան լինելու հանգամանքը:

Այս առնչությամբ հատկանշական է նաեւ, որ Եվրոպական դատարանն էական վնասի առկայությունը գնահատելիս հաճախ առաջնորդվելով դիմողի համար նյութական շահի առկայության կամ բացակայության փաստով, միաժամանակ ընդունում է, որ նյութական շահը միակ տարրը չէ որոշելու համար էական վնասի առկայությունը կամ բացակայությունը: Մասնավորապես, Կորոլեւն ընդդեմ Ռուսաստանի /Korolev v. Russia/ գործով 2010թ. հուլիսի 1-ի վճռում Եվրոպական դատարանն արտահայտել է սկզբունքային իրավական դիրքորոշում առ այն, որ. «... Կոնվենցիայի խախտումը կարող է վերաբերել սկզբունքի կարեւոր հարցերի եւ, այդպիսով, էական վնաս կարող է հասցվել նաև առանց նյութական շահերին վնաս պատճառելու»:

Ավելին, 14-րդ արձանագրության 12-րդ հոդվածի համաձայն՝ նույնիսկ էական վնասի բացակայության դեպքում անհատական գանգատը չի կարող հայտարարվել անընդունելի, եթե հարգանքը կոնվենցիոն իրավունքների նկատմամբ պահանջում է տվյալ գանգատի ըստ էության քննություն:

Ելնելով միջազգային դատավարական փորձի ուսումնասիրությունից եւ հաշվի առնելով վերը ներկայացված գործոնները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ խնդրո առարկա վեճի դեպքում այս կամ այն դրամական չափը որպես «ոչ մեծ» հայցապահանջների առավելագույն սահման դիտարկելու համար, մասնավորապես, հարկ է ելնել տվյալ սոցիալական իրականությանը բնորոշ չափանիշներից, ինչպիսին, օրինակ, կարող է լինել երկրում քաղաքացիների միջին ամսական եկամտի, նվազագույն աշխատավարձի, նվազագույն սպառողական զամբյուղի արժեքի հարաբերակցությունը:

Նկատի պետք է ունենալ, որ, օրինակ, Հայաստանի Հանրապետությունում «Նվազագույն աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նվազագույն ամսական աշխատավարձը 32.500 դրամ է: Միաժամանակ, նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 43.499.8 դրամ է: Իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն հափշտակության **գզալի չափին** սկսվում է հաշվարկային նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից (30.000 դրամից): Բոլոր դեպքերում բողոքարկման ոչ ենթակա գումարային սահմանի որոշումն օրենսդիր մարմնի իրավասության հարցն է, սակայն այն պետք է որոշվի նշված գործոնների հետ արդարացի եւ ողջամիտ հարաբերակցություն ապահովելու նպատակից ելնելով, միաժամանակ հաշվի առնելով արդարադատության սահմանադրաիրավական խնդիրները սոցիալական արդարության նպատակներին ծառայեցնելու անհրաժեշտությունը:

8. Դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի նպատակը ոչ միայն ներկայացված պահանջի մերժման կամ բավարարման իրավաչափության

ստուգումն է: Այս ինստիտուտն այն հիմնական եւ էական իրավական երաշխիքն է, որի միջոցով ապահովվում է ստորադաս դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքի հիմնական բաղադրատարրերի, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասով եւ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դատավարական երաշխիքների պահպանումը: Բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը չի պահպանել հիշյալ դատավարական երաշխիքները, քաղաքացին չունենալով վերաքննության իրավունք, ըստ էության զրկվում է իր գործի արդար դատաքննության իրավունքն արդյունավետորեն իրացնելու հնարավորությունից եւ արդար դատաքննության իրավունքի խախտման դեմ պաշտպանության արդյունավետ միջոցից: Հետեւաբար, վիճարկվող իրավակարգավորումը դիտարկելով արդար դատաքննության իրավունքի համատեքստում՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ հայցագրի չափով պայմանավորված՝ վերաքննության իրավունքի սահմանափակումը կարող է իրավաչափ համարվել միայն այն դեպքում, երբ չի խաթարվում արդար դատաքննության իրավունքի բուն էությունը: Այս առնչությամբ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում բացահայտել այն ընդհանուր տրամաբանությունը, որն ընկած է բողոքարկման ինստիտուտին առնչվող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի եւ 228-րդ հոդվածի, ինչպես նաեւ 204.32 հոդվածի հիմքում: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է այն բացառիկ դեպքերը, երբ վերաքննիչ բողոք կարող է ներկայացվել նաեւ ընդդեմ առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած ակտի դեմ: Այն է՝ երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, **որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը:**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված են դատավարական իրավունքի նորմերի այն խախտումները, որոնք վճռի պարտադիր բեկանման հիմք են: Այն է՝ դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով, դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որեւէ մեկի բացակայությամբ (դատավարության կողմերի մրցակցության եւ հավասարության սկզբունքի խախտում), վճիռը ստորագրել է ոչ այն դատավորը, որը կայացրել է այն, վճիռը կայացրել է ոչ այն դատավորը, որը մտնում է գործը քննող դատարանի կազմի մեջ, գործից բացակայում է դատական նիստի արձանագրությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32 հոդվածն ամրագրում է այն դեպքերը, երբ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը ենթակա են վերանայման նոր երեսան եկած հանգամանքների հիմքով: Մասնավորապես, այդ հիմքերն են դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված՝ վկայի ցուցմունքների կեղծ լինելը, փորձագետի եզրակացության ակնհայտ կեղծ լինելը, թարգմանչի թարգմանության

ակնհայտ սխալ լինելը, փաստաթղթերի կամ իրեղեն ապացույցների կեղծված լինելը, գործին մասնակցող անձանց, նրանց ներկայացուցիչների կամ դատավորի՝ գործի քննության հետ կապված հանցավոր արարք կատարած լինելը, ինչպես նաև տվյալ վճռի կայացման համար հիմք հանդիսացած դատական ակտի, դատավճռի, վարչական կամ տեղական ինքնակառավարման մարմնի որոշման վերացումը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերոհիշյալ հոդվածներով սահմանված բացառությունները եւ հիմքերը վերաբերում են արդար դատաքննության իրավունքի բուն էությունը խաթարող դատական սխալին կամ իրավիճակներին, եւ այդ իրավակարգավորումների հիմքում ընկած ընդհանուր տրամաբանությունը հանգում է նրան, որ արդար դատաքննության իրավունքի բուն էությունը խաթարող դատական սխալի արդյունքում կայացված դատական ակտը չի կարող իրավական ուժ ունենալ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմով օրենսդիրը սահմանելով դրանում նշված գործերով վերաքննության իրավունքի սահմանափակում, շեղվել է օրենսգրքում առկա վերոհիշյալ ընդհանուր տրամաբանությունից՝ չնախատեսելով բողոքարկման իրավունքի սահմանափակումից բացառություններ բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը թույլ է տվել արդար դատաքննության իրավունքի բուն էությունը խաթարող դատական սխալ:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ նման բացառություններ սահմանելու անհրաժեշտությունը բխում է 1995թ. փետրվարի 7-ին Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի ընդունած թիվ R(95)5 հանձնարարականի՝ «Դատական վերահսկողության իրավունք» վերտառությամբ 1-ին հոդվածի b) կետի պահանջներից, որի համաձայն՝ բացառությունները դատական վերահսկողության իրավունքից թույլատրելի են միայն այն պայմանով, որ համապատասխանեն **արդարության ընդհանուր սկզբունքներին**: Նման մոտեցումը համահունչ է նաև Եվրոպական դատարանի այն մոտեցումներին, որոնք ձեւավորվել են «էական վնասի» գնահատման պրակտիկայում:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նշել նաև, որ ի պատասխան սահմանադրական դատարանի հարցմանը՝ ՀՀ արդարադատության նախարարի 23.05.2012թ. N01/3091-12 գրության մեջ որպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում վիճարկվող դրույթի ամրագրումը հիմնավորող հանգամանք է մատնանշվում վերաքննիչ դատարանի ծանրաբեռնվածությունը թեթևացնելու անհրաժեշտությունը: Այս առնչությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նման իրավակարգավորումը գործնականում ոչ միայն արդյունավետորեն չի ծառայում իր նպատակին, այլև, ստիպելով շահագրգիռ անձանց բողոքարկման վիճարկվող սահմանափակումը շրջանցելու նպատակով ներկայացնել 50.000 դրամը գերազանցող հայցապահանջ, հանգեցնում է դատարաններին 50.000 դրամը գերազանցող հայցագնի մասով անհիմն պահանջով ծանրաբեռնելուն:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ եւ 19-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր՝ այնքանով, որքանով չի նախատեսում բողոքարկման իրավունքի սահմանափակումից բացառություններ բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը թույլ է տվել արդար դատաքննության իրավունքի բուն էությունը խաթարող դատական սխալ, մասնավորապես, երբ չեն պահպանվել ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասով եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դատավարական երաշխիքները:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**18 հուլիսի 2012 թվականի
ՍԳՈ- 1037**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ԳԱԼՈՒՍ ՇԻՐԻՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ
14-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

18 հուլիսի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող կողմի ներկայացուցիչ Կ. Կարապետյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Մխիթարյանի, նույն բաժնի առաջատար մասնագետ Հ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Գալուստ Ծիրինյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Գ. Ծիրինյանի՝ 02.02.2012թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Հայաստա-

նի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց** .

1. ՀՀ աշխատանքային օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2004 թվականի նոյեմբերի 9-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2004 թվականի դեկտեմբերի 14-ին եւ ուժի մեջ է մտել 2005 թվականի հունիսի 21-ին:

Աշխատանքային օրենսգրքի՝ դիմողի նկատմամբ կիրառված 14-րդ հոդվածը ենթարկվել է փոփոխությունների 24.06.2010 թվականին ընդունված ՀՕ-117-Ն օրենքով, որն ուժի մեջ է մտել 07.08.2010 թվականին, եւ 01.03.2011 թվականին ընդունված ՀՕ-68-Ն օրենքով, որն ուժի մեջ է մտել 09.04.2011 թվականին:

Գիմողի նկատմամբ օրենսգրքի 14-րդ հոդվածը կիրառվել է մինչեւ 24.06.2010 թվականը կատարված փոփոխությունները գործող խմբագրությամբ: ՀՀ աշխատանքային օրենսգրքի՝ մինչեւ 24.06.2010 թվականը կատարված փոփոխությունները գործող խմբագրությամբ 14-րդ հոդվածը սահմանում էր. «Աշխատողի եւ գործատուի միջեւ աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ եւ աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով կնքված աշխատանքային պայմանագրի հիման վրա»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին՝ դիմողը հայց է ներկայացրել ՀՀ Երեսան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ ընդդեմ «Սիրկապ Արմենիա» ՓԲԸ-ի՝ չվճարված աշխատավարձի գումարի, այդ գումարի վրա հաշվարկվող՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսագումարի, ինչպես նաեւ վերջնահաշվարկ կատարելու պահանջներով:

Ընդհանուր իրավասության դատարանը, հաստատված համարելով կողմերի միջեւ աշխատանքային պայմանագրի բացակայության փաստը եւ, միաժամանակ, հիմք ընդունելով այլ գրավոր ապացույցներ՝ հաստատված է համարել կողմերի միջեւ աշխատանքային հարաբերությունների առկայության փաստը եւ բավարարել դիմողի հայցը:

Պատասխանող ընկերության վերաքննիչ բողոքի հիման վրա ՀՀ վերաքննիչ դատարանը բավարարել է վերաքննիչ բողոքը, բեկանել է ստորադաս դատարանի դատական ակտը եւ փոփոխել այն՝ մերժելով դիմողի հայցը: Վերաքննիչ դատարանն իր որոշման հիմքում, ի թիվս այլնի, դրել է կողմերի միջեւ գրավոր աշխատանքային պայմանագրի, հետեւաբար՝ նաեւ աշխատանքային իրավահարաբերությունների բացակայության փաստը:

Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով վերաքննիչ դատարանի իրավական դիրքորոշումները, վերադարձրել է դիմողի վճռաբեկ բողոքը:

3. Գիմող կողմը գտնում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածն այնքանով, որքանով խոչընդոտում է փաստացի աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող անձանց իրավունքների պաշտպանությունը, հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ եւ 32-րդ հոդվածների պահանջներին:

Գիմողն օրենսգրքի վիճարկվող նորմի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելը հիմնավորելու համար ներկայացնում է հետեւյալ փաստարկները՝

- օրենսգրքի վիճարկվող նորմի տրամաբանությունից հետեւում է, որ եթե բացակայում է օրենքով եւ աշխատանքային նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով կնքված աշխատանքային պայմանագիր, այսինքն՝ բացակայում է աշխատանքային հարաբերությունների ծագման գրավոր հիմքը, ապա աշխատանքային հարաբերությունները ծագած համարվել չեն կարող, հետեւաբար՝ չի կարող առաջանալ աշխատավարձ ստանալու իրավունք,
- ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորման, որը գործարքի հասարակ գրավոր ձեւը պահպանված չլինելու դեպքում կողմերին չի զրկում գրավոր եւ այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի իրավակարգավորման տրամաբանությամբ աշխատանքային պայմանագրի բացակայության դեպքում անհնար է դառնում աշխատանքային հարաբերությունների առկայության՝ այլ ապացույցներով հաստատումը,
- օրենսգրքի վիճարկվող նորմի տրամաբանությունից հետեւում է, որ փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայությունը հիմք չէ գործատուի՝ աշխատավարձ վճարելու պարտավորության ծագման համար:

Գիմողը վերլուծելով մի շարք երկրների փորձը, ինչպես նաեւ անդրադարձ կատարելով միջազգային իրավունքին՝ գտնում է, որ աշխատավարձ ստանալու իրավունքը պատկանում է յուրաքանչյուր աշխատողի՝ անկախ աշխատանքային պայմանագրի կնքման ձեւից, եթե աշխատողը փաստացի աշխատել է եւ առկա են դրա գրավոր ապացույցները:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ եւ 32-րդ հոդվածներին:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար պատասխանող կողմը, աշխատանքային հարաբերությունների ծագման համար կարեւորելով գրավոր աշխատանքային պայմանագրի եւ անհատական իրավական ակտի առկայությունը, եւ օրենսդրությամբ նման պահանջ նախատեսելու իրավաչափությունը, միեւնույն ժամանակ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 4-րդ հոդվածի եւ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի դրույթների համադրված վերլուծության արդյունքում գտնում է, որ «Գործարքի ձեւի, վավերության պայմաններ

րի, կնքման, կատարման կարգի, պարտավորությունների ծագման, փոփոխման եւ դադարման եւ այլնի վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի դրույթները կիրառելի են աշխատանքային հարաբերություններում, քանի դեռ ՀՀ աշխատանքային օրենսգիրքը սեփական նորմերով չի ապահովում դրանց կարգավորումը»:

Վերոգրյալի հիման վրա, հղում կատարելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին մասին՝ պատասխանող կողմը գտնում է նաեւ, որ «աշխատողը գրավոր եւ այլ ապացույցներով կարող է դատական կարգով ապացուցել աշխատանքային պայմանագրի, հետեւաբար, կողմերի միջեւ աշխատանքային հարաբերությունների գոյությունը»:

Անդրադառնալով դիմողի այն դիրքորոշմանը, համաձայն որի՝ «Աշխատավարձի պաշտպանության մասին» 1949թ. կոնվենցիայի 1-ին հոդվածը, որպես աշխատավարձի վճարման հիմք, նախատեսում է նաեւ բանավոր պայմանագիրը, պատասխանող կողմը գտնում է, որ «Աշխատավարձի պաշտպանության մասին» 1949թ. կոնվենցիայի 1-ին հոդվածը կոնվենցիան վավերացրած պետություններին ամենեւին չի պարտադրում օրենսդրությամբ նախատեսել նաեւ բանավոր աշխատանքային պայմանագիր, քանի որ նշված կոնվենցիան պետք է առավել ընդգրկուն լինի բազմատեսակ օրենսդրություն ունեցող երկրների կողմից կիրառվելու համար: Միեւնույն ժամանակ, հղում կատարելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 102-րդ հոդվածին՝ պատասխանող կողմը գտնում է, որ «ՀՀ աշխատանքային օրենսգիրքը պաշտպանում է նաեւ առանց գրավոր աշխատանքային պայմանագրի կամ անօրինական աշխատանք կատարողների իրավունքները»:

5. Հաշվի առնելով դիմողի փաստարկներն ու դիրքորոշումը՝ սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել.

- արդյո՞ք ՀՀ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող դրույթը բացառում է առանց գրավոր աշխատանքային պայմանագրի կնքման աշխատող անձի իրավունքների, այդ թվում՝ դատական, պաշտպանության հնարավորությունը փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայության դեպքում,
- արդյո՞ք Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությունը երաշխավորում է առանց գրավոր աշխատանքային պայմանագրի կնքման աշխատող անձի իրավունքների եւ շահերի պաշտպանության, այդ թվում՝ փաստացի կատարված աշխատանքի դիմաց վարձատրության պահանջի իրավունքի պաշտպանության հնարավորություն՝ փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայության դեպքում:

Հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ մասի այն իրավակարգավորումը, ըստ որի՝ աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսդրությամբ եւ այլ իրավական ակտերով, եթե այլ բան նախատեսված չէ աշխատանքային օրենսդրությամբ, վե-

րոհիշյալ իրավական հարցադրումների կապակցությամբ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող դրույթը դիտարկել ինչպես ՀՀ աշխատանքային օրենսգրքի՝ վիճարկվող դրույթի հետ համակարգային փոխկապակցվածության մեջ գտնվող դրույթների, այնպես էլ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ պայմանագրային իրավունքին առնչվող համապատասխան դրույթների հետ համակցության մեջ:

6. ՀՀ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող նորմի բովանդակությունը հանգում է նրան, որ օրենսդիրը որպես աշխատանքային իրավահարաբերությունների ծագման իրավական հիմք է դիտարկում աշխատանքային պայմանագիրը: Ըստ այս նորմի՝ աշխատանքային պայմանագիրը հանդիսանում է իրավաբանական փաստ, որը բավարար եւ անհրաժեշտ նախադրյալ է աշխատանքային իրավահարաբերությունների ծագման համար: Օրենքով այս կամ այն իրավահարաբերության ծագման համար անհրաժեշտ եւ բավարար հիմքերի սահմանումը՝ ընդհանրապես, եւ տվյալ դեպքում աշխատանքային իրավահարաբերությունների համար՝ մասնավորապես, հետապնդում է իրավական կարգավորման ոլորտում որոշակիություն եւ կանխատեսելիություն ապահովելու իրավաչափ նպատակ:

Աշխատանքային իրավահարաբերությունների ծագման համար հիմք հանդիսացող՝ օրենքով նախատեսված իրավաբանական փաստի՝ աշխատանքային պայմանագրի բովանդակությունը բացահայտված է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 83-րդ հոդվածում: Ըստ այդ հոդվածի (մինչեւ 24.06.2010թ. խմբագրությամբ)՝ աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի եւ գործատուի միջեւ, ըստ որի՝ աշխատողը պարտավորվում է գործատուի համար կատարել որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ աշխատանք կամ մատուցել որոշակի ծառայություններ՝ պահպանելով աշխատավայրում սահմանված աշխատանքային կարգապահությունը, իսկ գործատուն պարտավորվում է աշխատողին տրամադրել պայմանագրով որոշված աշխատանքը, վճարել նրա կատարած աշխատանքի համար պայմանավորված աշխատավարձը եւ ապահովել ՀՀ օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ պայմանագրով, կողմերի համաձայնությամբ նախատեսված աշխատանքային պայմաններ: Այսինքն՝ աշխատանքային պայմանագրի բովանդակությունը կազմում է աշխատողի աշխատանքային գործառույթի վերաբերյալ համաձայնությունը, այն է՝ համաձայնությունն աշխատողի կողմից որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ կամ պաշտոնում աշխատանք կատարելու կապակցությամբ: Աշխատանքային պայմանագրի հասկացության նման օրենսդրական սահմանումը վկայում է, որ յուրաքանչյուր աշխատանքային պայմանագրի հիմքը որոշակի պայմանների շուրջ կողմերի համաձայնությունն է:

7. Սույն գործի շրջանակներում կարելի է նշված համաձայնության ձեւակերպման, աշխատանքային պայմանագրի ձեւի, ինչպես նաեւ այդ ձեւը չպահպանելու իրավական հետեւանքների խնդիրը:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ աշխատանքային պայմանագրի ձեւի ընտրությունը, աշխատանքային պայմանագրերի ազատության սկզբունքին համապատասխան, ազատ է եւ թողնված է կողմերի կամաարտահայտությանը, թեւեւ առկա է նաեւ գրավոր ձեւին մախապատվություն տալու միտումը: ՀՀ աշխատանքային օրենսգրքի, մասնավորապէս վերջինիս 14-րդ եւ 85-րդ հոդվածների ուսումնասիրությունը՝ եւ՛ մինչեւ 2010թ. հունիսի 24-ի «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումը գործող խմբագրությամբ, եւ՛ ներկայումս գործող խմբագրությամբ, վկայում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգիրքը սահմանում է աշխատանքային պայմանագրի գրավոր ձեւը: Ընդ որում, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 102-րդ հոդվածին համապատասխան՝ առանց օրենսգրքով սահմանված, այն է՝ գրավոր աշխատանքային պայմանագրի կատարվող աշխատանքը համարվում է անօրինական աշխատանք, եւ անօրինական աշխատանք կատարելու թույլտվություն տված գործատուները պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Համապատասխան պատասխանատվությունը սահմանված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.5-րդ հոդվածով: Բացի գործատուի համար պատասխանատվություն նախատեսելուց, ՀՀ աշխատանքային օրենսգիրքն աշխատանքային պայմանագրի գրավոր ձեւը չպահպանելու դեպքում վրահասնող իրավական հետեւանքների վերաբերյալ, մասնավորապէս՝ առանց գրավոր աշխատանքային պայմանագրի կնքման աշխատանքային պարտականությունների կատարման անցած անձի շահերի առնչությամբ, որեւէ այլ իրավակարգավորում չի նախատեսում: Մինչդեռ մնան իրավիճակում կարեւորվում է ոչ միայն գործատուի պատասխանատվության խնդիրը, այլ նաեւ առաջնային նշանակություն ունի իրավախախտ գործատուի հետ փաստացի աշխատանքային հարաբերությունների մեջ մտած անձի իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունը: Այս կապակցությամբ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ մասին համապատասխան՝ կիրառելի են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի «Գործարքներ» վերտառությամբ գլխի նորմերը, եւ աշխատանքային պայմանագրի գրավոր ձեւը չպահպանելու իրավական հետեւանքները որոշվում են ըստ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան նորմերի:

Այսպէս, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքի հասարակ գրավոր ձեւը չպահպանելը վեճի դեպքում կողմերին զրկում է ի հաստատումն գործարքի ու դրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու իրավունքից, սակայն նրանց չի զրկում գրավոր եւ այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից: Այս իրավակարգավորման տրամաբանությունն այն է, որ օրենքով պայմանագրի կնքման գրավոր ձեւի սահմանումն ինքնանպատակ չէ. դրա նպատակն է, նախեւառաջ, հեշտացնել կողմերի միջեւ համաձայնության առկայության փաստի ապացուցումը եւ համաձայնության պայմանների շուրջ գործարքի կողմերի կամքի բացահայտումը: Հետեւաբար, հաշվի առնելով

պայմանագրերի ազատության սկզբունքը, կողմերի միջեւ ձեռք բերված համաձայնության տեխնիկական ձեւակերպման օրենսդրական պահանջը չպահպանելու դեպքում գործարքի կողմը մեխանիկորեն չի գրկվում վեճի պարագայում համաձայնության առկայության փաստը եւ պայմաններն այլ ապացույցների միջոցով հաստատելու հնարավորությունից, այլ պարզապես նման իրավիճակում դժվարանում է ապացուցման գործընթացը, ինչը հանդիսանում է այն բացասական հետեւանքը, որը կրում են կողմերն օրենքի պահանջը չկատարելու արդյունքում: Նման իրավակարգավորումը բխում է քաղաքացիաիրավական շրջանառության սուբյեկտների օրինական շահերի պաշտպանության նպատակից եւ պայմանագրային հարաբերությունների տրամաբանությունից: Այս իրավակարգավորումը եւ դրա հիմքում ընկած տրամաբանությունը հավասարապես վերաբերելի են նաեւ աշխատանքային պայմանագրերին, քանի որ վերջիններս, իրենց բնորոշ բոլոր առանձնահատկություններով հանդերձ, իրենց բովանդակության, ձեւական բնութագրիչների տեսանկյունից, հանդես են գալիս որպես մասնավոր իրավունքի պայմանագրեր, եւ ինչպես քաղաքացիաիրավական պայմանագրերի, այնպես էլ աշխատանքային պայմանագրերի դեպքում առանցքային տարրը կողմերի ազատ կամաարտահայտության վրա հիմնված փոխադարձ համաձայնությունն է:

ՀՀ աշխատանքային եւ քաղաքացիական օրենսգրքերի վերաբերելի նորմերի համադրված վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող նորմը, որպես աշխատանքային իրավահարաբերությունների ծագման միակ հիմք սահմանելով աշխատանքային պայմանագիրը, չի բացառում գրավոր աշխատանքային պայմանագրի բացակայության պայմաններում աշխատանքային հարաբերություններից բխող աշխատանքային պարտականությունների փաստացի կատարման առկայության ապացուցման դեպքում անձի իրավունքների, այդ թվում՝ փաստացի կատարված աշխատանքի դիմաց վարձատրության պահանջի իրավունքի, արդյունավետ պաշտպանության հնարավորությունը: Տվյալ դեպքում առկա է իրավունքի պաշտպանության խնդիր եւ հարցի նկատմամբ չի կարող ձեւական մոտեցում դրսեւորվել: ՀՀ օրենսդրության եւ ՀՀ միջազգային պարտավորությունների համադրված վերլուծությունը վկայում է, որ **յուրաքանչյուր կոնկրետ դեպքում աշխատանքային պարտականությունների կատարման առկայության՝ հիմնավոր ապացույցներով փաստումը հիմք է առանց գրավոր աշխատանքային պայմանագրի կնքման իր աշխատանքային պարտականությունների կատարմանն անցած անձին իր իրավունքների, այդ թվում՝ համարժեք հատուցման պահանջի իրավունքի պաշտպանություն տրամադրելու համար:** Սույն իրավական դիրքորոշումից շեղումը կհանգեցնի գործատուի պատասխանատվության անտեսման եւ աշխատողի իրավունքների ոտնահարման, քանի որ կատարած փաստացի աշխատանքի դիմաց համարժեք հատուցում վճարելուց հրաժարվելը նաեւ անձի սեփականության իրավունքի ոտնահարում է:

8. Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ վճռաբեկ դատարանը դեռեւս 2007թ. դեկտեմբերի 25-ի թիվ 3-1848/ՎԳ/ քաղա-

քացիական գործով ընդունված որոշմամբ հստակ իրավական դիրքորոշումներ է արտահայտել աշխատանքային պայմանագրի հասարակ գրավոր ձևը չպահպանելու իրավական հետեւանքների, մասնավորապես, օրենքով սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրի բացակայության պայմաններում փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայությունն այլ ապացույցներով հիմնավորելու հնարավորության առնչությամբ: Այս որոշման մեջ ՀՀ վճռաբեկ դատարանը խնդրո առարկայի վերաբերյալ, մասնավորապես, նշել է. «...դեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործի նկատմամբ կիրառելի են գործարքի ձեւին վերաբերող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի դրույթները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործարքի հասարակ գրավոր ձեւը չպահպանելը վեճի դեպքերում կողմերին զրկում է ի հաստատումն գործարքի ու նրա պայմանների՝ վկաների ցուցմունքներ վկայակոչելու, սակայն նրանց չի զրկում գրավոր կամ այլ ապացույցներ ներկայացնելու իրավունքից:

Այսինքն՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 23.12.2005 թվականին Բարկեն Սահրադյանի եւ պատասխանողի միջեւ կնքված թիվ 55 պայմանագրի ձեւը պահպանված չէ, քանի որ այն չի ստորագրվել պատասխանողի կողմից, ինչը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 85-րդ հոդվածի ուղղակի պահանջն է: Սակայն, միեւնույն ժամանակ ի հավաստումն այդ պայմանագրի եւ դրա պայմանների գոյության՝ դատավարության մասնակիցները կարող են ներկայացնել ցանկացած ապացույցներ, որոնք վկայի ցուցմունք չեն...»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատական պրակտիկայի զարգացումը սույն իրավական դիրքորոշման հետետղական կիրառման ուղղությամբ կարող էր երաշխավորել ոչ միայն տարբեր պատճառներով գրավոր աշխատանքային պայմանագրի բացակայության պայմաններում իր աշխատանքային պարտականությունների կատարմանն անցած անձի իրավունքների, այդ թվում՝ փաստացի կատարված աշխատանքի դիմաց վարձատրության պահանջի իրավունքի արդյունավետ պաշտպանությունը, այլեւ կապահովեր օրենսդրության պահանջների միատեսակ կիրառությունը: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի ԵԿԴ/2228/02/10 քաղաքացիական գործով արտահայտած այն դիրքորոշումը, համաձայն որի՝ գրավոր աշխատանքային պայմանագրի բացակայությունն իր աշխատանքային պարտականությունների կատարմանը փաստացիորեն անցած անձին զրկում է ի հիմնավորումն փաստացի աշխատանքային հարաբերությունների առկայության այլ ապացույցի հիման վրա իր իրավունքների պաշտպանությունից, այդ թվում՝ դատական պաշտպանության հնարավորությունից, ոչ միայն շեղում է ՀՀ վճռաբեկ դատարանի հիշյալ որոշման իրավական դիրքորոշումից, այլեւ հակասում է ՀՀ օրենսդրությամբ աշխատանքային իրավահարաբերությունների կարգավորման՝ վերը բացահայտված ընդհանուր տրամաբանությանը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման մոտեցումը լուրջ

վտանգ է ներկայացնում ինչպես իրավունքի պաշտպանության մերժման տեսանկյունից, այնպես էլ կարող է խթան հանդիսանալ գործատուների կողմից ապօրինի աշխատանքի շահագործման համար: Վերջինիս բացառմանն է, մասնավորապես, ուղղված նաեւ Աշխատանքի միջազգային կազմակերպության շրջանակներում 1949թ. հուլիսի 1-ին ժնեում ստորագրված՝ Աշխատավարձի պաշտպանության մասին կոնվենցիան, ինչը ՀՀ Ազգային ժողովը վավերացրել է 2004թ. հոկտեմբերի 25-ին: Ուստի օրենսդիրը ՀՀ աշխատանքային օրենսգրքի վեճի առարկա խնդրին համալիր եւ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներին համարժեք իրավակարգավորում պետք է նախատեսի:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ եւ 102-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ մասի, 298-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների համադրված վերլուծությունից բխում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությունը սույն գործի շրջանակներում այդ նորմի կիրառման պահին չի բացառել աշխատանքային պայմանագրի բացակայության պայմաններում, սակայն համապատասխան ապացույցների առկայության դեպքում աշխատողի՝ իր փաստացի կատարած աշխատանքի դիմաց համարժեք հատուցում ստանալու իրավունքի դատական պաշտպանության հնարավորությունը:

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 9.1-րդ կետի համաձայն՝ քաղաքացի Գալուստ Ծիրինյանի գործով ընդունված վերջնական դատական ակտը նոր հանգամանքների հիմքով օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**18 հուլիսի 2012 թվականի
ՍԳՈ- 1038**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՔԱՂԱՔԱՅԻ ԱՐՏԱԿ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽՈՒՍՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 169.8-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

19 սեպտեմբերի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Արտակ Ղազարյանի դիմումի հիման վրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.8-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ա. Ղազարյանի՝ 02.04.2012թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Դիմողի ներկայացուցիչն է փաստաբան Կ. Թումանյանը, իսկ գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներն են ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Մխիթարյանը, նույն բաժնի առաջատար մասնագետ Հ. Սարգսյանը:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Վարչական

իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը, աշխատավարձի իրավունքի իրացման հարաբերություններ կարգավորող ՀՀ օրենսդրական ակտերը, միջազգային համաձայնագրերը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հաստատանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը ՀՍՍՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունվել է 1985 թվականի դեկտեմբերի 6-ին եւ ուժի մեջ է մտել 1986 թվականի հունիսի 1-ից:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող «Գործատուի կողմից աշխատավարձ չհաշվարկելը եւ (կամ) չվճարելը» վերտառությամբ 169.8-րդ հոդվածը սահմանում է.

«Գործատուի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կամ ժամկետներում աշխատավարձ չհաշվարկելը կամ չվճարելը կամ ոչ աշխատողի մեղքով առաջացած պարապուրդի ժամանակ վճարում չկատարելը կամ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին եւ (կամ) 2-րդ հոդվածներով նախատեսված չափից պակաս աշխատավարձ սահմանելը կամ այդ մեծությունը գերազանցող չափով աշխատավարձը սխալ հաշվարկելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում խախտում թույլ տված անձի նկատմամբ՝ յուրաքանչյուր աշխատողի մասով չհաշվարկված կամ չվճարված աշխատավարձի մեկ քառորդի չափով:

Նույն խախտումը, որը կատարվել է վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ կրկին անգամ, մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում խախտում թույլ տված անձի նկատմամբ՝ յուրաքանչյուր չհաշվարկված կամ չվճարված աշխատավարձի մեկ երկրորդի չափով:

Գործատուն ազատվում է սույն հոդվածով նախատեսված՝ աշխատավարձ չվճարելու համար սահմանված պատասխանատվությունից, եթե աշխատավարձ ստացողը գործատուին օրենսդրությամբ սահմանված կարգով չի ներկայացրել իր սոցիալական ապահովության քարտը կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքը»:

Հիշյալ հոդվածում ՀՀ Ազգային ժողովի կողմից փոփոխություններ եւ լրացումներ են կատարվել 26.12.02 ՀՕ-499-Ն, 25.12.03 ՀՕ-31-Ն, 24.03.05 ՀՕ-78-Ն, 22.02.07 ՀՕ-104-Ն, 06.12.07 ՀՕ-296-Ն, 27.11.08 ՀՕ-202-Ն ՀՀ օրենքներով:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. ըստ գործում առկա նյութերի՝ ՀՀ աշխատանքի գլխավոր պետական տեսուչի 2009թ. փետրվարի 4-ի թիվ 40/1 հանձնարարագրով ՀՀ աշխատանքի պետական տեսչության աշխատակիցները «Ավտոգեն-Մ» ՍՊԸ-ում կատարել են ըստ անհրաժեշտության ստուգում, որի արդյունքում 13.02.2009թ. կազմվել է արձանագրություն ու ստուգման ակտ եւ արձանագրվել է, որ հիշյալ ՍՊԸ-ի կողմից խախտվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասի պա-

հանջը, այն է՝ աշխատողներին վերջնահաշվարկի օրը հաշվարկվել, սակայն չի վճարվել առ 13.02.2009թ. ընդհանուր առմամբ 7.820.605 ՀՀ դրամ վերջնահաշվարկի գումար, եւ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, այն է՝ «Ավտոգեն-Մ» ՍՊԸ-ում առկա է ընդհանուր գումարով՝ 35.159.373 ՀՀ դրամ հաշվարկված եւ չվճարված աշխատավարձ, որն առաջացնում է պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.8-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան: Տեսչության պետի տեղակալը 03.03.2009թ. կայացրել է թիվ 30 որոշումը, որով «Ավտոգեն-Մ» ՍՊԸ-ի գործադիր տնօրեն Արտակ Ղազարյանին, որպես խախտում թույլ տված անձի, ենթարկել է վարչական տույժի:

ՀՀ աշխատանքի պետական տեսչությունը 19.03.2009թ. հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ «Ավտոգեն-Մ» ՍՊԸ-ի տնօրեն Արտակ Ղազարյանի՝ հօգուտ պետական բյուջեի՝ 8.789.843 ՀՀ դրամ վարչական տուգանք գանձելու մասին վճարման կարգադրություն արձակելու պահանջի վերաբերյալ: Արտակ Ղազարյանը 20.04.2009թ. ներկայացրել է հակընդդեմ հայց՝ ՀՀ աշխատանքի պետական տեսչության՝ վարչական տույժ նշանակելու մասին 03.03.2009թ. թիվ 30 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

ՀՀ վարչական դատարանի՝ 27.04.2009թ. որոշմամբ վճարման կարգադրության վարույթից անցում է կատարվել հայցային վարույթի, եւ հակընդդեմ հայցն ընդունվել է վարույթ: ՀՀ վարչական դատարանի՝ 07.07.2011թ. վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել: Հիշյալ դատական ակտը Արտակ Ղազարյանի կողմից բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ վարչական դատարան, որի՝ 15.11.2011թ. որոշմամբ Արտակ Ղազարյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, իսկ ՀՀ վարչական դատարանի՝ 07.07.2011թ. վճիռը թողնվել է անփոփոխ:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի՝ 15.11.2011թ. որոշումը Արտակ Ղազարյանի կողմից բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարան, որի՝ 11.01.2012թ. որոշմամբ ներկայացված վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

3. Վիճարկելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.8-րդ հոդվածի սահմանադրականությունը՝ դիմողը գտնում է, որ այդ նորմն առաջին հերթին հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածում նշված իրավական պետության սկզբունքի բաղկացուցիչ մաս կազմող իրավական որոշակիության սկզբունքին: Մեկնաբանելով ՀՀ Սահմանադրության, ՀՀ աշխատանքային եւ քաղաքացիական օրենսգրքերի մի շարք իրավանորմեր՝ դիմող կողմը գտնում է, որ աշխատողին սահմանված կարգով կամ ժամկետներում աշխատավարձ չհաշվարկելու կամ չվճարելու կամ ոչ աշխատողի մեղքով առաջացած պարապուրդի ժամանակ վճարում չկատարելու կամ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին եւ (կամ) 2-րդ հոդվածներով նախատեսված չափից պակաս աշխատավարձ սահմանելու կամ այդ մեծությունը գերազանցող չափով աշխատավարձը սխալ հաշվարկելու դեպքերում նյութական պատասխանատվություն է կրում ընկերությունը կամ կազմակերպությունը, քանի որ աշխատողը որոշակի աշխա-

տանք է կատարում ընկերության կամ կազմակերպության համար, եւ աշխատողի նկատմամբ նրա իրավունքները խախտող գործողություն կամ անգործություն է կատարում ընկերությունը, այլ ոչ թե տնօրենը:

Միեւնույն ժամանակ, դիմող կողմը նշում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով վարչական իրավախախտում կատարող սուբյեկտ կարող է լինել միայն ֆիզիկական անձը, իսկ օրենսդիրը նույն օրենսգրքի 169.8-րդ հոդվածում նշված «գործատու» հասկացության ներքո նկատի է ունեցել միայն ընկերության կամ կազմակերպության տնօրենին կամ անհատ ձեռնարկատեր ֆիզիկական անձին: Այդ իսկ պատճառով նշված վարչական ներգործության միջոցը կիրառվում է միայն տնօրենների նկատմամբ: Դիմող կողմը գտնում է, որ վիճարկվող նորմի կիրառման համար նախատեսված չէ արարքի կատարման որեւէ ձեւ, այսինքն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.8-րդ հոդվածն իր բնույթով տուգանք է նախատեսում մեղքի բացակայության պայմաններում, հետեւաբար, անձին զրկում է նշված նորմով սահմանված գործողությունների կամ անգործության հետ իր վարքագծի համապատասխանեցման հնարավորությունից: Վիճարկվող հոդվածը շարադրված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ կտա քաղաքացուն, տվյալ պարագայում ընկերության եւ կազմակերպության տնօրենին, համատեղել դրա հետ իր վարքագիծը, մասնավորապես, կատարել իր լիազորություններից բխող այնպիսի գործողություններ, որոնց չկատարման համար կարող է վրա հասնել վարչական ներգործության միջոցը:

Դիմողը գտնում է նաեւ, որ վիճարկվող նորմը հակասում է ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերին եւ ՄԻԵԿ-ին կից 1-ին արձանագրության 1-ին հոդվածին: Մեկնաբանելով ՀՀ Սահմանադրության եւ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի մի շարք իրավանորմեր՝ դիմողը եզրահանգում է, որ անձի սեփականության իրավունքն իր կամքին հակառակ դատական կարգով կարող է դադարեցվել, եթե նա ունի այլ սուբյեկտի նկատմամբ որոշակի չկատարված գույքային պարտավորություններ, կամ՝ բռնագրավման միջոցով, եթե նա կատարել է որոշակի հանցագործություն: Այս դեպքում դիմողը որեւէ անձի նկատմամբ չունի որեւէ պարտավորություն եւ չի կատարել որեւէ հանցագործություն, հետեւաբար, վիճարկվող նորմի ուժով դիմողի սեփականության իրավունքը դադարեցնելու հիմքերը հակասահմանադրական են: Վկայակոչելով ՄԻԵԿ-ին կից 1-ին արձանագրության 1-ին հոդվածի 2-րդ մասը՝ դիմողը նշում է, որ սույն դեպքում չի կարող անձի նկատմամբ նշանակվածը համարվել տուգանք, քանի որ անձի նկատմամբ տույժը կարող է նշանակվել միայն մեղքի առկայության պայմաններում: Բացի դրանից, ըստ դիմող կողմի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 26-րդ հոդվածը, որով նախատեսված է տուգանքը՝ որպես վարչական տույժի տեսակ, 2002թ. դեկտեմբերի 11-ին ուժը կորցրած է ճանաչվել, հետեւաբար, ՀՀ օրենսդրությունը վարչական տույժի մասն տեսակ չի նախատեսում:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող նորմը հակասում է ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 3-րդ պարբերությանը եւ ՄԻԵԿ-ի 7-րդ հոդվածին: Մեկ-

նաբանելով ՀՀ քրեական օրենսգրքի մի շարք դրույթներ՝ դիմողը գտնում է, որ իր նկատմամբ նշանակվել է տույժ, որը պետք է դիտարկել, հավասարեցնել եւ գնահատել որպես «քրեական մեղադրանք»: Հետեւաբար, այն պետք է լիներ քրեական օրենքի հիման վրա, սակայն քրեական օրենքն առանց մեղքի պատասխանատվություն չի նախատեսում:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.8-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածին, 22-րդ հոդվածի երրորդ պարբերությանը եւ 31-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերին՝ հետեւյալ հիմնավորումներով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքը պատասխանատվության սուբյեկտ է դիտում ոչ միայն ֆիզիկական անձանց, այլեւ պաշտոնատար անձանց: Սեկնաբանելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 50-րդ, 52-րդ եւ 57-րդ հոդվածները՝ պատասխանող կողմը գտնում է, որ իրավաբանական անձի իրավասուբյեկտությունն իրականացնում է ոչ թե իրավաբանական անձը, որպես այդպիսին, այլ նրա մարմինները, քանի որ այն քաղաքացիական իրավունքներ է ձեռք բերում եւ քաղաքացիական պարտականություններ է ստանձնում իր մարմինների միջոցով: Կազմակերպության կառավարման մարմինները, այդ թվում՝ գործադիր տնօրենը, իրականացնում են պատասխանատու գործառույթներ իրենց իրավասության շրջանակներում եւ իրենց աշխատանքով պայմանավորում են կազմակերպության գործունեության արդյունավետությունը: Այդ պատճառով էլ օրենսդիրը վարչական պատասխանատվության սուբյեկտ է դիտարկում խախտում թույլ տված անձին, որը կարող է լինել թե՛ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձը, թե՛ իրավաբանական անձի կառավարման մարմինը: Տվյալ դեպքում, օրենսդիրը վարչական իրավախախտման սուբյեկտ է դիտում այն անձին, ով պատասխանատու է աշխատավարձ հաշվարկելու եւ վճարելու համար:

Ըստ պատասխանող կողմի՝ դիմողը կամայական մեկնաբանության է ենթարկել վիճարկվող հոդվածը: Պատասխանողը գտնում է, որ թեեւ մեղքի ձեռնմշակված չէ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի հատուկ մասի նորմերում, սակայն դա չի նշանակում, որ անձը վարչական պատասխանատվության է ենթարկվում առանց մեղքի: Վկայակոչելով օրենսգրքի 9-րդ, 19-րդ եւ 32-րդ հոդվածները, պատասխանողը նշում է, որ մեղքը վարչական իրավախախտման հիմնական եւ պարտադիր տարր է, որը հաշվի է առնվում տույժ նշանակելիս:

Պատասխանողը գտնում է նաեւ, որ դիմողը, ըստ էության, վիճարկում է ոչ թե վիճարկվող հոդվածի սահմանադրականությունը, այլ իր նկատմամբ կայացված ակտի իրավաչափությունը, հետեւաբար՝ դիմումում բարձրացված հարցը ենթակա չէ սահմանադրական դատարանի քննությանը: Այնուամենայնիվ, անդրադառնալով վիճարկվող հոդվածի՝ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերին համապատասխանությանը, պատասխանողը գտնում է, որ գործող իրավակարգավորման պայմաններում ապահովվում են նշված

հողվածով նախատեսված՝ սեփականատիրոջ կողմից իր գույքի տիրապետման, օգտագործման եւ տնօրինման իրավագործության իրականացման երաշխիքները:

Ըստ պատասխանողի՝ վիճարկվող հողվածի՝ ՀՀ Սահմանադրության 22-րդ հողվածի 3-րդ պարբերությանը հակասելու վերաբերյալ փաստարկները հիմնագուրկ են, քանի որ վերոհիշյալ օրենսգրքի 9-րդ հողվածում վարչական իրավախախտումը բնորոշվում է որպես մեղավորությամբ կատարված արարք, եւ դիմողը, ըստ էության, այստեղ եւս բարձրացնում է իր նկատմամբ կիրառված դատական ակտի իրավաչափության հարց:

5. Սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճի շրջանակներում սահմանադրական դատարանը կարեւորում է.

- ՀՀ Սահմանադրության 32-րդ հողվածով երաշխավորված արդարացի եւ օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի իրավունքի սահմանադրաիրավական եւ միջազգային իրավական բովանդակության բացահայտումը եւ այդ իրավունքի իրացումն երաշխավորող միջոցների բնութագիրը,
- անձի՝ աշխատավարձի իրավունքի խախտմանն ուղղված գործողությունների (անգործության) անիրավաչափության եւ դրանց իրավական հետեւանքի սահմանման օրենսդրական կարգավորումը,
- վիճարկվող նորմում նախատեսված զանցանքի սուբյեկտի, սուբյեկտիվ եւ օբյեկտիվ կողմերի առանձնահատկությունների բացահայտումը՝ ելնելով Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքով հարաբերությունների իրավակարգավորման ընդհանուր տրամաբանությունից:

Արդարացի եւ օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի իրավունքը որպես անձի՝ իր եւ իր ընտանիքի կենսագործունեությունն ապահովող սոցիալ-տնտեսական կարեւոր միջոց, երաշխավորված է ՀՀ Սահմանադրության 32-րդ հողվածով, ինչպես նաեւ միջազգային իրավական մի շարք փաստաթղթերով (ՄԱԿ-ի, Աշխատանքի միջազգային կազմակերպության շրջանակներում կնքված՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր, Նվազագույն աշխատավարձի սահմանման մասին կոնվենցիա, Նվազագույն աշխատավարձի սահմանման ընթացակարգի մասին կոնվենցիա, Գյուղատնտեսության մեջ նվազագույն աշխատավարձի սահմանման ընթացակարգի մասին կոնվենցիա եւ այլն), որոնց համաձայն յուրաքանչյուր աշխատող ունի արդարացի եւ օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի իրավունք: Այն հիմնարար իրավունք է, որից սկզբունքորեն հետեւում է, որ, նախ՝ աշխատավարձն արդարացիորեն պետք է համապատասխանի կատարված աշխատանքի ծավալին ու որակին (մասնագիտական համապատասխան չափանիշներին), եւ երկրորդ՝ ցածր չլինի օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի չափից: Վերջինիս դեպքում այդ չափի սահմանումը վերապահված է բացառապես օրենքին: Միաժամանակ,

ներպետական օրենսդրության խնդիրն է նաեւ համապատասխան իրավակարգավորմամբ երաշխավորել նվազագույն աշխատավարձի իրավունքի գործադրման անհրաժեշտ պայմանները, այդ թվում՝ պաշտպանությունն ամեն տեսակ ոտնձգությունից:

Արդարացի է օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի իրավունքի իրացման հետ կապված հարաբերությունները ՀՀ-ում կարգավորվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքով (ՀՕ-124-Ն), «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-66-Ն), օրենսդրության այլ ակտերով, այդ թվում՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով: Դրանցում նախատեսված են մի շարք իրավադրույթներ, որոնք կազմելով համակարգային ամբողջականություն՝ կոչված են ապահովելու ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմի երաշխավորված իրացումը, ինչպես նաեւ ստեղծելու կայուն սոցիալ-իրավական եւ տնտեսական նախապայմաններ անձի արժանապատիվ կենսագործունեության համար: Այդ իրավանորմերի համալիր ուսումնասիրությունը վկայում է, որ նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի իրավունքի իրացման երաշխավորումը նաեւ սահմանադրաիրավական էւ միջազգային իրավական կարեւոր նախապայման է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածում ամրագրված սկզբունքներին համապատասխան անձի նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի եւ օրենքով նախատեսված աշխատանքային այլ իրավունքների երաշխավորված գործադրման, պաշտպանության, ինչպես նաեւ աշխատանքային իրավահարաբերությունների կարգավորման բնագավառում իրավահավասարության, սոցիալական արդարության սկզբունքի հաստատման ու իրացման համար:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ արդարացի է օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի իրավունքի իրացումն ըստ դրա սահմանադրաիրավական էւ միջազգային իրավական բովանդակության՝ երաշխավորելի է մի շարք պարտադիր իրավապայմանների առկայության պայմաններում, մասնավորապես.

- աշխատավարձի ամսական նվազագույն չափը, ինչպես նաեւ աշխատանքի վարձատրության նվազագույն պայմանները պետք է սահմանվեն օրենքով, իսկ օրենքով նախանշված առանձին դեպքերում՝ նաեւ կոլեկտիվ պայմանագրով,
- յուրաքանչյուր աշխատող ունի աշխատանքային պայմանագրով նախատեսված էւ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձից ոչ ցածր աշխատավարձի իրավունք,
- յուրաքանչյուր ոք ունի հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրության իրավունք,
- յուրաքանչյուր աշխատող ունի իր եւ իր ընտանիքի համար մարդկային արժանապատվությանը հարիւր գոյություն ապահովող արդար ու նպաստավոր վարձատրության իրավունք,
- յուրաքանչյուր աշխատող ոչ իր մեղքով առաջացած պարապուրդի ժամանակ վճարում ստանալու իրավունք ունի,

- գործատուի կողմից աշխատավարձի հաշվարկումն ու վճարումը կատարվում է օրենքով նախանշված սկզբունքներով որոշված ժամկետներում եւ կարգով,
- գործատուն պատասխանատու է աշխատավարձի ժամանակին եւ ամբողջությամբ վճարման, ինչպես նաեւ վերջինիս կետանցման համար,
- գործատուն պատասխանատու չէ, եթե աշխատավարձ չի վճարվել ոչ իր մեղքով:

Այսպիսով, արդարացի եւ օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի իրավունքը երաշխավորելի է, եթե գործատու իրավասուբյեկտների կողմից ապահովվեն վերոթվարկյալ իրավապայմանները (կատարվեն պարտականությունները), որոնցից շեղումն ըստ այդ իրավապայմանների կհանգեցնի պատասխանատվության: Այդ նպատակին են ծառայում, նախ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 38-րդ, 179-րդ (3-րդ մաս) եւ 198-րդ հոդվածների դրույթները: Կարգավորելով աշխատանքի եւ նվազագույն աշխատավարձի իրավունքի իրացման հետ կապված հարաբերություններ՝ օրենսգրքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ աշխատանքային իրավունքների պաշտպանությունն իրականացվում է «...տուգանք (տուժանք) բռնագանձելով», 179-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն աշխատողի ժամավճարի չափը կամ ամսական աշխատավարձը չի կարող պակաս լինել նվազագույն աշխատավարձի չափից, իսկ նույն օրենսգրքի 198-րդ հոդվածն աշխատավարձի եւ աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարումների ժամկետանց վճարման դեպքերում նախատեսում է տուժանք՝ վճարման ենթակա աշխատավարձի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան վճարման ենթակա գումարի չափը:

Իրավակարգավորիչ նույնպիսի նպատակին է միտված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող նորմը, համաձայն որի՝ վարչական պատասխանատվության են ենթակա գործատուի հետեւյալ գործողությունները (անգործությունը).

- աշխատավարձ չհաշվարկելը եւ չվճարելը,
- ոչ աշխատողի մեղքով առաջացած պարապուրդը չվճարելը,
- նվազագույն աշխատավարձի չափից պակաս աշխատավարձ սահմանելը,
- նվազագույն աշխատավարձի մեծությանը գերազանցող չափով աշխատավարձը սխալ հաշվարկելը:

Միաժամանակ, գործատուն ազատվում է աշխատավարձ չվճարելու համար պատասխանատվությունից, եթե այն պայմանավորված է աշխատողի՝ օրենքով նախատեսված իր պարտականության չկատարմամբ, մասնավորապես, եթե աշխատավարձ ստացողը գործատուին օրենսդրությամբ սահմանված կարգով չի ներկայացրել իր սոցիալական ապահովության քարտը կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքը (Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.8-րդ հոդվածի 3-րդ մաս):

Այսպիսով, ինչպես ՀՀ աշխատանքային օրենսգրքի վերոհիշյալ, այնպես էլ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի վիճարկվող նոր-

մերն իրենց իրավակարգավորման առարկայով կազմում են համակարգային ամբողջություն, որոնց բովանդակային վերլուծությունը վկայում է, որ արդարացի եւ օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի իրավունքի իրացման հետ կապված հարաբերությունները կարգավորելիս օրենսդիրն ելել է իրավական այն մեկնակետից, համաձայն որի՝ աշխատավարձի հաշվարկման եւ վճարման հետ կապված գործատու-իրավասուբյեկտների վերաբերյալ գործողություններն (անգործությունը) իրենցից հասարակական վտանգավորություն են ներկայացնում, երբ խախտվում են Սահմանադրությամբ եւ միջազգային իրավունքով երաշխավորված՝ անձի աշխատանքային իրավունքները (աշխատավարձի իրավունքը), իսկ վտանգավորության աստիճանի տեսանկյունից ենթակա են վարչաիրավական ներգործության միջոցի: Այսպիսով, սահմանադրական դատարանը գտնում է, որ այդպիսի գործողություններն (անգործությունը) օրենսդրի կողմից իրավախախտում (ոչ իրավաչափ) որակելը հետապնդում է արդարացի, հետեւաբար՝ նաեւ սահմանադրաիրավական նպատակ, որն իր հերթին կոչված է նաեւ ապահովելու սահմանադրական օրինականության անխախտելիությունը:

6. Անդրադառնալով վիճարկվող նորմերի սահմանադրականության, դրանց իրավական միակերպ եւ որոշակի ընկալման վերաբերյալ դիմող կողմի հարցադրումներին՝ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վեճի առարկա խնդիրը դիտարկել համակարգային իրավակարգավորման բովանդակային առանձնահատկությունների բացահայտման տեսանկյունից, նկատի ունենալով այն հանգամանքը, որ նվազագույն աշխատավարձի իրավունքի, դրա խախտման սուբյեկտիվ դրսեւորումների, առաջացած իրավական հետեւանքի եւ այդ իրավունքի պաշտպանության հետ կապված հարաբերությունները ՀՀ իրավական համակարգում ենթարկված են սահմանադրաիրավական եւ օրենսդրական համալիր կարգավորման (աշխատանքային, վարչաիրավական եւ վարչադատավարական): Մասնավորապես, եթե նվազագույն աշխատավարձի (աշխատավարձի) սահմանադրական իրավունքի իրացման հետ կապված գործատու-իրավասուբյեկտի եւ աշխատողի փոխադարձ իրավունքների իրականացման ու պարտականությունների կատարման ընդհանուր պայմանները կարգավորված են ՀՀ աշխատանքային օրենսգրքով, իսկ նվազագույն աշխատավարձի չափը սահմանված է «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքով, ապա գործատուի կողմից աշխատողին աշխատավարձի հաշվարկման ու վճարման հետ կապված իր պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման արդյունքում առաջացած հետեւանքների իրավակարգավորման հարցերը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով, իսկ այդ հետեւանքներով պայմանավորված հարկադրանքի կիրառման դատական ընթացակարգը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով: Հետեւաբար, իրավական այդ ակտերի համապատասխան նորմերի իրավական բովանդակության մեկնաբանմամբ է նաեւ պայմանավորված վիճարկվող նորմի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտումը:

Նկատի ունենալով սույն գործով վեճի առարկա խնդրում «գործատու», «մեղք» «տուգանք» եզրույթների իրավական բովանդակության բացահայտման եւ ճշգրիտ մեկնաբանման կարեւորությունը, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ «գործատուն աշխատանքային հարաբերության այն մասնակիցն է, որն աշխատանքային պայմանագրի հիման վրա եւ (կամ) օրենքով սահմանված կարգով օգտագործում է քաղաքացիների աշխատանքը»: Միաժամանակ, նույն հոդվածի 2-րդ մասում սահմանված է, որ «գործատու կարող է լինել աշխատանքային իրավունակություն եւ գործունակություն ունեցող իրավաբանական անձը՝ անկախ կազմակերպական-իրավական եւ սեփականության ձեւից, գործունեության բնույթից եւ տեսակից եւ ֆիզիկական անձը»: Օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված է, որ գործատուներն իրենց աշխատանքային իրավունքները եւ պարտականություններն իրականացնում են «իրենց մարմինների միջոցով ... գործատուի կանոնադրության եւ նրա հաստատած (ընդունած) իրավական ակտերի հիման վրա»:

Այսպիսով, աշխատողի աշխատավարձի խախտման դեպքում առաջացած վարչական պատասխանատվության կամ զանցանքի սուբյեկտի իրավական ինքնությունը, զանցանքի սուբյեկտիվ կողմը որոշելու համար անհրաժեշտ է ՀՀ աշխատանքային օրենսգրքի վերոհիշյալ նորմերը համադրել Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի սույն գործով վիճարկվող նորմի, ինչպես նաեւ օրենսգրքի 10-րդ եւ 11-րդ հոդվածների դրույթների հետ: Արդյունքում՝ ակնհայտ է, որ վերջիններում, որպես վարչական իրավախախտում կատարած անձի (կամ զանցանքի սուբյեկտի) օրենսդիրը նկատի ունի բացառապես գործատու-ֆիզիկական անձին, որը մի դեպքում՝ դիտավորությամբ, մեկ այլ դեպքում անգոյությունս զանցանք կատարելիս «**գիտակցել է**», «**կանխատեսել է**» իր գործողության կամ անգործության հակաիրավական բնույթը: Հետեւաբար, անհիմն են դիմող կողմի պնդումներն այն մասին, թե որպես պատասխանատվության ենթակա գործատու պետք է հանդես գա իրավաբանական անձը: Ըստ Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործող օրենսգրքի (ընդունված՝ 06.12.1985թ.)՝ իրավաբանական անձինք օժտված չեն վարչական զանցանքի սուբյեկտի հատկանիշներով: Հետեւաբար, օրենսգրքի վիճարկվող նորմի իմաստով պատասխանատու սուբյեկտ հանդես գալ կարող է միայն ֆիզիկական այն անձը, ով իրավաբանական անձ հանդիսացող գործատուի կանոնադրության (իրավական այլ ակտի) հիման վրա իրականացնում է գործատուին բնորոշ աշխատանքային համապատասխան իրավունքներ ու պարտականություններ, այդ թվում՝ կապված աշխատավարձի հաշվարկման ու վճարման հետ:

Հատկանշական է, որ իրավաբանական անձ եւ ֆիզիկական անձ-գործատու սուբյեկտիվ հարաբերությունների իրավակարգավորման նույնպիսի սկզբունք է ամրագրված ՀՀ օրենսդրության այլ ակտերով, մասնավորապես՝ տնտեսավարող սուբյեկտների գործունեությունը կարգավորող: Այսպես, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի

(ՀՕ-252) 35-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացվում է ընկերության գործադիր մարմնի կողմից, որի ներքո ըստ նույն օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի՝ հասկացվում է գլխավոր տնօրենը, նախագահը եւ այլք: Մասնավորապես, գործադիր մարմնին է ընկերության անունից իրականացնում գործատուի աշխատանքային լիազորությունները (կնքում աշխատանքային պայմանագրեր եւ հսկողություն իրականացնում դրանց կատարման նկատմամբ): Այսինքն՝ տվյալ դեպքում իրավաբանական անձի գլխավոր տնօրենն է (նախագահն է) պատասխանատվություն կրում ընկերության աշխատողների աշխատանքային իրավունքների (այդ թվում՝ աշխատավարձի իրավունքի) պահպանման համար:

Ինչ վերաբերում է դիմող կողմի առաջադրած զանցանքի սուբյեկտիվ կողմի՝ մեղքի դրսեւորման առանձնահատկություններին, ապա յուրաքանչյուր դեպքում աշխատանքային օրենսդրության կատարման նկատմամբ պետական հսկողություն (վերահսկողություն) իրականացնող մարմնի (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 34-րդ հոդված) խնդիրն է պարզել վարչաիրավական պատասխանատվության ենթակա իրավասու անձի մեղքը, դրա դրսեւորման ձեւը (դիտավորությունը կամ անգոյությունը) եւ աստիճանը (Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32, 33 եւ 34-րդ հոդվածներ):

Անդրադառնալով վիճարկվող նորմի իմաստով կիրառման ենթակա վարչական տույժի տեսակին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «տուգանքը», որպես այդպիսին, նախատեսված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 23-րդ հոդվածում (1-ին մասի 2-րդ կետ): Այն որպես հարկադրանքի միջոց նախատեսված է օրենսգրքի նորմերի ճնշող մեծամասնությունում, այդ թվում՝ վիճարկվող նորմում: Այդ նորմերի համադրված վերլուծությունը միանշանակ վկայում է, որ «տուգանքը» դրսեւորվում է որպես պատասխանատու իրավասուբյեկտից հիշյալ օրենսգրքով սահմանված չափով (կայուն գումարի կամ նվազագույն աշխատավարձի հաշվարկային չափի նկատմամբ բազմապատիկ ցուցիչով արտահայտված) դրամական միջոցների (ՀՀ դրամով) հարկադիր բռնագանձմամբ: Ինքնին, պետական (վարչական) հարկադրանքի այդ տեսակի առկայությունը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում՝ սահմանադրականության խնդիր չի հարուցում: Տուգանքի այդպիսի տեսակը եւ չափը սահմանելն օրենսդիր մարմնի իրավասության խնդիրն է, իսկ դրա կիրառումը (բռնագանձումը)՝ որպես աշխատանքային իրավունքների պաշտպանության միջոց, իրականացնում է իրավասու դատարանը (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 38-րդ հոդված, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդված): Սահմանադրական դատարանը կարեւորում է, որ անձի իրավունքների (այդ թվում՝ ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածի 2-րդ մասում երաշխավորված) պաշտպանության օրենքով սահմանված միջոցներով (ընթացակարգով) անվերապահ երաշխավորվի ՀՀ Սահմանադրության 18-րդ եւ 19-րդ հոդվածների պահանջների կատարումը, տվյալ դեպքում՝ ինչպես վարչական պատասխանատվության ենթարկված անձի, այնպես էլ անձի՝ աշխատավարձի իր խախտված իրավուն-

քի պաշտպանության (վերականգնման) խնդրում: Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վեճի առարկա իրավակարգավորման շրջանակներում այդպիսի երաշխիքներն առկա են:

Միաժամանակ, սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքի ընդունման, խորհրդային իրավակարգավորումների հատվածական փոփոխությունների ոչ նպատակահարմարության եւ առկա իրավակարգավորման շրջանակների հստակեցման անհրաժեշտությունը՝ ելնելով **միջազգային ժամանակակից փորձի ուսումնասիրման արդյունքներից**: Մասնավորապես, դա վերաբերում է իրավակարգավորումների հայեցակարգային ամբողջականության եւ միասնականության երաշխավորմանը, վարչաիրավական հարաբերություններում իրավասուբյեկտության շրջանակների որոշակիացմանը, իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու խնդրի համակարգային կանոնակարգմանը, վարչական պատասխանատվության՝ իրավական պատասխանատվության այլ տեսակներից (քաղաքացիական, քրեական) սահմանազատելու իրավական չափանիշների առավել հստակեցմանը եւ մի շարք այլ սկզբունքային՝ հայեցակարգային նշանակության հարցերին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.8-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**19 սեպտեմբերի 2012 թվականի
ՍԳՈ-1048**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ԳՐԻԳՈՐԻ ՎԱՀԱՆՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 204.32-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

28 սեպտեմբերի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Գրիգորի Վահանյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Սույն գործով կողմեր են. դիմող՝ Գ. Վահանյան, որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Մխիթարյան, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի առաջատար մասնագետ Հ. Սարգսյան:

Գործի քննության առիթը քաղաքացի Գ. Վահանյանի՝ 26.03.2012թ. ՀՀ սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Հայաստա-

նի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի հունիսի 17-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Նոր երեւան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման հիմքերը» վերտառությամբ 204.32-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ նոր երեւան եկած հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե «բողոք ներկայացրած անձն ապացուցում է, որ այդ հանգամանքները հայտնի չեն եղել եւ չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց, կամ այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, եւ այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն»:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է նրան, որ դիմողը դատարան է ներկայացրել հակընդդեմ հայց, որով, ի թիվս այլնի, պահանջել է անվավեր ճանաչել կտակն անվավեր ճանաչելու վերաբերյալ նոտարական գրասենյակում 20.10.2003թ. վավերացված հայտարարությունը: Երեւան քաղաքի Էրեբունի եւ Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի 09.11.2006թ. վճռով հակընդդեմ հայցը մերժվել է: ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 25.12.2006թ. վճռով եւս հակընդդեմ հայցը մերժվել է: ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2007թ. որոշմամբ դիմողի վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

Դիմողը դիմել է ՀՀ վճռաբեկ դատարան՝ նոր երեւան եկած հանգամանքների հիմքով ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 25.12.2006թ. վճիռը վերանայելու պահանջով՝ որպես նոր երեւան եկած հանգամանք ներկայացնելով կտակի վրա 08.08.2009 թվականին Էրեբունի նոտարական տարածքի նոտարի կատարած գրառումն այն մասին, որ կտակը մնացել է անփոփոխ: ՀՀ վճռաբեկ դատարանի 21.10.2009թ. որոշմամբ նոր երեւան եկած հանգամանքների հիմքով բերված վճռաբեկ բողոքը վերադարձվել է այն պատճառաբանությամբ, որ բողոք բերած անձը չի ապացուցել, որ իր կողմից վկայակոչված նոր երեւան եկած հանգամանքը գործի լուծման համար ունի էական նշանակություն, եւ որ վճռաբեկ բողոքը քննության ընդունելու համար բողոք բերած անձի հիմնավորումը՝ նոր երեւան եկած հանգամանքի առկայության մասին, անհիմն է, քանի որ տվյալ դեպքում հիմնավորված չէ նոր երեւան եկած հանգամանքի առկայությունը:

Դիմողը դիմել է ՀՀ վճռաբեկ դատարան՝ նոր երեւան եկած հանգամանքների հիմքով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մա-

սին 12.07.2007թ. որոշումը վերանայելու պահանջով՝ որպես նոր երեւան եկած հանգամանք ներկայացնելով ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երեւան քաղաքի ՔՎ Էրեբունու քննչական բաժնի քննիչի՝ քրեական գործի վարույթը կարճելու մասին 16.05.2011 թվականի որոշումը, որով հիմնավորվել է, որ նոտարի կողմից թույլ են տրվել նոտարական գործողությունների կատարման եւ ձեւակերպման կարգի խախտումներ, որոնց հաշվի առնելն էական նշանակություն կունենար գործով հիմնավոր վճիռ կայացնելու համար: ՀՀ վճռաբեկ դատարանի 05.10.2011թ. որոշմամբ նոր երեւան եկած հանգամանքների հիմքով բերված վճռաբեկ բողոքը վերադարձվել է այն պատճառաբանությամբ, որ բողոք բերած անձը չի ապացուցել եւ հիմնավորել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի որեւէ կետով սահմանված նոր երեւան եկած հանգամանքի առկայությունը:

3. Գիմողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 1-ին կետը հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 6-րդ, 18-րդ, 19-րդ եւ 20-րդ հոդվածներին, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով սահմանված՝ իրավական պետության սկզբունքի բաղադրատարր հանդիսացող իրավական որոշակիության պահանջին, օրենքի առջեւ բոլորի հավասարության սկզբունքին, մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունն ապահովելու՝ պետության պարտականության վերաբերյալ դրույթին:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար դիմողը գտնում է, որ, եթե վճռաբեկ բողոքի նոր երեւան եկած հանգամանքի հիմքը չի համապատասխանում վճռաբեկ դատարանի որոշման վերանայման հիմքի առկայության պահանջին՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ, ապա այն չի կարող վճռաբեկ դատարանի բողոքը վերադարձնելու որոշման հիմք ծառայել, երբ հայտնաբերվել է (բացահայտվել է) դատական սխալ, որը չէր հայտնաբերվել կամ չէր կարող հայտնաբերվել ավելի վաղ:

Գիմողը գտնում է, որ «Վճռաբեկ դատարանի 05.10.2011թ. որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձնելով շրջանցվել են նոր երեւան եկած հանգամանքները, թույլ տրված դատական սխալները՝ չի մերժվել ոչ մի փաստարկ, ցուցաբերվել է անգործություն եւ կողմնակալություն, ստեղծվել առավելություն կողմի համար եւ ապահովվել ստորադաս դատարանների դատական սխալի շարունակականությունը»:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 1-ին կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 1, 3, 6, 18, 19 եւ 20-րդ հոդվածների դրույթներին: Որպես իր դիրքորոշման հիմնավորում, պատասխանող կողմը ներկայացնելով օրենքի վիճարկվող դրույթներում «հանգամանքները» եզրույթի սեփական մեկնաբանությունը՝ նշում է, որ դիտարկվող եզրույթը՝ որպես նյութաիրավական փաստ, ունի մի քանի հատկանիշներ, ինչպիսիք են՝

գործի քննության առարկա չհանդիսանալը, գործի լուծման համար էական նշանակություն ունենալը, այսինքն՝ դրանց առկայության պայմաններում դատարանը կկայացնէր ամբողջությամբ կամ մասամբ հակառակ որոշում, դիտարկվող հանգամանքների գոյությունը գործի սկզբնական քննության ժամանակ:

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.37-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին եւ 5-րդ կետերը՝ պատասխանող կողմը նշում է, որ դատական ակտի վերանայման բողոքը վերադարձվում է, եթե, ի թիվս այլնի, բողոքում բացակայում է նոր երեւան եկած հանգամանքի շարադրանքը եւ բողոքին կցված չէ նոր երեւան եկած հանգամանքը հաստատող ապացույցը: Ըստ պատասխանող կողմի՝ բողոքին ներկայացվող՝ վերը նշված երկու պարտադիր պահանջների կատարումը ներառվում է «նոր երեւան եկած հանգամանքի առկայության հիմնավորում» բառակապակցության բովանդակային ծավալում, եւ դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու փուլում դատարանն ստուգում է միայն նոր երեւան եկած հանգամանքի առկայությունը՝ առանց անդրադառնալու այդ հանգամանքի հնարավոր իրավական հետեւանքներին: Վերջին հարցին, ըստ պատասխանողի, դատարանը կարող է պատասխան տալ միայն գործի քննությունից հետո: Միաժամանակ, պատասխանող կողմը գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող դրույթները ձեւակերպված են հստակ եւ չեն կարող տարընթերցումների տեղիք տալ:

5. Սահմանադրական դատարանը մերժում է դիմողի՝ 16.08.2012թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված միջնորդությունը՝ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի սահմանադրականության վերաբերյալ, քանի որ համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի՝ «...որեւէ նորմատիվ ակտի սահմանադրականությունը որոշելիս սահմանադրական դատարանը պարզում է նաեւ **այդ ակտի վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի այլ դրույթների** սահմանադրականությունը»:

6. Գնահատելու համար վիճարկվող իրավակարգավորման ազդեցությունը նոր երեւան եկած հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտի արդյունավետության ու գործունակության վրա՝ սահմանադրական դատարանը կարեւորում է «դատական ակտի վերանայման վարույթ», «դատական ակտի վերանայում» հասկացությունների սահմանադրաիրավական բովանդակության, ինչպէս նաեւ «դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու» եւ «դատական ակտը վերանայելու» դատավարական փուլերից յուրաքանչյուրի խնդրի ճշգրիտ ընկալումը, դրանց շրջանակներում առաջադրվող եւ լուծման ենթակա հարցերի շրջանակը՝ կարեւորելով նաեւ դատական պրակտիկայում ոչ միայն «նոր երեւան եկած հանգամանքներ» հասկացության, այլեւ այդ հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման, այսինքն՝ անձի խախտված իրավունքների վերականգնման ընթացակարգային կանոնների միակերպ ընկալման անհրաժեշտությունը:

Սահմանադրական դատարանն իր ՄԳՈ-984 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում գնահատել է վերոհիշյալ հասկացությունների սահմանադրաիրավական բովանդակությունը եւ դատավարական փուլերի իրավակարգավորիչ նշանակությունը՝ ելնելով նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման դատավարական գործընթացների արդյունավետության եւ, հատկապես՝ մարդու սուբյեկտիվ իրավունքների արդյունավետ պաշտպանության ապահովման տեսանկյունից: Հետեւաբար, հիմք ընդունելով նոր հանգամանքների եւ նոր երեւան եկած հանգամանքների հիմքերով դատական ակտերի վերանայման ինստիտուտների սկզբունքային որոշ ընդհանրությունները՝ որպես օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը վերանայելու բացառիկ միջոցներ, եւ գնահատելով այդ ինստիտուտները որպես մարդու խախտված իրավունքները Սահմանադրության 18-րդ եւ 19-րդ հոդվածներին համապատասխան արդար եւ արդյունավետ դատաքննությանը վերականգնելու կարեւոր երաշխիք, սահմանադրական դատարանը գտնում է, որ 2011 թվականի ՄԳՈ-984 որոշմամբ, ինչպես նաեւ այդ հիմնախնդրի վերաբերյալ սահմանադրական դատարանի մի շարք այլ որոշումներով (ՄԳՈ-701, ՄԳՈ-709, ՄԳՈ-751, ՄԳՈ-758, ՄԳՈ-765, ՄԳՈ-767, ՄԳՈ-833, ՄԳՈ-872 եւ այլն) արտահայտված իրավական դիրքորոշումներն այնքանով, որքանով առնչվում են նոր երեւան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման՝ սույն գործով քննության առարկա գործող իրավակարգավորումներին, կիրառելի են նաեւ սույն գործով:

Միաժամանակ, հաշվի առնելով դիմողի դիրքորոշումներն ու փաստարկները, վիճարկվող նորմի բովանդակությունը՝ սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաեւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող հոդվածը դիտարկել օրենսգրքի ընդհանուր իրավակարգավորիչ նշանակություն ունեցող նորմերի հետ համադրության մեջ՝ կապված, մասնավորապես, ապացուցման, դրա իրավական բովանդակության, ապացուցման պարտականության, որպես ապացույց ներկայացված տեղեկությունների իրավական նշանակության գնահատման հետ:

7. Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմով կարգավորման ենթակա հարաբերությունների սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը՝ սահմանադրական դատարանը նախ արձանագրում է, որ վճռաբեկության կարգով դատական ակտերի վերանայման ընդհանուր կարգը նախատեսող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ բաժնում ներառված նորմերի համաձայն՝ վճռաբեկ բողոք բերելու հիմք են նաեւ նոր երեւան եկած հանգամանքները (226-րդ հոդվածի 2-րդ կետ, 231-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ), որպիսիք, ի թիվս իրավասու այլ սուբյեկտների, ՀՀ վճռաբեկ դատարանին ներկայացնելու իրավունք ունեն գործին մասնակցող անձինք (223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ): Վճռաբեկ բողոքը, ի թիվս այլ իրավապայմանների, ընդունվում է քննության, եթե բողոքում հիմնավորված է, որ առկա է նոր երեւան եկած հանգամանք (234-րդ

հողվածի 1-ին մասի 4-րդ կետ), կամ՝ վերադարձվում է, եթե, ի թիվս այլ իրավապայմանների, չի համապատասխանում օրենսգրքի 231-րդ հոդվածի եւ 234-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, որի դեպքում ՀՀ վճռաբեկ դատարանը կայացնում է **պատճառաբանված** որոշում (233-րդ հոդվածի 2-րդ մաս): Օրենսգրքի վերոհիշյալ բաժնի այլ հոդվածներով սահմանված են վճռաբեկության կարգով դատական ակտերի վերանայման կանոնները (այդ թվում՝ եւ նոր երեւան եկած հանգամանքների հիմքով), մասնավորապես՝ գործի քննության սահմանները, դատարանի լիազորությունները, որոշում կայացնելու կարգը (238-րդ, 239-րդ, 240-րդ, 241-րդ, 241.1-րդ հոդվածներ եւ այլն): Այսինքն՝ վերոթվարկյալ նորմերով օրենսդիրն ընդհանուր իրավակարգավորման է ենթարկել օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի՝ վճռաբեկության կարգով վերանայման հետ կապված (այդ թվում՝ նոր երեւան եկած հանգամանքների հիմքով /204.38-րդ հոդվածի 1-ին մաս/) հարաբերությունները՝ նպատակ ունենալով այդ իրավակարգավորումների շրջանակներում հստակեցնել նաեւ օրենքի միատեսակ կիրառմանը, ճիշտ մեկնաբանմանը եւ իրավունքի զարգացմանը նպաստելուն միտված՝ ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրական լիազորությունները:

Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի երրորդ 3. բաժնի (այդ թվում՝ եւ սույն գործով վիճարկվող) նորմերով սահմանված են վերոհիշյալ ընդհանուրի փոխլրացման եւ հատկապես նոր երեւան եկած հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման հատուկ կանոններ, որոնք կոչված են հստակեցնելու դատական ակտը վերանայող իրավասու դատարանների լիազորությունները, բողոք բերող անձանց օրինաչափ գործողությունները եւ բողոքի ներկայացմամբ լուծման ենթակա խնդիրները, նոր երեւան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման հիմքերը եւ կանոնները, ինչպես նաեւ դատական ակտի վերանայման վարույթի հարուցումն ու ընթացքը:

Վերլուծելով վերոհիշյալ իրավակարգավորումները նախատեսող նորմերի սահմանադրաիրավական ընդհանուր բովանդակությունը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանք իրենց համակարգային ընդհանուր նշանակությամբ, իրավակարգավորիչ դերով եւ հետապնդվող նպատակներով սահմանադրականության խնդիր չեն հարուցում, քանի որ կոչված են երաշխավորելու ՀՀ Սահմանադրության 18-րդ եւ 19-րդ հոդվածներում ամրագրված դրույթների իրացումը՝ արդար եւ արդյունավետ դատաքննություն իրականացնելու եւ անձանց խախտված իրավունքները պաշտպանելու համար: Սակայն այս համատեքստում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաեւ վիճարկվող իրավակարգավորման շրջանակներում անդրադառնալ «նոր երեւան եկած հանգամանքներ» արտահայտության իրավական բովանդակության առանձնահատկություններին՝ այնքանով, որքանով բխում է օրենսգրքի վիճարկվող հոդվածի նորմատիվ բովանդակությունից եւ դիմող կողմի հարցադրումներից՝ համադրելով այդ նորմը նույն օրենսգրքի իրակարգավորիչ ընդհանուր նշանակություն ունեցող այլ նորմերի հետ, պարզելու համար, թե վիճարկվող նորմը որքանով է համապատասխանում իրավահավասարության,

իրավական որոշակիության սկզբունքներին, դատաքննության արդարության, արդյունավետության եւ մարդու իրավունքները պաշտպանելու՝ սահմանադրորեն որոշված այլ չափորոշիչներին:

Մասնավորապես, օրենսդիրը վիճարկվող նորմով կարելի է այն իրավապայմանները, որոնց առկայությամբ միայն իրավասու անձանց կողմից դատարանին ներկայացված հանգամանքները (փաստերը, տեղեկությունները) իրավական իմաստով կարող են գնահատվել որպես «նոր երեւան եկած», այդպիսիք են.

- այդ հանգամանքները հայտնի չեն եղել եւ չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց,
- այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան,
- եւ այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն:

Ընդ որում, որպես վերոհիշյալ իրավապայմանների գործադրման անհրաժեշտ ու պարտադիր պայման՝ օրենսդիրը դիտարկել է բողոք ներկայացրած անձի կողմից հիշյալ հանգամանքների իսկության **ապացուցման պարտականությունը**: Այսինքն՝ վճռաբեկության կարգով դատական ակտի վերանայման համար օրենսդիրն սկզբունքային ուշադրության է արժանացրել գործին մասնակցող անձի կողմից վկայակոչված փաստարկի (փաստերի, հանգամանքների, տեղեկությունների) ապացուցված լինելու հանգամանքը՝ այնպես, որպիսին առկա է քաղաքացիական գործերով ապացույցներ ներկայացնելու եւ դրանք հետազոտելու (գնահատելու) հետ կապված ընդհանուր իրավակարգավորման դեպքում (օրենսգրքի 8-րդ գլուխ): Այստեղից հետեւում է՝ որպես նոր երեւան եկած հանգամանքներ կարող են գնահատվել օրենսգրքով եւ այլ օրենքներով նախատեսված կարգով (օրինական եղանակով) ձեռք բերված այն տեղեկությունները, որոնց հիման վրա իրավասու դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները եւ առարկությունները հիմնավորող, ինչպես նաեւ վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Հետեւաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմի սահմանադրաիրավական բովանդակության լիարժեք բացահայտման համար անհրաժեշտ է օրենսգրքի 204.32-րդ հոդվածը եւ օրենսգրքի երրորդ 3. բաժնի մյուս նորմերը համադրել նաեւ օրենսգրքի վերոհիշյալ գլխի (8-րդ) համապատասխան նորմերի հետ, որի արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նոր երեւան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման վարույթում.

մի կողմից, իրավասու անձը (գործին մասնակցող անձը, նրա իրավահաջորդը)

- իրավասու դատարանին պետք է ներկայացնի օրինական եղանակով ձեռք բերված եւ օրենքով նախատեսված պահանջները բավարարող ու գործի լուծման համար էական նշանակություն ունեցող տեղեկություններ,
- պետք է ապացուցի ներկայացված հանգամանքների նախկինում (մինչեւ

գործով դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը) անհայտ լինելը կամ դրանց նորահայտ լինելը, կամ նախապես հայտնի լինելը, բայց իրենից անկախ պատճառներով օրինական ուժի մեջ մտած ակտը կայացրած դատարանին չներկայացնելու պատճառները:

Մյուս կողմից՝ նոր երեւան եկած հանգամանքներով դատական ակտը վերանայող դատարանը՝

- պարտավոր է նոր երեւան եկած հանգամանքների՝ օրենսգրքի 204.32-րդ հոդվածում սահմանված հատկանիշների առկայության, 204.34-րդ հոդվածում սահմանված ժամկետի եւ 204.36-րդ հոդվածի պահանջների պահպանման դեպքում հարուցել դատական ակտի վերանայման վարույթ կամ հիշյալ պայմանների անբավարարության դեպքում վերադարձնել բողոքը՝ **կայացնելով պատճառաբանված որոշում** (233-րդ հոդվածի 2-րդ մաս), ընդ որում՝ անվերապահորեն պահպանելով սահմանադրական դատարանի ՍԳՈ-690, ՍԳՈ-691, ՍԳՈ-752, ՍԳՈ-754, ՍԳՈ-896, ՍԳՈ-919 որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները: Սահմանադրական դատարանը գտնում է, որ հիշյալ իրավապայմաններին չհամապատասխանող դատական ակտերը ենթակա են վերանայման՝ օրենքով սահմանված կարգով:

Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ վերոհիշյալ ընթացակարգերում կարելու է երաշխավորել քաղաքացիաիրավական վեճի լուծման իրավական ընդհանուր այն սկզբունքները, որոնք անմիջականորեն բխում են վիճարկվող նորմի եւ վերջինիս հետ համակարգային առումով փոխկապակցված օրենսգրքի այլ նորմերի իրավական բովանդակությունից, մասնավորապես՝ կապված ապացուցման գործընթացի, կողմերի իրավունքների ու պարտականությունների հետ, եւ այն ընդհանուր կանոնների պահպանմամբ, որպիսիք նախատեսված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածում: Միաժամանակ, **դատարանի խնդիրն ու պարտականությունն են ապահովել բողոքում բերված տեղեկությունների, հանգամանքների, փաստերի բազմակողմանի եւ անաչառ քննություն՝ դրա արդյունքում բավարար ու միակերպ ընկալելի որոշմամբ պատճառաբանելով ներկայացված փաստարկները որպես նոր երեւան եկած հանգամանք գնահատելու կամ մերժելու իրավական շարժառիթներն ու հիմքերը:**

Նոր երեւան եկած հանգամանքը նշված հանգամանքներին համապատասխան հաշվի չառնելը եւ դրա արդյունքում վերանայվող դատական ակտն ուժի մեջ թողնելը չեն երաշխավորում դատական ակտերի վերանայման գործառույթի արդյունավետ իրականացման հնարավորություն՝ թույլ չտալով նաեւ դատական ակտերի վերանայման նպատակի ու խնդիրների իրացում եւ միաժամանակ արգելափակելով անձի՝ արդարադատության մատչելիության եւ արդար դատաքննության իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը:

8. Վերոշարադրյալը նկատի ունենալով՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նոր երեւան եկած հանգամանքի հիմքով դատական ակ-

տերի վերանայման վարույթը կարող է ապահովել այդ վարույթի սահմանադրա-
իրավական նպատակի ու խնդիրների իրացումը ՀՀ քաղաքացիական դատա-
վարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 1-ին կետի եւ դրա հետ համակար-
գային առումով փոխկապակցված՝ ՀՀ քաղաքացիական դատավարության
օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 2, 3 եւ 4-րդ կետերի հետեւյալ սահմանադրա-
իրավական բովանդակության պարագայում.

ա/ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի
1-ին կետում «այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշա-
նակություն» բառակապակցությունը նշանակում է, որ նոր երեւան եկած հան-
գամանքները հաշվի առնելու դեպքում տվյալ գործով կկայացվեր այլ
դատական ակտ, քան կայացված դատական ակտն է, կամ որ նույնն է՝ նոր
երեւան եկած հանգամանքները հաշվի չառնելու դեպքում տվյալ գործի հիմքում
կդրվի ու կշարունակի մնալ այնպիսի փաստարկ, որը հայտնաբերված չէր կամ
չէր կարող հայտնաբերված լինել ավելի վաղ.

բ/ վերանայման բողոքում նոր երեւան եկած հանգամանքի շարադրանքի
եւ նոր երեւան եկած հանգամանքը հաստատող ապացույցի առկայությունը, ի
լրումն բողոքին ներկայացվող մյուս վավերապայմանների առկայության, բա-
վարար հիմք է վերանայման վարույթ հարուցելու համար,

գ/ վերանայման բողոք ներկայացնող անձը պարտավոր է ապացուցել նոր
երեւան եկած հանգամանքը գործին մասնակցած անձանց հայտնի չլինելը, կամ
հայտնի լինելու դեպքում նոր երեւան եկած հանգամանքը նրանցից անկախ
պատճառներով դատարան չներկայացվելը եւ նոր երեւան եկած հանգամանքի՝
գործի լուծման համար էական նշանակություն ունենալը բացառապես հարուց-
ված վերանայման վարույթի շրջանակներում,

դ/ վերանայման պահանջը կարող է մերժվել, եթե բողոքի քննության արդ-
յունքներով պարզվում է, որ բողոքում մատնանշված հանգամանքը տվյալ դա-
տական ակտը վերանայելու համար հիմք չէ, այսինքն՝ այդ հանգամանքը
տվյալ դեպքում նոր երեւան եկած հանգամանք չի հանդիսանում, ինչպես նաեւ
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 2-րդ,
3-րդ եւ 4-րդ կետերի պահանջները հաշվի չառնելու դեպքում,

ե/ եթե **հարուցված վերանայման վարույթի շրջանակներում** հաստատվում
է նոր երեւան եկած հանգամանքի առկայության փաստը՝ ՀՀ քաղաքացիական
դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ եւ 4-րդ կե-
տերի պահանջները հաշվի առնելով, ապա վերանայման վարույթի արդյուն-
քում պետք է ուժը կորցրած ճանաչվեն համապատասխան դատական ակտերը:

Այս պահանջներն են ընկած ՀՀ քաղաքացիական դատավարության
օրենսգրքով տվյալ իրավահարաբերությունների առկա կանոնակարգման հիմ-
քում:

Ելնելով վերոշարադրյալից՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է,
որ սույն գործով վեճի առարկան գործնականում ոչ թե դիմողի կողմից ներկա-
յացված նորմատիվ իրավակարգավորման սահմանադրականությունն է, այլ
դատարանի կողմից այդ նորմերի կիրառմանն առնչվող խնդիրը՝ ինչը, ըստ դի-

մողի, խախտել է դատարանի մատչելիության եւ արդար դատաքննության իր իրավունքները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 1-ին կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**28 սեպտեմբերի 2012 թվականի
ՍԳՈ- 1049**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 35-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ
6-ՐԳ ՄԱՍԻ 1-ԻՆ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ 9-ՐԳ ՄԱՍԻ 1-ԻՆ
ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ, 41-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԳ ՄԱՍԻ 3-ՐԳ ԿԵՏԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

2 հոկտեմբերի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակից Ա. Վարդեանյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի առաջատար մասնագետ Հ. Սարգսյանի,

ՀՀ սահմանադրական դատարանի 11.05.2012թ. ՍԳ-ԱՈ-29 որոշման հիման վրա սահմանադրական դատարանի նիստին հրավիրված ՀՀ կառավարության ներկայացուցիչ՝ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Ա. Ասատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին պարբերության եւ 9-րդ մասի 1-ին

պարբերության, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 24.02.2012թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի ներկայացուցիչների բացատրությունները, ՀՀ կառավարության ներկայացուցչի պարզաբանումները, հետազոտելով «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը, դիմումի առարկային վերաբերող միջազգային իրավական փաստաթղթերը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2010 թվականի դեկտեմբերի 22-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2010 թվականի դեկտեմբերի 30-ին եւ ուժի մեջ է մտել 2011 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումը սահմանադրական դատարանում մուտքագրվելուց հետո՝ մինչեւ սույն գործով դատաքննությունն սկսվելը, օրենքի վիճարկվող 35-րդ հոդվածի 9-րդ մասի 1-ին պարբերության դրույթները ենթարկվել են փոփոխության 19.03.2012թ. ՀՕ-100-Ն ՀՀ օրենքով: Հաշվի առնելով վերոգրյալը՝ սույն գործով օրենքի 35-րդ հոդվածի 9-րդ մասի 1-ին պարբերության դրույթները քննության են առնվում նկատի ունենալով նաեւ այդ փոփոխությունները:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի՝ «Կենսաթոշակ վճարելը» վերտառությամբ 35-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին պարբերությունը սահմանում է. «Կենսաթոշակը անկանխիկ եղանակով ստացող կենսաթոշակառուն պարտավոր է տարեկան առնվազն մեկ անգամ պատշաճ կարգով բանկին ներկայացնել իր ողջ լինելու մասին Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող նոտարի հաստատած փաստաթուղթը կամ ներկայանալ բանկ եւ հայտարարություն տալ իր ողջ լինելու մասին»:

Նույն հոդվածի 9-րդ մասի 1-ին պարբերությունը սահմանում է. «Կենսաթոշակը վճարվում է նաեւ Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող նոտարի վավերացրած լիազորագիրը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում ներկայացնելու դեպքում»:

19.03.2012թ. ՀՕ-100-Ն ՀՀ օրենքով օրենքի վիճարկվող 35-րդ հոդվածի 9-րդ մասի 1-ին պարբերությունում կատարված փոփոխության արդյունքում վերջինս սահմանում է հետեւյալ իրավակարգավորումը. «Կենսաթոշակը նաեւ վճարվում է կենսաթոշակառուի (անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում նրա օրինական ներկայացուցչի՝ ծնողի, որդեգրողի կամ խնամակալի) կողմից Հայաստանի Հանրապետությունում տրված եւ Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող նոտարի վավերացրած լիազորագրով, եթե այդ մասին գրավոր դիմումը եւ լիազորագիրը

ներկայացվում են կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում: Վերալիազորման կարգով տրված լիազորագրով կենսաթոշակ չի վճարվում»:

Օրենքի՝ սույն գործով վիճարկվող «Կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելը եւ վերականգնելը, կենսաթոշակ վճարելը դադարեցնելը եւ վերսկսելը» վերտառությամբ 41-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը սահմանում է, որ կենսաթոշակ վճարելը դադարեցվում է «...սույն օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով փաստաթուղթ չներկայացնելու կամ հայտարարություն չտալու դեպքում»:

2. Դիմողը վկայակոչելով կենսաթոշակային ապահովության բնագավառում խտրականության արգելման վերաբերյալ սահմանադրական դատարանի ՍԴՈ-731 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ գտնում է, որ վեճի առարկա նորմերը հակասում են ՀՀ Սահմանադրության 6, 14.1, 37 եւ 43-րդ հոդվածներին: Ըստ դիմողի՝ օրենքի 35-րդ հոդվածի 6 եւ 9-րդ մասերի 1-ին պարբերություններով կենսաթոշակի իրավունքի իրականացման համար նախատեսված պահանջները ՀՀ տարածքից դուրս բնակվող (գտնվող) քաղաքացիների առնչությամբ հանգեցնում են ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածով երաշխավորված՝ անձի սոցիալական ապահովության իրավունքի այնպիսի սահմանափակմանը, որը ոչ միայն անհամաչափ է Սահմանադրության 43-րդ հոդվածի տեսանկյունից, այլ նաեւ չունի օբյեկտիվ եւ ողջամիտ հիմնավորում եւ հանգեցնում է միայն բնակության (գտնվելու) վայրով պայմանավորված տարբերակմանը միեւնույն կարգավիճակն ունեցող անձանց (կենսաթոշակառուների) միջեւ:

Դիմողը գտնում է նաեւ, որ ՀՀ տարածքում բնակվող եւ ՀՀ տարածքից դուրս բնակվող (գտնվող) կենսաթոշակառուների միջեւ միայն բնակության (գտնվելու) վայրով պայմանավորված տարբերակման նախատեսումը՝ կենսաթոշակը փաստացի ստանալու հնարավորության տեսանկյունից, համահունչ չէ ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածով ամրագրված՝ օրենքի առջեւ բոլորի հավասարության սկզբունքին եւ դրան համապատասխան՝ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ձեւավորված իրավական դիրքորոշումներին: Օրենքի 35-րդ հոդվածի 6 եւ 9-րդ մասերի 1-ին պարբերությունների եւ ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի միջեւ ենթադրյալ հակասությունը դիմողը հիմնավորում է նաեւ նրանով, որ օրենքով նախատեսված պահանջների առաջադրմամբ պայմանավորված՝ կենսաթոշակի իրավունքի վիճարկվող սահմանափակումն ակնհայտորեն չի համապատասխանում դրանով հետապնդվող՝ կենսաթոշակ ստացող քաղաքացու ողջ լինելու փաստի հաստատման նպատակին: Ընդ որում, վերոնշյալ տեսանկյունից իր փաստարկները հիմնավորելու համար դիմողը վկայակոչում է, մասնավորապես, ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 4-րդ հոդվածը եւ մի շարք այլ միջազգային իրավական ակտեր:

Օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի ենթադրյալ հակասահմանադրականությունը դիմողը հիմնավորում է օրենքի 35-րդ հոդվածի 6 եւ 9-րդ

մասերի 1-ին պարբերությունների առնչությամբ իր հիմնավորումների համատեքստում՝ հաշվի առնելով օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի փոխկապակցվածության հանգամանքն օրենքի 35-րդ հոդվածի 6 եւ 9-րդ մասերի 1-ին պարբերությունների դրույթների հետ:

Միաժամանակ, անդրադառնալով իրավակիրառական պրակտիկային, վկայակոչելով փաստաթղթերի փոխադարձ ճանաչման վերաբերյալ առկա մի շարք միջազգային պայմանագրեր, որոնց անդամակցում է Հայաստանի Հանրապետությունը, եւ, որպես ապացույց, հղում կատարելով ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի թիվ ԱԳԳ/ՍՍ-1-1/1013-12 գրությանը, դիմողն արձանագրում է, որ օրենքի վիճարկվող դրույթները կիրառվում են ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի պահանջներին հակասող մեկնաբանությամբ:

Գիմողը կատարեց նաեւ այն եզրահանգումը, որ խնդիրն առավելապես վերաբերում է ոչ թե օրենքի նորմերի բովանդակությանը, այլ դրանց ոչ ճիշտ կիրառմանը:

3. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկների դեմ, գտնում է, որ վեճի առարկա իրավադրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը: Նախապես ներկայացրած գրավոր բացատրություններում պատասխանողը պնդում էր, որ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս վեց ամսից ավելի ժամկետով բնակության մեկնող կամ վեց ամսից ավելի ժամկետով բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացին, դուրս գալով հաշվառումից, **կորցնում է կենսաթոշակ ստանալու իրավունքը**, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական համաձայնագիր կնքած պետություններ մշտական բնակության մեկնող (մեկնած) անձանց: Նրանց, ինչպես նաեւ օտարերկրյա քաղաքացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց կենսաթոշակ ստանալու իրավունքը **կրկին կարող է ձեռք բերվել** «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3.2-րդ մասի ուժով, եթե վերջիններս ՀՀ բնակության վայրի հասցեում հաշվառման են կանգնում:

Ըստ պատասխանողի գրավոր բացատրության՝ բարձրացված խնդիրը **հարկ է քննարկել միայն մինչեւ վեց ամիս ժամկետով Հայաստանի Հանրապետությունից մեկնած կենսաթոշակառուների մասով**: Վերջիններիս առնչությամբ պատասխանողը կարծում է, որ մնան դեպքերում պետք է կիրառվի ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածը: Պատասխանողը նաեւ կարծում է, որ իրավակիրառ պրակտիկայում կարող են խնդիրներ առաջանալ, եթե համապատասխան լիազոր մարմինը տեխնիկապես հնարավորություն չունենա վերահսկելու կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձանց մուտքը եւ ելքը Հայաստանի Հանրապետություն:

Բանավոր բացատրությունների ժամանակ պատասխանողը նշեց, որ «Այսօր սոցիալական ապահովության ոլորտում մեր պետության քաղաքականությունը կառուցվում է այն սկզբունքի վրա, որի համաձայն՝ կա կենսաթոշա-

կառու՝ կա վճարում, չկա կենսաթոշակառու՝ չկա վճարում: Նշված սկզբունքը արտացոլվել է նաև «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում»: Գործնականում պատասխանողը շարունակում է պնդել հիմնահարցի վերաբերյալ իր վերոշարադրյալ դիրքորոշումը:

Պատասխանողը նաև գտնում է, որ «Հաշվի առնելով մեր պետության ֆինանսական հնարավորությունները՝ օրենսդիրը ՀՀ-ից դուրս գտնվող մեր քաղաքացիների կենսաթոշակ ստանալու իրավունքի իրականացման համար սահմանել է լրացուցիչ պայմաններ, որոնք ...դժվարացնում են այդ իրավունքի իրականացումը, սակայն, որպես այդպիսին, ուղղված չեն կենսաթոշակի իրավունքի սահմանափակմանը»:

Օրենքի վիճարկվող դրույթների եւ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի միջև՝ դիմողի պնդմամբ հակասության առնչությամբ պատասխանողը «խտրականություն» հասկացության մեկնաբանության հիման վրա գտնում է, որ օրենքի վիճարկվող դրույթները չեն հակասում Սահմանադրության 14.1-րդ հոդվածին, քանի որ դրանցում ակնհայտորեն բացակայում է կենսաթոշակառուների նկատմամբ որեւէ խտրականության դրսեւորում՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:

Օրենքի վիճարկվող դրույթների եւ Սահմանադրության 37-րդ հոդվածի միջև՝ դիմողի պնդմամբ հակասության առնչությամբ պատասխանողը օրենքի առանձին հոդվածների վերլուծության հիման վրա գտնում է, որ օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված փաստաթղթերը, այն է՝ իր ողջ լինելու մասին Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող նոտարի հաստատած փաստաթուղթը կամ իր ողջ լինելու մասին հայտարարությունը, բանկ չներկայացնելը ոչ թե սահմանափակում կամ դադարեցնում է անձի՝ անկանխիկ եղանակով կենսաթոշակ ստանալու իրավունքը, այլ դադարեցնում է կենսաթոշակի վճարումը, որը վերսկսվում է, ինչպես նաև վճարվում են չվճարված կենսաթոշակի գումարները՝ վերը նշված փաստաթղթերը բանկ ներկայացնելուց հետո:

Անդրադառնալով օրենքի 35-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված փաստաթղթին՝ լիազորագրին, պատասխանողը գտնում է, որ լիազորագրի ձեւին ներկայացված պահանջները նպատակ ունեն ապահովելու հուսալիություն կենսաթոշակային հարաբերություններում եւ կարելու նշանակություն ունեն կենսաթոշակային իրավունքի իրականացման համար: Այս կապակցությամբ պատասխանողը գտնում է նաև, որ լիազորագրի ձեւին ներկայացվող պահանջները չպահպանելն ամենեւին չի գրկում անձին կենսաթոշակ ստանալու իրավունքից, այլ ժամանակավորապես դադարեցնում է կենսաթոշակ ստանալու իրավունքը, որը կան վերականգնվում է, ի թիվս այլնի, լիազորագիրը ներկայացնելուց հետո, կամ նշանակվում է կենսաթոշակ:

4. Հաշվի առնելով, որ պատասխանողի բացատրություններում եւ ՀՀ կառավարության ներկայացուցչի պարզաբանումներում տեղ գտած առանձին փաստարկներ կարող են էական ազդեցություն ունենալ դիմողի կողմից բարձրացված սահմանադրաիրավական վեճի բովանդակության վրա, սահմանադրական դատարանը նախ անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն պնդմանը, համաձայն որի՝ վեճի առարկա օրենքի խնդիրն առաջին հերթին Հայաստանում բնակվողների սոցիալական ապահովության հարցի լուծումն է, եւ այն, որ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս վեց ամսից ավելի ժամկետով բնակության մեկնող կամ վեց ամսից ավելի ժամկետով բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացին կորցնում է կենսաթոշակ ստանալու իրավունքը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական համաձայնագիր կնքած պետություններ մշտական բնակության մեկնող (մեկնած) անձանց:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության, 7-րդ մասի 2-րդ կետի, 41-րդ հոդվածի 5-րդ մասի վերլուծությունից բխում է, որ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեզիստրում առկա՝ Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակի իրավունք ունեցող անձի հաշվառման հասցեի մասին տվյալների վրա հիմնված՝ Հայաստանի Հանրապետության բնակության վայրի հաշվառումով է պայմանավորված Հայաստանի Հանրապետության քաղաքացու, Հայաստանի Հանրապետության երկրադաքացու, օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի **կենսաթոշակի իրավունքը, կենսաթոշակ ստանալու իրավունքը, կենսաթոշակ ստանալու իրավունքի վերականգնումը եւ կենսաթոշակի վճարման վերսկսումը:**

Ինչ վերաբերում է **կենսաթոշակ նշանակելուց հետո** կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցմանը, ապա «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթների, մասնավորապես, «Կենսաթոշակի իրավունքը եւ կենսաթոշակ ստանալու իրավունքը» վերտառությամբ 7-րդ հոդվածի, «Կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելը եւ վերականգնելը, կենսաթոշակ վճարելը դադարեցնելը եւ վերսկսելը» վերտառությամբ 41-րդ հոդվածի համադրված վերլուծությունը վկայում է, որ օրենսդիրը կենսաթոշակ ստանալու իրավունքի կորուստը Հայաստանի Հանրապետությունում բնակությունը դադարեցնելու եւ այլ երկրում բնակություն հաստատելու կամ Հայաստանի Հանրապետության բնակության վայրի հաշվառումից դուրս գալու փաստով պայմանավորում է միայն համապատասխանաբար՝ օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց եւ երկրադաքացիների պարագայում: Մինչդեռ ՀՀ քաղաքացիների պարագայում կենսաթոշակ ստանալու իրավունքի կորուստը պայմանավորված է, ի թիվս այլնի, **ՀՀ քաղաքացիության դադարեցման փաստով** (օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ), եւ օրենքի 41-րդ հոդվածը ՀՀ քաղաքացիների առնչությամբ չի նախատեսում կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելու այնպիսի հիմք, ինչպիսին է Հայաստանի Հանրապետության բնակության վայրի հաշվառումից դուրս գա-

լու հանգամանքը՝ **անկախ նրանից, թե ՀՀ քաղաքացին մինչև վեց ամիս, թե վեց ամսից ավելի ժամկետով է մեկնել տվյալ օտարերկրյա պետություն, ինչպես նաև անկախ այն հանգամանքից, թե տվյալ օտարերկրյա պետությունը Հայաստանի Հանրապետության հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական համաձայնագիր կնքած պետություն է, թե՛ ոչ:**

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործնականում չեն բացառվում այնպիսի իրավիճակներ, երբ ՀՀ քաղաքացին օտարերկրյա պետությունում անձնական շարժառիթների (օր.՝ երկարատև բուժման եւ այլն) կապակցությամբ վեց ամսից ավելի ժամկետով բնակվի տվյալ պետությունում: Այս առումով ՀՀ օրենսդրության, մասնավորապես՝ նաև «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի վերլուծության հիման վրա սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ նշված դեպքն ինքնաբերաբար չի առաջացնում տվյալ քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության բնակչության վայրում հաշվառման դադարեցում կամ կենսաթոշակի գործը տվյալ պետություն ուղարկելու պարտավորություն:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը հիմնավոր է իրավաչափ չի համարում օրենքի դրույթների այնպիսի մեկնաբանությունը, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս վեց ամսից ավելի ժամկետով բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացին կորցնում է կենսաթոշակ ստանալու իրավունքը:

5. Սույն գործում բարձրացված սահմանադրաիրավական վեճի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև պարզել.

- սահմանադրաիրավական բովանդակության առումով իրավաչափ է, արդյոք, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված՝ փաստաթղթերը ներկայացնելու պահանջը՝ որպես կենսաթոշակ վճարելու նախապայման,
- խնդրո առարկա իրավահարաբերությունների նկատմամբ «լիազորագիր» ինստիտուտի վերաբերյալ ՀՀ օրենսդրության մեջ առկա նորմերի կիրառելիության շրջանակը,
- խնդրո առարկա իրավահարաբերությունների նկատմամբ համապատասխան ՀՀ միջազգային պայմանագրերում ամրագրված նորմերի կիրառելիության շրջանակը:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված՝ փաստաթղթերը ներկայացնելու պահանջի իրավաչափությունը գնահատելու համար սահմանադրական դատարանը, նախեւառաջ, հարկ է համարում պարզել նշված փաստաթղթերը ներկայացնելու պարտականության վերաբերյալ նորմատիվ դրույթներով հետապնդվող նպատակը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ կենսաթոշակն անկանխիկ եղանակով ստանալու համար օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված փաստաթղթերը, այն է՝ իր ողջ լինելու մասին Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող նոտարի հաստատած փաստա-

թուղթը բանկ ներկայացնելու կամ բանկում իր ողջ լինելու մասին հայտարարություն տալու պարտականության սահմանմամբ օրենսդիրն իրավաչափ նպատակ է հետապնդել կանխելու մահացած կենսաթոշակառուին կենսաթոշակ վճարելու դեպքերը եւ արդյունավետ օգտագործելու բյուջետային միջոցները:

Այլ խնդիր է նշված նպատակի սահմանման նպատակահարմարությունը՝ հաշվի առնելով եւ չբացառելով այն հանգամանքները, որ վերը նշված փաստաթղթերը բանկին ներկայացնելուց հետո մեկ տարվա ընթացքում քաղաքացին կարող է մահանալ, կամ վերը նշված փաստաթղթերը բանկին ներկայացնելուց հետո մեկ տարվա ընթացքում քաղաքացին մինչեւ իր մահը այդ օրենքի 35-րդ հոդվածի 9-րդ մասի ուժով լիազորագիր է տվել մեկ այլ անձի: Բացի դրանից, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ պարբերության համաձայն՝ կենսաթոշակառուի մահվան ամսվան հաջորդող ամիսների համար վճարված կենսաթոշակի գումարը ենթակա է վերադարձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը, հաշվի առնելով նաեւ պետության հայեցողությունը՝ սահմանելու կենսաթոշակի ձեւերը, դրանց նշանակման կարգը եւ պայմանները, արձանագրում է, որ, այդուհանդերձ, օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու պարտականության սահմանումն ինքնին չի առաջացնում սահմանադրականության խնդիր:

6. Անդրադառնալով խնդրո առարկա իրավակարգավորումների շրջանակներում «լիազորագիր» ինստիտուտի վերաբերյալ ՀՀ օրենսդրության մեջ առկա նորմերի կիրառելիության խնդրին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 3-րդ մասն առանձնացնում է այն սուբյեկտներին, որոնց կողմից տրված լիազորագրերը հավասարեցված են նոտարի կողմից հաստատվող լիազորագրերին: Ավելին, նույն հոդվածի 4-րդ մասը հատուկ իրավակարգավորում է նախատեսում որոշակի դեպքերի, այդ թվում՝ կենսաթոշակ ստանալու լիազորագրի վերաբերյալ: Համաձայն այդ նորմի՝ կենսաթոշակ ստանալու լիազորագիրը կարող է հաստատել նաեւ այն կազմակերպությունը, որտեղ կենսաթոշակառուն աշխատում է, նրա բնակության վայրի տեղական ինքնակառավարման մարմինը եւ այն ստացիոնար բուժական հաստատության տնօրինությունը, որտեղ նա գտնվում է բուժման մեջ:

Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված սուբյեկտների կողմից հաստատվող լիազորագրերին, ապա «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 9-րդ մասը հատուկ իրավակարգավորում է ամրագրում միայն քրեակատարողական հիմնարկի եւ հոգեբուժական հաստատության ղեկավարի վավերացրած լիազորագրի առնչությամբ՝ վերջինս հավասարեցնելով նոտարի հաստատած լիազորագրին: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը, հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասը, որը սահմանում է, որ «Օրենսգրքի կարգավորման իրավահարաբերությունների ոլորտում Հայաստանի Հանրապետության մյուս բոլոր օրենքները պետք

է համապատասխանեն օրենսգրքերին», ինչպես նաեւ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի՝ «Այլ օրենքներում պարունակվող քաղաքացիական իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն սույն օրենսգրքին», գտնում է, որ «**Պետական կենսաթոշակների մասին**» ՀՀ օրենքը կիրառելիս իրավակիրառական պրակտիկայում պետք է հիմք ընդունվի նաեւ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերում նշված սուբյեկտների կողմից հաստատված լիազորագրերը:

7. Հարցին անհրաժեշտ է անդրադառնալ նաեւ խնդրո առարկա իրավահարաբերությունների նկատմամբ համապատասխան ՀՀ միջազգային պայմանագրերում ամրագրված նորմերի կիրառելիության շրջանակի համատեքստում եւ այն դիտարկել «կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական համաձայնագիր կնքած պետությունում բնակվող կենսաթոշակառու եւ «Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին» Հաազայի 1961թ. հոկտեմբերի 5-ի կոնվենցիայի մասնակից պետությունում կամ օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի վավերականության փոխադարձ ճանաչման հետ կապված իրավահարաբերությունները կանոնակարգող երկկողմ եւ բազմակողմ միջազգային պայմանագրերի մասնակից պետություններում բնակվող կենսաթոշակառու» փոխհարաբերությունների տեսանկյունից: Այդ առումով սահմանադրական դատարանն արձանագրում է հետեւյալը. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը: Սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-966 որոշման մեջ, անդրադառնալով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթի բովանդակությանը, մասնավորապես նշել է. «... ՀՀ միջազգային պայմանագրերը նորմատիվ իրավական ակտեր են, որոնք ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են, այսինքն՝ բովանդակում են իրավակարգավորման համապատասխան բնագավառի սուբյեկտների համար վարքագծի պարտադիր կանոններ, ունեն ՀՀ օրենքներից եւ իրավական այլ ակտերից առավել բարձր իրավաբանական ուժ, ենթակա են պարտադիր կատարման ՀՀ պետական եւ տեղական ինքնակառավարման բոլոր մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից ՀՀ ողջ տարածքում»:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է, որ պետական կենսաթոշակային ապահովության հարաբերությունները կարգավորվում են ՀՀ Սահմանադրությամբ, **ՀՀ միջազգային պայմանագրերով**, նշված օրենքով, այլ օրենքներով եւ իրավական այլ ակտերով: Նույն օրենքի 35-րդ հոդվածի 9-րդ մասի երրորդ պարբերության համաձայն՝ ՀՀ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական համաձայնագիր կնքած պետություն մշտական բնակության մեկնող (մեկնած) անձի **կենսաթոշակի գործն ուղարկելու դեպքում** կենսաթոշակառուին մինչ այդ չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է նաեւ այդ պետությունում գործունեություն իրականացնող նոտարի վավերացրած լիազորագրով:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավակիրառական պրակտիկայում «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի **վերոհիշյալ նորմերին տրվել է սահմանափակ մեկնաբանություն**, եւ օրենքի վիճարկվող դրույթների կիրառման գործընթացում իրավակիրառ սուբյեկտները կիրառելի են համարել միայն այն միջազգային պայմանագրերը, որոնք վերաբերում են բացառապես սոցիալական ապահովության ոլորտին: Մինչդեռ Հայաստանի Հանրապետությունն անդամակցում է առանձին միջազգային բազմակողմ եւ երկկողմ պայմանագրերի, որոնք կանոնակարգում են օտարերկրյա իրավասու հիմնարկների եւ լիազորված անձանց կողմից տրված փաստաթղթերի վավերականության փոխադարձ ճանաչման հետ կապված իրավահարաբերությունները, եւ որոնք կիրառելի են հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, այդ թվում՝ սոցիալական ապահովության:

Այսպես. Հայաստանի Հանրապետությունն անդամակցում է 07.10.2002թ. Քիչնետում ԱՊՀ շրջանակներում կնքված՝ «Քաղաքացիական, ընտանեկան եւ քրեական գործերով իրավական օգնության եւ իրավական հարաբերությունների մասին» կոնվենցիային, որի «Գույքային իրավահարաբերություններ» վերտառությամբ 4-րդ մասի 43-րդ հոդվածը սահմանում է. «Լիազորագրի ձեւը եւ գործողության ժամկետը որոշվում են այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի տարածքում տրվել է: Այդպիսի լիազորագիրը, այն Պայմանավորվող կողմի լեզվով, որի տարածքում պետք է օգտագործվի, կամ ռուսերենով՝ նոտարական կարգով վավերացված թարգմանությամբ, մյուս Պայմանավորվող կողմերի տարածքներում ընդունվում է առանց որեւէ հատուկ հաստատման»:

Հայաստանի Հանրապետության եւ Ռումինիայի միջեւ քաղաքացիական եւ քրեական գործերով իրավական օգնության մասին պայմանագրի 23-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Պայմանավորվող կողմերից որեւէ մեկի արդարադատության հիմնարկների կամ իրավասու այլ մարմինների կողմից պատրաստված կամ հաստատված փաստաթղթերը, ինչպես նաեւ մասնավոր անձանց ստորագրությամբ փաստաթղթերը, որոնց վրա նշված են տարին, ամիսը եւ ամսաթիվը, եւ մասնավոր անձի ստորագրության իսկությունը սահմանված կարգով հաստատված է, մյուս Պայմանավորվող կողմի տարածքում վավերական են առանց որեւէ օրինականացման: Նույն կանոնը կիրառվում է նաեւ փաստաթղթերից կատարված քաղվածքների եւ պատճենների նկատմամբ, եթե դրանք հաստատված են որպես իսկական պատճեններ: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ այդ հոդվածի 1-ին կետում նշված փաստաթղթերը, **որոնք մի Պայմանավորվող կողմի տարածքում դիտվում են որպես պաշտոնական փաստաթղթեր, մյուս Պայմանավորվող կողմի տարածքում ունեն նույն իրավաբանական ուժը**, ինչ վերջին Պայմանավորվող կողմի պատրաստած նույն տեսակի փաստաթղթերը:

Հայաստանի Հանրապետության եւ Բուլղարիայի Հանրապետության միջեւ քաղաքացիական գործերով իրավական օգնության մասին պայմանագրի 22-րդ հոդվածի համաձայն՝ Պայմանավորվող կողմերից որեւէ մեկի տարածքում կազմված պաշտոնական փաստաթղթերը (այդ թվում՝ նոտարական փաս-

տաթղթերը) ազատվում են օրինականացումից կամ համանման պայմանականություններից, եթե անհրաժեշտ է դրանք ներկայացնել մյուս Պայմանավորվող կողմի տարածքում: Նույն պայմանագրի 25-րդ հոդվածի համաձայն՝ Պայմանավորվող կողմի դատարանի կամ այլ հիմնարկի կողմից կազմված կամ վավերացված փաստաթղթերը վավերական են այդ Պայմանավորվող կողմի հիմնարկի պաշտոնական կնիքի առկայության դեպքում: Այդ տեսքով դրանք ընդունվում են մյուս Պայմանավորվող կողմի դատարանի կամ այլ հիմնարկի կողմից՝ առանց օրինականացման:

Հայաստանի Հանրապետության եւ Վրաստանի միջեւ քաղաքացիական գործերով իրավական օգնության մասին պայմանագրի 25-րդ հոդվածի համաձայն՝ մի Պայմանավորվող կողմի դատարանի կամ այլ հիմնարկի կողմից կազմված կամ վավերացված փաստաթղթերը վավերական են այդ Պայմանավորվող կողմի հիմնարկի պաշտոնական կնիքի առկայության դեպքում: Այդ տեսքով մյուս Պայմանավորվող կողմի դատարանի կամ այլ հիմնարկի կողմից դրանք կարող են ընդունվել առանց օրինականացման:

Հայաստանի Հանրապետության եւ Լիտվայի Հանրապետության միջեւ քաղաքացիական, ընտանեկան եւ քրեական գործերով իրավական օգնության եւ իրավական հարաբերությունների մասին պայմանագրի 13-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փաստաթղթերը, որոնք Պայմանավորվող կողմերից որեւէ մեկի տարածքում կազմվել կամ հաստատվել են համապատասխան հիմնարկի կամ հատուկ դրա համար լիազորված անձի կողմից՝ նրանց իրավասության շրջանակներում սահմանված ձեւով եւ ամրագրված են զինանշանի պատկերով կնիքով, մյուս Պայմանավորվող կողմի տարածքում ընդունվում են առանց որեւէ հաստատման: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ փաստաթղթերը, որոնք մի Պայմանավորվող կողմի տարածքում դիտվում են որպես պաշտոնական, մյուս Պայմանավորվող կողմի տարածքում օժտվում են պաշտոնական փաստաթղթերի ապացուցողական ուժով:

Հայաստանի Հանրապետությունը 1993թ. մայիսի 24-ին միացել է նաեւ Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին Հաագայի 1961թ. հոկտեմբերի 5-ի կոնվենցիային, որին անդամակցում է 103 պետություն: Այս կոնվենցիային անդամակցությամբ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է փոխադարձաբար օրինականացումից ազատել մյուս պայմանավորվող պետությունների տարածքում տրված եւ Հայաստանի Հանրապետությունում ներկայացվող պաշտոնական փաստաթղթերը, **այդ թվում՝ նոտարական փաստաթղթերը:** Այս կոնվենցիայով ներմուծվում է նաեւ հավաստագրի ինստիտուտը, որը փոխարինում է օրինականացման ընթացակարգին: Հավաստագրի ինստիտուտի ներդրման նպատակն է ապահովել մի պայմանավորվող պետության տարածքում տրված՝ հավաստագրով հաստատված պաշտոնական փաստաթղթի օգտագործումը մյուս պայմանավորվող կողմի տարածքում: Ընդ որում, մի պայմանավորվող կողմի տարածքում տրված պաշտոնական փաստաթղթի վրա կոնվենցիայի պահանջներին համապատասխան դրված հավաստագիրը մյուս պայմանա-

վորվող կողմի տարածքում չի կարող մերժվել կամ չճանաչվել: Մերժումը կամ չճանաչումը կհանդիսանա միջազգային պարտավորության չկատարում:

Սահմանադրական դատարանը կարելոքում է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ վավերացված միջազգային պայմանագրերի նորմերի՝ օրենքների նորմերի նկատմամբ գերակա իրավաբանական ուժի սկզբունքային պահանջի անվերապահ կատարման անհրաժեշտությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված միջազգային պարտավորությունների պատշաճ կատարումը: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ պահանջների կատարումը խնդրո առարկա իրավիճակում կբացառի, մի կողմից, Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, սակայն կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական համաձայնագիր կնքած պետությունում բնակվող կենսաթոշակառուների, մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, սակայն Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին 1961թ. հոկտեմբերի 5-ի կոնվենցիայի, ինչպես նաև օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի վավերականության փոխադարձ ճանաչման հետ կապված իրավահարաբերությունները կանոնակարգող երկկողմ եւ բազմակողմ միջազգային պայմանագրերի մասնակից պետություններում բնակվող կենսաթոշակառուների միջեւ փաստացիորեն ստեղծված տարբերակված մոտեցումը՝ կապված վերջիններիս՝ կենսաթոշակը ստանալու համար Հայաստանի Հանրապետություն վերադառնալու անհրաժեշտության հետ:

Միեւնույն ժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերը նշված տարբերակված մոտեցումը չի կարող հանգեցնել ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածով սահմանված՝ խտրականության արգելման սկզբունքին, քանի որ դիտարկվող մոտեցումն առաջացել է **բացառապես իրավակիրառ պրակտիկայում համապատասխան իրավասու մարմինների կողմից ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի պահանջների չկատարման հետեւանքով**, որպիսի հանգամանքը փաստվում է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի՝ վերը հիշատակված թիվ ԱԳԳ/ՄՍ-1-1/1013-12 17.02.2012թ. գրությամբ, որով հավաստվում է, որ, մասնավորապես, Քիշնեւի եւ Հաագայի՝ վերը հիշատակված կոնվենցիաների անդամ պետությունների վավերացրած լիազորագրի հիման վրա Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակի գումար չի վճարվում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի բարձրացրած խնդիրը պայմանավորված է ոչ թե օրենքի վիճարկվող դրույթների սահմանադրականությամբ, այլ իրավակիրառական պրակտիկայում ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ վավերացված միջազգային պայմանագրերի նորմերի՝ օրենքների նորմերի նկատմամբ գերակա իրավաբանական ուժի սկզբունքային պահանջի անտեսմամբ:

Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացի հանդիսացող այն կենսաթոշակառուներին, որոնք բնակվում են կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական համաձայնագիր չկնքած պետությունում, կամ Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարված:

րարելու մասին Հաագայի 1961թ. հոկտեմբերի 5-ի կոնվենցիայի մասնակից չհանդիսացող պետությունում, կամ օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի վավերականության փոխադարձ ճանաչման հետ կապված իրավահարաբերությունները կանոնակարգող երկկողմ եւ բազմակողմ միջազգային պայմանագրերի մասնակից չհանդիսացող պետություններում, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ եւ 9-րդ մասերի դրույթներով պահանջվող փաստաթղթերի շրջանակը միայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնող նոտարի հաստատած փաստաթղթերով սահմանափակելը վերը նշված կենսաթոշակառուների համար, ի տարբերություն Հայաստանի Հանրապետությունում բնակվող կենսաթոշակառուների, առաջացնում է Հայաստանի Հանրապետություն վերադառնալու անհրաժեշտություն, այդուհանդերձ, գտնում է, որ նշված հանգամանքը որեւէ կերպ չի հանգեցնում Սահմանադրության 14.1-րդ հոդվածում ամրագրված՝ խտրականության արգելման սկզբունքի խախտման, քանի որ, **նախ՝** նշված փաստաթղթերը ներկայացնելու պարտականությունը սահմանված է բոլոր կենսաթոշակառուների համար, **երկրորդ՝** դրանց համապատասխանաբար հաստատումը կամ վավերացումը սահմանափակված է միեւնոյն սուբյեկտով՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնող նոտարով, **երրորդ՝** ցանկացած իրավունքի իրացմանն ուղղված իրավակարգավորումների արդյունքում առաջացող **փաստացի իրավիճակը, տվյալ դեպքում՝ Հայաստանի Հանրապետություն վերադառնալու անհրաժեշտությունը**, եթե այդ իրավիճակը կապված չէ միեւնոյն կատեգորիայի անձանց համար իրավունքների եւ պարտականությունների տարբեր ծավալներ սահմանելու հետ, չի կարող հանգեցնել անխտրականության սկզբունքի խախտման: Նշված փաստացի իրավիճակը չի կարող հանգեցնել նաեւ տվյալ իրավունքի ոչ ողջամիտ սահմանափակման, եթե սահմանված իրավակարգավորումը հետապնդում է իրավաչափ նպատակ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում օրենքով սահմանված իրավակարգավորման նպատակի իրավաչափությունը պայմանավորված է նրանով, որ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական համաձայնագիր չկնքած պետությունում կամ Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին Հաագայի 1961թ. հոկտեմբերի 5-ի կոնվենցիայի մասնակից չհանդիսացող պետությունում, կամ օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի վավերականության փոխադարձ ճանաչման հետ կապված իրավահարաբերությունները կանոնակարգող երկկողմ եւ բազմակողմ միջազգային պայմանագրերի մասնակից չհանդիսացող պետություններում բնակվող կենսաթոշակառուների առնչությամբ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հավելյալ բեռ՝ ստուգելու այդ պետություններում տրված՝ օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ եւ 9-րդ մասերի 1-ին պարբերություններով նախատեսված փաստաթղթերի իսկությունը եւ այն էլ՝ համապատասխան միջազգային իրավական հիմքերի բացակայության պայմաններում: Տվյալ պարագայում օրենքով սահմանված իրավակարգավորման իրավաչափությունը՝ վերը նշված կենսաթոշա-

կառուների առնչությամբ, պայմանավորված է նաև կենսաթոշակ վճարելու բնագավառում հնարավոր իրավախախտումների կանխման, դրա արդյունքում՝ կենսաթոշակառուի իրավունքների երաշխավորման եւ բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործման անհրաժեշտությամբ:

Միաժամանակ, հիմք ընդունելով նաև «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածը, 41-րդ հոդվածի 4-րդ մասը՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի բարձրացրած խնդիրը չի առնչվում նաև ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածով սահմանված՝ սոցիալական ապահովության իրավունքի սահմանափակումների թույլատրելիությանը, քանի որ բոլոր դեպքերում «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածը եւ 41-րդ հոդվածի 4-րդ մասը հնարավորություն են ընձեռում ստանալու չվճարված կենսաթոշակի գումարները՝ կենսաթոշակ վճարելու համար դիմելու ամսվան նախորդող երեք տարիների համար /ըստ սահմանադրական դատարանի դիմելու պահին գործող իրավակարգավորման/, իսկ կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման մեղքի առկայության պարագայում՝ անցած ամբողջ ժամանակահատվածի համար: Սահմանադրական դատարանը հաշվի է առնում նաև, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա քննության է ընդունվել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 2-րդ կետերի, 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի /ըստ 19.03.2012թ. ՀՕ-100-Ն ՀՀ օրենքով կատարված փոփոխության/, 14-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության, 29-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործը, եւ հիշյալ հոդվածների սահմանադրականությանը կանոնադաշտնա այդ գործի շրջանակներում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին պարբերության եւ 9-րդ մասի 1-ին պարբերության, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**2 հոկտեմբերի 2012 թվականի
ՍԳՈ- 1050**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 17-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

9 հոկտեմբերի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուկյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակից Ա. Վարդեանյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի առաջատար մասնագետ Հ. Սարգսյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 68-րդ հոդվածների.

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 28.04.2012թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պա-

տասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետագոտելով «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2008 թվականի հունիսի 17-ին, Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2008 թվականի հուլիսի 12-ին եւ ուժի մեջ է մտել 2008 թվականի օգոստոսի 2-ին:

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը սահմանում է.

«1. Իրավասու դատարանը չեղյալ է ճանաչում ֆինանսական համակարգի հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումը, եթե՝

1) պահանջը ենթակա չէ քննության ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից.

2) ֆինանսական համակարգի հաշտարարը որոշում է կայացրել սույն օրենքով սահմանված ընթացակարգային կանոնների պահանջների խախտմամբ.

3) բացահայտվել են ֆինանսական համակարգի հաշտարարի անաչառությունը բացառող հանգամանքներ»:

Քանի որ տվյալ հոդվածն այլ մասեր չունի, ուստի սահմանադրական դատարանը քննության առարկա է դիտել հոդվածն ամբողջությամբ:

2. Դիմողը վկայակոչելով Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը, Կրեան ընդդեմ Ֆրանսիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները, ՀՀ սահմանադրական դատարանի ՍԳՈ-733, ՍԳՈ-747 եւ ՍԳՈ-906 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները եւ վիճարկելով «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի սահմանադրականությունը՝ գտնում է, որ այն հակասում է ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածների 1-ին մասերին:

Ի հիմնավորումն իր դիրքորոշման՝ դիմողը, մասնավորապես, ներկայացնում է հետեւյալ փաստարկները՝

- օրենքը թույլ է տալիս վիճարկել ֆինանսական համակարգի հաշտարարի (այսուհետ՝ Հաշտարար) որոշումը, սակայն նախատեսում է այն դատարանի կողմից չեղյալ ճանաչելու համար որոշակի հիմքեր, որոնք խիստ սահմանափակ են, ինչի արդյունքում կողմերին չի տրվում Հաշտարարի որոշումն իրավասու դատարանում ըստ էության վիճարկելու հնարավորություն, մասնավորապես՝ որոշման հիմքում ընկած փաստական հանգամանքները վիճարկելու հնարավորություն.

- Հաշտարարի որոշումները կողմերի համար ունեն պարտադիր ուժ, ուստի եւ պետք է այդ որոշումների ըստ էության դատական քննության հնարավորություն ընձեռվի՝ կողմերի ցանկությամբ.

- օրենքի վիճարկվող նորմն առավելապես կազմակերպություններին է զրկում դատական պաշտպանության իրավունքից օգտվելու հնարավորությունից, քանզի Հաշտարարի որոշումները կողմերի համար պարտադիր են դառնում Հաճախորդի կողմից դրանք անվերապահորեն եւ գրավոր ձեով ընդունելու պարագայում միայն, մինչդեռ կազմակերպությունները զրկվում են այդ որոշումներն արդյունավետ կերպով դատական կարգով վիճարկելու հնարավորությունից, քանզի օրենքի վիճարկվող նորմում զետեղված երեք հիմքերից ոչ մեկը չի վերաբերում որոշման ըստ էության բողոքարկմանը եւ/կամ վիճարկմանը:

3. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկներին, պնդում է, որ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը՝ Հաշտարարի որոշումն իրավասու դատարանի կողմից չեղյալ ճանաչելու սահմանափակումների առումով, համահունչ է ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածների 1-ին մասերին, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ դատական քննության մատչելիության եւ արդար դատաքննության իրավունքներին:

Ըստ պատասխանողի՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ գործերի քննության պրակտիկան փաստում է, որ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի՝ արդար դատաքննությանը վերաբերող 6-րդ հոդվածը տարածվում է նաեւ վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմների, այդ թվում՝ օմբուդսմենների վրա, եթե դրանք առնվազն կողմերից մեկի համար պարտադիր կատարման որոշում կայացնելու իրավունք ունեն, եւ ամրագրված է կողմերից թեկուզեւ մեկի պարտականությունը՝ վեճը լուծել տվյալ վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմի միջոցով:

Համադրելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած վճիռներում ամրագրված սկզբունքները եւ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթները՝ պատասխանող կողմը փաստում է, որ Հաշտարարի գրասենյակը համապատասխանում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի սահմանած՝ «օրենքի ուժով ստեղծված տրիբունալ» հասկացությանը:

Վկայակոչելով Հաշտարարի՝ ֆինանսական ոլորտում մասնագիտացված մարմին լինելու հանգամանքը, պատասխանողը գտնում է, որ այդ առումով լիովին տրամաբանական է, որպեսզի Հաշտարարի որոշումը բողոքարկվի միայն համապատասխան ընթացակարգերի չպահպանման կամ Հաշտարարի անաչառությունը բացառող հիմքերի առկայության դեպքերում, քանզի պրոֆեսիոնալ մարմնի կողմից նյութաիրավական նորմերի սխալ կիրառումը կարող է պայմանավորված լինել բացառապես աչառու մոտեցման ցուցաբերմամբ:

4. Սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճի շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում բացահայտել.

- Հաշտարարի ինստիտուտի դերը եւ նշանակությունն անձի խախտված իրավունքների վերականգնման եւ վեճերի լուծման գործում՝ որպես ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով սահմանված իրավունքների իրացումն ապահովող այլընտրանքային հնարավորություն:
- Հաշտարարի ինստիտուտի հետ հաճախորդների եւ կազմակերպությունների համագործակցության իրավական շրջանակները:
- Հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումների բողոքարկման իրավակարգավորումների սահմանադրաիրավական բովանդակությունը:

5. Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ֆինանսական համակարգի հաշտարարի (օմբուդսմենի) ինստիտուտը հանդիսանում է վեճերի այլընտրանքային լուծման ինքնուրույն ձեւ (Alternative Dispute Resolution), ինչն էլ իրենից ներկայացնում է վեճերի արտադատական լուծման համակարգ: Ֆինանսական համակարգի հաշտարարի եւ նրա գործունեության հետ կապված բնութագրիչ հատկանիշները հիմնականում հանգում են հետեւյալին.

- ֆինանսական համակարգի հաշտարարի ինստիտուտը վեճերի լուծման այլընտրանքային ձեւ է.
- ֆինանսական համակարգի հաշտարարի ինստիտուտը հանդիսանում է իրավական վեճը լուծելու եւ այդ շրջանակներում խախտված իրավունքները վերականգնելու արտադատական մարմին.
- ֆինանսական համակարգի հաշտարարի հետ կողմերը համագործակցում են իրենց կամահայտնությամբ.
- ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները, որպես կանոն, պարտադիր չեն ֆինանսական ոլորտում սպառողի (հաճախորդի) համար.
- ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները, որպես կանոն, պարտադիր են ֆինանսական կազմակերպության համար.
- ֆինանսական համակարգի հաշտարարի ինստիտուտը ֆինանսավորվում է հիմնականում իրենց իսկ՝ ֆինանսական կազմակերպությունների կողմից.
- ֆինանսական համակարգի հաշտարարի ինստիտուտը հանդիսանում է առավելապես սպառողների իրավունքների եւ օրինական շահերի արտադատական պաշտպանության ձեւ.
- պահպանելով չեզոքություն՝ ֆինանսական համակարգի հաշտարարը կողմերին օգնություն է ցուցաբերում հաշտեցման միջոցով հասնելու կառուցողական որոշումների կայացման:

6. Հայաստանի Հանրապետությունում Հաշտարարի ինստիտուտը ներդրվել է «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով՝ հիմք ընդունելով «Դատարանների աշխատանքի չափազանց ծանրաբեռնվածությունը կանխելու եւ նվազեցնելու միջոցառումների վերաբերյալ» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 1986 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ R (86)12 հանձնարարականը եւ «Սպառողների վեճերի արտադատական լուծման համար պատասխանատու մարմին-

ների վրա տարածվող սկզբունքների մասին» Եվրոպական հանձնաժողովի 1998 թվականի մարտի 30-ի թիվ 98/257/EC հանձնարարականում ամրագրված սկզբունքները: Նպատակ է հետապնդվել նաև ապահովել ֆիզիկական անձ սպառողների (այսուհետ՝ Հաճախորդ) եւ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված լիցենզիա ունեցող՝ օրենքով նախատեսված անձանց (այսուհետ՝ Կազմակերպություններ) միջեւ ծագած գույքային պահանջների արագ, արդյունավետ, անվճար եւ մասնագիտական քննության իրականացումը, ֆինանսական ոլորտում սպառողների իրավունքների ու շահերի պաշտպանությունը, ֆինանսական համակարգի նկատմամբ հանրության վստահության բարձրացումը եւ ֆինանսական միջնորդության ավելացումը:

Համաձայն վեճի առարկա օրենքի՝ Հաշտարարն իրավասու է քննել Հաճախորդների կողմից Կազմակերպությունների դեմ ներկայացված այն պահանջները, որոնք կապված են Կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների հետ եւ պարունակում են տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջ:

Հաշվի առնելով վերոհիշյալ նպատակները եւ դրանց կենսագործման անհրաժեշտությունը՝ սահմանադրական դատարանը կարելոքում է Հաշտարարի ինստիտուտի դերը եւ նշանակությունը անձանց իրավունքների պաշտպանության, խախտված իրավունքների վերականգնման եւ վեճերի լուծման գործում՝ որպես ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով սահմանված իրավունքների իրացումն ապահովող **այլընտրանքային, իրավական հնարավորություն:**

7. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը կարելոքում է Հաշտարարին ուղղված պահանջի քննության ընթացակարգի մասնակիցների (Հաճախորդի եւ Կազմակերպության) կարգավիճակների վերլուծությունը՝ Հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշման բողոքարկման ինստիտուտի իրացման արդյունավետության տեսանկյունից, եւ հարկ է համարում վիճարկվող դրույթը դիտարկել օրենքի այլ դրույթների (մասնավորապես՝ 4, 12, 16 եւ 18-րդ հոդվածների) հետ համակարգային ամբողջականության տեսանկյունից:

Օրենքի դրույթների համակարգային վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հաճախորդի համար Հաշտարարի հետ համագործակցելն օրենսդիրն ամրագրել է **որպես իրավունք**, մասնավորապես սահմանելով, որ Հաճախորդն իրավունք ունի դիմելու Հաշտարարին՝ անկախ այն հանգամանքից, թե մե՞սն իրավունք Հաճախորդի եւ Կազմակերպության միջեւ կնքված պայմանագրով նախատեսված է, թե՛ ոչ: Ավելին, օրենսդիրը հստակ սահմանել է, որ Հաշտարարին դիմելու՝ Հաճախորդի իրավունքը սահմանափակող համաձայնությունը կամ պայմանն առոչինչ է: Հաշտարարի կողմից պահանջն ընդունելու, քննելու եւ որոշում կայացնելու կապակցությամբ Հաճախորդից որեւէ վճար չի գանձվում:

Ինչ վերաբերում է Հաշտարարի հետ Կազմակերպության համագործակցությանը, ապա Կազմակերպությունը պարտավոր է համագործակցել Հաշտա-

րարի հետ՝ վերջինիս պահանջով օրենքով սահմանված ժամկետում, իսկ նման ժամկետ սահմանված չլինելու դեպքում՝ ողջամիտ ժամկետում ներկայացնել փաստաթղթեր, տալ բացատրություններ ու պարզաբանումներ, Հաշտարարին տրամադրել պահանջին առնչվող այն նյութերը, որոնք գտնվում են իր մոտ, եթե անգամ դրանք պարունակում են բանկային, ապահովագրական կամ առևտրային գաղտնիք (12-րդ հոդվածի 1-ին մաս): Ավելին, Հաշտարարը կարող է որոշում կայացնել իր հետ բավականաչափ չհամագործակցող Կազմակերպությունը նախազգուշացնելու մասին, եւ եթե նման նախազգուշացում ստացած Կազմակերպությունը շարունակում է չհամագործակցել կամ բավականաչափ չհամագործակցել Հաշտարարի հետ, վերջինս կարող է որոշում կայացնել Կազմակերպությանը չհամագործակցող ճանաչելու մասին: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերջին դեպքում սույն գործով քննության առարկա օրենքը չի սահմանում կոնկրետ հետեւանք:

8. Վեճի առարկա օրենքը կանոնակարգելով Հաճախորդի պահանջը քննության առնելու եւ դրա հիման վրա որոշում կայացնելու հարաբերությունները՝ սահմանել է, որ այն դեպքում, երբ Հաշտարարի որոշումն առաքելու պահից 30 աշխատանքային օրվա ընթացքում **Հաճախորդն անվերապահորեն եւ գրավոր ձեւով համաձայնվում է որոշման հետ, վերջինս կողմերի համար դառնում է **պարտադիր**: Նշված դրույթից բխում է, որ Հաշտարարի կողմից ընդունված որոշումն ի սկզբանե միայն Հաշտարարի կողմից այն ընդունելու փաստի ուժով կողմերի համար ձեռք չի բերում իմպերատիվ նշանակություն, եւ միայն Հաճախորդի կողմից այն ընդունելու դեպքում է որոշումը դառնում պարտադիր: Այստեղից հետեւում է, որ մինչեւ անվերապահորեն եւ գրավոր ձեւով որոշմանը համաձայնելը կամ որոշմանը չհամաձայնելու դեպքում ինչպես Հաճախորդը, այնպես էլ Կազմակերպությունը կարող են դիմել դատարան եւ պահանջել գործի ըստ էության քննություն: Ինչն էլ փաստում է, որ այդ դեպքերում Հաճախորդը եւ Կազմակերպությունը չեն զրկվում ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով երաշխավորված իրենց իրավունքների իրացման հնարավորությունից: Այդ է վկայում նաեւ այն հանգամանքը, որ օրենսդիրը որպես պահանջի քննության դադարեցման հիմք, ի թիվս այլնի, նախատեսել է նաեւ, որ եթե պահանջի քննության ընթացքում պարզվում է, որ պահանջի առարկայի վերաբերյալ առկա է դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վճիռ, կամ պահանջի քննության ընթացքում պարզվում է, որ դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում քննվում է Հաճախորդի եւ Կազմակերպության միջեւ մույն պահանջի վերաբերյալ գործ, ապա Հաշտարարն իր որոշմամբ **դադարեցնում է պահանջի քննությունը**: Այս կանոնակարգումից հետեւում է, որ օրենսդիրը բացառում է ֆինանսական ոլորտում օրենքով նախատեսված շրջանակներում գույքային պահանջի քննության կառուցակարգային անարդյունավետության դրսեւորում:**

Միաժամանակ հարկ է նշել, որ Հաշտարարի որոշումը միայն Հաճախորդի կողմից այն ընդունելու պարագայում դառնում է պարտադիր ոչ միայն իր, այլեւ մյուս կողմի՝ Կազմակերպության համար, եւ վերջինս արդեն այդ որոշումը

կարող է վիճարկել դատական կարգով՝ բացառապես սույն գործով քննության առարկա հողվածում ամրագրված հիմքերի շրջանակներում, եթե, իհարկե, նա Հաշտարարի գրասենյակի հետ կնքած գրավոր համաձայնագրով չի հրաժարվել Հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից:

«Սպառողների վեճերի արտադատական լուծման համար պատասխանատու մարմինների վրա տարածվող սկզբունքների մասին» Եվրոպական հանձնաժողովի 1998 թվականի մարտի 30-ի թիվ 98/257/EC հանձնարարականով սահմանված վեճերի լուծման արտադատական մարմինների, այդ թվում՝ օմբուդսմենների /հաշտարարների/ գործունեության սկզբունքներից ազատության սկզբունքի բովանդակությունը հանգում է հետևյալին՝ որոշումը կողմերի համար կարող է դառնալ պարտադիր միայն այն դեպքում, երբ կողմերը նախապես տեղյակ են եղել որոշման պարտադիր բնույթի մասին եւ **հատուկ ընդունել են այն:**

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերոհիշյալ հարցով «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումներն ուղղակի նախատեսում են Հաճախորդի ազատ կամահայտնությունը: Օրենքում առկա չէ որեւէ դրույթ, որն ուղղակիորեն կվերաբերի Հաշտարարի որոշումը Կազմակերպության կողմից «հատուկ ընդունելուն», սակայն օրենքը նախատեսում է դրույթ, համաձայն որի՝ Կազմակերպությունը կարող է Հաշտարարի գրասենյակի հետ կնքել գրավոր համաձայնագիր Հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ (մասնավորապես՝ հողվածներ 7 եւ 16): Վերջինս, հանդիսանալով Կազմակերպության ազատ կամահայտնության արդյունք, ըստ էության հավասարազոր է Հաճախորդի կողմից անվերապահորեն եւ գրավոր ձեով Հաշտարարի որոշումներին համաձայնելուն, այսինքն՝ այդ դեպքում **կողմերը կամավոր սահմանափակում են ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով սահմանված իրենց իրավունքների լիարժեք իրացման հնարավորությունը:**

Ելնելով վերոգրյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ Կազմակերպությունը Հաշտարարի գրասենյակի հետ կնքված գրավոր համաձայնագրով, այսինքն՝ **իր ազատ կամահայտնությամբ**, հրաժարվում է Հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից, օրենքով սահմանված հիմքերով Հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումը վիճարկելու սահմանափակ հնարավորություն նախատեսելն իրավաչափ է եւ սահմանադրականության խնդիր չի հարուցում: Իսկ այն դեպքում, երբ առկա չէ հիշյալ գրավոր համաձայնագիրը, Հաշտարարի որոշումներն իրավասու դատարան վիճարկելու հիմքերի սահմանափակումը՝ այնքանով, որքանով չի նախատեսում այդ որոշումները դատական կարգով ըստ էության վիճարկելու հնարավորություն, իրավաչափ չէ եւ հանգեցնում է ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով սահմանված իրավունքների իրացման արգելափակմանը: Իսկ մարդու եւ քաղաքացու հիշյալ իրավունքներն ու ազատությունները, ինչպես եւ սահմանված է ՀՀ Սահմանադրության 42.1-րդ հոդվածով, տարածվում են իրավաբանական անձանց վրա՝ այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ: Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը կարելու է համարում շեշտել, որ այդ իրավունքների ու

ազատությունների՝ իրավաբանական անձանց նկատմամբ կիրառելի լինելու իրավակարգավորիչ դերը երաշխավորում է ոչ միայն իրավաբանական անձանց, այլև դրանցում միավորված ֆիզիկական անձանց իրավունքների եւ ազատությունների արդյունավետ պաշտպանության իրավական հնարավորություն:

Սահմանադրական դատարանն իր՝ ՍԳՈ-652, ՍԳՈ-665, ՍԳՈ-673, ՍԳՈ-690, ՍԳՈ-719, ՍԳՈ-954 եւ մի շարք այլ որոշումներում անդրադառնալով դատական պաշտպանության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը, մասնավորապես, իրավական դիրքորոշումներ է արտահայտել այն մասին, որ անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի նպատակն է նաեւ իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության եւ այդպիսի խախտումների հետեւանքները վերացնելու իրավունքի երաշխավորումը: **Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ:**

Միաժամանակ, սահմանադրական դատարանը գտնում է, որ եթե անձն իր իրավունքների պաշտպանության համար կամովի չի դիմել դատարան, այլ ընտրել է իր իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության՝ օրենքով մատչատեսված արտադատական միջոց եւ ազատ կամահայտնությամբ ի կատարումն ընդունել արտադատական միջոցով կայացված որոշումը, նման իրավակարգավորումը չի կարող հանգեցնել ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների սահմանափակման:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63, 64 եւ 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց:**

1. «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի, ինչպես նաեւ այդ հոդվածի հետ համակարգային առումով փոխկապակցված 18-րդ հոդվածի դրույթներով Կազմակերպության՝ դատարան դիմելու իրավունքի սահմանափակումները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը **միայն այն իրավակարգավորման շրջանակներում**, երբ Կազմակերպությունը ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից կամովի հրաժարվելու վերաբերյալ օրենքով սահմանված կարգով համաձայնագիր է կնքել վերջինիս գրասենյակի հետ:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**9 հոկտեմբերի 2012 թվականի
ՍԳՈ- 1051**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՔԱՂԱՔԱՅԻ ԳԱՅԱՆԵ ԱՇՈՒՂՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍՊՐՔԻ 379-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ 380-ՐԴ
ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան

16 հոկտեմբերի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչներ Ա. Ջեյնալյանի եւ Ա. Դազարյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Մխիթարյանի և առաջատար մասնագետ Հ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Գայանե Աշուղյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի եւ 380-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Գ. Աշուղյանի՝ 23.02.2012թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պա-

տասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի հուլիսի 1-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Վերաքննիչ բողոք բերելու ժամկետը» վերտառությամբ 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է. «Վերաքննիչ բողոք բերվում են ... առաջին ատյանի դատարանի՝ կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման մասին որոշումները՝ հրապարակվելու պահից հնգօրյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող մյուս ակտերը՝ հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Բողոքարկման ժամկետը վերականգնելու կարգը» վերտառությամբ 380-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերը համապատասխանաբար սահմանում են.

«1. Հարգելի պատճառներով բողոքարկման համար սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձինք կարող են դատական ակտը կայացրած դատարանի առաջ միջնորդել՝ վերականգնելու բաց թողնված ժամկետը: Բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը քննվում է դատական նիստում դատավճիռ կամ որոշում կայացրած դատարանի կողմից, որն իրավունք ունի կանչել միջնորդություն հարուցած անձին՝ բացատրություններ տալու համար:

2. Բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժելու որոշումը տասնհինգօրյա ժամկետում կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան, որն իրավունք ունի վերականգնել բաց թողնված ժամկետը եւ քննել գործը՝ պահպանելով սույն օրենսգրքի 382 հոդվածում եւ 383 հոդվածի երկրորդ մասում շարադրված պահանջները»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. դիմողի ներկայացուցիչները 07.03.2011թ. բողոք են ներկայացրել Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով դատարանին, ի թիվս այլնի, պարտավորեցնել ՀՀ գլխավոր դատախազին դիմել ՀՀ քրեական վերաքննիչ դատարան՝ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 07.04.2003թ. եւ 09.04.2003թ. «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշումների վերանայման վարույթ հարուցելու պահանջով:

Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանն իր՝ 07.04.2011թ. որոշմամբ բողոքը մերժել

է, գտնելով, որ «... Գ. Աշուղյանի իրավունքներն ու ազատությունները ՀՀ գլխավոր դատախազի եւ դատախազության կողմից չեն խախտվել»:

Նշված որոշման դեմ դիմողի ներկայացուցիչները 22.04.2011թ. ներկայացրել են վերաքննիչ բողոք՝ մատնանշելով այն հանգամանքը, որ առաջին ատյանի դատարանի որոշումը փոստին է հանձնվել 12.04.2011թ., եւ իրենք այն ստացել են 13.04.2011թ.: Նշված փաստերը հիմք ընդունելով՝ դիմողի ներկայացուցիչները վերաքննիչ դատարանին ուղղված իրենց բողոքում կարծիք են հայտնել, որ բողոքարկման 10-օրյա ժամկետը պետք է մեկնարկի որոշումն ստանալու պահից:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իր՝ 28.04.2011թ. ԵԿԳ/0025/11/11 որոշմամբ վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառով: Միաժամանակ, վերաքննիչ դատարանն ուղղորդել է դիմողի ներկայացուցիչներին՝ առաջնորդվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածով՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն ներկայացնել Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան, որի՝ միջնորդությունը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան:

Նշված որոշման դեմ դիմողի ներկայացուցիչները ներկայացրել են վճռաբեկ բողոք, որը վճռաբեկ դատարանի 24.05.2011թ. ԵԿԳ/0025/11/11 որոշմամբ վերադարձվել է:

Միաժամանակ, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 28.04.2011թ. վերոնշյալ ԵԿԳ/0025/11/11 որոշման մեջ նշված իրավական դիրքորոշմանը համահունչ, դիմողի ներկայացուցիչները բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն են ներկայացրել Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան, որը, հաստատված համարելով այն փաստը, որ առաջին ատյանի դատարանի 07.04.2011թ. որոշումը դիմողի ներկայացուցիչները փոստային ծառայության միջոցով ստացել են 13.04.2011թ., իր՝ 06.05.2011թ. որոշմամբ միջնորդությունը մերժել է այն պատճառաբանությամբ, որ դիմողի ներկայացուցիչներն ունեին դատարանի նշված որոշումը բողոքարկելու համար բավարար ժամանակ եւ հնարավորություն ու կարող էին պատշաճ, օրենքով սահմանված կարգով եւ ժամկետում բողոքարկել դատարանի որոշումը՝ ընդհուպ մինչեւ 2011 թվականի ապրիլի 18-ը ներառյալ, որը չեն կատարել:

Դիմողի ներկայացուցիչները Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 07.09.2011թ. վերը նշված որոշման դեմ ներկայացրել են վերաքննիչ բողոք:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իր՝ 08.07.2011թ. ԵԿԳ/0033/15/11 որոշմամբ, ըստ էության կրկնելով Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 07.09.2011թ. որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները եւ ավելացնելով, որ՝ «... 07.04.2011թ. դատական ակտը 12.04.2011թ.-ին ստանալու հանգամանքը կոնկրետ դեպքում չի հանդիսացել այնպիսի սահմանափակում, որը կարող էր խախտել դատարանի մատչելիության իրավունքը», մերժել է վերաքննիչ բողոքը:

Նշված որոշման դեմ դիմողի ներկայացուցիչները ներկայացրել են վճռաբեկ բողոք, որը վճռաբեկ դատարանի 22.08.2011թ. ԵԿԴ/0033/15/11 որոշմամբ վերադարձվել է:

3. Վիճարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ «հրապարակվելու պահից» դրույթի եւ 380-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի սահմանադրականությունը՝ դիմողը գտնում է, որ դրանք հակասում են ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներին:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար դիմողն արձանագրում է, որ դատարանն իրավաչափորեն հրապարակում է միայն դատական ակտի եզրափակիչ մասը, սակայն բողոքարկման ժամկետի սկիզբը շարունակում է հաշվարկվել հրապարակման պահից, ինչի հետեւանքով, մի կողմից, սկսում է հոսել բողոքարկման ժամկետը, իսկ մյուս կողմից՝ բողոքարկում դեռ չունի դատական ակտի բովանդակային մասը, այսինքն՝ չունի բողոքարկման իրական հնարավորություն. իր տրամադրության տակ չկան բողոքի արդյունավետության համար անհրաժեշտ կարեւոր տվյալներ, օրինակ՝ դատարանի կողմից էական համարված փաստերը, կիրառված նորմերը, դատարանի եզրահանգումները, պատճառաբանությունները, հիմնավորումները եւ այլն: Հղում կատարելով Սահմանադրության հիշյալ հոդվածներին եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիային, մեջբերելով Սահմանադրության 3-րդ հոդվածը, ինչպես նաեւ «Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան վճռում շարադրված իրավական դիրքորոշումները՝ դիմողը գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող դրույթները չեն ապահովում անձանց՝ ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածների 1-ին մասերով նախատեսված՝ դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը:

Վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներ, որոնցում արտահայտված իրավական դիրքորոշումների համաձայն՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու համար սահմանված վեցամսյա ժամկետը կարող է հաշվարկվել ներպետական դատարանի վերջնական որոշման պատճենը ստանալու պահից, դիմողը պնդում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը հակասում է նաեւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով եւ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքն արձանագրող հոդվածների առարկային եւ նպատակներին:

Դիմողը դատական պաշտպանության արդյունավետ միջոց չի համարում նաեւ օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված այն իրավակարգավորումը, համաձայն որի՝ «բողոքն ըստ էության վերաքննության կարգով քննելու իրավունք ստանալու համար պետք է դիմել այն դատավորին, որի դատական ակտը պատրաստվում էս քննադատել»:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ «հրապարակվելու պահից» դրույթը եւ 380-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներին: Որպես իր դիրքորոշման հիմնավորում՝ պատասխանող կողմը հղում է կատարում դիմողի կողմից արդեն իսկ վկայակոչված՝ «Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռում արտահայտված այն եզրահանգմանը, համաձայն որի՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բողոք ներկայացնելու համար սահմանված տասնօրյա ժամկետի սկիզբը ոչ թե դատավճռի պատճենը հանձնելու, այլ այդ դատավճիռը հրապարակելու պահից հաշվարկելու՝ ներպետական իրավակարգավորումն ինքնին չի համարում Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում, եթե այն ուղեկցվում է բողոքաբեր անձանց համար վերաքննիչ ատյանի արդյունավետ մատչելիությունն ապահովող բավարար երաշխիքներով, այդ թվում՝ նրանց հնարավորություն տալով ներկայացնելու հիմնավորված բողոքներ: Ըստ այդմ, պատասխանողը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ եւ վիճարկվող 380-րդ հոդվածները, ինչպես նաեւ 402-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրել են երաշխիքներ, որոնք ապահովում են անձի՝ դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը:

Անդրադառնալով օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված ժամկետներին՝ պատասխանողը նշում է, որ նման կրճատ ժամկետների սահմանումը նպատակ է հետապնդում արագացնել գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերաբերյալ վեճերի լուծումը, որն ուղղված է քրեական դատավարության սահուն ընթացքի ապահովմանը: Ինչ վերաբերում է անձին ազատությունից զրկելու մասին գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման համար է՛լ ավելի կարճ ժամկետ սահմանելուն, ապա, ըստ պատասխանողի, այն պայմանավորված է մարդու ազատության իրավունքի անօրինական կամ անհամաչափ սահմանափակումները հնարավորինս կարճ ժամկետում վերացնելու՝ օրենսդրի մտադրությամբ:

Վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 5-րդ մասը, 290-րդ հոդվածի 5-րդ մասը, 479-րդ հոդվածի 3-րդ մասը՝ պատասխանողը գտնում է, որ չնայած այն հանգամանքին, որ դատական ակտերի բողոքարկման ժամկետը, որպես կանոն, հաշվարկվում է հրապարակման պահից, այնուամենայնիվ, օրենսդիրն ամրագրել է **բավարար երաշխիքներ**, որոնք հնարավորություն են տալիս բողոքարկող անձանց օգտվելու բողոքարկման ատյանի արդյունավետ մատչելիությունից:

Անդրադառնալով դիմողի այն դիրքորոշմանը, որով դիմողը դատական պաշտպանության արդյունավետ միջոց չի համարում օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված այն իրավակարգավորումը, համաձայն որի՝ «բողոքն ըստ էության վերաքննության կարգով քննելու իրավունք ստանալու

համար պետք է դիմել այն դատավորին, որի դատական ակտը պատրաստվում էս քննադատել», պատասխանողը, վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 97-րդ հոդվածը, գտնում է, որ դատավորի անկախությունը բացարձակ չէ, եւ դատարանը տվյալ դեպքում պետք է առաջնորդվի օրենքով եւ հարգելի պատճառի առկայության դեպքում բավարարի միջնորդությունը:

Բաց թողնված դատավարական ժամկետների վերականգնման քրեադատավարական, քաղաքացիադատավարական եւ վարչադատավարական կարգերի տարբերության առնչությամբ պատասխանողը գտնում է, որ օրենսգրքի 380-րդ հոդվածով սահմանված՝ բաց թողնված դատավարական ժամկետների վերականգնման քրեադատավարական կարգը չի կարող հանգեցնել անձի դատական պաշտպանության իրավունքի խախտման, քանի որ միջնորդությունը բավարարելու դեպքում վերաքննիչ բողոքը դատարանի կողմից ընդունվում է վարույթ, իսկ միջնորդությունը մերժելու դեպքում նախատեսված է՝ «...վերաքննիչ դատարան բողոքարկելու հնարավորություն, որն իրավունք ունի վերականգնելու բաց թողնված ժամկետը եւ քննելու գործը, ինչը անձի դատական պաշտպանության իրավունքի լրացուցիչ երաշխիք է»:

Պատասխանողը նաեւ կարծում է, որ դիմողի իրավունքների ոչ լիարժեք իրականացումը պայմանավորված է «...ոչ թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթների հակասահմանադրականությամբ, այլ դիմողի կողմից օրենքի դրույթները չպահպանելու հանգամանքով: Մասնավորապես, դիմողը բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդությամբ առաջին ատյանի դատարանին դիմելու փոխարեն դիմել է վերաքննիչ դատարան, որի պատճառով էլ մերժում է ստացել»:

5. Հաշվի առնելով կողմերի դիրքորոշումները՝ սույն գործի քննության շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթները դիտարկել օրենսգրքի մյուս դրույթների համատեքստում, եւ, մասնավորապես, այն դրույթների, որոնք վերաբերում են գործն ըստ էության չլուծող դատական ակտը դատավարության մասնակցին հանձնելու՝ դատարանի պարտականությանը, այդ պարտականության կատարման ժամկետներին, ինչպես նաեւ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման ժամկետների հաշվարկման պահին:

ՀՀ քրեադատավարական օրենսդրությունն առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերը որոշակի ժամկետում շահագրգիռ անձին հանձնելու առումով բովանդակում է տարբերակված իրավակարգավորում: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ դրանց վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին որոշումները դրանք կայացնելու օրը դատարանը ստորագրությամբ հանձնում է, ի թիվս այլնի, մեղադրյալին, պաշտպանին, իսկ դատական նիստին վերջիններիս չներկայանալու դեպքում՝ պատշաճ ձեռով ուղարկում է նրանց:

Վերը նշված քրեադատավարական նորմի առնչությամբ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել հետախուզման մեջ գտնվող եւ պաշտպան չունեցող մեղադրյալին վերը նշված դատական ակտերն ուղարկելու անհնարինության փաստը, ինչպես նաեւ այն հանգամանքը, որ դատական նիստին մեղադրյալի, պաշտպանի չներկայանալու դեպքում դատական ակտը վերջիններիս ուղարկելու պահի եւ դրանք վերջիններիս կողմից փաստացիորեն ստանալու պահի միջեւ առկա է անորոշ ժամանակահատված:

Ինչ վերաբերում է գործն ըստ էության չլուծող մյուս բոլոր դատական ակտերին, ապա օրենսգիրքն այդ դատական ակտերը շահագրգիռ անձանց հանձնելու ժամկետներ չի բովանդակում (օրինակ՝ օրենսգրքի 283-րդ հոդվածի 5-րդ մաս, 290-րդ հոդվածի 5-րդ մաս): Նման իրավակարգավորման արդյունքում եւս առկա է անորոշ ժամանակ վերը նշված՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերը մեղադրյալին, պաշտպանին ուղարկելու պահից մինչեւ դրանք վերջիններիս կողմից փաստացիորեն ստանալու պահը:

Սիւնույն ժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, ի տարբերություն օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթների, օրենսդիրը մի շարք այլ դեպքերում գործն ըստ էության չլուծող դատական ակտի բողոքարկման ժամկետի մեկնարկի սկիզբ է համարել դատական ակտը հասցեատիրոջ կողմից ստանալու պահը (օրինակ՝ օրենսգրքի 479-րդ հոդվածի 3-րդ մաս, 412-րդ հոդված):

6. Սույն գործով սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմերի սահմանադրականությունը գնահատելիս ելնել.

- մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների՝ միջազգային իրավական սկզբունքներին եւ նորմերին համապատասխան դատական պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտությունից (ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդված),
- ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածում ամրագրված՝ դատական պաշտպանության իրավունքի եւ վերջինիս կարելու բաղադրիչ հանդիսացող՝ դատական ակտերի բողոքարկման, հավասարապես նաեւ՝ Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված արդար դատաքննության իրավունքի երաշխավորման անհրաժեշտությունից, ելնելով այդ բնագավառի օրենսդրական համալիր զարգացումների միասնական այն հայեցակարգից, որը բխում է դատական բողոքարկման ինստիտուտի սահմանադրականության վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներից:

7. ՀՀ սահմանադրական դատարանն իր նախկին որոշումներում արտահայտել է իրավական դիրքորոշումներ, որոնք, ի թիվս այլնի, առնչվում են նաեւ դատական ակտի բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացմանը: Դատարանն իր՝ 28.11.2007թ. ՍԳ-Ո-719 որոշմամբ, մասնավորապես, ամրագրել է, որ. «Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից

ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ **ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս**: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն եւ մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից: Ակնհայտ է, որ առաջին հերթին այս պահանջը վերաբերում է դատարաններին, քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով: ... Մյուս կողմից, դատական իշխանությունը միակ իշխանությունն է, որն ինքն է ունակ եւ պարտավոր վերահսկելու իրեն, այսինքն՝ վերադաս ատյանների դատարանները պարտավոր են վերացնել ավելի ստորին ատյանների թույլ տված դատական սխալները: Սակայն իրեն ուղղված դիմումների հանդեպ դատարանի կողմից անգործություն ցուցաբերելը, ըստ էության, խաթարում է դատական պաշտպանության իրավունքի էությունը: Նման մոտեցումն անհնարին է դարձնում արդարադատությունը, այն դառնում է անձանց համար ոչ մատչելի: Նման իրավիճակն անհամատեղելի է իրավական պետության սահմանադրաիրավական սկզբունքների հետ»:

Անդրադառնալով վերադաս դատական ատյանում դիմումի թույլատրելիության պահանջներին՝ ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ. «Այլ է իրավիճակը վերադաս դատական ատյաններում, որոնցում **դիմումի թույլատրելիության պահանջները կարող են ավելի խիստ լինել**: Սակայն այս ատյաններում եւս դիմումների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել կամայականորեն»:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԳ-Ո-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԳ-Ո-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԳ-Ո-690 եւ մի շարք այլ որոշումներով բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության եւ արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 1, 3, 14, 18, 19, 42, 43 եւ այլ հոդվածներով, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով, վկայակոչելով նաեւ ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, կարելի է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը՝ հատկապես միջազգային այն պարտավորությունների շրջանակներում, որպիսիք Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդի առջեւ: Սիսթամանակ, կարելի է այդ պարտավորություններից բխող ներպետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մատչելիության եւ, հատկապես՝ դատական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում:

Իր՝ 09.04.2007թ. ՄԳՈ-690 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը, անդրադառնալով դատական ակտերի բողոքարկման խնդրին, ամրագրել է, որ. **«նախապայմանների խստացումը չպետք է տեղի ունենա անհամաչափ անձանց համար ստեղծելով իրավունքների պաշտպանության խոչընդոտներ:** Բացի դրանից, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցում դատարանները պետք է ունենան ոչ թե հայեցողական անսահմանափակ ազատություն, այլ՝ օրենսդրորեն նախատեսված, հստակ, եւ անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով, բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու իրավունք եւ պարտականություն: Վերոհիշյալ խնդրին անդրադառնալով՝ սահմանադրական դատարանը նաեւ կարեւորում է դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի համակարգային ամբողջականությունը եւ կիրառման արդյունավետությունն ապահովող կառուցակարգային ու օրենսդրական համապատասխան երաշխիքների առկայությունը»:

8. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրելով, որ ստորադաս դատարանի դատական ակտի բողոքարկման համար որոշակի ժամկետի սահմանումը հետապնդում է իրավաչափ նպատակ՝ երաշխավորելու իրավական որոշակիությունը, միեւնույն ժամանակ, հիմք ընդունելով, մասնավորապես, իր՝ ՄԳՈ-652, ՄԳՈ-665, ՄԳՈ-690, ՄԳՈ-719 որոշումներում ամրագրված՝ վերը նշված իրավական դիրքորոշումները, գտնում է, որ ստորադաս դատարանի դատական ակտը հրապարակվելու պահից որոշակի ժամկետում բողոքարկելու վերաբերյալ դրույթներ սահմանելիս օրենսդիրը պարտավոր է՝ ելնելով անձի դատարանի մատչելիության եւ արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքներից, օրենսդրորեն անհրաժեշտ նախադրյալներ ամրագրել դրանց երաշխավորման ու ապահովման համար: Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացումը մեծապես կախված է այն հանգամանքից, **թե որքանով է բողոքարկվող դատական ակտը հասու շահագրգիռ անձին, ողջամիտ ինչ ժամկետում նա կարող է հիմնավոր բողոք ներկայացնել իր իրավունքների դատական պաշտպանության համար: Նման իրավական դիրքորոշման համար հիմք են ծառայում, մասնավորապես, օրենսգրքի 381-րդ հոդվածը, որը վերաբերում է վերաքննիչ բողոքին ներկայացվող պահանջներին, վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու հիմքերին, 407-րդ հոդվածը, որը վերաբերում է վճռաբեկ բողոքին ներկայացվող պահանջներին, վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու հիմքերին, 414.1-րդ հոդվածը, որը վերաբերում է վճռաբեկ բողոքը վերադարձնելուն: Օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոք բերողը պարտավոր է իր բողոքում հիմնավորել ստորադաս դատարանի կողմից նյութական կամ դատավարական նորմերի խախտումը, ինչպես նաեւ գործի ելքի վրա դրա ազդեցությունը, իսկ նման հիմնավորման բացակայության դեպքում նույն հոդվածի 2-րդ մասի ուժով վերաքննիչ բողոքը թողնվում է առանց**

քննության: Օրենսգրքի 407-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոք բերողը պարտավոր է իր բողոքում պատճառաբանել ստորադաս դատարանի կողմից նյութական կամ դատավարական նորմերի խախտումը, ինչպես նաև գործի ելքի վրա դրա ազդեցությունը, նույն մասի 6.1-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոք բերողը պարտավոր է իր բողոքում հիմնավորել ստորադաս դատարանի կողմից թույլ տրված առերեսույթ դատական սխալը, ինչպես նաև այդ սխալի հետեւանքով ծանր հետեւանքներ առաջացած լինելու փաստը կամ առաջանալու հնարավորությունը, իսկ վերը նշված պատճառաբանությունների եւ հիմնավորումների բացակայության դեպքում օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին մասի ուժով վճռաբեկ բողոքը վերադարձվում է:

Վերոգրյալի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքներն օրենքով դրանց ներկայացված պահանջներին համահունչ նախապատրաստելու համար հարկ է, որպեսզի վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք ներկայացնող անձն իր տնօրինության ներքո ունենա բողոքարկվող դատական ակտը, որպեսզի կարողանա նշված ակտի ուսումնասիրության հիման վրա իր վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքում հիմնավորել, պատճառաբանել ստորադաս դատարանի կողմից նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումը եւ գործի ելքի վրա դրանց ազդեցությունը, կամ դրանց արդյունքում՝ ծանր հետեւանքներ առաջացած լինելու փաստը կամ առաջացման հնարավորությունը: Մինչդեռ օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով բողոքարկման ժամկետների հաշվարկի սկիզբ համարելով բողոքարկվող դատական ակտի հրապարակման պահը, օրենսդիրը ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացումը կախվածության մեջ է դնում դատական հայեցողությունից՝ բաց թողնելով ժամկետը հարգելի կամ անհարգելի համարելու առումով: Բանն այն է, որ դատական ակտը հրապարակելուց, այն հասցեատիրոջն ուղարկելուց մինչեւ հասցեատիրոջ կողմից այն փաստացիորեն ստանալն օբյեկտիվորեն անցնում է որոշակի ժամանակահատված, որը կարող է ավելի երկարաձգվել՝ պայմանավորված նաև սուբյեկտիվ գործոններով: Նման պայմաններում անձն իր տնօրինության ներքո հաճախ չի ունենում բողոքարկվող դատական ակտը, հնարավորություն չի ունենում վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները կազմել օրենքով դրանց ներկայացվող պահանջներին համահունչ, ինչն իրավաչափորեն հիմք է հանդիսանում վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները համապատասխանաբար՝ առանց քննության թողնելու կամ վերադարձնելու համար:

9. Օրենսդիրն ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացման համար որպես երաշխիք ամրագրել է նաև օրենսգրքի 380-րդ հոդվածը, որը վերաբերում է բողոքարկման համար բաց թողնված ժամկետը հարգելի համարելուն: Տվյալ դեպքում սահմանադրական դատարանի խնդիրն է պարզել՝ արդյոք օրենսգրքի 380-րդ հոդվածը լիարժեքո-

րեն ապահովում է անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը:

Սույն գործով հաստատված համարելով, որ բողոքարկվող դատական ակտի հրապարակումից հետո մինչև հասցեատիրոջ կողմից այն փաստացիորեն ստանալն անցել է որոշակի ժամանակահատված, ՀՀ դատարանները, այնուամենայնիվ, հարգելի չեն համարել բաց թողնված ժամկետը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ բողոքարկվող դատական ակտը փաստացիորեն ստանալուց հետո մինչև բողոքարկման համար սահմանված ժամկետի ավարտը մնացել է 6 օր, ինչը, ըստ ՀՀ դատարանների, բավարար ժամանակ է փաստելու համար, որ բողոքաբերն իրական հնարավորություն է ունեցել սահմանված ժամկետում ներկայացնելու վերաքննիչ բողոք:

Վերոնշյալի կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի 380-րդ հոդվածով օրենսդիրը դատարաններին օժտել է լայն հայեցողական լիազորությամբ՝ հարգելի համարելու կամ չհամարելու ժամկետների բացթողումը: Այս կապակցությամբ, առաջնորդվելով անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման անհրաժեշտությամբ, հիմք ընդունելով իր՝ ՄԳՈ-690 որոշմամբ արտահայտած այն իրավական դիրքորոշումը, որ «վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցում դատարանները պետք է ունենան ոչ թե հայեցողական անսահմանափակ ազատություն, այլ՝ օրենսդրորեն նախատեսված, հստակ, եւ անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով, բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու իրավունք եւ պարտականություն», ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 380-րդ հոդվածը լիարժեք չի երաշխավորում ստորադաս դատարանի դատական ակտը վերադատության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի արդյունավետ իրացումն այն պատճառաբանությամբ, որ նշված հայեցողական լիազորությունների իրականացումը հանգեցնում է անորոշության: Օրինակ՝ պարզ չէ, թե կոնկրետ գործերով ինչ մոտեցում կցուցաբերեն դատարանները, եթե բողոքարկվող դատական ակտը փաստացիորեն ստանալուց հետո մինչև բողոքարկման ժամկետի ավարտը մնա ոչ թե 6 օր, ինչպես սույն գործով դիմողի դեպքում է, այլ 5 օր կամ դրանից պակաս: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը հիմնավորված չի համարում բողոքարկվող դատական ակտի փաստացի ուշ ստանալու հիմքով բողոքարկման ժամկետի բացթողումը հարգելի համարելու միջնորդություն ներկայացնելու դեպքում դատարաններին լայն հայեցողական լիազորության տրամադրումը: Եթե օրենսդիրը, հիմք ընդունելով բողոքարկվող դատական ակտի բնույթը, հաշվի առնելով դատարանի մատչելիության եւ արդար դատաքննության իրավունքների իրացման անհրաժեշտությունը, տվյալ ակտի բողոքարկման համար բավարար է համարել տվյալ ժամկետը, կոնկրետ դեպքում՝ հնգօրյա եւ տասնօրյա ժամկետները, ապա նշված ժամկետները պետք է մեկնարկեն բողոքարկվող դատական ակտին ծանոթանալու իրական հնարավորության առաջացման պահից, առավել եւս, որ օրենսդիրը մի շարք դեպքերում ոչ միայն չի բացառում, այլև որպես դատական

ակտի բողոքարկման ժամկետի մեկնարկի սկիզբ ուղղակիորեն նախատեսում է տվյալ դատական ակտը հասցեատիրոջ կողմից ստանալու պահը:

Այս առումով, հաշվի առնելով նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը՝ սահմանադրական դատարանը կարելու է համարում նաև ՀՀ դատական պրակտիկայում ստեղծված ընդհանուր վիճակին անդրադարձը: Այդ առումով հատկանշական է հատկապես ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2000թ. դեկտեմբերի 22-ի թիվ 36 որոշմամբ ամրագրված այն իրողությունը, որ կան դեպքեր, երբ «...դատարանները օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ՝ ուշացումով են դատավճիռները, վճիռները եւ որոշումները հանձնում բողոքարկման իրավունք ունեցող անձանց, որպիսի հանգամանքը վերջիններիս գրկում է օրենքով նախատեսված ժամկետներում վերադաս դատարաններին բողոքներ ներկայացնելու հնարավորությունից»: Իրավիճակի՝ նման կերպ գնահատումից ելնելով դատարանների նախագահների խորհուրդը գտել է, որ բոլոր այն դեպքերում, **երբ ժամկետը բաց է թողնվել բողոք բերողի կամքից անկախ պատճառներով**, դատարանների կողմից ժամկետի բացթողումը **պետք է ճանաչել հարգելի**: Մասնավորապես դա վերաբերում է նաև այն դեպքերին, երբ ժամկետը բաց է թողնվել դատարանի կողմից դատական ակտի պատճենն օրենքով նախատեսված ժամկետից ավելի ուշ կողմին **հանձնելու** պատճառով:

Այսուհանդերձ, նման դիրքորոշման առկայության պայմաններում խնդիրը ոչ թե օրենսդրական կարգավորում է ստացել, այլ դարձյալ թողնվել է դատարանների հայեցողությանը: ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանության առումով նշված դեպքերում բաց թողնված ժամկետն իրավունքի ուժով /*ex jure*/ պետք է համարվի հարգելի, ինչը կերաշխավորի անձի՝ դատարանի մատչելիության եւ արդար դատաբանության իրավունքների արդյունավետ իրացումը:

10. Ինչ վերաբերում է դիմողի կողմից բարձրացված երկրորդ հարցին, որն առնչվում է վիճարկվող 380-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերին, սահմանադրական դատարանը գտնում է, որ հարգելի պատճառներով բողոքարկման համար սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձանց՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդությունը քննելու լիազորությունը դատական ակտը կայացրած դատարանին վերապահելու իրավասությունն օրենսդրի հայեցողության շրջանակներում է: Այս իրավակարգավորման շրջանակներում էական երաշխիք է հանդիսանում վերը նշված միջնորդությունը մերժելու մասին որոշումը բողոքարկելու իրավունքը: Մասնավորապես, օրենսգրքի վիճարկվող 380-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ «Բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժելու որոշումը տասնհինգօրյա ժամկետում կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան, որն իրավունք ունի վերականգնել բաց թողնված ժամկետը եւ քննել գործը՝ պահպանելով սույն օրենսգրքի 382 հոդվածում եւ 383 հոդվածի երկրորդ մասում շարադրված պահանջները»:

Այլ խնդիր է, թե երբ է մեկնարկում օրենսգրքի վերը նշված նորմում սահմանված տասնհինգօրյա ժամկետը: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի 380-րդ հոդվածի 2-րդ մասը պարունակում է իրավական անորոշություն. նորմում հստակ չի նշվում՝ դատական ակտի հրապարակման, թե դատական ակտի պատճենն ստանալու պահից սկսած տասնհինգօրյա ժամկետում կարող է տվյալ դատական ակտը բողոքարկվել վերաքննիչ դատարան: Հաշվի առնելով սույն որոշման 9-րդ կետում ամրագրված իրավական դիրքորոշումները՝ **սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 380-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տասնհինգօրյա ժամկետը մեկնարկում է համապատասխան դատական ակտը հասցեատիրոջ կողմից փաստացիորեն ստանալու կամ գործնականում օրենքով սահմանված կարգով նրան հասու լինելու պահից, եւ իրավակիրառական պրակտիկան պետք է առաջնորդվի օրենսգրքի 380-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակության այդպիսի ընկալմամբ:**

11. Ի՞նչ է վկայում սույն հիմնախնդրի միջազգային իրավական պրակտիկայի եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վերլուծությունը: Բազմաթիվ երկրների իրավական պրակտիկան վկայում է, որ հավասարապես ընդունելի են թե՛ այն իրավադրույթները, համաձայն որոնց՝ դատարանի վճռի դեմ բողոք կարող է բերվել դատավճռի հրապարակման կամ դրա պատճենի առաքման պահից /Սլովակիա, Ռումինիա, Ուկրաինա, Վրաստան, Մոլդովա եւ այլն / եւ թե՛ այն իրավակարգավորումը, երբ այդ ժամկետը սահմանվում է դատական ակտն ստանալու պահից /Լեհաստան, Մոնտենեգրո, Հունաստան, Իսպանիա, Գերմանիա, Խորվաթիա եւ այլն/: Այստեղ էականն այն է, որ բոլոր այն երկրները, որտեղ բողոքարկման ժամկետի հաշվարկման համար հիմք է ընդունվում դատական ակտի հրապարակման պահը, ապա օրենսդրորեն սահմանվում են անհրաժեշտ ու բավարար երաշխիքներ, որ դատական ակտն **ամբողջությամբ** բողոք բերող կողմը կստանա ողջամիտ ժամկետում եւ ի վիճակի կլինի արդյունավետ իրացնել դատարանի մատչելիության եւ արդար դատաքննության իր իրավունքը:

Գործնականում նման դիրքորոշում է արտահայտել նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Մասնավորապես, կողմերի բացատրություններում վկայակոչված՝ «Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի» /գանգատ թիվ 25083/05, 16 մարտի 2010թ./ գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հստակ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ վճռաբեկ բողոք ներկայացնելու համար սահմանված տասնօրյա ժամկետի հաշվարկը վերաքննիչ դատարանի վճռի հրապարակման օրվանից հաշվարկելն ինքնին չի կարող դիտարկվել որպես կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում: Սակայն, միեւնույն ժամանակ, հատուկ շեշտվում է. «...եթե այն ուղեկցվել է բավարար երաշխիքներով, որոնք իրավունք են տալիս բողոքարկող անձանց օգտվելու բողոքարկման ատյանի արդյունավետ մատչելիությունից, ներառյալ վերջիններիս կողմից հիմնավոր բողոքներ ներկայացնելու հնարավորության տրամա-

դրումը»: Գատարանը նաեւ կարեւոր երաշխիք է համարել այն հանգամանքը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 402-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխան երաշխավորված լինի վերաքննիչ դատարանի դատավճռի հրապարակման օրվանից ոչ ուշ, քան երեք օրվա ընթացքում **այն դատապարտյալին հանձնելը**:

Վերջին հանգամանքը պետք է առանցքային համարել այնպիսի իրավակարգավորումների պայմաններում, երբ բողոքարկման ժամկետը հաշվարկվում է ակտի հրապարակման պահից: Այսուհանդերձ, ՀՀ սահմանադրական դատարանը նախ՝ ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հիշյալ վճռում /ինչը պաշտոնապես հայերենով հրապարակել է ՀՀ արդարադատության նախարարությունը/ օգտագործվում է «**հանձնվի**» եզրույթը: Այս եզրույթն է տեղ գտել նաեւ ՀՀ դատարանների նախագահների խորհրդի վերոնշյալ որոշման մեջ: Այնինչ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 402-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված է «**ուղարկվում է**» եզրույթը: Ակնհայտ է, որ դրանք էապես տարբեր են, եւ **ուղարկելը** ժամանակի առումով բոլորովին համարժեք չէ **հանձնելուն**, կամ հայտնի չէ, թե ուղարկելու ձեւից կախված՝ այն երբ կհասնի տվյալ իրավահարաբերությունների սուբյեկտին: Այդ հասկացությունները բովանդակային առումով կարող են նույնական համարվել միայն այն դեպքերում, երբ դատական ակտի ամբողջական տեքստն այդ ժամկետում **տրամադրվում է** համապատասխան սուբյեկտներին կամ տեղակայվում է դատարանի պաշտոնական կայքում՝ նրանց անմիջապես հասանելի լինելու համար, ինչն արվում է բազմաթիվ երկրներում: Ուստի ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ բոլոր նման դեպքերում կողմը պետք է ունենա ողջամիտ ժամկետ դատական ակտն **ստանալուց կամ դրա ամբողջական տեքստն իր տրամադրության տակ ունենալուց, նրան պաշտոնապես հասանելի լինելուց** հետո հիմնավոր բողոք ներկայացնելու համար: Իսկ, ինչպես նշվեց, բոլոր այն դեպքերում, երբ բողոք բերելու համար օրենքով սահմանված ողջամիտ ժամկետը խախտվում է բողոք բերող անձից անկախ պատճառներով, իրավունքի ուժով /ex jure/ բաց թողնված ժամկետը պետք է համարվի հարգելի, այլ ոչ թե այդ հարցի լուծումը թողնվի դատարանի հայեցողությանը: Միայն այս պայմաններում բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձի համար երաշխավորված կլինի ողջամիտ ժամկետներում հիմնավոր բողոք բերելու, դատարանի մատչելիության եւ արդար դատաքննության իրավունքը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմա-

նադրությանն այնքանով, որքանով երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի **տրամադրումը** բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին եւ վերջինից անկախ պատճառներով այդ ժամկետի բացթողումն իրավունքի ուժով /ex jure/ ճանաչվում է հարգելի:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր այն մասով, որով բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով բողոքի ներկայացման համար բաց թողնված ժամկետի վերականգնումը թողնվում է դատարանի հայեցողությանը եւ իրավունքի ուժով /ex jure/ չի ճանաչվում հարգելի:

3. Սույն գործով վեճի առարկա հոդվածների հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 402-րդ հոդվածի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնքանով, որքանով հոդվածի 2-րդ մասի **«ուղարկվում է»** եզրույթը երաշխավորում է այդ ժամկետում դատարանի **ամբողջական ակտի տրամադրումը /հասանելիությունը/** օրենքով նախատեսված սուբյեկտներին:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**16 հոկտեմբերի 2012 թվականի
ՍԳՈ- 1052**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

**«ԱՍԱՏՐՅԱՆՆԵՐԻ ՍԱԽԱ ԼԵՆԱ» ՓԲԸ-Ի ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ
«ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ
ՍԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 36-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ
2-ՐԳ ԵՎ 3-ՐԳ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

30 հոկտեմբերի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյա-
նի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետ-
րոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչ Ի. Վանոյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի
պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրա-
վաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մաս-
նագետ Ա. Մխիթարյանի եւ նույն բաժնի առաջատար մասնագետ Հ. Սար-
դարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ
հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրա-
կան դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց միտում գրավոր ընթացակարգով քննեց «Ասատրյանների Սախա
Լենա» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ «Վարչարարության հիմունքների եւ վարչա-
կան վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի
2-րդ եւ 3-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հա-
մապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Ասատրյանների Սախա Լենա» ՓԲԸ-ի՝
19.06.2012թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2004թ. փետրվարի 18-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2004թ. մարտի 16-ին եւ ուժի մեջ է մտել 2004թ. դեկտեմբերի 31-ից:

«Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի՝ «Վարչական մարմնի արագ գործելու պարտականությունը» վերտառությամբ 36-րդ հոդվածը սահմանում է.

«1. Վարչական վարույթը պետք է իրականացվի հնարավորինս սեղմ ժամկետում:

2. Վարչական մարմինը պետք է վարչական վարույթն իրականացնի առանց դա բարդացնելու՝ լրացուցիչ լսումներ անցկացնելու, լրացուցիչ փորձաքննություն նշանակելու կամ զննում կատարելու, եթե առկա չեն գործի փաստական հանգամանքների պարզաբանման համար անհրաժեշտ պատճառներ:

3. Եթե վարչական վարույթ հարուցելուց հետո վարչական մարմնի տրամադրության տակ առկա են համապատասխան վարչական ակտ ընդունելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, բավարար չափով պարզաբանված եւ ճշգրտված են տվյալ գործի հանգամանքները, ապա վարչական մարմինը պարտավոր է վարչական ակտ ընդունել նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո՝ ողջամիտ ժամկետում՝ չսպասելով ընդհանուր կամ հատուկ ժամկետի լրանալուն»:

2. Գործի դատավարական համառոտ նախապատմությունը հանգում է հետեւյալին. իր սեփականության իրավունքի խախտումները վերացնելու կապակցությամբ դիմողի կողմից «Լիլիթ» ՍՊԸ-ի դեմ ներկայացված հայցադիմումի հիման վրա հարուցված դատական գործի արդյունքում ՀՀ տնտեսական դատարանի 19.10.2007թ. վճռի հիման վրա տրված կատարողական քերթի համաձայն՝ Գյումրու քաղաքապետի 27.02.2008թ. թիվ 353 որոշմամբ հողամասն ուղղակի վաճառքի ձեռով «Լիլիթ» ՍՊԸ-ին վաճառելու վերաբերյալ Գյումրու քաղաքապետի 07.10.2005թ. թիվ 2041 որոշումը ճանաչվել է անվավեր եւ որպես անվավերության հետեւանք՝ անվավեր է ճանաչվել Գյումրու քաղաքապետի եւ «Լիլիթ» ՍՊԸ-ի միջեւ 12.10.2005թ. կնքված հողի առուվաճառքի թիվ 171 պայմանագիրը եւ «Լիլիթ» ՍՊԸ-ի սեփականության իրավունքի պետական գրանցումը:

ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009թ. որոշմամբ բեկանվել է ՀՀ տնտեսական դատարանի 19.10.2007թ. վճիռը եւ գործն ուղարկվել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

ՀՀ վարչական դատարանի 14.06.2010թ. վճռով դիմողի հայցը՝ Գյումրու քաղաքապետի 07.10.2005թ. թիվ 2041 որոշումն անվավեր ճանաչելու եւ որպես անվավերության հետեւանք՝ Գյումրու քաղաքապետի եւ «Լիլիթ» ՍՊԸ-ի միջեւ 12.10.2005թ. կնքված հողի առուվաճառքի թիվ 171 պայմանագիրը եւ «Լիլիթ» ՍՊԸ-ի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու վերաբերյալ, մերժվել է՝ հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 3-րդ մասը եւ 64-րդ հոդվածը եւ հաշվի առնելով **դիմողի պահանջների առարկայագուրկ լինելը**, այսինքն՝ այն հանգամանքը, որ ՀՀ տնտեսական դատարանի 19.10.2007թ. կայացրած եւ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա գործի քննության պահին «վիճարկվող որոշումը, պետական գրանցումը եւ պայմանագիրը՝ որպես որոշման հետեւանք, առկա չեն»:

«Լիլիթ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա, հիմք ընդունելով ՀՀ վարչական դատարանի 14.06.2010թ. վճռով դիմողի հայցը մերժելու հանգամանքը, Գյումրու քաղաքապետն իր՝ 23.11.2010թ. թիվ 3037-Ա որոշմամբ անվավեր է ճանաչել հողամասն ուղղակի վաճառքի ձեռով «Լիլիթ» ՍՊԸ-ին վաճառելու վերաբերյալ իր՝ 07.10.2005թ. թիվ 2041 որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ իր՝ 27.02.2008թ. թիվ 353 որոշումը եւ **վավեր է ճանաչել** հողամասն ուղղակի վաճառքի ձեռով «Լիլիթ» ՍՊԸ-ին վաճառելու վերաբերյալ իր՝ 07.10.2005թ. թիվ 2041 որոշումն ու իր եւ «Լիլիթ» ՍՊԸ-ի միջեւ 12.10.2005թ. կնքված հողի առուվաճառքի թիվ 171 պայմանագիրը:

Գիմողը Գյումրու քաղաքապետի 23.11.2010թ. թիվ 3037-Ա որոշումը վիճարկել է ՀՀ վարչական դատարանում, որն իր՝ 24.06.2011թ. թիվ ՎԳ/0337/05/11 վճռով դիմողի հայցը մերժել է:

ՀՀ վարչական դատարանի 24.06.2011թ. թիվ ՎԳ/0337/05/11 վճռի դեմ դիմողի բերած վերաքննիչ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն իր՝ 01.12.2011թ. թիվ ՎԳ/0337/05/11 որոշմամբ մերժել է՝ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի կիրառմամբ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ վարչական դատարանի 14.06.2010թ. վճռի առկայության պայմաններում «առկա չեին գործի փաստական հանգամանքների պարզաբանման համար անհրաժեշտ պատճառներ»:

ՀՀ վճռաբեկ դատարանը, վերահաստատելով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 01.12.2011թ. թիվ ՎԳ/0337/05/11 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները, իր՝ 01.02.2012թ. որոշմամբ վերադարձրել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի վերը նշված որոշման դեմ դիմողի բերած վճռաբեկ բողոքը:

3. Գիմողը գտնում է, որ վիճարկվող օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերի հակասահմանադրականությունը պայմանավորված է նշված դրույթներում օրենսդրական բացի առկայությամբ եւ այդ բացով պայմանավորված՝ ողջ իրավակարգավորման իրավական անորոշությամբ:

Դիմողը գտնում է նաև, որ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի հակասահմանադրականությունը պայմանավորված է նշված մասում ամրագրված՝ «անհրաժեշտ փաստաթղթերը» բառակապակցության իրավական անորոշությամբ:

Հինք ընդունելով վերոգրյալը՝ դիմողը գտնում է, որ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերը հակասում են ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով սահմանված՝ իրավական պետության սկզբունքին, 14.1-րդ հոդվածի 1-ին մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին:

Իր տեսակետը հիմնավորելու համար՝ դիմողը նշում է, որ օրենքի վիճարկվող դրույթների վերլուծությունը վկայում է, որ դրանք ցանկացած պարագայում հնարավորություն են ընձեռում վարչական մարմնին առանց վարչական վարույթի մասնակիցներին ծանուցելու եւ նրանց լսելու՝ իր համար բավարար չափով պարզաբանված եւ ճշգրտված համարել գործի հանգամանքները, եթե անգամ գործի հանգամանքների վերաբերյալ վարչական մարմինն ունի սխալ տեսակետ: Ընդ որում, դիմողի բոլոր տեսակետները վերաբերում են բացառապես վարչական ակտ, այլ ոչ թե նորմատիվ ակտ ընդունելու ինստիտուտին:

Ըստ դիմողի՝ վարչական ակտ ընդունելու կապակցությամբ հարուցված վարչական վարույթի ընթացքում վարչական մարմնի հնարավոր սխալի բացառման համար երաշխիք կարող է հանդիսանալ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերում ամրագրված համապատասխանաբար՝ «եթե առկա չեն գործի փաստական հանգամանքների պարզաբանման համար անհրաժեշտ պատճառներ» եւ «բավարար չափով պարզաբանված եւ ճշգրտված են տվյալ գործի հանգամանքները» բառակապակցությունների բովանդակության օրենսդրական պարզաբանումները, ինչը բացակայում է նշված դրույթներում: Այսինքն, ըստ դիմողի՝ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերում առկա է օրենսդրական բաց, որն օրենքի 36-րդ հոդվածի նշված մասերի ողջ իրավակարգավորման մեջ առաջացնում է իրավական անորոշություն այն իմաստով, որ դրանք չեն ամրագրում այն չափորոշիչները, որոնց պարագայում իրավունքի սուբյեկտների, այդ թվում՝ վարչական մարմնի համար որոշակի կղառնար գործի հանգամանքների պարզաբանված եւ ճշգրտված լինելը, եւ ինչն իրավական որոշակիության պահանջներին կհամապատասխանեցնեն օրենքի վիճարկվող դրույթներն այն իմաստով, որ կհստակեցվեն վարչական վարույթն արագ եւ առանց բարդացնելու իրականացնելու՝ վարչական մարմնի պարտականության շրջանակները՝ միեւնույն ժամանակ առանց խաթարելու վարույթի մասնակիցների իրավունքները:

Դիմողը գտնում է նաև, որ վարչական ակտ ընդունելու կապակցությամբ հարուցված վարչական վարույթի ընթացքում վարչական մարմնի հնարավոր սխալի բացառման, ինչպես նաև վարչական մարմինների առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքն ապահովելու համար երաշխիք կարող են հանդիսանալ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված՝ «անհրաժեշտ փաստաթղթերը» բառակապակցության բովանդակության պարզաբանումները, ինչը բացակայում է նշված դրույթներում: Ըստ դիմողի՝ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված՝ «անհրաժեշտ փաստա-

թղթերը» բառակապակցությունը չի համապատասխանում իրավական որոշակիության պահանջներին, քանի որ հայտնի չէ, թե այն ներառում է, արդյոք, երրորդ անձանց գրավոր բացատրությունները, որոնց իրավունքներն ու օրինական շահերը կարող են շոշափվել վարչական վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով: Մինչդեռ, ըստ դիմողի, վարչական վարույթի ընթացքում նման գրավոր բացատրության առկայության անհրաժեշտությունը երաշխիք է հանդիսանում վարչական մարմնի հնարավոր սխալի բացառման, ինչպես նաև վարչական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքն ապահովելու համար:

4. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերը համապատասխանում են ՀՀ Սահմանադրության 1-ին, 14.1 եւ 18-րդ հոդվածների դրույթներին:

Անդրադառնալով դիմողի փաստարկներին՝ կապված օրենքի վիճարկվող դրույթներում օրենսդրական բացի եւ դրա հետեւանքով իրավակարգավորման մեջ առաջացած իրավական անորոշության հետ, պատասխանող կողմը, հղում կատարելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 22, 72 եւ 74-րդ հոդվածներին, նշում է, որ տեղական ինքնակառավարման մարմինների ակտերը չպետք է հակասեն օրինական ուժի մեջ մտած՝ առաջին առյուծի, վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների դատական ակտերին, որ իրավական ակտն ուժը կորցրած է ճանաչվում իրավաստեղծ մարմնի, դրա իրավահաջորդի որոշմամբ, եթե ուժի մեջ է մտել ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտ, կամ եթե այդ ակտի ընդունման պահին դա հակասել է ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտին, կարծիք է հայտնում, որ բոլոր այն դեպքերում, երբ վարչական վարույթ հարուցելու անհրաժեշտությունը բխում է օրենքից կամ պայմանավորված է դրանից բխող անհրաժեշտությամբ, եւ ընդունվելիք վարչական ակտի բովանդակությունն այդ կերպ կանխորոշված է, վարչական վարույթը կարող է իրականացվել առանց գործի փաստական հանգամանքների ուսումնասիրման: Այս կապակցությամբ պատասխանող կողմն արձանագրում է, որ. «Դիմումին կից դատական ակտերի ուսումնասիրությունը եւս վկայում է, որ վարչական մարմինը վարչական վարույթ է հարուցել եւ ընդունել վարչական ակտ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա»:

Իր դիրքորոշումն ամրապնդելու համար պատասխանողը նաեւ հղում է կատարում օրենքի 34-րդ հոդվածին՝ նշելով, որ վարչական վարույթը հարուցվում է ոչ միայն վարչական մարմնի հայեցողությամբ, այլեւ նախաձեռնությամբ, եթե այն պայմանավորված է օրենքի պահանջով եւ դրանից բխող անհրաժեշտությամբ:

Անդրադառնալով դիմողի փաստարկներին՝ կապված օրենքի վիճարկվող դրույթների՝ իրավական անորոշության պատճառով ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածով ամրագրված՝ օրենքի առջև բոլորի հավասարության

սկզբունքի ենթադրյալ խախտման հետ, պատասխանող կողմը, հղում կատարելով օրենքի 6-րդ եւ 7-րդ հոդվածներին, մասնավորապես, դրանցով սահմանված՝ վարչարարության իրականացման ժամանակ միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ անհավասար մոտեցման ցուցաբերման արգելքի, վարչարարության իրականացման համաչափության եւ կամայականության արգելման սկզբունքներին, կարծիք է հայտնում, որ օրենքի վերոնշյալ դրույթները լրացուցիչ երաշխավորում են վարչական վարույթի մասնակիցների իրավունքների պաշտպանությունը:

Անդրադառնալով դիմողի փաստարկներին՝ կապված օրենքի վիճարկվող հոդվածի 3-րդ մասում ամրագրված՝ «անհրաժեշտ փաստաթղթեր» բառակապակցության՝ իրավական որոշակիության պահանջներին չհամապատասխանելու հետ, պատասխանող կողմը, հղում կատարելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածին, կարծիք է հայտնում, որ «փաստաթուղթ» հասկացությունն օրենքով սահմանելու անհրաժեշտություն չկա, քանի որ այն հանրահայտ է: Ընդ որում, հղում կատարելով «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ եւ 54-րդ հոդվածներին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածին, պատասխանող կողմը գտնում է, որ փաստաթղթերը դասվում են գրավոր ապացույցների թվին, մինչդեռ բացատրությունները կամ որ նույնն է՝ գործին մասնակցող անձանց ցուցմունքները, ապացույցի առանձին տեսակ են եւ չեն մտնում «փաստաթուղթ» հասկացության մեջ:

5. Սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը ելակետային է համարում առաջին հերթին վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու, ինչպես նաեւ օրենքով սահմանված կարգով վարչական վարույթը միայն եզրափակիչ փուլով սահմանափակելու առանձնահատկությունների բացահայտումը: Գործի հանգամանքները վկայում են, որ դիմողի բոլոր փաստարկները վերաբերում են այն դեպքին, երբ վարչական մարմինը վարույթ է հարուցել դատական ակտի կատարումը երաշխավորելու շրջանակներում եւ սահմանափակվել է վարույթի իրականացման եզրափակիչ փուլով:

«Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով սահմանվում է, որ «Վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝ վարչական ակտ ընդունելու վերաբերյալ օրենքի պահանջը, դրանից բխող անհրաժեշտությունը կամ օրենքով վարչական մարմնին վերապահված հայեցողական լիազորությունը»:

Այս դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը ենթադրում է.

նախ՝ քանի որ վերոհիշյալ օրենքի 20-րդ հոդվածի համաձայն վարչական վարույթը եզրափակվում է վարչական ակտի ընդունմամբ /եզրափակիչ փուլ/, ակնհայտ է, որ այդ ակտի ընդունումը պետք է բխի օրենքի պահանջից: Միաժամանակ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մա-

սը սահմանում է, որ որեւէ ենթաօրենսդրական իրավական ակտ չի կարող հակասել օրինական ուժի մեջ մտած՝ առաջին ատյանի, վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների դատական ակտերին: Նույն օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ մասը պարտավորեցնում է. «Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները, իրավաբանական, ֆիզիկական եւ պաշտոնատար անձինք պարտավոր են կատարել սույն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտած իրավական ակտերի պահանջները...»: Ավելին, օրենքի 74-րդ հոդվածը պարտավորեցնում է իրավական ակտն անվավեր ճանաչել, եթե դատարանը տվյալ ակտը ճանաչել է ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտին հակասող:

Երկրորդ՝ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի՝ վերը հիշատակված «դրանից բխող անհրաժեշտությունը» արտահայտությունը ենթադրում է այն պայմանը, որի առկայությամբ օրենքի պահանջի կատարումը դառնում է իրական: Նման անհրաժեշտությունն ամենից առաջ պահանջում է ուժը կորցրած կամ առոչինչ ճանաչել ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտին հակասող ակտը: Այս պահանջը նաեւ համակարգային իրավական ու, առաջին հերթին՝ սահմանադրական վերահսկողության կարեւորագույն երաշխիքներից մեկն է:

Երրորդ՝ տվյալ իրավակարգավորման համատեքստում «օրենքով վարչական մարմնին վերապահված հայեցողական լիազորություն» դրույթը նույնպես որոշակի է, քանի որ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը հստակեցրել է այդ հայեցողության շրջանակները, **այն դիտարկելով որպես մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որեւէ մեկն ընտրելու իրավունք:**

Վերը մատնանշված բոլոր իրավակարգավորիչ պայմաններն իրենց համակարգային ամբողջականությամբ կոչված են երաշխավորելու պետական մարմինների ու պաշտոնատար անձանց՝ իրենց լիազորություններին համապատասխան գործելու սահմանադրաիրավական սկզբունքի գործադրումը (ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի երկրորդ մաս):

- Սահմանադրական դատարանը կարեւորում է նաեւ այն հանգամանքները, որ.
- համաձայն վեճի առարկա օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «Սույն օրենքի գործողությունը չի տարածվում դատավարական իրավունքի նորմերով կարգավորվող հարաբերությունների վրա»,
 - օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը վարչական մարմնին պարտավորեցնում է նաեւ «... հետապնդել օրենքով կանխորոշված» նպատակներ, ինչպիսին կարող է լինել իր կողմից ընդունված ակտերի համապատասխանեցումն ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտերին՝ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված կարգով վարչական վարույթը սահմանափակելով միայն եզրափակիչ փուլով, այսինքն՝ ընդունելով համապատասխան վարչական ակտ նույն օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով՝ առանց վարչական վարույթի մասին ծանուցման կամ ընդհանուր կանոնների կիրառման,
 - օրենքի 49, 50 եւ 70-րդ հոդվածները հստակ սահմանազատում են վարչական եւ դատական վարույթները՝ կարեւորելով այն հանգամանքը, որ վար-

չական մարմինը չի կարող վարչական վարույթ իրականացնել, փաստական հանգամանքներ պարզել, վարույթի մասնակիցներին լսել եւ օրենքով սահմանված կարգով այլ գործողություններ իրականացնել, եւ դրանց արդյունքում վարչական ակտ ընդունել, եթե վեճի առարկան գտնվել կամ գտնվում է դատական վարույթում: Վերջիններս հիմք են վարչական վարույթը կասեցնելու, կարճելու կամ վարչական ակտն ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտին համապատասխանեցնելու համար:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի՝ վեճի առարկա 36-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությունը՝ վարչական մարմնին պարտավորեցնելով գործադրելու **իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ** (գործել սեղմ եւ ողջամիտ ժամկետում, առանց վարույթի բարդացման եւ լրացուցիչ գործողությունների կատարման), հանգում է հենց օրենքի վերոթվարկյալ հոդվածների պահանջների կատարման երաշխավորմանը, երբ գործի փաստական հանգամանքների պարզաբանումն իրավունքի ուժով արդեն առկա է, եւ դրանց գնահատումը թողնված չէ վարչական մարմնի հայեցողությանը, այսինքն՝ **տվյալ վարչական ակտի ընդունումն օրենքով կանխորոշված է:** Այդ հոդվածի կիրառմամբ վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, ելակետ ունենալ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության անհրաժեշտությունը, հիմք ընդունել նրանց իրավահավասարության, ինչպես նաեւ վարչարարության իրականացման համաչափության եւ կամայականության արգելքի սկզբունքները, այսինքն՝ **հետապնդել օրենքով կանխորոշված պարտադիր նպատակ:**

Իր հերթին, դատարանը վարչական ակտի իրավաչափությունը գնահատելիս պարտավոր է ոչ թե պարզապես հղում կատարել 36-րդ հոդվածի ընձեռած հնարավորությանը, **այլ պարզել դրա կիրառման հիմնավորվածությունը**, վարչական մարմնի հայեցողության շրջանակները, դրա համապատասխանությունը օրենքի 6-րդ հոդվածի պահանջներին, օրենքով կանխորոշված նպատակի հետապնդման առկայությունը:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաեւ արձանագրել, որ դիմողի վերաբերյալ գործով վարչական վարույթը հարուցվել է «Լիլիթ» ՍՊԸ-ի տնօրենի՝ 17.11.2010թ. դիմումի հիման վրա, որը, սակայն, էապես չի փոխում օրենքի 36-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության ու դրա կիրառման վերաբերյալ վերոշարադրյալ պահանջների բնույթը:

6. Սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանը կարելուքում է օրենքի վիճարկվող դրույթներով սահմանված իրավակարգավորման տրամաբանության բացահայտումը՝ ելնելով նաեւ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի երաշխավորման անհրաժեշտությունից:

Օրենքի վիճարկվող, ինչպես նաեւ այլ դրույթների համադրված վերլուծու-

թյան հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթները հետապնդում են իրավաչափ նպատակ, ուղղված են վարչական վարույթը սեղմ ժամկետում շուտ ավարտելուն, այն անտեղի չձգձգելուն եւ չեն բացառում ու չեն կարող բացառել վարչական վարույթի՝ օրենքով նախատեսված սկզբունքների կիրառումը, վարչական մարմնի ընթացակարգային պարտականությունների եւ հատկապես՝ գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ քննարկման պարտականության, գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները բացահայտելու պարտականության կատարումը կամ վարչական վարույթի մասնակիցների իրավունքների եւ հատկապես՝ ծանուցված լինելու, լսվելու եւ ապացույցներ ներկայացնելու իրավունքների իրացման հնարավորությունը՝ **բոլոր այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում վարչական ակտի ընդունումը չի սահմանափակվում միայն եզրափակիչ փուլով եւ այդ ակտի ընդունումն օրենքով կանխորոշված չէ**: Հետեւաբար, օրենքի 36-րդ հոդվածի դրույթները պետք է կիրառվեն այս համատեքստում, օրենքի այլ նորմերի հետ համակարգային ամբողջականության մեջ՝ անհրաժեշտ հիմնավորմամբ, պատճառաբանված, հետեւաբար՝ հետապնդելով օրենքով կանխորոշված նպատակ:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաեւ, որ իրավակիրառողը պետք է առաջնորդվի օրենքի վիճարկվող դրույթների՝ վերը նշված տրամաբանությամբ, այլապես կխախտվի ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածում ամրագրված՝ պետական մարմինների առջեւ անձի իրավունքների եւ ազատությունների իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը:

7. Օրենքի վիճարկվող դրույթները դիտարկելով օրենքի այլ դրույթների համադրության մեջ՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սահմանված են որոշակի երաշխիքներ վարչական մարմնի հնարավոր սխալի բացառման եւ, հետեւաբար, վարույթի մասնակիցների՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի իրացման համար: Որոշակի են նաեւ վարչական ակտերի բողոքարկման ընթացակարգերը: Նման պայմաններում սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական մարմնի կողմից դիմողի իրավունքների ենթադրյալ խախտումը պայմանավորված չէ օրենքի վիճարկվող դրույթներում «եթե առկա չեն գործի փաստական հանգամանքների պարզաբանման համար անհրաժեշտ պատճառներ» եւ «բավարար չափով պարզաբանված եւ ճշգրտված են տվյալ գործի հանգամանքները» բառակապակցությունների իրավական անորոշությամբ, ինչպես գտնում է դիմողը: Այդ իրավապայմաններն ինքնին որեւէ խտրականություն չեն բովանդակում: Այլ հարց է, թե ՀՀ վարչական դատարանը 24.06.2011թ. թիվ ՎԳ/0337/05/11 գործով կայացրած վճռով եւ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը նույն գործով իր՝ 01.12.2011թ. որոշմամբ, ինչպես նաեւ ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 01.02.2012թ. որոշմամբ որքանով են օրենքի վերոնշյալ դրույթներին համապատասխան ապահովել ու երաշխավորել դիմողի իրավունքների արդյունավետ դատական

պաշտպանությունը, ինչի գնահատումը դուրս է սահմանադրական դատարանի՝ ՀՀ Սահմանադրությամբ վերապահված լիազորությունների շրջանակներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**30 հոկտեմբերի 2012 թվականի
ՍԳՈ-1054**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՑԻ ԿԱՐԵՆ ՄԵԺԼՈՒՄՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՍԳՐՔԻ
305-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԴ ԵՎ 4-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. երեսան

13 նոյեմբերի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝

դիմող Կ. Մեժլումյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ս. Համբարձումյանի եւ նույն բաժնի առաջատար մասնագետ Հ. Սարդարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Կարեն Մեժլումյանի դիմումի հիման վրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Կ. Մեժլումյանի՝ 01.08.2012թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պա-

տասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետագոտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը ՀԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունվել է 1985 թվականի դեկտեմբերի 6-ին եւ ուժի մեջ է մտել 1986 թվականի հունիսի 1-ից:

Օրենսգրքի՝ «Տուգանք նշանակելու մասին որոշումը կատարելու ժամկետներն ու կարգը» վերտառությամբ 305-րդ հոդվածը սահմանում է.

«Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում:

Եթե սույն օրենսգրքի 224-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հոդվածներով սահմանված տուգանքը նշանակելու մասին որոշումը իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից հետո] տասնօրյա ժամկետում, անձը դիմում է ոստիկանություն տուգանքի վճարումը տարաժամկետելու խնդրանքով, ապա վճարումը համարվում է տարաժամկետված դիմումի մեջ նշված ժամկետով, բայց ոչ ավելի, քան 6 ամիս:

Սույն օրենսգրքի 224-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հոդվածներով սահմանված տուգանքը նշանակելու մասին որոշումը իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը տարաժամկետելու դիմումում սահմանված ժամկետում կամ տուգանքը նշանակելու վերաբերյալ որոշումը բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո] 30 օրվա ընթացքում, տուգանքը չվճարելու դեպքում տուգանքի չափը եռապատկվում է:

Սույն օրենսգրքի 224-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հոդվածներով սահմանված տուգանքը նշանակելու մասին որոշումը իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը տարաժամկետելու դիմումում սահմանված ժամկետում կամ տուգանքը նշանակելու վերաբերյալ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո՝ 60 օրվա ընթացքում, տուգանքը չվճարելու դեպքում տուգանքի չափը հնգապատկվում է, որը ենթակա է դատական կարգով բռնագանձման: Տուգանքի գումարի բռնագանձման համար վարույթ իրականացնող մարմինը պարտավոր է 60-օրյա ժամկետը լրանալուց հետո՝ 120 օրվա ընթացքում, դիմել դատարան:

Եթե մանր խուլիգանություն կատարած տասնվեցից մինչեւ տասնութ տարեկան անձինք ինքնուրույն վաստակ չունեն, տուգանքը գանձվում է ծնողներից կամ նրանց փոխարինող անձանցից:

Վարչական իրավախախտում կատարելու համար նշանակված տուգանքը խախտողի կողմից մոծվում է կենտրոնական գանձապետարանի համապատասխան հաշվին:

Ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար նշանակված տուգանքը խախտողը մուծում է կենտրոնական գանձապետարան, բացառությամբ իրավախախտման կատարման տեղում գանձվող տուգանքի:

Սույն օրենսգրքի 43.1-րդ, 48-րդ, 54-րդ, 56-58-րդ, 158 (բացառությամբ երկրորդ, երրորդ, տասներկուերորդ, տասնիններորդ եւ քսանմեկերորդ մասերի), 162, 169.16 հոդվածներով նախատեսված դեպքերում համայնքների վարչական սահմաններում թույլ տված իրավախախտումների համար նշանակված տուգանքը մուտքագրվում է համայնքային բյուջե, համայնքի վարչական սահմանից դուրս՝ Երեւան քաղաքում, ինչպես նաեւ տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց թույլ տված իրավախախտումների համար նշանակված տուգանքը մուտքագրվում է պետական բյուջե»:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածում կատարվել են մի շարք փոփոխություններ՝ 10.03.90, 11.12.02 ՀՕ-495-Ն, 16.12.05 ՀՕ-26-Ն, 21.02.07 ՀՕ-73-Ն, 27.02.07 ՀՕ-134-Ն, 06.12.07 ՀՕ-296-Ն, 02.12.08 ՀՕ-221-Ն, 18.05.10 ՀՕ-65-Ն, 07.02.12 ՀՕ-2-Ն օրենքներ:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. դիմողը ՀՀ ճանապարհային ոստիկանության կողմից նշանակված տուգանքը սահմանված ժամկետում չի վճարել, ինչի արդյունքում դրա չափը սկզբում՝ եռապատկվել, այնուհետեւ հնգապատկվել է, եւ ՀՀ ճանապարհային ոստիկանությունն օրենքով սահմանված կարգով հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ արդեն իսկ հնգապատկված տուգանքը բռնագանձելու պահանջով:

Դիմողը, իր հերթին, ներկայացրել է հակընդդեմ հայց՝ վիճարկելով ՀՀ ճանապարհային ոստիկանության գործողությունները (անգործությունը) այն առումով, որ վերջինս տուգանքի չափը եռապատկելիս եւ հնգապատկելիս վարչական վարույթ չի հարուցել, հետեւաբար՝ իրեն մասնակից չեն դարձրել եւ չեն պարզել տուգանքը սահմանված ժամկետում չմուծելու մեջ իր մեղավորության աստիճանը:

ՀՀ վարչական դատարանն իր՝ 15.04.2011թ. թիվ ՎԴ-4/0230/05/10 վճռով բավարարել է ՀՀ ճանապարհային ոստիկանության հայցը, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժել այն պատճառաբանությամբ, որ «... տուգանքի գումարը չվճարելու դեպքում այդ գումարը օրենքի ուժով է եռապատկվում կամ հնգապատկվում, որի համար վարչական վարույթ հարուցելու եւ տուգանքի գումարը համապատասխան չափով ավելացնելու օրենսդրական պահանջ չկա»:

Դիմողի բերած վերաքննիչ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն իր՝ 03.11.2011թ. թիվ ՎԴ-4/0230/05/10 որոշմամբ մերժել է այն պատճառաբանությամբ, որ «... Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 305-րդ հոդվածով սահմանված վարչական տուգանքի սկզբնական չափի բազմապատկումը չպետք է առանձին վարչական վարույթի եւ դրա արդյունքում ընդունվելիք վարչական ակտի առարկա դառնա: Ընդհակառակը, նշված բազմապատկումը սահմանված է որպես հետեւանք՝ պայմանավորված նշանակված վարչական տուգանքը չվճարելու որոշակի ժամանակամիջոցի լրանալով, առանց որեւէ այլ պայմանի կամ վերապահման: ... օրենսդիրը նշված

բազմապատկումը սահմանել է որպես նշված ժամանակամիջոցի լրանալու արդյունքում ինքնաբերաբար (ավտոմատիկ) կերպով տեղի ունեցող իրադարձություն: ... Այսինքն՝ տուգանքի չափի բազմապատկման փաստը վարչական վարույթի առարկա չի կարող դառնալ, քանի որ բազմապատկումը տեղի է ունենում օրենքի ուժով եւ այդ կապակցությամբ վարչական ակտ ընդունելու անհրաժեշտությունը բացակայում է: ... Փաստորեն, ... տուգանքի չափի բազմապատկումը օրենքի ուժով տեղի ունեցող իրադարձություն է՝ անկախ վարչական մարմնի հայեցողությունից, իսկ վերջինս միայն լիազորված է ապահովելու վարչական ակտի կատարումը՝ օրենքով սահմանված չափով տուգանքը գանձելու առումով: Այսինքն՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության ճանապարհային ոստիկանությունը չի բազմապատկել տուգանքի գումարը, այլ դա տեղի է ունեցել որպես օրենքով սահմանված ժամկետում դրա սկզբնական չափը չվճարելու հետեւանք»:

ՀՀ վճռաբեկ դատարանը, վերահաստատելով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի՝ վերը նշված իրավական դիրքորոշումները, իր՝ 25.01.2012թ. թիվ ՎԳ-4/0230/05/10 որոշմամբ վերադարձրել է դիմողի վճռաբեկ բողոքը:

3. Դիմողը ՀՀ սահմանադրական դատարանում վիճարկում է խնդրո առարկա դրույթները՝ իրավակիրառական պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության տեսանկյունից, եւ գտնում է, որ նման մեկնաբանությունը խախտում է իր՝ ՀՀ Սահմանադրությամբ եւ միջազգային ակտերով երաշխավորված՝ պետական մարմինների ու դատարանի առջեւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, քանի որ անձը գույքային պատասխանատվության ձեռով տուգանքի է ենթարկվում «ինքնաբերաբար (ավտոմատիկ) կերպով» տեղի ունեցող իրադարձության արդյունքում, առանց պարզելու նրա մեղքի առկայությունը կամ բացակայությունը կամ վճարումն անհաղթահարելի դարձնող այլ հանգամանքները, օրինակ՝ անձի գորակոչված լինելը, անձի անկողնային հիվանդ կամ անգործունակ դառնալը:

Ըստ դիմողի՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի վիճարկվող դրույթները՝ իրավակիրառական պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ, հակասում են ՀՀ Սահմանադրության 3, 18 եւ 19-րդ հոդվածների պահանջներին:

4. Պատասխանող կողմը, առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերը համապատասխանում են ՀՀ Սահմանադրության 3, 18 եւ 19-րդ հոդվածների պահանջներին:

Անդրադառնալով դիմողի փաստարկներին, համաձայն որոնց՝ տուգանքի չափը եռապատկվելու եւ հնգապատկվելու մասին օրենսգրքի վիճարկվող դրույթները պետք է կիրառվեն ոչ թե ինքնաբերաբար, այլ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է վարչական վարույթի շրջանակներում ընդունվի վարչական ակտ, եւ տուգանքի գումարը բազմապատկվելիս պետք է հաշվի առնվեն տուգանքը սահմանված ժամկետում չվճարելու մեջ անձի մեղավորությունը կամ վճարումն անհաղթահարելի դարձնող հանգամանքները, պատասխանող կողմը:

մը գտնում է, որ դիմողի բարձրացրած հիմնախնդրի լուծումն առկա է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 300-րդ հոդվածում եւ 305-րդ հոդվածի 2-րդ մասում, որոնցով նախատեսված է համապատասխանաբար՝ տուգանք նշանակելու մասին որոշման կատարման հետաձգման եւ նշանակված տուգանքի վճարումը տարաժամկետելու ինստիտուտներ: Պատասխանողի կարծիքով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի վերը նշված դրույթները բավարար են տուգանքի չվճարման անբարենպաստ հետեւանքներից խուսափելու համար:

Նշանակված տուգանքի գումարի վճարումն անհաղթահարելի դարձնող հնարավոր հանգամանքների առնչությամբ պատասխանողը, հղում կատարելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 19, 247 եւ 301-րդ հոդվածներին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 31-րդ հոդվածին, գտնում է, որ անձի անմեղսունակության եւ մահվան դեպքերում օրենսդիրը բացառում է վարչական վարույթի հարուցումը կամ հարուցված վարույթի շարունակումը: Պատասխանողն արձանագրում է նաեւ, որ օրենքով սահմանված ժամկետում չվճարված վարչական տուգանքի բազմապատկումը տեղի է ունենում մեկ վարչական վարույթի շրջանակներում:

Անդրադառնալով այն հնարավոր դեպքերին, երբ վարչական տույժ նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձին հանձնելու պահին անձը չի գտնվում իր կողմից նշված հաշվառման (գտնվելու) կամ բնակության վայրում, կամ մինչեւ որոշման հանձնումը փոխում է մշտական բնակության վայրը, պատասխանողն արձանագրում է, որ օրենսգրքի 283-րդ հոդվածի 6-րդ մասի ուժով նման դեպքերում որոշումները համարվում են հանձնված:

5. Հաշվի առնելով դիմողի փաստարկները՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում սույն գործի քննության շրջանակներում բացահայտել հետեւյալ հանգամանքները.

ա/ արդյոք նշանակված տուգանքն օրենքով սահմանված ժամկետում չվճարելը տվյալ դեպքում հանդիսանում է ինքնուրույն վարչական իրավախախտում,

բ/ արդյոք նշանակված տուգանքի եռապատկումը կամ հնգապատկումը գործող օրենսդրության շրջանակներում դիտվում է որպես նոր պատժատեսակ:

Միաժամանակ, սահմանադրական դատարանը հարկ է համարում նաեւ սույն գործի քննության շրջանակներում բացահայտել օրենսգրքի՝ խնդրո առարկա հոդվածով սահմանված իրավակարգավորման իրավաչափությունը:

6. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում, մասնավորապես, պետական կամ հասարակական կարգի, քաղաքացիների իրավունքների եւ ազատությունների դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզույժ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի ուսումնասիրությունից բխում է, որ օրենսգիրքը չի նախատեսում այնպիսի իրավախախ-

տում, ինչպիսին նշանակված տուգանքն օրենքով սահմանված ժամկետներում չվճարելն է: Հիմք ընդունելով նշված հանգամանքը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նշանակված տուգանքն օրենքով սահմանված ժամկետներում չվճարելը չի հանդիսանում վարչական իրավախախտում, հետեւաբար, օրենսգրքի վիճարկվող դրույթներով սահմանված՝ տուգանքի չափի եռապատկման եւ հնգապատկման դեպքում բացառվում է վարչական վարույթի հարուցումը՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով: Տուգանքի չափի եռապատկումը եւ հնգապատկումը չի հանդիսանում վարչական տույժի տեսակ եւ վարչական պատասխանատվության միջոց, այլ կոչված է կանխարգելելու օրենքով սահմանված կարգով նշանակված վարչական տույժերը սահմանված ժամկետում չվճարելու հնարավոր դեպքերը եւ ուղղված է կանխելու նոր իրավախախտումների կատարումը, բարձրացնելու իրավախախտում կատարած անձանց կարգապահությունը՝ պետության առջեւ ունեցած պարտավորությունների բարեխիղճ կատարման գործում:

Սահմանադրական դատարանը սույն գործի քննության շրջանակներում հարկ է համարում նաեւ վկայակոչել իր՝ 20.12.2011թ. ՄԳՈ-1007 որոշման 6-րդ կետի 10-րդ պարբերության մեջ արտահայտած հետեւյալ իրավական դիրքորոշումը. «Սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում նաեւ դիմողի դիրքորոշումը [կապված օրենքի վիճարկվող դրույթի իրավական անորոշության հետ, քանի որ, նախ] օրենքը հստակ սահմանել է տուգանքի գումարը երեսօրյա ժամկետում չմուծելու դեպքում նշված գումարի կրկնապատկման կարգը, երկրորդ] նշված կարգը սահմանված է օրենքով, որպես համապատասխան վիճակը վրա հասնելու դեպքում ինքնաբերաբար, իրավունքի ուժով գործող կանոն եւ դրա համար լրացուցիչ չի պահանջվում համապատասխան վարչական ակտի ընդունում»:

Վերահաստատելով ՄԳՈ-1007 որոշման մեջ արտահայտված՝ վերը նշված իրավական դիրքորոշումները, սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանք կիրառելի են նաեւ սույն գործով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում դիմողի այն պնդումները, համաձայն որոնց՝ տուգանքի չափի եռապատկման եւ հնգապատկման յուրաքանչյուր դեպքը պետք է դիտել որպես նոր պատժամիջոց, եւ յուրաքանչյուր դեպքում պետք է վարչական վարույթի շրջանակներում ընդունվի վարչական ակտ՝ որոշում: Այլ խնդիր է, թե որքանով են երաշխավորված անձի իրավունքներն այն հնարավոր իրավիճակներում, երբ առկա է նշանակված տուգանքն օրենքով սահմանված ժամկետներում վճարելու օբյեկտիվ անհնարինություն: Տվյալ դեպքում բարձրացված հիմնախնդիրը կարող է աղերսներ ունենալ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի, ինչպես նաեւ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի, Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով նախատեսված՝ դատական պաշտպանության արդյունավետ միջոցների եւ արդար դատաքննության իրավունքների հետ:

Սահմանադրական դատարանը չի բացառում այնպիսի իրավիճակները, երբ անձը, որի նկատմամբ նշանակված է վարչական տույժ՝ տուգանք, տարբեր օբյեկտիվ պատճառներով, ներառյալ՝ անհաղթահարելի ուժի առկայությունը,

չկարողանա օրենքով սահմանված ժամկետներում վճարել տուգանքը: Այս դեպքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի վիճարկվող նորմերի ուժով, այսինքն՝ իրավունքի ուժով, նշանակված տուգանքի չափն ինքնաբերաբար բազմապատկվում է, որպիսի պայմաններում անձին չի տրվում հնարավորություն ապացուցելու իր պարտավորությունների չկատարման պատճառների՝ իր կամքից անկախ լինելը:

Մասնավորապես, ըստ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ բոլոր այն դեպքերում, երբ վճարման կարգադրություն արձակելու հայցադիմումը մերժվում է, լավելու հնարավորություն է տրվում վարչական դատարան դիմողին (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդված): Ինչ վերաբերում է տվյալ վարչական գործով պատասխանողին, ապա նշված վարույթի շրջանակներում պատասխանողը հնարավորություն ունի ներկայացնելու հակընդդեմ հայց միայն վարչական ակտը, տվյալ դեպքում՝ տուգանք նշանակելու մասին որոշումը (այլ ոչ թե տուգանքի չափի եռապատկումը կամ հնգապատկումը) վերացնելու կամ փոփոխելու վերաբերյալ, եթե պատասխանողը վարչական ակտը համարում է ապօրինի: Որեւէ այլ պարագայում եւ որեւէ այլ կերպ պատասխանողը վճարման կարգադրություն արձակելու մասին հայցադիմումի քննության վարույթի շրջանակներում տուգանքը ժամանակին չվճարելու օբյեկտիվ պատճառների մասին նույնիսկ հակընդդեմ հայցի միջոցով հիմնավորումներ ներկայացնելու եւ այդ հարցով լավելու իրավական հնարավորություն չունի:

Ելնելով ստանձնված միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման, ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով նախատեսված՝ դատական պաշտպանության արդյունավետ միջոցների եւ արդար դատաքննության իրավունքների երաշխավորման անհրաժեշտությունից, սահմանադրական դատարանն իրավական պետությանն անհարիր է համարում վերը նշված իրավիճակը եւ գտնում, որ դրա պատճառն իրավական բացն է: Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատարաններում օրենսգրքի վիճարկվող նորմերով նախատեսված տուգանքի հնգապատիկի չափը բռնագանձելու մասին հայցի քննության ժամանակ անձը պետք է հնարավորություն ունենա ներկայացնելու, իսկ դատարանն էլ պետք է քննարկման առարկա դարձնի եւ գնահատի նրա ներկայացրած հիմնավորումներն այն մասին, թե արդյոք առկա են եղել արտակարգ եւ անհարթահարելի հանգամանքներ, որոնք խոչընդոտել են անձին ժամանակին կատարելու իր պարտավորությունները պետության առջեւ, կամ արդյոք անձը ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները պարտավորությունը կատարելու համար եւ այդպիսի հանգամանքների առկայությունը հաստատելու պարագայում հարգելի համարի բաց թողնված ժամկետները: **Ընդ որում, նման իրավակարգավորում նախատեսված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ:**

7. Սահմանադրական դատարանը հարկ է համարում խնդրո առարկա իրավակարգավորումը դիտարկել նաեւ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի երկրորդ պարբերության համատեքստում, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ անձի դրամական միջոցները հանդիսանում են անձի սեփականությունը: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմա-

նադրության 31-րդ հոդվածի երկրորդ պարբերությանը ամրագրված՝ անձին սեփականությունից **բացառապես դատական կարգով** գրկելու վերաբերյալ դրույթի իրացումը ենթադրում է համապատասխան դատավարական երաշխիքների առկայություն, որը հավասարապես տարածվում է նաև օրենսգրքի վիճարկվող նորմերի կիրառման նկատմամբ: Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող նորմերի ուժով տուգանքի հնգապատիկի չափը դատական կարգով բռնագանձելը չպետք է լինի ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի երկրորդ պարբերության **ձեռական իրականացման գործիք**: Սեփականությունից գրկելու հետ կապված հարցը դատական կարգով քննելու սահմանադրական պահանջը նպատակ ունի ապահովելու գործի հանգամանքների համակողմանի քննությունը, երաշխավորելու կողմերի՝ դատարանի կողմից լսվելու իրավունքը, տվյալ պարագայում՝ տուգանքը ժամանակին չվճարելու մեջ անձի մեղավորության բացակայությունը կամ առկայությունը հիմնավորող ապացույցների ուսումնասիրությունն ու գնահատումը:

Միաժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի խնդիրը չէ սահմանելու համապատասխան ընթացակարգեր, քանի որ օրենսգիրքը կոչված է պահպանելու նյութաիրավական հարաբերությունները՝ քաղաքացիների իրավունքներ, բնակչության առողջություն, սեփականություն եւ այլն, իսկ վարչական իրավունքի շրջանակներում առաջացող հարաբերությունները կարգավորող, տվյալ դեպքում՝ պահպանող նյութաիրավական նորմերի իրացման ընթացակարգերը սահմանվում են ընթացակարգային օրենքներով, այն է՝ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով եւ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով:

Վերոշարադրյալի հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի վիճարկվող դրույթները սահմանադրականության խնդիր չեն առաջացնում, իսկ դիմողի կողմից բարձրացված հիմնախնդիրը՝ կապված նշանակված տուգանքը պարտավոր անձից անկախ պատճառներով օրենքով սահմանված ժամկետներում չվճարելու հետ, պայմանավորված է ոչ թե Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի վիճարկվող դրույթների սահմանադրականությամբ, **այլ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում համապատասխան իրավակարգավորման բացակայության հետ, որի քննությունը դուրս է ՀՀ սահմանադրական դատարանի լիազորությունների շրջանակից:**

8. Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև պատասխանող կողմի բացատրություններում տեղ գտած առանձին փաստարկների, քանի որ պատասխանող կողմը, չբացատրելով նշանակված տուգանքն օրենքով սահմանված ժամկետներում չվճարելու դեպքում անձի մեղավորության բացահայտման, ներառյալ՝ նշված տուգանքը չվճարելու պատճառները հաշվի առնելու անհրաժեշտությունը, գտնում է, որ, ինչպես արդեն արձանագրվել է, դիմողի բարձրացրած հիմնախնդրի լուծումն առկա է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի 2-րդ մասում, որով նախատեսված է նշանակված տուգանքի վճարումը տարաժամկե-

տելու ինստիտուտ: **Պատասխանողի** կարծիքով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթները բավարար են տուգանքի չվճարման անբարենպաստ հետևանքներից խուսափելու համար:

Պատասխանողի՝ վերը նշված բացատրությունների առնչությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորումն ամբողջությամբ չի կարող լուծել դիմողի կողմից բարձրացված՝ վերը նշված հիմնախնդիրը, քանի որ, **նախ՝** նշանակված տուգանքի վճարումը տարաժամկետելու վերաբերյալ դիմում ներկայացնելու համար սահմանված է 10-օրյա ժամկետ, մինչդեռ հնարավոր են իրավիճակներ, երբ տուգանքի վճարումն անհնարին դարձնող պատճառները վրա հասնեն մինչև վճարման համար նախատեսված 30-օրյա ժամկետի ավարտը՝ ցանկացած այլ պահի: Ավելին, նման օբյեկտիվ պատճառներ կարող են ի հայտ գալ տուգանքի եռապատկումից հետո՝ մինչև հնգապատկումը: **Երկրորդ՝** դիտարկվող իրավակարգավորմամբ օրենսդիրը տուգանքի վճարումը տարաժամկետելու վերաբերյալ որոշում կայացնելիս հայեցողական իրավասություն է վերապահել վարչական մարմնին, տվյալ դեպքում՝ ՀՀ ճանապարհային ոստիկանությանն այն դեպքում, երբ օրենսդրությամբ նախատեսված չէ հիմքերի այն նվազագույն շրջանակը, որոնց պարագայում ՀՀ ճանապարհային ոստիկանությունը պետք է կամ կարող է տարաժամկետել տուգանքի վճարումը: Այս հիմնախնդրի լուծումը վերապահված է օրենսդիր մարմնին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**13 նոյեմբերի 2012 թվականի
ՍՂՈ- 1056**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ ՄԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽՍԱՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՍԳՐՔԻ 260-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԳ ՄԱՍԻ ԵՎ 262-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԳ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

23 նոյեմբերի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչներ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցներ Ա. Վարդեանյանի, Հ. Աբգարյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ս. Համբարձումյանի, մույն բաժնի առաջատար մասնագետ Հ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 260-րդ հոդվածի 3-րդ մասի եւ 262-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 27.08.2012թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի ներկայացուցիչների բացատրությունները, հետազոտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը ՀԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունվել է 1985 թվականի դեկտեմբերի 6-ին եւ ուժի մեջ է մտել 1986 թվականի հունիսի 1-ից:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ «Վարչական ձերբակալում» վերտառությամբ 260-րդ հոդվածի 3-րդ մասի վիճարկվող դրույթը սահմանում է. «Վարչական իրավախախտում կատարելու համար ձերբակալված անձի խնդրանքով նրա գտնվելու վայրի մասին տեղյակ են պահվում հարազատները, աշխատանքի կամ ուսման վայրի աղմինիստրացիան»:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ «Վարչական ձերբակալման ժամկետները» վերտառությամբ 262-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Սահմանային ռեժիմը կամ ԽՍՀՄ պետական սահմանի անցման կետերի ռեժիմը խախտող անձինք կարող են ձերբակալվել մինչեւ երեք ժամ տեւողությամբ՝ արձանագրություն կազմելու համար, իսկ անհրաժեշտության դեպքում անձը եւ իրավախախտման հանգամանքները պարզելու համար՝ մինչեւ երեք օր ժամանակով, ձերբակալման պահից քսանչորս ժամվա ընթացքում այդ մասին գրավոր հաղորդելով դատախազին, կամ դատախազի սանկցիայով՝ մինչեւ տասը օր ժամանակով, եթե իրավախախտողները չունեն իրենց անձը հաստատող փաստաթղթեր»:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 262-րդ հոդվածում կատարվել են մի շարք փոփոխություններ՝ 29.08.88, 10.03.90, 03.12.96 ՀՕ-102, 24.12.04 ՀՕ-68-Ն օրենքներ:

2. Դիմողը, վկայակոչելով ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի թիվ 43/173 բանաձեւը, ինչպես նաեւ մի շարք երկրների օրենսդրական կարգավորումների կառուցակարգերը, գտնում է, որ օրենսգրքի 260-րդ հոդվածի 3-րդ մասը հստակորեն չի ապահովում ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված՝ ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի իրավունքը՝ այդ մասին անհապաղ տեղեկացնելու իր կողմից ընտրված անձին, ինչպես նաեւ այդ անձանց՝ պաշտպան ունենալու իրավունքը: Ըստ դիմողի՝ օրենսգրքի 260-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է համապատասխան իրավունքը **որպես պետական մարմնին ուղղված խնդրանք**, այլ ոչ թե որպես օրենքի պարտադիր պահանջ, եւ չի նախատեսում համապատասխան պետական մարմնի՝ ձերբակալման մասին ազատությունից զրկված անձի կողմից ընտրված անձին անհապաղ տեղեկացնելու պարտավորություն, եւ նույնիսկ ազատությունից զրկված անձի՝ պաշտպանի հետ հաղորդակցվելու եւ այդպիսով իրավաբանական օգնություն ստանալու իրավունքներն ապահովելու պարտավորություն:

Անդրադառնալով օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասին՝ դիմողը, վկայակոչելով Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք նախադեպային որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, ՀՀ Սահմանադրության տեսանկյունից անթույլատրելի է համարում օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասում դատախազի կողմից վարչական ձեռքարկման մինչեւ 10-օրյա ժամկետ նախատեսելը, ինչպես նաեւ անձին առանց դատարան ներկայացնելու մինչեւ 10 օր ժամկետով որպես ձեռքարկված պահելու հնարավորություն նախատեսելը: Ընդ որում, դիմողն արձանագրում է, որ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2005 թվականի դեկտեմբերի 16-ին վարչական կալանքի ինստիտուտն ուժը կոցրած է ճանաչվել:

Վերոգրյալի հիման վրա դիմողը գտնում է, որ օրենսգրքի 260-րդ հոդվածի 3-րդ մասի եւ 262-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերին եւ 20-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերին:

3. Պատասխանող կողմը, մասնակիորեն առարկելով դիմողի փաստարկներին, նախ գտնում է, որ օրենսգրքի 260-րդ հոդվածի վեճի առարկա նորմը, ըստ էության, սահմանում է գուտ վարչական մարմնի պարտականությունը **ձեռքարկված անձի գտնվելու վայրի մասին** տեղյակ պահելու նրա հարազատներին, աշխատանքի կամ ուսման վայրի աղմինիստրացիային: Իսկ ահա վարչական վարույթի ընթացքում իրավաբանական օգնություն ստանալու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այլ նորմերով:

Պատասխանողը գտնում է նաեւ, որ վեճի առարկա դրույթի «խնդրանք» բառը չպետք է ընկալել ուղղակի իմաստով, որը ենթադրաբար կարող է եւ մերժվել պետական մարմնի կողմից: Ըստ պատասխանողի՝ «Պարզապես այս իրավունքի իրականացումը կախման մեջ է դրվում անձի կամքից, կամահայտնությունից: Իր իմաստով այն նույնանում է նաեւ ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածով սահմանված ձեռակերպման հետ»:

Պատասխանող կողմը, այդուհանդերձ, գտնում է նաեւ, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 260-րդ հոդվածի 3-րդ մասի «ձեռքարկված անձի խնդրանքով» ձեռակերպումը կարող է գործնականում կամայականությունների տեղիք տալ, քանի որ այն հակառակ Սահմանադրության, կարող է դիտարկվել որպես վարչական մարմնի իրավունք: Ուստի այն հակասում է ՀՀ Սահմանադրության պահանջներին»:

Ինչ վերաբերում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 262-րդ հոդվածի վեճի առարկա դրույթի սահմանադրականությանը, ապա պատասխանողը նույնպես համակարծիք է դիմողի հետ՝ այդ դրույթի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ:

4. Դիմումի ուսումնասիրությունից բխում է, որ դիմողը բարձրացնում է հիմնականում երկու հիմնախնդիր, այն է՝ Սահմանադրության 16-րդ հոդվածի

2-րդ մասով նախատեսված՝ ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի՝ այդ մասին անհապաղ իր կողմից ընտրված անձին տեղեկացնելու իրավունքի երաշխավորումը վարչական ձեռքարկման գործող ընթացակարգի շրջանակներում եւ նույն շրջանակներում վարչական ձեռքարկման ժամկետների, այդ ժամկետները երկարացնելու լիազորություն ունեցող սուբյեկտների վերաբերյալ դրույթների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության պահանջներին:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 260-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանմամբ օրենսդիրը ժամանակին նպատակ է հետապնդել ապահովելու վարչական իրավախախտում կատարելու համար ձեռքարկված անձի՝ իր ձեռքարկման մասին այլ անձանց տեղեկացնելու իրավունքը, որի իրացումը, ըստ այդ նորմի տառացի իմաստի՝ պայմանավորվում է իրավասու մարմնի կամահայտ վերաբերմունքով, բացառությամբ վարչական իրավախախտում կատարած անչափահաս անձի ձեռքարկման դեպքերի, երբ վերոհիշյալ իրավունքի իրացումը պարտադիր է: Սակայն տվյալ օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Սահմանադրության ընդունումից եւ Հայաստանի անկախացումից առաջ, իսկ հետագայում, նաեւ ՀՀ Սահմանադրության 117-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները նկատի ունենալով, օրենսգրքի 260-րդ հոդվածը, ինչպես նաեւ 262-րդ հոդվածի գործող խմբագրությամբ տեքստի 2-րդ մասը ՀՀ օրենսդիր մարմնի կողմից որեւէ փոփոխության չեն ենթարկվել: Մինչդեռ ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասը հստակ սահմանում է. «... Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրավունք ունի այդ մասին անհապաղ տեղեկացնելու իր կողմից ընտրված անձին»:

Օրենսգրքի 260-րդ հոդվածի 3-րդ մասի եւ ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի՝ վերը նշված դրույթի համադրված վերլուծությունից բխում է, որ օրենսգրքի 260-րդ հոդվածի 3-րդ մասը, ի տարբերություն ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորման, վարչական իրավախախտման համար ձեռքարկված անձի՝ այդ մասին այլ անձանց տեղյակ պահելու իրավունքի իրացման պարագայում նախատեսել է միջնորդավորված կառուցակարգ, ըստ որի՝ նախ, ձեռքարկվածի իրավունքի իրականացման համար որպես նախապայման է հանդիսանում վերջինիս **խնդրանքը**՝ ուղղված իրավասու պաշտոնատար անձին: Երկրորդ, դիտարկվող իրավակարգավորմամբ այլ անձանց տեղյակ պահելու գործընթացի անմիջական իրականացման իրավասությունը վերապահված է ոչ թե ձեռքարկված անձին, այլ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործով վարույթն իրականացնող մարմնի իրավասու պաշտոնատար անձին: Երրորդ, օրենսգրքի 260-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսել է անձանց առավել սահմանափակ շրջանակ, որոնք կարող են տեղեկացվել տվյալ անձի ձեռքարկման մասին:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով՝ ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի՝ հիշատակված իրավունքի իրացումը չի կրում միջնորդավորված բնույթ, կախվածության մեջ չի դրվում որեւէ պաշտոնատար

անձի հայեցողությունից, ուղղակիորեն վերապահված է ձերբակալվածին: ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ազատությունից զրկված անձի համար ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությամբ ամրագրված իրավունքն անձն իրականացնում է **անձամբ եւ անմիջականորեն**, իսկ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործով վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ազատությունից զրկված անձին ապահովել քաղաքացիական շրջանառության մեջ գտնվող բոլոր անհրաժեշտ տեխնիկական միջոցներով, որոնք նախատեսված են անձանց հաղորդակցման համար: Միեւնույն ժամանակ, պաշտպանին՝ իր ձերբակալման մասին տեղեկացնելը, հանդիսանում է Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով ամրագրված՝ իրավաբանական օգնություն ստանալու եւ պաշտպան ունենալու իրավունքների բաղադրատարր, որի նպատակն այլ է, քան Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությամբ ամրագրված՝ իր ձերբակալման մասին իր կողմից ընտրված անձին տեղեկացնելու իրավունքի իրավական բովանդակությունը:

Ինչ վերաբերում է օրենսգրքի 260-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ նախադասությամբ ամրագրված այն դրույթին, ըստ որի՝ «Անչափահասի ձերբակալման մասին նրա ծնողներին կամ նրանց փոխարինող անձանց տեղյակ պահելը պարտադիր է», ապա վերջինիս սահմանադրականության հարցը դիմողի կողմից քննության առարկա չի դարձվել:

5. Անդրադառնալով օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականությանը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նշված մասի դրույթները հանգում են հետեւյալին.

ա/ վարչական ձերբակալման ընդհանուր ժամկետը՝ որպես ընդհանուր բնույթի կանոն, սահմանված է **3 ժամ**, իսկ բացառիկ դեպքերում՝ հատուկ անհրաժեշտության կապակցությամբ առկա է նաեւ հիշյալ ընդհանուր ժամկետը փոփոխելու հնարավորություն,

բ/ ՀՀ սահմանաչին ռեժիմը խախտող անձինք կարող են ձերբակալվել մինչեւ **3 ժամ** տեւողությամբ՝ արձանագրություն կազմելու համար, մինչեւ **3 օր** ժամանակով՝ անձը եւ իրավախախտման հանգամանքները պարզելու համար՝ ձերբակալման պահից 24 ժամվա ընթացքում այդ մասին գրավոր հաղորդելով դատախազին, **մինչեւ 10 օր ժամանակով՝ դատախազի սանկցիայով**, եթե իրավախախտողները չունեն անձը հաստատող փաստաթղթեր:

ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետը սահմանում է. «Դատախազությունն օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով ... հսկողություն է իրականացնում պատիժների եւ հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ»:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի՝ «Պատիժների եւ հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողությունը» վերտառությամբ 29-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Սույն հոդվածի իմաստով հարկադրանքի այլ միջոց է համարվում Սահմանադրության 16-րդ հոդ-

վածի 1-ին մասի 2-7-րդ կետերով նախատեսված դեպքերում ազատությունից զրկումը, ինչպես նաև հատուկ ծառայությունների կողմից ֆիզիկական ուժ, հրազեն կամ հատուկ միջոցների գործադրումը»:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ եւ 7-րդ կետերը թույլատրում են օրենքով ազատությունից զրկելու հետեւյալ դեպքերի նախատեսումը՝ օրենքով սահմանված որոշակի պարտականությունների կատարումն ապահովելու նպատակով եւ Հայաստանի Հանրապետություն անձի անօրինական մուտքը կանխելու, նրան արտաքսելու կամ այլ պետության հանձնելու նպատակով: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ «սահմանային ռեժիմի խախտում» ձեւակերպման իրավական բովանդակությունը նույնպես ներառվում է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ եւ 7-րդ կետերով նախատեսված վերոհիշյալ դեպքերի բովանդակային ծավալում:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է պատիժների եւ հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս դատախազի իրավունքները, որոնք ներառում են, մասնավորապես, հետեւյալները.

- ցանկացած ժամանակ անարգել այցելել այն բոլոր վայրերը, որտեղ պահվում են ազատությունից զրկված անձինք,
- ծանոթանալ այն փաստաթղթերին, որոնց հիման վրա անձը ենթարկվել է պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների,
- անհապաղ ազատելու ազատությունից զրկելու վայրերում, ինչպես նաև այդ վայրերի տուգանային եւ կարգապահական մեկուսարաններում ապօրինի պահվող անձանց:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Եթե ձերբակալված անձը ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 16 եւ 103-րդ հոդվածներով, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով ձերբակալման առավելագույն ժամկետը 72 ժամ է, այլ ոչ թե 3 օր, եւ դատախազը չունի վարչական ձերբակալման ժամկետը երկարաձգելու իրավասություն: Միեւնույն ժամանակ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դատախազությունն իրավասու է իրականացնելու հսկողություն վարչական ձերբակալման օրինականության նկատմամբ, ներառյալ՝ վարչական ձերբակալման ենթարկված անձանց՝ անազատության մեջ մնալու ժամկետների պահպանման նկատմամբ հսկողությունը, որի իրավական բովանդակային ծավալը չի կարող ներառել ձերբակալման ժամկետների երկարաձգումը:

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասը՝ սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի հետ համակարգային առումով փոխկա-

պակցված՝ օրենսգրքի 262-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրականության հարցին:

Օրենսգրքի 262-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Վարչական ձերբակալման ժամկետը հաշվվում է արձանագրություն կազմելու համար խախտողին բերելու պահից, իսկ հարբած վիճակում գտնվող անձին՝ նրա սքափվելու ժամանակից»: Մինչդեռ Սահմանադրության 16-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով՝ ձերբակալման ժամկետի հաշվարկն սկսվում է **ձերբակալման պահից**: Ընդ որում, Սահմանադրության 16-րդ հոդվածի 3-րդ մասը տարբերակում չի դնում այն հանգամանքների միջեւ, թե ձերբակալված անձը հարբած է, թե՛ ոչ: Հարկ է նաեւ արձանագրել, որ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2005 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված ՀՕ-32-Ն օրենքով վարչական կալանքի ինստիտուտն ուժը կորցրած է ճանաչվել, որպիսի պարագայում առավել քան կարելուովում է ձերբակալման պահից 72 ժամը լրանալուց հետո վարչական կարգով ձերբակալված անձին ազատ արձակելու հանգամանքը:

6. ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել նաեւ, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում առկա են բազմաթիվ հոդվածներ, որոնք շարունակում են հղում կատարել ԽՍՀՄ օրենսդրությանը, օգտագործել «ԽՍՀՄ տարածք», «պատգամավորների տեղական խորհուրդներ», «սոցիալիստական սեփականություն», «սոցիալիստական օրինականություն», «ներքին գործերի մարմիններ» եզրույթները, սահմանել վարչական իրավախախտումների մասին օրենսդրության բնագավառում ԽՍՀՄ իրավասությանը ենթակա հարցերը եւ այլն, ինչն առաջացնում է իրավական պետությանն անհարիր **իրավական վտանգ**, եւ դա այն դեպքում, երբ ՀՀ Սահմանադրության (27.11.2005թ. փոփոխություններով տեքստի) 117-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է. «Սահմանադրության փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո ... Ազգային ժողովը երկու տարվա ընթացքում համապատասխանեցնում է գործող օրենքները Սահմանադրության փոփոխություններին»: Ընդ որում, Սահմանադրության ընդունումից հետո օրենսգրքի մի շարք հոդվածներում նախկինում կատարված փոփոխությունների արդյունքում «ԽՍՀՄ» հապավումը փոխարինվել է «ՀՀ» հապավումով, իսկ մյուս հոդվածներում, այդ թվում՝ օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող 262-րդ հոդվածում, որում վերջին անգամ փոփոխություն է կատարվել ՀՀ Ազգային ժողովի կողմից 24.12.2004թ. ընդունված ՀՕ-68-Ն օրենքով, «ԽՍՀՄ» հապավումը շարունակում է պահպանվել:

Վերը նշված հիմնախնդրի առնչությամբ սահմանադրական դատարանը հարկ է համարում սույն գործով **կրկին անգամ արձանագրել** նման իրողությունը, որին անդրադարձել է նաեւ 19.09.2012թ. ՍԴՈ-1048 որոշման 6-րդ կետում: Նշված կետում սահմանադրական դատարանը հարկ է համարել նշել Վարչական իրավախախտումների վերաբերյալ **ՀՀ նոր օրենսգրքի ընդունման**, խորհրդային իրավակարգավորումների հատվածական փոփոխությունների ոչ նպատակահարմարության եւ առկա իրավակարգավորման շրջանակների հստակեցման անհ-

րաժեշտությունը՝ ելնելով միջազգային ժամանակակից փորձի ուսումնասիրման արդյունքներից: Վերոնշյալի առնչությամբ ՄԴՈ-1048 որոշման 6-րդ կետում սահմանադրական դատարանը նշել է նաեւ, որ, մասնավորապէս, դա վերաբերում է «իրավակարգավորումների հայեցակարգային ամբողջականության եւ միասնականության երաշխավորմանը, վարչաիրավական հարաբերություններում իրավասուբյեկտության շրջանակների որոշակիացմանը, իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու խնդրի համակարգային կանոնակարգմանը, վարչական պատասխանատվության] իրավական պատասխանատվության այլ տեսակներից (քաղաքացիական, քրեական) սահմանազատելու իրավական չափանիշների առավել հստակեցմանը եւ մի շարք այլ սկզբունքային՝ հայեցակարգային նշանակության հարցերին»:

Նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները նկատի ունենալով՝ ՀՀ վարչապետի 19.10.2010թ. թիվ 01/10.1 գրությամբ ՀՀ Ազգային ժողովին տեղեկացվել է, որ ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել է ՀՀ կառավարությունում քննարկվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նոր նախագիծ՝ օրենսդրական նախաձեռնության կարգով այն ՀՀ Ազգային ժողով ներկայացնելու համար: Սակայն սույն գործով սահմանադրական դատարանում ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցչի հայտարարության համաձայն՝ ՀՀ կառավարության կողմից 2010թ. նոյեմբերին նման նախագիծ ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով, սակայն 2011թ. փետրվարին այն հետ է կանչվել եւ մինչ օրս նոր նախագիծ չի ներկայացվել:

Նման իրավիճակը մարտահրավեր է ՀՀ իրավական անվտանգությանը, քանի որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի կիրառման, ինչպէս նաեւ նույն հոդվածի 13-րդ մասի պահանջները հաշվի առնելու դէպքում իրավակարգավորման այս ոլորտում պարզապէս իրավական քառս կարող է առաջանալ: Ուստի սահմանադրական դատարանը գտնում է, որ երկրում սահմանադրական օրինականության հաստատման տեսանկյունից անհետաձգելի անհրաժեշտություն է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքի ընդունումը: Իսկ մինչ այդ դատական պրակտիկան պետք է հնարավորինս առաջնորդվի ՀՀ Սահմանադրության 3-րդ եւ 6-րդ հոդվածների այն դրույթների պահանջներով, համաձայն որոնց՝ «Պետությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազատություններով՝ որպէս անմիջականորեն գործող իրավունք» եւ «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, եւ նրա նորմերը գործում են անմիջականորեն»: Բնականաբար, հաշվի պետք է առնվի նաեւ այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում վարչական կալանքի ինստիտուտն ուժը կորցրած է ճանաչվել 2005թ. դեկտեմբերի 16-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված ՀՕ-32-Ն օրենքով:

Միաժամանակ, ելնելով պետական իշխանության մարմինների գործառնությունների արդյունավետ իրականացման եւ ընդհանրապէս սահմանադրական

վերահսկողության համակարգի գործունեության արդյունավետության ապահովման անհրաժեշտությունից՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում սույն գործով կողմերի ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ սահմանադրական դատարան դիմելու անհրաժեշտությունը պետք է պայմանավորված լինի սահմանադրահրավական իրական վեճի առկայությամբ: Եթե դիմող եւ պատասխանող կողմերը համակարծիք են իրավական ակտի, տվյալ դեպքում՝ օրենքի այս կամ այն դրույթի եւ Սահմանադրության նորմերի միջեւ ենթադրյալ հակասության վերաբերյալ, ապա տվյալ դեպքում նշված հակասությունն անհրաժեշտ է վերացնել իրավական ակտն ընդունած մարմնի իրավասությունների շրջանակներում, ինչը պարզապես սահմանադրական պահանջ է:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 260-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Վարչական իրավախախտում կատարելու համար **ձերբակալված անձի խնդրանքով** նրա գտնվելու վայրի մասին տեղյակ են պահվում հարազատները, աշխատանքի կամ ուսման վայրի ադմինիստրացիան» դրույթը ճանաչել ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներից հակասող եւ անվավեր:

2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները ճանաչել ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 3-րդ մասի եւ 103-րդ հոդվածի 4-րդ եւ 5-րդ մասերի պահանջներից հակասող եւ անվավեր:

3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված՝ օրենսգրքի 262-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները ճանաչել ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 16-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներից հակասող եւ անվավեր:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**23 նոյեմբերի 2012 թվականի
ՍԳ.Ո- 1059**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՍԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ (22.12.2010թ. ՀՕ-243-Ն) 14-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ
3-ՐԳ ՄԱՍԻ 2-ՐԳ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ, 29-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 2-ՐԳ ՄԱՍԻ 6-ՐԳ
ԿԵՏԻ, 36-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԳ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ, 38-ՐԳ
ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԳ ԿԵՏԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

14 դեկտեմբերի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի,
Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,
Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչներ՝ ՀՀ
մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցներ Ա. Վարդանյանի,
Հ. Աբգարյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի
պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական
վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ս. Համբարձումյանի,
նույն բաժնի առաջատար մասնագետ Հ. Մարդարյանի,

գործով սահմանադրական դատարանի նիստին հրավիրված՝ ՀՀ կառավարության
ներկայացուցիչ՝ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության
սոցիալական ապահովության պետական ծառայության պետի առաջին տեղակալ Ս. Սախյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ

հողվածի 1-ին կետի, 101-րդ հողվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 68-րդ հողվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (22.12.2010թ. ՀՕ-243-Ն) 14-րդ հողվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության, 29-րդ հողվածի 2-րդ մասի 6-րդ կետի, 36-րդ հողվածի 1-ին մասի 2-րդ պարբերության, 38-րդ հողվածի 1-ին մասի 1-ին եւ 2-րդ կետերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 28.08.2012թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Լսելով գործով զեկուցողի հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի ներկայացուցիչների բացատրությունները, ՀՀ կառավարության ներկայացուցչի պարզաբանումները, հետազոտելով «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2010 թվականի դեկտեմբերի 22-ին եւ ուժի մեջ է մտել 2011 թվականի հունվարի 1-ից:

Հիշյալ օրենքի՝ դիմողի կողմից վիճարկվող իրավակարգավորումները նախատեսող 14-րդ, 29-րդ, 36-րդ եւ 38-րդ հողվածների հետեւյալ դրույթներում սահմանվում են.

- «Մասնակի կենսաթոշակ նշանակելու պայմանները եւ ժամկետը» վերտառությամբ 14-րդ հողվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունում՝

«Համատեղությամբ աշխատած ժամանակահատվածը մասնագիտական աշխատանքային ստաժում չի հաշվարկվում».

- «Աշխատանքային ստաժում հաշվառվող ժամանակահատվածները» վերտառությամբ 29-րդ հողվածի 2-րդ մասի 6-րդ կետում՝

«6) ուսումնական հաստատություններում, բացառությամբ հանրակրթական ուսումնական հաստատությունների, առկա (ցերեկային) ուսման ժամանակահատվածը՝ վեց տարուց ոչ ավելի».

- «Չվճարված կենսաթոշակի գումարը վճարելը» վերտառությամբ 36-րդ հողվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունում՝

«Եթե կենսաթոշակը վճարելը դադարեցվել է, ապա չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է դիմելու կամ կենսաթոշակ վճարելը վերսկսելու (կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելու) համար հիմք համարվող տեղեկատվությունը ստացվելու ամսվան նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել».

- «Կենսաթոշակը վերահաշվարկելը» վերտառությամբ 38-րդ հողվածի 1-ին մասի 1-ին եւ 2-րդ կետերում՝

«1) փոխվել է հիմնական կենսաթոշակի չափը կամ աշխատանքային ստա-
ժի մեկ տարվա արժեքը՝ տվյալ ամսվա 1-ից.

2) տարիքային կամ հաշմանդամության կենսաթոշակ նշանակելուց (վերա-
հաշվարկելուց) 12 ամիս հետո կենսաթոշակառուն ներկայացրել է կենսաթոշա-
կը նշանակելուց (վերահաշվարկելուց) հետո առնվազն վեց ամիս աշխատած
լինելու մասին տեղեկանք՝ դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայաց-
նելու ամսին հաջորդող ամսվա 1-ից»:

Օրենքի 36-րդ եւ 38-րդ հոդվածների վերոհիշյալ դրույթները գործող խմ-
բագրությամբ նախատեսվել են «Պետական կենսաթոշակների մասին» Հայաս-
տանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ
կատարելու մասին» 2012 թվականի մարտի 19-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից
ընդունված օրենքով (ՀՕ-100-Ն):

2. Դիմողը, հիմք ընդունելով անձի իրավական վիճակը վատթարացնող
օրենքների եւ այլ իրավական ակտերի հետադարձության անբույլատրելիության
վերաբերյալ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված
սկզբունքը, ինչպես նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի 15.01.2008թ. ՄԴՈ-
723 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, գտնում է, որ ՀՀ
աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության մարմինների կող-
մից վեճի առարկա նորմերի կիրառմանը հետադարձության ուժ է հաղորդվել,
ինչը հանգեցրել է մարդկանց իրավունքների խախտման:

Ըստ դիմողի /*բառացի մեջբերում*՝ «Վերոնշյալ դրույթների վերլուծությու-
նից բխում է, որ սույն դրույթները անձի իրավական վիճակը վատթարացնող
բնույթ են հետեւաբար հետադարձ ուժ չունեն, սակայն գրանցվել են դեպքեր,
երբ դրանց կիրառման բնագավառում ձեւավորված իրավակիրառ պրակտիկա-
յում այդ դրույթներին տրվել է հետադարձ ուժ»:

Ինքնին չվիճարկելով առկա իրավակարգավորման իրավաչափությունը եւ
սահմանադրականությունը՝ դիմողը գտնում է, որ գործադիր իշխանության մար-
մինների պրակտիկան՝ այդ դրույթների կիրառման առումով, այնպիսին է, որ
հանգեցրել է կենսաթոշակառուների իրավական վիճակի վատթարացման: Ուս-
տի, ըստ դիմողի, վեճի առարկա նորմերի սահմանադրականության խնդիրը
պայմանավորված է կիրառման փուլում դրանց հաղորդված բովանդակությամբ,
քանի որ դրանք կիրառվել են հետադարձ ուժով, տարածվել են «... օրենքում
կատարված փոփոխությունների արդյունքում ծագած իրավահարաբերություն-
ների վրա», ինչն իրավաչափ չէ, չի բխում ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդ-
վածի 3-րդ մասում ամրագրված դրույթի պահանջից: Դատաքննության
ընթացքում իր բացատրությունները ներկայացնելիս դիմող կողմի ներկայացու-
ցիչը շեշտեց, որ «... Վերոնշյալ դրույթների բնույթի Սահմանադրության համա-
պատասխանության հարցը մեր կողմից չի բարձրացվում, քանի որ դրանք
հանդիսանում են պետության կողմից որդեգրած կենսաթոշակային քաղաքա-
կանության արդյունք: Սակայն վերոնշյալ գործող եւ նախկինում նախատես-
ված դրույթների համեմատական վերլուծությունից բխում է, որ գործող

դրույթները անձի իրավական վիճակը վատթարացնող բնույթ ունեն, ուստի հետադարձ ուժ չեն կարող ունենալ», ինչը, ըստ դիմողի, պրակտիկայում չի երաշխավորվել:

Որպես վեճի առարկա նորմերի հետադարձ ուժով կիրառման փաստարկ դիմողը վկայակոչում է այն հանգամանքը, որ, օրինակ, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ գործող օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությամբ, ինչպես նաև 29-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված վեճի առարկա դրույթները 2002թ. ընդունված «Պետական կենսաթոշակների մասին» ՀՕ-591-Ն ՀՀ օրենքով նախատեսված չեն եղել:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածը մինչև 2012թ. մարտի 19-ի ՀՕ-100-Ն օրենքով փոփոխությունները, ինչպես փաստում է դիմողը, նախատեսում էր չվճարված կենսաթոշակի գումարի վճարում՝ դիմելու ամսվան նախորդող երեք տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել, մինչդեռ փոփոխությունների արդյունքում այդ ժամանակահատվածը սահմանվել է մեկ տարի, որով, ըստ դիմողի, խախտվում է անձի՝ նախկին օրենսդրությամբ սահմանված երեք տարվա համար վճարվող կենսաթոշակի իրավունքը եւ չի երաշխավորվում նրա լեզվտիմ ակնկալիքները:

Գործող օրենքի՝ կենսաթոշակի վերահաշվարկմանը վերաբերող 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 2-րդ կետերում նախատեսված իրավակարգավորումը վկայակոչելով՝ դիմողը գտնում է, որ արտոնյալ պայմաններով աշխատանքային ստաժի հաշվարկման կարգ նախատեսված չլինելը հակասում է ՀՀ սահմանադրական դատարանի 15.01.2008թ. ՍԳ-Ո-723 որոշման պահանջներին, ինչպես նաև անձին գրկում է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ նախկին օրենքով սահմանված՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի վերահաշվարկի իրավունքից:

Իր փաստարկները հիմնավորելու համար դիմող կողմը սահմանադրական դատարան է ներկայացրել ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից, ՀՀ սոցիալական ապահովության պետական ծառայությունից ստացված գրությունների պատճեններ:

3. Պատասխանող կողմը գտնում է, որ «Անձի իրավական վիճակի վատթարացման կամ խստացման ձեւերն օրենքում չեն արտահայտվում: Դրանք ճանաչվում են որպես այդպիսին դատական պրակտիկայում, մասնավորապես՝ իրավակիրառական պրակտիկայում եւ պահանջում են սահմանադրական՝ Սահմանադրության տառին եւ ոգուն համապատասխան մեկնաբանություն»: Հաշվի առնելով վերոգրյալը՝ պատասխանող կողմը կարծում է, որ վիճարկվող նորմերն ինքնին սահմանադրականության խնդիր չեն առաջացնում:

Ժխտելով վիճարկվող նորմերը հետադարձությամբ կիրառելու փաստը, շեշտելով, որ առկա չէ նման դատական պրակտիկա, պատասխանող կողմը գտնում է, որ այդպիսի կիրառման բացառմանն է կոչված «Պետական կենսաթոշակների մասին» 2010թ. ընդունված ՀՀ օրենքի «Անցումային դրույթների»

55-րդ հոդվածը: Որպես լրացուցիչ փաստարկ պատասխանող կողմը վկայակոչում է նաև «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» ՀՀ կառավարության 2011թ. մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշումը:

Անդրադառնալով վեճի առարկա առանձին դրույթների վերաբերյալ դիմողի փաստարկներին՝ պատասխանողը գտնում է, որ, մասնավորապես՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ գործող օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությամբ, ինչպես նաև 29-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված վեճի առարկա դրույթները ոչ թե առաջին անգամ ամրագրվել են սույն օրենքում, այլ նախատեսվել են «Պետական կենսաթոշակների մասին» 2002թ. ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին 2008թ. դեկտեմբերի 26-ի ՀՕ-35-Ն ՀՀ օրենքով: Ուստի գործող օրենքի այդ դրույթներում հետադարձության խնդիր չէր կարող առաջանալ:

Այսուհանդերձ, պատասխանող կողմը գտնում է, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում 2012թ. մարտին ՀՕ-100-Ն ՀՀ օրենքով կատարված փոփոխությունն այնքանով, որքանով անցումային դրույթներում նորմեր չի նախատեսում այն անձանց կենսաթոշակային իրավունքների ապահովման ուղղությամբ, ովքեր ՀՀ-ից մեկնել եւ վերադարձել են՝ պահպանելով ՀՀ օրենսդրության պահանջները, պրակտիկայում կարող է խնդիրներ առաջացնել այդ անձանց իրավունքների պաշտպանության առումով:

4. ՀՀ կառավարության ներկայացուցիչը, պատասխանելով սահմանադրական դատարանի հարցերին եւ ներկայացնելով կենսաթոշակային հարաբերությունների՝ սույն գործով վիճարկվող կարգավորումների եւ դրանց պրակտիկայի վերաբերյալ ՀՀ կառավարության տեսակետը, նշեց, որ վիճարկման առարկա նորմերի հետադարձ կիրառման մասին խոսք լինել չի կարող, քանի որ «Պետական կենսաթոշակների մասին» 2010թ. ընդունված ՀՀ օրենքի «Անցումային դրույթների» 55-րդ հոդվածի նորմերը նախատեսել են բավարար իրավակարգավորումներ անձանց իրավական վիճակի վատթարացումը բացառելու համար, հետեւաբար, անձինք նաև համապատասխան դիմումների հիման վրա իրացրել են իրենց նախկին իրավունքները: Միաժամանակ, ՀՀ կառավարության ներկայացուցիչը նշեց, որ 2012 թվականի մայիսի 5-ից (ՀՕ-100-Ն օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից) մինչև սեպտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում ստացվել է չվճարված կենսաթոշակի գումարը վճարելու 2490 դիմում, որոնք, որպես կանոն, ներկայացվել են տարբեր ժամանակներում Հայաստանի Հանրապետությունից բացակայած ՀՀ քաղաքացիների կողմից:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածում առկա իրավակարգավորման եւ չվճարված կենսաթոշակի վճարման ժամկետի սահմանափակման վերաբերյալ օրենսդրական փոփոխության առնչությամբ ՀՀ կառավարության ներկայացուցիչը նշեց, որ այն պայմանավորված է եղել կենսաթոշակառուների հաշվառման համակարգի բարելավման, կենսաթոշակների վճարման բնագավառներում առկա չարաշահումները վերացնելու, բյու-

ջետալին միջոցներն արդյունավետ ծախսելու, ինչպես նաև ՀՀ-ում մշտապես բնակվող կենսաթոշակառուների իրավունքների պաշտպանության երաշխիքներն ամրապնդելու անհրաժեշտությամբ:

5. Անդրադառնալով վեճի առարկա իրավադրույթների առնչությամբ կողմերի փաստարկներին՝ ՀՀ սահմանադրական դատարանը նախ արձանագրում է, որ դիմող կողմը գործնականում չվիճարկելով «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-243-Ն) 14-րդ, 29-րդ, 36-րդ եւ 38-րդ հոդվածների՝ իր կողմից մատնանշված դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը, ներկայացրած հիմնավորումներով ըստ էության վիճարկում է դրանց կիրառման իրավաչափությունը՝ ելնելով իրավակիրառական պրակտիկայում դրանց տրված մեկնաբանություններից եւ իր եզրահանգումներից:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ մյան դեպքում վերոհիշյալ նորմերի իրավաչափ կիրառման եւ դրա հետ ուղղակիորեն առնչվող անձանց իրավունքների պաշտպանության հարցերը կարող էին օրենսդրությամբ սահմանված կարգով լուծում ստանալ ընդհանուր իրավասության կամ վարչական դատարանում: Բանն այն է, որ վարչական մարմինն իրավասու չէ ի պաշտոնե մեկնաբանել օրենքի նորմը եւ ձեւավորել լեգիտիմ իրավակիրառական պրակտիկա, **դա բացառապես դատական իշխանության իրավասության շրջանակներում է:** Գործում առկա չէ որեւէ օրինակ, որ օրենքի նորմի հետադարձությամբ կիրառումը պայմանավորվել է դատարանի կողմից տվյալ նորմին տրված մեկնաբանությամբ: **Գիմողի բոլոր փաստարկները վերաբերում են վարչական մարմնի գործողության իրավաչափության խնդրին:**

Միաժամանակ, պարզելով, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 14-րդ եւ 29-րդ հոդվածներում նախատեսված վիճարկվող իրավակարգավորումները սահմանվել եւ գործողության մեջ են դրվել «Պետական կենսաթոշակների մասին» դեռեւս նախկին ՀՀ օրենքի (ՀՕ-519-Ն) փոփոխությունների արդյունքում (26.12.2008թ. ՀՕ-35-Ն օրենք), եւ հետագայում իրենց արտացոլումն են գտել «Պետական կենսաթոշակների մասին» 2010թ. ընդունված ՀՀ օրենքում, սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի կողմից այդ նորմերի հետադարձ ուժով կիրառման հանգամանքի շեշտադրումը՝ դրանց սահմանադրականության խնդրի առաջադրման առումով, հիմնավոր չէ: Ինչ վերաբերում է չորս տարուց ավելի գործող իրավանորմի ոչ իրավաչափ կիրառմանը վարչական մարմնի կողմից, ապա դա, ինչպես նշվեց, կարող էր քննության առարկա դառնալ համապատասխան իրավասությամբ օժտված ընդհանուր իրավասության կամ վարչական դատարանում՝ բացահայտելու համար նաև կոնկրետ գործի փաստական հանգամանքները:

Ելնելով վերոգրյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ առկա են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետով «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 14-րդ եւ 29-րդ հոդվածների վերոհիշյալ իրավակարգավորումների մասով գործի վարույթը կարճելու հիմքեր:

6. Ինչ վերաբերում է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ գործող օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 2-րդ կետերում նախատեսված իրավակարգավորումների վիճարկմանը, ապա սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողի կողմից մատնանշված նախկին իրավակարգավորումը, որը նախատեսված է եղել նույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի 2-րդ պարբերությունում, դուրս է այդ հոդվածի գործող խմբագրությամբ 1-ին մասի 1-ին եւ 2-րդ կետերի իրավակարգավորման շրջանակներից, եւ գործող օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 2-րդ կետերը՝ դիմողի կողմից բերվող փաստարկների տեսանկյունից, չեն փոփոխվել, ինքնին սահմանադրականության խնդիր չեն հարուցում՝ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին համապատասխան կիրառելու տեսանկյունից:

7. Սույն գործով սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում առանձին անդրադառնալ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-243-Ն) 36-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված իրավակարգավորման սահմանադրականության գնահատմանն այնքանով, որքանով փոփոխությունը կատարվել է 2012թ. մարտի 19-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Պետական կենսաթոշակների մասին ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-100-Ն ՀՀ օրենքով եւ առնչվում է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված սկզբունքի երաշխավորմանը:

Կենսաթոշակային ապահովության հետ կապված հարաբերությունների օրենսդրական կարգավորման անհրաժեշտությունը բխում է ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի, 48-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի եւ 83.5-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներից: ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությունից է բխում Հայաստանի Հանրապետության, որպես սոցիալական պետության, պարտականությունը պետական բյուջեի միջոցների հաշվին օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով անձանց պետական կենսաթոշակով ապահովելը: Այդ հարաբերությունների կարգավորմանն է կոչված «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը, որը 22.12.2010թ. ընդունվելով ՀՀ Ազգային ժողովի կողմից (ՀՕ-243-Ն), ենթարկվել է մի շարք փոփոխությունների՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-100-Ն):

Մինչեւ կենսաթոշակների մասին վերոհիշյալ օրենքի ընդունումը, պետական կենսաթոշակային հարաբերությունները կարգավորվել են 2002թ. նոյեմբերի 19-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-519-Ն), որը 2002-2010թթ. բազմաթիվ փոփոխություններից ու լրացումներից հետո ուժը կորցրել է 01.01.2011թ. (բացառությամբ 9-րդ գլխի, որն ուժը կորցնելու է 01.01.2013թ.)՝ կապված կենսաթոշակային ապահովագրության համակարգում անհատական (անձնավորված) հաշվառման նախկին կարգի ժամանակավոր պահպանման անհրաժեշտության հետ):

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-243-Ն) 36-րդ հոդվածի փոփոխությամբ նախատեսված իրավակարգավորման բովանդակությունը ենթադրում է փոխադարձ իրավունքների ու պարտականությունների միասնության հիմքով կարգավորվող կենսաթոշակային իրավահարաբերություններ, որի շրջանակներում է պետությունը երաշխավորում ապահովել անձին (ՀՀ քաղաքացուն, ՀՀ երկքաղաքացուն, քաղաքացիություն չունեցող անձին, օտարերկրյա քաղաքացուն) չվճարված կենսաթոշակի գումարի վճարումը՝ որոշակի իրավապայմանների առկայության (կենսաթոշակառուի կողմից օրենքով նախատեսված պարտականությունների կատարման) դեպքում: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ օրենքը սահմանազատում է «**կենսաթոշակի իրավունք**» եւ «**կենսաթոշակ ստանալու իրավունք**» հասկացությունները: Համաձայն «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի՝ «Սույն օրենքով սահմանված պայմանները բավարարելու դեպքում **կենսաթոշակի իրավունք ունեն** Հայաստանի Հանրապետության քաղաքացին, Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին, օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը, եթե սույն օրենքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան սահմանված չէ»: Ընդ որում, կենսաթոշակի իրավունքի իրավաճանաչման համար օրենքի նույն հոդվածը նախատեսում է, որ առկա պետք է լինեն հետեւյալ պայմանները.

- անձը պետք է կենսաթոշակ ստանալու իրավունք ունենա,
- օրենսդրությամբ սահմանված կարգով դիմի իրավասու պետական մարմնին,
- Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունք ունենա եւ բնակվի Հայաստանի Հանրապետությունում (օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը),
- կենսաթոշակ չստանա այն պետությունից, որի քաղաքացին է (ՀՀ-ում փախստականի կարգավիճակ չունեցող օտարերկրյա քաղաքացին),
- ՀՀ բնակչության պետական ռեզիստրում ՀՀ բնակչության վայրի հասցեում հաշվառված լինի (ՀՀ երկքաղաքացին),
- կամավոր սկզբունքով չիրացնի պետական բյուջեից ֆինանսավորվող մեկ այլ կենսաթոշակի իրավունք:

Սիւժամանակ, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «Սույն օրենքով կենսաթոշակի իրավունք ունեցող անձը **կենսաթոշակ ստանալու իրավունք ունի**, եթե օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել է կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնի համապատասխան ստորաբաժանում ... եւ նրան նշանակվել է կենսաթոշակ...»: Ակնհայտ է, որ իրավունքի իրացումը ենթադրում է նաեւ պարտականությունների պատշաճ կատարում:

Վերոհիշյալ համապատասխան իրավապայմանների բավարարման դեպքում է պետությունը պարտավոր մեկ տարվա ժամկետային սահմանափակմամբ կենսաթոշակի իրավունք ունեցող անձին վճարել չվճարված կենսաթոշակի գումարը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է կենսաթոշակային հարաբերությունների բաղադրիչ տարր հանդիսացող վերոհիշյալ իրավակարգավորման ընդհանուր օրինաչափ անհրաժեշտությունը՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված՝ անձի սոցիալական ապահովության իրավունքի իրացումը երաշխավորելու, ինչպես նաև այդ ապահովության ծավալի ու ձևի՝ օրենքով սահմանված ողջամիտ դրսեւորման տեսանկյունից: Վերջինիս իրավակարգավորման բացառիկ իրավասությունը վերապահված է օրենսդիր մարմնին՝ ՀՀ Ազգային ժողովին, որը կոչված է իրականացնելու այդ բնագավառի օրենսդրական քաղաքականությունը՝ առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի, 48-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի եւ 83.5-րդ հոդվածի պահանջներով:

Սակայն ցանկացած իրավակարգավորում պետք է հետապնդի օրինաչափ նպատակ եւ նախատեսի այդ նպատակին հասնելու իրավաչափ երաշխիքներ: Այս տեսանկյունից «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-243-Ն) 36-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված իրավակարգավորման սահմանադրականության գնահատման խնդիրն ուղղակիորեն առնչվում է նաև չվճարված կենսաթոշակի գումարի վճարման ողջամիտ ժամկետի խնդրին, քանի որ ՀՕ-100-Ն օրենքով կատարված փոփոխության արդյունքում էապես փոխվել է չվճարված կենսաթոշակի գումարի վճարման ժամկետային պայմանը: Համաձայն դրա՝ կենսաթոշակի վճարումը վերսկսվում է դրա համար օրինական հիմքեր առաջանալու ամսվան նախորդող մեկ տարվա համար՝ նախկինում սահմանված երեք տարվա փոխարեն:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրինաստեղծ գործունեության խնդիրն է ապահովել Սահմանադրությամբ նախատեսված իրավունքների ու ազատությունների **երաշխավորված** եւ **համալիր** իրացումը՝ որպես իրավունքի գերակայության, իրավական պետության կայացման ու զարգացման անհրաժեշտ նախապայման: Մասնավորապես, իրավակարգավորման ձևերի ու միջոցների ընտրությունը, դրանցով անձանց իրավունքների գործադրման առավել արդյունավետ երաշխիքներ ստեղծելու օրինաչափ նպատակ հետապնդելը չեն կարող իրացվել ի հաշիվ սահմանադրաիրավական որեւէ նորմի ու սկզբունքի անտեսման:

Տվյալ դեպքում իրավունքի գերակայության սկզբունքից ելնելով, ինչպես նաև օրենսդրական տեխնիկայի տեսանկյունից անհրաժեշտ է իրավական ակտի փոփոխության կամ լրացման արդյունքում նոր իրավակարգավորումները ժամանակի մեջ եւ անձանց նկատմամբ գործողության մեջ դնելու հստակ կանոնների պահպանումը՝ նրանց իրավունքների իրացման իրավաչափ պայմանների երաշխավորման նպատակով: Դա առավել եւս կարելու է այն դեպքերում, երբ խնդիրն առնչվում է հնարավոր փոփոխությունների արդյունքում անձի իրավունքների իրացման պայմանների խստացմանը:

Քննության առարկա գործի շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ նման փոփոխությունների գործադրումը պետք է զուգորդվի օրենքում այնպիսի իրավապայմանների սահմանմամբ, որոնք կերաշխավորեն, մասնավորապես, կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց կողմից կենսա-

թոշակի ստացման իրավունքի անարգել իրականացումը եւ չեն խաթարի նրանց լեզհտիմ ակնկալիքները: Տվյալ պարագայում խնդիրն առնչվում է ՀՀ Ազգային ժողովի կողմից 19.03.2012թ. ընդունված ՀՕ-100-Ն օրենքին: Բացի այն, որ այդ օրենքի ուժի մեջ մտնելու պայմանները (23-րդ հոդված) գլխավորապես տարածվել են ՀՀ երկքաղաքացիների նկատմամբ, չեն նախատեսվել նաեւ նոր իրավակարգավորումները գործադրելու ողջամիտ ժամկետներ՝ կապված անձանց հնարավոր գործողություններն այդ փոփոխություններով պայմանավորված պահանջներին համապատասխանեցնելու հետ: ՀՀ սահմանադրական դատարանը, հիմնվելով կենսաթոշակային հարաբերությունների իրավակարգավորումների սահմանադրականության վերաբերյալ իր նախորդ որոշմամբ (ՄԴՈ-1050) արտահայտած իրավական դիրքորոշումների վրա, հատկապես կարեւորում է կենսաթոշակի իրավունք ունեցող այն անձանց չվճարված կենսաթոշակի գումարի վճարման կայուն երաշխիքների առկայությունը, որոնք օրինական հիմքերով բացակայում են Հայաստանի Հանրապետությունից: Վերջիններիս առնչությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-243-Ն) 36-րդ հոդվածում առաջարկված փոփոխությունները «Հյուպատոսական ծառայության մասին» ՀՀ օրենքի 24-րդ, «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածներով, «ՀՀ-ում բնակչության պետական ռեգիստրի համակարգ ներդնելու մասին» ՀՀ կառավարության 2005թ. թիվ 1231-Ն որոշման 10-րդ կետով սահմանված կարգով օտարերկրյա պետություններում ՀՀ հյուպատոսական հիմնարկներում հաշվառված անձանց նկատմամբ համաչափ կիրառելու ողջամիտ նվազագույն ժամկետը՝ որպես օրենքի անցումային դրույթներով այդ նորմի ուժի մեջ մտնելու ժամկետ, կարող էր լինել առնվազն վեց ամիսը: Տվյալ ժամանակահատվածում պետությունը կարող էր իրացնել նաեւ իր պոզիտիվ պարտականությունը՝ համապատասխան հյուպատոսական ծառայությունների միջոցով կամ այլ կերպ իրագեկելով օրենսդրությամբ սահմանված կարգով այլ երկրներում հաշվառման կանգնած ՀՀ օրինապաշտ քաղաքացիներին՝ իրենց իրավունքների իրացմանն առնչվող օրենսդրական փոփոխությունների մասին, որպեսզի վերջիններս ի վիճակի լինեին ձեւավորել օրենսդրական փոփոխություններին համարժեք լեզհտիմ ակնկալիքներ: Այսինքն՝ իրավունքի իրացման պայմանների փոփոխությունները կարող են լինել սկզբունքորեն իրավաչափ, եթե հետապնդում են օրինաչափ նպատակներ եւ իրացվում են այդ նպատակին համաչափ միջոցներով ու ձեւերով: Ի դեպ, սույն գործով պատասխանող կողմը նույնպես ընդունում է օրենքի՝ վեճի առարկա նորմի կիրառման համար անցումային որոշակի ժամանակահատվածի անհրաժեշտությունը՝ մարդկանց իրավունքների պաշտպանության եւ սահմանադրականության խնդիր չառաջացնելու տեսանկյունից:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում վերոհիշյալ օրենքով չի պահպանվել իրավակարգավորման համաչափության սկզբունքը նշված կատեգորիայի անձանց նկատմամբ՝ հաշվի չի առնվել նրանց լեզհտիմ ակնկալիքների իրացման հնարավորությունը:

8. Սահմանադրական դատարանն իր՝ ՍԳՈ-649, ՍԳՈ-723, ՍԳՈ-758, ՍԳՈ-881, ՍԳՈ-1000 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումներով բազմիցս, այդ թվում՝ կենսաթոշակային հարաբերությունները կարգավորող նորմերի սահմանադրականությունը որոշելու վերաբերյալ գործերով, արձանագրել է անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքին եւ այլ իրավական ակտերին հետադարձ ուժ հաղորդելու անթույլատրելիությունը, կարեւորելով, որ «... անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելման սկզբունքը՝ իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ, կոչված է ապահովելու լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքը», եւ որ անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելքը «... հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության եւ իրավական պետության սկզբունքների կարեւոր բաղադրատարրերից մեկը: Այդ սկզբունքը միաժամանակ հանդես է գալիս որպէս իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարեւոր երաշխիք: Օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքից բխում է այն արգելքը, համաձայն որի՝ անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա: Նման պարտավորություն է նաեւ ստանձնել Հայաստանի Հանրապետությունը մի շարք միջազգային պայմանագրերով»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում հաստատված չափանիշների համաձայն՝ «... սոցիալական օրենսդրության, այդ թվում՝ կենսաթոշակների ոլորտում, պետություններն ունեն հայեցողության լայն շրջանակ, որը ելնելով սոցիալական արդարության եւ տնտեսական բարեկեցության շահերից, կարող է իրավաչափորեն հանգեցնել բնակչությանը վճարվող կենսաթոշակի գումարի կարգավորմանը, հարմարեցմանը եւ նույնիսկ նվազեցմանը: Այնուամենայնիվ, ցանկացած այսպիսի միջոց պետք է կիրառվի ոչ խտրական ձեւով եւ համապատասխանի համաչափության պահանջներին: Այդ պատճառով, օրենսդրին տրված հայեցողության շրջանակը քաղաքականության ընտրության հարցում պետք է լինի լայն, եւ նրա կողմից «հանրային շահի» գնահատումը պետք է հարգվի, եթե այն ակնհայտորեն զուրկ չէ ողջամիտ հիմնավորումից» (Carson and Others v. The United Kingdom [GC], cited above, p. 61; Andrejeva v. Latvia [GC], cited above, p. 83; as well as Moskal v. Poland, no. 10373/05, p. 61, 15 September 2009): Մեկ այլ գործով դատարանը կարելու է, որ. «Չնայած 1-ին Արձանագրության 1-ին հոդվածը չի կարող սահմանափակել պետության ազատությունը սոցիալական ապահովության համակարգի շրջանակներում վճարվող գումարի չափի կամ տեսակի ընտրության հարցում, կարելու է նաեւ ստուգել արդյոք դիմումատուի՝ սոցիալական ապահովության համակարգի շրջանակներում գումար ստանալու իրավունքը խախտվել է այնպես, որը հանգեցրել է նրա կենսաթոշակի իրավունքի էության աղավաղմանը» (Stec and Others v. The United Kingdom [GC], no 65731/01, p. 53, ECHR 2006-VI, Wiczczonek v. Poland, no. 18176/05, p. 57, 8 December 2009):

Ըստ կենսաթոշակային հարաբերությունների իրավակարգավորման բնագավառում ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ «... օրենսդիրն իրավասու է օրենսդրական փոփոխությունների արդյունքում սահմանելու կենսաթոշակի հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման լիովին նոր համակարգ: Սակայն նման փոփոխությունները չեն կարող վերացնել այն կենսաթոշակները, այդ թվում՝ արտոնյալ կարգով նշանակվող, որոնք ստանալու իրավունքն անձը ձեռք է բերել նախկինում գործող օրենսդրության հիման վրա: Եթե օրենքն արդեն սահմանել է կենսաթոշակի տեսակները, կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց շրջանակը, կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պայմանները, կենսաթոշակի չափը եւ վճարման պայմանները, **պետության համար ծագում է պարտականություն երաշխավորելու կենսաթոշակի իրավունքի առնչությամբ լեզիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի եւ իրավական որոշակիության սկզբունքների իրացումը**» (ՄԴՈ-723):

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերոհիշյալ իրավական դիրքորոշումները (ելնելով նաեւ միջազգային իրավական փորձից) անվերապահորեն կիրառելի են նաեւ սույն գործով քննության առարկա իրավակարգավորման նկատմամբ, եւ իրավակիրառական պրակտիկան պետք է ընթանա այդ ուղղությամբ: Իսկ օրենսդիր մարմնի խնդիրն ու սահմանադրաիրավական պարտականությունն է օրինաստեղծ գործունեությունն իրականացնել ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված նորմերի ու սկզբունքների, այդ թվում՝ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսված իրավապայմանի համալիր հաշվառմամբ: Զննության առարկա օրենքի եւ ՀՀ օրենսդրական մի շարք այլ ակտերի իրավանորմերի պատշաճ կատարումը երաշխավորելու համար **ՀՀ սահմանադրական դատարանը կարեւորում է նաեւ բնակչության պետական ռեզիստրի վարման իրավակարգավորման հետագա բարելավման խնդիրը եւ ՀՀ օրենսդրական զարգացումների ներկա վիճակին դրա ներդաշնակելու անհրաժեշտությունը:**

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց:**

1. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (22.12.2010թ. ՀՕ-243-Ն) 14-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերության մասով գործի վարույթը կարճել:

2. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (22.12.2010թ. ՀՕ-243-Ն) 29-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի մասով գործի վարույթը կարճել:

3. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (22.12.2010թ. ՀՕ-243-Ն) 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերություն

նը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում, եւ այն ընդունման պահից վեց ամսվա ընթացքում չէր կարող կիրառվել Հայաստանի Հանրապետությունից ժամանակավոր բացակայած՝ Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիների նկատմամբ, ովքեր «Հյուպատոսական ծառայության մասին» ՀՀ օրենքի 24-րդ, «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածներով, «ՀՀ-ում բնակչության պետական ռեգիստրի համակարգ ներդնելու մասին» ՀՀ կառավարության 2005թ. թիվ 1231-Ն որոշման 10-րդ կետով սահմանված կարգով օտարերկրյա պետություններում հյուպատոսական հաշվառման են կանգնած եղել:

4. «Պետական կենսաթղչակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (22.12.2010թ. ՀՕ-243-Ն) 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 2-րդ կետերը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

5. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**14 դեկտեմբերի 2012 թվականի
ՍԳՈ- 1061**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ՆՈՐԱ ԷՎՈՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ
412-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

18 դեկտեմբերի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչ՝ փաստաբան Ս. Հովհաննիսյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ս. Համբարձումյանի եւ նույն բաժնի առաջատար մասնագետ Հ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Նորա Էվոսյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Ն. Էվոսյանի՝ 27.08.2012թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Սահմանադրական դատարանի՝ սույն գործով զեկուցողի 03.12.2012թ. թիվ ՍԳԱ-13 գրությամբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի նախագահից պա-

հանջվել է տասնօրյա ժամկետում ՀՀ սահմանադրական դատարանին տրամադրել մեկ տարվա կտրվածքով բոլոր դատական ակտերի՝ դատապարտյալին, արդարացվածին, նրանց պաշտպաններին եւ օրինական ներկայացուցիչներին, մեղադրողին, տուժողին եւ նրա ներկայացուցչին, ինչպես նաեւ քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին ուղարկման ժամկետների մասին ամփոփ տեղեկատվություն:

Սահմանադրական դատարանում 13.12.2012թ. մուտքագրվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի նախագահի 12.12.2012թ. թիվ ԳԳ-8-Ե-18019/12 գրությունը, որով հայտնվել է հետեւյալը. «Նկատի ունենալով, որ 2012թ.-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում կայացվել է 1046 գործն ըստ էության լուծող դատական ակտ, 10-օրյա ժամկետում Ձեր խնդրանքը բավարարել հնարավոր չէ:

Միաժամանակ հայտնվում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 402 հոդ. 2.-րդ մասով սահմանված 3 օրվա ժամկետը ողջամիտ չէ եւ այդ ժամկետի պահպանումը հաճախակի դժվարություններ է առաջացնում»:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի նախագահի 12.12.2012թ. թիվ ԳԳ-8-Ե-18019/12 գրությունը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Յ.**

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի հունիսի 1-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Դատական ակտերի բողոքարկման ժամկետները» վերտառությամբ 412-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Վճռաբեկ բողոք կարող է բերվել վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ՝ այդ ակտը ստանալու պահից 15-օրյա ժամկետում, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. դիմողի մասնակցությամբ մահվան ելքով ավտովթարի կապակցությամբ 19.08.2011 թվականին Սպիտակի քննչական բաժնի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ, իսկ 16.11.2011 թվականին որոշում է կայացվել դիմողին որպես մեղադրյալ ներգրավելու մասին, եւ նրան մեղադրանք է առաջադրվել: 24.03.2012 թվականին Լռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը կայացրել է մեղադրական դատավճիռ եւ դիմողին մեղավոր ճանաչելով՝ դատապարտել է ազատազրկման 2 տարի ժամկետով:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 04.06.2012 թվականի որոշմամբ մերժ-

վել է դիմողի վերաքննիչ բողոքը եւ ուժի մեջ թողնվել Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավճիռը: Նշված որոշումը դիմողն ստացել է 15.06.2012 թվականին, իսկ փոստում մուտք է եղել 14.06.2012 թվականին:

Վճռաբեկ բողոքը բերվել է 14.07.2012 թվականին /որոշումն ատանալուց 29 օր հետո/: 20.08.2012 թվականին ՀՀ վճռաբեկ դատարանը որոշում է կայացրել դիմողի վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին՝ այն պատճառաբանությամբ, որ վճռաբեկ բողոքը ժամկետանց է, եւ բաց է թողնվել վճռաբեկ բողոք բերելու համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մեկամսյա ժամկետը:

3. Վիճարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասի՝ «... գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում» դրույթի սահմանադրականությունը՝ դիմողը գտնում է, որ այն հակասում է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասին, 6-րդ հոդվածի 2-րդ մասին, 18 եւ 19-րդ հոդվածների 1-ին մասերին եւ 20-րդ հոդվածի 3-րդ մասին:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար դիմողը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասը եւ դրա հետ փոխկապակցված՝ նույն հոդվածի 2-րդ մասը միմյանց հետ համադրության մեջ առաջացնում են կրկնակի հակասություն, ինչով էլ հանգեցնում են իրավական անորոշության: Ըստ դիմողի՝ նշված հակասությունները հանգում են հետեւյալին՝ «Առաջին հակասությունը վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերին, որոնցից մեկը սահմանում է վճռաբեկ բողոք բերելու համար դատական ակտի հրապարակման պահից մեկամսյա ժամկետ, իսկ մյուսը՝ անձի վիճակը բարելավող հիմքով վճռաբեկ բողոք բերելու համար որեւիցե ժամանակաշրջանի սահմանափակում չի նախատեսում: Երկրորդ հակասությունը վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասում առկա երկու դրույթներին, երբ գործն ըստ էության լուծող վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել դատական ակտի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել դատական ակտի ստացման օրվանից 15-օրյա ժամկետում»: Դիմողը գտնում է, որ այս երկու հակասություններն ստեղծել են իրավական անորոշություն, որը հակասում է իրավական որոշակիության միջազգային սկզբունքին եւ ՀՀ Սահմանադրության՝ վերը թվարկված հոդվածներին:

Վճռաբեկ բողոք բերելու համար օրենքով նախատեսված մեկամսյա ժամկետը դատական ակտի հրապարակման պահից հաշվարկելու վերաբերյալ դրույթի հակասահմանադրականությունը դիմողը հիմնավորում է նաեւ այն հանգամանքով, որ դատական ակտը հասցեատիրոջն է առաքվում փոստով, ինչը տեւում է երկար ժամանակ, եւ արհեստականորեն կրճատվում է օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի, 6-րդ հոդվածի 2-րդ մասի, 18 եւ 19-րդ հոդվածների 1-ին մասերի եւ 20-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներին: Որպես իր դիրքորոշման հիմնավորում՝ պատասխանող կողմը հղում է կատարում «Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռում արտահայտված այն եզրահանգմանը, համաձայն որի՝ որպեսզի դատարանի մատչելիության իրավունքը լինի արդյունավետ, անձը պետք է իր իրավունքների իրականացմանը միջամտող իրավական ակտը վիճարկելու հստակ եւ իրական հնարավորություն ունենա: Որպես իր դիրքորոշման հիմնավորում՝ պատասխանող կողմը հղում է կատարում նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴ-Ո-1052 որոշման մեջ ամրագրված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացումը մեծապես կախված է այն հանգամանքից, թե որքանով է բողոքարկվող դատական ակտը հասու շահագրգիռ անձին, ողջամիտ ինչ ժամկետում նա կարող է հիմնավոր բողոք ներկայացնել իր իրավունքների դատական պաշտպանության համար% Ըստ այդմ, պատասխանողը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածը, ինչպես նաեւ 402-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրել են երաշխիքներ, որոնք ապահովում են անձի՝ դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը: Այս կապակցությամբ թեեւ դատական ակտն ուղարկելը ժամանակի առումով համարժեք չէ դատական ակտը հանձնելուն, այնուամենայնիվ, մեկամսյա ժամկետը բավարար է հիմնավոր բողոք բերելու համար:

Անդրադառնալով դիմողի կողմից բարձրացված՝ օրենսգրքի ներքին հակասությունների խնդրին՝ պատասխանողը նշում է, որ օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է բողոքարկման ընդհանուր կանոն, իսկ նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կանոնը հանդես է գալիս որպես ընդհանուր կանոնից բացառություն եւ համարվում դատական ակտի վերանայման բացառիկ եղանակ:

Անդրադառնալով դիմողի կողմից բարձրացված՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի համեմատ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի համար բողոքարկման կրճատ ժամկետներ սահմանված լինելու հիմնախնդրին՝ պատասխանողը նշում է, որ գործն ըստ էության լուծող դատական ակտերի համեմատ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի համար բողոքարկման կրճատ ժամկետների սահմանումը նպատակ է հետապնդում արագացնել գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերաբերյալ վեճերի լուծումը, որն ուղղված է քրեական դատավարության սահուն ընթացքի ապահովմանը: Այդ հանգամանքով է պայմանավորված գործն ըստ էության չլուծող դատական ակտերի բողոքարկման ժամկետների հաշվարկը դատական ակտն ստանալու պահից:

5. Հաշվի առնելով կողմերի դիրքորոշումները՝ սույն գործի շրջանակներում սահմանադրական դատարանը հարկ է համարում օրենսգրքի վիճարկվող դրույթները դիտարկել օրենսգրքի մյուս դրույթների համատեքստում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է բողոքարկման ընդհանուր ժամկետները եւ վերաբերում է օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերին, մինչդեռ 2-րդ մասը վերաբերում է նաեւ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերին եւ նախատեսում է բացառություն բողոքարկման ընդհանուր կանոններից, ներառյալ ժամկետները՝ ամրագրելով բողոքարկման հատուկ ժամկետներ միայն 21-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի համար: **Վերջին հաշվով, օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերը գտնվում են ընդհանուր եւ հատուկ կանոններ փոխհարաբերակցության մեջ:**

Ինչ վերաբերում է ժամկետների մեկնարկման պահերի միջեւ տարբերություններին, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իրավակարգավորման ոլորտում ցանկացած տարբերակված մոտեցում չէ, որ հանգեցնում է հակասության: Իրավակարգավորման ոլորտում տարբերակված մոտեցումները կարող են հանգեցնել հակասության միայն այն դեպքում, երբ տարբերակված մոտեցումը ցուցաբերվում է նույն օբյեկտի, նույն հանգամանքների նկատմամբ՝ անկախ նրանից, թե համապատասխան իրավակարգավորումները սահմանված են նույն, թե տարբեր իրավական ակտերում: Քննարկվող իրավիճակում տարբերակված մոտեցում է ցուցաբերված տարբեր օբյեկտների շուրջ ծագող հարաբերություններ կարգավորող դրույթների նկատմամբ. մի դեպքում իրավակարգավորումը վերաբերում է գործն ըստ էության լուծող, մյուս դեպքում՝ գործն ըստ էության չլուծող, միջանկյալ դատական ակտերին: Իսկ նման տարբերակված մոտեցումն էլ ինքնին պայմանավորված է իրենց իսկ՝ անձանց շահերով, քանզի յուրաքանչյուր կոնկրետ դեպքում բողոքարկման ժամկետն օրենսդրի կողմից որոշվում է՝ հաշվի առնելով նաեւ դատական ակտի բնույթը. ակնհայտ է, որ գործն ըստ էության լուծող դատական ակտին ծանոթանալու եւ վճռաբեկ բողոք պատրաստելու համար անձին անհրաժեշտ է ավելի երկար ժամանակահատված, քան գործն ըստ էության չլուծող, միջանկյալ դատական ակտի պարագայում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում դիմողի փաստարկները՝ կապված օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի, ինչպես նաեւ 412-րդ հոդվածի 1-ին մասի առաջին եւ երկրորդ նախադասությունների միջեւ ենթադրյալ ներքին հակասությունների հետ:

Այլ խնդիր է, թե Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով նախատեսված՝ դատական պաշտպանության արդյունավետ միջոցների եւ արդար դատաքննության իրավունքների համատեքստում որքանով է երաշխավորված օրենքով նախատեսված բողոքարկման ժամկետներից օգտվելու իրավական հնարավորությունը՝ հաշվի առնելով դատական ակտի հրապարակման եւ դատական ակտը հասցեատիրոջը փաստացիորեն հանձնելու պահերի միջեւ առկա ժամանակային գործոնը եւ դրանով պայմանավորված՝ դատական ակտը վիճարկելու իրական հնարավորության ապահովման անհրաժեշտությունը:

Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը հարկ է համարում սույն գործի քննության շրջանակներում վկայակոչել իր՝ 16.10.2012թ. ՄԳՈ–1052 որոշումը, որով սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրությանը համա-

պատասխանող է ճանաչել նմանատիպ իրավահարաբերություններ կարգավորող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետն այնքանով, որքանով երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին: Մասնավորապես, սահմանադրական դատարանի՝ վերը նշված որոշմամբ որպես այդպիսի երաշխիք է ճանաչվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 402-րդ հոդվածն այնքանով, որքանով 402-րդ հոդվածի «ուղարկվում է» եզրույթը «երաշխավորում է այդ ժամկետում դատարանի ամբողջական ակտի տրամադրումը (հասանելիությունը) օրենքով նախատեսված սուբյեկտներին»: Սահմանադրական դատարանը գտնում է, որ վկայակոչված իրավական դիրքորոշման ուժով դատական ակտի բողոքարկման ժամկետը նույնիսկ **հրապարակման** պահից հաշվարկելու դեպքում օրենսգրքի 402-րդ հոդվածը՝ ՀՀ սահմանադրական դատարանի 16 հոկտեմբերի 2012 թվականի ՍԳՌ-1052 որոշման մեջ բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությամբ, երաշխավորում է անձի բողոքարկման իրավունքի արդյունավետությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սահմանադրական դատարանը դիմողի փաստարկները՝ կապված օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասի առաջին եւ երկրորդ մախադասությունների միջեւ ենթադրյալ ներքին հակասության հետ, հիմնավոր չի համարում նաեւ վերը նշված հիմնավորմամբ:

6. Անդրադառնալով դիմողի բարձրացրած երկրորդ հիմնահարցին՝ կապված վճռաբեկ բողոք բերելու համար օրենքով նախատեսված մեկամսյա ժամկետը դատական ակտի հրապարակման պահից հաշվարկելու վերաբերյալ դրույթի հետ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նշված հիմնահարցը քննության առարկա է դարձել իր՝ 16 հոկտեմբերի 2012 թվականի ՍԳՌ-1052 գործով: Նշված եւ սույն գործով քննության առարկաների միջեւ տարբերությունը կայանում է նրանում, որ սույն գործով դիմողի կողմից բարձրացված՝ վերը նշված հարցադրումը վերաբերում է գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկմանը, իսկ ՍԳՌ-1052 որոշումը վերաբերում էր գործն ըստ էության չլուծող, միջանկյալ դատական ակտերի բողոքարկման կարգին: Այսուամենայնիվ, ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով նույնպես կիրառելի են սահմանադրական դատարանի ՍԳՌ-1052 որոշմամբ ամրագրված համապատասխան իրավական դիրքորոշումները:

Հարկ համարելով անդրադառնալ ՍԳՌ-1052 որոշման միայն եզրափակիչ մասում ամրագրված իրավական դիրքորոշումներին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իր՝ վերը նշված որոշման եզրափակիչ մասում ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող է ճանաչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի վիճարկվող՝ հրապարակվելու պահից, դրույթը՝ «այնքանով, որքանով երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին...»:

Նույն որոշման եզրափակիչ մասում սահմանադրական դատարանը ՀՀ

քրեական դատավարության օրենսգրքի՝ տվյալ գործով վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված 402-րդ հոդվածը, **որպես տվյալ գործով վիճարկվող դրույթի կիրառման ընթացքում անձի իրավունքների ապահովման երաշխիք**, ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ «այնքանով, որքանով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 402-րդ հոդվածի 2-րդ մասի «ուղարկվում է» եզրույթը երաշխավորում է այդ ժամկետում դատարանի ամբողջական ակտի տրամադրումը (հասանելիությունը) օրենքով նախատեսված սուբյեկտներին»:

ՀՀ սահմանադրական դատարանի ՄԳՈ-1052 որոշմամբ ամրագրված իրավական դիրքորոշումների համատեքստում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով օրենսգրքի վիճարկվող դրույթով գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման ժամկետը դատական ակտի **հրապարակման** պահից հաշվարկելն ինքնին չի հակասում ՀՀ Սահմանադրությանը, եթե առկա են դատական ակտին ծանոթանալու եւ դրա բողոքարկման իրավունքն արդյունավետ իրականացնելու համար բավարար ժամանակ ապահովող երաշխիքներ: Ինչպես արդեն նշվեց, սահմանադրական դատարանի կողմից որպես այդպիսի երաշխիք է ճանաչվել օրենսգրքի 402-րդ հոդվածը **եւ այն էլ միայն այն դեպքում, երբ նշված հոդվածի 2-րդ մասով նախատեսված եռօրյա ժամկետում դատական ակտը տրամադրվի /հասանելի դարձվի/ անձին: Այսինքն, համաձայն գործող օրենսդրության՝ անձն առնվազն 27 օր ժամանակ պետք է ունենա հիմնավոր բողոք ներկայացնելու համար:**

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց:**

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնքանով, որքանով ՀՀ սահմանադրական դատարանի ՄԳՈ-1052 որոշմամբ ամրագրված իրավական դիրքորոշումներին համահունչ երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին եւ վերջինից անկախ պատճառներով այդ ժամկետի բացթողումն իրավունքի ուժով /*ex jure*/ ճանաչվում է հարգելի:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**18 դեկտեմբերի 2012 թվականի
ՄԳՈ- 1062**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ ՍԱՄՎԵԼ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ
ԵՎ ԳԵՎՈՐԳ ԳՅՈՋԱԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀՀ ԴԱՏԱԿԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔԻ 111-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 6-ՐԳ ՄԱՍԻ, 155-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 5-ՐԳ
ՄԱՍԻ 2-ՐԳ ԿԵՏԻ ԵՎ 158-ՐԳ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. երեսան

18 դեկտեմբերի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուդյա-
նի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի
(զեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմող Ս. Մնացականյանի ներկայացուցիչներ Ա. Ջեյնալյանի, Ա. Գազար-
յանի եւ դիմող Գ. Գյոզալյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշ-
տոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբա-
նական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ
Ա. Մխիթարյանի, նույն բաժնի առաջատար մասնագետ Հ. Սարդարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ
հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրա-
կան դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դնրբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացիներ Սամվել
Մնացականյանի եւ Գեորգ Գյոզալյանի դիմումների հիման վրա՝ ՀՀ դատական
օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ մասի, 155-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի եւ
158-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրու-
թյանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացիներ Ս. Մնացականյանի՝ 06.06.2012թ.

եւ Գ. Գյոզալյանի՝ 20.08.2012թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի հիմքով՝ սահմանադրական դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 7-ի ՍԳԱՌ-56 որոշմամբ վերոհիշյալ գործերը միավորվել են դատական նույն նիստում քննելու համար:

Ուսումնասիրելով գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ դատական օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. ՀՀ դատական օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2007 թվականի փետրվարի 21-ին, Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի ապրիլի 7-ին եւ ուժի մեջ է մտել 2007 թվականի մայիսի 18-ին:

ՀՀ դատական օրենսգրքի՝ «Արդարադատության խորհրդի ակտերը եւ դրանց ընդունման կարգը» վերտառությամբ 111-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 6-րդ մասը սահմանում է.

«6. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Արդարադատության խորհրդի որոշումները, ինչպես նաեւ դատավորին կալանավորելու, նրա լիազորությունները դադարեցնելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու, դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու մասին Հանրապետության Նախագահին առաջարկ ներկայացնելու վերաբերյալ Արդարադատության խորհրդի որոշումները վերջնական են, ուժի մեջ են մտնում Արդարադատության խորհրդի նիստում հրապարակման պահից եւ բողոքարկման ենթակա չեն: Այդ որոշումները ենթակա են հրապարակման «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» եւ դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում»:

Հարկ է նշել, որ ՀՀ դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ մասը վերոհիշյալ նոր խմբագրությամբ շարադրվել է 08.04.2008թ. ՀՕ-21-Ն ՀՀ օրենքով՝ հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության 95-րդ հոդվածի 5-րդ կետի սահմանումները, սակայն արդարադատության խորհրդի որոշումների վերջնական եւ բողոքարկման ոչ ենթակա լինելու վերաբերյալ դրույթները փոփոխության չեն ենթարկվել:

ՀՀ դատական օրենսգրքի՝ «Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը» վերտառությամբ 155-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 5-րդ մասի 2-րդ կետը կարգապահական վարույթ հարուցելու առիթների շարքում նախատեսում է.

«2) անձի դիմումը.»:

ՀՀ դատական օրենսգրքի՝ «Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ առաջարկի քննությունը» վերտառությամբ 158-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 1-ին մասը սահմանում է.

«1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը քննելիս Արդարադատության խորհուրդը գործում է որպես դատարան: Որպես դատարան գործելիս Արդարադատության խորհրդում գործերի քննու-

թյան կարգի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության վարչական դատավարական օրենսգրքի նորմերն այնքանով, որքանով դրանք իրենց էությանը կիրառելի են Արդարադատության խորհրդում գործի քննության նկատմամբ եւ չեն հակասում սույն օրենսգրքի նորմերին»:

ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը եւ 158-րդ հոդվածի 1-ին մասը որեւէ փոփոխության չեն ենթարկվել:

2. Սույն գործի դատավարական նախապատմությունն ըստ դիմող սուբյեկտների հանգում է հետեւյալին.

Դիմող Սամվել Մնացականյանը, զբաղեցնելով դատավորի պաշտոն, իր՝ 30.05.2011թ. որոշմամբ մեղադրյալի նկատմամբ 30.04.2011թ. ընտրված խափանման միջոց կալանքը փոխարինել է այլընտրանքային խափանման միջոց գրավով: Տվյալ որոշման կայացումից երկու օր անց՝ 01.06.2011թ., ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը Ե-2966 գրությամբ դիմել է ՀՀ արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովին Ս. Մնացականյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ՝ վերջինիս 30.05.2011թ. որոշումը պատճառաբանված չլինելու հիմքով: Կարգապահական հանձնաժողովը 16.06.2011թ. կայացրել է «Երեւան քաղաքի Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ս. Մնացականյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությամբ արդարադատության խորհրդին դիմելու վերաբերյալ» Կ-2-10/2011 որոշումը: Արդարադատության խորհուրդը, քննարկելով Երեւան քաղաքի Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ս. Մնացականյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը՝ իր 24.06.2011թ. ԱԽ-13-Ո-17 որոշմամբ որոշել է. «Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի միջնորդությունը բավարարել: Դիմել Հանրապետության Նախագահին Երեւան քաղաքի Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Սամվել Մնացականյանի լիազորությունները դադարեցնելու միջնորդությամբ»: ՀՀ Նախագահին իր՝ 11.07.2011թ. հրամանագրով որոշել է դադարեցնել Երեւան քաղաքի Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ս. Մնացականյանի լիազորությունները:

Ս. Մնացականյանը 24.08.2011թ. հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ ՀՀ արդարադատության խորհրդի՝ վերը նշված որոշման առոչինչ լինելը հաստատելու կամ այն անվավեր ճանաչելու եւ ՀՀ Նախագահի՝ վերը նշված հրամանագիրն անվավեր ճանաչելու պահանջով: ՀՀ վարչական դատարանը «Հայցադիմումի ընդունումը մասով մերժելու, մասով հայցադիմումը վերադարձնելու մասին» իր՝ 31.08.2011թ. ՎԴ/4264/05/11 որոշմամբ մերժել է Ս. Մնացականյանի հայցադիմումի ընդունումը՝ ՀՀ արդարադատության խորհրդի 24.06.2011թ. ԱԽ-13-Ո-17 որոշման առոչինչ լինելը հաստատելու կամ այն անվավեր ճանաչելու պահանջների մասով, իսկ ՀՀ Նախագահի՝ 11.07.2011թ. հրամանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասով հայցադիմումը վերադարձրել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը, քննության առնելով ՀՀ վարչական դատարանի՝ վերը նշված որոշման դեմ Ս. Մնացականյանի ներկայացուցիչների բերած վերաքննիչ բողոքը, իր՝ «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» 12.10.2011թ. ՎԳ/4264/05/11 որոշմամբ մերժել է վերաքննիչ բողոքը՝ ՀՀ վարչական դատարանի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, քննության առնելով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի՝ վերը նշված որոշման դեմ Ս. Մնացականյանի ներկայացուցիչների բերած վճռաբեկ բողոքը, իր՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» 23.11.2011թ. որոշմամբ վերադարձրել է վճռաբեկ բողոքը:

Գիմող Գետրոզ Գյոզալյանը 19.01.2012թ. դիմում է ներկայացրել ՀՀ արդարադատության խորհրդին՝ Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Է. Ավետիսյանին՝ գործում առկա ապացույցները չհետազոտելու եւ անօրինական վճիռ կայացնելու պատճառաբանությամբ, կարգապահական պատասխանատվության ենթարկելու խնդրանքով: 03.02.2012թ. ՀՀ արդարադատության խորհրդի աշխատակազմի ղեկավարը, ի պատասխան Գ. Գյոզալյանի դիմումի, նշել է. «... Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը, ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված դիմումը, գտել է, որ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Է. Ավետիսյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմքերը բավարար չեն»:

08.02.2012թ. Գ. Գյոզալյանը կրկին դիմել է ՀՀ արդարադատության խորհրդին՝ խնդրանքով, որ իրեն տրամադրվի ՀՀ արդարադատության խորհրդի որոշումը, արձանագրությունը կամ այլ նյութեր, որով ՀՀ արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը գտել է, որ առկա չեն բավարար հիմքեր դատավորին պատասխանատվության կանչելու համար: 23.02.2012թ. ՀՀ արդարադատության խորհրդի աշխատակազմի ղեկավարը, ի պատասխան Գ. Գյոզալյանի դիմումի, նշել է. «... ՀՀ դատական օրենսգրքի 106-րդ եւ 156-րդ հոդվածների համաձայն՝ Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը որոշում է կայացնում միայն դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու, հարուցված կարգապահական վարույթը կարճելու եւ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությամբ Արդարադատության խորհրդին դիմելու դեպքերում: Հետեւաբար, Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը կարգապահական վարույթ չհարուցելու դեպքում որոշում կայացնելու իրավասությամբ օժտված չէ»:

Գ. Գյոզալյանը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ ՀՀ արդարադատության խորհրդին որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու պահանջով, այն է՝ պատշաճ կերպով, պատճառաբանված պատասխանել իր՝ 19.01.2012թ. դիմումին: ՀՀ վարչական դատարանը «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» իր՝ 06.03.2012թ. ՎԳ/1375/05/12 որոշմամբ մերժել է Գ. Գյոզալյանի հայցադիմումի ընդունումը:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը, քննության առնելով ՀՀ վարչական

դատարանի՝ վերը նշված որոշման դեմ Գ. Գյոզալյանի բերած վերաքննիչ բողոքը, իր՝ «Բողոքը մերժելու մասին» 06.04.2012թ. որոշմամբ մերժել է Գ. Գյոզալյանի վերաքննիչ բողոքը՝ ՀՀ վարչական դատարանի 06.03.2012թ. ՎԳ/1375/05/12 որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, քննության առնելով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի՝ վերը նշված որոշման դեմ Գ. Գյոզալյանի բերած վճռաբեկ բողոքը, իր՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» 16.05.2012թ. որոշմամբ վերադարձրել է վճռաբեկ բողոքը:

3. Վիճարկելով ՀՀ դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ մասի եւ 158-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների սահմանադրականությունը՝ դիմող Ս. Մնացականյանը գտնում է, որ դրանք հակասում են ՀՀ Սահմանադրության 3, 5, 18, 19, 43, 91, 92, 93, 94 եւ 97-րդ հոդվածներին:

Հղում կատարելով ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներին, «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի եւ ՀՀ սահմանադրական դատարանի մի շարք որոշումների՝ Ս. Մնացականյանը պնդում է, որ ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածների եւ «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի դրույթների միասնականությունը կազմում է դատական պաշտպանության եւ արդար դատաքննության իրավունքների բովանդակությունը: Ըստ Ս. Մնացականյանի՝ դատարանի մատչելիության, դատական պաշտպանության, դատական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքների բաղադրատարրերից է դատական ակտը բողոքարկելու իրավունքը, իսկ պետությունն օրենսդրի միջոցով պարտավոր է ապահովել սահմանադրական այդ իրավունքի իրացումը: Սինչեռե, ըստ դիմողի, ՀՀ դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառման հետեւանքով վարչական դատարանը մերժել է վարույթ ընդունել հայցը՝ դրանով իսկ մերժելով արդարադատության իրականացումը:

Անդրադառնալով ՀՀ դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասի ենթադրյալ հակասահմանադրականության հիմնավորմանը՝ Ս. Մնացականյանը, վերլուծելով ՀՀ Սահմանադրության 91, 92 եւ 93-րդ հոդվածների բովանդակությունը, գտնում է, որ ՀՀ արդարադատության խորհուրդը ներառված չէ ՀՀ դատական համակարգում եւ չի կարող իրականացնել արդարադատություն: Ս. Մնացականյանը գտնում է նաեւ, որ արդարադատություն իրականացնելու եւ որպէս դատարան գործելու գործառույթ ՀՀ արդարադատության խորհրդի վրա դրված չէ նաեւ ՀՀ Սահմանադրության 94.1 եւ 95-րդ հոդվածներով:

Վիճարկելով ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի եւ 158-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների սահմանադրականությունը՝ դիմող Գ. Գյոզալյանը գտնում է՝ դրանք հակասում են ՀՀ Սահմանադրության 27.1, 18 եւ 19-րդ հոդվածներին:

Մասնավորապէս, վերլուծելով ՀՀ Սահմանադրության 27.1-րդ հոդվածը՝

Գ. Գյոզալյանը գտնում է, որ Սահմանադրության նշված հոդվածի տրամաբանությամբ դիմում կամ առաջարկություն ներկայացնողի իրավունքը երաշխավորված է եռակի, որը դրսևորվում է նրանում, որ, առաջին՝ դիմում կամ առաջարկություն ներկայացնողի իրավունքին համապատասխանում է հասցեատեր պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց պարտականությունը՝ պատասխանել դրան, երկրորդ՝ պատասխանը պետք է տրվի ողջամիտ ժամկետում, երրորդ՝ դիմումի կամ առաջարկության հասցեատեր պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց պատասխանը պետք է լինի պատշաճ, այսինքն՝ օրինական եւ հիմնավորված: Ըստ Գ. Գյոզալյանի՝ ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածը ՀՀ Սահմանադրության 27.1-րդ հոդվածի ուժով պետք է սահմաներ, որ ՀՀ արդարադատության խորհրդի կողմից դիմումների պատասխանները պետք է լինեն պատճառաբանված, այլապես դատական վերահսկողության ոլորտից դուրս կմնան ՀՀ արդարադատության խորհրդի աշխատակցի կողմից դիմումը միտումնավոր չընդունելու կամ այդ աշխատակցի կողմից դիմումը վերադարձնելու վերաբերյալ միանձնյա որոշում կայացնելու դեպքերը:

Անդրադառնալով ՀՀ դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասի ենթադրյալ հակասահմանադրականության հիմնավորմանը՝ Գ. Գյոզալյանը, վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածները, ինչպես նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք որոշումներ, գտնում է, որ վիճարկվող նորմերի հիման վրա դատարանը ոչ միայն մերժում է իր խախտված իրավունքների պաշտպանությունը, այլ նաեւ դատարանն է կրկնակի անգամ խախտում Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իր իրավունքը՝ հայտնելով, որ ՀՀ արդարադատության խորհրդի գործողությունները ենթակա չեն դատական վերահսկողության:

4. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողների փաստարկներին, գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքի՝ նրանց կողմից վիճարկվող դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը: Որպես իր դիրքորոշման հիմնավորում՝ պատասխանող կողմը, հղում կատարելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք որոշումների, գտնում է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը քննելիս ՀՀ արդարադատության խորհուրդը հանդես է գալիս որպես դատական գործառույթ իրականացնող մարմին եւ, որպես այդպիսին, լիովին բավարարում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի սահմանած բոլոր չափանիշները, այն է՝ ստեղծված է օրենքի ուժով, նրա իրավասության շրջանակը սահմանված է օրենքով, իր գործունեության ընթացքում անկախ է եւ անկողմնակալ, ընթացակարգերի իմաստով իրականացնում է արդար, հրապարակային եւ ողջամիտ ժամկետներում քննություն, ունի պարտադիր կատարման ենթակա որոշումներ կայացնելու իրավասություն:

Անդրադառնալով ՀՀ արդարադատության խորհրդի որոշումների վերջնա-

կան եւ բողոքարկման ոչ ենթակա լինելու հանգամանքի՝ դատարանի մատչելիության եւ արդար դատաքննության իրավունքներին առնչակցությանը՝ պատասխանող կողմը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի եւ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների վերլուծության հիման վրա գտնում է, որ արդար դատաքննության իրավունքը վերաբերում է առաջին հերթին առաջին ատյանի դատարանին, իսկ մյուս դատարաններում այն կիրառվում է միայն բողոքարկման իրավունքի իրացումից հետո, եթե տվյալ կատեգորիայի գործերով նախատեսված է բողոքարկման իրավունք: Պատասխանող կողմը միաժամանակ, որպես անձի իրավունքների պաշտպանության լրացուցիչ երաշխիք, նշում է նոր երեւան եկած հանգամանքներով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ՀՀ արդարադատության խորհրդի որոշումների վերանայման իրավական հնարավորությունը:

Ի հակադրումն Ս. Մնացականյանի այն փաստարկների, որ արդարադատության խորհուրդն ընդգրկված չէ դատական համակարգում, պատասխանող կողմը նշում է, որ ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածը հնարավոր է համարում մասնագիտացված դատարանների ստեղծումը:

Դիմող Գ. Գյոզալյանի փաստարկների առնչությամբ՝ կապված պատճառաբանված պատասխան ստանալու հետ, պատասխանող կողմը գտնում է, որ բարձրացված հիմնախնդիրն առնչվում է ոչ թե ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետին, այլ նույն հոդվածի 6-րդ մասին:

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով դիմող Գ. Գյոզալյանը նախ բարձրացւո՞ւ է արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի կողմից կարգապահական վարույթ հարուցելը մերժելիս այդպիսի մերժումը պատճառաբանելու պարտականություն օրենսդրորեն չնախատեսելու խնդիրը:

Անդրադառնալով այդ հիմնահարցին՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ առաջ քաշված խնդիրն ուղղակիորեն չի վերաբերում ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի դրույթին, քանի որ վերջինս, եւ ընդհանրապես նշված հոդվածի ողջ 5-րդ մասը, սահմանում է կարգապահական վարույթ հարուցելու առիթները, այլ ոչ թե այդ վարույթի հարուցումը մերժելու կարգը կամ հնարավորությունը: Այսուամենայնիվ, իրավունք վերապահելով անձին իր դիմումով կարգապահական վարույթ հարուցելու առիթ տալ՝ օրենսդիրը նույնիսկ նույն հոդվածի 7-րդ մասի հիմքով (որում առանձին առիթների դեպքում նախատեսվում է պատասխանը չհիմնավորելու հնարավորություն) չի նախատեսել անձի դիմումի առիթով վարույթ չհարուցելու դեպքում նրան պատճառաբանված պատասխան չտալու իրավունք: Հակառակը, տվյալ հոդվածի իրավական տրամաբանությունից բխում է անձի դիմումով վարույթ հարուցելը մերժելիս այդպիսի մերժումը պատճառաբանելու պարտականությունը: Հակառակ դեպքում այդ առիթը նույնպես կներառվեր հոդվածի 7-րդ մասում: Դատական պրակտիկայում է փորձ արվել ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի դրույթներին տալ այնպիսի մեկնաբանություն, որից բխեցվել

է դիմողի հարցադրումը՝ վարույթ հարուցելը մերժելիս այդպիսի մերժումը պատճառաբանելու պարտականություն չնախատեսելու առնչությամբ:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ, **նախ՝** ինքնին խնդրահարույց է ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 7-րդ մասը: Այն չունի պատշաճ իրավական հիմնավորվածություն՝ այդ մասի համատեքստում վարույթի հարուցումը մերժելիս դրա պատճառների մասին հիմնավորումներ չտալու դրույթ նախատեսելու առումով: **Երկրորդ՝** երբ օրենսգիրքը նախատեսել է, որ կարգապահական վարույթ հարուցելու առիթը նաեւ անձի դիմումն է, եւ այս առիթն ընդհուպ չի ներառել հիշյալ հոդվածի 7-րդ մասում, ապա այդ դիմումը չի կարող մնալ անպատասխան կամ այն մերժելու դեպքում չտրվի մերժման համապատասխան հիմնավորում: Հակառակ դեպքում խախտվում է անձի՝ ՀՀ Սահմանադրության 27.1-րդ հոդվածով նախատեսված իրավունքը, որը սահմանում է, որ «Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք»:
Իրավական պրակտիկան պետք է անվերապահորեն հիմք ընդունի անձի՝ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու սահմանադրական իրավունքի ապահովման անհրաժեշտությունը՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրորեն ամրագրված «պատշաճ պատասխան» եզրույթը չի ենթադրում միայն պատասխանի ձեւը կամ առկայությունն ընդհանրապես: Այն բովանդակային առումով նշանակում է, որ պատասխանը պետք է լինի իրավաչափ ու անհրաժեշտ հիմնավորումներով: Իրավական պետությունում այս պահանջը չի կարող շրջանցել որեւէ իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմին կամ պաշտոնատար անձ, այդ թվում՝ արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը: **Սահմանադրական հիշյալ պահանջը չկատարելն արդարացնող ցանկացած պատճառաբանություն, այդ թվում՝ օրենքին կատարվող հղում, անհիմն է, քանի որ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պետությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:**

6. Դիմողների կողմից բարձրացված մյուս հիմնահարցերի առնչությամբ սույն գործի փաստարկների շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում բացահայտել.

- արդարադատության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակը,
- ՀՀ դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ «գործում է որպես դատարան» եզրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը.
- որպես դատարան գործելիս արդարադատության խորհրդի որոշումների վերջնական, բողոքարկման ոչ ենթակա լինելու իրավաչափությունը՝ դա-

տարանի մատչելիության եւ արդար դատաքննության սահմանադրական իրավունքների իրացումն ապահովելու համատեքստում:

ՀՀ սահմանադրական դատարանը նախ արձանագրում է, որ թե՛ դիմողների եւ թե՛ պատասխանողի մոտ քննության առարկա հիմնահարցին առնչվող որոշ անհատակություններ պայմանավորված են իշխանությունների տարանջատման սկզբունքի սահմանադրական մակարդակում իրացման խնդիրներով, ՀՀ Սահմանադրության կառուցվածքը միասնական մոտեցում չի դրսևորել իշխանությունների գործառնական կամ կառուցակարգային տարանջատման հարցում: Այն դեպքում, երբ օրենսդիր եւ գործադիր իշխանությունները ներկայացված են որպես կառուցակարգային ինստիտուտներ, ապա դատական իշխանությունն առանձնացվել է իր գործառնական դերով: Այսուհանդերձ, սահմանադրորեն դատական իշխանության համակարգում ՀՀ արդարադատության խորհուրդը դիտվում է որպես **այդ համակարգի գործառնական արդյունավետությունն ապահովելու հարցում իր սահմանադրական հստակ գործառույթներն ունեցող ու անկախ գործող ենթահամակարգ:**

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում Հայաստանում զգալի չափով ամրապնդվել են արդարադատության խորհրդի անկախության գործառնական ու կառուցակարգային երաշխիքները, չնայած այս հարցում որոշ հիմնախնդիրներ սահմանադրական մակարդակում հետագա լուծումների անհրաժեշտություն ունեն, որոնք սույն գործի շրջանակներում քննության առարկա չեն:

Սահմանադրական ներկա իրավակարգավորումները լրացվել են նաեւ արդարադատության խորհրդի գործունեության ընթացակարգային օրենսդրական լուծումներով, ինչի հիմքում դրվել են հարցերի քննարկման դատավարական մոտեցումները, մասնավորապես, վարչական դատավարության կանոնակարգերը՝ այնքանով, որքանով դրանք կիրառելի են արդարադատության խորհրդի սահմանադրական գործառույթների արդյունավետ իրականացման համար:

Էական է նաեւ այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրությունն արդարադատության խորհրդի գործառույթները դասակարգում է երկու խմբի՝ միջանկյալ եւ վերջնական լուծում տվող գործառույթների: Համաձայն ՀՀ Սահմանադրության 95-րդ հոդվածի՝ վերջնական լուծում բովանդակող գործառույթը միայն դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելն է: Մյուս բոլոր դեպքերում արդարադատության խորհուրդը ՀՀ Նախագահի լուծման ենթակա հարցերի վերաբերյալ տալիս է առաջարկություններ կամ ներկայացնում է եզրակացություն: Ինչ վերաբերում է դատավորի լիազորությունների դադարեցման մասին ՀՀ Նախագահին առաջարկ ներկայացնելուն, ապա **իր բնույթով պաշտոնակության այս ընթացակարգը ենթադրում է հարցի քննարկման երեք փուլ՝ վարույթ հարուցող սուբյեկտ, արդարադատության խորհուրդ, Հանրապետության Նախագահ:** Նրանցից յուրաքանչյուրը կոչված է բացահայտելու իրավական ճշմարտությունը եւ արդարադատության համակարգի արդյունավետ գործունեության շահերից ելնելով՝ օրենքով նախատեսված առիթի ու հիմքերի շրջանակներում, սահմանված կարգով **վերաբերմունք արտահայտել**

դատավորի կողմից իր պաշտոնական պարտականությունների պատշաճ կատարման վերաբերյալ: Մեթոդաբանական նշանակության կարեւոր հանգամանքն այն է, որ առավելապես գործող դատավորներից ու նաեւ գիտնական իրավաբաններից կազմված այդ մարմինը սահմանադրական իր իրավասության շրջանակներում ու օրենքով սահմանված հիմքերի առկայության պայմաններում **գնահատում է, թե իր իսկ կողմից դատավորի պարտականությունների համար լիազորված պաշտոնատար անձը որքանով է հավատարիմ իր երդմանը եւ ինչպես է կատարում պաշտոնական պարտականությունները:**

Սահմանադրական դատարանը գտնում է, որ այս համակարգն ամբողջական է՝ իր գործառնությունների կատարումը ներհամակարգային կայունության ու արդյունավետության ապահովման տեսանկյունից երաշխավորելու հարցում: **Այն դուրս չի գալիս դատավորի պաշտոնական պարտականությունների կատարումը, նրա ծառայողական պիտանելիությունը գնահատելու սահմանադրական գործառնության իրականացման շրջանակներից, ինչն այս մարմնի բացառիկ իրավասությունն է:** Այս հարցում դատարաններին վերահսկողական լիազորություն վերապահելը կիմաստագրվեր արդարադատության խորհրդի գոյությունն ընդհանրապես՝ որպես դատական իշխանության համակարգում ինքնուրույն ու սահմանադրորեն բացառապես իրեն վերապահված իրավասություն իրականացնող անկախ մարմնի:

Ինչ վերաբերում է ՀՀ դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 1-ին մասի այն սահմանմանը, համաձայն որի՝ ժատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը քննելիս արդարադատության խորհուրդը գործում է որպես դատարան, **aza** չսահմանադրական դատարանը գտնում է, որ «գործում է որպես դատարան» եզրույթի առնչությամբ նկատի պետք է ունենալ **արդարադատության խորհրդի գործունեության կարգը, այլ ոչ թե նրա՝ որպես արդարադատություն իրականացնող դատարանի գործառնական դերը:** Վերջինս փաստվում է նաեւ ՀՀ դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասում անմիջապես հաջորդող այն կանոնակարգմամբ, համաձայն որի՝ «Որպես դատարան գործելիս Արդարադատության խորհրդում գործերի քննության կարգի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության վարչական դատավարական օրենսգրքի նորմերն այնքանով, որքանով դրանք իրենց էությանը կիրառելի են Արդարադատության խորհրդում գործի քննության նկատմամբ եւ չեն հակասում սույն օրենսգրքի նորմերին»:

Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրական զարգացումները, ելնելով նաեւ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներից, կարող են առավել հստակ դարձնել «գործում է որպես դատարան» եզրույթը՝ նկատի ունենալով, որ որպես անկախ մարմին, որի գործառնությունները կանխորոշված են սահմանադրական մակարդակով, դատավորի պաշտոնական պարտականության կատարմանն առնչվող հարցերը քննության առնելիս նրա իսկ իրավունքների պաշտպանության երաշխիքներից ելնելով **արդարադատության խորհուրդը գործում է հարցի քննարկման դատարանին բնորոշ ընթացակարգով: Օրենսդիրը կարող է նաեւ քննու-**

քյան առարկա դարձնել այդ մարմնի գործունեության առանձին կանոնակարգման խնդիրը՝ ուշադրություն դարձնելով վերջինիս սահմանադրական գործառույթներին ներդաշնակ հարցերի քննարկման կանոնակարգային լուծումներին՝ նկատի ունենալով, որ արդարադատության խորհրդի որոշումները դատական կարգով բողոքարկելի չեն: Էական է նաև կարգապահական հանձնաժողովի եւ արդարադատության խորհրդի հայեցողության սահմանների օրենսդրական առավել հստակեցումը:

7. Հաշվի առնելով ՀՀ դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ արդարադատության խորհրդի որոշումների բողոքարկման արգելքը, բացի վերոնշյալ սկզբունքային մոտեցումներից, ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում պարզել նաեւ, թե արդյո՞ք օրենսդրորեն նախատեսված են բավարար երաշխիքներ, որոնց պայմաններում կարող է իրավաչափ համարվել ՀՀ դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ վեճի առարկա դրույթը: Ընդ որում, հարկ է, որպէսզի վերը նշված երաշխիքներն առկա լինեն թե՛ արդարադատության խորհրդի ձեւավորման, լիազորությունների եւ թե՛ նրա գործունեության սկզբունքների եւ ընթացակարգերի տեսանկյունից:

ՀՀ Սահմանադրության եւ ՀՀ դատական օրենսգրքի վերլուծության հիման վրա սահմանադրական դատարանը գտնում է, որ վերոհիշյալ օրենսդրական երաշխիքներն առկա են: Մասնավորապէս, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ.

ա) արդարադատության խորհուրդն ունի ձեւավորման սահմանադրաիրավական հիմք: ՀՀ Սահմանադրության 94.1-րդ հոդվածի համաձայն՝ Սահմանադրությամբ եւ օրենքով սահմանված կարգով ձեւավորվում եւ գործում է արդարադատության խորհուրդ,

բ) արդարադատության խորհրդի գործառույթների կոնկրետ շրջանակը հստակ սահմանված է ՀՀ Սահմանադրությամբ: ՀՀ Սահմանադրության 95-րդ հոդվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ արդարադատության խորհրդի առջեւ սահմանադիրը դրել է նպատակ՝ իր գործունեությամբ եւ բացառիկ լիազորությունների պատշաճ իրականացմամբ արդյունավետորեն կազմակերպել ՀՀ դատարանների, բացի սահմանադրական դատարանից, բնականոն գործունեությունը, որի տարրերից է նաեւ արդարադատություն իրականացնողների գործառնական պարտականությունների պատշաճ կատարումը,

գ) արդարադատության խորհրդի գործունեության սկզբունքներից են անկախությունը եւ անկողմնակալությունը: ՀՀ Սահմանադրության 94.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արդարադատության խորհրդի կազմի մեջ մտնում են ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ հինգ տարի ժամկետով օրենքով սահմանված կարգով ընտրված ինը դատավորներ, Հանրապետության Նախագահի եւ Ազգային ժողովի կողմից նշանակված երկուական իրավաբան-գիտնականներ: Արդարադատության խորհրդի՝ որպէս անկախ մարմին լինելն ուղղակի սահմանված է նաեւ ՀՀ դատական օրենսգրքի 97-րդ հոդվածով: Դրա հետ մեկտեղ, ՀՀ դատական օրենսգրքի 11-րդ հոդվածի

1-ին մասը սահմանում է, որ «Արդարադատություն եւ **օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս դատավորն անկախ է**»: Վերը նշված դրույթում «օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս» եզրույթը վերաբերում է նաեւ այն դատավորներին, որոնք արդարադատության խորհրդի կազմում իրականացնում են կոնկրետ լիազորություններ, ինչը ներառում է նաեւ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործի քննությանը մասնակցելը:

Ինչ վերաբերում է արդարադատության խորհրդի կազմում գործող դատավորի անկողմնակալությանը, ապա այդ հանգամանքն առավելապես առնչվում է գործի քննության ընթացակարգերին, որպիսիք, ինչպես արդեն վերը նշվել է, հանդիսանում են Հայաստանի Հանրապետության վարչական դատավարական օրենսգրքի նորմերն այնքանով, որքանով դրանք իրենց էությանը կիրառելի են արդարադատության խորհրդում գործի քննության նկատմամբ եւ չեն հակասում ՀՀ դատական օրենսգրքի նորմերին: Բացի դրանից, որպես անկողմնակալության երաշխիք է հանդիսանում ՀՀ դատական օրենսգրքի 104-րդ հոդվածը, որը սահմանում է արդարադատության խորհրդի անդամների՝ որոշումների կայացմանը մասնակցության դեպքերը: Մասնավորապես, արդարադատության խորհրդի անդամը չի մասնակցում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշման կայացմանը, եթե արդարադատության խորհրդի անդամը հանդիսանում է այն կարգապահական հանձնաժողովի անդամ, որի կողմից հարուցված կարգապահական վարույթի հիման վրա է արդարադատության խորհուրդը քննարկում հարցը: Ինչ վերաբերում է արդարադատության խորհրդի կազմում Հանրապետության Նախագահի եւ ՀՀ Ազգային ժողովի կողմից նշանակվող իրավաբան-գիտնականներին, ապա նրանց թվաքանակն զգալիորեն զիջում է արդարադատության խորհրդի կազմում դատավորների թվաքանակին, ինչը ոչ միայն չի կարող ազդեցություն ունենալ արդարադատության խորհրդի անկախության եւ անկողմնակալության վրա, այլեւ հանդես է գալիս որպես վերջիններիս համար հակակշռող նշանակություն ունեցող լրացուցիչ երաշխիք,

դ) ընթացակարգերի իմաստով արդարադատության խորհուրդն իրականացնում է գործի արդար, հրապարակային եւ ողջամիտ ժամկետներում քննություն: Ինչպես արդեն վերը նշվեց՝ ՀՀ դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն արդարադատության խորհրդում գործերի քննության կարգի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության վարչական դատավարական օրենսգրքի նորմերն այնքանով, որքանով դրանք իրենց էությանը կիրառելի են արդարադատության խորհրդում գործի քննության նկատմամբ եւ չեն հակասում ՀՀ դատական օրենսգրքի նորմերին: **Նման կանոնակարգմամբ, ըստ էության, օրենսդիրն արդարադատության խորհրդի գործունեության հիմքում դնում է արդար քննության համար անհրաժեշտ երաշխիքներ՝ ուղղված ՀՀ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների իրացման ապահովմանը:** Արդար քննության շրջանակներում, մրցակցային գործընթացի արդյունավետության ապահովման նպատակով, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարց քննելիս տվյալ դատավորը, ՀՀ

դատական օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, իրավունք ունի՝ ծանոթանալու արդարադատության խորհրդում հարցի քննության համար հիմք հանդիսացող նյութերին, քաղվածքներ անելու, ստանալու դրանց պատճենները, հարցեր տալու ելույթ ունեցողին, առարկություններ ներկայացնելու, բացատրություններ տալու եւ միջնորդություններ անելու, ապացույցներ ներկայացնելու եւ մասնակցելու դրանց հետազոտմանը, մասնակցելու նիստին՝ հանդես գալով անձամբ կամ փաստաբանի միջոցով: Օրենսդիրը նախատեսել է մեկ կարեւոր երաշխիք եւս. ՀՀ դատական օրենսգրքի 160-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Արդարադատության խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը քննելիս դատավորն օգտվում է Սահմանադրության 19-րդ հոդվածով եւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված երաշխիքներից»: Արդար քննության շրջանակներում հիշյալ օրենսգրքով ամրագրված է նաեւ, որ արդարադատության խորհրդի որոշումները պետք է պատճառաբանված լինեն: ՀՀ դատական օրենսգրքի 163-րդ հոդվածի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով արդարադատության խորհրդի որոշումը պետք է պարունակի նաեւ արդարադատության խորհրդի պատճառաբանված եզրակացությունը՝ առկա ապացույցների վկայակոչմամբ: Հրապարակային քննության շրջանակներում եւս օրենսդիրն ամրագրել է մի շարք պահանջներ: Մասնավորապես, ՀՀ դատական օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորի, որի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցվել, պահանջով իր գործի քննությունն անցկացվում է հրապարակային: Նույն օրենսգրքի 111-րդ եւ 163-րդ հոդվածների համաձայն՝ արդարադատության խորհրդի որոշումները հրապարակվում են «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» եւ դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում: Ինչ վերաբերում է ողջամիտ քննությանը, ապա ՀՀ դատական օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասի ուժով կարգապահական վարույթի տեւողությունը չի կարող 6 շաբաթից ավելի լինել, բացառությամբ դատավորի բացակայության դեպքերի, իսկ նույն օրենսգրքի 158-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով արդարադատության խորհուրդը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործը քննում է ողջամիտ ժամկետում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերը նշված երաշխիքների առկայության պայմաններում եւ արդարադատության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակի վերաբերյալ վերոշարադրյալ իրավական դիրքորոշումների շրջանակներում ՀՀ դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ արդարադատության խորհրդի որոշումների դատական կարգով բողոքարկման արգելքն իրավաչափ է:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաեւ իր՝ 28.11.2007թ. ՄԴՈ-719 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշմանը, երբ վկայակոչելով արդարադատության մատչելիության եւ արդյունավետության խնդիրների վերաբերյալ իր մի շարք որոշումներում ամրագրված

իրավական դիրքորոշումները՝ կապված Եվրոպայի խորհրդի առջև ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման անհրաժեշտության հետ, միաժամանակ կարելի է այդ պարտավորություններից բխող **ներպետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մատչելիության եւ, հատկապես՝ դատական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում**: Հարկ է նկատել, որ ներպետական հայեցողության վերաբերյալ դիրքորոշում է արտահայտել նաեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր՝ **CASE OF OLUJIĆ v. CROATIA** գործով (Application no. 22330/05, JUDGMENT 5 February 2009, FINAL 05/05/2009), ըստ որի՝ «Դատարանը ճանաչում է պետության շահը վերահսկելու դատարանի մատչելիությունը, երբ հարցը վերաբերում է որոշակի խմբի հարցերի: Այնուամենայնիվ, Պայմանավորվող Պետությունների, մասնավորապես՝ իրավասու ազգային օրենսդրի, այլ ոչ թե Դատարանի խնդիրն է հստակ սահմանել հանրային ծառայության այն ոլորտները՝ ներառելով պետական ինքնիշխանությանն բնորոշ հայեցողական լիազորությունների իրականացումը, որտեղ անհատի շահերը պետք է ստորադասվեն: ...Եթե ազգային համակարգն արգելափակում է դատարանի մատչելիությունը, Դատարանը կհաստատի, որ վեճն իրականում այնպիսին է, որ արդարացվում է Հոդված 6-ով նախատեսված երաշխիքների նկատմամբ բացառության կիրառումը: Եթե վեճն այդպիսին չէ, որեւէ խնդիր չկա եւ 6-րդ հոդվածի 1-ին պարագրաֆը կկիրառվի»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ բարձրացված հիմնահարցին հարկ է անդրադառնալ նաեւ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված՝ դատական համակարգի աստիճանակարգության տեսանկյունից: Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված ներկա դատական համակարգի պայմաններում նման որոշումների դատական կարգով բողոքարկումն օրենսդրորեն ամրագրված առկա շրջանակներից դուրս կարող է ադերսներ ունենալ ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների հետ: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ արդարադատության խորհրդի կազմի մեջ ներառված են հիմնականում գործող դատավորներ ՀՀ դատական համակարգի տարբեր օղակներից, ներառյալ՝ ՀՀ վճռաբեկ դատարանը: Նման պայմաններում ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարանների համակարգում նախատեսված չէ այնպիսի դատական ատյան, որի դատավորներն իրենց կարգավիճակով ավելի բարձր կլինեն ՀՀ վճռաբեկ դատարանի դատավորներից: Այս կապակցությամբ սույն գործով սահմանադրական դատարանը հարկ է համարում վկայակոչել նաեւ իր՝ 28.11.2007թ. ՄԳՌ-719 որոշման 5-րդ կետը, որտեղ սահմանադրական դատարանն անընդունելի է համարել հավասար կամ ցածր պետաիշխանական մակարդակի վրա գտնվող դատավորի կողմից նույն դատարանի նախագահի կամ վերադաս ատյանի դատարանների դատավորների գործողությունների (անգործության) վիճարկման վերաբերյալ դիմումները քննության առնելու հնարավորությունը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման դիրքորոշումը հավասարապես կիրառելի է նաեւ արդարադատության խորհրդի խնդրո առարկա որոշումների նկատմամբ:

ՀՀ սահմանադրական դատարանը հանգում է այն հետետությանը, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ արդարադատության խորհրդի որոշումների դատական կարգով բողոքարկման հնարավորություն չնախատեսելը քիտում է առկա սահմանադրական իրավակարգավորումների տրամաբանությունից: Այն չի խախտում իր կամքի ազատ արտահայտմամբ ու հատուկ երդմամբ պաշտոնական պարտականություններ իրականացնող դատավորի իրավունքները՝ այդ պարտականությունների կատարման համար նրան երաշխավորած մարմնի կողմից դրանց պատշաճ կատարումը գնահատելու առումով՝ հաշվի առնելով արդարադատության խորհրդի ձեռավորման, նրա բացառիկ սահմանադրական լիազորությունների, գործունեության սկզբունքների եւ աստիճանակարգված ընթացակարգերի արդյունավետ իրացման համար նախատեսված օրենսդրական երաշխիքների առկայությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. ՀՀ դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ ներկայացված սահմանադրաիրավական բովանդակության շրջանակներում, համաձայն որի՝ ՀՀ արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը պարտավոր է անձի դիմումը մերժելու դեպքում ողջամիտ ժամկետում իր պատասխանում հիմնավորել վարույթ չհարուցելու պատճառները:

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 9.1-րդ կետի եւ 69-րդ հոդվածի 12-րդ մասի հիմքերով դիմող Գ. Գյոզալյանի գործով վերջնական դատական ակտը նոր հանգամանքների հիմքով օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման:

4. ՀՀ դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

5. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**18 դեկտեմբերի 2012 թվականի
ՍԳՈ-1063**



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՔԱՂԱՔԱՅԻ ԳՈՀԱՐ ԲՈՏՈՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀՀ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 74 ԵՎ 105-ՐԴ ՀՈԳՎԱԾՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՍՏՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղ. Երևան

25 դեկտեմբերի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուգյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝

դիմողի ներկայացուցիչ՝ փաստաբան Մ. Վարդանյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական փորձաքննության բաժնի գլխավոր մասնագետ Ս. Համբարձումյանի եւ նույն բաժնի առաջատար մասնագետ Հ. Մարդարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Քաղաքացի Գոհար Բոտոյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 74 եւ 105-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը քաղաքացի Գ. Բոտոյանի՝ 28.08.2012թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ ընտանե-

կան օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. ՀՀ ընտանեկան օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2004 թվականի նոյեմբերի 9-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2004 թվականի դեկտեմբերի 8-ին եւ ուժի մեջ է մտել 2005 թվականի ապրիլի 19-ին:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի՝ «Ծնողների մասնակցությունը երեխաների համար կատարվող լրացուցիչ ծախսերին» վերտառությամբ 74-րդ հոդվածը սահմանում է.

«1. Համաձայնության բացակայության եւ բացառիկ հանգամանքների առկայության (ծանր հիվանդություն, երեխաների կամ անաշխատունակ չափահաս անապահով զավակների խեղում, նրանց նկատմամբ հատուկ խնամքի համար վճարելու անհրաժեշտություն եւ այլն) դեպքում ծնողներից յուրաքանչյուրը կարող է դատարանի վճռով ներգրավվել այդ հանգամանքներից բխող լրացուցիչ ծախսեր կրելու գործին:

Լրացուցիչ ծախսերը կրելուն ծնողների մասնակցության կարգը եւ այդ ծախսերի չափը՝ կայուն դրամական գումարով, որոշում է դատարանը՝ ելնելով ծնողների եւ զավակների գույքային ու ընտանեկան դրությունից եւ ուշադրության արժանի շահերից: Դա ենթակա է վճարման յուրաքանչյուր ամիս:

2. Դատարանը կարող է պարտավորեցնել ծնողներին՝ մասնակցելու ինչպես փաստացի կատարվող լրացուցիչ ծախսերին, այնպես էլ ապագայում կատարվելիք անհրաժեշտ լրացուցիչ ծախսերին»:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի՝ «Ալիմենտի ինդեքսավորումը» վերտառությամբ 105-րդ հոդվածը սահմանում է. «Ինդեքսավորման նպատակով ալիմենտի չափը դատարանը սահմանում է նվազագույն աշխատավարձի չափի որոշակի թվի համապատասխանող կայուն դրամական գումարով»:

Սույն գործով վիճարկվող իրավական նորմերում ՀՀ Ազգային ժողովի կողմից փոփոխություններ եւ լրացումներ չեն կատարվել:

2. Քննության առարկա գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին. դիմողը հայցադիմում է ներկայացրել Երեւան քաղաքի Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ ընդդեմ Աշոտ Աղաբաբյանի՝ պատասխանողից 2009 թվականի նոյեմբերի 17-ին նախորդող երեք տարիների համար նրա ամսական բոլոր վաստակների 25 տոկոսի չափով՝ որպես ալիմենտային գումար, եւ հայցադիմումի ներկայացման պահից ամսական 80.000 ՀՀ դրամ՝ որպես լրացուցիչ ծախս, բռնագանձելու պահանջների մասին:

Երեւան քաղաքի Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 28.12.2011 թվականի վճռով ներկայացված հայցը՝ 80.000 ՀՀ դրամ լրացուցիչ ծախսերի բռնագանձման պահանջի մասով բավարարվել է մասնակիորեն:

Վերը նշված վճռի դեմ վերաքննիչ բողոքներ են ներկայացրել տվյալ գործով հայցվորը և պատասխանողը: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2012 թվականի ապրիլի 5-ի որոշմամբ հայցվոր Գոհար Բոտոյանի վերաքննիչ բողոքը մերժվել է: Պատասխանող Աշոտ Աղաբաբյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, և մասնակիորեն բեկանվել ու փոփոխվել է Երեւան քաղաքի Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վերը նշված վճիռը՝ լրացուցիչ ծախսի գումարի բռնագանձման մասով, իսկ մնացած մասով վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 06.06.2012 թվականի՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ դիմողի ներկայացրած վճռաբեկ բողոքը վերադարձրել է՝ վերահաստատելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ վերը նշված իրավական դիրքորոշումը:

3. ՀՀ ընտանեկան օրենսգրքի 74-րդ հոդվածի առնչությամբ դիմողը գտնում է, որ նշված հոդվածն այնքանով, որքանով չի նախատեսում հայցի ներկայացման պահից, ինչպես նաեւ հայցի ներկայացմանը նախորդող ժամանակի համար լրացուցիչ ծախսերի բռնագանձման հնարավորություն, հակասում է ՀՀ Սահմանադրության 34, 36 եւ 38-րդ հոդվածներին:

Անդրադառնալով օրենսգրքի 105-րդ հոդվածին՝ դիմողը գտնում է, որ նշված հոդվածը, իր կարծիքով, այնքանով, որքանով պարունակում է օրենսդրական բաց, ինչի արդյունքում չի նախատեսում լրացուցիչ ծախսերի նկատմամբ ինդեքսավորման կիրառման հնարավորություն, հակասում է ՀՀ Սահմանադրության 34 եւ 38-րդ հոդվածներին:

4. Պատասխանող կողմն գնահատմամբ՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 74-րդ հոդվածի տրամաբանությունից է բխում, որ լրացուցիչ ծախսերը կատարելու պարտականությունը պետք է ընդգրկի նվազագույնը հայցի ներկայացման պահը: Հակառակ դեպքում փաստացի կատարվող լրացուցիչ ծախսերին մասնակցելու՝ օրենքով նախատեսված կարգը կիմաստագրկվի: Ըստ պատասխանողի՝ լրացուցիչ ծախսերի վճարումը կսկսվի դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո միայն, սակայն վճարվող լրացուցիչ ծախսերի գումարը պետք է ներառի նաեւ մինչեւ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելը **կատարված ծախսերը:**

Պատասխանողը դիմումին կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրության արդյունքում փաստում է նաեւ, որ տվյալ գործով դատարանի կողմից որոշված վճարման ենթակա լրացուցիչ ծախսերի ամենամսյա գումարը ներառել է նաեւ հայցի ներկայացմանը նախորդող ժամանակահատվածում կատարված ծախսերը, ինչի արդյունքում պատասխանողը եզրահանգում է, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 74 եւ 105-րդ հոդվածների դրույթներն իրավակիրառական պրակտիկայում սխալ չեն մեկնաբանվել:

5. Գիմումի ուսումնասիրությունից բխում է, որ դիմողն ըստ էության փորձում է առաջ քաշել իրավակարգավորման բացի խնդիր՝ նկատի ունենալով, որ

իր կողմից առաջ քաշվող խնդիրներն առկա իրավակարգավորման պայմաններում լուծում չեն ստացել: Ուստի դիմողը փորձում է առաջադրել օրենսդրական այնպիսի լուծումներ, որոնք կբավարարեն նաեւ իր կողմից առաջ քաշվող դատական վեճը հօգուտ իրեն լուծելու պահանջները: Այսինքն՝ դիմողն իր իսկ կողմից առաջադրված լուծումների բացակայությունն է դիտում որպես օրենքի սահմանադրականության խնդիր:

Ելնելով նշված հանգամանքից եւ նկատի ունենալով, որ դիմողը ՀՀ ընտանեկան օրենսգրքի 74-րդ հոդվածի **գործող դրույթների**՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ հիմնավոր փաստարկ չի ներկայացնում, ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ հոդվածի սահմանադրականության մասով դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի հիմքով ակնհայտ անհիմն է:

Անդրադառնալով օրենսգրքի 105-րդ հոդվածին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նշված հոդվածը դիմողի նկատմամբ չի կիրառվել: Հիմք ընդունելով նշված հանգամանքը եւ վերահաստատելով իր՝ 17.03.2009թ. ՍԳԱՌ-21 աշխատակարգային որոշման 6-րդ կետում ամրագրված իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 105-րդ հոդվածի մասով դիմողը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ: Բացի դրանից, սույն հոդվածի կապակցությամբ նույնպես դիմողը ոչ թե վիճարկում է օրենսգրքի տվյալ հոդվածի գործող դրույթների սահմանադրականությունը, այլ դարձյալ առաջ է քաշում, իր կարծիքով, օրենքի անկատարության եւ իրավակարգավորման բացի խնդիր ու քննարկման առարկա է դարձնում դատական ակտերի իրավաչափության հարցը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ եւ 6-րդ կետերի, 60-րդ հոդվածի 1-ին իւր 69-րդ հոդվածի պահանջներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Քաղաքացի Գոհար Բոտոյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 74 եւ 105-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**25 դեկտեմբերի 2012 թվականի
ՍԳՈ-1064**

Ք Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒՆ

ԴԱՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2012 ԹՎԱԿԱՆԻՆ	3
ՀԱՎԵԼՎԱԾ՝ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՎԵՃԵՐՈՎ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2012թ. ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇԵԼՆԵՐԸ	60
ՄԴՈ-1008. ԲԱՆԿԱՅԻ ՎՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՐԵՍԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 59-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՍԱՄԻ 9-ՐԴ ԿԵՏԻ՝ «ՆԱԽԱԲՆՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏՄԱՆ ՊԱՀԻՑ» ԴՐՈՒՅԹԻ ԵՎ 201-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՍԱՄԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	60
ՄԴՈ-1009. ԲԱՆԿԱՅԻ ՇԱՎԱՐՇ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԵՎ ԱՅԼՈՑ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԿԱՅԻ ԱԿՆԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 198-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 3-ՐԴ ՍԱՄԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	71
ՄԴՈ-1010. «ՀԵԼՄԻՆԿՅԱՆ ԲԱՆԿԱՅԻ ԱՍՄԱԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՉՈՐԻ ԳՐԱՄԵՆՅԱԿ» ՀԱՄԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱ ՎՐԱ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒՂԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՍԱՄԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 8-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 4-ՐԴ ՍԱՄԻ «Ձ» ԵՆԹԱԿԵՏԻ, 12-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 6-ՐԴ ԵՎ 7-ՐԴ ՍԱՄԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	86
ՄԴՈ-1020. ԲԱՆԿԱՅԻ ՇԱՎԱՐՇ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԵՎ ԱՅԼՈՑ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱ ՎՐԱ՝ ՀՀ ՎԵՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 138-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	98
ՄԴՈ-1022. ՀՀ ՍԵՐՎՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 79-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՍԱՄԻ 4-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	111
ՄԴՈ-1027. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՍՎՈՐՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 11-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՍԱՄԻ, 31-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՍԱՄԻ 3-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ 33-ՐԴ ՀՈԳՎԱԾԻ 1-ԻՆ ՍԱՄԻ 2-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	121
ՄԴՈ-1028. ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ՝ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄՆԱ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 13-Ի՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՄԱՄԱՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆԳՈՎ ՊԱՏԳԱՍՎՈՐՆԵՐ ԸՆՏՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 265-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՎԻՃԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	130
ՄԴՈ-1029. 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆԳՈՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԹԻՎ 37 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի ԹԻՎ 31-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԵՏ ԿԱՊԱՎԱԾ ՎԵՃԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	153
ՄԴՈ-1030. 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆԳՈՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԹԻՎ 3 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի ԹԻՎ 23-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԵՏ ԿԱՊԱՎԱԾ ՎԵՃԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	161
ՄԴՈ-1031. 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆԳՈՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԹԻՎ 9 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի ԹԻՎ 16-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԵՏ ԿԱՊԱՎԱԾ ՎԵՃԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	168
ՄԴՈ-1033. 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆԳՈՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԹԻՎ 38 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի ԹԻՎ 64-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԵՏ ԿԱՊԱՎԱԾ ՎԵՃԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	173

ՍԳՈ-1034. 2012 թվականի ՄԱՅԻՍԻ 6-ի ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԵԾԱՄԱՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԹԻՎ 17 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 թվականի ՄԱՅԻՍԻ 11-ի թիվ 41-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԵՏ ԿԱՊԱԿՆԾ ՎԵՃԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	181
ՍԳՈ-1035. 2012 թվականի ՄԱՅԻՍԻ 6-ի ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԵԾԱՄԱՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԹԻՎ 7 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 թվականի ՄԱՅԻՍԻ 11-ի թիվ 37-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԵՏ ԿԱՊԱԿՆԾ ՎԵՃԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	192
ՍԳՈ-1037. ՆԵԼԼԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՎԱԶԱՅԻՍԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 208-ՐԳ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԳ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	208
ՍԳՈ-1038. ԶԱՎԱԶԱՅԻ ԳԱՆՈՒՍ ՇԻՐԻՆՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԵԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 14-ՐԳ ՀՈՂՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	219
ՍԳՈ-1048. ԶԱՎԱԶԱՅԻ ԱՐՏԱԿ ԳԱԶԱՐՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՍԽԱՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 169.8-ՐԳ ՀՈՂՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	228
ՍԳՈ-1049. ԶԱՎԱԶԱՅԻ ԳՐԻԳՈՐԻ ՎԱՀԱՆՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՎԱԶԱՅԻՍԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 204.32-ՐԳ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	240
ՍԳՈ-1050. ՀՀ ՄԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԾՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 35-ՐԳ ՀՈՂՎԱԾԻ 6-ՐԳ ՄԱՍԻ 1-ԻՆ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ 9-ՐԳ ՄԱՍԻ 1-ԻՆ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ, 41-ՐԳ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԳ ՄԱՍԻ 3-ՐԳ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	250
ՍԳՈ-1051. ՀՀ ՄԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 17-ՐԳ ՀՈՂՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	264
ՍԳՈ-1052. ԶԱՎԱԶԱՅԻ ԳԱՅՆԵ ԱՇՈՒՂՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԵԿԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 379-ՐԳ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-ՐԳ ԿԵՏԻ ԵՎ 380-ՐԳ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԳ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	272
ՍԳՈ-1054. «ԱՍՏԵՐՅԱՆՆԵՐԻ ՄԱՍԻ ԱԼԵՆԱ» ՓԲԸ-Ի ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 36-ՐԳ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԳ ԵՎ 3-ՐԳ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	287
ՍԳՈ-1056. ԶԱՎԱԶԱՅԻ ԿԱՐԵՆ ՄԵԺԼՈՒՄՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՍԽԱՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՍԳՐՔԻ 305-ՐԳ ՀՈՂՎԱԾԻ 3-ՐԳ ԵՎ 4-ՐԳ ՄԱՍԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	297
ՍԳՈ-1059. ՀՀ ՄԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՍԽԱՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՍԳՐՔԻ 260-ՐԳ ՀՈՂՎԱԾԻ 3-ՐԳ ՄԱՍԻ ԵՎ 262-ՐԳ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԳ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	306
ՍԳՈ-1061. ՀՀ ՄԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԾՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ (22.12.2010թ. ՀՕ-243-Ն) 14-ՐԳ ՀՈՂՎԱԾԻ 3-ՐԳ ՄԱՍԻ 2-ՐԳ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ, 29-ՐԳ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԳ ՄԱՍԻ 6-ՐԳ ԿԵՏԻ, 36-ՐԳ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԳ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ, 38-ՐԳ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԳ ԿԵՏԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ	315

<p>ՍԳՈ-1062. ՔԱՂԱՔԱՅԻ ՆՈՐԱ ԷՎՈՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 412-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ</p>	328
<p>ՍԳՈ-1063. ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ ՍԱՄՎԵԼ ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆԻ ԵՎ ԳԵՎՈՐԳ ԳՅՈՋԱԼՅԱՆԻ ԳԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 111-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 6-ՐԴ ՄԱՍԻ, 155-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ 158-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ</p>	335
<p>ՍԳՈ-1064. ՔԱՂԱՔԱՅԻ ԳՈՀԱՐ ԲՈՏՈՅԱՆԻ ԳԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 74 ԵՎ 105-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ</p>	350